62

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉՈՐԻՑ ՄԱՍԱՆՑ
ԱՇԽԱՐՀԻ

Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ.
և Ամերիկոյ։

Ստորագրեալ վերաքաղանօք աշխարհաց որ'ի նոսա՝ զտէրս, զբերս, զբարս, զվաճառականութիւն, զկառավարութիւն, զկրօնս, և այլն։

Աշխատասիրութեամբ Տն Տն Ստեփաննոսի Գիւվէր Ագոնց Ածապատիւ Արքեպիսի Սիւնեաց. և Աբբայի միաբանութեն Տն Մխիթարայ մեծի Աբբայի։

Արդեամբք Թօխաթեցի բարեպաշտօն Պարոն Պաղտասարի Սապէլեան։

Յամի Տն 1805. 'Ի Թուին ռմծդ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ԱՍԻԱ
ՀԱՏՈՐ. Դ.

Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի Վանս Սբյն Ղազարու։

ԱՇԽԱՐՀ. Ա.

ՀՆԴԿԱՍՏԱՆ:

Հնդկաց աշխարհ ևս կոչի. և յայլազգեաց Ինդիստան, կամ Ինդոստան. որ ընդհանրապէս և ընդհանրաբար առեալ՝ են երեք մեծամեծ երկիրք: Նախ Հիւսիսային մասն տէրութեան Մողոլաց. Երկրորդ Հարաւային մասն՝ որ առ աշխարհագիրս կոչի Ցամաք նշան Հնդկաց որ յայսկոյս Գանգէսի, թէ և ՚ի հարաւակողմն նորա. և առ հնդիկս միով անուամբ կոչէր Տաքան, կամ Տէքան: Եւ երրորդ Ցամաք նշանն որ յայնկոյս Գանգէսի, թէ յարեւելից Գանգէսի:

Երկու առաջին մասունք երբեմն էին ընդ միով տէրութեամբ Մողոլաց, յորժամ ծաղկեալ էր նոցա տէրութիւն մանաւանդ թէ կայսերութիւն. իսկ երրորդ մասն միշտ արտաքոյ էր տէրութեան Մողոլաց, տրոհեալ ՚ի զանազան թագաւորութեանց. վասն որոյ և զՀնդկաստան բաժանեն իբր յերկուս մեծամեծ երկիրս, նախ առաջադրեսցուք զմասն կոչեցեալ Հին տէրութեան Մողոլաց. և երկրորդ զմասն որ արտաքոյ, կոչեցեալ Ցամաք նշան յայնկոյս Գանգէսի:

Հին տէրութիւն Մողոլաց:

Ա. Անուն:

Տերապէս Հնդկաստան անուանի միայն տէրութիւն Մողոլաց, ունելով ընդ իւր և զցամաք նշանն որ յայսկոյս Գանգէսի կամ զՏաքան. Թէպէտ հերկ ժողովուրդք ՚ի խօսս՝ ըստ զայն երկիրս արեւելեան նահ. զՉինեացիս կոչեն Հնդկաստան: Իսկ յետ տերելոյ ՚ի նմա ազգին Մողոլաց զորմէ ստորեւ գրեսցուք, անուանի այս երկիր և Մողոլ, կամ Աշխարհ Մողոլաց, որ ՚ի գիրս մեր կոչի Մողոլ:

Յաղագս այսր լայնածաւալ և բազմահարուստ երկրի, բազում մատեանք գտանին առ Եւրոպացիս հին և նոր. յորս զանազան է գտանել անխառն յառաջասացելոց. առաւել ճշմարիտ և ստուգապատում են այն մատեսանք՝ զորս 'ի լոյս ընծայեցին անգղիացիք 'ի Նորումն, գոլով առաւել տեղեկանք ծնն · [illegible] 'ի ծովեզերեայ կողմանս զորս երկիրս գրաւեցին ՟Է անբուէք խորհանց : Մեք սուղ ինչ [illegible] և ունիմք գրել զայսր ծէ ք զայլ ծայց հնդկաց · քզի բզմք գտանին յազգէս հայոց 'ի ծովեզերեայ կողմանս սր · և զի յօտարական ազգաց միջի 'ի հ[illegible]ւոր ծայց՝ որք նախ առաջին սկսան առնել վաճառականութիւն ընդ այսմ ծի, եղեն 'ի մերոց ազգաց, որք գրեցուք զկնի : Աւնդ զի բզմ ինչ 'ի գրեալս 'ի սուտ պատմէ ճանապարհորդաց ունիմք տեղեկացեալ 'ի վր̃ կրօնից, բարուց, վաճառուց, 'ի վերայ քաղաքաց ինչ, և այլոց իրաց :

Բ. Դիրք Մողոլաց :

Աշխարհն Մողոլաց՝ յարեւմտից ունի իւր սահման զպարս · յարեւելից՝ զթագաւորութիւնն որ յայնկոյս գանգէսի, յորս են զանազան թագաւորութիւնք ազգաց տրուէն · որք են աշամ, հոկմ · են · 'ի հիւսիսոյ՝ զմեծ տրուէն ինքնագլուխ թաթարաց · իսկ 'ի հարաւոյ՝ զծոցն հնդկային՝ որ ձեւացուցանէ զշարժակ թագաւորութիւնն իւր յայնկոյս գանգէսի, որ 'ի նորումն զեղեալ զափամէք նր̃, բզմ ասրէք ծածկեալ, զանբաւ բազմութիւն նաւուց ընկալեալ յայնմ ալէկոծութէ, յորս կայք և յազգէս հայոց : Ընդ մէջ այսր համատարած ծի՝ ձգեալ տարածին միադօտի լերինք 'ի հիւսիսոյ ՟Է հարաւ մինչև ցքոմորինեան հրուանդանն · որ է 'ի հարաւային եզրն ցամաքի կղզւոյ նորա · և բաժանեն զծովեզերեայս մալապարոյ 'ի գորոմանտէլոյ · միանգամայն և մանաւոր իւն եղանակաւ են անջրպետ անդէն կարգել 'ի բնութէ 'ի մէջ ամարայնոյ և ձմերայնոյ, կմ 'ի մէջ պարզ օդոյ և անձրեւայնոյ :

Գ. Տարածութիւն, և Բնակիչք Մողոլաց :

Այս ծ ընդարձակ գոլով յոյժ՝ ձգի տարածի իբրև ՟Լ 30 ասպարիզաւ ՟Լ երկայնութե · և իբրև ՟Լ 25 ՟Լ լայնութե · ուստի տարածութի նր̃ գրեթէ հաւասարի կիսոյ մասին եւրոպիոյ :

Ըստ ընդարձակ տարածութե իւրոյ նոյնչափ և բզմ են բնակիչք նր̃ · քզի 'ի բզմ ննջնգս բաց 'ի բզմ մեծամեծ քաղաքաց և 'ի գիւղօրէից՝ 'ի դաշտավայրան անդ առ հերկ բնակութիւն է մարդկան աստ և անդ ցրուեալ. զի է տեսանել բազում ուրեք յեզերս, մինչդ 'ի տրունն վենետկոյ։ Եւ բազում գտանին 'ի նմա քաղաք, յորս բնակչացն թիւ հասանէ ց200000, կամ ցկէս միլեան։ Չէ ինչ բազում ամք, յորմէ հետէ եղև սով 'ի Պանկալա նահանգ նորա, որ տևեաց մինչև ցհինգ և ցվեց ամիս. և յայնմ սովու գտաւ թիւ մեռելոցն իբրև վեց միլեան. յորմէ 'ի միում ամսեան լինէր թիւ մեռելոցն իբրև մի միլեան։

Է. Գետք Մողոլոյ։

Երկու են գլխաւոր գետք այսր Ծի. Ինդոս. յորմէ ըստ ոմանց ելանէ Հնդկաստանդ անուն։ Այս գետ ելանէ 'ի հիւսիսային կողմանց սորին տէրութեան, 'ի լերանց անտի որք բաժանեն զնա 'ի Թաթարաց. և յինքն ընկալեալ զբազմութիւն գետոց. յարևելից կողմանէ զՕռլէտ, կամ զԿաուլ, զՊիահ, կամ զՎիա, զՍուլէյ, զՃամբա, զՍուդլէճ, զՍէհլաւ. իսկ յարևմտից զՊեհատ, զՆիլապ, կամ զՃէնապէ, զՀէր, և զԼոգա, և զայլ բազում գետս, որ միացեալ ընդ մէջ երկոցունց, և բաշխորոց, անուանի Սինդ կամ Ինդոս, և ընթացեալ ընդ հարաւ 'ի կողմն մանաւանդ և դաշտաց քաղաքի, ընդ վեց մեծամեծ գլուխս մտանէ յովկիանոսն։

Գանգէս. զոր նոքա կոչեն Կընկա։ Իբրև երկրորդ գետ Հնդկաց հռչակաւոր առ նոսա, և առ նախնի պատմութիւնս. որ ընդ վերագոյնդ նշանակելոյ՝ ելանէ 'ի ղխարեղայ, և հոսեալ ընդ հարաւ մտանէ 'ի Հնդկաստան կամ յՄողոլաց. և ընկալեալ անդէն յինքն զբազմութիւն վտակաց, զի յարևելից կուսէ զԲանդա, զԼոպէրէւէ, ըզԲանաս, զԿանդէկ, զԱմնազա, են. և յարևմտից՝ ըզԿանիլ, զՃոր, զԱմառ, զՃէճա, զՆորտէր, զԼամբէն, և 'ի նահանգին Պանկալայ ընդ բազում մեծամեծ բերանս, յորս երեքն են առաւել երևելիք, մտանէ 'ի ծովն։ Կռապաշտ Հնդիկք զայս գետ իբր սրբազան իմն ունին, և վասն այսր նոքա բազում ծաղրական առասպելս պատմեն։

Ը. Օդ Մողոլոյ։

Աշխարհ Մողոլաց գոլով ընդարձակ յոյժ ընդ զանազան աստիճանօք ձգեալ, օդ նորա ոչ է միօրինակ ամենայն ուրեք։ 'Ի հիւսիսային կողմանս բարեխառն է ջերմութիւն և ցրտութիւն. այլ 'ի հարաւային կողմանս, զի 'ի տաքան մեծ Ծն՝ կամ 'ի ցամաք կղզին որ յայսկոյս գանգէսի, և 'ի պանկալա, 'ի մոլլա, 'ի քանտոն. ևն., լինի տօթ անհնարին, մինչ ուրեք ուրեք. Թէպէտ և նոյն երկիր նր՝ գոլով ընդ արևադարձին խեցգետնի, և մօտ 'ի հասարակածն, ոչ լինի բնաւ ցուրտ որ յԾս մեր: 'Ի հարաւային կողմանս նր չիք բնաւ ձմեռն, այլ են անդէն երեք եղանակք այլազանք 'ի մերոց եղանակաց, որք են անձրևային, բարեխառն, և ցամաք:

Յառաջնում եղանակի՝ որ սկսանի 'ի յունիս ամսոյն մինչև ցհոկտեմբեր, երեսք երկնի միշտ են մրգապատ, և յամ աւուր ընդ ժամս ժամս անձրևէ սաստիկ. յորում ժմկի փողոցք լցեալ կան հեղեղաջուրց. և 'ի լերանց իջանեն մեծամեծ ուղխք և գետք, յայնժամ տիրէ թուլութիւն ամ անդամոց 'ի բնակիչս, և խոնաւութիւն անպայման, մինչ ուրեք ուրեք յորմս տանց և 'ի կարասիս նց: Երկդն տևէ 'ի նոյեմբերէ մինչև ցփետրվար, որ է իբրև գարուն նց, և բարեխառն ըստ օդոյ ժմկս. Թէպէտ տօթ և ջերմութիւն այնր ժմկի հաւասար է ամառնային ջերմութեան մերում Ծի. յայսմ բարեխառն ժմկի հաստնին անդէն բոլոր պտուղք և հունձք: Երրդն տևէ 'ի փետրվարէն մինչև ցյունիս, յորում ժմկի տիրէ տօթ անհնարին և ոգեսպառ, և լինին սաստիկ որոտմունք և կայծակունք, այլ անձրևք սակաւք. յայնմ ժմկի առ անհնարին տապոյ ջերմութեան գտանին և բզմք որք 'ի ջրալից տակառս նստեալ, այնպէս գործեն զգործ իւրեանց. բայց այս տօթ առ փոքր մի մեղմանայ 'ի ծովային հողմոց, որք հնչեն 'ի հարաւոյ:

Այլևայլութիւն եղանակաց՝ որ գարնան և աշնան, իսկ ըստ նց ցամաքայինն և անձրևայինն, մեծապէս երևին 'ի ծովուն. զի 'ի գաւառացն արեւմտեան 'ի կէսախոյին, ծովն մալապարայ՝ որ է յարևմտեան կողմն ցամաք կղզւոյն կամ տաքանայ, հողմահոծեալ խռովի, և անհնարին ալիս յարուցանէ. և 'ի նոյն հողմոց վարեալ գոլորշեաց ծովուն 'ի լերինս, որք անջրպետեն զմալապար 'ի գորոմանտելայ, և խտացեալ անդ, լուծանին 'ի մշտահոս անձրևս յայն կողմանս. բայց առ գորոմանտելաւ որ է յարևելեան կողմն, ամենևին խաղաղ է յայնժամ և անդորր: Իսկ յաշնան ընդ հակառակն՝ հանդարտութիւն փոխի 'ի ծովն մալապարայ, և խռովութիւն 'ի ծովն գորոմանտելայ.

Յօդոյ երկրին պատճառաւն անդ մնդ 'ի հարաւային կողմանս դք 'ի պանկալա և յայլ նհնգս ինչ, պէսպէս ախտք մահաբերք ։ դք է ախտն կոչեցեալ 'ի նոցանէ Մարտի, որ պատահի յանմարսութէ ։ Նախ բերէ դողումն, և ապա կարկամումն ջլաց և անզգայութն, և փսխել և լուծումն որովայնի, որ և բզմ անգամ 'ի միջոցս լին ժամուց սպանանէ ։ մի միայն դեղ նր է Բանզէհերն ։ Փորհարուն, որ պատճառի կմ 'ի ցրտութէ և կմ 'ի ջերմութէ ։ և 'ի պատահել ումեք մնդ ծերոց, ոչ երբեք փարատի, այլ յերկարաձգել հուսկ յետոյ մահու սպանանէ ։ ուստի այնպիսիք զնմ կեանս իւրեանց մեծաւ զգուշութբ և սակաւակերութբ պարտ են կեալ ։ ոչինչ ճաշակել բայց եթէ որիզ լոկ խարշել ։ Եւ ևս զանազան տեսակք փոշտանկութն առ սաստիկ թուլացուցանելոյ ջերմութն և խոնաւութն օդոյն զջիլս մարմնոյն ։

Ջ. Բերք Մողոլաց ։

Բարեբեր է այս աշխարհ և արգաւանդ ։ բերէ բոյս զարմանաւորս և ազնիւս, պտուղս ամենահամս գլխովին նորս և օտարս 'ի պտղոց զոր աստ առ մեզ ունիմք ։ Որպ գրէ և Վարդան 'ի մեկն. ծն. ա. 17. «Պտուղք աշխարհիս (ասէ) որիչ են 'ի պտղոյ մերոյ աշխարհիս, « համով, և հոտով և գունով, և իւղք և ձաւնիք « յոլովագոյն ունին մասունս հրոյ »։ յայս է թէ սակս ջերմութն օդոյն ։ Մի յերևելի պտղոց նր, է Ամպ կոչեցեալ պտուղն ամենահամ ։ տերևք բուսոյ նր նման են ծառոյն լեմոնի ։ բերէ զպտուղս իբրև զողկոյզս խաղողոյ, յորում իւրաքանչիւր պտուղք մեծ են քն զլեմոնս, տափակաձև ըստ նմանութն նշոյ, որք 'ի մէջն ունին և կորիզ ։ Նախ քն զհասանիլն նր դալար թթու, 'ի կեր առնուն 'ի կերակուրս փոխ լեմոնի ։ արկանեն նաև 'ի ջուր աղի 'ի լինել թուաշի ։ զոր կոչեն Ամպխաճառ ։ Գոյն նր մինչ տհաս են՝ է կանաչ ։ իսկ 'ի հասանիլն՝ ոմանք 'ի վր նորին ոսկեգոյ հարկանին 'ի գոյն ծիրանի, ոմանք 'ի դեղին, և ոմանք յայլևայլ գոյն գեղեցիկ ։ Եւ որպէս գունովք նոյնպս և համովք գլխովին զանազանին ։ բերելով զհամ դեղձի խնձորոյ ծիրանոյ, ևն ։ Այլ մարմին պտղոյն կցեալ և սնդեալ կայ մզնատեսակ թելովք ընդ կորիզն իւր ։ պատուականագոյնն գտանի 'ի մալդաէ փուլին պանկալայի, որ չունի ինչ այնպիսի մանրաթելս, այլ և դիւրին 'ի ճաշակել ։ Կեդեն կարծր է յոյժ, զոր չէ մարթ 'ի մարմնոյն զատանել · այլ միայն ը̄ մէջ հատեալ ը̄ երկայն, այնպէս առնուն 'ի բերան :

Քոթթալ · ծառ նր̄ լինի մեծ բայց մանր տերևովք · այլ որ նորատեսիլ է, բերէ սա պտուղ ոչ յասախուր, այլ 'ի բունն անդ ծառոյն, սկսեալ 'ի ստորին և 'ի ներքին կողմանէ արմատոյն՝ մինչ ցգագաթն բնոյն · բայց միշտ աղխոնագոյն են, որք լինին հաւաս առ արմատն : Պտուղ սր̄՝ կի՞ մէնդ արտաքին կեղևոյոյն, է դեղնագոյն · ձև նր̄ սեխաձևան, այլ մեծ քան զսեխս · ծայր նր̄ է խառորեալ, և 'ի վր̄ ունի փուշս մանունս : 'Ի մէջն անդ այսր արտաքին սեխաձև կարծր կեղևոյն՝ ծածէ 'ի ծառ ձգեալ կայ ձող կի՞ տուանցք · յորոյ վր̄ կարգաւ դասեալ կան պտուղքն մեծամեծք, որ 'ի նմանն հատք նր̄, փափուկ և քնքուշ մաշկով պատեալ · ունելով 'ի մէջն հիւթ սպիտակ կակուղ և քաղցր քան զմեղր՝ որ է նոյն իսկ պտուղն, ունի և զկորիզ : Այս պտուղ բնութ̄ ջերմ է յոյժ · ուստի հնդիկք յետ ճաշակելոյն՝ ըմպեն կաթն 'ի բարեխառնել : Կամեցեալ ուտել զայս պտուղ, հերձուն զկողմն ինչ միայն արտաքին սեխաձև կեղևոյն, և ոչ զամ̃ կեղևն · ք̄զի մէջոցք որ յարտաքին կեղևոյ անտի մինչև ցբուն պտուղսն են, լցեալ կան հեղհեղուկ անպիտան ինչ նիւթովք, և յետ բանալոյն դ՞ն զմին ինչ, ծծանեն զձեռս իւղով և այնպէս մի առ մի հանեն զպտուղսն անտի · քանզի նիւթն այն ը̄ ձեռն մածանի սաստիկ, եթէ չիցէ իւղով օծեալ :

Կելա · բոյս սր̄ ելանէ իբրև ձող ինչ 'ի չափ երկուց դրկաց՝ առանց ոստոց տերևնեն · ներքին կողմն բնոյն՝ է կակուղ և քաղցր, զոր և ուտեն իսկ · բերէ տերևս սակաւ 'ի վր̄ նորին բնոյ՝ ք̄զի ոպ̄ ասացաք չունի բնաւ ոստս, որք մեծ են յոյժ, լայն և երկայն իբրև դրկաչափ · մինչև ոմանց զսոսա համարել տերևս թզենւոյն՝ որովք սփածաւ նախահայրն, զորս ռամիկք տեղւոյն 'ի գործ ածեն փոխ սկտեղ : Բերէ մի միայն ողկոյզ 'ի գագաթան · և 'ի վերայ նորին ողկուզոյ՝ կարգաւ շարայարեալ կան պտուղքն նման ը̄ ձևի թարմ բակլայի հ̄դ̄ արտաքին պատենիւն, զոր 'ի բաց հանեալ, զմիջինն ողջոյն ուտեն, որ է սպիտակ և կակուղ, բայց ցամաք, և ունի կորիզս մանունս · այլ համ̃ նր̄ քաղցր է և ոչ խորշելի : Նախ ք̄ զհասանելն 'ի վր̄ ծառոյն՝ հատանեն զողկոյզ սր̄, և 'ի ծածուկ խորշանցաւր պահեն սակաւ ինչ կէր աւելեալ թողուն այնպէս, որ 'ի միռան.

ում աւուր խակ և խակ տայ նմ հաստատնանալ, և զգոյն նր՟ փոխէ 'ի դեղին : Բայց բոյս այս յետ միանգամ պտղաբերելոյ, յերկ՟ում ամի լինի անպտուղ· յայնժամ կմ՟ զշառաւելսն նր՟, և կմ՟ զբուն նր՟ հատանեն տնկեն այլուր, որ նոյնպէս պտղաբերէ : Այնչափ յաճախեալ է այս պտուղ յայն Ծ 'ի կողմանս ինչ, մինչև փոխ կերակրոց ուտել բնակչաց · գտանի սա և 'ի պեղուած ջրոց պաղէստանից, այլ սակաւ :

Նարկիլ · բոյս և պտուղ առաւել զքանչելի քան զայլսն և առաւել օգտակար · Ծառ սր՟ և տերևք նման են ամենևին արմաւենւոյ · բայց միայն զի սա 'ի միում և եթ կանթի բզ՟մ տերևս բուսուցանէ · ուստի իւրաքանչիւր տերևք երևին ճառագայթաձևք մեծ և նորանշանք, զոր չէք տեսանել 'ի կողմանս յայսոսիկ : Եւ որ առաւել զքանչելին է, քանզի կանթ տերևոյն մինչդեռ թարմ է, ոչ կարէ զայնչափ բազմութե՟ տերևոյն տանել, բնութեն խնամօք բուսուցանէ 'ի նոյն ծառոյն նիւթ ինչ իբրև երիզ, որ զայն կանթ ը՟ բուն ծառոյն մածուցե՟լ միացուցանէ ընդազգոյն՝ մինչև ցհաստատել և ցկարծրանալ տերևոյն · ապա յայնժամ չէք ևս վտանգ բեկման, նիւթն այն թառամեալ իւրովի փրթանի և կախի զծառոյն, զոր 'ի բզ՟մ պէտս 'ի գործ ածեն : Պտուղ նր՟ ելանէ 'ի վ՟ր բնոյն ը՟ տերևովք՝ որ՟ և արմաւենւոյն, և լինի մեծ իբրև զկիտրոն, այն է Աղաճ խավունի : Այլ որ՟ տերևն նոյնպս՟ և բազմատեսակ կեղև սորին պտղոյ է նոր և անսովոր · ք՟զի նախ արտաքուստ կանաչ մաշկ ինչ պատեալ կայ զնովաւ · զկնի այնր են թելք կարծր ք՟ զվուշ, խիտ առ խիտ, առ բզ՟մ իրս պիտանի · զոր նաև 'ի պէտս պարանաց նաւուց հիւսեալ 'ի կիր առնուն · ապա զկնի այնր է նոյն խուկ մերձին ենթերքին կեղև պտղոյն նման ընկուզոյ, բայց կարծր սաստիկ · զոր հարկ է ուրամբ կմ՟ այլով իմիք խորտակել, և ապա լինի ժամանել 'ի մարմին պտղոյն՝ որ է սպիտակ և կարծր իբրև զշագանակ · այն է քէստանէ, և խաւյխ · բնութ՟ ջերմ · այլ 'ի մէջն անդ մարմնոյ պտղոյն՝ է հիւթ ինչ սպիտակ քաղցր և բնութ՟ ցուրտ · ուստի և զերկսեանսն հանդերձեաց 'ի սմ՟ բնութեն 'ի բարեխառնել :

Զկեղև սյր պտղոյ 'ի բզ՟մ պէտս 'ի կիր արկանեն ոչ միայն բնակիչք, այլ և յայլ Ծս · որ՟ 'ի ձգել ըղծուխ, այն է թիւթիւն, որ կոչի յանուն նր՟ Նարկիլէ, նաև փոխ սպասուց, անօթոց, և գրչաւորաց :

Այլ երբեմն յառաջ ք̅ զհասանիլ, 'ի բաց հատանեն 'ի կանխէ զպտուղն՝ յորմէ հիւթն զոր պտուղն յինքն ունէր ձգել, հոսի. ը̅ որով եդեալ անօթս և ժողովեն, թողուն առ ժ̅մկ մի մինչև ցթթուիլ նման Պօղայի, և ապա լինի ըմպելի կաթնագոյն քաղցր և զուարթացուցիչ. գտանին անդ և այլ պտուղք ինչ, որք ըստ այսմ՝ 'ի հատանիլն, հեղուն զհիւթս իւրեանց: Այս նարկիլ բուսանի անդէն առատ յոյժ, ուր̅ և յայլ տ̅ս ինչ հնդկաց. և ոչ ապականի արագ, այլ տևէ. ուստի է մի 'ի մեծամեծ վաճառացն հնդկաց. զոր և ուրեք ուրեք ուտեն փոխանակ հացի:

Անանաս. պտուղ ազնիւ և սակաւագիւտ, բոյս նորա փափուկ, որ լինի փոքր իբրև զբողկ. արձակէ տերևս ցցեալս նման տերևոց արմաւենւոյ արտաքոյ հողոյն. պտուղ նր̅ է նոյն իսկ անհարթ արմատ նր̅ որ և բողկն և բանջարն. համ նր̅ քաղցր է միանգամայն և թթու, նման փորթուգալ պտղոյն. այլ ոչ կախուղ իբրև զնա. ունի թելս կմ̅ ջիլս խիստ և կարծր. մինչև հերձանել և զննելս: Առաւել պատուականն ելանէ 'ի տաքայ, որ է դեռ ինչ 'ի պանկալըս. առանց ինչ թելից մաքուր և դիւրաճաշակ:

Ճամպու. նման է ձիթոյ՝ ը̅ ձևոյն և ը̅ գունոյն. համ նր̅ քաղցր, բայց և վայրենի և անտառային. ուստի աղիւ լուացեալ թողուն առ ժ̅մկ մի, առ 'ի առաւել ազնուացուցանել և ախորժելի գործել:

Կուլապ Ճամպու. պտուղ սակաւագիւտ նաև 'ի նմին տ̅ղ. ը̅ ձևոյ և ը̅ մեծութ̅ նման զխնձորի, այն է Մուշմուլայ. գոյն նր̅ 'ի սկզբան է կանաչագոյն, իսկ 'ի հասանիլն դեղին. մէջն դատարկ. և կորիզք բոլորք 'ի նմ̅, այլ արձակք և ոչ կցեալք ը̅ միմեանս, որով նման է ամենևին պտղոյն կոչեցեալ Տրապզոնի խուրմայր, համ նր̅ և հոտ՝ է իբրև զաւիշկ վարդի. յորմէ կոչեցաւ և Կուլապ. զի ն̅ք զվարդաւիշկն յայս անուն կոչեն:

Սեֆրի ամդ. է ծառ պտղաբեր. որոյ պտուղ ունի նմանութ̅ի ը̅ տանձաձև լեմոնի, որ գտանի առ մեզ. քաղցր է և հոտաւէտ յոյժ, բայց անտառային, ունի և կորիզ փոքր:

Պէհլ. պտուղ [illegible] ծառոյս որոյ ձև նման է նռան, բայց բոլորակ և մեծ քան զնա. կեղև նր̅ կարծր է սաստիկ, մինչև սղոցաւ հարկ է հերձանել. համ նր̅ քաղցր, և գոյնն ծիրանի դեղին:

Ամբ.

Ամլա, կմ՟ Ամիա, զոր արաբացիք կոչեն Թամըռ-հընտի, որ թարգմանի Արմաւ հնդկաց: Ծառ սր՟ լինի մեծ. և պտուղն իբրև զԲեչի պտոյիուղ, կմ՟ զփասուլ. նախ ք՟ զհասանիլն է թթու յոյժ, ուստի և 'ի կերակուրս 'ի գործ ածեն փոխ թթու նիւթոց. իսկ յետ հասանելոյ է թթու քաղցրախառն. զոր յանօթս եդեալ իբրև զչամիչ, առաքեն 'ի զանազան տեղիս. զոր և յամարայնի խառնեալ 'ի ջուր, ըմպեն 'ի զովացումն՝ ք՟զի է կակղացուցիչ և զովացուցիչ:

Բան. է բոյս ինչ անպտուղ, որ սպատելով ելանէ զխեչակաւ իբրև զբաղեղն, ոչ այնչափ ինչ բարձր. և է փափուկ յոյժ. ուստի և ըղ՟մ դարմանաց կարօտի, զորոյ զտերևսն ևեթ 'ի գործ ածեն. համ նր՟ նման է այլոց համեմաց: Լինի անդ և պտուղ ինչ անուանեալ Սըփարի. որոյ ծառն ամենևին ուղիղ և նրբաձև բարձրանայ յերկրէ գեղեցիկ յոյժ. բերէ պտուղ նման ամենևին Հնդկային ընկուզոյ. զայս պտուղ 'ի մանր և 'ի նուրբ մասունս հատեալ, դնեն 'ի մէջ տերևոյ Բանին և պատեն: Շինեն անդ և կիր ինչ մաքուր մանաւանդ վս՟ այսր, յորմէ առեալ սակաւ ինչ և եդեալ 'ի վր՟ տերևոյն, առնուն ապա 'ի բերան միայն 'ի ծամել և զհիւթ նր՟ ձգել: Ամ՟ հնդիկք և ոմ՟ ազգք անդ բնակեալք, 'ի գործ ածեն զայս առհ՟սրկ. ք՟ աստ 'ի կիր առնուն զծխախոտ. նովաւ մեծարեն և զհիւրս: Ուստի ըղ՟մ մաքս եդեալ կայ 'ի բերելն յարտօրէից 'ի Ֆըլէ. համ նր՟ է ախորժելի. բայց առհ՟սրկ կարմրացուցանէ զատամունս, և 'ի գոյն արեան ներկէ զթուք բերանոյն, որ զզուեական իմն թուի օտարականաց:

Այլ 'ի պտղոց աստի զոր մեք ունիմք, ք՟ տանձ, խնձոր, դեղձ, ծիրան, խաղող, ևն, չիք բնաւ 'ի հարաւային կողմանս, բայց եթէ ուրեք ուրեք սակաւ. այլ կմ՟ 'ի խորին հիւսիսային նահանգաց իւրեանց սոյն բերել. ոմ՟ 'ի Քեապօլ նշինգէն, որ 'ի հարաւային կողմանց հեռի է իբրև երից ամսոց ճանապարհաւ, և կմ՟ յՉէն պարսից, պատեալ բամբակաւ և եդեալ 'ի տուփս, առ 'ի չխանգարել յօդոյ, միայն 'ի պարգև մեծամեծ իշխանաց: 'Ի հարաւային կողմանս ինչ, ք՟ 'ի Պանկալա, լինի միայն ձեղրապտոյ, և վարունկ, որ յոյժ ամենեան բուսանի անդէն. լինի և ցորեան, բայց չիք սովորութիւն հասարակ ժողովրդեան ուտել հաց 'ի ցորենոյ:

Բաց յայլոց բազմատեսակ նոր պտղոց և բուսոց, զորս չէ մարթ աստէն յիշատակել մի ըս՟ միոջէ, լինի յետին մողոլաց 'ի ծովեզերեայս գանգանոյ 'ի քաղաքս, և մանաւանդ 'ի պանկալա նահանգին, մետաքս նուրբ և փափուկ ազնիւ յոյժ, քան այլոց կողմանց հնդկաց, զոր մինչև ցեւրոպիա տանին. և տուստ մինչև յամին երիցս և չորիցս շերամոց գործել մետաքս, սակս սուտ բուսանելոյ անդէն թթենեաց. քանզի առ պարարտութե երկրին պանկալայի, որ քան զամ տս մողոլաց արգաւանդ է և բերրի, և առ յորդութե անձրևացն, վաղվաղակի և դիւրաւ բուսանին ծառքն. զոր կամեցեալ բազմացուցանել, ոչ միայն զընձիւղս ծառոյն՝ այլև զբուն նորա 'ի բզմ մասունս կտրատեալ, արկանեն իբրև սերմն 'ի վր հերկեալ երկրի, որք ը̅ միջոցս երից ամսոց բարձրացեալք. իսկ և իսկ արձակեն տերևս: Ելանէ ևս 'ի նմին նահանգի շաքար առատ և ազնիւ, զոր առաքեն 'ի զանազան կողմանս, թէպէտ չէ այնչափ սպիտակ: 'Ի գուճրաթ նահանգին՝ ելանէ բամբակ առատ յոյժ և ազնիւ. իսկ 'ի պանկալա սակաւ, այլ նուրբ և առաւել պատուական վս օդոյն և ջրոյն լաւութե:

Այլև որիզ բազմատեսակ և ազնիւ. 'ի պանկալա ելանէ որիզ հսրկ առատ յոյժ, որ յամին երիցս սերմանեն և հնձեն. վսյ սփռի անտի և յայլ ամ կողմանս հնդկաց, բայց 'ի փիլահօռ կոչեցեալ երկիր ինչ մողոլաց, ելանէ սեւակ ինչ երկայնաձև որիզոյ, զորոյ զհամեմատն ոչ ուրեք է գտանել, զոր և 'ի պարգև առաքեն մեծամեծ իշխանաց և նախարարաց: Կոճապղպեղն՝ այն է Զէնճէֆիլ առատ ելանէ 'ի պանկալա: Անդամանդ, այն է Ելմաս 'ի տաքան մեծի Տէրն 'ի կոլգօնտա և 'ի վիզափուր, և այլուր ևս, որոյ նման չէք ուրեք գտանել: Սէյլանակն՝ 'ի նմին Տի. որ ելանէ նաև 'ի սէյլան կղզի. և այլ ակունք բազմազանք 'ի գուճրաթ նահանգի:

Ապանոզ փայտն, և Սանտալ փայտն հոտաւոր, որոյ կրկին է տեսակ. սպիտակ և կարմիր. սպիտակն որ առատ ելանէ 'ի նմին տաքան Տի, առաւել ազնիւ է սակս առաւելութե հոտոյն որ 'ի նմ. զոր և 'ի գործ ածեն 'ի դեղորայս, նաև 'ի ծխանելիս հդձ բաղադրութե այլոց: Էօտ ազաձի. որ թէպէտ և այլուր լինի, գտ 'ի չեամ Տին, այլ ոչ հաւասարի ազնուութե և պատուականութե այնմ՝ որ ելանէ 'ի պանկալա: Այս էօտ ազաձին, ոչ այլ ինչ է, բայց եթէ ծառ ինչ, զոր հատեալ թողուն այնպէս ը̅ երկար ժմկ, մինչև ցփտիլ առ հսրկ. բայց 'ի ծառն անդ գտանին և երակք ինչ խեժայինք, որ ամենևին անփուտ մնան, և նորին խակ են հօտ աղանձի, զոր տալ ժողովել սփռեն յծ ոմ'ի պէտս ծխանելեաց: Քրքում. այն է Զաֆրան որ 'ի քէրմիր: Կապուտակ երանգ, կմ լեղակ, այն է Լաճիվերտի. լինի 'ի յակրատապատ, և 'ի գուճրաթ: Պղպեղ. 'ի գոլին, պատուհական ք զպղպեղ այլ ամ տեղեաց, ևս և ք զամօթլրայի կղզւոյն: Եւ այլ բերք անբաւք, զորոց և 'ի ստորագրութիս նահանգաց ունիմք ինչ ինչ յիշատակել:

Է. Վաճառք Մուղալաց:

Վաճառք սորին Ծի անբաւ են և անհամարմնդ. յետ յաճախելոյ վճռէկանաց և նաւարկութե յայն Ծ: Երևելի վաճառքն որ են մետաքս, բամբակ, նարկէլ պտուղն, ոսկի, անգամանդ՝ այն է Ելմաս, հօտ աղանձի, են, զորս յիշեցաք 'ի բերման. անդ. որով զանրասւ գանձս հաւաքեն նոցին բնակիչք. քզի յԾէն մուղալաց երանեն իւր՞ նիւթականք, և արտաքուստ յամ Ծոյ անդր հաւաքին ոսկի և արծաթ: Բայց 'ի բնական իրացն, երևելի վաճառք նորա են բամբակի պատառք բազմատեսակք. յորս յաւէտ նշանաւոր են բազմազան նրբաթել Տիմի անուանեալ պատառք, և մնդ Մալմալ կոչեցեալ բեհեզն կտաւի. այն է Թիւլպէնտ. առնուազոյնն սր գործի 'ի պանկալա. ուստի սփռի յամ աշխա մինչև 'ի կոստանդնուպօլիս, նաև յայլ կողմանս Ծի: Զի թէպէտ բամբակն տաւել առատ ելանէ 'ի գուճրաթ, ք 'ի պանկալա, սակայն 'ի գուճրաթայ բարձել տանին 'ի պանկալա. և անդ տան գործել վն ճարտարութե գործողացն. որք թէպէտ են արք գռեհիկք և անուսք. բայց քաջավարժք յարուեստ մանելոյ, և ոստայնանկելոյ ոսկ և աղնէգործում, մինչև 'ի զարմացումն ածել ըղտեսողսն՝ տաւելապէս 'ի դէպս ինչ. ուր տեսալ զառաւել նուրբ և զաղնիւ բամբակ, և ծակ բաղբակ ը եղունգն գործեալ, զոր թելս մանեալս անցուցանեն ը նոյն ծակ հաւասար նրբութբ. յորմէ գործեն տալս կտաւ պանկալի, գեղեցիկ ք զկերպաս: Նոյնպէս վարժ են յոյժ և յաջողակ 'ի պատկանել զկտաւս պատառէն, կմ զհերձեալս և զաղպականեալս 'ի գեղոյ, պանկալի ճարտարութբ նորագելով մինչև չերևելիլ բնաւ տեղւոյ պատառմանն. Նոյն ոճ 'ի գուճրաթայ տանին զբամբակ 'ի պանկա ղա սակս քաղաքիմուատ բազմութեան արուեստաւորաց, նոյնպէս և 'ի պանծալայն զմետաքսն բարձեղտանիլն 'ի գուծրագ. Քզի անդ սաստկապէս ծաղկեալ է արուեստ դիպակագործութեան և մետաքսագործութեան. աստի սփռին ընդ համօրէն ասիա, մանաւանդ 'ի թրուքս օսմանցւոց զանազան դիպակք և մետաքսեայ կերպասք. որպէս խասս, սլաւնաց, Աթլազ, Ծայիֆէս, Խուլթնի, ևն. Իսկ 'ի ծովեզերեայս գործմանելոյ 'ի մատրաս քղք, Ճարտար են 'ի ներկել կտաւս տպելով, և 'ի ծաղկել դրոշմք 'ի զանազան գոյնս, որք են Չիթք. և խալեմքեարի նրբաթել, զկտաւոր և ազնիւ վաճառք քեմխիր 'նենգլն. ոմ և պէսպէս քէմէրպէնտ կմ ճառ գոտիք նոր, զոր գործեն նաև 'ի լահօռ նՀնդ, յորմէ առնու երբեմն և զանուն. Մեծամեծ և երևելի իշխանք մողոլաց տան գործել 'ի սոյն նիւթոյ զպատմուճան և զպըտկեսա ներեանց մինչ հիւսուածով փորանկեն, գործ սքանչելի։

Գործեն յՀէն մողոլաց բմ աշխատութբ և ճարտարութբ նաև իւղ վարդի վճիտ և յստակ քան զայլ անկեայ. Քզի գտանի անդէն վարդ, մանաւանդ ուրեք ուրեք առատ յոյժ. և զայն իւղ առնէ 'ի գործ ամեն իշխանք 'նց սակս ազնուէ հոտոյն. մինչև հեղուլ և 'ի գլուխ երևելագոյն 'ի հեծանելն իշխանին 'ի վր. որոյ մի շիշն որ չէ ինչ մեծ, վաճառի մինչև ցերեքհարիւր ռուփի։ Գործեն և 'ի գուծրագ 'ի կողմանս սուրաթ քաղաքի սքանչելի իմն նիւթ որ չէ լուեալ այլուր. զի 'ի վր բուսոյ սխտոյն՝ սփռեն 'ի գետնի կմ յերեկոյի բեհեզս կտաւս նրբաթելս, յորոյ վր իջեալ ցօղն առաւօտեան՝ թանայ զնմ բեհեզն, զոր ապա ճմլեալ յաման ինչ, հիւթն ելեալ անտի որ ոչ այլ ինչ էր, բայց եթէ նոյն իսկ ցօղ առաւօտեան, լինի թթու սաստիկ և ազնիւ համով քան զաւիշն լեմոնի. զոր տանեն 'ի զանազան կողմանս։ Եւ միանգամայն առեալ Հն մողոլաց զնմ վաճառս առաքէ յիւրմէ յայլ և այլ կողմանս Հի, և սակաւս ընդունի արտաքուստ 'ի սինդացւոց և 'ի մերոց Հաց։

Ասացին վճռականք որք յաղագս Հաց ընդհանուր ծաղկեցուցանել զվաճառականութիւն յՀէն մողոլաց, բաց 'ի նմանէն բազմանացեաց և յարտաքսեաց, զորս մանաւանդ երկրին արժան է կոչել, քն եթէ սաստ ազգս, Եւրոպ վաճառականք յաղագս հայոց, որք նախ 'ի պարսից Հէն ուղեւորին բազմութբ՝ ընդ յաճախ 'ի մօտակայ սահմանս Հնդկաց սկսան առնել երթեւեկս եւ տուրեւառուխս. եւ զառաջին բնակութի հաստատեցին 'ի Տըլլէ նէհնգի, 'ի համանուն մայրաքաղաքի նո՟ց, որ կոչի եւս Ջահանապատ. ուր գտանին եւ մինչեւ ցայժմ սակաւ ոմանք յազգէս մերմէ սերեալք 'ի նախնեաց Հայոց անտի: Ապա սակաւ առ սակաւ յա՟ռջ գնալով, տարածեցին զվաճառականութի իւրեանց մինչեւ ցպանկալա, ուր թուէ 'ի ժամկէն յորում փորթուգալք նորոգ հասեալ էին յայն Ծ Հ̅ ծով եզերն 'ի խնդիր նոր Ծաց:

Տեսեալ մերոց վաճառականաց որք 'ի բնէ յաջողակ են յայս արուեստ զարգասաւորութի եւ երկրին պանկալայի, որ .ք̅. զայլ ամ Ծս մաղոլաց առատաբեր է, եւ միանգամայն ծովեզերեայ՝ սկսան այնուհետեւ 'ի նմին նէհնգի եւ յայլ ծովեզերեայ նէհնգս յածախել, եւ նաւարկութ առնել վաճառականութ ը̅ այլ հեռաւոր Ծս. թէպէտ մաղոլ կառավարիչք ը̅ օրինաց իւրեանց ոչ կարեն նաւարկել 'ի վ̅ր̅ ծովու. եւ մաղոլ մահմետականք չեն այնչափ անձնատուր յայն գործ: Եւ այսպէս զա՟մ մեծամեծ վաճառս յինքեանս սեփականեալ, մեծաւ յաջողութ եւ առատ շահեկանութ փարթամացան յոյժ. յորս 'ի վերջնում ժամկի երեւելի էր ոմն տէր ոսկանեան այրն համբաւեալ ը̅ ամ Ծս յիւրումն ժամկի. եւ ոմն տէր յարութիւնեան:

Այլ 'ի տիրել եւրոպացւոց ընդ՟ն կողմանց այսր համատարած Ծի, ը̅ անյագ ջանասիրութ իւրեանց, գրեթէ զա՟մ վաճառականութի երկրին յինքեանս գրաւեցին. յորմէ ոչ սակաւ վնաս եհաս վաճառականաց ազգի մերոյ. որք յա՟ռջն այնչափ հաստատեալ եւ զօրացեալ էին անդ, մինչեւ խառն ը̅ բնիկ Հնդիկս մարտ մղել ը̅դէմ անգղիացւոց, 'ի դիմել նո՟ց 'ի վ̅ր̅ ծովափնեայ տեղեաց պանկալայի որպէս ստորեւ լիագոյն ունիմք նշանակել:

Առ մաղոլս կա՟մ առ Հնդիկս, ոչ գոյր յա՟ռջագոյն այնչափ ինչ յածախութի առնելոյ վաճառականութ ը̅ օտար Ծս, այլ առաւել յԾի իւրեանց եւեթ. մինչ զի որպէս ասացաք արգելեալ է նո՟ց նաւարկել ը̅ ծով. բայց զկնի յածախելոյ անդ հայոց եւ եւրոպացւոց վաճառականաց՝ պանեան կոչեցեալ ցեղք ինչ առ նոսա, որք թոյլ են յիրս կրօնի՝ եւ են մեծատունք, ձեռնամուխ եղեն եւ ինքեանք 'ի նոյն. զոր առնեն կա՟մ ինքնին, եւ կա՟մ 'ի ձեռն այլոց: Իսկ օտարական ազգք մինչ յազգէս հայոց որք կան այժմ անդէն, թէպէտ սակաւ են յոյժ քան 'ի նախնումն, առ հասարակ 'ի նոյն գործ

ջաշահավաճառութեան պարապին, այլ և 'ի սկզբանն, յոյժ առելս յար 'ի վէճս և 'ի դատս թարթափին մինչև 'նոցին իսկ անգղիացւոց խոստովանիլ, թէ մեծաշէն դատաստանարանն՝ որ է 'ի Կալկաթա մայրաքաղաք պանկալայի, դրամովք հայոց շինեցաւ : Այլ յոյժ օտարական ազգաց միջի առաջին են անգ. 'ի շահավաճառութեան անգղիացիք · որոց ունելով ը իւրեանց ապրուէ զայլևայլ տեղիս 'ի զնզն կողմանս Հնդկաց, և սաստիկապէս 'ի պանկալա, անարգել վարեն զառևտուրն իւրեանց · որով և 'ի սուղ ժամս հարըստացեալ, դառնան մեծագումարք 'ի հայրենիս իւրեանց : Զկնի անգղիացւոց գաղղիացիք, որոց կալուածք սակաւ են, քան զանգղիացւոցն · ապա հոլանտացիք · և փորթուգալք, որք թէպէտ եղեն առաջին տիրապետողք երկրին, այլ յափշտակեցին 'ի նոցէ անգղիացիք, գաղղիացիք, և հոլանտացիք : Իսկ հրեայք սակաւք գտանին անդէն :

Վաճառականք յորժամ կամին պատրաստել զվաճառս առ 'ի բառնալ 'ի նաւ, որպէս զկտաւ, բզմ Ճմկօք յոչ յանձնեն Թէլլալաց, 'ի ժողովել կանխիկ առնեալ նց զդրամս, և նք երթեալ ժողովեն 'ի վաճառանոցաց, որ 'ի լեզու մողուաց կմ հնդկաց կոչի Արանկ, որ առ նմ նշանակէ զտեղին ուր հաւաքին բերք երկրին 'ի վաճառս · նոյնպս և Թէլլալք յորժամ յանձնեն գիւղականաց և արհեստաւորաց պատրաստել զկտաւս, կանխաւ տան նց զգինն՝ նախ քան զսկսանելն գործել · քզի այս սովորութ է առ նմ, զի մինչև են առել զդրամն, ոչ գործեն ինչ · ապա զվաճառսն զայնոսիկ ժողովեն 'ի մասնաւոր համբարանոցս վաճառաց, որ 'ի լեզու հնդկաց կոչի՝ Գոդի, և անտի բարձեալ 'ի նաւս, տանին յայլ և այլ կողմանս Եւր :

Առ զանազան ազգաց վաճառականս, զանազան են անդէն սահմանեալ և չափք դրամոց · առ վաճառականս ազգի մերոյ լինի՝ առ. հարիւր, իսկ առ վաճառականս եւրոպացւոց՝ տասն · և առ ընկերութեան կմ քումբանիայն անգղիացւոց, որ տիրողն է 'ի պանկալա, ութն · թէպէտ և արտաքոյ այսմ՝ ամ վաճառականք առնլեօք տան 'ի շահ :

Է · Բարք Մողոլ :

Մողոլ մահմետական հնդիկք բզմ իրք նմանին բարուք, նաև ուրեք ուրեք զգեստուք՝ պարսից

սից

տից և տաճկաց· բայց միայն զի ո՛չ առաւել զեղխեն և խղամոլ, և զգլխովին ընկղմեն յանառակութիւնս ։ Իսկ բուն կաստայիցն հնդիկք՝ բնութեամբ հլու են· մանաւանդ թէ վատասիրտք, և անհնարին երկչոտք· որով եղեն և միշտ եղիցին որս պատրաստական ամենին՝ որք կամիցին տիրել նոցա· զի մեծապէս առնեն զանգթունի և զխոտորած, որք անանջատ են 'ի սոցանց ։ Եւ ևս անմիաբան են և երկպառակք 'ի միմեանց, ուստի հնոյց նորանոր խռովութիւնք և ռամկայութիւնք յառնեն առ նս· և օտար ազգք զինուրաւ տիրեն նոցա ։ Այլ անուանի և քաջ Հէյտար Ալի խանն, կամ Հէտէրնաէգն՝ ազգաւ հնդիկ, ուսեալ զարուեստ պատերազմին առ գաղղիացիս· որ ջանահնար լինէր վարել զամ եւրոպացիս, մանաւանդ զանգղիացիս, 'ի հայրենի Տէն, սորա անգամ մի առ նս գահն և նեղեալ սրտիւ ։ Անմիաբանութի և երկպառակութի մեր, է պատճառ ձերոյ երջանկութե և խնդութե, որք փայտակերտս եւ ընկվարօք եկեալ 'ի հեռաւոր Տէ՝ զերկիրս մեր գրաւեցիք, զի թէ իւրաքանչիւր որք կան 'ի քղքս մեր, մի մի վէմս ձգէին 'ի ձեզ, բաւական էր 'ի հալածել զձեզ ։ Քանզի յիրաւի անգղիացիք, ամ և այլ ազգք եւրոպացւոց, տիրեցին նց առաւել հնարիւք, քան թէ քաջութբ, զի նախ գրգռեցին զերկպառակութի և զմարտ 'ի մէջ նց· և ապա միաւորեալք ընդ միոյ կողմանն, յաղթէին և տիրէին միւսոյ կողմանն· և զկնի նաև զայն կողմն և զիշխանն՝ ընդ որում միաւորեցան, 'ի բաց հալածել, ինքեանք տիրէին Տի երկոցունց ։

Առ հնդիկս յաճախեալ է յոյժ մանաւանդ առ ծառայս գողութի· քզի բազք բաց 'ի վարձուց իւրեանց՝ յորժամ տեարք նց տան գնել ինչ, նախ առանուն մասն ինչ 'ի դրամոյն՝ իբրև 'ի վարձ աշխատանաց իւրեանց· և ապա զասկուագինն իբրև զթանկագին գնեալ, զաւելին պահանջեն 'ի տէրանց իւրեանց· նաև 'ի գնել իրաց զմասն ինչ խորեն ։ Ծառայք այս և խաժամուժ ժողովուրդք առ հսրկ բիրտ են, ապուշ թանձրամիտ, անհրահանգ և զուրկ ամենևին 'ի քաղաքավարութե և 'ի հանձարոյ· յորս չէ մարթ բնաւ վստահանալ զրոյցս ինչ անթերի հաւատացանել առ այլ ոք· վսն հարկ է անդ զայսպիսիս պխտակագրոյ վճարել· այլ 'ի նենգել և 'ի խաբել և գողանալ աչալուրջ են սթափ և հնարագէտ ։ 'Ի խոստմունս արագ են և առատ, նաև յոյժս, զորս բնաւ ջանին 'ի մտի կատարել, զի նախատինս համարին

ԵՐԵՎԱՆԻ

անձանց հրաժեշտ տալ. այլ 'ի կատարումն գժբօղք. յոյր սակս ոչ սակաւ նեղութի և վնաս կրեն օտարականք, որք անտեղեակ գոլով բարուց նց՟, խաբին դիւրապատրաստ խոստմամբք. որով բզ՟մ անգամ բզ՟մ կարևոր գործառնութիւնք նց՟ 'ի գերև ելանեն: Զեղծք են և անառակք, գլխովին անձնատուրք 'ի պղծալից ցանկութիս մարմնոյ, զորէն անասնոց անբանից. ծոյլ, տարտամ և վեհերոտ:

Հ՟սրկ ամբոխք 'ի հարաւային կողմանս մերկ շրջին ունելով միայն պատե՟լ զմիջով կապերտ ինչ կտաւոյ իբրև զփածանելի. այլ մեծատունք միշտ ագանին պատմուճան կմ՟ շապիկ պճղնաւոր մեալուղ 'ի նուրբ և յազնիւ կտաւոյ. ուստի զարդք նց՟ են ակունք և մարգարիտք, զորս կրեն 'ի մատանիս և 'ի գինտս և յայլ զարդս: 'Ի շրջիլն 'ի քղ՟քի ը՟ մեծի մասին բաց 'ի հ՟նրկ ռամկաց շրջին հովանոցօք, զոր 'ի գործ ածել սկսան աստ և յեւրոպիա. իսկ մեծատունք և մեծամեծք նց՟ շրջին գահաւորակօք. զոր նք՟ կոչեն Բալանգի, որ է Թահտըրրավան, ունելով յառաջոյ քառասուն և յիսուն հետևակ սպասաւորս. յորոց մն՟ բարձեալ տանի հովանոց, այն է՝ Ըլփաշէ հովանի առնելով տն՟ իւրոյ. քանզի երկոքին կողմանք գահաւորակին բաց են: 'Ի Մատրաս քղ՟ք Գորոմանդելայ, սովորութի է կրել և տեսակ ինչ հովանոցի, զոր և ոչ 'ի մեծատանց ոմն՟ անխտիր կարեն տանիլ բաց յանգղիացւոց, որ և է բոլորաձև տախտակ տափարակ ոսկեզօծ կմ՟ ծաղկենկար, զոր ծառայք երկոքումբք ձեռամբք վերամբարձ ունելով տանին 'ի յետուստ 'ի վր՟ գլխոյ տն՟ իւրեանց. որ անհեթեթ իմն թուի օտար ազգաց: Այլ քանզի և 'ի հայոց անդ բնակելոց՝ որ ոք կամէր՝ կրէր զայն, անգղիացիք զննեի զայրեն՟, կամեին արգելուլ, այլ մերքն ցուցին նց՟ զյետակար հրովարտակն՝ շնորհեն՟ նց՟ յընկերութենէն անգղիացւոց 'ի ժմկս ոսկանեան պետրոս աղային, որ գոլով մի 'ի խորհրդականաց ընկերութեն որ անդ, առեն՟ էր 'ի նմանէ հրովարտակս վս՟ ազգիս հայոց բնակելոց 'ի մատրաս, ունել զնմ՟ ազատութի, զոր ունին անդ անգղիացիք:

Կերակուր մողոլաց է որիզ և քաղցրեղէնք. այն է Բռէնճէլ. զորոյ զզանազան տեսակս շինեն անդէն 'ի պտղոց երկրի իւրեանց, ընտիրս և պատուականս: Իսկ միս ոչ ուտեն. վս՟ զի արգելեա՟ է նց՟ յօրինաց. այն զի և վնասակար եւս է 'ի հարաւային կողմանս սակս տօթոյն սաստկութե. ուստի օրէնք նց՟ յայսմ մասին յարմարեալ է հանգամանաց օդոյն : Յամ առաւօտու քաղաքացիք ըմպեն դէյ փինկ խահվէյի, որ կարի յաճախեալ է առ նս :

Գոյնք սց են թուխ և սևագոյն, թէպէտ ոչ ըստ ազգաց ինչ ափրիկեցւոց սաստիկ սևաւք· առաւել սևագոյնք են բնակեալքն 'ի խորին հարաւային կողմանս ցամաքակղզւոյն, և 'ի կողմանս մատրասու զորս վարդան Արշաւանաներկս կոչէ· սակս յոլովագոյն լինելոյ 'ի նմա սևաւ մաղձի : Իսկ բնակիչք հիւսիսային նահանգաց թէպէտ դեղինք սպիտակք են, այլ չունին կայտառութի և կարմրութի երեսաց· զմարմինս իւրեանց ստէպ ստէպ օծանեն իւղով մանաւանդ ռամիկք :

Թ. Լեզու Մողոլաց :

Ունին ոմք մասնաւոր իմն լեզու օտար յայլոց լեզուաց· բայց յայն հասարակաց բարբառ գրեթէ և իւրաքանչիւր երևելի նահանգ ունի առ [illegible] բըղմ, մանդ 'ի կողմանս ինչ : Իսկ 'ի դատաստանի և 'ի դիւրս, 'ի գործ ածեն զլեզուն պարսից, որ 'ի յարգի է յոյժ առ նս· այլ և հրովարտակք և նամակք արքունի գրեալ են 'ի լեզու պարսից : Գիտութի և ուսումն չիք ընաւ առ նս, և ոչ իսկ փոյթ տանին այնմ· ոչ տոմարական հաշիւք և ոչ ընական գիտութիւնք· զի բայց 'ի շահասիրութէ յորում աչալուրջ են և հնարագէտք, ոչ գիտեն այլ ինչ :

Ժ. Կառավարութի Մողոլաց :

Արժանեցեալ յայսմ վայրի յիշատակել գէթ 'ի համառօտի, [illegible] կառավարութի տէրութեանն հնդկաց, 'ի դէպ է զպատմութի տիրողացն նր 'ի վերուստ անտի համառօտել ասելն : Յորս ըստ նախնի մատենագրաց պատմութեց, առաջինքն եղեն Բագոս, Հերակլես, Սեսոստրես, Դարեհ, և Աղեքսանդր մակեդոնացին : Յետ մահու աղեքսանդրի, մի ոմն Սանդրակոտոս անուն ազգաւ հնդիկ, այր զօրաւոր, վանեաց զմակեդոնացիս, ինքն տիրեաց Տին : Այլ չէ յայտ՝ թէ որչափ եկաց ժամ միապետութին հնդկաց հիմնեալ 'ի նմանէ :

'Ի սկզբան Է դարուն, արաբացիք սփռեցան յՏն հնդկաց, ուստ յաջագոյն և յայլ կողմանս Տի· առին զերկիրս ինչ հնդկաց, բայց [illegible] բաց 'ի [illegible] ինչ՝ թողին ընդ իշխանութեամբ նոցին բնակչացն, շատացեալ խաղաղութեամբ տուր և առութիւս առնել 'ի նմա: Ապա յետ երից դարուց ազգք բարբարոսք դենին մահմետականք, եկեալք 'ի Խորասանայ ընդ զօրավարութեամբ մահմուտ անուն ուրումն, յարձակեցան յերկիրն Հնդկաց 'ի հիւսիսոյ կողմանէ. և ասպատակութեամբ հասին մինչև ցգուճրատ, բարձեալ 'ի բազմապանծ երկրէ անտի աւարս անբաւ: Յետ ոչ բազում ժամանակաց յարեաւ հռչակաւոր Ճինկիս խանն 'ի Թաթարաց. որ զկնի տիրելոյ մեծագոյն մասին ասիոյ, յամին իբրև 1200 դարձոյց զդէմս իւր 'ի Հնդիկս. և եհաս մինչև ցգանգէս, բայց փութով յետս դարձաւ անտի. ուստի զկնի սակաւուց տիրեցին նմա բազմանայլք:

Արքա, ըստ ոմանց պատմագրաց՝ էին 'ի նախայիշատակեալ վաճառականաց արաբացւոց բնակելոց 'ի ծովեզերեայ կողմանս երկրին Հնդկաց. որք անզօրս և տկարս դատեալ զիշխանս Հնդկաց և զմողլս նոցա, առանց պատերազմի բազում մեծամեծ նահանգաց տիրեցին. և հիմնեցին անդէն մեծ և ընդարձակ ինքնակալութիւն. որում ետուն արքայանիստ քաղաք զդելլի: Ընդ ամենայն իրօք երջանիկ էր Հնդկաստան. վասն զի բազմանայլք գլխովին անձնատուր գոլով 'ի վաճառականութիւս, և 'ի մանկութենէ անել՝ լինմ՟, չէին պատերազմասէրք. որում զուգընթաց էին սովորութիւնք և քանդմունք և աւարտութիւնք և այլ աղէտս ածիրք և անդթութիւնք, ուստի 'ի մեծի խաղաղութեան վայելէր յայնժամ երկիրն Հնդկաց:

Այլ ոչ ընդերկարեաց այս խաղաղական տէրութիւն նոցա. զի ընկ Թեմուր կոչեցեալ Լանկթամուրն եկեալ 'ի Թաթարաց անտի 'ի ժդ՟ դարու, անբաւ բազմութեամբ զօրաց յարձակեցաւ յերկիրն Հնդկաց, անձամբ ընդ իւրև նուաճեաց զհիւսիսային նահանգս նոցա. իսկ զհարաւային 'ի ձեռն զօրավարաց իւրոց: Եւ որպէս թուէր՝ կամէր անդէն հաստատել զաթոռ ինքնակալութեան, այլ յանկարծակի իմն լուր ընկալեալ. ստիպեցաւ գնալ տալ պատերազմ ընդ Ելդ՟մ պայազէտ սուլտանին, զոր կալեալ եդ 'ի բանտի: Եւ այսպէս տիրեաց համօրէն ասիոյ. սկսեալ 'ի չինաց մինչև ցգանգէս. և մինչ խորհէր առնուլ և զՉին երկիրն, և զինացեալ մտանէր ասիոյ, մեռաւ 'ի Թուրքաստանում՟ և 'ի ձեռն որդւոց յաջորդեցաւ: Եւ զկնի մահու նորա մեծամեծ պատերազմունք յարեան յորդիս և 'ի Թոռունս նորա, և մեծածաւալ տէրութիւն նորա բաժանեցաւ 'ի բազում մասունս 'ի մէջ բազմապատիկ ժառանգաց նորա:

Ի Թոռանց որ̃ մի ոմն անուանեալ Պապուր, որում յետ մահուն Լանկթամուրայ անկաւ Թուրքաստան որ և Թ̃գ̃էր ՚ի Սըմըրղանդ ՚ի մայրաքաղաքն Բուխարայ, եղև հիմնադիր Ինքնակալուն Մեծին Մողոլի կմ̃ Մուղալաց: Քանզի Եօզպէկք Թաթարք մարտ ը̃դէմ նր̃ յարուցեն, ընկեցին զնա յաթոռոյ. յորմէ բռնադատեցաւ փախստական անկանել ՚ի Քաբուլ անուն քաղաք Հնդկաց, որ է ՚ի հարաւակողմն լերանց՝ որք անջրպետեն զՀնդկաստան կմ̃ զՄողոլս ՚ի Թաթարաստանէ: Իսկ իշխանն Քաբուլայ գոլով բարեկամ արքայական տանն Մուղալաց, ընկալաւ զնա. և ձեռնտու եղև նմ̃. յինքն ժողովեալ զօր մի ՚ի հպատակաց անտի իւրոց Մուղալաց: Այլ ք̃զի տեսանէր, եթէ վտանգ մեծ է այժմ մարտիւ ելանել ՚ի վր̃ Եօզպէկք Թաթարաց, որք տիրէին համօրէն Թուրքաստանին, խորհուրդ ետ նմ̃ դարձուցանել զդէմս իւր ՚ի վր̃ Հնդկաց, յուսացուցեալ զնա հիմնել անդէն նոր տէրութիւն փարթամ և ը̃արձակ ևս ք̃ զԹուրքաստան: Ուստի և Պապուր ելեալ ՚ի լերանց անտի հ̃գ̃Ճ իւրովք մողոլովք յարձակեցաւ ՚ի Հնդկաստան. և չգտեալ անդէն զօրաւոր ը̃դդիմակս և արգելս ընթացից իւրոց ՚ի սուղ ժմկի էառ զԴէլլի մայրաքաղաք նոցա. ապա և զհամօրէն Հնդկաստան. որով յայնմ օրէ Հնդկաստան սկսաւ կոչել Մողոլ կմ̃ Մուղալ, յանուն ազգին որ տիրեաց նմ̃:

Եւ այսպէս՝ Պապուր որ յաշխ̃ին անդ իւրում ոչ կարաց պահել զԹ̃գ̃րութ̃ իւր, ՚ի մէջ օտար ազգաց եղև հիմնադիր նորոյ Թ̃գ̃րուն, որ փարթամութ̃ և ը̃արձակութ̃ զանցանէ ք̃ զամ̃ Թ̃գ̃րութիւնս Ծլ: Սա հաստատեաց անդանօր այսպէս օրէնս մն̃ նորոյ Ինքնակալուն, և հաստատեաց համդամանս քաղաքական կառավարուն̃, ը̃ եղանակի կառավարուն̃ Պարսից և Թուրքաստանի, յորս յառաջագոյն թագաւորեաց: Կարգեաց նոր կուսակալութիւնս ՚ի տեղիս տեղիս, որք ՚ի լեզու մողոլաց կոչին Սուպայիա, ք̃ նահանգ. իսկ կուսակալքն՝ Սուպա նապապ, կմ̃ սոսկ Սուպա. Զի յառաջագոյն Հնդիկք՝ Րաձայ անուանէին զաւարս նահանգաց, ոյք և այժմ տեարք Ծին՝ որք են Հնդիկք և արտաքոյ սուպայութեանց, կոչին Րաձայք:

Իշխանուն̃ այս սուպա նապապաց էր մծ̃, զորս և ստէպ փոփոխէր Թ̃գ̃րն ը̃ հաճոյից իւրոց, զի մի զօրասցին ապստամբեսցին ՚ի նմանէ. ուստի մի ոմն կուսակալ նորոգ կոչեցեալ յայն պաշտօն, երբեմն

՚ի տեղ-

՚ի տըլլէ մայրաքաղաքէն գնալ ՚ի ժառանգութն իշխանութն իւրոյ, դարձաւ և հայէր յետս ասելով. հայիմ տեսանել, թէ զամ յաջորդն իմ շինի, յայտ արարեալ զսակաւատև իշխանութն իւր։ Վն սորին պտճռի կարգեաց ՚ի վր նց և լրտեսս, զի մի զզօրս հաւատացեալս նց առ ՚ի նուաճել զՀնդիկս, արտայեն իւրեանց թիկունս ըդէմ Թգրին։ Բայց ՚ի սուպա-Նապապաց անուն, էին և այլ ստորին իշխանք, որք կոչէին սոսկ Նապապք, կամ քաղաքապետք կախեալք զսուպայնոց։ Յորմէ յայտ է թէ և կռվարութն Տէրն Հնդկաց առ Նովլին Ժմկօք՝ էր գլխովին բացարձակ և բռնիշխան, կախեալ զհաճոյից Թգրին։

Սա ամի ամի յանցանել անձրևային եղանակի, ելանէր ՚ի դաշտ ինչ մեծ, ուր պատրաստեալ էին գալ հաւաքել ամ Նապապք, և այլ գլխաւոր զօրապետք հնդձ անհամար զօրօք իւրեանց, երթալ ը Թգրին յայցելութն ամ նահանգաց Տէրն, մեծահանդէս շքով, որում ըստ պատմութեց՝ ոչինչ հանդէս թագաւորական զուգահաւասար գտանէր։ Զի անհամար բազմութն իշխանաւորացն առ հասարակ ՚ի զարդ ոսկի և յակունս պատուականս զարդարեալ, ինքեանք և երիվարք նց. և արքայն ՚ի մէջ նոցա ՚ի համակ ոսկի և յակինթակուռ գահ բազմեալ, բարձեալ վերամբարձ ՚ի վր յաղթանդամ փղի, հնդձ բիւրաւոր սպառազէն զօրօք անցանէին ՚ի դռաց ՚ի դռս. որոյ տեսիլն և եթ սքանչեցուցանէր զժողովուրդն առ հասարակ։

Սոյն այս պատուաւոր ինքնակալ մողոլաց ՚ի սկզբան անդ ոչ տիրեաց համօրէն Տէրն Հնդկաց, բայց զկնի նր Աքպար, և յետ նր Օվրանկ զէպ ինքնակալըն՝ ՚ի ծայրն հասոյց զծաւալեալ Տէրութիւն մողոլաց, զի էառ զամ Տէրն Հնդկաց բաց ՚ի փոքրիկ լեռնոտէ ինչ Մալապարոյ. ուստի անուն սր համբաւեալ է առ ամ մողոլս, և իբրև բարերար և յարձակող ՚ի պատուէ է առ նս։ Այլ զկնի մահու նր միահեծան Տէրութիւնն այն անկանգնելի կործանեցաւ. որոյ առաջին պատճառն եղև անստուգութն իրաւանց յաջորդութն. զի ինքնակալքն մողոլաց գոլով ամենևին ինքնիշխանք, կարող էին ընտրել ՚ի յաջորդ իւրեանց՝ զոր և կամէին, առանց հայելոյ ՚ի մերձաւորութն ազգականութն. ուստի որք արտաքոյ մնային, մարտ ՚ի վր միմեանց յարուցանէին։ Իսկ Նապապքն՝ զխռովութին զայն առիթ դիպող գտեալ, ըստ մեծի մասին ՚ի բաց ելեն ՚ի հնազանդութե Թգրին, և եղեն ինքնագլուխ իշխանք.

խանք • յորոց ոմանք 'ի նապապացն և 'ի հնդկին ռաճայեց յարեցան առ ինքնագլուխ ազգն մարաթայից • ընդ նմին և նուաճեցուցին զհարկն զոր տային 'ի գանձն արքունի • և այսպէս միահեծան տէրութիւն որ գլխովին ինքնիշխան էր, և կարող էր համապազ ռոճիկս բաշխել միլիոն մի զօրաց, ստիպեցաւ զիջանել 'ի հաճոյս և 'ի բռնութիւն իւրոց պաշտօնատարաց,

Յայս վիճակ գտաւ մեծ տէրութիւն մողոլաց՝ յորժամ 'ի 1738 յարձակեցաւ 'ի վ՟ր բանակաւն պարսից՝ Նատըր շահ, կամ Թահմաս ղուլի խան, երբեւ հարիւր հազար պարսիկ զօրօք, ժամ և տեղի դիպող գտեալ զերկպառակութեան ն՟ր : Քանզի մեհմետ կամ մահմուտ շահ ինքնակալն մողոլաց հաւանեցաւ ը՟ փոխարքային իւրոյ և տարապետին, տալ մարաթայից զ՟դ բաժինն համօրէն մասից թագաւորութեան իւրոյ, զոր պահանջէին 'ի նմանէ : Իսկ իմաստուն սուպահ նապապն հէյտարապատայ, որ էր միանգամայն և փոխարքայ 'ի մեծ ցամաք կղզին՝ տաքան կոչեցեալ, բազումս ը՟դէմ եկաց խնդրոյ թ՟գրին • բայց տեսեալ զի չեղեն լսելի բանք ն՟ր, այլ բանք փոխարքային, և տարապետին, որք թշնամի էին նմ՟, դժուարեալ յոյժ կոչեաց թղթով 'ի ծածուկ զԹահմաս ղուլ և առնուլ զՏ՟ն հնդկաց • մի առ մի առաջի եդեալ ն՟ր զվիճակ երկրին, և զերկպառակութիւն իշխանաց, և զվատասրտութիւն թ՟գրին :

Յայնժամ զօրացեալ Թահմաս ղուլի խանին, գեալ ուղիղ չուեաց մինչև յմայրաքաղաքն մողոլաց Տըլլի • 60 հզ՟ր պարսիկ զօրօք բաղխեալ ը՟ մեծի ճակատու ն՟ր : Յորոց անհամար բազմութիւն զօրացն մողոլաց, որք ոմ՟ ասեն՝ էին 400000 յանկարծ ցրուեցան առանց ը՟ երկար դիմամարտելոյ ն՟ր • ոմ՟ 'ի նախնումն՝ բիւրաւոր զօրքն պարսից 'ի փախուստ դարձան յերեսաց 50000 մակեդոնացւոց : Եւ Թահմաս ղուլի խանն յաղթանակաւ եմուտ 'ի Տըլլի յարքայանիստ մայրաքաղաքն մողոլաց՝ ուր նստէր մեհմետ շահն, որ պարտութեան խոստովանեցաւ ն՟մ • և ստորագրեաց նմ՟ պայմանաց՝ զոր եդ 'ի վ՟ր ն՟ր Թահմաս : Եւ դարձաւ անտի լցեալ անբաւ մեծագանձ աւարօք • յորս յաւէտ նշանաւոր էր արքայական գահն, թագ զոյլ գանձս և զակունս պատուականս :

Այս գահ հռչակաւոր 'ի համօրէն աշխ՟ի, էր սիրամարգ արուեստակերտ կազմեալ 'ի պատուական ականց, տարածեալ ունելով զփետուրս • պատուականագոյն ոմ՟ համակ ոսկի մաքուր յօրինեալ մեծամեծ և անգին ակամբք, նոյնպէս և սիրամարգն ողջոյն անգին գունաւորօքն ադամանդեղէն ակամբք 'ի գոյն փետրոց բնական սիրամարգաց յարմարեալ. իսկ 'ի կուրծս նորին կարմիր յակինթ ադամանդեղէն և անգին, զորմէ կախեալ կայր մարգարիտ մեծ հաւասար մեծութեան սանձի, որոյ նման ոչ գտանէր 'ի համօրէն Չին։ Յայս գահ զարմանալեաց յորժամ՝ բազմէր ինքնակալն մուղալաց յաւուր ծննդոց իւրոց, ոչ ժուժէին աչք հայել 'ի նա 'ի շողշողիւն ճառագայթից որք հատանէին 'ի նմէ։ Գինն այսր անհամեմատ և անգին գահի 'ի ժամս նորին գնահատմանն հասաւ 10 քրրօր ռուփի. որ առնէ աւելի ք 225 միլիոն ոսկի։ Իսկ Թամասեալ ուսաւն զոր էառ նա յինքն գնահատման՝ եհատ ցհարիւր յիսուն միլիոն ոսկի։

Այս այնուհետև մահմուտ շահն անարգեցաւ յաչս մեծամեծաց տէրութեան իւրոյ, և նաւապետքն թօթափեալ զլուծ նորա, եղեն ինքնիշխան տեարք նահանգաց իւրեանց, հատին և զհարկս՝ զոր տային Թիքրին. և միապետական տէրութիւն մողոլաց՝ դարձաւ 'ի բազմապետութիւն. որով և քայքայեալ թաղեցաւ 'ի ներքոյ աւերակաց իւրոց։ Յետ մահմուտ շահին նստաւ ահմէտ շահն, զոր գանձապետն արքունի օմրահ ղազը ըլ տէն ապստամբեալ ընկեց յաթոռոյ, և եդ 'ի բանտի, ուր բրեցան երկաքին աչք նորա, և փոխ նորա նստոյց զէազ ըլ տէն, որ էր իշխան 'ի սերնդոց անտի Լանկթամուրայ. զոր և անուանեաց ալլում Ճիւէր, բայց և սա ոչ երկար մնաց յիւրում իշխանութեան. զի նա ինքն անօրէնն ղազը որոգայթ լարեալ նմա ետ խողխողել զնա 'ի 1759. և 'ի տեղի նորա նստոյց զշահ Ջհանն. որ և սա էր 'ի սերնդոյն Լանկթամուրայ։

Առ նովին ժամօք մարաթայք ժողովուրդք բնակեալք 'ի լերինս որ 'ի մէջ Դաքանու և պանկալայի իջեալ 'ի նահանգն ագրայի, խորտակեցին զզօրս օմրահ ղազըյին. հալածեալ զնա 'ի Ձեաղի դուռ ինչ. և առեալ զԴէլլի զարքայանիստ քաղաք մողոլաց ընկեցին զշահ Ջհանն. և փոխ նորա նստուցին զՋհան բախտ, զանդրանիկն Ալի գոհարայ. որ և սա էր 'ի սերնդոց անտի Լանկթամուրայ. զոր նոյն ղազըն ընդ այլոց բազմաց 'ի կալանս էր եդեալ։

'Ի մէջ խռովութեանց այսոցիկ և բազմապետութեանց հնդկաց՝ ահմէտ աբդալլահ անուն գլուխ ազգին աբդալլացւոց կամ աւղանիացւոց, յափշտակեաց զնմ երկիրն զոր Մահմուտ կամ Մէհմէտ Շահն առեալ էր պարսից, և զօրացաւ յոյժ: Սա յետին միանգամայն յարձակեցաւ ՚ի Հնդկաստան, և բզմ մարտս մղեաց ը Մարաթայս վն ընտրութեան թգին Մողոլաց ՚ի Դելլի: Այս ՚ի 1760 միւսանգամ եմուտ անդր, և խստա խորտակեաց զՄարաթայս, հաստատեաց յաթոռ թագաւորութե զՇահն Ալոմ՝ զոր Մարաթայք կալուցեալ էին, եդեալ ՚ի վր հարկս. այլև զմի ոմն ՚ի զօրապետաց իւրոց կացոյց նմ պահապան: Յայնմ պահու իշխանն Ալի Գոհար փախուցեալ ՚ի կալանաց, գնաց ապաստան եղև առ Անգղիացիս, որք ը պաշտպանութք իւրեանց առեալ, թգր Մողոլաց կացուցին զնա:

Բայց յետ այսչափ խռովութեանց՝ ոչ երբեք դարձաւ այն առաջին թգրութն Մողոլաց. այլ օրըստօրէ նուազեալ ակարացաւ, մինչև ինքնակալութն նոցա այժմ փոխեալ է ՚ի բազմակալութն. զի չէք այժմ անդանօր միում ինքնակալ հրամանատար միայն, այլ իւրաքանչիւր նհնգ ունի իւր առանձնապետս անկախս և ինքնագլուխս որք յառնեն միշտ ՚ի վր իրերաց, և զօրութն միմեանց քայքայեն. Թող զկողմանս զայնոսիկ՝ յորս տիրեն բնիկ Հնդիկ իշխանք, որք կոչին Ռաճայք, և զանազան թգրք անկախք. Նաև զկողմանսն զայնոսիկ՝ որք են ը իշխանութ Եւրոպացւոց: Սակայն մեք զը սովորական ընթացիւ մերոց ուսմնք ստորագրել զնա ոպ էր յառաջն:

ԺԱ. Մասունք Մողոլաց.

Նախնի մասունք ինքնակալին Մողոլաց՝ ը ժմկս ժամանակս այնպէս փոփոխութիւնս կրեցին, այլ միշտ անթիւ էին, և դրեթէ առաւել քան զմասունս թգրութեց. յորոց ուղղակոյն արժան է գիտել. զի ամ երկիր Մողոլաց Տին՝ յորս մարթ էր սերմանել, ՚ի բաց առեալ զանտառս և զապառաժուտ լերինս, չափեալ նշանակեալ կային առ թգրին. և իւրաքանչիւր չափու առնոյր հարկս ինչ, զոր պարտէին առոյա նահապետքն՝ և պաշտօնատարք կարգեալ ը նոքօք՝ ժողովել և հասուցանել ՚ի գանձ թգրին: Այլ բաց յարքունի հարկաց, նոյն առանձնապետքն և պաշտօնատարք յաւելուին ՚ի վր այլ ևս նոր հարկս և վն անձանց. և այնպէս անհնարին կեղեքէին զեղկելի ժղվդն: Եւ քանզի նահանգք կմ սուպայութիւնք Տին Մողոլաց ը ժմկս ժմկս փոփոխեցան, նոյնպէս և եկամուտ Թ͞գրին հետզհետէ փոփոխեցան ։ 'ի ժամս Ավրանկզէպ ինքնակալին՝ ըստ ոմանց պատմագրաց սուպայութիք և եկամուտք ն͞ց զոր տային Թ͞գրին, էր ըստ այսմ օրինակի զոր ունիս տեսանել յառաջիկայդ ։

Սուպայութի.	Ռուփի..
Տըհլի,	38185940
Ակպարապատ, կամ Ակրա,	35836250
Ագմէր,	20385790
Մաչապատ	14266970
Փանճապ	25816610
Ավուդ, կամ Օվտ	10072740
Մուլթան	6701340
Քապոլ	5032480
Քէշմիր	7184730
Գուճրադ	18995290
Պանկալա	16394880
Փաթնա, կամ Պահար	12723780
Օրիսսա	4463120
Սընտ	2869270
Պալակադ, կամ Տովլաթապատ	32342030
Մալվա	12621920
Պէրաբէճ, կամ Պէրար	19188280
Գանտիշ	14019690
Պէտր	11653450
Հէյտարապատ	34792500
Վիճափուր	33697030
Որոց գումարն է,	377,244,090

Որ առնէ ոսկի վէնէտկեան. 85, 741, 293 ։

Աւել ք͞ն այլոց առ տէրութ͞ Շէահ Ճէհան անուն ինքնակալին մողոլաց, որ եղև յաջորդ մեծին Ակպարայ 'ի 1610, տարեկան մուտք զանցանէր քան զ100 միլիոն ոսկի վէնէտկեան. նմին իրի և Պլուֆիֆէ աշխարհագիր գնէ 600 միլիոն ։ Սակայն բնիկ մողոլք և նոցին պատմութիք ցուցանեն՝ թէ 'ի ծաղկեալ ժամկի խուրեանց մուտք ինքնակալին՝ էին 900 միլիոն ռուփի. և ոսկի վէնէտկեան 500 միլիոն ։ Եւ այս է ինչ ը͞դէմ նախայիշատակեալ չափու մտից, զոր ծանուցեն ոմանք. Բայց բաց 'ի վերոգրեալ սուպայութեանց՝ էին և այլ գ͞ւռք և ի͞ք բ͞մք, որոց իշխանք էին բնիկ հնդիկք և կոչէին ռաճայք, ոչ 'ի վեր անդր առաջայք. որք և հարկատուցանէին հարկս Թ͞գրէն. զ͞ն

որտուէնչեան եւ հաշուէնէ, զորս Թերեւս 'ի բաց հանեալ նոյն պատմագիրք, գումար մինչեւ հասանէր 'ի նոյն չափ ռուփի 900 միլիոնից ։

Արդարեւ մեծ են եւ լեր անպայման այսչափ բազմագումար հասք, սակայն չեն արտաքոյ ճշմարտութեն․ Քզի յայնժամ ոպ̄ եւ այժմ առ Թգ̄րն եւ առ մեծամեծ իշխանս միայն հաւաքի ճոխութի եւ գանձ Ծին մուղալաց․ իսկ ռամիկք եւ հ̃րկ ժղ̃վդք յետին աղքատութ̄ տառապին ։ Քանզի ոպ̄ ասացաք 'ի վերոյ, իւրաքանչիւր նաւապք առ 'ի ժողովել զհարկս, զգ̄ւս նէնգլին կմ̄ իշխանութ իւրեանց 'ի վաճառ արկանեն ժողովրդեան․ եւ որ առաւել տայ նաւապային, առնու զմի գ̄ւռ կմ̄ զբ̄զմ․ եւ նա ժողովէ զնմ̄ հարկս լ̄ի պայմանէն չափուն, եւ տայ նաւապային, եւ նաւապայն ինքնակալին ։ Ուստի սք̄ լինէին տ̄ր այնից գաւառաց․ որք կոչէին 'ի լեզու պարսից Զէմինտար ։ 'Ի նախնի ժմս գոյր նաեւ այս օրէնք Թգ̄ւորական․ զի յորում երկրի եւ գ̄ւռի լինէր գողութի, զեմինտարն նոյն երկրին՝ պարտական էր հատուցանել, որով յայնմ ժամանակի ոչ գտանէր անդ բնաւ գող եւ ՝աւազակ ։

Արդ նաւապն ամենայն ամիս պահանջէ 'ի զեմինտարէն զհարկս, բայց զեմինտարն ոչ կարէ ամենայն ամիս յաղքատ գիւղականացն ժողովել, այլ սպասել մինչեւ ցբոլորել տարւոյն․ յորում պտուղք եւ բերք երկրին հասունացեալ վաճառին․ ուստի բռնադատեալ առնուլ յայլոց դրամս ծանր տոկոսեօք մինչեւ 18 առ հարիւրն առ 'ի վճարել նաւապին ։ Ահա այս իսկ է պտ̄ճռն, զի զեմինտարք չարաչար կողոպտեն եւ կեղեքեն զեղկելի գիւղականս՝ մինչ նաեւ զկահս եւ ըզկարասիս տան նց̄ զպղնձի անօթս, եւ յետ այնորիկ զորդիս նց̄, 'ի վաճառ արկանելով ։

Ուստի գիւղականք նց̄, թէպէտ սակաւ ծախս առնեն 'ի պէտս հանդերձից եւ կերակրոց, սակայն եւ այնպէս հազիւ կարեն հատուցանել ։ Եւ այնչափ է աղքատութի եւ պահանջումն նց̄, մինչեւ բաց 'ի հարկաց եւ 'ի կապալաց որ 'ի վ̄ր երկրին՝ պահանջեն մասնաւոր հարկս վս̄ իւրաքանչիւր պաշտօնատու ծառոց որ 'ի նմ̄ ։ Յայն սակս սահէպ առաքեն քննիչս յագարակս եւ 'ի պալատէզս նց̄, զի թէ բազմացեալ իցեն ծառք, առաւելուցուն զսակ հարկին ։

Անգղիացիք յորժամ տիրեցին ծովեզերեայ սահմանացն, թէպէտ անխախտ կալան զայս կարգ, այլ ըղմ̄ իմէք թեթեւացուցին զհարկսն 'ի սահմանս ու քուն Խուրեանից ։ Զի ոչ թողուն զիմընստարաց՝ յայլոց առնուլ դրամս ծանր տոկոսեօք, այլ յընկերութ՟ Խուրեանից չափաւորեալ շահու. ք՟, 8 առ հարիւրն :

ժէ. Կրօն կմ՟ Դենն Մողոլաց:

Ի վր՟ կրօնի կմ՟ դենի սց՟՝ զի նոր է և անլուր առ մեզ, փոքր ինչ ը՟արձակ կամիմք յայսմ վայրի խօսիլ: Արդ՝ ՚ի համօրէն Ցեղն մողոլաց ՚ի բնիկ մողոլսն՝ երկու են գլխաւոր դենք. բաց յայլոց անտի՝ զոր ունին անդ օտարական ազինք: Առաջինն՝ է կռապաշտութ՟ և հեթանոսութ՟. իսկ երկ՟ն՝ դեն տաճկաց :

Դենն կռապաշտից՝ է գլխովին այլաբանական և բարոյական. որոյ սկիզբն գլխովին անծանօթ է և ինքեանց իսկ բնիկ հնդկաց. այլ այժմ փոխեալ է յառասպելս ծաղրականս, և ՚ի խորանս տղայականս յիմարականս, և ՚ի սովորութիս պիղծս և անհեթեթս: Երիս գիրս սրբազանս ունին, յորս հիմնեալ է հաւատք սց՟, որք ուսուցանեն զհաւատոյսն : Զառաջինն՝ կոչեն Պետաս. որ սբ՟ գիրք համարեալ է առ նս՟. զոր սաստիկ նախանձայուզութ՟ պահեն պրամանք նց՟՝ ք՟ քահանայք կմ՟ քուրմք. զի մի անկցի ՚ի ձեռս այլազգեաց ուրուք. զոր՝ թէպէտ և անկանէր, սակայն ոչ ոք կարէ ընթեռնուլ, զի գլխովին պէսպէս նշանագրովք է գրեալ: Զերկ՟ն կոչեն Վտամ կմ՟ Վետամ. որ է իբրև կանոնագիրք ամ՟ բնակչաց ՚ի մէջ Ինդոսի և Գանգէսի. և պարունակէ զվարդապետութիւն Պրամա անուն ուրումն, զոր համարին էակ գերագոյն ք՟ զմարդկեղէն բնութիս, Թարգմանութ՟, և մեծ օրէնսդիր հնդկաց: Այն գիրք հրամայէ հաւատալ զէակ մի գերագոյն արարիչ էակաց. յորոց ոմանք գերագոյն են ք՟ զմարդիկ. այլք կարի ստորին ք՟ զնս՟. և հրամայէ հաւատալ զանմահութ՟ հոգւոյն, և զվարձս և զպատիժս հանդերձեալ կենաց, և զհոգեփոխութիւն. այս է հիմն և գլխաւոր վարդապետութ՟ դենի նց՟, որ այժմ բաժանեալ է ՚ի 83 աղանդս, որք միաբանեն ը՟ միմեանս ՚ի գլխաւոր սկզբունս ինչ. բայց և ՚ի վր՟ այլոց չունին ինչ հակառակութ՟ :

Իսկ զերրորդ գիրսն կոչեն Շամբշցրիթ, կմ՟ Սամբշգրիթ. որ է իբրև մեկնութ՟ Վտամ անուանեալ գրոց, զոր անգղիացիք թարգմանեցին ՚ի լեզու անգղիական : Յայն գիրս գրեալ կայ, թէ յաւիտենականն գոլով էակ իմացական, հայեցեալ յինքն վճռեաց հաստատել էակս 'ի հաղորդակցութեան փառաց իւրոց. ասաց՝ և իսկ և իսկ եղեն հրեշտակք, որք երգեցին զերգս օրհնութեան արարչին իւրեանց, և լցին զերկինս քաղցրանուագ երգով: Ապա երկու 'ի նոցանէ ապստամբեալ, ձգեցին զհետ իւրեանց զլեգէոն մի ողջոյն. և Աստուած դատապարտեաց զնոսա մտանել 'ի պէսպէս անարգ և 'ի չնչին կերպարանս հնգից մոլորակաց առ 'ի պատիժ՝ ըստ չափոյ մեծութեան յանցանացն: Եւ իւրաքանչիւրն 'ի նոցանէ պարտաւորեցաւ 87 անգամ շրջանս առնել յերկրի 'ի ձեռն հոգեփոխութեան, նախ քան զմտանել 'ի մարմին կովու՝ զոր գերագոյն համարին 'ի մէջ անասնոց. և ապա մտանէ 'ի մարմին մարդոյ. և անդ 'ի ձեռն բարի կամ չար գործոց՝ համառօտէ կամ յերկարաձգէ զժամ քաւութեան:

Արդարն 'ի մեռանիլն՝ գնայ միանայ ընդ գերագոյն էակին. իսկ մեղաւորն սկսանի զժամ քաւութեան 'ի ձեռն հոգեփոխութեան. որ առ նոսա համարեալ է պատիժ մեղաց: Յայն վերայ սահմանեն և պարտաւորութիւնք մարդկան՝ որք յերիս ընդհանուր գլուխս վերածին. այսինքն՝ 'ի սէր կամ յողորմութիւն, 'ի հրաժարումն 'ի մսոյ, և 'ի փոյթ զհետ երթալոյ հանդամանաց կենաց ծնողացն: Սահմանեն անդէն և կերակուրք՝ որք թոյլ տուեալ են յայլ և այլ կարգի մարդկան. զինուորաց և այլոց ոմանց թողացուցանէ ուտել զմիս վայրի էրէոց և ոչխարի: Ոմանց մշակաց և արհեստաւորաց թոյլ տայ զձուկն: Իսկ այլոց՝ մանաւանդ քրմացն միայն կաթն և արմտիս:

Այս են գլխաւոր պատգամք դենի նոցա ըստ նախայիշատակեալ գրոց. բայց ժողովուրդք՝ որպէս և քուրմք՝ պէսպէս օրինակաւ պատմեն զհաւատոց իւրեանց: Ոմանք 'ի հմտագունից ասեն հաւատալ 'ի մի Աստուած, որ է երրեակ ըստ զանազան գործողութեան և եթ, ըստ մոլորութեան սաբէլի: Իսկ այլ բազմութիւնք աստուածոց իրապէս չեն աստուածք, այլ մարդիկ դիւցազունք՝ որք արժանի եղեն աստուածական անուան: Այլ ռամիկք ոչ գիտեն ինչ բաց 'ի քանի մի յերևելի աստուածոց, և 'ի կատարելոյ զարտաքին ծէսս, զարարողութիւնս, և ըզխորանս իւրեանց:

Երևելի և գլխաւոր աստուածք նոցա են՝ Ճընկըռնատ, որ է իշխան Դի, և կատարիչ նորա. զորոյ զերկոսին ձեռսն հատեալ նկարեն: Սիվ՝ որ է հայր աշխարհի: Դուրկա, կամ Դուրկէն, զոր տասն ձեռամբ նկարեն, որ է ասեն մայր Դի, և կին սիվ աստուծոյն:

կոչի՝ զոր նկարեն յորէքումեք հեռամեք , որ է եկղ̃ կէն նորին սիրով ծծոյն · Եւ սք̃ ունին բազմ որդիս , որոց գլխաւորն կոչի Գրշնու , որոյ գլուխն է փղի : Այս ածք են հնրկ երկրին մողըլոց · այլ բաց 'ի սշ̃նէ 'ի վ̃ր ամ նիւթական իրաց՝ կարգեն մի մի ածս · զ̃ր որիզյ , ցորենոյ , ոսկւոյ , են : Եւ ես բաց յայս անբաւ բազմութէ մարդկեղէն ածոց՝ պաշտեն և զանասունս ինչ , և զնիւթական տարերս , և զըոյսս , զհանքս , և զերկու տեսակս վայրասուոր ծառոց · և զայլ ամ ինչ , յորոց բարութի ինչ ը̃ունել համարեն 'ի վ̃ր երկրի · և յորում գեղեցկութի ինչ տեսանեն , զորոց զթիւ ոմանք 'ի քրմաց նց̃ համացանեն մինչև ցվաթսուն հազար : Բայց նախապատւիւ ք̃ զամ ունեն զլուսաւորս երկնից · սոսա զոհացեալ մարդիկ · իսկ յանասնոց պաշտեն զփիղ , զխրամարգ են · բոր զի ածք նց̃ 'ի վ̃ր նց̃ հեծանէին՝ մինչդեռ էին յԵրկ · ոմն 'ի վ̃ր այս ինչ կենդանւոյ , և ոմն 'ի վ̃ր այլոյ · և զկովն՝ զի մայր է ամեն համարակաց , որ կերակրէ կաթամբք զմարդն և 'ի վ̃ր նր̃ նստէր սիրել ջրծ նց̃ : Այլ զհաւն անարդ համարին յոյժ , ոսկս անխաեր ուտելոյ զձմ , ը̃ որս և զգերաւնս՝ զորս պաշտեն նք̃ · վ̃յ կամեցեալ սատիկ նախատել զոք , ասեն անիծանելով * Կերիցես ՛ զմիս հաւու || :

Մեհեանքն նց̃ գմբեթաւոր են մեծով գմբեթիւ՝ չունելով բնաւ պատուհանս · այլ մի միայն դուռն փոքրիկ՝ զոր միշտ ը̃ արևելս չինեն · և 'ի հանդիպոյ դրան 'ի Ճակատ անդր մեհենին սեղան · և 'ի վերայ նորին դրօշեալ : Զև մեհենից կմ̃ կռատանց պէսպէս են , ոմ̃ն և չինուած նց̃ · են որք քառակուսի են և գաւէհկաչէն · և են որք խաչաձև և մեծակառոյց , նկարուած և արտաքուստ զարդարեալ բազմագոյն զարդու · ունելով զկուռսն 'ի միջին տեղւոջ · ոմ̃ ըն և սարսափ կուչեցեալ ցեղ ինչ , որոց չէ օրէն մտանել 'ի ներքս , արտաքուստ ը̃ դուռն կարասցեն տեսանել զնա : Են 'ի նս̃ մեծամեծ աւազանք ջրոյ՝ կարգեալք սու 'ի լուացումն · զոր ամ սրբութեան և չարագործութեց քաւութի համարին ·

'Ի յամարակկոյին որ յայսկոյս գանգէսի , կմ̃ 'ի տաքան մեծ Ջրի , գոյ անուանի մեհեան 'ի ներքուստ ունելով շուրջանակի մեծամեծ սիւնս քարեղէնս կաղեալս սու միանգամայն քարեղէն շղթայիւք · և պատմի թէ այն ամ սիւնք և շղթայք , որոնք ելի արուեստիւ և անհնարին աշխատութեամբ կոփեալ են 'ի մի միաձոյլ ժայռ .

ժայռէ : Դոյ և այլ ուրեք մեհեան Ջընկըրնատ չղծայն, որ է երևելի ուխտատեղին ն՟ց, ծովեզերեայ 'ի վ՟ր բլրոյ. ուր չէ օրէն այլ ազգ երթալ յուխտ, յամ՝ սահմանեաց որչափ և հեռի իցէ, բայց եթէ ծնգօք. մ՟ց ըմ՟ք հաղեծ 'ի միում ամի կարեն վճարել զայն տարժանաւոր ուխտագնացութի, անցեալ ը՟ լերինս, և ը՟ ձորս, և ը՟ տառապարս : Ոմանք 'ի անապատական ուխտաւորացն հասե՟լ ը՟ երեկս 'ի գեօղ ուրեմն, ոչ առ ժամայն իջևանեն անդ, այլ յառաջ խաղան զճ՟նպրհ կուռեանց ընդ ժամս ինչ. և իբրև հասանեն 'ի նշանաւոր տեղի ինչ, նշան դնեն անդ. և քայլելով դառնան անդրէն 'ի գեօղն հանգիստ առնուլ : Իսկ ը՟ առաւօտն զայնչափ ճ՟նպ՟րհ, զոր ծնգօք արարին, քայլելով գնան մինչև 'ի նշանակէտն. և անտի անդրէն սկսանին զծնրադրական ճանապարհորդութին կուռեանց : Առ նովին մեհենաւ՝ գոյ լիճ մի մեծ՝ Լիճ քաւութե ամ՟ մեղաց համարե՟լ 'ի ն՟ցէ. ուր ամ՟ ուխտաւորք մտանեն. և յետ մտանելոյ և լուանալոյ նովին ջրովն, զանազան ցեղք՝ որք յա՟ռջն խորշէին 'ի մեհեանց, այնուհետև անխտիր և համարձակ կենակցին ը՟ միմեանս :

'ի ժամու պաշտաման կուռեանց՝ վառեն ճրագս և մոմեղէնս, արկանեն խունկս առաջի դրօշելոյն, և կանայք ոմանք սպասաւորք չոյն կաքաւեն առաջի ն՟ր : Քուրմք որ պաշտեն 'ի մեհեանս՝ զդարման կենաց ունին 'ի կալուածոց անտի իւրաքանչիւր մեհենից. Իսկ այլք ողորմութ՟ կե՟ արուճեալ հայթհայթեն զառօրեական պէտս իւրեանց. զի չէ արդիւնաւ ն՟ց գործել արուեստս : Ունին ամի ամի տօնս երևելիս, յորս գլխաւորն և առաւել երևելին է տօնն Ջընկըրնատ չոյն : Ա՟ր արձանեայ պատկերն միշտ 'ի մեհեանս ն՟ց եդե՟լ կայ 'ի մեծաշէն գահոյս, որ է շինուած դմբեթայարկ շուրջանակի զարդարե՟լ սեամբք. ուր յիւրաքանչիւր սեանն փորագրե՟լ կան պատկերք զանազան դից : Յա՟ջ քան զոր տօնեն, տարե՟լ զարձանն 'ի գանգէս կ՟մ յայլ գետս լուանան ջրով. և ապա հ՟նդրձ գահիւն եդե՟լ 'ի կառս, զոր ձգեն բազմութի քրմից հարիւր յիւնից, և երբեմն երկերիւրոց, [illegible] ինչ շրջեցուցանեն ը՟ փողոցս մեծաւ հանդիսիւ թմբկօք և սպարուք և բազմութ՟ խառնաղանճից. և երբեք երբեք արկանեն մանկունս ը՟ անուովք կառաց նորա 'ի զոհ. և 'ի տեղիս տեղիս յանկարծ զկայ առնուն ասելով, թէ ինքնին կառքն կառեալ անշարժ. յայն‿

Ժամ զենուն անասունս 'ի զոհ նմա՝ ոպ̃ զի հաճեսցէ շարժիլ:

Երևելի է և տօն դուրկա չա̃ծուհւոյն. զի 'ի մերձենալ տօնի նր̃ յռ̃ջագոյն խաբեբայ քուրմք նորա, ազդ առնեն մեծամեծաց որոց և կամին, թէ ա̃ծուհին քեզ հրամայէ յայսմ ամի շինել զարձան իւր, ուստի և նք̃ ծախիւք իւրեանց տան շինել քրմաց 'ի կաւոյ գետոյն. զոր ներկեալ 'ի պէսպէս գոյնս ձևացուցանեն զդիւսս, և դնեն յապարանս իւրաքանչիւր մեծատուն որ ետ շինել, 'ի զարդարեալ բարձրաւանդակ վայրի: Ապա զաւուրս տասն անը̃հատ պար առեալ քրմայ զնոքօք՝ կատարեն զպաշտամունս երգօք և աղօթիւք զտիւ և զգիշեր. բազմութ̃ վառեալ մոմեղինաց և բուրմամբ ազգի ազգի խնկոց անուշից. և մի ոմն 'ի քրմաց ունելով 'ի ձեռին թաւամազ ագի կովու հովահարէ նովաւ անդադար զարձանն առ 'ի պատիւ, միանգամայն 'ի վանել զճանճս: Ընդ այն աւուրս պաշտօնեայքն չա̃ծուհւոյն առաքեն 'ի պարգև խնկանոցս և այլ պէսպէս ոսկի և արծաթի անօթս, և ազգի ազգի քաղցրուենիս և խորտիկս. յորս առեալ պատրաստեալ կան երկու սեղանք. մի՝ 'ի բարձրաւանդակի անդ յանդիման արձանին, ուր դնին առաքեալ ընծայք և քաղցրուենիք 'ի պէտս քրմաց. զի զպարգևսն նք̃ սեպհականեն, և զքաղցրուենիս ուտեն. և մասն ինչ առաքեն և իւրեանց բարեկամաց իբր նուէրիւք իմն և սրբազան: Իսկ զերկր̃դ սեղանն պատրաստէ տանուտէր տանն 'ի տարբին կողմն՝ լի զնոյն խորտկօք և քաղցրուենեօք վ̃ն հ̃րկ ժողովրդեան:

Յետ տասնօրեայ պաշտամանն բարձեալ քրմաց 'ի վ̃ր ուսոց իւրեանց զարձանն, հանեն թափորիւ յիւրաքանչիւր տանց, և մեծաւ հանդիսիւ երգօք թմբկօք և ծնծղայիւք պարելով, և կաքաւելով ոմանց առաջի նր̃, տանին 'ի գետն Գանգէս, կա՛մ յայլ ինչ մերձակայ գետ. զհետ երթալով բազմութ̃ ժողովրդեան բաց 'ի տանուտեարց: Եւ անդ է տեսանել առ գետովն տեսարան զուարճալի յելանել 'ի փողոցաց այլևայլ բազմամբոխ խմբից որք բարձեալ բերեն յապարանից մեծատանց զկաւակերտ գունագեղ արձանս 'ի գետ. ուր 'ի պատրաստի կան նաւակք գեղեցկաձևք զարդարեալք ըստ իւրեանց օրինի. յորս եդեալ զարձանսն, դն̃ առաջին և երգեն ընդ̃ն այլանդակ շարժմամբք. ապա յանկարծակի իբրև յիմարեալք, մեծագոչ աղաղակաւ և շառաչմամբ արագ արագ հարկանեն խորտակեն զկուռսն, և փշրեալ ընկենուն 'ի գետն. զվերջին զարժանաւոր պատիժ տալով չծոյն իւրեանց : Յաւուրս տօնի այսր չծուհւոյն՝ թէպէտ չէ օրէն նց պարապել յառևտուրս, սակայն գուն գործեն գէթ փոքր ինչ առնել, և շահել ինչ. զի համարին ունել այնուիկ առատուէն և յաջողուէն յառևտուրս իւրեանց ըն ամն ողջոյն. ուստի և զդրամս շահեալս յայն աւուրս, ներկեալ տանին դնեն առաջի արձանաց և պաշտեն. նաև զգուրս համբարանոցի վաճառաց իւրեանց, մինչև նաև զկշռորդսն և զվէմս ներկեն աղօթաձև իմն աղապաջելով առ 'ի տալ յաջողուէն շահաստանուէ : Ունին և տօն ինչ միում 'ի չծոց, յորում աւուր որթ գոմշոյ զոհ մատուցանեն, բայց վս այնր զոհէ սահմանեալ է զի միով հարմամբ հատցի գլուխ որթոյն, ապա թէ ոչ իբրև պիղծ 'ի բաց ընկենուն զայն, և զայլ որթ մատուցանեն 'ի զենումն :

Այսպ օրէնք համօրէն յածի զարտաքին խորանօք. զի ոչ համարին այլով իմիք զօգուտ հոգւոց իւրեանց ստանալ, բայց եթէ պահելով զարտաքին խորանս որ անհամար է. և զորս Ճշգրիտ պահեն նախանձաւորք նց. ուսեալք 'ի հարց, և խրատեալք 'ի քրմաց. իսկ 'ի ներքին առաքինուէ և 'ի սրբուէ անմասնեն ամենևին, զոր թէ բնաւ անդամ քարոզեսցէ ոք նց, ոչ երբէք 'ի միտ առնուն. գոլով ընկղմեալ 'ի մարմին՝ հանգոյն անասնոց անբանից, և լցեալ ամ գարշուէ : Վսյ դժուարին է և գրեթէ անհնարին դարձուցանել զնս 'ի Ճշմարիտ հաւատս. ոմն ըստ իք ըստ մ'անգամ զփորձ առին: Մանաւանդ զի զամ կրօնս և զաղանդս ուղիղ համարելով, հաստատեալ ունին 'ի միտ թէ իւրաքանչիւր յինչ կրօնս և իցէ ծնեալ, նովաւ հասանէ իւրում վախճանի: Ուստի ոմն 'ի վարդապետաց՝ որ քաջուսեալ էր զլեզու նոցա, իբրև յաւուր միում առաջի բազմամբոխ ժողովրդեան՝ քարոզեաց նց զՃշմարիտ հաւատս, սկսեալ յարարչուէ Այ մինչև ցմահն քսի, թէ զիարդ այն ամենակարօղ ած, որ զամ տիեզերս արար, եկեալ վս մեր խաչեցաւ և մեռաւ, յարտասուս հարան, որով յուսայր ամյն նց դառնալ 'ի Ճշմարիտ հաւատս քրիստոնէուէ : Բայց յետ աւարտելոյ զբանս իւր, նք ևս մատուցեալ առ նա, պատմել սկսան զվարս զնդն ածոց իւրեանց. թէ զիարդ այս ոք և այն ոք ած իւրեանց՝ զնչն և դժնդակ չարչարանս կրեաց յԱյ : Եւ 'ի զայրանալն սր, նք զարմացեալ ասեն. 'ի պատմելն զվարս այդ քո, մեք

ոչ

ունկնդիր եղեն 'ի յոյզս և յարտասուս շարժեցաք · իսկ դու ընդէ՞ր բարկանաս 'ի պատմելն զվարս ածոց մերոց :

Համօրէն ժողովուրդ հնդկաց բաժանեալ է 'ի չորս դասս · որք են Պրամանք, ու քուրմք · Զինուորք · Մշակք կամ հողագործք · և Արհեստաւորք : Եւ ս.ք. դձլ բաժանին յայլևայլ դասս : Այս անհաւասութի դասակարգութ՟ հին է յոյժ · զորմէ չիք բնաւ ոչ աւանդութի, և ոչ յիշատակարան ինչ յարդ ծանուցեալ, թէ երբ, և յումմէ եղև · որ է հաւաստի ապացոյց հնութ՟ հնդկայնոց · զի այսպիսի անհաւասութի ենթադրէ ըղ-հաստատեալ ընկերութի, և զմիմեանս մարդկան զարգացելոց 'ի քաղաքականութ՟ :

Պրամանք՝ որք 'ի ոմանց կոչին պամանք՝ որք են քուրմք նց, աղնուականագոյն են քան զամ ցեղս, նաև քան զցեղ թգ՟րին · բայց և 'ի նոց գոն այլևայլ ցեղք մի քան զմի աւաւել վերագոյն : Պաշտօն սոցա յաջորդութ՟ անցանէ յորդիս · որք 'ի նշան քրմութ՟ ունին կախեալ զպարանոցաց ածեալ ընդ անթովք 'ի վ՟ մերկ մարմնոյ՝ եօթն ապանիս, որով որոշին յամենայն· ունին և բառս ինչ անծանօթս այլոց · զորս կամեցեալ հաւաստել, թէ այս որ իցէ քուրմ, և ոչ կեղծեօք կախեալ ունիցի զպարանոցէն զայն լար աղանեացն՝ առեն նմ՟ պրասուն · զոր թէ գիտիցէ, իմանան թէ 'ի ճշմարիտ քրմաց անտի է · զի այլք բաց 'ի նցէ ոչ երբէք կարեն ուսանել, եւր զի անդադար փոփոխեն զբառսն զայնոսիկ :

Զպրամանս կամ զքուրմս սպանանել չէ օրէն · և մի 'ի մեծագոյն և յաններելի մեղաց է համարեալ այն առ նս : Կարօղ են զամ աղնուականս արուեստս 'ի գործ ածել, և եղանել յոճակաւ և 'ի քաղաքական իշխանութես : Ոմանք 'ի սոցանէ բնակեն 'ի մէջ մարդկան՝ պաշտօնեայք գոլով մեհենաց · և ս.ք. գրեթէ առհասարակ լի են պղծութք և ամ չարագործութք, զոր համարձակ գործեն, առընթեր ունելով զգանգէս և զայլ գեա՝ յորս 'ի լուանալն, համարին սրբել յամ պղծութեց · չունին ոչ սրբակեցութի, ոչ համեստութի, ոչ բարեխառնութի, և ոչ բնաւ լուսոյ ինչ · բայց միայն զբնական կարեկցութի ինչ՝ որ հասարակ է հնդկայնոց : Իսկ այլք զատուցեալ յընկերակցութէ մարդկան՝ վարեն առանձինն կեանս ճգնաւորականս · և են որք դատարկասունք, և մոլեգինք · մատնեալք յորս դատարկութ՟, անկորդ աղաչութե, և խեղաժետ ցնորից · առնել 'ի կեր արկանելով 'ի ցնորս իւրեանց մետափիզիկական անուանս ինչ վերացեալս. զի գոյացութիւն, պատահումն, յառաջնութիւն և յետնութիւն, անփոփոխականութիւն, անբաժանելութիւն. հոգի անկական և զգայական են: Սոքա առ հարկ խաբեայ են և նենգաւոր. որք խորամանկութեամբ իւրեանց գերեալ ունին զժողովուրդն. զոր ինչ կամին առնեն. և զոր ինչ կամին խնդրեն 'ի ժողովրդենէ. մինչև և զկանայս նոցա, պատճառելով թէ այս ինչ աստուած խնդրէ զկին քո 'ի ծառայութիւն իւր. իսկ ռամիկ ժողովուրդն խղճելով, կատարեն զհաճոյս նոցա:

Պատմի ևս թէ նախ քան զգալուստ լանկթամուրայ. եդեալ էին 'ի տեղւոջ ուրեք բոլորակաձև երկաթ ինչ սրեալ իբրև զսուսեր. և քարոզէին ամենայն՝ թէ որ ոք մատուսցէ զպարանոց իւր յայն երկաթ, և զամենայն ինչ զիւր թողուցու անդէն, իսկ և իսկ զնոյն խառնի 'ի դասս աստուածոց. ուր ասի թէ անբաւ բազմութիւն մարդկան զենեալ, զորոց զպարանոց հարկանէին իմէք սրամանքն 'ի վերայ այնր. և զինչս նոցա իւրեանք սեփականէին, այլ լանկթամուր խորտակեաց զայն երկաթ:

Ջինուորք, կամ դաւանդ զինուորական դասու, են Ռոյաք ընակիչք ծովեզերեայց կորոմանդելոյ. և Նայիրք՝ որք 'ի ծովեզերեայս Մալաբարայ. են և այլուր այլոյն ժողովուրդք՝ որոց անխտիր թոյլ տուեալ է այս կարգ զինուորական, որպէս են Կանորինեանք և Մարաթայք:

Մշակք կամ հողագործք՝ բազմաթիւ են քան զայլս, և 'ի յարգի յոյժ առ նոսա վասն պիտանութեան և օգտութեան իւրեանց առ ընկերութիւն մարդկան:

Իսկ դասն արհեստաւորաց յայնչափ ցեղս բաժանի, որչափ են արհեստք. և այնչափ ազնուականագոյն կամ ստորին և անարգ են համարեալ, որչափ ազնիւ կամ անարգ են արուեստք նոցա. քանզի և յարուեստս գտանեն զորակութիւն և զպատուականութիւն: Անարգագոյնք յարուեստս՝ են կօշկակարք. քանզի հերձուն զմորթ կովու, նաև սակեգործք, և այլք՝ որք կռանաւ հարկանեն զոսկի և զայլ հանքս, զորս պաշտեն. սակայն ինքեանք ոչ խղճեն գործել առ նոցա: Ոչ ոք բնաւ կարօղ է թողուլ զարհեստ հօր իւրոյ, և մտանել յայլ. յայն սակս ոչ ոք կարէ 'ի ստորին աստիճանէ ելանել յառաջնուն եթէ ոչ մասնաւոր ինչ շնորհիւ. նաև վասն այսորիկ պատճառի յայնչափ գարուց հեռի է բազում արհեստք չեն այնչափ ինչ ծաղկեալ առ նոսա, որչափ արժան էր:

Բաց 'ի չորից դասուց աստի են այլ ևս երկու, զորս մարթ է կոչել դիրաս ազգաց. իբր զի են մերժեալք և որոշեալք յայլոց դասուց, սակս օրինազանցութե̃ և պղծութե̃, և կոչին Բարիաք. որոց գործ է թաղել զմեռեալս տաճիկ մուղալաց, մաքրել զաղբանոցս, աւելել ածել փողոցաց, և զայլ սոցին նման անարգ գործս առնել, զի այլ ամ̃ արհեստք արգելեալ են նց̃։ Ոչ պահեն զխտրանս, ուտեն զմիս սատակելոց անասնոց, և զայլ ամ̃ արգելեալ կերակուրս՝ բաց 'ի մսոյ կովու. վս̃յ այնչափ զզուելի և խորշելի են՝ մինչ եթէ ոք 'ի սց̃է հուպ լինի ումեք յայլոց ցեղից կմ̃ դասուց, կարօղ է նա անդէն վաղվաղակի սպանանել զնա։

Իսկ երկր̃ ցեղն կոչի Բուլեքիս. սք̃ գտանին 'ի Մալաբար, կերպարանօք և եթ նմանեալ մարդկան, այլ ինքեանք գլխովին են իբրև անասունս։ Բնակութի նց̃ է յանտառս. ուր առ անմտութե̃ ոչ գիտեն շինել ինքեանց խրճիթս, այլ ը̃ թռչնոց դնեն բոյնս 'ի վր̃ ծառոց, և 'ի քաղցնուլն՝ գոչեն իբրև զանասունս, առ 'ի գութ շարժել զանցաւորս, որք և գթացեալ նց̃՝ դնեն փոքր մի որիզ, կմ̃ այլ ինչ կերակուր ը̃ ծառովն, և վաղվաղակի խոյս տան անտի. զի և մատիլ իսկ այնպիսի անասնաբարոյ մարդկան՝ պղծութե̃ համարին անձանց։ Գոյ և այլ ցեղ ինչ սփռեալ ը̃ ամ̃ աշխ̃ն մուղալաց, որք կոչին Պանեանք, յորոց են լումայափոխք, այն է Սառաֆք այնր աշխ̃ի, և վաճառականք։ Սք̃ փարթամ և մեծատուն են յոյժ ը̃ զայլ ցեղս, որք աղանդիւք զանազանին յայլոց՝ առաւել թայլ գոլով ը̃ զնս̃. զի սք̃ ճնպ̃հորդեն և ը̃ ծով, որ արգելեալ է ամ̃ց յօրինաց նց̃։

Բաց 'ի ցեղից աստի, որք որոշեալ են 'ի միմեանց ը̃ սահմանադրութե̃ դենի իւրեանց, են և այլք 'ի Հնդիկս անուանեալ Ֆաքիրք, որք են իբրև ազգ մի վանականաց՝ մեծապէս պատուեալք 'ի Հնդկաց։ Յայս ժողով կարեն մտանել յամ̃ ցեղից. միայն թէ յանձն առցեն տալ զանձինս ը̃ օրինակի պաշտամանց 'ի հնպ̃զորդ խոկմունս, կմ̃ լաւ ևս ասել ցնորս, և 'ի զարհուրելի ճգունս մարմնոյ. զորս մարթ է ասել ժողով մոլեգնելոց. յորոց ոմանք վս̃ ճգնութե̃ զօրէն խոզից թաւալին 'ի տիղմս. ոմանք դատապարտեն զանձինս յամ̃ կեանս վերամբարձ ունել զբազուկս մինչև իսպառ գօսանալ։ Այլք աւուրս եւթն՝ և առաւել ուղիղ յոտն կան անշարժ ամենևին. մինչև չորաչար այտնուլ ոտանցն նոցա։ Իւ

նմին

ամբն ուխտեն ոչ երբէք լուանալ զերեսս· և ոչ սանտրել զհերս, և այլ ազգի ազգի օրինակաւ խանգարեն և աղճատեն զանուն առ 'ի հաճոյանալ ա՟ծոց իւրեանց, և փառաւորիլ 'ի ժողովրդենէ ։

Ա՟մ ցեղք, որք յաշխարհական սերնդեամբ յա՟ջ գան՝ խորշին մեծապէս, ոչ միայն յօտար ազգաց այլև 'ի միմեանց· ոչ ամուսնանան բնաւ ցեղ ը՟ ցեղի, ոչ բնակին 'ի տունս միմեանց, ոչ խնդրեն ջուր 'ի ն՟ցէ յարբումն՝ եւս և 'ի ստիպել մահուչափ ծարաւոյ· ոչ ուտեն 'ի միասին, և ոչ առանձինն 'ի տունս այլոց ուտեն եփեալ ինչ, բայց եթէ զպտուղս զորս ընդինքեանս բարձեալ ունին ։ Վ՟յ յորժամ երթան 'ի տունս այլոց ցեղից, կ՟մ օտարական ազգաց, գ՟ր հայոց կ՟մ անգղիացւոց, տանուտեարք ոչ կարեն համել առաջի ն՟ց այլ ինչ, բայց միայն բան տերև, զորմէ գրեցաք 'ի վեր անդր 'ի վ՟ր արծաթի սկաւառակ և վարդաւէնչ, կ՟մ իւղ վարդի· յորմէ առեն սակաւ ինչ օծանին ։ Յուտելն ա՟յ 'ի տեղւոջ ուրեք որոշեալ վ՟ն անձանց, եթէ մերձեսցի կ՟մ կոխեսցէ ոք յանկարծ անդ՝ զկերակուրն զոր տակաւին 'ի բերանի ծամքեն, իսկ և իսկ արտաքս ձգեն· և երթան լողան 'ի գանգէս, կ՟մ յայլ գետ 'ի մաքրել ։ Բաց 'ի յայսց զանազան յոգնատաժան արտաքին խորանաց, ունին բ՟զ՟մ նորամուտ սովորութիւս խարանս և օրէնս 'ի պաշտամունս ա՟ծոց, 'ի կերակուրս, յապաշխարութիւս, 'ի հարսանիս, և 'ի յուղարկաւորութիւս մեռելոց, զորս պահեն ամ՟քին· բաց 'ի ցեղից ինչ, յորս գոյ զանազանութիւն յերս կրօնի· և բաց 'ի թուլացելոցն, և յանմածից որք ոչինչ պահեն ։

Յա՟մ առաւօտու կռապաշտ մոլորք՝ արք և կանայք, ծերք և մանկունք, երթան և լուանան 'ի գետն· և առնուն ջուր մատամբ սրսկելով աստ և անդ ազգի ազգի ձևով. ձ՟ղի ջրով համարին սրբիլ· զի 'ի սարերս զջուրն առաւելապէս պաշտեն՝ մ՟ինչ ըզգանգէս· ուր ամի ամի գնան յուխտ և լողան, հանդէս մեծ կատարելով անդէն· բ՟զ՟մ անգամ արկանեն 'ի գետս շաքար, որիզ, և այլ կերակուր ։ Վ՟յ ձ՟ղեք ն՟ց ը՟ մեծի մասին են առ գետովք 'ի դիւրութիւն· այլ մեծատունք ունին և 'ի տունս իւրեանց տեղի մասնաւոր 'ի պէտս լուանալոյ ։ Յետ լուանալոյ երթան և 'ի ծունկս անկանին առաջի քրմաց՝ որք կան առ ափն գետոյ, իւրաքանչիւր առ իւր քուրմն· որք և ունին զանազան ներկս· և ներկեն նոքօք զերեսս մ՟ինչ զճակատ նոցա, ամանց 'ի գոյն կարմիր, և ոմանց՝ դեղին են, այլ և այլ ձևովք: Այն գունաւոր նիւթք՝ են նշանակք գործոց ինչ կռոց իւրեանց, որ կայ դրեալ 'ի գիրս ինչ նոցա· ուսանի իւրաքանչիւր ոք առ որ 'ի կռոցն առաւելապէս փոյթեւանիցն է՝ զնորին նիշն նկարէ քուրմն 'ի նմ̃: Ապա տուեալ քրմին յընծայ փոքր մի որիզ, կամ այլ ինչ, գնան 'ի տունս իւրեանց աղօթս առնել առաջի դրոշելոց՝ զոր ունին 'ի տան, իբրև ժամ մի կամ երկուս· և ապա այնպէս գունագեղեալ երեսօք երթան 'ի գործս իւրեանց և շրջին ը̅ քղքն՝ մինչ 'ի վաղորդեան օրն· բայց զայս սովորութիւն 'ի տեղիս տեղիս ոչ պահեն ճշդիւ ամենեքին: Նոյնպէս և քուրմք նց̃ միշտ ներկեալ ունին զերեսս զանազան ձևովք· և մերթ ընդ մերթ նստեալ առ գետափին 'ի ձեռին առեալ պիտակ ինչ ընթեռնուն և քարոզեն ժողովրդեան, երբեմն ողբաձայն և երբեմն սաստկաձայն, շարժելով զգլուխ և զաչս իբրև խելագար:

Մեծամեծք ունին 'ի տունս քուրմս, զոմանս առ 'ի պաշտօն տանիլ առ անձին կռոց իւրեանց, զորս յերեկոյի ընկողմնեցուցանեն 'ի վարագուրաձևս դահոյս· իսկ յառաւօտուն հանեալ լուանան, և ներկեալ 'ի նմ̃ զանազան ձևս, դարձեալ կանգնեն 'ի տեղւոջն՝ զոհս մատուցեալ առաջի նց̃: Իւր զոմանս 'ի խաչաբարուն կերակրոյ· զի նաև 'ի հնդիկ ժողովրդեան զկերակուրն միշտ պատրաստականագոյն անձն եփէ· որ հայրն· և եթէ նա ոչ գտցի, երէց եղբայրն· ապա եթէ սա ևս պակասեսցի, այլ ոմն յերիցագունից տանն· և բաշխէ ամ̃ցն 'ի տան եղելոց, որոց առեալ զբաժին իւրեանց, ուտեն 'ի նմին սենեկի՝ հեռի 'ի միմեանց՝ առանձինն և ոչ 'ի միում սեղանի: Նոյնպէս և 'ի Ճնաչորդեան ուրեք բազմութ̃, յորժամ ոչ գտցի անդ քուրմ, կամ այլ ոք յերիցագունից, նա եփէ զկերակուր նց̃՝ որ աշխատականագոյն է ցեղին· իսկ յորժամ միայն է, յայնժամ ինքն և եցէ, ինքնին եփէ զկերակուր ան̃ իւր:

Ի նիւթս կերակրոց են ցեղք ինչ որք խստագոյն են քան զայլս· և ոչ ուտեն բնաւ զմիս, զձուկն, զձու, և զպանիր, և ոչ ըմպեն գինի կամ օղի· այլ միայն զորիզ, զարմտիս, զկաթն, զկոգի, զբանջարենիս, և ըմպեն զաւիշկ նարկիլ ծառոյն, զորմէ գրեցաք վերագոյն: Իսկ այլք ուտեն և ըմպեն զամ̃՝ բաց 'ի մսոյ կովու· զի այս արգելեալ է ամ̃ցն: Ի Ճնաչորդեան ը̅ գետ՝ ոչ եփեն կերակուր 'ի նաւակի, առ 'ի զգուշութիւն օրինաց իւրեանց ամ̃ թե̃ք·

զի ոչ կարեն անդ համարձակ զիւր խորանս պահել ըստ իւրեանց օրինաց, մանաւանդ եթէ օտարազգի ոք գացի 'ի նաւակի անդ, սակս վտանգին մերձենալոյ նորա 'ի կերակուրն: Այլ ելեալ 'ի նաւակէն 'ի ցամաք և զչափաւոր իմն տեղի՝ թացեալ ջրով գետոյն՝ և սրբեալ, անդ եփեն և ուտեն: Իսկ թէ յանկարծ մերձեսցէ ոք 'ի տեղին, պղծի ոչ միայն կերակուրն, այլև անօթք. վասնորոյ զկերակուրն 'ի բաց հեղուն. ըն-կալեղէն անօթս խորտակեն. իսկ զպղնձիս լուանան նաև ջրով, զի սրբեսցին 'ի պղծութենէ: Բայց զայս ոչ և զայլ խորանս ինչ, ոմանք ցեղք ոչ պահեն. որպէս բնակիչք Մուլթան նահանգի՝ կոչեցեալ Մուլթանի, որք մերձ են 'ի Պարսկաստան, և հեռի 'ի խորին մէջ Հնդկաց:

Ունին այսպէս օրինակս և ճգնաւորք, զոր առնեն կամ վասն ուխտի, և կամ վասն ապաշխարութեան. որք զմի կամ զերկոսին ոտս և զբազուկս գօսացուցանել վերամբարձ ունելով. որպէս պատմեցաք զՖախիր անուանեալ ճգնաւորաց. և զայս կամ առ ժամ մի, զոր ապա իւղովք կակղացուցեալ՝ դարձեալ ողջացուցանեն, և կամ մինչև 'ի մահ իւրեանց այնպէս: Եւ ևս ունին մանաւոր տօն միոյ 'ի գերագոյն չաստուածոց իւրեանց, զորմէ առասպելեն բազում չարչարանս կրեալ յ[illegible]. վասնորոյ բազումք, որք առաւել պաշտօնեայք են՝ առ նմանակից լինելոյ նմա, աւուրբք ինչ յառաջ քան զտօնն, մխեն սուր 'ի բազուկս, կամ յայլ անդամս. և այնպէս շրջին 'ի փողոցս. ապա յաւուր տօնի նորա, մատնեն զանձինս յայլ դժնդակագոյն տանջանս: Զի 'ի քաղաքս մանաւանդ յերևելիս, գրեթէ յամ թաղս՝ և 'ի գլխաւոր փողոցս, կառուցեալ կայ մեքենայ ինչ նման կշռորդի, այն է՝ թերազինի, կամ նման մեքենային՝ որով կշռեն փայտ 'ի Կոստանդնուպօլիս. յորոյ 'ի մի ծայրն կախեալ կայ ձանկ երկաթի՝ զոր քուրմն անցուցանէ ընդ մորթ թիկնամիջաց նորա. և երկուս պատեալ ամրէ զնա ընդ ձանկն՝ զի մի առ ծանրութեն պատառեսցի մորթ թիկնամիջաց. իսկ 'ի միւս ծայրն նստին այլք առ 'ի լինել հաւասարակշիռ երկոցունց կողմանց: Ապա արագ արագ շրջաբերեն զայն թաթ, և ճգնաւորն առկախեալ յօդս, շարժէ զգլուխն զօրէն լուանոյց. տարածէ և ամփոփէ զբազուկս և զոտս որպէս առնեն լողակք 'ի ծովու. ունելով 'ի գլուխն խոյր երկայն, այն է քիւլահ. զորոյ ծայրից կախեալ կան բոժոժք. երեսք նորա առ հարկ ներկեալ են սպիտակ. և 'ի վերայ սպիտակին զնշանս գունովք այլ և այլ ձև դրոշմէր, որով դիմանման այլանդակ լինին երևէ: Այս տանջանք երբեմն տևէ իբրև քառորդ մի ժամու՝ մինչև կախեալն ինքնին ազդ առնէ դադարեցուցանել. յետ լքանելոյ նր, այլ ոք ելանէ 'ի տեղի նր, և յետ նր՝ այլք անընդհատ զօրն ողջոյն, 'ի գնելն կալով բազմութե ժողովրդեան. որք միանգամայն ը այս կարգ. ճգնութե անցանեն, պարծանք մեծ համարելն անձանց և տանց իւրեանց՝ կրելով 'ի մարմնի զնշան սպիացն:

Ունին և այլ մոլեգնական ապաշխարութիւս՝ յորժամ գործեն ինչ՝ որք ը իւլաժէտ խորանաց նց մեծամեծ մեղք են համարեն: Զոր օրինակ եթէ 'ի տան ուրուք յանկարծ փոս ինչ դիպեսցի կովու. ապ եթէ ոսք նր խորտակեսցի, կմ դիպուածով իմն սատակեսցի. յայնժամ քուրմն դնէ տանուտն երբեմն ապաշխարանս, բառանչել ը օրինակի կովու, շրջելով 'ի փողոցս՝ մինչև ցամս եօթն՝ կմ յաւէտ և նուազ: Իսկ եթէ ոք գործեսցէ մեծագոյն մեղս. ապ եթէ նաւու ճանապարհորդեսցէ այլուր, որ արգելեալ է նց բաց 'ի ցեղէն ինչ, և եթէ կերիցէ յեփել կերակրոց այլոց ազգաց, կմ միս մինդ կովու. և կմ գործեսցէ ինչ, որ է ընդդէմ մեծամեծ պատուիրանաց և ըհանուր օրինաց նոցա, տոհմակիցք և ազգականք նր ջանան որչափ ինչ հնար է 'ի ծածուկ պահել. իսկ եթէ յայտնեսցի, յայնժամ նոյն հետայն արտաքս հանեն 'ի ցեղէ և 'ի տանէ իւրմէ. զրկեն և 'ի ժառանգութէ, և ոչ իսկ բնաւ հուպ լինին նմ. ապա թէ ոչ և ինքեանք մերժին և արտաքսին յայլոց: Եթէ ոք յայսպիսի պղծելոց՝ իցէ աղքատ, խառնի յայն ցեղն՝ որ արտաքոյ է ամցն և անարգ ը զամենին, զորոց ասացաք 'ի վեր անդր: Իսկ թէ իցէ մեծատուն և խնդրեսցէ սրբել և զծախս քաւութեն յանձն առնուլ, յայնժամ քուրմք առեալ ածեն զնա առաջի քրմապետին. և անդ գլխովին մերկացուցեալ, սպասեն զայլանդակ մաքրութն՝ պատրաստ մածեալ ը քակոր կովու. և չորացուցեալ յարևու, սկսեալ յոտից մինչև ցգագաթն: Ապա լուցանեն զվերին ծագ պատրուգին, և առժամայն ծաւալեալ հրոյն՝ 'ի գլխոյ մինչև ցներբանս ոտից, խանձատէ զմարմինն բովանդակ. այլ եղկելին 'ի քաւութն մեղաց իւրոց բռնադատի առնուլ: Յետ այնորիկ երթայ 'ի գետն և լուանայ. ապա լուանայ և զոտս քրմապետին, և 'ի ջրոյն առեալ ցանէ 'ի վր իւր և ըմպէ. հուսկ յետոյ քրմապե-

տին

տէին զոսան 'ի վերոյ գլխոյ նորա եդեալ, արձակէ յազատութիւն ։ Եւ նա առաքէ ընծայս և նուէրս նմ, և այլոց քրմաց, և ջոգոց. ծախք զորս առնեն սակս այսր մաքրութեան և քաւութեան առաւել է քան զոսան հզր ռուփիս ։

Նոյնպէս եթէ տուն ուրուք պղծեսցի, մտանելով անդ 'ի մասնաւոր ինչ տեղիս տանն՝ հաւու՝ և կմ մարդոյ յայլ ցեղէ, քանզի բաց 'ի հնդկաց սենեկէ, ուր օրէն է ում և իցէ մտանել, ունին մնդ մեծատունք 'ի տան իւրեանց մասնաւոր կողմն կմ սենեակ սեփական 'ի բնակութիւն իւրեանց, ուր եթէ մտցէ ոք յայլոց ցեղից՝ պղծի ։ Յայնժամ 'ի յայսնիկն՝ դարձեալ զքակոր կովուն խառնեալ ը ջուր, մածանեն նովաւ առ հսրկ զառաստաղ, զորմունս, և զյատակն, և զամ ինչ, և լուանան. և ապա կարեն մտանել և բնակել 'ի նմ ։

Սովորութիւն է առ հնդիկս 'ի տղայութեան հաստատել առնել զամուսնութիւն. յորոց բզմք միակին են, այլ ոմանք յերևելի ցեղից կարող են ունել և բզմ կանայս ։ Կանայք յետ մահու արանց իւրեանց կմ պարտին տալ զանձինս յայրումն, և կմ մտանել 'ի ծառայութիւն պամանաց և ջոգոց. բայց այն հրակիզումն թողեալ է յազատ ընտրութիւն իւրաքանչիւրոց, առ որ քուրմք յորդորեն եւեթ, այլ ոչ բռնադատեն ։ Սակայն եթէ կինն խոստանայցէ միանգամ տալ զանձն 'ի հուր, այնուհետև թէև դարձցի 'ի խնդրոց իւրոց՝ ոչ ներեն նմ, այլ բռնի ձգեն յայրումն ։ Պատմեն՝ թէ յորժամ հանդերձեալ է ոք 'ի կանանց անտի մտանել 'ի հուր, պաշտօնեայք գործոյն տան նմ ըմպել զարբեցուցիչ ինչ ըմպելի՝ առ 'ի ցուցանել 'ի վերին երեսս զուարթութիւն և զյանդգնութիւն. իբր թէ խնդութեամբ մեռանի վն առն իւրոյ ։ Բայց եւրոպացիք 'ի սահմանս տէրութեան իւրեանց խափանեցին զայս անօրէն սովորութիւն. ուստի բզմք 'ի հնդկաց որք սահմանակից են ծի բնիկ իշխանաց հնդկայնոց՝ անդ տանին և այրեն ։

Նոյնպէս զդիակունս մեռելոց ոչ թաղեն ը հողով, այլ այրեն. աղքատք հսրկ փայտիւ, իսկ բզմք 'ի մեծատանցն [illegible] կոչեցեալ ծառով կմ այլով պատուական փայտիւ. յոյր սակս ծախս մեծամեծս առնեն նք ։ Իսկ յետին աղքատք որք ոչ կարեն նաև հսրկ փայտիւ այրել, 'ի գետ ընկենուն զմեռեալս ։ Յորժամ հիւանդ ոք մերձենայ 'ի մահ, զգուշանան յոյժ, զի մի մեռցի 'ի տան. այլ ը իմանալն զմերձե.

ձենալ մահու՝ տանին առ ափն Գանգէսի կմ այլ գետոց. և անդ քուրմն առեալ 'ի գետոյն ափով ջուր, սակաւ սակաւ արկանէ 'ի բերան խօթացելոյն. յորմէ բժշկք հեղձամղձուկ եղեալ 'ի ջրոյ՝ սատակեն: Իսկ թէ դէպ լիցի, զի յետ միանգամ տանելոյ զոք յափն գետոյն՝ և արկանելոյ ջուր 'ի բերան, դարձեալ առողջասցի, ոչ դարձուցանեն այնուհետև 'ի տուն, և ոչ հուպ լինին 'ի նա բնաւ. այլ պղծեալ համարեալ, և իբրև անհաճոյ դից՝ թողուն անդէն զերկելին առ գետափն: Ոչ երբեմն մեծազգի տիկին ոմն, որ քզի ոչ մեռաւ յետ հանելոյ զնա 'ի տանէն, որդիք նր շինեցին նմ խրճիթ յեզր գետոյն, ուր բնակեցաւ եղկելի մայր նց զամս բզմս մինչև մեռաւ անդ. և որդիքն՝ յորժամ կամէին խօսել ըն նմ, 'ի միւս կողմն գետոյն կայեալ 'ի հեռուստ, այնպէս խօսէին:

Իսկ դէն տաճկիկ մողոլացն, է նոյն խիկ մահմետականն. այլ խառնեալ ընդ նոցին խորամանք, թէպէտ ոչ ըն հնդկաց: Քանզի թէպէտ 'ի կերակուրս այլոց մերձենան, և վս այլոց եփեն զի ըն մեծի մասին խոհարարք այլոց ազգաց՝ որպէս հայոց և անգղիացւոց են, 'ի սցէ են, սակայն եթէ ոք մերձենայ 'ի կերակուր ինչ, չուտեն, և չառնուն ինչ անտի. ուստի նոյն խոհարարք՝ նախ ք զատուցել զկերակուրս տերանց իւրեանց, առնուն զբաժին իւրեանց 'ի կաթսայէ, և ապա ատաքեն: Ոչ առնեն աղօթս կմ նամազս, շատ համարին զարարեալսն մոլլային վս իւրեանց: Ունին մզկիթս յոլովս, մանաւանդ մեծամեծ տիկնայք և դշխոյք նց. քզի գործ աղօթման և օգուտ հոգւոց համարին. պատմի թէ 'ի Մախսուտապատ քաղաքի եւեթ. որ է մայրաքղք նհնգին Պանկալայ, լինին 300 մզկիթք. բայց չիք բնաւ առ նս խնամք և փոյթ 'ի պահպանութի մզկիթաց. բաց են հնոտի դրունք նց:

Ժէ. Բաժանումն Մողոլաց.

Նախ ք զառնուլն զայս Տ մողոլ թաթարաց, որք տասցաք 'ի կառավարութե սց. ոչ էր մի տէրութի, այլ բաժանեալ էր 'ի զնզն և յանհամար թագաւորութիւնս և 'ի ռամկայութիւնս: Յետ տիրելոյ մողոլաց, և յետ ընդարձակելոյ զնա Ակբարայ և Օվրանկզեպայ, քաջայաղթ ինքնակալաց, 'ի ծաղկեալ ժամն անդ՝ յերիս մեծամեծ մս բաժանեցին զայն մասունս, որք կոչէին. Հնդոստան. Տէքան, կմ Տաքան. և Պանճապ:

Հնդ.

Հնդկաստան կամ Ինտոստան կոչեն զհիւսիսային կողմն աշխարհին. Տաքան կամ Տըքան զայն մասն՝ զոր աշխարհագիրք կոչեն ցամաքակղզի որ յայսկոյս գանգեսի : Բանկալա՝ զնահանգս մինչ արևելեան կողման աշխարհին խուրթանց : Եւ զայս երիս աշխարհս բաժանէին Մողոլք 'ի ԻԲ մեծամեծ նահանգս, զոր կոչեն Սուպայութիւն : Այլ բաց 'ի ԻԲ սուպայութեանց՝ էին այլ ևս բազում փոքր տէրութիւնք կամ ռաձայութիւնք, որոց իշխանք էին ոչ բնիկ մուղալք մահմետականք, որք կոչին սուպա նապապք, այլ բնիկ հնդիկ կռապաշտք, որք կոչին ռաձայք. որոց իւրաքանչիւր էին ազատ թագաւորք. և միայն հարկս հարկանէին նապապաց, կամ կուսակալաց նահանգաց : Սակայն այս ԻԲ նահանգք և զանազան ռաձայութիւնք, ոչ մնացին միշտ նոյն, այլ անդադար փոփոխէին. մանաւանդ՝ յետ տիրելոյ դահմասին : Երբեմն բազում ռաձայութիւնք և սուպայութիւնք 'ի մի յօդէին, և երբեմն առաւել ևս բաժանէին. ի յաճախելոյ զօրաւոր ռաձայից և սուպա նապապաց. և այնպէս յանդադար խռովութեան և 'ի պատերազմի կայր այն լայնածաւալ աշխարհն մուղալաց : Մերթ ևս 'ի զանազան սուպայութեանց՝ հաւաքեալ սրանց որսկայից և աւազակաց, նոր ազգ, և նոր տէրութիւն կացուցանէին. որք են մարաթայք : Եւ այժմ ևս յետ հասանելոյ անդր եւրոպացւոց, անդադար փոփոխին նահանգք և իշխանութիւնք սուպայութեանց և ռաձայութեանց : Վասն որոյ դժուարին է յոյժ ուղիղ և ամփոփ բաժանմամբ խօսիլ զայսր լայնածաւալ աշխարհէ. ուստի և իւրաքանչիւր աշխարհագիրք որք ընդարձակ խօսին զմանէ, զնորին բաժանումն դնեն, և զնոյն անուանս տան նահանգաց և իշխանութեանց նորա. զորս այլ աշխարհագիրք և աշխարհացոյցք ոչ յիշատակեն :

Իսկ պիւշինգ աշխարհագիր՝ չփոթ և աղաւաղ կարգաւ բաժանէ զայս աշխ. ըստ 'ի հատ. ԻԲ. 'ի թղթահամարս 91. տպագրութեան որ 'ի վէնէտիկ, 'ի չորս մասունս բաժանէ զաշխարհն. նախ՝ յառանձին տէրութիւն մողոլաց. երկրորդ՝ 'ի ծովեզերեայս մալապարայ. երրորդ՝ 'ի ծովեզերեայս գորոմանտելայ. և չորրորդ՝ 'ի թագաւորութիւն կամ 'ի տէրութիւն պանկալայ : Յառաջնումն աստ ունիմք խօսել զամենայն միջերկրական նահանգաց հնդկաց աշխարհին : Իսկ յերկրորդումն՝ յերրորդումն և 'ի չորրորդումն՝ զամենայն կալուածոց եւրոպացւոց : Այս սորա 'ի սկսանելն խօսել նախ առաջին զտէրութենէն մողոլաց, թողեալ զայս առաջին բաժանումն իւր, նորոգ բաժանէ զհամօրէն աշխարհն, նախ՝ 'ի հիւսիսային մասն. երկրորդ՝ յարևմտեան

յո.

յորում խօսի և զմալապարայ, զոր պարտ էր 'ի բաց հանել յառանձին տ՟րութ՟է մողոլաց, և դնել յեկ՟ գլուխ և 'ի կարգս կալուածոց եւրոպացւոց, ոպ՟ 'ի վեր անդր յը՟հանուր բաժանման խօսեցաք: Եր՟դ՝ յաւելեալն մասն, զոր յը՟հանուր բաժանման իւրում ոչ յիշեաց բնաւ. ուր խօսի և զտ՟րուէն պանկալայի, զորմէ պարտ էր խօսել 'ի չր՟դումն. և ուր անջատէ զգորոմանտել 'ի գառնադիկ տէրութենէն, և ապա 'ի գառնադիկ խօսի նաև զա՟մ ծովեզերեայ ք՟ղքաց որք վերաբերին առ գորոմանտել: Չր՟դ՝ բաժանէ 'ի միջերկրական ն՟հնգս հնդկաց, կմ՟ 'ի մողոլս առանձնակի. ուր չէ յայտ թէ ը՟էր զայս միջերկրական ն՟հնգս եւեթ կոչէ առանձին և սեպհական տէրութիւն մողոլաց, որովհետև և հիւսիսային ն՟հնգք որք են՝ (ոպ՟ և նա ինքն դնէ.) քիշմիր, քապուլ, լահոռ. են՟, են այժմ ես երկիր և տէրութիւն սեփական մողոլաց, ուր ոչ տիրեն եւրոպացիք: Եւ այսպէս որ խօսեցաւն 'ի մի միայն գլուխ՝ յառաջնումն և եթ խօսել զառանձին տ՟րութ՟է մողոլաց, և յերիսն զկալուածոց եւրոպացւոց, յերկու գլուխս յառաջնումն և 'ի չր՟դումն խօսի զմողոլաց, և յերկուս և եթ զկալուածոց եւրոպացւոց. ուր խառնէ ես զայլ տէրութիւնս և ընդ ն՟հնգս, որք սեփական են մողոլաց: Եւ որ զթագաւորութ՟էն պանկալայի պարտ էր ը՟ խօսումանն խօսել 'ի չր՟դումն՝ խօսի յեր՟դումն:

Թողցուք զայլ շփոթ կարգս ք՟ղքաց և գաւառաց, զորս 'ի չորեսին յայն գլուխսն դնէ. ք՟զի յեկ՟ մասին որ է արեւմտեանն, 'ի ժ՟ թիւն. 'ի ճառելն զծովեզերեայս մալապարայ, խօսի և զռաճայութ՟էն կմ՟ զտ՟րուէն մանկլօրայ, որ ոչ է 'ի նոյն ծովեզրն մալապարայ, այլ գանարայ, սահմանակից նմ՟. իբր զի ասէ 'ի նոյն հատ. լ՟ը. 'ի թզթահամարն 115. մեք կամիմք * ստորագրել յա՟ջ ընթանալով զա՟մ կալուածս եւրոպացւոց, յարեւմտեան ծովեզերեայս ցամաքականւոյն հնդկաց ||: Եւ սակայն զկնի մանկլօրայ անմիջապէս 'ի խօսելն զկոա ք՟ղքին, որ նոյնպէս է 'ի ծովեզերեայս գանարայ, բաժանէ զկոա ք՟ղք 'ի մալապարայ. և իբրև նոր գլուխ դնէ խորագիր. * Կալուածք եւրոպացւոց յայլ կողմանս արեւմտեան ծովեզերեայց հնդկաց տէրութեան ||, որ ոչ սակաւ շփոթումն արկանէ 'ի վերծանօղս. կարծելով թէ մանկլօր և կոա են յայլ և այլ ծովեզերեայս. և սակայն են 'ի նոյն ծովեզրն գանարայ: Եւ զգանադիկ ն՟հնգ զատուցանէ յեր՟դ մասին իւրում 'ի գորոմանտելայ. և սակայն զսահման գառնագլխ Հնդկին այնչափ տարածանէ, մինչև զբոլոր երկիրն Գորոմանտելայ 'ի նմ պարփակել. ուստի զպեմելն բաղդամ ԺԷ որ է 'ի գորոմանտել 'ի հէյտարապատ, և ըստ ոմանց յորխսա, դնէ 'ի գառնագլխն ։

Արդ՝ կամեցեալ մեր խորշել 'ի շփոթ կարգաց և զամփոփ և զորոշ բաժանումն դնել առաջի վերծանողաց, բաժանեմք զայս աշխ յերիս մեծամեծ մասունս և 'ի պրակս. 'ի Հիւսիսայինն, յԱրեւելեան, և 'ի Հարաւայինն ։ Հիւսիսայինն՝ պարունակէ զբոլ մեծամեծ Հնդկս ։ Արեւելեանն՝ պարփակէ զերիս և եթ Հնդկս, որք թէպէտ են 'ի հարաւակողմն հայելով 'ի վերայն Հնդկս մողոլաց, այլ ցամաքակղզին կամ տաքան Ծն, ըստ առաւել մասին 'ի հարաւ է Ք զսա. յոյր սակս զտաքան Ծն և եթ յայսմ բաժանման կոչեմք հարաւային մասն ։ Եւ թէպէտ բոլ և այլ Հնդկս մարթ էր դնել յայսմ արևելեան մասին՝ սակայն մեք զերիս և եթ եդաք վս մասնաւոր իմն պատճառի, զոր նշանակեսցուք անդէն ։ Իսկ հարաւայինն զայն մասն, զոր Եւրոպացիք կոչեն Ցամաք Հնդկի յայսկոյս Գանգէսի, և մուղալք կոչեն Տաքան, կամ Տէքան ։

Պրակ Ա. Հիւսիսային մասն Մողոլաց ։

Այս մասն ըստ որում առնումք աստէն, առաւել ընդարձակ տարածի Ք զայլ երկու մասունս. 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է բուխարիոյ. յարևելից՝ Տիպէդայ. յարևմտից՝ պարսից Ծին. իսկ 'ի հարաւոյ՝ ցամաքակղզւոյն Հնդկաց կամ տաքանայ. նաև երից Հնդկացն՝ զորս ունիմք ստորագրել յեկտ մասին ։ 'Ի կողմանս ինչ այսր Ծի՝ տիրէ ազգ ինչ անուանեալ Սէյք, կամ Շէյք՝ ազգ զօրաւոր. որք գիտացին թօթափել 'ի պարանոցէ իւրեանց զլուծ ինքնագլուխ միապետութեն, և զծանր բեռն անտանելի պաշտութեն մուղալաց ։ Զորոց ասեն՝ թէ զհետ երթան փիլիսոփայի ումեմն Տիպէդայ. որ եմուտ 'ի նս զսէր և զնախանձ ազատութեն. այլ և ուսոյց նց զմի Աստուծ, ոչ խառնելով 'ի նմ արտաքին ինչ ծէսս կամ խորանս ։ Սք զառաջինն հանդիսացան 'ի սկզբան ամբ անցեալ դարու. բայց ոչ իբրև ազգ մի, այլ

իբրև

երբեւ նոր աւանդութիւնք, որք 'ի ժամանակս խաւարութեանց տէրութեան մողոլաց բազմացան յոյժ. մինչեւ եւ այլոց բազմաց թողեալ զկրօն դէն իւրեանց, գնալ խառնիլ 'ի նոսա. փախուցեալք 'ի հարստահարութեանց բռնակալաց իւրեանց: Ընդունին սոքա 'ի միաբանութիւն իւրեանց զամենեսին, որք միանգամ երդնուն անհաշտելի ատելութեամբ բերել ընդդէմ միապետութեան զամենայն աւուրս կենաց: Յամենայն տաճարս իւրեանց ունին սեղան, յորոյ վերայ եդեալ կայ գիրք օրինաց իւրեանց, եւ առ նովաւ գաւազան արքունի եւ սուր. զորս ծերք կարգեալ կան առ 'ի խնդիր հարցանել 'ինչէ 'ի լինել հարկի. որք են իբրեւ թարգման օրինաց նոցա. որոց մի միայն գլուխ եւ թագաւոր՝ են օրէնք նոցա:

Տէրութիւն սոյն ընդարձակ է յոյժ. զի ընդ իշխանութեամբ իւրեանց ունին զայն աշխարհ առ հնդիկ, որ 'ի լահօրայ ձգի մինչեւ ցաւրհենտ, եւ 'ի քէշմիրայ մինչեւ ցսըղնա, կամ ցդագա. աստի եւ անտի Ինդոս գետոյն: Նոյնպէս եւ զօրութիւն նոցա երեւելի է. զի կարօղ եղեն 60000 հեծելս հանել. ուստի եթէ բռնակալ ոք զօրաւոր՝ ոչ նուաճեսցէ զնոսա յայսմ ժամանակին, մարթ է թէ առ սակաւ սակաւ եւս ընդարձակեսցեն զիշխանութիւն իւրեանց մինչեւ տիրել համօրէն հնդկաց. 'ի բաց վտարեալ անտի եւ զեւրոպացիս:

Բազում գետս ունի այս աշխարհ. յորս գլխաւորքն են Ինդոս, կամ Սինտ. Ճէլամպ, կամ Չանապ. Ռաւի. Պէաս. Լագա. եւ այլք բազումք:

Բաժանի 'ի ԺԴ. հատուածս նահանգս.

Ա. Տըլլի.	Ը. Աճմէէր.
Բ. Լահօր.	Թ. Աքպարապատ.
Գ. Քէշմիր.	Ժ. Աւուտ.
Դ. Քապուլ.	ԺԱ. Իլլահապատ.
Ե. Հայտաքան.	ԺԲ. Մալվա.
Զ. Մուլթան.	ԺԳ. Պէրարէճ.
Է. Սընտ.	ԺԴ. Գանտէշ.

Յօդ. Ա. Տըլլի, կամ Տէհլի.

Նահանգ ընդարձակ փարթամ եւ բազմամարդ քան զամենայն նահանգս իշխանականս մուղոլաց. ունելով յինքեան զարքայանիստ քաղաքն համօրէն տէրութեանն: Սա 'ի հիւսիսոյ ունի իւր սահման զդեղինդ. յարեւմտից՝ զլահօր նահանգն որ կոչի եւ փէնճապ. 'ի հա-

րաւ

բուռոյ՝ զոսկեզարապատ. իսկ յարևելից՝ զոխայ կամ
զավուղ:

Տըլէ, կոչի ևս Տէհլէ: Է մայրաքաղաք և գլուխ համօրէն տէրութեն մողոլաց, յորմէ առնու զանուն նհնգ նր: Ընդ բզմ ժմկս ՚ի ծագկեն ժմկի անդ նստէ աթոռ իշխանակալին, թէպէտ յետոյ միայն յամարայնի բնակէր անդ. կառուցեալ առ Ջըմնա գետով. և բաժանեալ ՚ի ջղք հին՝ որ այժմ արուարձան է և եթ. և ՚ի նոր որ կոչի Շահճիհանապատ, կմ Շահճանապատ, յանուն իշխանակալին՝ որ շինեաց զնա ՚ի սկզբան Է դարուն. զոր բզմք յեւրոպացի Աշգրաց ՚ի բաց բարձեալ զՇահն, կոչեն միայն Ճիհանապատ: Է սա ջղք մեծ ընդարձակ և ամուր. շրջապատ արքունի հայակաց ապարանիցն՝ է երբեմն մղոն մի և կէս: Թովմաս Մեծոփեցին կոչէ զայս ջղք Դիլէ. ուր կամեցեալ յայտ առնել զմեծութն նր, պատմեն առէ. թէ յառնուլն զնա Լանկթամուրայ, զուլուր քաղաքաւն նստաւ անդ հրմ զօրք իւրովք. այլ զերդ ջղքին ոչ ծանեաւ: Յառաջագոյն ոմ ասացաք ՚ի Թիֆն է. ՚ի վաճառսն՝ բզմք կային բնակեալք յազգէս հայոց ՚ի սմ. այլ յետոյ սփռեալ ՚ի ծովեզերեայ նհնգս հնդկաց, սակաւք ոմանք մնացին այժմ անդէն սերեալք ՚ի նախնեաց անտի: Յետ բզմ ժմկաց շինելն լանկթամուրին էառ զայս ջղք Դահմաս ղուլի խանն յամին 1739. որ և յետ քանդելոյ զնա, և զբռնաւոր ածելոյ զիշխանակալն մողոլաց, կողոպտեաց զրեթէ զամ փարթամութիւն և զծախուածն նր. անհնարին կոտորած արարեալ ՚ի նմ, մինչև ՚ի միում աւուր և եթ հարիւր հզր ոգիս եւ սպանանել:

Յօդ Է. Լահօռ, կմ Փէնճապ:

Լահօռ, կմ Լահօռ, որ կոչի և Փէնճապ, այս՝ Հնգագետ, մեծ է քն զորլէի, և քն զայլ շրջակայ նհնգս: Եւ կոչի հնգագետ՝ երբ զի հինգ երևելի գետք են ՚ի նմ, զորս և նախնի պատմագիրք յիշատակեն. որպ պղինիոս յիշատակէ զչորեսին՝ որք են. Ակեսինէս. Բօդէս. Հիտասպէս. Հիփասիս: Եւ պտղոմէոս յիշատակէ զհինգերորդն՝ որ է Զարադրոս: Իսկ այժմ յայլ և այլ անուն անուանին. այս՝ Պէհատ. Չինապ. Բէեապ. Րաւի. և Վահ: Այս նհնգ է մի յառաւելն արգաւանդ և ՚ի բազմաբեր նահանգացն

հնդ

Հնդկաց . բերէ ողջի ազգի պտուղս . ցորեան որիզ շաքար այլև գինի : 'Ի ք֊ղս նր գործեն նրբանիւթ պաստառս նկարէնս ընտիրս՝ որ է Չիթ . և զայլ ևս արհեստակերտ գործածս, զոր գործեն 'ի Հնդկաց Ծի : Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Լահոր, կմ Լահաւր . կոչի ևս Ռուահմէր, և Լահաւէր : Է քղք մեծ հզօր և փարթամ մերձ 'ի Ռուավի գետն . 'ի Նախնումն էր արքայանիստ քղք Մողոլաց . այլ 'ի փոխադրել Ակբարայ զաթոռ արքայութեն 'ի յակբարապատ կմ յակրա, այնուհետև մեծապէս անշքացաւ քաղաքս այս : Բզմ մեծամեծ հին շինուածք գտանին 'ի նմ . յորս յաւէտ նշանաւոր են արքունիք, ուր զառաջինն նստէին իշխանականքն մողոլաց : Այս քղք չէ այնչափ հին . վս զի յՌՇՂ ք պհամայօն անուն արքայն՝ որ եկն է զկնի պապուր իշխանակալին, էր գեօղ աննշան : Այն այս Համայօն կառոյց անդէն քղք և ամրոց՝ որ կայ մինչև ցայժմ . ուր և հաստատեաց զաթոռ իւր, ընդարձակեաց զնա յոյժ . զի ի այն ժամս երկայնութիւն նր էր իբրև 9 մղոն՝ ընդ արուարձանօք : 'Ի ք֊ղքէ աստի մինչև ցակբարապատ է ճնպհ գեղեցիկ և զուարճալի յոյժ, իբրև 750 մղոն երկայնութ . առ որով աստի և անտի ուղղագիծ անկեալ կան առ հնրկ ծառք վայելչունք : Վս այնորիկ ոմանք յարևելեան Տաճկաց զլահոր քղքն անուանեն Ռուահմէր . 'ի հռչակաւոր ճնպհէ անտի . զի բառդ ռահ, 'ի լեզու պարսից նշանակէ ճնպհ . ոպ և 'ի մեզ . զոր 'ի պարսից առաք : Մեծ մասն բնակչաց քղքիս են կռապաշտք հնդիկք :

Սուլթանփոր : Քաղաք առ նովին ռավի գետով առ սահմանօքն դիպէդայ :

Ճենիյաբատ . զոր ոմանք գրեն Եմնաբատ : Է քաղաք առ Օմիփ, կմ Բեհատ գետով . որ իջանէ 'ի լերանց անտի, որք անջրպետեն զդիպէդ 'ի Հնդկաց Ծէ :

Սարհինտ : Քղք առ բազկաւ միով օմիդ կմ քամի գետոյն 'ի հարաւոյ :

Ջմպա : Է քղք առ Պեհատ գետով որ իջանէ 'ի դիպէդեան լերանց : Են անդ և այլ քղքք բզմք . զո Փիրշահօր . Բանճալ ևն :

Յօդ Գ․ Քիշմիր ։

Ի հիւսիսոյ սահմանակից է մեծին Բուխարիոյ․ և մասամբ ինչ Թիպէթայ․ ի հարաւոյ՝ Լահօռ Հնդկին․ յարեւմտից՝ Քապուլայ․ և յարեւելից՝ Թիպէթայ։ Այս Հնդիկ ի նախնումն էր հզօր և ծաղկեալ թագաւորութիւն, զոր առեալ Հնդկին մողոլաց մեծ կայսերակալն Ակբար յաջորդ Համայոնայ, որ էր հզօր և իմաստուն և անուանի յոյժ ասեն․ զորմէ ըստ ինչ պատմեն։ Առաւել բազմամարդ և արգաւանդ կողմն Հնդկիս՝ է այն լայնարձակ դաշտավայրն, որոյ երկայնութիւն է իբրև 90 մղոն․ իսկ լայնութիւն 36․ բազմապատիկ փոքրիկ բլրովք տարատարածեալ։ Շրջապատեալ լերինք որ բարձր են յոյժ, և սեպացեալք․ մանաւանդ ի կիսոյ ի վեր, և գլխովքն անբերք։ Ի լերանց անտի բղխեն հեղեղատք և ուղխք լճանեն․ որք միացեալ՝ գործեն զ[illegible] գետ․ որ անցեալ ընդ անցս ինչ ընդ մէջ ժայռից, գնայ խառնի յԻնդոս գետն։ Բազմամարդ է յոյժ այս Հնդիկ, մինչև ասել ոմանց, թէ իբր 100 հազար գիւղօրէք գտանին ի նմ․ և բնակիչքն ճարտարք և գործունեայք քան զամենայն բնակիչս Հնդկաց։ Գլխաւորն գործել ընտիր և պատուական արհեստականութեամբ․ այն ազգի ազգի կտաւս և կարպասիս տան․ և ընտիր և ազնիւ ցփսաց․ այն է շալ գօտիս․ Քէշմիրականս, և Ճաւ կոչեցեալ․ որոց եզերին ծայրք են ասղնեգործեալք․ և անտի սփռի յամենայն Ասիա մինչև ցԿոստանդնուպօլիս․ զոր մեծամեծք ի գլուխ արկանեն, կամ ի գօտի, կամ արկանել զպարանոցաւ։ Սոյն երկու են տեսակք, մին գործեալ ի [illegible] անտի Հնդկին․ իսկ միւսն յասուէ մանուոր ինչ այծից Թիպէթայ, որ պատուականագոյն ևս է քան զառաջինն․ յորմէ կայսերակալք մողոլաց տան գործել [illegible] այնպիսի գօտիս․ որոց գին միայն համանէ ց 150 ոսկի դահեկան։ Սոքա դիմօք են բարետեսիլ քան զբնակիչս այլոց Հնդկաց։ Ոմանք ասեն իջանել սոցա յԵբրայեցւոց, հաստատեալ ի կիլ ի անուանս յաւանդութեանց։ Գլխաւոր տեղիք են սոքա։

Քէշմիր․ ոմանք յԹագաւորաց կոչեն զսա և Շրինաքէր․, կամ Շրինաքար․ այլ սովորաբար կոչի Քէշմիր․ յորմէ և Հնդիկն առնու զանուն։ Է քաղաք մեծ, այլ անպարիսպ ի վերայ [illegible] գետոյ ի դաշտավայրի․ շուրջանակի պատեն լերամբք 'ի ձև կիսաբոլոր: Շինուածք նորա առ հասարակ են փայտակերտ. Թէպէտ գտանին' անդէն և քար. ուստի 'ի նախնումն եւս 'ի նմին բազում քարաշէն շինուածք. որոց հետք երևին մինչև ցայժմ: Բնակիչք նորա ըստ մեծի մասին' են մողոլք. որք են ճարտարք, և յաջողակք յարուեստս. գտանին և բազմութիւն տաճկաց. նաև բազում վաճառականք յազգէ հայոց, որք գնան անդ 'ի բառնալ զպէսպէս չթեայ կամ շալի գործուածս. միանգամայն զքէմէրայէնս գօտիս: Դիրք երկրին գեղեցիկ է յոյժ և զուարճալի. յորում կան պարտէզք բուրաստանեայք, և 'ի շրջակայ դաշտավայրս այնչափ է առատութիւն [illegible] քրքումծաղկին' մինչև նեղել զճանապարհորդս յանցանելն ընդ այն 'ի հոտոյն սաստկութենէ: Այլ երկրին գոլով ազատ, և բազմութիւն բնակչաց 'ի նմին, յաճախեալ են յոյժ անդ անառակութիւնք պղծութիւնք և ապականութիւնք բարուց:

Բամբեր: Քաղաք և անցք նեղագոյն 'ի կիրճս լերանց. ընդ որ հնար է զօրաց մտանել 'ի Ներքինս:

Յօդ Է. Քաբօլ. Քաբուլ. կամ Քաբուլաստան:

Յարևելից ունի իւր սահման զՔիշմիր. յարևմտից' զՂանտահար, և զԽորասան. 'ի հիւսիսոյ' զԲուխարիա. իսկ 'ի հարաւոյ' զՄուլթան նահանգ: Այս նահանգ յուռթի է յոյժ և խոտաւէտ. ունի երիվարս բազումս և ընտիրս. և այլ չորքոտանի անասունս ընտանիս: Ունի անդ Հալիլէ [illegible]. որ է պտուղ բուժողական, զոր և 'ի դեղորայս 'ի գործ ածեն. ուստի և բազում ուրեք Քաբուլի անուանեն յանուն նահանգին: Ելանեն նաև ազգի ազգի համեմք, և փայտք ալուանիք 'ի դեղորայս. որով բազում տուրևառութիւն առնեն բնակիչք նորա. նաև եղէգն պատուական և ամուր, յորմէ առնեն բունս նիզակաց և գաւազանս. գտանին անդ և բովք երկաթոյ. յորոց ելանէ երկաթ պատուական:

Մարդաշատ է յոյժ այս նահանգ. ունի գեօղս բազումս. և աւանս, և քաղաքս: Բնակիչք նորա ըստ մեծի մասին են կռապաշտք. որք ազգի ազգի հանդէսս և տօնս կատարեն ծիծաղականս, յորս երևելի է այն' զոր ամի ամի կատարեն 'ի լրանալ լուսնոյն փետրվարի · որ ձգի աւուրս երկուս և երեք · յորս արկանեն դիմակս զերեսօք, և առնեն այսպէս խաղալկութիւս · շինեն հսկայաձև արձան՝ որոյ յանդիման կացուցանեն փոքրիկ մանուկ · որ նետաձիգ լինի 'ի նա · և ապա յարձակին 'ի վ՟ր, խաղալով սպառ խորտակեն զարձանն ։ Եւ զայս յայն սակս առնեն, զի աւանդութի է 'ի նս՟, թէ ած՟ եկն յՏ՟ 'ի կերպարանս մանկան, զոր Բրահման անուանեն · և մի ոմն հսկայ երկուցեալ թէ գուցէ սպանցէ 'ի նմէ, խնդրեաց կորուսանել զնա · այլ մանուկն կշտակել ձգեալ նետ 'ի նա, անդէն ընկեց յերկիր և սատակեաց զնա ։ Յայմանէ ոմանք 'ի պատմագրաց համարին, թէ ս՟ք 'ի նախնումն քրիստոնեայ էին · բայց այս չէ այնչափ ինչ յայտնի նշան քրիստոնէութե ն՟ց · զի մարթ է թէ նախնիք ն՟ց լուեալ 'ի քրիստոնէից զպատմութ փրկչին մերոյ յՏ՟, զայդ առասպել 'ի վ՟ր ն՟ր յօդեցին · որոց զենն՝ ոճ՟ և այլոց կռապաշտից՝ զկռովլին յառասպելեաց է խառնել ։ Թէպէտ և չէ անհնարին կարծել ն՟ց · նա մանաւանդ մարթ է համարել, թէ քարոզեցաւ և ս՟ց 'ի հնումն հաւատք քրիստոնէութե · զի և այլուր՝ մօտ 'ի բեկլու, և 'ի պանկալա, գտանի ցեղ ինչ հնդկաց, յորս հետք ինչ քրիստոնէից երևին ։ Գլխաւոր ոստանք ն՟ր են հետագայքդ ։

Լահաւր, կմ՟ Լահօր ։ Է գլխաւոր ք՟ղք նահանգիս սաւեհաւդ գետով · հզօր և բարգաւաճ 'ի ժամանս վաճառականութե · որոյ գլխաւոր վաճառք՝ են երեվարք, և նոխազք ։ Ունի երկու ամրոցս · և է նշանաւոր անցքն յՇահէն պարսից 'ի հնդկաստան ։ Յամին 1738, առ թագաւորու մէհմէտ շահին մողոլաց, էառ զայս ք՟ղք դահմաս ղուլիխանն ։

Աշնակար ։ Ք՟ղք առ եզր ինդոս գետոյն յարևմտից կուսէ, ուր յինքն ընդունի զճեզարէ գետն ։

Խաղնէհ ։ Ք՟ղք առ սահմանօքն պարսից 'ի վ՟ր նիլապ գետոյն · որ երևելի է վ՟ս լինելոյ ն՟ր քաղաք ծննդեան սուլտանացն խաղնաւացւոց ։

Յօդ Է · Հայադան ։

Հայադան յարևմտից ունի լեռ սահմանակից ընդ Կանտահար · 'ի հիւսիսոյ՝ զքապուլ, յարևելից՝ զինդոս գետ · իսկ 'ի հարաւոյ՝ զմուլթան ։ Գլխաւոր գետք նո՛ր են Լագա․ և Նինդաղ, կամ Նեբդաղ: Իսկ քաղաքք զորս գտաք նշանակեալ յԾագիրս՝ են այք:

Նոմեր: Քաղաք հին ՚ի Նախնեացն անուանեալ Գինեւոպօլիս․ և յարտօրայցուոց Նագաստ․ ՚ի վերայ Նիպատու գետոյ․ հանդէպ գլխոյ Հիւր գետոյն, ը՟ որ զեղու՚լինիպառ:

Ատէկ: Քաղաք առ Ինդոսիւ․ ուր յինքն ընդունի ըզՈւոտաէ գետն:

Յօդ Ղ. Մոլթան, կամ Մուլթան:

՚Ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից զՀայագան, և մասամբ ինչ զԼահոռ․ յարեւմտից՝ զՊարսս․ ՚ի հարաւոյ՝ զՍինդ․ իսկ յարեւելից՝ զԼահոռ: Ունի գետս յոլովս, յորս գլխաւորն է Ինդոս․ և է արգաւանդ և բարեբեր․ բերէ բամբակ ընտիր յորմէ գործեն բէհէզս․ և այլ ազգի ազգի պտուղս բազում յոյժ: Բերէ և շաքար, ծծումբ․ և ուղտս բազում որք անցանեն ը՟ Խաւզնա, կամ ը՟ Խաւզնեա, և ը՟ Ղանտահար: ՚Ի լերինս Մուլթանայ գտանի ազգ ինչ անուանեալ Քադրիք․ կամ Բոյարուլճք եղեալ ՚ի Հնդկաց անտի, զորս և հար մեծն Աղեքսանդր․ որք յառաջնումն մուղալաց զՇ խորեանց, փախուցեալ անկան ՚ի լերինս յայնոսիկ․ յորոց ընդ մէջ եղեալ անուն սաստկացեալ ՚ի մերձակայ սահմանսն: Այք աւազակ կապարչ են, և ունին հաշակաւոր մեհեան ինչ ՚ի Մուլթան․ ուր երթան յուխտ ամ ազանգաւկեցք նց, ոչ միայն ՚ի սահմանաց խորեանց, այլ և ՚ի մերձակայ գաւառաց: Երեւք կուոց նց՝ զոր պաշտեն, սեաւ են, և հանդերձքն մաշկեղէն կարմրագոյն․ իսկ երկուքն աչքն՝ երկու մարգարիտք: Գլխաւոր տեղեք նահանգիս են այք․

Մոլթան, կամ Մուլթան: Է մայրաքաղաք տեղւոյն՝ ուր Պիահ գետն խառնի յԻնդոս․ և թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, այլ քաջ ամրացուցեալ․ և է վաճառատեղի շահաւէտ յոյժ մողոլաց․ յորժամ պարսիկք ունէին զՂանտահարայ: ՚Ի նախնումն էր սա քաղաք բազմավաճառ յոյժ․ զի անտի մինչև ցԴադդա քաղաք ծովեզերեայ, վաճառքն իջանէին ը՟ Ինդոս գետն․ ուր վաճառականք բազում ազգաց գնէին, և անտի բարձեալ տանէին յայլևայլ կողմանս: Բայց յետ խցանելոյ դրանց գետոյն աւազով, և յետ լենե նելոյ աննաւարկելի բազում ուրեք 'ի պատճառս բազմակոյտ աւազոյ, նաւք ոչ ևս կարեն գնալ ընդ նա․ ուստի և վաճառականութիւն Մոլթանայ մեծապէս նուազեցաւ ։

Պագօր, կամ Պէգէր ։ Քաղաք առ եզերբ Ինդոսի յարևելից կուսէ ։

Սատօր ։ Քաղաք ոչ այնչափ հեռի 'ի Պագօր քաղաքէ անտի, առ եզերբ նորին Ինդոս գետոյ յարևմտեան կողմն ։

Են այլ ևս բազում քաղաքք․ որպէս Գօշտար․ Սանտալէն․ Սանտուր․ ևն ։

Յօդ Է․ Սընտ, կամ Դադա ։

Սընտ նահանգն կոչի ևս Ինդոս, յանուն մայրաքաղաքին․ իսկ 'ի պարսից և յարաբացւոց Աղղընթ Տէհէ ։ Զգենու տարածի սա 'ի դրանց բատտար գետոյն մինչև ցպարսս, 'ի հիւսիսակողմն ծովուն Հնդկաց․ և է մի 'ի մեծամեծ նահանգաց այնց ծովեզերեայց, փարթամ օրգաւանդ, և բազմավաճառ․ ուր յաճախեն վաճառականք հնդիկք, հայք, և եւրոպացիք ։ Ունի բամբակ բազում․ ուսաբ և ազգի ազգի բամբասիկի պաստառս, և իւղ և կոգի և խէժ և մորթ ամենայն գունագոյն մետաքսիւք, գեղեցիկ յոյժ և առ բազում իրս պիտանի և շաքարեղէնս, և այլ պէսպէս արհեստականօք գործածս․ որք ընդ Ինդոս գետն գան իջանեն անդ 'ի վերին նահանգաց անտի Հնդկաց ։ Ասպար մեծ իշխանական մողալաց, հարկ զնահանգս զայս 'ի միասին ընդ դուռնրագ նահանգին ։ Բնակիչք նորա մահմետական են․ բայց 'ի մեծամեծ քաղաքս դատանին բազում վաճառականք քրիստոնեայք և հնդիկք ։ Գլխաւոր տեղիք նորա են այսք ։

Դադա, կամ Դատտահ ։ Էր մայրաքաղաք կառուցեալ առ արևմտեան բազկաւ Ինդոս գետոյն․ քանի մի մղոնաւ 'ի վերոյ ժ գետբերան նորա, ընդ որ վերջանի 'ի ծովն․ յորոյ անուն և Սընտ նահանգն անուանի երբեմն Դադա ։ 'Ի նախնումն հռչակաւոր էր յոյժ 'ի պատճառս վաճառականութեան փորդուքալաց․ գործեն անդէն զպէսպէս նորատեսիլ բանջարեղէն գործածս զոր տանին 'ի բազում տեղիս ։ Այլ օդ տեղւոյն սաստիկ է յոյժ ։ Անգղիացիք կոչեն զսա, Կոստա Նէկէր Դոստան ։

Մանսուրա : Քաղաք առ նովին գետով 'ի հիւսիսոյ կողմանէ դադայ :

Հաւր : Քղք առ համանուն գետով, որ մտանէ 'ի ծովն · յարեւելից կուսէ մտանայ հրոճանդանին :

Աչրդա · կմ Փանփադէլ : Քղք առ արապա գետով 'ի խորին հիւսիսակողմն նահանգիս առ սահմանօքն պարսից :

Խոննաչար · կմ Լոանաչար : Քղք երեւելի առ բասսար գետով, որ զեղու 'ի ծոցն գուճրատայ :

Տեւուլ · կմ Տէպէլ · և կմ Տեւուլ սընդոյ : Է քղք մերձ 'ի բերան Հնդոսի, և յայն սակս կարի յարմարաւոր վաճառականութե :

Են այլ ևս քղքք բզմք զոր ունիս տեսանել յաշխարհացոյցն մեր · որք են Մանհատէր · Քամիւէր · Աղրոր · Սհվան :

Յօդ Է · Աջմեր ·

Այս նահանգ կմ սուպայութի յարեւմտից ունի իւր սահման զՍինդ և զՄուլթան · 'ի հիւսիսոյ և յարեւելից՝ զԴելլի և զԱկբարապատ · 'ի հարաւոյ՝ զԳանտէշ և զԳուճրատ : Երկիր նր ըստ մասին չոր է անբեր և լեռնային : Մի միայն երեւելի գետ ունի կոչեցեալ Բափփար, որ ելեալ 'ի լերանց՝ որք անջրպետեն զնահանգս զայս յակրայէ, և անցեալ առ Ճինաակար քաղաքաւ որ 'ի վրնա, մտանէ 'ի ծոցն գուճրատայ : Աջմեր : Է գլխաւոր մայրաքաղաք նահանգիս՝ կառուցեալ յարգաւանդ վայրի ի մէջ լերանց, յորոց ելանէ բասսար գետն :

Են և այլ քղքք 'ի սմին նահանգի · որպ Մերտա · Սամպոր · Թառէճէ · Պանթօ · և այլք :

Յօդ Ը · Ակբարապատ, կմ Ակրա ·

Նահանգն կմ սուբայութին Ակբարապատայ, կմ Ակրապատայ, զոր եւրոպացւոց Տաճկիկք միշտ կոչեն Ակրա · 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է Դելլի, կմ Տիհլի նահանգին · յարեւելից՝ Աւուդ նահանգին · 'ի հարաւոյ՝ Մալուայի · իսկ յարեւմտից՝ Աջմերայ : Երկիր նր ըստ առաւել մասին դիւր է և արգաւանդ,

ուր

ոռոգեն ՚ի բազմապատիկ գետոց, որք գնան միանան ՚ի Ճըմնա գետն մեծ. Գլխաւոր տեղիք սորա, են սոքա:

Աքպէրապատ. Աքպարապատ, կամ Աքրա: Է գլխաւոր քաղաք թագաւորութեան, շինեալ յինքնակալէն Աքպարայ, յորոյ անուն և կոչի. ձգեալ է երկայն առ Ճըմնա գետով. ՚ի լայնարձակ, յաւաղուտ և յանբեր դաշտավայրի: Ունի ամրոց, և ոչ այլ ինչ ամրութիւն, բայց պահապանս յոլովս կարգեալս ՚ի պահպանութեան նորա. մանաւանդ յորժամ անդ նստին ինքնակալք մողոլաց: Ապարանք մեծամեծաց քարաշէն են կառուցեալք. գրեթէ առհասարակ մերձ ՚ի գետն ըստ սովորութեան հնդկաց. բայց տունք հասարակ ժողովրդեան՝ աղքատակերպք յոռիք և ցածունք. որպէս և այլ ամենայն տեղեաց նոցին մողոլաց: Բազում մզկիթք են ՚ի նմա. և հասարակաց պանդոկք. այսինքն Խանք, և բաղանիք, և պարտէզք, և ջրհորք: Ապարանք ինքնակալին ՚ի բնակչաց Մահալ անուանեալ, է ՚ի ձև կիսաբոլոր լուսնի. որոյ շրջապատն է 3 կամ 4 մղոն, պատեալ բարձր և հզօր պարսպօք և ամրացուցեալ զինուք. և առ նովաւ խրամ լայն և խորայատակ. հանդերձ բազում շարժական կամրջօք: Իսկ ներքին հանգամանք նորա չէ ինչ ծանուցեալ. բայց միայն զի ՚ի մտանել ընդ առաջին դուռն, ընդ առաջ լինի ընդարձակ ճանապարհ ինչ ընդ մէջ երկուց ընթացողական ջուրց. յորոյ ՚ի ծայրն է քառակուսի սրահ. ուր կան պահապանք ինքնակալին, և զօրապետք նորա. և առ նովաւ են այլ ևս բազում սրահք. և այլ տեղիք որոշեալ ՚ի պէսպէս գործս, որք անջատեալ են ՚ի ներքին ապարանից անտի, ուր նստի ինքնակալն և կանայք նորա:

Բազմամարդ է յոյժ այս քաղաք. փարթամ բազմավաճառ և մեծ. մինչև ոմանց յաշխարհագրաց ասել, թէ մեծութիւն նորա գրեթէ կրկին է քան զԱսպահան արքայանիստ քաղաք պարսից. թէպէտ ըստ մեծութեան նորա չէ պարտ կշռել և զբազմամարդութիւն. վասն զի լի է մեծամեծ և ընդարձակ պարտիզօք. և մեծ մասն տանց նորա ցածուն են, և տարանջատք ՚ի միմեանց. յայս սակս աւելի ընդարձակ գրաւէ նիստ նորա: Բնակիչք նորա են բնիկ հնդիկք, և ըստ առաւել մասին մողոլք մահմետականք. բաց ՚ի այնէ գտանին անդ և յազգէս հայոց, և հրէայք. այլև սակաւ ոմանք եւրոպացիք, ՚ի պատճառս վաճառականութեան, որոց գլխաւոր վաճառք են լեղակ, կամ երանգ երկնագոյն. զի սորայս լաւ ևս է, քան որ յայլ տեղիս գտանի: Այս քաղաք ՚ի նախնումն մինչև յիւրում հաստատութեան կայր ինքնակալրուլին մուղալաց, բարգաւաճ էր յոյժ փառաւոր և մեծապէս ծաղկեալ. այլ ղվնի պէսպէս հարուածոց և աւերմանց Ձելն հնդկաց, մեծապէս անշքացաւ յառաջին վայելչութենէ անտի իւրմէ:

Սէքանդրա: Քաղաք 5 կամ 6 մղոնաւ հեռի յաքպարապատայ յարեւելից. անդ են դամբարանք ինքնակալացն մուղալաց. յորս առաւել հռչակեալ են երկուք. մին ակպարայ ինքնակալին, իսկ միւսն տիկնոջ շահ Ջիհան անուն ինքնակալին. յորոյ չինուել ոմ̃ ասեն աշխատեցան ամս իբ̃. քսան հզ̃ր գործաւորք. և ը̃ ստորագրութէ ոմանց Ճադրաց, երկոքին եւս յերաւի արժանի են զարմացման:

Ֆաթեհփուր, կամ **Ֆէթեհփուր**: Քաղաք վայելուչ և մեծ յարեւմտից ակպարապատայ. հիմնեալ և զարդարեալ բզ̃մ վայելուչ և գեղեցիկ շինուածովք յակպարայ. յորս գլխաւոր են արքունի ապարանք. բայց ուրուրեմն բնակեին անդէն վ̃ր ժխաակարութէ օդոյն:

Մաթուրա: Է հռչակաւոր կռատունն առ Ջիմնա գետով 'ի հիւսիսոյ ակպարապատայ:

Ճայփուր: Քաղաք մեծ և գեղեցիկ 'ի հիւսիսոյ կողմանէ Փադիխուայ:

Գուալըոր: Քաղաք գլխաւոր 'ի մասնաւոր ջ̃ւեւ 'ի հարաւակողմն քարնաս գետոյն:

Պիֆանոր: Քաղաք մերձ 'ի սահմանս տըլլէի նահանգին, յարեւմտեան կողմն գանգէսի:

Նարվար: Քաղաք առ ստորոտով գագ կոչեցեալ լերանց. առ գետովն՝ որ յանուն նր̃ կոչի Նարվար:

Յօդ Ժ. Ավուդ, կամ Սիաղ:

Այս նահանգ կամ սուպայութիւն. որ կոչի երբեմն Ավուդ, և երբեմն Սիաղ, 'ի հարաւոյ ունի իւր սահմանակից զպենարիս, կամ զիլլահապատ. յարեւելից և 'ի հիւսիսոյ՝ զդիպէդ. իսկ յարեւմտից՝ զորըլլի: Երկիր նր̃ ը̃ մեծի մասին լեռնային է. և ոչ այնչափ արգաւանդ. յայն սակս է մի յաղքատ սուպայութեանցն հնդկաց:

Աչինոտ, կամ **Աչինոփ**: Է մայրաքաղաք սորին նահանգի. կառուցեալ առ Տըլա գետով. որոյ բնակիչքն են հնդիկ կռապաշտք, և մուղոլք:

Քանաուճ: 'Ի նախնումն էր սա գլխաւոր քղք̃ համա

րեն

րէն Հնդկաց Ծ՟ին. կառուցե՟լ յափն գանգէսի յարևելից կուսէ. իսկ այժմ է քանդե՟լ և աւերակ ։

Կօր ։ Գլխաւոր ք՟ղք յիւրում համանուն գ՟ւռի սահմանակից գիսպեդայ ։

Նարնօլ, կ՟մ Ցոնոյխն ։ Ք՟ղք փոքրիկ 'ի Մոոլխն գաւառի ։

Գարրա, կ՟մ Գրաւ ։ Քաղաք 'ի հարաւակողմն քանոսէ քաղաքին՝ 'ի հիւսիսոյ գանգեսի ։

Յօդ. ԺԶ. Պնարիս, Իլլահապատ կ՟մ Հելապաս ։

Զայս նահանգ ոմանք կոչեն Պնարիս, յանուն Մեծի ք՟ղքին որ է 'ի նմ. ոմանք Իլլահապատ յանուն մայրաք՟ղքին ոմ՟ և այլ զինչ անուանմբք յորջորջի ։ Ունի իւր սահմանակից 'ի հիւսիսոյ զաւուդ. 'ի հարաւոյ՝ զպերարն, և զմալվա. յարևմտից՝ զդանտէշ. իսկ յարևելից՝ զփադանա կ՟մ զփադնա ։ Մասն ինչ սորին նահանգի, զոր առին անգղիացիք 'ի նապապէն ալնարխայ, տուեալ խնքնակալին մուղալաց որպէս տարապրեալ 'ի Թիֆրուէյն՝ յետ բազմապատիկ անցից, գնաց անկաւ առ անգղիացիս, որ՟ պիտի եւս ունիմք պատմել ։ Եւ Թէպէտ չէ ինչ շարժակ նահանգս այս, սակայն փարթամ է յոյժ, և երկիր ն՟ր արգաւանդ, առոգեալ 'ի գանգէսէ ։ Գլխաւոր քաղաքք ն՟ր են ։

Իլլաբապատ. Իլլահապատ. Իլխապատ, կ՟մ Հելապաս. և Հալապաս ։ Է մայրաք՟ղք Նհ՟նգիս, զինչ՟ն անուանմբ կոչեցեալ. կառուցե՟լ առ գանգեսիւ. քանի մի մղոնաւ 'ի վերոյ, ուր Ջըմնա գետն խառնի 'ի նմա, կ՟մ 'ի գանգէս ։ Անդ գնան հնդիկք յուխտ, 'ի խառնումն երկուց գետոցս բազմութ՟բ ժողովրդեան ։

Պնարէս ։ Է քաղաք մեծ, բարեշէն, փարթամ, և բազմամարդ. զոր բ՟մք համարին մի 'ի հնագոյն քաղաքաց անտի Ծ՟ին մողոլաց. որ առ հնդիկս է իբրև բնիկ տեղի և սկզբնավայր գիտութ՟եց և դենի ն՟ց ։ Կառուցե՟լ առ գանգես գետով. ունի հոյակապ շինուածս, և տունս գեղեցիկս, և բնակիչս բ՟մ ։ Անդ է գլխաւոր մեհեանն հնդկաց յափն գանգեսի ։ Այս մեհեանն կ՟մ կռատուն է խաչաձև. որ՟ և այլ ևս մեծամեծ կռատունք ն՟ց. 'ի մէջն անդունի գմբէթ բարձր, և 'ի ներքոյ նորա է սեղան 7 կամ 8 ոտնաչափ երկայն. և 5 կամ 6 լայն. և երկու սանդուխք առաջի նորա ծածկեալք մետաքսեայ և ոսկեհուռն գորգօք: Իսկ սեղանն ծածկեալ է ասղնեգործ ոսկեհուռն դիպակօք. 'ի մէջ այլոց արձանաց կռոց, է արձան մի յոտն կանգնեալ. բարձր 5 կամ 6 ոտնաչափ. որոյ գլուխ և պարանոցն և եթ երեսի. յոր արկանեն երբեմն մեծագին մանեակ ոսկի. յեռեալ 'ի նմա ականս ծանրագինս և մարգարտս մեծամեծս. Յաջմէ սեղանոյն՝ է օտարակերպ արձան ինչ ոսկի. որ ընդ մասին բերէ զնմանութիւն փղի. ընդ մասին ձիոյ, և ընդ մասին ջորւոյ, առ որ պրամանք նշ̃ ևեթ կարօղ են մերձենալ: Իսկ ընդ մէջ սուագ դրանն և սեղանոյն, է և այլ կուռք ինչ 'ի սեաւ մարմարիոնէ բաղմեալ ծնգծալ. և արտաքոյ դրան նստի մի ոմն 'ի պրամանաց. որոյ առաջի կան դեղնագոյն հեղանիւթք, զոր ոսկէ 'ի ճակատ և 'ի բազուկս ուխտաւորաց, որոց լուացեալ 'ի գանգէս, մտանեն 'ի կռատուն անդր: 'Ի դրանէ կռատան մինչև ցգետն են լայն և ընդարձակ սանդուխք. ընդ որ իջեալ ուխտաւորաց, ընդ մեծարանօք ըմպեն ջուր 'ի գետոյ անտի. որով համարին սրբիլ 'ի մեղաց. պրամանք նշ̃ երևելի վաճառականութիւն առնեն ջրովն այնուիկ. զի լցեալ յամանօթս, և կնքեալ կնքով իւրեանց առաքեն 'ի հեռաւոր տեղիս՝ ընդ որս ոչ անցանէ գանգէս՝ մեծագին վաճառելով. զայն ջուր 'ի կիր առնուն հնդիկք 'ի զանազան պէտս, և մանաւանդ 'ի լնուլ 'ի բերան հիւանդաց՝ 'ի ժամու մահուան:

Արտաքոյ քաղաքին 'ի հիւսիսակողմն է մեծաշէն գամբարան. զոր հասարակաց կարծիք բնակչաց տեղւոյն համարի լինել միոյ 'ի թագաւորաց անտի դիպեդայ. որոյ մտեալ 'ի Հնդիկս, հաստատեաց զթագաւորութիւն, զոր ապա եղծին քանդեցին յաջորդք լանկթամուրին: Իսկ անգղիացիք յետ տարադրելոյ անտի զնապապն, միշտ պահեն անդէն գունդ մի զօրաց յապահովութիւն սահմանաց իւրեանց:

Յօդ ԺԲ. Մալվա, կամ Մալուէ:

Մալվա նահանգն յոմանց Յագրոց Մալուէ ասացեալ, 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է ակբարապատոյ, և իլլահապատոյ. յարևմտից՝ գանտիշայ.

'ի հարաւոյ՝ պերահէճ և պալակատ նահանգաց. իսկ յարևելից՝ մասամբ իճէք պերահէճ նահանգին. և մասամբ իճէք փադանայ ։ Գլխաւոր տեղիք նր̃ են ։

Ճհուփ. յոմանց Նըուփ ասացեալ. որ է իբրև գլխաւոր ք̃ղք նհ̃նգիս, կառուցեալ 'ի վ̃ր գետոյն՝ որ մտանէ 'ի Ճըմնա գետն ։

Գուէլֆ ։ Քաղաք 'ի հարաւոյ վերնոյն, առ հեղեղատաւ Սինչ, որ միացեալ 'ի նոյն վերին գետն, գնայ խառնել 'ի Ճըմնա ։

Սէրոնճ. Փոքր ք̃ղ մէջ քուանսերփուրայ և կոտահայ. առ գետովն՝ որ կոչի յանուն նր̃ ։

Են այլ ևս բ̃զմ քաղաքք 'ի սմին նահանգի, զորոց զանուանս և եթ գտաք ։

Յօդ. ԺԶ. Պերահէճ. կմ̃ Պերար ։

Պերահէճ, կմ̃ Պերար նահանգն 'ի հիւսիսոյ սահմանակից է մալվայ նահանգին. յարևմտից՝ պալակատայ՝ որ է 'ի մէջ Տի̃ և մալվայի. 'ի հարաւոյ՝ օրխասայ. իսկ յարևելից՝ պանկալայի և փադանայ ։ Եւ է ը̃ թրուք ազգին մարաթայից. որք են ժողովուրդք բնիկ կատաղաբիշաք. հաւաքեալ 'ի զանազան ցեղից և յիշխանաց հնդկաց ։ Ս̃ք 'ի նախնումն տէրեցին բազմաց նհ̃նգաց, առաւ վտարեցան արտ մողոլաց, և զկնի փախուցեալ 'ի լերինս՝ որք 'ի սուրադայ ծովին մինչև ցկոմա 'ի ծովեզերեայս գանդանայ, բազմացան անդէն. և յետ ժմկաց կացուցին թրուն ինչ, որոյ մայրաքաղաք էր Սադարայ քաղաք 'ի մէջ ժայռաւոր լերանց, յորոց ելանէ Քիսթնա գետն՝ որ է մի 'ի նշանաւոր գետոցն հնդկաց ։

Ս̃ք վարելով 'ի լերինս անդ անասնական կեանս, 'ի բաց թօթափեցին զլուծ կրօնի, ը̃ նմին և զամ̃ բնական օրէնս, և զլոյս բանի, և այնուհետև լցան ամ̃ ապականութ̃. թողեալ զխաղաղական և զգօվական գործառնութիւնս, եդուն զանձինս 'ի գողութիւնս և յաւազակութիւնս. զի ելեալ 'ի լերանց անտի ապաստանեալ սփռէին 'ի մերձակայ գիւղօրէս. զորս կողոպտեալ դառնային անդէն յորջ իւրեանց ։ Ս̃ք առ ժմկօքն ավրանկզիպայ ցուցին զզօրութիւն իւրեանց. զի յօգնութիւն կոչեցեալ ք̃ յիշխանաց անտի հնդկաց, ը̃դ դէմ ավրանկզիպայ արքային մողոլաց, անպարտելի քաջութբ̃ մարտ եդուն ը̃դ նմ̃ նր̃ ։ Եւ թէպէտ նո ինքն արքայն մուղալաց՝ էառ զերևելի մասն կալուածոց իշխանացն այնոցիկ, սակայն 'ի վերջոյ ստիպեցաւ խաղաղութիւն առնել ընդ մարաթայից . շնորհելով նոցա յաւէժաբար զչորրորդ մասն մուտից սուպայութեան առանձնականն Տաքանայ . զոր յորչափ եկաց Ովրանկզէպ՝ հատուցանէին նոցա հաւատարմութեամբ . այլ յետ այնորիկ, է՝ զի տային, և է՝ զի ոչ . ըստ յաւելու և նուազ զօրութեան սուպայութեան Տաքանայ :

Սոցա բռնութիւն այնչափ զօրացաւ, մինչև հարկադրել զինքնակալն մուղալաց յաւուր թագադրութեան իւրոյ դեղին գոյն արկանել 'ի ճակատն ընդ կռապաշտից, զի ընդունելի լիցի . թէպէտ ինքն է մահմետական : Եւ հետզհետէ առաւել ընդարձակեցին զսահմանս իւրեանց . մանաւանդ 'ի ժամս բազմիշխանութեան ցեղին հնդկաց զի տարածեցին զտէրութիւն իւրեանց 'ի Տաքանայ մինչև ցնահանգս Փաղանայ և Օրիսսայ, գոլով քաջամարտ ասպատակողք . Մանաւանդ զի ընդ մեծամեծ [illegible] 'ի սոսա յաւելան . յորոց մի է և հռչակաւոր Հէյտէր Ալի խանն [illegible] : Ուստի դժուարին է որոշակի նշանակել զսահմանս տէրութեան մարաթայից . քանզի պարագրէ զմասն ինչ սուպայութեան Փաղանայ և Օրիսսայ, և զՊերարէձ նահանգն, և տարածի ընդ մէջ Քանտէշայ և Պանկալայի ընդ հիւսիսակողմն : Իսկ 'ի միւս կողմանէ պարունակէ զարևելեան մասն սուպայութեան Տաքանայ . ընդ մէջ Տելենկայ, Վիզափուրայ, և Պալակատայ : Բայց յայսցանէ ունին և կալուածս առ եզերօք Գոնդաւանայ ընդ մէջ Կովայի, և Գատուլայ . և 'ի նորումս տարածեցին զսահմանս իւրեանց մինչև ցԳուճրատ . և զի միանգամայն ասացից, ամ օրըստօրէ զնան և ընդարձակեն զտէրութիւն իւրեանց ընդ ձգել ըղձից, և ընդ ներել ուժոյ իւրեանց :

Պատմի՝ թէ յորժամ անգղիացիք բռնացան 'ի Պանկալայ, 'ի պահանջել մարաթայից զամօրական հասս սուպայութեան Պանկալայի 'ի նոցանէ ընդ առաջնոյ կարգի, նոքա փոխ դրամոց առաքեցին 'ի վերայ սկաւեղ հրազէն, որ է՝ թիւֆենկ, և վառօթ . յայտ արարեալ թէ մարտիւք կամին խօսել ընդ նոսա : Սակայն մինչև ցայժմ ոչ ինչ զօրեցին առնել նոցա . թէպէտ ոչ սակաւ նեղութիւնս կրեն 'ի նոցանէ յարաժամ, այլ՝ է զի զինուք ահացուցանեն զնոսա, և է զի՛ ոսկւոյն հաշտութեան խօսել ընդ նոսա :

Գլխաւոր քաղաքք այսր Պերարէձ նահանգի, են Փու[illegible] . [illegible] . և [illegible] . որ թուի լինել մայրաքաղաք նր՟ ։ Ջորոց չունիմք ինչ ծանօթութիւն ․ գոլով 'ի ձեռս աւազակաբարոյ ազգին մարաթայից ։

Յօդ ժ՟ ․ Խանտէշ ։

Այս նահանգ կմ՟ սուպայուն ձգի յարևելից գուձրատայ, և յարևմտից մալվայի ․ 'ի հարաւոյ՝ աջմերայ և տըլլի նահանգին ․ և 'ի հիւսիսոյ՝ մալնաւոր և առանձինն տաքանայ ․ կմ՟ սուպայութենէ տովլաթաբատայ ։ Երկիր նր՟ ըստ մեծի մասին լեռնային է ․ ընդ որ հոսի Սուրատ գետն ։ Գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ ։

Պրամփուր ։ Մայրաքաղաք նահանգիս 'ի վր՟ սուրատ գետոյն ։

Նանտոպար ։ Քաղաք առ սահմանօքն գուձրատայ ։

Պոտոր ։ Տեղի Ճարձակ ․ որ է ը՟ իշխանութե՟ ռաձայի միոյ հնդկաց ․ որ վիշտս բզ՟մ հասուցանէ սուրատ քղ՟քին ․ և գրեթէ միշտ ասպատակէ 'ի նահանգն գուձրատայ ։

Կոփահ ։ Քաղաք մօտ 'ի լերինս ․ կառուցեալ 'ի դաշտավայրի, որ պատեալ է լերամբք ․ մերձ յակն անդ սէրոնձ գետոյն ։

Մանոպահ ։ Քաղաք սահմանակից գուձրատ նահանգին ․ մերձ յակն անդ լայնարձակ գետոյն՝ որ զեղանի 'ի ծոց քամպայհատայ ։

Բուճին ․ 'Ի հիւսիսակողմն մանտուսհայ, կառուցեալ 'ի վր՟ նորին գետոյ ։

Գրակ Է ․ Արևելեան մասն Մողոլաց ։

Յայսմ մասին ունիմք խօսիլ զերից մեծամեծ նահանգացն կմ՟ սուպայութեց, որք են Պանկալա ․ Փաթանա, կմ՟ Պահար ․ և Օրիսա ։ Զի թէպէտ և զայլ նհ՟նգս մուղալաց՝ մարթ էր գնել յայս կողմն այլ ա՟ք իբրև մի տրուէ՟ ելին յռ՟ջ ք՟ զառնուլն անգղիացւոց ․ ո՟պ նաև յետ առման նր՟ ․ զի նապաստն պանկալայի ընդարձակել էր զիւր տէրութիւն մինչեւ ցփագանա եւ մինչեւ ցմասն ինչ օրիսայ. նոյնպէս եւ անգղիացիք բաց 'ի պանկալա նահանգէն, ունին այժմ ընդ տէրութեամբ իւրեանց զերեւելի սահմանս փագանայ, եւ զգիւղս ինչ օրիսայ:

Արդ՝ այս մասն աշխարհի յարեւելից՝ ունի իւր սահման զԱսամ եւ զԱրաքան. յարեւմտից՝ զայլ յօլով նահանգս աշխարհին մողոլաց. 'ի հիւսիսոյ՝ զբուտանեան լերինս Թիբէթայ. իսկ 'ի հարաւոյ՝ զծովն : Տարածութիւն նորա համանէ 990 հազար քառակուսի մղոն աշխարհագրական: Իսկ զթիւ բնակչաց նորա անգղիք դնեն 15 միլիոն, բայց բնակիչք երկրին հաստուցանեն մինչեւ 930 միլիոն, որք ըստ մեծի մասին են գործունեայք եւ օգտակարք Թիֆրուն: Այս մասն աշխարհիս է առաւել գեղեցիկ արգաւանդ փարթամ եւ յաւէտ բազմամարդ մասն տէրութեան մողոլաց. եւ թէպէտ ոչ գտանին 'ի նմա բովք, եւ ոչ բնաւ մեծագին քարինք, սակայն առաւել ճոխ է եւ հարուստ քան զբովանդակ Հնդկաստան. ոչ միայն վասն վաճառականութեան ձեռագործաց իւրոց, այլ նաեւ վասն արգասաւորութեան երկրին պատճառեալ 'ի սոսթոյ եւ յառատութենէ անձրեւաց, որ բաւական է դարմանել զայնչափ բազմութիւն բնակչաց: Ընդ ժամս ժամս բազում եւ մեծամեծ փոփոխութիւնք եղեն 'ի սմա. է զի՝ յաջողակ. եւ է զի՝ ձախողակ. է զի՝ միապետական էր, եւ է զի՝ բազմապետական: 'Ի ժամին՝ յորժամ միապետական էր, ըստ 'ի 1590. ագպար ինքնակալ պապն հռչակաւոր օվրանկզեպայ՝ զօրու ծանու եկ 'ի վերայ, եւ 'ի 1595 զհամօրէն աշխարհն ընդ իւրեւ նուաճեաց: Իսկ այնուհետեւ պանկալա, փագանա, եւ օրիսսա միշտ եղեն ընդ տէրութեամբ մողոլաց, որք կառավարէին զնոսա 'ի ձեռն սուպա նապապաց, կամ ընդհանուր կուսակալաց՝ ընդ որովք էին բազում նապապք ստորինք: Այս կուսակալք ընդ ժամս ժամս եղեն 'ի հնազանդութենէ տեարց իւրեանց, գրաւելով անձանց երբեմն եւ զանկախ իշխանութիւն, եւ երբեմն զլանալով հատուցանել զհարկս: Այլ յետ խորտակելոյ դահմաս ղուլի խանին զինքնակալութիւն մողոլաց՝ այնուհետեւ եղեն սոքա ամենեքին ինքնագլուխ տեարք աշխարհաց իւրեանց. եւ թագաւորութիւն մողոլաց յետ այնր մեծի հարուածոց զգլխովին զուրկ գտանէր 'ի գրամոց, եւ անկարացեալ 'ի վճարել մարաթայից ըստ դաշին՝ զոր եդ ընդ նոսա, ետ նոցա հրաման հարկս արկանել 'ի վերայ պանկալայի, փագանայ, եւ օրիսսայ. Սովին պատճառաւ մտին յայն աշխարհ 200000 զօրօք, եւ հարստահարեցին

զՆա

զՅն ամս երբեւ 10 անընդհատ, ոչ մեկնելով անտի՝ մինչեւ հաւաքեցին դրամս բազումս :

Յետ այնորիկ յեւրոպացւոց անտի մտին անգղիացիք, որք բազում խռովութիւնս յարուցին, եւ բազում պատերազմունս մղեցին ընդ [illegible] զօրացն Հնդկաց եւ ընդ զօրացն հայոց՝ որք 'ի կողմանէ Հնդկաց պատերազմէին ընդ նոսա . եւ հուսկ ուրեմն սոքա սակաւ սակաւ զմեծ մասն այսր Հնդի՝ ընդ տէրութեամբ իւրեանց դրաւեցին . յորմէ [illegible] բազում փոփոխութիւնք եղեն յՀնդին եւ յազգս հայոց անդ բնակելոց, կամիմք համառօտիւ իմն պատմել աստանօր :

Արդ՝ եւրոպացիքն մանաւանդ անգղիացիք յառաջագոյն ունէին կալուածս ինչ 'ի ծովեզերեայ կողմանս որիսայ եւ պանկալայ . որ է յայլ կողմանս աշխարհին Հնդկաց . եւ առնէին անդէն վաճառականութիւն . ունէին եւ ամրոցս ինչ, յորս պահէին պահապան զօրս առ 'ի պաշտպանութիւն : Յեղծանել միապետութեան մողոլաց, եւ 'ի լինել բազմապետութեան, մեծ իմն էր 'ի նահանգս յայսոսիկ աւերութիւն իմն խառնակութիւն . երբ զի նոյն կուսակալք կալուածոց եւրոպացւոց օրինաւոր համարէին տալ տեղի ապաստանի Հնդկաց, որք առ 'ի զերծանել 'ի պատժոց՝ դիմէին առ նոսա : Եւ կաշառքն՝ զոր առնուին 'ի նոցանէ 'ի սպասս պաշտպանելոյ նոցա՝ կափուցանէին զաչս առ 'ի չտեսանելոյ զվնասն՝ յոր արկանէին զօդուս գլխաւոր տեարց իւրեանց : Արդ՝ միոյ 'ի գլխաւոր պաշտօնատարաց անտի պանկալայի, առ 'ի խոյս տալ 'ի պատժոց անհաւատարմութեան իւրոյ, փախուցեալ գնաց ապաստան եղեւ առ անգղիացիս : Ընդ որ մեծապէս ցասուցեալ Նապապին, ծանր զօրօք եկեալ 'ի վերայ կալկաթայի՝ որ էր յայնժամ աւան ինչ փոքրիկ ընդ իշխանութեամբ անգղիացւոց . էառ զնա, եւ կորոյս գրեթէ զամենայն զօրս անգղիացւոց՝ որք կարգեալ կային անդ 'ի պահպանութիւն :

Զայս լուեալ միստր վաթսն՝ ծովակալ իշխան անգղիացւոց որ նորոգ հասեալ էր 'ի Հնդիկս, հանդերձ փոքրիկ գնդաւ զօրաց, եւ քլէյֆ զօրավարն՝ որ եւ յառաջագոյն ցուցեալ էր զքաջութիւն իւր յառնուլն զգառնատիկ, դիմեցին անդր . յորս յաւելան եւ այլ անգղիացիք որք ցրուեալ կային աստ եւ անդ . այլ եւ սակաւք ամենք 'ի Հնդկաց անտի որք թոշակաւորք էին անգղիացւոց : Եւ անցեալ զգետն 'ի դեկտեմբերի 'ի 1756, առին զկալկաթա, եւ աւերեցին զայլոց եւս բազում վաճառատեղեաց . սակաւ զօրօք կատարեալ յաղթութիւն կանգնելով ընդդէմ բազմազօր գնդի Նապապին . եւ

խա

խորամանկ հնարիմացութեամբ 'ի ծածուկ դաշինս կռեցին ընդ Ճաֆար ալի խանին՝ որ էր սպարապետ նոյին նաբապի, և զայլ զօրապետս կաշառօք կուրացուցին. զի նաբապն գոլով բռնակալ ումն արդէն ատելի էր զօրապետաց իւրոց, մանաւանդ Ճաֆար ալիին. ուստի սա խոստացաւ անգղիացւոց 'ի ձեռն միջնորդի որ էր մի ումն յերևելեաց հայոց, տալ նոցա զ30 միլիոն ռուփին զոր խնդրէինն. միայն զի նմա տայցեն զնաբապութիւն: Եւ այսպէս 'ի ժամ պատերազմին մեծ մասն զօրաց ոչ միայն չմտին 'ի պատերազմ, այլ և մատնեցին զնաբապ իւրեանց 'ի ձեռս անգղիացւոց՝ որք 'ի կալանս անդ սպանին զնա:

Ապա անգղիացիք զտէրութիւն պանկալայի ետուն ըստ խոստմանն՝ Ճաֆար ալի խանին՝ որ էր գլուխ ապստամբաց. սա ոչ միայն ետ անգղիացւոց վճարս ինչ, այլև հաւանեցաւ ընդ նոցա ազատութիւնս և չռօհաստանութիւնս, և ընդ այնչափ հասս զոր խնդրեցին անգղիացիք: Այլ փութով տաղտկացեալ 'ի ծանրաբեռն լծոյ անտի անգղիացւոց, գաղտ խնդրէր հնարս զերծանել 'ի ձեռաց նոցա. զոր ծանուցեալ անգղիացւոց՝ արգելին զնա յիւրում մայրաքաղաքի իբրև 'ի կալանս: Եւ փոխ նորա կացուցին զխասըմ ալի խանն փեսայ նորա. որ գնոյ էառ զիշխանութիւն զայն անհամար դրամս վճարելով: Սա ըստ օրինակի աներոյ իւրոյ Ճաֆարին՝ չհանդուրժելով լծոյ նոցա՝ ել 'ի հնազանդութենէ նոցա. յորմէ և գրգռեցաւ պատերազմ 'ի մէջ անգղիացւոց և հնդկաց: Իսկ անգղիացիք անդրէն հաստատեցին 'ի տէրութեան պանկալայի զՃաֆար ալին զոր 'ի կալանս ունէին. և նորեանք մեղմով իմն և պէսպէս հնարիւք ոչ թէ 'ի կողմանէ հարազատ նաբապին Ճաֆարայ, ելին պատերազմաւ 'ի վերայ խասըմ ալիին, հրապարակելով զնա իբրև բռնաւոր, և անիրաւութեամբ անցեալ 'ի տեղի Ճաֆարայ. թէպէտ յառաջագոյն նոյին իսկ անգղիացւոց էր կացուցեալ զնա իբրև հարազատ և հաւատարիմ նաբապ:

Այլ խասըմ ալի խանն՝ ոչինչ ընդհատ գոլով խորամանկութեամբ յանգղիացւոց, այր ճարտար և հնարագործ, յառաջագոյն պատրաստեաց անձին գանձս անհամարս, մինչև ոմանք ասեն հաւաքեաց 900 միլիոն ռուփի. և ընտրեաց իւր զօրապետս և զօրս յազգէս հայոց, քանզի զօրացեալ և ծաղկեալ էին յայժմայն ժամի հայք 'ի պանկալա և 'ի շրջակայ կողմանս, որոց զօրութիւն և աներկիւղ քաջութիւն սոսա համբաւեալ էր առ ամենայն հնդիկս: Գլուխ սոցա ամենայն էր կորկին խան

գրէ.

Գրիգոր խանն, եղբայր մեծի պետրոս աղայն յարութեան, այրն մեծախորհուրդ կորովամիտ առոյգանձն քաջագօտի քաղցրաբարոյ խնամածու և սիրելի ամ̃ցն ։ Զսա կացոյց կասըմ ալին սպարապետ ամ̃ զօրաց իւրոց • և արար իւր ներքին և մտերիմ խորհրդական սակս իմաստութեան կառավարութեն • մինչև ոչ գործէր ինչ 'ի գործս քաղաքականս առանց խորհրդոց նր̃ • Ը̃ սոյն սպարապետաւ էին այլ ևս զօրավարք երկու յազգէս հայոց, որոց անուանք են յարութ և մարգար • և այլ ոմն գերմանացի՝ որ կոչէր սոմրու ։

Յայնմ ապստամբութեն ժմկի՝ որ տևեաց ամս երիս, այնչափ էր իշխանութեն և ընդարձակ ճոխութեն հայոց, մինչև ո̃ք երևէին ընիկ ազգ, և հարազատ որ̃ երկրին • Իսկ մողոլք և հնդիկք՝ իբրև օտարականք և նոցա ստրուկք, մինչև համարձակիլ 'ի մախսուսապատ բազմամարդ մայրաքաղաք պանկալայի, ամ̃ մեծամեծացն հայոց դրօշս կանգնել 'ի վր̃ տանց իւրեանց նշանաւ խաչի • Նաև բազմաց 'ի նց̃է կեղեքել և չարաչար հարստահարել զժողովուրդս և զաղքատ հնդիկս քաղաքաց և գիւղօրէից • յանդգնել̃ իշխանութ̃ կօրկին կմ̃ գրիգոր խանին, և իշխանութ̃ իւրեանց՝ զոր 'ի դոյզն ժմկի ստացան ։ Այլ այս համարձակութեն և ընդարձակութեն ազ̃՝ ոչ սակաւ զայրացուցին և նախանձուկս էարկ 'ի սիրտ ժողովրդեանն, և 'ի սիրտ մեծամեծացն հնդկաց • և գրգռեաց հակառակութեն և ատելութեն ընդդէմ հայոց • մանաւանդ ընդդէմ կօրկին խանին, որում այնչափ իշխանութեն առեալ էր նաւաբն • և որոյ իշխանութ̃ն այնչափ յանդգնեցան ժողովուրդք հայոց ։

Ուստի ստէպ զանգատ և բողոք բառնային առ կասըմ ալի խանն զհայոց • այլ նր̃ զի բոլորովին էր ապաստանեալ 'ի հայս վս̃ քաջութեն նց̃, և մանաւանդ առ սիրոյ կօրկին խանին, զնց̃ չարախօսութեն մերժէր, և զհայս արդարացուցանէր ։ Նոյնպէս և պետրոս աղայն եղբայր նր̃՝ սիրելի էր յոյժ և մեծարգի յաչս նաւաբին յա̃ջ ք̃ զանցանելն 'ի կողմն անգղիացւոց, մինչև երբեմն 'ի գնալն յայցելութի̃ն նմ̃, յորժամ ք̃ղքս ը̃ որ անցանէր զճ̃նապարհայն, զամ̃ բանտարկեալսն հրամայէր արձակել • վն̃յ առհ̃րկ ամ̃ քաղաքացիք և գաւառացիք բողոք բարձեալ զանգատ դրեցին առ նաւաբն • որոց ամ̃ցն արար պ̃նի, թէ նր̃ արարք և գործք, են իմ արարք և իմ գործք ։

Յետ բազում պատերազմաց և ասպատակութեանց՝ զոր առնէին աստ և անդ զօրք և զօրապետք հայոց 'ի կողմանէ Հնդկաց ընդդէմ անգղիացւոց, ըստ խորհրդոյ և ըստ հարգելոյ կորկին խանին, պետրոս աղայն եղբայր կորկին խանին՝ էանց 'ի կողմն անգղիացւոց 'ի վերջին ժամս ապստամբութեան խասըմ ալիին. զի և յառաջ ևս կուսակից էր նոցա 'ի ծածուկ և ձեռնտու. քանզի զօրաց նոցա որք էին 'ի նաւսն՝ և չունէին համբարս կերակրոց, սա բազում անգամ պէսպէս հնարիւք ինքնին տանէր նոցա կերակուր. և այլ բազում իրօք նպաստամատոյց լինէր կարևոր պիտոյից նոցա՝ զոր ոչ է տեղւոյս ընդարձակ պատմել. մինչև նոցին իսկ անգղիացւոց երախտապարտ խոստովանիլ զանձինս նմա, բերանով և նաև 'ի գիրս պատմութեան իւրեանց՝ թէպէտ ոչ ըստ արժանեաց: Զի թէ 'ի յանձուկ ժամս ինչ և 'ի դիպուածս չէր օգնեալ սա, դժուարին էր յոյժ մնալ և յաղթութիւն անգղիացւոց, և առանց իսկ պատերազմի ինքնին հարկադրեալ հեռանային 'ի պանկալայէ:

Զկնի անցանելոյ պետրոս աղային 'ի կողմն անգղիացւոց, երկիւղ նոցա 'ի կողմանէ պատերազմին էր միայն 'ի կորկին խանէն. քանզի տեղեակ իսկ էին առն իմաստութեան և քաջութեան, վասն որոյ 'ի վերայ բազում այլ նենգութեանց զոր գործեցին 'ի կորուսս Հնդկաց, զայս ևս յաւելին, բռնադատէին զպետրոս աղայն սուտ սուտ գրել և յորդորել զեղբայր իւր զկորկին խանն՝ անցանել 'ի կողմն անգղիացւոց. որոց զի ծանուցեալ նաւաբին զայս երկդիմութիւն թղթոց՝ կամ սպանցէ զկորկին խանն, և կամ նա ինքնին փախուցեալ անցցէ 'ի կողմն իւրեանց: Բայց կորկին խանն ոչ ունկն առնէր բանից եղբօրն՝ գիտելով զբռնադատելն նորա յանգղիացւոց, և ոչ թաքուցանէր զայն զմի թուղթս, այլ ինքնին բանայր մի առ մի 'ի ցոյց հաւատարմութեան իւրոյ, և ընթեռնոյր առաջի նաւաբին: Այլ սակայն նաւաբին յառաջագոյն գժգմեալ էր անցանել պետրոս աղային 'ի կողմն անգղիացւոց, և միանգամայն կասկած երկիւղի առեալ յանձն իւր զնմանէ, մանաւանդ 'ի սադրելոյ նախարարաց իւրոց՝ որք պատճառս քսութեան առեալ զայն՝ անդադար չարախօսէին զնմանէ, ոչ վստահանայր 'ի նա կատարել սրտիւ որպէս յառաջն: Ուստի 'ի վերջին բաղխման նոցա՝ ոչ եթող զկորկին խանն մտանել 'ի բանակն և պատերազմել ընդ անգղիացիս, այլ ընդ իւր կալաւ 'ի մօտակայ քաղաքն՝ որ է 'ի փատնայ նահանգին:

Այս վերջին պտղմ 'ի դերև եհան զամ հնարս և զգործս, զոր մինչև ցայնժամ լռմ. քաջութ գործեաց կորկլին խանն յօգուտ Նապապին, և 'ի կորուստ անգղիացւոց, և ցրուեաց և ընդունայնացոյց զայլ եւս առաջարկուած խորհրդոց նր զոր ունէր 'ի սրտի առնել յօգուտ և 'ի մշտնջենաւոր պարծանս ազգիս մերոյ ընդ ամ ծ՝ յետ յաղթելոյ և վտարելոյ անտի զանգղիացիս ։ Այդ՝ վերջին բաղխումն և պտղմն եղև արտաքոյ մախսուտապատ քաղաքին՝ որ է մայրաքաղաք պանկալոյ . յորում բանակ անգղիացւոց էր իբրև 7 . 8 հազար զօրաց, իսկ խասըմ ալիին՝ անբաւ անհամար, բայց առանց սպառազինելոյ, անզգուշ, և երկպառակեալ, զի յառաջ խանն կիր զօրապետն՝ ոտ 'ի սկզբանէ հետէ հակառակ էր և թշնամի կորկլին խանին՝ նոյնպէս հակառակ էր և սոմրու զօրապետն, վսյ 'ի ժամ պտղմի խնդ. արարեալ ընդ սոմրուին և ընդ մարգարին, նախ զսոմրու հաւանեցոյց միայն երևել ընդդէմ անգղիացւոց, ոտ զի 'ի վատակել զօրաց նր՝ այլ զօրապետք և զօրք 'ի տեղի նր յոյժ մատիցեն, և այնպէս ընդերկարելով զպտղմն՝ դիւրաւ յաղթեսցեն անգղիացւոց . այլ խնդք և կամք նր էին պարտութն սոմրուին ։

Իսկ սոմրու ոչ դիտելով ինչ զխնդրուն նր, և գոլով ուսեալ և վարժեալ 'ի պտղմական արուեստս եւրոպացւոց, քաջութ մարտեաւ ընդ անգղիացիս, մինչև մերձ 'ի պարտել զնս, այլ զկնի վատակելոյ, ստէպ ստէպ պատգամ յղէր առ մարգար, և առ յառուն, գալ յօգնութն նր ։ Բայց յառութին առ մախանաց սրտին զոր կրէր առ նա, ոչ թողլ տայր ուրեք գնալ, ոտ զի 'ի պարտութի մատնեսցի նր, եւրն յարձակեալ 'ի վր անգղիացւոց, ժառանգեսցէ զփառս յաղթուն. բայց ոչ եհաս ուրուք ցանկալին ։ Քանզի թէպէտ վատասիրեալ էին յոյժ յայնմ սաստիկ պտղմի սակաւ զօրք անգղիացւոց, սակայն 'ի լուր խոստման առաս վարձուց՝ զոր խոստացեալ զօրավարն՝ և թէ դէթ այլ ևս կէս ժամ պտղմեսցին, քաջալերեալ պնդեցին զանձինս, և օգնով չափ մարտուցեալ 'ի գոյզն ժամուանդ՝ յաղթեցին զօրաց սոմրուին ։ Իսկ 'ի լսելն զայն լուր պարտուե զօրաց յառուն խանին և մարգարին, առ հնարս զարհուրեալ 'ի փախուստ դարձան և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս ։

Զայն լուեալ նապապին անհնարին տրտմութ և դառնութ պաշարեցաւ . առաս 'ի դրդուելոյ մեծամեծ՝ իշխանաց հնդկաց, որք անշուշտ 'ինենդրուէն կորկլին խանին հաստատէին լինել զայն պարտուն , եւ ապանանել զայրն հզօր յերթալ նր յաւուր միում 'ի Ճանապարհ անզէն ամենեւին · ը որոց մահ եւ ինքն իսկ նաւապետն յետոյ ապրեցաւ եւ սուգ եղաւ · յորժամ ետես զինքն զրկեալ 'ի սիրելոյն , եւ 'ի դրաց խորհրդականէն · որ առանց խորհրդոց նր չէր ուսեալ կառավարել , եւ ոչ առնել ինչ :

Ահա այս եղեւ կատարած մեծի պատրաստութ զինուց եւ զօրաց խաւըմ ալիին · եւ այս եղեւ վախճան ճոխութ եւ իշխանութ մերոցն՝ որոց թէ փոյթ կալեալ էր յանձին բերել զցանկալի միաբանութին առ իւրեարս , եւ իմաստութ գունդ եւ սէր առ հնդիկս , առնուլ եւս արգելոք պայծառապերճութ տեսանէաք այժմ զազգ մեր վայելել յայն տրութ եւ յիշխանութ՝ զոր ժառանգեն անգղիացիք · եւ տր համօրէն Տէրն եւ վաճառականութ լեալ Դարձակապոյն եւս ք զանգղիացիս :

Այլ զկնի՝ խաւըմ ալին ժամ դխալող գտեալ , զերծոյց զանձն հզօ գանձիւքն իւրով զոր կուտեալ էր · որ քաջալեր եղեւ նմ՝ եւ յոյս 'ի խնդրել զվրէժ յանգղիացւոց : Եւ դէմ եդեալ գնաց առ Նապապն սինաբխայ կմ Իլլստապատայ , որ էր փոխարքայ մեծ Լինքնոկալին մուղալաց :

Իսկ անգղիացիք զայս օրինակ կալեալ զմտութ այնկալոյն , կարեւոր վարկան առ ժմկ մի պահել ըզնախնի սովորութ երկրին · կառավարելով եւ հաւաքելով զմուտս ը անուանք սուպայէին՝ զոր ինքեանք կացուցանէին · որում եւ ամի ամի մատնաւոր հատս ինչ կարգեալ էին · որ եւ առ արտաքս ցուցանէր զանձն իշխան երկրին · այլ ներքին կառավարութն բոլոր կախեալ կայր յառէնէ անուն անգղիացւոց որ 'ի կալկաթա : Եւ այնուհետեւ ընկերութին վաճառականաց անգղիացւոց՝ թէպէտ առ երեւոյթս երեւէր իբրեւ վճռական , այլ 'ի ներքուստ իւրով խոհեմութն երկայնմտութն եւ հնարիւք դիւանին փոխեալ, եղեւ տր եւ հրամանատար երկրին · եւ մատակարար մտից նր 'ի ձեռն վճռականութ · որով դրեթէ եւ զբովանդակ վճռականութ երկրին յինքն գրաւեաց · եւ վաճառականութ ազգիս հայոց՝ որք առաջին եղեն 'ի ծաղկեցուցանել զայն յՏէրն հնդկաց , նուաղեցաւ մեծապէս :

Այսչափ ինչ առ հարկ սակս տիրելոյ անգղիացւոց՝ եւ նուազութ իշխանութ հայոց բնակելոց անդէն, առ որոյ կատարել ստուգութն՝ թէպէտ բզմ ինչ կայր պատմել, այլ ոչ ներէ մեզ համառօտութն բանից: Այժմ ստորագրեսցուք զերիս նհ՟նգսն:

Յօդ ա՟. Պանկալա:

Պանկալա է մի 'ի մեծամեծ նհ՟նգացն մողոլաց. իսկ արգասաւորութն և առատութն երկրի նա՟ զանցանէ ք՟ զա՟մ նհ՟նգս: Յարևելից՝ սահմանակից է աշհամ Ծին. յարևմտից՝ պեհարէձ նահանգին. 'ի հիւսիսոյ՝ փուտանայ, իսկ 'ի հարաւոյ՝ ովկիանոսի, ուր գանգէս մտանէ 'ի ծով: Մուտք որ՟ առ ժմկօք յորում տիրեցին անգղիացիք, համարէր 332 միլիոն ռուփի. որ առնէ ոսկի վենետիկեան 7,272,727. յորմէ 3,727,272 ոսկի որոշեցաւ 'ի ծախս առ 'ի կառավարութն և 'ի պաշտպանութն երկրին. և 27272 ոսկի սուպային կա՟մ նաւապային. ուստի և ընկերութեն անգղիացւոց՝ մնայր դեռևս 2,727,272 ոսկի. զոր ը՟ առաւել մասին գրաւեալ էին 'ի վաճառս. բայց քանի մի միլիոն դրամս ստացեալ էին և յանգղիա. այլ այժմ առ սակաւ սակաւ նուազեցուցանեն զմուտս նաւապային, և ինքեանք սեփականեն զա՟մ. մինչ զի ո՟չ Թուի, յետ ժմկաց ինչ և զնաւապութիւնն բառնայցեն անտի, և ինքեանք միայն Թագաւորեսցեն:

'Ի պանկալա ո՟չ և յայլ տեղիս ինչ փոխ փոքր դրամոց կամ փողոյ, 'ի գործ ածեն մանրիկ քարինս բերեալ այլուստ. նման այնմ՝ զոր կոչեն 'ի կոստանդնուպօլիս Խալթըր պօնճուխաւ. իսկ հնդիկք կոչեն զայն Գօվրի. և Օրօջ. որոց վաթսունն և երբեմն ութսունն՝ առնէ մի փող. ք՟զի պանեանք՝ լումայափոխք հնդկաց Ծին՝ որք բերել տան զայս գօվրի, միշտ փոփոխեն զգինս նց՟ 'ի պատճառս անյագ շահախնդրութեան իւրեանց. ուստի 'ի գնելն զառօրէական պիտոյս տանց, բզ՟մ դժուարութիւնս կրեն՝ 'ի մեծամեծ պարկս և 'ի զամբիւղս շրջեցուցանելով զայն: Բզ՟մս ջանացին անգղիացիք մուծանել փոխ այնր այլ ինչ դրամս. բայց ոչ կարացին: Երկիր պանկալայի առաւել դաշտային է ք՟ թէ լեռնային. սակաւք զատանին անդէն լերինք 'ի հիւսիսային և յարևելեան կողմանս. իսկ մնացել՟ երկիրն է դաշտավայր. առ հ՟րկ սերմանեալ և ծառատունկ. յորս բազմադակ են տունք գիւղականաց սփռեալ աստ և անդ:

անդ : Գտանին 'ի պանկալա և գազանք, ո՟պ առևծանման վագր, և վայրենի գոմէշ, և կոկորդիլոս բզ՟մ առ գետովք, ո՟պ և յայլ նահանգս : Իսկ զայլ հանգամանաց երկրին պանկալայի խօսեցաք 'ի ներածութե՟ն անդ Տ՟ին մողոլաց. քզի զոր միանգամ անդէն գրեցաք վ՟ս հարաւային կողման մողոլաց, ոչ միայն պարտ է իմանալ զորքսն Տ՟էն, այլ նաև զպանկալայէ, զօրիսսայէ, և զփագանայ : Գլխաւոր տեղիք սորին նշ՟նգի՝ են հետևեալքդ :

Գաւլասօր : Է կալուած և վաճառատեղի հոլանտացւոց՝ յափն Կոնջահար գետոյն 'ի հարաւոյ. մերձ 'ի բերան ն՟ր, որ ելանէ 'ի լերանցն օրիսայ նշ՟նգին : Կալկաթա. զոր ոմանք գրեն Քալկաթա : Է քղ՟ք մեծ և գլխաւոր տեղի անգղիացւոց. 'ի վ՟ր միոյ 'ի վտակաց գանգեսի. որ այժմ է մայրաքղ՟ք պանկալայի. քզի զվայելչութի և զմեծութի մախսուտապատ նախնի մայրաքղ՟քին, առ սակաւ սակաւ 'ի ս՟մ փոխադրեն անգղիացիք. ո՟պ արդէն զդատաստանն նաւապին՝ որ 'ի լեզու հնդկաց կոչի Քաչարի աստ փոխադրեցին. ուր բաց յանգղիացւոց դատաւորաց, կայ և հնդիկ դատաւոր. որ դատէ զազգ ն՟ց : Օդ քղ՟քիս յոռի է և վնասակար, որոյ բնակիչք 'ի զգուշութե զանազան հիւանդութեց՝ յաճախելոց անդէն զորոց գրեցաք 'ի ներածութե անդ, ոչ կարեն [illegible]. Ջուր գետոյն է աղէհամ, և շրջակայ սահմանք ն՟ր բաց 'ի սակաւ ձեռագործաց՝ այլ ինչ ոչ բերեն : Շրջապատ ն՟ր է իբրև 9 կմ 10 մղոն. և թիւ բնակչաց ն՟ր՝ յառաջագոյն էր իբրև վեց հարիւր հզ՟ր. այլ յետ այնորիկ և ևս բազմացան, և օր ըստ օրէ բազմանան յոյժ որով և քղ՟քն հետզհետէ տարածեալ ընդարձակի : Բնակիչք նորա ըստ առաւել մասին են հնդիկք կռապաշտք և մահմետականք. են անդ և բազմութի օտար ազգաց՝ ո՟պ անգղիացիք՝ գաղղիացիք՝ և առաւել քան զսոսա փորտուգալք, ըստ մեծի մասին սերեալք անդէն 'ի նախնի փորտուգալաց. յորս շատք ևս այնք են՝ որք 'ի բնիկ հնդկաց անտի դարձեալ 'ի քրիստոնէութի խառնեցան յազգն փորտուգալաց :

Գտանին անդ և բազմութի յազգէս հայոց, յորս են վաճառականք երևելիք և փարթամք. 'ի նորումս յամին 1781, և 1782 առաւել բարգաւաճեալ ծաղկեցան, և շինեցին տունս հոյակապս : Յայս քղ՟ք պայծառացաւ և մեռաւ մեծ իշխանն և վաճառականն փարթամ և անուանի պետրոս յարութենեան

էղ

եղբայր կօրհլին խանէին այր ազնուական զգօն և արդարակորով ։ Բնակիչք քաղաքիս գրեթէ առ հասարակ պարապէին 'ի գործ վաճառականութեան . ուստի սակս անչափ բազմութեան վաճառականացն՝ անբաւ են 'ի նմա՝ գանձք և հարստութիւնք . վաճառք և վաճառանոցք կան Գոգէք . և երթևեկք մեծամեծ նաւուց, բեռնաւորեալ զանազան վաճառօք ։ 'Ի համօրէն քաղաքին երկու են միայն եկեղեցիք . մին հայոց , և միւսն լատինացւոց՝ ընդ խնամակալութեամբ օգոստինեան կրօնաւորաց ։ Ունի և դղեակ մեծ շինեալ յանգղիացւոց . յորոյ 'ի շինութեն՝ ծախեցան 5 միլիոն արծաթ ռուփի . և ոսկի վենետիկեան 1,818,181 . այլ այս դղեակ է անօգուտ վասն քաղաքին զի ոչ կարէ պաշտպանել նմա ։ Բայց 'ի սմանէ՝ ունի այլ ևս երկու ամրոցս աստի և անտի գետոյն . որոց մեծագոյն օգուտ այս է . զի ընդ մէջ սոցա ունին անցանել ամենայն նաւք՝ որք գնան 'ի կալկաթա . և յայլ ամենայն կալուածս եւրոպացւոց , որք են 'ի վերնագոյն կողմանս գետին ։

Մուտք նաւահանգստին կալկաթայի վտանգաւոր է յոյժ , 'ի պատճառս գետոյն՝ որ է առաջք ինչ Գանգեսի . որ ընդարձակեալ ծաւալի յոյժ . մերձ 'ի խառնելն ընդ ծով և այլոց վտակաց . մինչև աւուրս միով հեռի 'ի կալկաթայէ՝ վերեն ցամաք երկուց կողմանց որոց նաւուն ընդ մէջ նոցա ։ Այս գետս բարձեալ բերէ աւազ և կաւ . որք 'ի տեղիս տեղիս գիզացեալ լեռնանան . և 'ի յորդել անձրևաց փոփոխին անդադար . և վտանգաւորեն զնաւս . յայն սակս զինի անձրևաց միշտ աւազքն քննիչք , 'ի զննել զամենայն վայրսն . և դնել նշան յաւազուտ տեղիս 'ի զգուշութիւն նաւարկողաց որք և առաջնորդեն նաւուց մինչև ցքաղաքն՝ ուր չիք ևս վտանգ ։ Բայց յայս աւազուտ տեղեաց՝ որք յար 'ի փոփոխման կան , են ուրեք ուրեք և տեղիք ծանծաղք հաստատունք , և 'ի տեղւոջ ուրեմն բլրակերպ գիզացեալ է կաւն . և կարծրացեալ աստի և անտի , և միջոցն ընդ որ մարթ է նաւարկել , անձուկ յոյժ , և ջուրն սակաւ . զի խորութիւն նորա հազիւ հասանէ ցերիս գրկաչափս . ընդ որ դժուարին է նաև մեղմ և յաջողակ հողմով անվտանգ անցանել . զի թէ դիպի ինչ ընդհարցի նաւն 'ի մի կողմն այնր կաւակոյտ բլրոյ , որ գոլով ողորկ , խոր և իսկ կործանի ։ Բազմաջան տառապեցան անգղիացիք 'ի դիւրացուցանել զճանապարհ այսր նաւահանգստի , այլ ոչ կարացին ։

Վտանգաւոր է ևս 'ի ժամանակս մակընթացութեան ծովուն

ով

ովկիանոսի, որ սաստիկ լինի յոյժ 'ի ծննդեան և 'ի լրման լուսնի. մանաւանդ յայն ամիս՝ յորս նուազի գետն. և ոչ կարէ յորդութեամբն՝ ընդդիմանալ մակընթացութեան խափանել. զի 'ի յունվարի 'ի փետրվարի և 'ի մարտի, որոյ առաւելն և եթ զարհուրեցուցանէ զնաւսն. զի ջուրք ովկիանոսի իբրև աշտարակ բարձրացեալք, յանկարծակի անհնարին ուժգնութեամբ դիմեն յայն ծոց լայնածաւալ 'ի գետն կոյս. ուր թէ գտցին նաւակք յեզերս, հարկ է բառնուլ 'ի ցամաքն՝ խորտակեն խաղաղ. ուստի յայնմ պահու նաւակք կամ մտանեն 'ի ծոց ինչ փոքր գետոյ, և կամ կան 'ի մէջն անդ՝ հեռի յերկուց կողմանց գետոյն, տարածեալ ունելով զթիակսն 'ի ծովն. զորս լեռնանայցէ կոհակք ովկիանոսին՝ թէպէտ մեծ ամենն յանկարծ թօթափել զոր վայր ժամանէ բառնուլ նս, այլ անվնաս զերծանին. միայն զի առ նս բաւական վասն և երկիւղ արկանել 'ի սիրտ ձկնորսաց: Այս մակընթացութիւն յառաջնում աւուր ծննդեան և լրման լուսնի սաստիկ լինի յոյժ. որ և տևէ մինչև ցերիս աւուրս. այլ յերկրորդում և յերրորդում աւուր՝ առ սակաւ սակաւ նուազի: Յայս ծոց ծովու գտանի թէքէ. որ է ազգ ինչ ծովային ժժմանց՝ մեծամեծ յոյժ. որոյ նման ոչ գտանի 'ի միջերկրեական կամ յայլ ծովս. զի հնգապատիկ և առաւել մեծ են քան որք լինին 'ի ծովս մեր:

Սինամէօրա. որ կոչի և Ֆէտէհէրէ նահար: Էր վաճառանոցն հիմնեալ 'ի գաղղիացւոց 'ի 1756 իբրև 18 մղոնաւ հեռի 'ի կալկաթայէ. առ 'ի փոխադրել անդր զգեստ եւրոպացւոց. որք 'ի վաղ ժամուց եկեալ բնակէին յայլ կողմն Ծնին. ուր չէին կարօղ դարմանել ըղկեանս: Այլ այսուհետև մինչև ցայժմ չառաջացաւ ինչ հաստատութիւն. և ոչ երևի ոչ երբէք եղեցի շահաբեր իմն տեղի:

Ջաննաքար, կամ Ճաննաքէր: Բերդ իբրև 7 մղոնաւ և կիտով 'ի վերայ է տրուպ գաղղիացւոց: Սահմանքս նր պատուական է յոյժ, և օդն բարի. որչափ ինչ մարթ է ըմպել յաւփն դանգեսի: 'Ի շինել անդէն շինուած ինչ հաստատուն, հարկ է անդ և յայլ կողմանս ուղղակալցի, նախ ցցս վարսել ը̃ երկիր խոր առ խոր. և ապա 'ի վ̃ր պնդիմանս արկանել. զի զի 'ի բրել անդ զերկիր իբրև երկու կամ չորս ոտնաչափ միշտ բղխէ ջուր: Ճշմարիտ վիճակ նր որոյ շրջապատն է իբրև 3 մղոն և եթ, լի է արուեստաւորօք. որք յետ աստուածպաշտութեան մարախթայից, զեղան անդր ՚ի խնդրել իւրեանց տեղի ապաւինի: Գործեն անդէն Թաշկինակս անբաւս, և այլ կտաւս, սակայն և այնպէս վաճառականութի՟ն ն՟ց ստորին է ք՟ զայլ երևելի տեղեաց: Յայս տ՟մ քղ՟քս պանկալայի՝ որք են ը՟ թրուք այլոց ազգաց Եւրոպացւոց՝ ՚ի լինելն երևելի ինչ հակառակութե՟ն կմ՟ վիճի՝ ՚ի դատաստանս անգղիացւոց վճարին, սակս զօրոյ ն՟ց տ՟ր երկրին:

Գանփէլ: Յառաջագոյն էր սա տեղի փորդուքալաց. ուր դեռևս տեսանի դրօշ ն՟ց. ք՟ղի գոյ մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց, որոց սովորութի՟ն է կանգնել զդրօշակս փորդուքալաց. այլ այժմ սակաւ ոմանք գտանին անդ ՚ի փորդուքալաց աղքատք, որք իսպառ մոռացեալ են զհայրենիս, գոլով և ինքեանք լեալ անխնամ ՚ի թշուառութե՟ իւրեանց:

Հոուկլէ, կմ՟ **Հուղլի**: Քաղաք մեծ ՚ի հարաւակողմն մուխսուտապատայ և տաքայի. կառուցեալ առ գետով. որոյ բնակիչք ը՟ մեծի մասին են հնդիկք կռապաշտք:

Սէյտապատ: Քաղաք առ վտակաւ գետոյն գանգէսի՝ որ կոչի Պօհրատ: Բզ՟մ ժղ՟վդ դոն անդէն ՚ի կռապաշտից, ՚ի մահմետականաց, և յազգէս հայոց. որք ունին և եկեղեցի. և է սա վաճառատեղի՝ յորում են բզ՟մ արուեստաւորք և գործաւորք մետաքսեայց՝ սակս հայոց վաճառականաց:

Խասըմպազար: Քաղաք առ նոյն պոկրադ գետով. որ ընդարձակեցաւ յոյժ ՚ի քանդելն երկուց այլոց քաղաքաց. ծ Մօյդաւն. և Բռահմա մեհօչ անուամբ քղ՟քին. գլխաւոր վաճառք ս՟ր է մետաքս: Յառաջին ժամս ոսի և պէշինդ իսկ վճայէ, զոր անդէն հաստատած ինչ ժողովրդեան հայոց. այլ զկնի ափռեցան ՚ի զանազան տեղիս:

Մուխսուտապատ: Քաղաք երևելի. ՚ի հիւսիսոյ կողմանէ խասըմպազարայ, առ նոյն պոկրադ գետով. որ ՚ի նախնումն էր մայրաքղ՟ք համօրէն մեծի նահանգին պանկալայի: Քաղաքք որք են ը՟ մէջ ս՟ր և սէյտապատայ. և խասըմպազար, են, չեն այնչափ ինչ զատեալ ՚ի միմեանց, այլ գրեթէ կից ը՟ միմեանս. որով թուին լինել մի քղ՟ք: Զգի սա ընդերկայն առ գետովն իբրև 8 մղոն. յորում է բնակութի՟ և աթոռ սաւապս նաւապայլին կմ՟ նազեմայ պանկալայի: Բնակիչք ն՟ց գրեթէ առ հասարակ են հնդիկք կռապաշտք և մահմետականք. յորում են մեհեանք մեծաշէնք և մանուանք բզ՟մք. և 300 մզկիթք. յաճախեն անդ վաանդր 'ի խնդրել իւրեանց տեղւոյ տապաւենի ։ Գործեն անդէն Թաշկինակս անբաւս, և այլ կտաւս, սակայն և այնպէս վաճառականութիւն նր̄ ստորին է ք̄ զայլ երևելի տեղեաց ։ Ցայս ժմ̄ ք̄ղքս պանկալայի՝ որք են ի̄ ձ̄ռս այլոց ազգաց եւրոպացւոց՝ 'ի լինելն երևելի ինչ հակառակութե̄ կմ̄ վէճի՝ 'ի դատաստանս անգղիացւոց վճարին, սակս գոլոյ նց̄ ի̄ր երկրին ։

Պանտէլ ։ Ցառաջագոյն էր սա տեղի փորդուքալաց, ուր դեռևս տեսանի դրօշ նց̄ . ք̄ղին գոյ մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց, որոց սովորութիւն է կանգնել զդրօշակս փորդուքալաց . այլ այժմ սակաւումանք գտանին անդ 'ի փորդուքալաց աղքատք, որք իսպառ մոռացեալ են զհայրենիս, գոլով և ինքեանք լեալ̄ անխնամ 'ի Թգ̄րէն իւրեանց ։

Հուկլի, կմ̄ Հուղլի ։ Քաղաք մեծ 'ի հարաւակողմն մինասուտապատոյ և տագայի . կառուցեալ առ գետով . որոյ բնակիչք ըն̄ մեծի մասին են հնդիկք կռապաշտք ։

Սէյտապատ ։ Քաղաք առ վտակաւ գետոյն գանգէսի՝ որ կոչի Պոկրոտ ։ Բզ̄մ ժղ̄վդ գոն անդէն 'ի կռապաշտից, 'ի մահմետականաց, և յազգէս հայոց . որք ունին և եկեղեցի . և է սա վաճառատեղի՝ յորում են բզ̄մ արուեստաւորք և գործաւորք մետաքսեայց՝ սակս հայոց վաճառականաց ։

Խասըմպազար ։ Քաղաք առ նոյն պոկրատ գետով . որ ըն̄արձակեցաւ յոյժ 'ի քանդելն երկուց այլոց քաղաքաց . ծ̄ Մայդոտի . և Բոաճա ջեհօլ անուան ք̄ղքին . գլխաւոր վաճառք սր̄ է մետաքս ։ Ցառաջին ժմկս ող̄ և պիշենդ իսկ վկայէ, զոր անդէն հաստատեալ էր ժողովրդեան հայոց . այլ զկնի սփռեցան 'ի զանազան տեղիս ։

Մախսուտապատ ։ Քաղաք երևելի . 'ի հիւսիսոյ կողմանէ խասըմպազարայ, առ նովին պոկրատ գետով . որ 'ի նախնումն էր մայրաքաղաք համօրէն մեծի նահանգին պանկալայի ։ Քաղաքս որք են ի̄ մէջ սր̄ և Սէյտապատայ . կմ̄ խասըմպազար, են, չեն այնչափ ինչ զատեալ 'ի միմեանց . այլ գրեթէ կից ի̄ միմեանս . որով Թուէին լինել մի ք̄ղք ։ Ձգի սա ըն̄րկայն առ գետովն իբրև 8 մղոն . յորում է բնակութի և աթոռ սուպայ նապապին կմ̄ նաւաբին պանկալայի ։ Բնակիչք նր̄ գրեթէ առհասարակ են հնդիկք կռապաշտք և մահմետականք . յորում են մեհեանք մեծաշէնք և մատուռնք բզ̄մք . և 300 մզկիթք . յաճախին անդ վաճառականք հայոց 'ի պէտս առևտրուն. քզի յայս շրջակայ սահմանս գանգէսի, և 'ի ձեռս մախսուտապատայ, և 'ի քղքս որք առ նովաւ, որ 'ի սէյտապատ և 'ի խասըմպազար, և մինչ 'ի նոյն իսկ 'ի մախսուտապատ, առաւել մասն բնակչաց են արհեստաւորք մետաքսագործք. որոց ոմանք պատրաստեն թելս, և զլաւն 'ի յոռւոյն զատանեն, և ոմանք նիւթեն և մանեն։ Ուստի սա է առաւել հռչակաւոր վաճառատեղի մետաքսի 'ի բոլոր պանկալս. և մեծագոյն մասն մետաքսին 'ի շրջակայ գաւառէ որ ելանէ։

Անդ գործեն բազմապատիկ մետաքսեայ կերպասս, և բամպակի բէհեզս, որք սփռին ընդ համօրէն ասիա, այլ երևելի մասն մետաքսեայ կերպասուց գնան 'ի կողմանս ասիոյ, և 'ի տէլլի մայրաքղք մողոլաց։ Իսկ յեւրոպիա առաւել գնայ մետաքս անգործ իբրև 150000 օխայ, 'ի խոշոր և 'ի մանրին տեսակէն. որ քզի ոչ առնու ինչ գոյն պայծառ և կենդանի, եւրոպացիք 'ի կիր առնուն զայն միայն 'ի ներքին նիւթ ծաղկեայ դիպակաց՝ որ արտաքուստ ոչ երևի։ 'Ի գաղղիա արգելեալ է բնաւ տանիլ անտի կերպաս, իսկ 'ի հիւսիսային կողմանս եւրոպիոյ՝ տանին սակաւ ծիրանի կերպասս, այլ թաշկինակ բզմ յոյժ։

'Ի քղքի աստ է տունն անուանի Ճիկիսէթ վաճառականին և լումայափոխին հնդկաց՝ այն է Սառաֆ. շինեալ բարձր պարսպաւ, և հարուստ ապարծուք. յորում բնակեն այժմ որդիք և թոռունք 'ի սերնդոց նր. որք ունին և այլ բզմ տեղիս և տունս 'ի մէջ քղքին. և արտաքոյ գեղս ագարակս և կալուածս։ Սա էր լումայափոխ ինքնակալին մուղոլաց. որում վր հաւատարմութեն և անչափ փարթամութե տայր նապապն զթգրական հարկս ժողովեալս 'ի նահանգէն իւրմէ՝ հասուցանել 'ի գանձն արքունի։ Երևելի էր յոյժ և համբաւեալ ընդ ամ հնդկաստան 'ի վճռականութե և 'ի կառավարութե, որ և այժմ սերունդք նր. զի նապապն պանկալայի ոչ կարէր առնել զաւորական դատաստան իւր առանց նր։ 'Ի տան նր են անբաւ գանձք ոսկւոյ և արծաթոյ. և անթիւ մարգարիտք, և ակունք պատուականք, այլ և պէսպէս զարդք զինուց բազմագունի ակամբք յօրինեալք. զորս յերևելի տօնս կարգեն 'ի պարտիզի անդ առ աւազանաւ ջրոյ 'ի զբօսանս և 'ի տեսիլ բարեկամաց իւրեանց. որով սքանչելի իմն երևի պարտէզն.

տեղ նց՟ լուսաւոր տեսանեք 'ի դրան զնչին ծաղկեն : Այս պարանոցս կախեն կրեն մեծամեծ մարգարիտս և յակինթս . և 'ի խոյրս մեծամեծ ակունս սակաւագիւտս : Այլ յամ ականջս , յամ ջիղս , և յամ նաւահանգիստս հնդկաց , և յայլ ծովեզերեայ մերձակայ կողմանս ասիոյ , ունին սեպհական վաճառականս ծանօթս և պաշտօնատարս . միայն 'ի մասուլիպատամ քաղաքի և 'ի շրջակայ տեղիս վեց հազար ծառայք են նց՟ , յորս կան և սպասաւորք կարգեալք՝ առեալ 'ի համարել զդրամն որ 'ի վերայ տուրեւառութե՟ . և և 'ի յանչափ և յանհնարին համարելոյ նոցա՝ պատմի , թէ յանօթն անդրձիոյ՝ ուր լուանան զձեռս ամսոյ յամիս ժողովի ոչ սակաւ արծաթ . հարստութիւն նց՟ առ հասանել 9300 միլիոն ռուփի : 'Ի նց՟ ցեղէ վերկուս եղբարս յարուն խանն զօրավարն խասըմ ալի նաւապալին , հնարիւք լեալ մահու 'ի ձեռն նց՟ , կալաւ և եած առ նաւապալն . որ տայր սպան զնն . զի ասի թէ բանծածուկ էր 'ի մէջ նց՟ և անգղիացւոց : 'Ի ձնդհեն՝ յորժամ տանէր զնն յարուն զօրավարն՝ յերկս առուրս կառավարելովն զուլթօրեայ ճնդհն , նա ջղի բղմ՟ մեծամեծ ակունս ունէին կախեալ առ 'ի զարդ , խոստացան տալ նմ՟՝ միայն անվնաս տանել հասուցանել զնն առ նաւապալն :

Տաթա . որ կոչի եւս Ճոթան : Քղք՟ է 24 աստիճանաւ հիւսիսայինն լայնութ՟ . կառուցեալ 'ի վր՟ միում 'ի վտակաց գանդեսի , երբեւ 80 մղոնաւ հեռի 'ի բերանոց նր՟ է որս միանեն 'ի ծովն . զոր ամենք յաշխարհագրաց վիճակեալ եդին մայրաքղք՟ պանսկալայի : Արգասաւորութե՟ երկրի նր՟ . և յաջողակ դիրքն արար զսա 'ի բղմ՟ ժմկց տեղի բազմավաճառ , և ժողովարան տուրեւառութեց : Քանզի աստի զնեն յամ կողմանց՝ զանազան տեսակս պաստառաց որք ափուին մինչև 'ի տըլլի մայրաքղք՟ , և յայլ նմ՟ նահանգս մողոլաց , և հնդկաց . և արաբաց , 'ի ճիտտա , 'ի պասրա , յեւրոպիա , 'ի մանիլա , և 'ի փիլիպպեան կղզիս . և անտի յամերիկա : Նաւք անգղիացւոց , գաղղիացւոց և հոլանտացւոց առ հասարակ բարձեալ 'ի կառաւաց անտի սփռեն յաշխարհ ամ՟ , 'ի զանազանութե՟ տեսակաց՝ սակս անհասանելի գեղեցկութե՟ և նրբութե՟ նց՟ : Զի արտաքուստ 'ի տաթա մնանէ միայն բամբակ անզարդ , և 'ի ձեռաց բերոյ և ոսկա սեւահնդկացն եղանէ այնչափ զանազան ոստայն ազնիւ և ճարտարագործ , որոց զուգակշիռ հազիւ ուրեք երեւի . մեծ է հանճար և ճարտարութիւն նց՟ յայսմ մասին . զի թէ նոր ինչ գործ անկառածոյ տեսանեն ուրեք, առանց տեսանելոյ գործեն զնմանն, և յարմարեն արուեստիւ։ Յամենայն կտաւսն որք գործին 'ի սմին քաղաքի՝ ընտրելագոյն և յաւէտ բազմավաճառ, են նրբանիւթ բեհեզքն, կամ Մալմալք պարզք. ծ Թիւլպէնտ. նաև ձողաւորք, և ասղնեգործք. այլև պէսպէս ճարտարագործ նրբանիւթ Տիմի ազնիւ յոյժ է զոր գործեն յայլ տեղիս։

'Ի ստորին կողմանս տագայի մերձ 'ի ծովն՝ ժլտակ ինչ գանգէսի՝ յանհամար առաջս բաժանեալ, բազում շրջապատոյտ ընթացիւք զեղանի 'ի ծով, ուր և 'ի տեղիս տեղիս տեսանին ծովակք և լիճք։ Պատմեն թէ, յառաջագոյն այն ամենայն տեղի՝ էր ծով և ոչ ցամաք. այլ գանգէս գետն յառատանալն իւրում զաւազ և զըղկաւ բերելով, և 'ի տեղիս տեղիս կուտելով իբրև ըղհողաբլուր, յայնմանէ այսչափ բազմութիւն ծովակաց և շրջապատոյտ ճանապարհք գործեցան անդէն, մինչև մոլորել բազմաց զի չէր անդ բնաւ բնակութիւն մարդկան.

Չիտտիկամ. որ կոչի և Իսլամապաթ։ Է քաղաք մեծ բազմամարդ և բազմավաճառ ոչինչ կարի հեռի 'ի մեծագոյն արևելեան բերանոյ գանգէս գետոյ 'ի կողմն սահմանաց տրագանայ, է որ մարթ է մինչև 'ի քաղաք անդր նաւարկել, զի ուղիղ ընթանայ անդ գետն։ Անդ որպէս և յայլ այսպիսի տեղիս, ուր գանգէս խառնի 'ի ծովն՝ կռապաշտ հնդիկք կատարեն զուխտս իւրեանց, զի մտեալ 'ի գետն լուանան, և 'ի կաւոյ գետոյն ձևացուցանեն պէսպէս խառնակերպ ուրուականս, զորս զկնի բազում այլանդակ և անհեթեթ պաշտամանց ընկենուն 'ի գետ անդր։ Յեւրոպացւոց զառաջինն փորդուգալք հասին յայս քաղաք, որպէս և յայլ բազում տեղիս հնդկաց. բայց յետոյ այլք յափշտակեցին 'ի նոցանէ։ Մեծ բերանն գանգէսի է որ 'ի ծովն զեղանի, է առ սովին քաղաքաւ, է որ մինչև 'ի քաղաքն մարթ է նաւարկել զի ուղիղ հոսի։

Պուրտվան, կամ Պուրտուան։ Մայրաքաղաք համանուն իւրում գաւառի, կառուցեալ ոչինչ հեռի բացագոյն 'ի հիւսիսային եզերաց Տամուտ գետոյն. 'ի հիւսիսակողմն բնակութեան եւրոպացւոց որ առ Ուկլի վտակաւ գանգէսի։

Մէդնիփուր, կամ Միդնիփուր. Է մայրաքաղաք մասնաւոր ինչ գաւառի. ընդ մէջ սահմանացն օրիսայ և պանկալայի, մերձ 'ի Գոսսայի գետն՝ որ գնայ խառնի 'ի գանգէս։

Փիշնաֆուռ · Փիշէնֆուռ, կմ̄ Պիշնաֆուռ ։ Մայրաքաղաք 'ի համանուն գաւառի իւրում · որ է ընդ մէջ պարդվանայ և մէտնիփուռայ · որոյ տարածութիւն է իբրև 60 մղոն ։ Իշխան նր̄ 'ի վաղ ժմկ̄աց հետէ՝ է մի ոմն 'ի պաշտմանաց կմ̄ 'ի քրմաց հնդկաց ։

Տինաճփուռ ։ Ի գլխաւոր ք̄ղք համանուն գ̄ւոյ, որ ձգի ը̄ մէջ Գանգէսի և Պրէմաբուտրէ գետոյն · կառուցեալ 'ի կղզի ինչ գործել̄ 'ի Ջէնոտոյ գետոյ՝ որ իջանէ 'ի դիպէդայ · և յերկու սուաջս ը̄ բզ̄մ մղոնս ընթացեալ, ապա միանայ 'ի քաղաքաւոր գիւղ · և այնպէս անկանի 'ի ծովակ ինչ մեծ երկայն առաւել ք̄ զվաթսուն մղոն · և լայն իբրև տասն ։ Այս ծովակ գործի 'ի ջրոց այսր գետոյ, Գանգէսի, և պրիմաբուտրոյ · և ապա իբրև 40 մղոնաւ հեռի 'ի տագայ ք̄ղքէն խառնի 'ի Գանգէս ։

Են այլ ևս ք̄ղք յոլովք 'ի նահանգին պանկալայի ո̄պ Բիրպհում · 'ի համանուն գ̄ւոյ սահմանակից օրիսայ 'ի լեռնային վայրս ։

Փատնէ ։ Գլխաւոր ք̄ղք համանուն գ̄ւոյն · 'ի մէջ Գոոսայ գետոյն և Տինաճփուռոյ ։

Մալդա, յարևելից նաւոր գետոյն · Ռունկփուռ · Ռանճամաթ · Սիլհէթ · որ է սահմանակից աշխամայ ։ Լաքջուռ · Գոալփառէ ։ Ք̄ղք̄ սահմանագլուխ և անցք որ 'ի պանկալայէ հանէ 'ի դիբբէրա նահանգն, առ փոքր Ֆէննի գետով ։

Յօդ Ը̄ · Փատանա, կմ̄ Պահար ։

Յարևելից՝ սահմանակից է դիպէդայ · յարևմտից՝ Ելլահապատայ, և պէնարէճ̄ նահանգին · 'ի հիւսիսոյ՝ աւուդ նահանգին · իսկ 'ի հարաւոյ՝ պանկալայի ։ Օդ և առատութիւն երկրին նման է պանկալայի ։ Գլխաւոր տեղիք նր̄ են հետագայքդ ։

Փատանա, կմ̄ Փատնա ։ Ի մայրաքաղաք սորին նահանգի, յորոյ անուն կոչի և նահանգն, առ Գանգէս գետով 'ի հարաւոյ հանդէպ բերանոյ Կանտաքի գետոյ, կառուցել̄ 'ի բարձրաւանդակ վայրի սակս ջրոց Գանգէսի, որ մերթ ը̄ մերթ զեղել̄ զափամբք ողողանէ զշրջակայ դաշտն առ հ̄սրկ ։ Ի սա մի 'ի մեծ բազմամարդ և 'ի բազմավաճառ քաղաքացն հնդկաց, թէպէտ շինուածք տանց նորա անշուքեն և աղքատիկ, այլ ունի բերդ մեծ աշտարակաւոր · զայս բերդ մարգար զօրապետն կորովի , 'ի ժմկս խայտըր ալի նաւապային , քաջութ՟ և հնարիւք եառ 'ի ձեռաց անդղիացւոց . որով ստացաւ անուն մեծ 'ի մէջ համօրէն զօրաց խայտըր ալիին : Ունի և բզ՟մ մեծաշէն և գեղեցիկ կռատունս . և այլ հոյակապ շինուածս : Ընդ մէջ քղ՟քին 'ի միոյ ծայրէ մինչև 'ի միւսն՝ է փողոց երկայն և ուղիղ , առ որով յերկուց կողմանց առհսրկ են կրպակք վաճառականաց և արհեստաւորաց , ուր լինի տուրևառութ՟ մեծ : Բայց 'ի նմնէ են այլևս բզ՟մ փողոցք աստի և անտի , յորոց ոմանք հանեն 'ի դաշտն , և այլք 'ի կողմն գանգէսի : 'Ի բարձրագոյն կողմն քաղաքին գոյ ընդարձակ հրապարակ , ուր լինին տօնավաճառք . անդ են և պալարանք նաւապաց տեղւոյն :

Ընկերութ՟ն վաճառականաց հոլանտացւոց ունէր 'ի նմ՟ վաճառատուն , կմ՟ գօդի . սակս վաճառականութ՟ բորակի . զի բզ՟մ բորակ ելանէ 'ի բադնա . որ և է մի 'ի գլխաւոր վաճառուց նր՟ : Ունի և ազգ իմն բորակի , զոր քիմիկանք 'ի գործ ածեն . որ և ազդողական է յոյժ , 'ի լուծանել 'ի մաքրել և 'ի փորձել զհրահալելիս , այլ և 'ի պնդացուցանել զնս՟ . բայց չէք ոք որ գիտիցէ զանել զայն , բայց միայն հոլանտացիք . որք ըստ ասելոյ նց՟ ուսան 'ի վէնէտկեցւոց ոմանց՝ որք փախուցեալ գնացին 'ի հոլանտա : 'Ի քղ՟քէ աստի ելանէ և Աֆիոն , բայց ստորին է ք՟ զայն՝ որ ելանէ 'ի փոքր ասիա , յասորիս , և 'ի պարսս . որոյ մեծագոյն մասն սփռեալ ծաւալի 'ի զանազան կողմանս հնդկաց , մինչ 'ի մալայա . ուր յաճախ 'ի գործ ածի : Այլ յաշխ՟ն չինաց ոչ մտանէ . վասն զի սաստիկ հրամանաւ արգելեալ է մուծանել անդր աֆիոն . և 'ի կիր արկանել 'ի ծուխ , կմ՟ յըմպելիս , և կմ՟ 'ի կերակուրս . որ թէպէտ առ փոքր մի զուարճացուցանէ , այլ մեծապէս վնասէ կենաց :

Տուրբէնկի , կմ՟ Տուրբանկա : Է քղ՟ք մեծ և բազմամարդ 'ի մէջ երկուց գետոց . և մայրաքաղաք Պէրհէտ գաւառին . որ է 'ի մէջ Կանդակ , Գոսսա և գանդէս գետոց :

Պահար : Է քաղաք 'ի կղզի ինչ գործեալ 'ի Փանչան անուն գետոյն . 'ի նախնումն 'ի ժմկս իւր քղ՟քս այս երևելի էր յոյժ և ծաղկեալ . մինչ թէ և մայրաքղ՟ք համօրէն նահանգին , յորմէ և կոչէր Պահար . բայց այժմ որպ՟ ասացաք 'ի վերոյ , քղ՟քն փադանա է գլխաւոր քաղաք նահանգիս , յանուն նորա կոչի փադանա :

Մուռնկէր, կամ Մունկէր ։ Է քաղաք և ամրոց առ գանգեսիւ 'ի հիւսիսոյ կողմանէ 'ի լեռնու ինչ հողոյ, որ առնէ զծոց ինչ 'ի գանգէս ․ և է սա գլխաւոր տեղի յիւրում համանուն գաւառի ։ Խասըմ ալի խանն՝ յայս քաղաք հաստատեաց զաթոռ իւր և զտեղի ապաւինի, 'ի ժամս պատերազմին անգղիացւոց ։

Են այլ ևս գաւառք և քաղաքք 'ի սմին նահանգի ․ որպէս Աճմէրփուր ․ որ է քաղաք գլխաւոր 'ի Մորունկ գաւառի, մերձ 'ի լերինս գիպեգայ ․ և մերձ յաղբիւրն տումրեա գետոյն ։ Պետտեահ ․ 'ի համանուն գաւառի ։ Հայլփուր ․ 'ի համանուն գաւառի մերձ 'ի փագանա ։ Սասսերամ ․ յիւրում համանուն գաւառի ․ առ ստորոտով լերանց՝ յորոց բղխէ տունսօտ գետ ։

Յօդ Գ ․ Օրիսսա ։

Օրիսսա նահանգ, զոր ոմանք կոչեն և Օրիքսա, 'ի հիւսիսոյ սահմանակից է պենկալէի նահանգին ․ 'ի հարաւոյ՝ ծոցոյն պանկալայի ․ յարևելից՝ պանկալայի ․ իսկ յարևմտից՝ հէյտարապատայ և պալակադայ ։ Մեծագոյն մասն սր՝ է ը տրուէ մարաթայից ․ անգղիացիք չունին անդ, բայց եթէ քանի ինչ տեղիս 'ի ծովեզրն ։ Քաղաքք՝ որք են 'ի խորին կողմն երկրին ․ և որք յաւէտ երևելի են, որչափ ինչ են մեզ ծանօթ, են սք ։

Կաթաք ։ Քղք մարաթայից առ մօվ 'ի հիւսիսոյ կողման վտակաց անուն գանգեսի ։

Եշճոփուր ․ և Բոնա ։ Են այլ երկու քաղաքք մարաթայից 'ի հարաւոյ գանգեսի ․ առ սահմանօքն պըգանայ ․ զորոց զծովեզրս՝ անգղիացիք որք են սահմանակիցք նց, մինչ ջանան վանել անտի ։

Ճէնկրունատ ․ զոր եւրոպացիք գրեն Եաքոնատ, կամ Ճէաքոնատ ։ Է հռչակաւոր կռատուն 'ի ծովեզրն ․ մերձ 'ի կանկեամ ․ 'ի հիւսիսակողմն որ այժմ է ընդ տրուէ մարաթայից ․

Բալասօր, կամ Բալէսօր ։ Է մայրաքաղաք 'ի համանուն գաւառի իւրում, ընդարձակ յոյժ ․ մերձ յարևմտեան բերան գանգեսի՝ ը որ զեղու 'ի ծով ։ Աստ բառնան նաւք գաղղիացւոց և անգղիացւոց 'ի պէտս մալտիվեան կղզեաց՝ որիզ կտաւ և կերպաս ։

Կանճամ ։ Քաղաք երևելի 'ի հարաւոյ քաթաք քաղաքին ; յորում անգղիացիք 'ի բզմ ժմկաց հետէ ևնոս

Ջ զատուցին զպանիկալա, և զլրջակայ երկիրս, ունէին վաճառատեղի մի տուրքատուն:

Են այլ ևս քղքք՝ զորոց զանուանսն ևեթ գիտեմք. զորս աւելորդ է յառաջիկայս յիշատակել:

Պրակ Գ. Հարաւային մասն Մողոլաց:

Զայս հարաւային մասն Աշխարհագիրք կոչեն Ցամաքակղզի որ յայսկոյս Գանգէսի, յորոշումն 'ի միւս ցամաքակղզւոյն՝ որ է արտաքոյ Աշխարհին Մողոլաց, յայնկոյս Գանգէսի՝ յորում գոն զանազան Թգ̃րութիւնք և տ̃րութիւնք: Մողոլք՝ զայս Աշխարհ կոչէին երբեմն Տոքան կամ Տըքան. որ է անուն մասնաւոր սուպայութեան կամ նահանգի՝ այսր ցամաքակղզւոյ. որոյ նապապն է միանգամայն փոխարքայ հարաւային կողմանն: Սահմանք այսր սուպայութեան ըստ ժամս ժամս պէսպէս փոփոխեցան. երբեմն պարունակէր զՎիզապուր, Ըն- հէյտարապատ են. և երբեմն զայլ մեծագոյն նահանգս ցամաքակղզւոյն: Այլ բազմաքանչիւր աշխարհագիրք զնորին սահմանս դնեն այսր սուպայութեան: Պիշինկ է անուամբ Տըքանայ աշխու զամ՛ինչինգան՝ որ 'ի Գուճրատայ ծովէն մինչև ցԳաւռնադիկ. և ըստ այսմ առնէ, դնէ նմ սահմանակից 'ի հիւսիսոյ զԳուճրաթ և զՔանտիշ. յարևելից՝ զՕրիսա. իսկ 'ի հարաւոյ՝ զԳաւռնադիկ: Ուստի է սուպայութեն այսր մասնաւոր Տըքանայ դնէ զծովեզերեայս Գոնգան կոչեցեալ, զՊակլանա, զՊալակատ, և զՎիզապուր: Իսկ այլք յԱշխարհագրաց պայլ տարածութիւն և զայլ սահմանս դնեն սմա. յորս և Լինզոտ ոմն անգղիացի երևելի Աշխարհագիր՝ զՏէրութիւնս կամ զսուպայութիւնս զայս յերիս գաւառս բաժանէ. որք են Տըքան. և բաց 'ի Տըքանայ, Պալակատ, և Քունկվամ. տալով նմ տարածութիւն կարի նուազ, քան զոր դնէ Պիշինկ, և ըստ այսմ յարևելից ունի իւր սահմանակից զՏէրութիւն Նաւաբինկայ. յարևմտից՝ զծովն. իսկ 'ի հարաւոյ՝ զՏէրութիւն Քանարայ. յորմէ անջատի 'ի ձեռն Աւէկագետոյն: Իսկ այժմեան Աշխարհագիրք անջատեն զՏըքան կամ զԴաքան 'ի Քունկվամ գաւառէ, և զԴաքան առնուն առանձինն:

Այլ նաև երբեմն՝ զի սահման այսր սուպայութեան ձգեր 'ի կոմորինեան սարէ մինչև ցվերին կողմանս ցամաքակղզւոյն. վասն այսր պատճառի թուի թէ հնդիկք զհամօրէն ցամաքակղզին՝ անուանեցին երբեմն տաքան կամ տըքան. թէպէտ չէ մեզ յայտնի՝ թէ զորչափ սահմանս ցամաքակղզւոյն որոշակի յայս անուն կոչեն ։ Այլ՝ 'ի յիշատակել մեր յայսմ Աշխարհագրութեան մերում զմասնաւոր սուպայութիւն տաքանայ, կոչեմք Աւրանչէն կամ Մասնաւոր տաքան. զորմէ չունիմք խօսիլ մասնաւոր յօդուածով, սակս անորոշ գոլոյ սահմանաց նորա. այլ զգլխիկ տեղիս նորա ունիս տեսանել յԱշխարհացոյցն մեր ։ Իսկ յանուանն փոխանակ Ճարձակագոյն Երուն նապալին, կամ փոխանակ համօրէն ցամաքակղզւոյն, կոչեմք Տաքան, կամ Տըքան աշխարհ ։ Այս ցամաքակղզի, կամ տաքան Դ՝ յարևելից սահմանակից է ծովուն պանկալայի. յարևմտից՝ ծովուն արաբիոյ 'ի հիւսիսոյ՝ նշնգացն զորս 'ի վեր անդր ստորագրեցաք. իսկ 'ի հարաւոյ՝ ծովուն հնդկաց ։ Յայսմ մասին Դի եղեն երբեմն 33 ռաճայութիւնք կամ թագաւորութիւնք. իւրաքանչիւրքն ինքնագլուխ տեարք զանազան կողմանց՝ ազգաւ հնդիկք, և միայն հարկատուք նապապաց, յորոց բազումք կան մինչև ցայժմ ։ 'Ի բնակիչս այսր ցամաքակղզւոյ՝ նշանաւոր են մարաթայք, զորոց պատմեցաք 'ի վեր անդր. 'ի պրակ ե. յօդ. ժդ ։ Են անդ և այլ ազգ մի իջեալ յարաբացւոց, որք յափրիկոյ և 'ի կողմանցն պարսից մտին 'ի հնդկաստան. ոչ 'ի տիրել նոցա, այլ 'ի վաճառականութեան սակս. որք և անդէն հաստատեցին զբնակութիւն իւրեանց. և առ սակաւ սակաւ այնպէս որսացան զմիտս ոչ միայն իշխանաց, այլև ժողովրդեան, մինչև յետ սուղ ժամկի ելանել նոցա 'ի մեծամեծ իշխանութիւնս յերկիրին յայնմիկ. և զբազում նշանգս մողոլաց ընդ իշխանութեամբ գրաւել ։ Ապա սկսան սոքա տարածել անդէն զդենն մահմետի. գնէին գերիս. և յետ թլփատելոյ զնոսա, և ուսուցանելոյ նոցա զօրէնս իւրեանց, ազատէին զնոսա ։ Այլ քանզի անարգանք համարէին անձանց 'ի ձեռն ամուսնութեան խառնակիլ ընդ գերեաց իւրեանց, յայն սակս սոքա զկնի ժամկաց կացուցին մասնաւոր ազգ մի և ժողովուրդ 'ի ծովեզերեայ կողմն մինչև ցմատրաս. որք 'ի մալապար կոչին Մափոլգէք, և 'ի գորոմանտել՝ Քալլիաք ։ Ոչ գտանեն սոքա ոչ զլեզուն պարսից, ոչ զարաբացւոցն, և ոչ զափրիկեցւոց. այլ խօսին 'ի լեզու երկրին՝ յորում բնակեն ։

Զայս տաքան Դ, կամ զհամօրէն ցամաքակղզին ու‐

Նիւկք բաժանել 'ի ԺԱ նահանգս, ըստ առաջնեկաց օրինակի:

Ա. Գուձրատ.
Բ. Պակլանա.
Գ. Պալակատ.
Դ. Վիճափուր.
Ե. Հէյտերապատ.
Զ. Գոնդվան.
Է. Գանարա.
Ը. Կառնադէկ.
Թ. Մալապար.
Ժ. Մայսուր.
ԺԱ. Գորոմանտէլ:

Յօդ Ա. Գուձրատ.

Գուձրատ յառաջին ժամս էր մասնաւոր տէրութիւն հնդկաց 'ի տըքան աշխարհին, կամ 'ի ցամաքակղզին որ յայսկոյս գանգէսի. և ձգեալ տարածէր ընդարձակ եւս, քան զոր այժմ. պարունակելով զտէրութիւն Ջամպանահաթայ, կամ կամպայեթայ, և զոլըքան առանձնակի: Այլ յամին երբ 1545 սուլդան մահմէտ թգր գուձրատայ՝ երբ մերձ էր 'ի մեռանել, յանձն արար զմանուկ զորդին իւր և զիշխանութիւն հաւատարմութ համօրէն տրուն իւրոյ՝ միում յիշխանաց անտի իւրոց, որոյ փառամոլութիւն անհնարին խռովութիւնս յարոյց 'ի մէջ մեծամեծաց նահանգին: Սա առ 'ի կալ մնալ յիւրում իշխանութեան, կոչեաց յիւր օգնութիւն զակպար արքայն մողոլաց, խոստանալով նմ՛ 'ի հատուցումն՝ զքղքս մի հնգ շրջակայ ջուռաւ իւրով: Իսկ ակպար եհաս նմ՛ յօգնութի. այլ փոխանակ միոյ քաղաքի՝ էառ զհամօրէն տրութն գուձրատայ. 'ի կալանս եդեալ զնա ինքն զկուսակալն և զորդի արքային:

Այս նահանգ գեղեցիկ է և զուարճալի, փարթամ և արգաւանդ: Գլխաւոր գետք նր են. Նարպադա. և Դաբդի: Դաշտք նր միշտ դալարազարդեալ են ընդ ամն ողջոյն. բերէ ցորեան, և որիզ առատ յոյժ. ոռ և պտուղս ազնիւս. բաց 'ի բնաւոր արգասեացն մեծագին արուեստակերտք որք գործին անդ՝ առաւելուն զհամբաւ նր. որպէս ոսկեթել և արծաթաթել պատուական դիպակք. և մետաքսեայ կերպասք, և այլպէս ակնանակուռ գործուածք. զի ամ՛ ազգ ակնանց գտանի անդէն: Լինին անդ և եզինք անգիւտք յաղթանդամք ամբոխակք և գեղեցիկք. որոց զօրութիւն և ոյժ գոլով սաստիկ, մեծամեծ իշխանքն, մինչ 'ի մայրաքաղաքն նր գուձրատ, զեզինս

կառս

փխ՟նկ երիվարաց լծեն 'ի կառս. որք և առաւել արագ ձգեն ք՟ զերիվարս. զորոց զնմանն չէք տեսանել յայլ տ՟ս մոգոլաց։ Ծովեզերեայ կողմն գուճրադայ ձևացուցանէ ցամաքակղզի ինչ ը՟ որձակ 'ի ձև եռանկիւնի. որոյ յարևելեան կողմն է ծոյն քամպահաթայ, կմ՟ քամպայեայ. իսկ յարևմտեան կողմն՝ ծոյն գուճրադայ։ Գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ։

Գուճրատ, կմ՟ Ահմէտապատ. և ը՟ հնդկաց Ահմատապատ։ Է մայրաքաղաք նահանգին՝ մեծ, բազմամարդկոյտ, և բազմավաճառ, յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի, մերձ առ գետն Սաղըրմէգ։ Ունի շուրջանակի գեղեցիկ և հզօր պարիսպս. և առ նոքօք աշտարակս ստուարս։ Երկայնութ՟ նր՟ հ՟դձ արուարձանեօք՝ է առաւել ք՟ 3 մղոն. ունի 12 դրունս։ Այս է մեծագոյն ամրոց 'ի համօրէն նահանգին ամրացուցեալ ք՟ զայլս, առ ունի ասպատակութ՟ց հզօր ռաճային կմ՟ իշխանին պատուրայ քղքի՝ որ 'ի քանտիշ նահանգ։ Ամ՟ փողոցք լայն են և գեղեցիկ. ունի և հրապարակ մի մեծ անուանեալ Շահ մէյտան՝ լայն 400 քայլ. և երկայն 900։ Ունի և բերդ ամուր պատեալ քարաշէն պարսպօք՝ իբրև փոքրիկ քղք. առ դրամբ նր՟ են երկու բոլորաձև քարաշէն աշտարակք։ Բնակիչք նր՟ կէս մի մահմետական են, և կէս մի կռապաշտ հնդիկք. որք ունին անդէն կռատունս, այլև երկու անկելանոցս. մի վս՟ թռչնոց, և միւս ևս վս՟ չորքոտանի անասնոց. յորս դարմանեն զախտացեալ անասունս. և որոց գոյ հնար բժշկութե՝ բժշկեն. իսկ որք անբուժելի են, պահեն զն՟ս անդէն մինչև ցսատակիլ։

'Ի սմին քղքի գտանին և յազգէս հայոց սակաւք. իսկ յեւրոպացւոց՝ հոլանտացիք յոլովք, որք 'ի լաւագոյն կողմն քղքին բնակին, այլ և անգղիացիք մեծամեծ վաճառականք։ Գլխաւոր վաճառք նր՟ են ազգի ազգի ոսկեթել և արծաթաթել դիպակք. և այլապէս մետաքսեայ կերպասք. Ատլազ. Խատափէ. Տաֆթէս. և ոսկեթել Զաթմայ՝ մետաքսեայ և առէնղէն։ Այլ և բամբակի պաստառք որք գան 'ի տըլլի նահանգէն, և 'ի լահոռայ. որպէս և Չիթ ազնիւ. նաև բնական բերք. ք՟ր շաքար, կոճապղպեղ. այն է Զէնճէֆիլ. կարմիր և կապուտակ ներկանիւթ այն է Լաճիվէրտի առատ և գեղեցիկ. ափիոն. մեղր. հալիլէ. Թամբրընտի. և բորակ։ Զայս քղք նորոգեաց ահմէտ արքայն. յայն սակս յանուն նր՟ կոչեցաւ Ահմատապատ. Թէպէտ սովորաբար 'ի խօսս Ամատապատ ասի. զի Հնդիկք ոչ կարեն հնչել զտառս Հ. կոչի ևս գուճրատ յառաջին անուն իւր: Ոմանք համարին զսա լինել նոյն ը՟ Ահմոփաշաստիս ք՟ղքին՝ զոր յիշէ արրիանոս, սակս մերձաւորութե՟ հնչմանն. այլ կարծիք առաջնոյ հաստատագոյն է:

Սուրատ. զոր ոմանք համարին լինել Մուզիրիս քաղաքն՝ յիշատակե՟լ 'ի պտղոմէայ: Է ք՟ղք ամենահարուստ, բազմավաճառ, և հռչակաւոր յոյժ 'ի համօրէն հնդիկս առ Դուբի կ՟մ Դիփնդի գետով. իբրև 10. կ՟մ 12 մղոնաւ հեռի 'ի ծովէն. մեծ և ընդարձակ. շուրջանակի ամրացուցե՟լ պարսպօք և աշտարակօք. որոց արտաքոյ են արուարձանք նր՟. ունի և ամրոց կառուցե՟լ 'ի հարաւոյ արևմտից ք՟ղքին. զորով 'ի միոյ կողմանէ պատէ գետն, և 'ի միւս կողմանէ խրամ լայն և խոր, և է քառակուսի. ունելով 'ի չորեսին կողմանս մի մի աշտարակս. և պարիսպք նր՟ վառե՟լ բազմապատիկ հրազինուք: Իսկ ձև ք՟ղքին է կիսաշրջանակ. ունի դրունս 7. յարում թէպէտ գտանին բզ՟մ գեղեցիկ շինուածք հրապարակականք և մասնաւորք, բայց չեն համեմատ փարթամութե՟ բնակչաց. տունք նր՟ ը՟ առաւել մասին՝ են կրկնայարկք: Իսկ բնակարանք հ՟րկ ժողովրդեան՝ ո՟ս յայլ ա՟մ ք՟ղքս հնդկաց՝ են աղքատաշէն խրճիթք. եղեգամբք և տերևովք արմաւենեաց ծածկեալք: Փողոցք նր՟ իբր 'ի բզ՟մս նեղ են. հրապարակք նպարավաճառաց սակաւ և հեռի 'ի միմեանց. յայն սակս ք՟ղքացիք յանձն առնեն թելլալաց գնել զպիտոյս: Մեծ հրապարակ նր՟ անուանեալ Հրապարակ բերդին, գեղեցիկ է. որ և է բուն վաճառատեղի ք՟ղքին: Բերդն է ը՟ իշ՟ութե՟ անգղիացւոց. զոր խորամանկ հնարագիտութե՟ իւր՟ կալան. իսկ կառավարութի՟ ք՟ղքին փոքր մի յա՟ռջ էր 'ի ձեռս Նապապին, ը՟ մահմետական ք՟ղքապետին. թէպէտ և յայնժամ ոչ կարէր առնել ինչ առանց հարցանելոյ անգղիացւոց. իսկ այժմ կառավարութի՟ և մաքս ք՟ղքին բովանդակ 'ի ձեռս նց՟ են:

Թիւ բնակչաց ք՟ղքիս մերձենայ յերկու միլիոն. որոց մեծ մասն են Հնդիկք կռապաշտք. գտանին անդէն և բազմութի՟ մահմետականաց, և ա՟մ ազգաց եւրոպացւոց սակս վաճառականութե՟: Եւ բազմութի՟ յազգէս հայոց, ուր յառաջագոյն ունէին եկեղեցի մեծաշէն և գեղեցիկ. այլ ուխտաւորք տաճկաց որք

Նախ քան զգալուստ անգղիացւոց, ամի ամի 'ի դառնալ 'ի քեապէհ, երթային անդր 'ի բառնալ զվաճառս երկրին, և տանել յՏ̃ իւրեանց, յոլովորեալ զք̃ղքապետն՝ որ էր մահմետական, քանդել ետուն զայն. վ̃զ այժմ յաւանձին տան կատարեն զպաշտամունս: Այլ արտաքոյ քաղաքին են կալուածք ը̃արձակք նորին եկեղեցւոյ. յորում է և գերեզմանատուն հայոց, և մատուռն կամարայարկ որ մինչև ցայժմ է ը̃ իշխանութ̃ ն̃ց. Գոյ 'ի սուրատ և անկելանոց մի վ̃ն անասնոց, ո̃պ և 'ի գուճրատ-ք̃ղի և 'ի սահմանս յայսոսիկ, ո̃պ և ուրեք ուրեք յայլ կողմանս Տ̃են մողոլաց, գոյ ցեղ ինչ խառակրօն, որք 'ի դոյն դեղին ներկեն զճակատս: Սք̃ 'ի մեղս համարին սպանանել կ̃մ անխնամ թողուլ զանասունս. կարծելով թէ բ̃զմք 'ի ն̃ցնէ են մարդիկ մեղաւորք, որք 'ի քաւութ̃ մեղաց իւրեանց, մտին յայն տեսակս կենդանեաց. վ̃զ և ոչ իսկ զնեղացուցիչ կենդանիս սպանանեն. ո̃պ զճանճ, զլուեն: Այլ թէ 'ի մահճի գայցէ լու բ̃զմ, կ̃մ մլուկն, այն է փառօջիւ, տան վարձս աղքատաց ընկողմանիլ 'ի մահիճս իւրեանց, ո̃պ զի ժողովեսցին 'ի վ̃ր ն̃ց. և ապա ինքեանք մտանեն:

'Ի գտանել 'ի գետնի զմրջիւն, 'ի վեր առնուն, և մաքրեն փչելով զփոշին, և դնեն յորմն՝ զի մի այլ ոք կոխեսցէ 'ի վ̃ր նորա: Նաև թէ տեսանեն զոք յայլոց ազգաց որ սպանանել կամիցի զկենդանի ինչ կ̃մ զզեռուն, տան վարձս ազատել զնա, թէպէտ զայս սովորութ̃ 'ի ք̃ղքս ինչ, ուր գտանին բազմութիւնք օտարական ազգաց, բարձին յետոյ սակս անհնարինս յաճախելոյ: Քանզի բ̃զմք յաղքատացն առ 'ի շահել դրամս 'ի կապարիշտ հնդկաց, ստէպ ստէպ տանէին առաջի ն̃ց զեռունս սպանանել կամելով, առ 'ի առնուլ վարձս ինչ 'ի նոցանէ:

Գտանին 'ի սուրատ և կեավրաւ անուանեալ պարսիկք կրակապաշտք, որք հատուածեալ 'ի բազմաց հետէ՝ յեզդ և 'ի քիրման Տ̃է պարսից եկին և աստ հաստատեցին զբնակութիւն իւրեանց. ուր այժմ գտանի իբր 60000 տուն: Ունին և̃ս անդ ատրուշան մի մեծ. յորում անը̃հատ վառի հուրն զոր ը̃ ինքեանս ածին յՏ̃է իւրեանց. զորմէ ասեն թէ 'ի սկզբանէ անտի մինչև ցայժմ է նոյն հուր: Սոքա սիրեն յոյժ զշունս. և կերակուր բաշխեն ն̃ց. ուստի լի են 'ի ք̃ղքն սուրատ շունք, որք չեն այնչափ ինչ թաւամորթք: 'Ի սատակել շանց զկորիւնս ն̃ց տանելն մօտ յլռնգունս, ուստի զի չունին որդւոց նց վտախեցի 'ի կորիւնս: Եւ թողուն զոք յայլազգեաց վառել 'ի ճրագացն՝ զոր ինքեանք վառեցին. քզի գիտեն թէ նք ոչ խղճեն չիջուցանել. իսկ ինքեանք 'ի լուցանելն միանգամ զճրագ ինչ, թողուն վառել մինչև 'ի սպառումն:

Դիրք քաղաքիս՝ քաջադէպ է 'ի տանիլ անդր զվաճառս արտաքինս, որք գան ոչ միայն յեւրոպիոյ, այլ և 'ի սինէկացւոց, յարաբիոյ, 'ի պարսից, և 'ի հեռաւոր կողմանց մողոլաց: Անդ վաճառին ազգի ազգի մետաքսեայ կերպասք, մարգարիտ բերեալ 'ի պարսկային ծոցոյ, և պէսպէս ակունք պատուականք: Գլխաւոր մասն վաճառաց նր բարձեալ բերին անդ 'ի կողմանէ ցամաքին կարաւանաւ, 'ի յաքպարապատայ, 'ի տէլլի Նաչամպէն, 'ի գուճրաթայ, կմ յամատապատայ, և յայլ երևելի քղքաց: Իսկ վաճառականք որք գնեն, են բզմ ազգք՝ հայք, արաբացիք, պարսիկք, և եւրոպացիք: Նւհնգիստ սուրաթայ իբրև 9 մղոնաւ հեռի է 'ի քղքէն, մերձ 'ի գեօղն Սուալէի, ուր նաւք թափեն զբեռինս իւրեանց, և անտի 'ի ժմկս անձրևոյ յառատանալ գետոյն՝ փոխադրեն 'ի քղքն. քզի յայլ ժմկս գետն գոլով փոքրիկ, նուազի յոյժ: Մուտ նւհնգստին չէ այնչափ ինչ լայն, և ոչ անքոյթ վտ մեծամեծ նաւուց. զի խորութիւն ջուրց նր է իբրև 7 գրկաչափ և եթ 'ի ժմկի մակընթացութեան ծովուն. իսկ 'ի ժմկի տեղատուութեան 5 և եթ: Լայնութիւն նւհնգստին համդէպ գետոյն՝ չէ ինչ առաւել քան 500 քայլ. և են 'ի նմ ծայրք յոլովք. ուստի և վտանգաւոր է յոյժ 'ի ժմկս ալէկոծութեան. քզի և ոչ իսկ շրջապատեալ է ըստ օրինակի այլոց նւհնգստից, այլ միայն առ նուազութեն ջուրցն՝ համարեալ է իբր նւհնգիստ:

Շրջակայ գւռ քղքիս՝ զուարճալի է յոյժ, ըստ ամենայն ողջոյն դալարացեալ կանաչազգեաց. յորում աստ անդ սփռեալ կան բնակութիւնք մարդկան, այլ տօթն սաստիկ է. ուստի յելս փետրվարի գտանին անդէն մեղրապտուղ. խաղող. կաղամբ. և բաթլըճան: Իսկ հունձք ցորենոյ լինին յելս յունվարի և 'ի սկիզբն փետրվարի:

Քամպայաթ, կմ Քամպայէթ: Է քղք մեծ կրկին քան զսուրաթ. այլ բնակիչք նր նուազ են յոյժ քան զսուրաթի: Շուրջանակի ունի պարիսպ պատուարեան իբրև չորս հողաչափ բարձրութ, ամրացուցեալ աշտարակօք. փողոցք նր գեղեցիկ են. և շինուածք տանցն յաղիւսոյ թրծելոյ յարեւու ։ Մեծագոյն մասն բնակչաց են կռապաշտք ։ Ունի և դպրեակ մեծ , այլ անշուք և անզօր ․ անդ է բնակութիւն քրմապետին ։ Շրջակայ վայրք քղքիս , գեղեցիկ են և լի պարտիզօք ։ Է անդէն գամբարան մի կայ բուրգն մարմարիոնեայ , զոր եա կանգնել Թագաւոր ոմն Գուճրաթայ 'ի պատիւ միում 'ի սպարապետաց իւրոց` զոր մեծապէս սիրէր , այլ լքեալ կայ անխնամ ։ Են անդ և երեք սրահաձև շինուածք ․ յորոց 'ի միումն կան մինչև ցայժմ բիւր սօմանի սիւնք ։ 'Ի նախնումն գոյր անդ և անկելանոց չորքոտանեաց և թռչնոց , բայց այժմ աւերակ է ։

Այս քաղաք յառաջին ժամս ձգէր մինչև 'ի ծոցն , այլ այժմ իբրև մղոնաւ և կէսով հեռի է 'ի նմանէ ․ վն մեծապէս նուազեցաւ վաճառականութիւն նր ․ զի թէպէտ ծոցն և այժմ չէ այնչափ ինչ հեռի 'ի նմէ ․ սակայն յատակ նր գոլով բարձրացեալ , նաւք բեռնաւորեալք բռնադատին կալ 12 մղոնաւ հեռի 'ի ցամաքէն խարիսխ արկանել ։ Եւ տեղատուութիւնք և մակընթացութիւնք ծովուն` այնչափ սաստիկ են անդէն , մինչև հաւասարել արագահոս ջուրց գետոյ , յայն սակս հազիւ երբեք պատահեն անդ նաւք ․ և այն` յամսեանն սեպտեմբերի եւեթ ․ վն զի 'ի ծովեզերեայ կողմանն յայնոսիկ , որք հային յարաբիա , մանաւանդ 'ի ծոցն քամպայհաթայ կմ քամպայեայ` մինչև 'ի սկիզբն սեպտեմբերի` գրեթէ միշտ խռովեալ է ծովն 'ի պատճառս արևմտեան հողմոյն , որ սաստիկ շնչէ անդադար ։ Ծոցն քամպայեայ` զոր ոմանք համարին լինել Պարիգազէնեան ծոցն յիշատակեալ 'ի Պտղոմեայ , է իբրև 168 մղոն ը երկայնութ ։

Տիու ։ Է ծովեզերեայ քաղաք 'ի հարաւային ծայր ցամաքակղզւոյն Գուճրաթայ ։ Փորդուգալք ը որոց իշխանութ է քղքս` կոչեն զնա Տիւ , որ թարգմանի կղզի , վն զի է 'ի կղզի ինչ իւր համանուն ․ անջատեալ 'ի ցամաքէն 'ի ձեռն փոքուկ նեղուցի , յորոյ վր արկեալ կայ կամուրջ , ը որ լինի անցանել 'ի կղզւոյ անտի 'ի ցամաքն ։ Իսկ քղքն գեղեցիկ է յոյժ ․ լի բազմապատիկ կրպակօք այնպէս վաճառաց ․ և պատեալ հզօր պարսպօք ․ որք գնան աւարտին 'ի նաւահանգիստ անդր , ուր գոյ ամրոցիկ ինչ 20 քայլ երկայնութե` ը որ հանեն զբերդինս 'ի նաւուց ․ և բեռնաւորեն զնաւս ։ Են անդէն և երկու բուրգք` յորոց 'ի մին քանդակեալ կայ կնիք արքային Փորդուգալայ ․ իսկ 'ի միւսն երեք նետք ։

Համ-

Հանդէպ նաւահանգստին է մաքսատունն՝ յորում երկու գրոշք կախեալ կան. և 'ի մուտս նորա խաչ կանգնեալ. և 'ի վ͞ր նաւահանգստին ամրոց հզօր. որ գրեթէ անմատոյց է, վ͞ս զի ը͞ռ միայն պատէ զնովաւ ջուրն ծովու. որ չունելով բաւական խորութ͞ի, չէր հնար նաւուց մերձենալ յամրոց անդր. իսկ 'ի ցամաքին կողմանէ քաջ ևս ամրացուցեալ է յարուեստէ, և 'ի բնութ͞է. զի է 'ի վ͞ր ժայռի, առ որով քերէ գետ մի մեծ, և յեզր գետոյն կանգնեալ կայ աշտարակ հզօր. և 'ի միջոցին 'ի գետափն անդ՝ որ է ընդ մէջ աշտարակին և ամրոցին՝ են այլ ևս երեք փոքրիկ մարտկոցք: Աւ 'ի շինութ͞ն այս ա͞մ ամրոցաց, անբաւ ծախս արարին փորդուգալք հանդերձ ծանր աշխատութ͞բ:

Զայս ամրոց Պատուլ սուլդանն քամպահաթայ՝ Թոյլ ետ շինել նունոսի ակունիացւոյ գերահռչակ սպարապետին փորդուգալաց. այլ յամին 1538 սուլդանն քամպահաթայ մահմուտ անուն, ընկալեալ յիւր օգնութ͞ն 'ի սիւլէյման Թ͞գրէն տաճկաց 74 նաւս, զինու և զօրօք վառեալս, պաշարեաց զՏիու առ 'ի վանել անտի զփորդուգալս. բայց անպարտելի քաջութ͞ն փորդուգալաց 'ի նեղն արկեալ զԹշնամին, կատարեալ յաղթանակ կանգնեաց 'ի վ͞ր ն͞ց: Ապա անտի և այսր խաղաղ և անվրդով ժառանգեցին փորդուգալք զայս ք͞ղք հ͞ձ շրջակայ սահմանօք իւրովք. որ Թէպէտ ոչ ևս համարի իբրև բանալի ա͞մ կալուածոց ն͞ց որ 'ի հնդիկս՝ ո͞պ էր յառաջն, սակայն է մի 'ի նշանաւոր տեղեաց անտի՝ զոր փորդուգալք ունին յ͞ծին հնդկաց:

Բասան: Է ք͞ղք յարևմտեան եզերս ցամաքակղզւոյն գուճրաթայ. 'ի նախնումն էր ք͞ղք մեծ և բազմավաճառ. այլ այժմ մեծապէս անկեալ է 'ի նախնի շքոյ անտի իւրմէ: Ունի ամրոց և հոյակապ տաճար բ͞զմ մարմարիոնեայ սեամբք զարդարեալ. ուր յառաջն պաշտէին կուռս. այլ այժմ փոխեալ է 'ի մզկիթ:

Գէրդէսա. և Պարիսար: Են ք͞ղք 'ի միջագետ վայրս 'ի հիւսիսոյ ամատապատայ:

Են այլ ևս ք͞ղքք բ͞զմք, զորոց չունիմք ինչ տեղեկութ͞ի. ո͞պ Սոլէնտրա. Կօլա. Նարիատ. Մահմուտապատ. ևն:

Յօդ Ը. Պակլանա ։

Պակլանա նհնգ յարեւմտից՝ սահմանակից է գօնդւանայ. յարեւելից՝ պալակադայ. 'ի հիւսիսոյ՝ քանտէշայ. իսկ 'ի հարաւոյ՝ վիզափուռայ ։ Գետք նշ են Վըրտուուար. Մուլէր. և Պէնհօրա ։ Իսկ գլխաւոր տեղիք որչափ ինչ են ծանօթ, են հետագայքդ ։

Մուլէր ։ Քաղաք առ համանուն իւր գետով, կառուցեալ 'ի մէջ լերանց, ուստի և չէ այնչափ ինչ բարգաւաճ 'ի նմ վաճառականութիւն ։

Բօնէ. և Բիմպըլնար ։ Են քղք երևելիք 'ի սմին նահանգի ։

Յօդ Թ. Պալակադ, կմ Տէօվլէդապատ ։

Սա 'ի նախնումն էր մասնաւոր թրութն կմ առձայրութն, ապա եղև ձւռ վիզափուռայ. յետոյ ձւռ մուղալաց պարունակէր 'ի սուպայութե տէօվլէդապատայ, կմ մասնաւոր տըքանայ. ուստի ոմանք յաշխարհագրաց կոչեն զսա Տէօվլէդապատ, կմ Տօվլէդապատ ։ Եւ է շատաջուր առուակէն 'ի Կանկայ գետոյն, զոր չէ պարտ շփոթել ընդ կնկայ գետոյն՝ որ է գանգէս. որ ելանէ 'ի դիմպեգայ ։ Երկիր նր արգաւանդ է և բարեբեր. և բնակիչքն փարթամ յոյժ. 'ի հիւսիսոյ սահմանակից է գանտէշայ և մալվայի. յարեւմտից՝ պակլանայ. 'ի հարաւոյ՝ մասնաւոր տըքանայ. իսկ յարեւելից՝ օրիսսայ և պերարայ ։ Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ ։

Տէօվլէդապատ, կմ Տօվլադապատ ։ Է քղք որ 'ի նախնումն էր մայրաքղք համօրէն նհնգին առ Բօւրնա գետով. և յանուն սորա կոչէր նհնգն ամ սուպայս ։ Աւաղ այժմ անկեալ է յոյժ յառաջին վայելչութէ իւրմէ ։

Օվրանկապատ ։ Մայրաքղք համօրէն նհնգին, բազմամարդ և ամենահարուստ առ նախայիշատակեն գետով. շինեն յօվրանկզիպ ինքնակալէն. յորմէ կոչեցաւ Օվրանկապատ. ընդ Քղք Օվրանկայ ։

Ահմէտնակար ։ Քաղաք անուանի 'ի հիւսիսոյ կողմանէ հօչկա հռչակաւոր լերանց պալակադայ, վաճառականութիւն նր̃ աղքատ է յոյժ, վս̃ հեռաւորութեան նր̃ 'ի գետոյ։

ԲԻԷԷԼՆ։ Քաղաք մեծ 'ի վերջին սահմանս պալակադայ. և մերձ 'ի սահմանս Մալվայի։

Յօդ. Դ̃. Վիզափուռ.

Վիզափուռ 'ի նախնումն էր մասնաւոր տէրութիւն բարգաւաճ յոյժ և ծաղկեալ. այլ յինքնակալացն մողոլաց փոխեցաւ 'ի նահանգ կմ̃ 'ի սուպայութիւն։ Սահմանակից սորին նահանգք յարեւելից՝ է սուպայութիւն հէյտարապատայ. յարեւմտից՝ ծովն հնդկաց և կալուածք եւրոպացւոց. 'ի հիւսիսոյ՝ պալակադ. իսկ 'ի հարաւոյ՝ գառնադիկ։ Անուանի է 'ի սմին նահանգի հանքն՝ ուստի հանեն անդամանդ ակն պատուական այն է՝ էլմաս սպիտակ յոյժ՝ մաքուր և ընտիր, որ է 'ի ռաօլգօնտա մերձ 'ի հարաւային բաղուկն Քրիշնայ գետոյն։ Գլխաւոր տեղիք սորին նահանգի են այ̃։

Վիզափուռ։ Մայրաքաղաք նահանգին առ մանխոշա գետով, մեծ և պատուական. անդ նստի սուպայն 'ի հոյակապ ապարանս. բզ̃մ մեծատուն վաճառականք գտանին 'ի նմ̃. որոց համբարանոցք վաճառացն՝ են յարմարաձանս, որք են շուրջ զ̃քղքաւ։

Ռաօլքօնդա։ Տեղի անուանի վս̃ հանքաց անդամանդ ականց, զոր վերագոյնդ յիշատակեցաք։ Վաճառականք, և այլք որք կամին գտանել անդամանդ, առնուն զնով յիշխանէն մասնաւոր սահմանս ինչ երկրի, որչափ և կամին, և տան փորել, ուր լինի երբեմն, զի բիւրապատիկ շահին ք̃ զգին երկրին, սակս առատ գտանելոյ ականց։ Սակայն սահմանեալ կայ յարքունուստ մասնաւոր չափ ինչ. զի թէ գտցի անդամանդ մեծ ք̃ զայն չափ, յարքունիս գրաւեն. այլ լինի եւս զի կրեն վնասս մեծամեծս, յորժամ զկնի բզ̃մ ծախուց և ծանրակիր աշխատութ̃ց սակաւ, կմ̃ ոչինչ գտանեն։

Ռաճափուռ։ Քղք̃ կառուցեալ 'ի վր̃ համանուն գետոյ, երբեմն 12 մղոնաւ հեռի 'ի ծովէն. յորմէ ընդ գետս փոքրիկ նաւակօք բարձեալ տանին զվաճառս 'ի քաղաքն՝ յորժամ աճեցուն են ջուրքն. վս̃ զի յայլ ժամս այնչափ սակաւ են ջուրք նր̃, մինչ մարթ է և ոտիւք անցանել ը̃ նա. ուր է̃ փոքրիկ աւուս

Ի

'ի սմին քղքի էր աթոռ Սավաճի կամ Սըվաճ անուն բռնակալին. որ յանցել դարու բզմս աշխատ արար 'զնապապն վիզափուռեայ զտր իւր, այլ և զարքայն Մողոլաց: Անգղիացիք ունէին անդէն բնակութիս, և համբարանոցս վաճառաց. բայց արտաքսեցան 'ի հնդկաց. և մինչ նչ մտին գաղղիացիք: Գլխաւոր վաճառք քղքիս են բորակ, պաստառք, և պղպեղ, որ լինի 'ի շրջակայ անտառուն նորա:

Վէնկօրլա: Քղք ծովեզերեայ 'ի հարաւակողմն ասճափուռայ:

Յօդ. Է. Հէյտարապատ. Հէյտէրապատ, կամ Կօլգօնտա.

Սուպայութիւն կամ տէրութիւն Հէյտարապատայ՝ յարևմտից սահմանակից է վիզափուռայ. 'ի հարաւոյ՝ գառնատիկ նահանգին. 'ի հիւսիսոյ՝ օրիսայ. իսկ յարևելից՝ ծովուն ովկիանոսի: Գլխաւոր գետք նր են Գոտէրի. Վէնէրա. Մառոյ, կամ Մուսի. Նէւլա. Քիստնա. Քրիշնա, կամ Քրիսնա.

Տէրութիւն Հէյտարապատայ 'ի նախնումն էր մասն մեծի տրութն բէշնակարայ կամ պէտնակարայ, որ 'ի կամօրինեան հրամանդանէ ձգէր մինչև ցսուպայութիւն օրիսայ: Բազմանացիք որք են ցեղք ինչ եկեալք 'ի հիւսիսոյ, առին զմի մասն կալուածոց նր. այս զմիւս ևս մասն առին մուղալք: Վերջին ինքնակալն բռնակարայ զհրամանատարութն համօրէն զօրաց իւրոց հաւատացել էր չորից մահմետական սպարապետաց իւրոց. որոց իւրաքանչիւրն թիկունս արար ինքեան զզօրս իւր, առ 'ի լինել ինքնիշխան տր մասին իրիք այնր տրութե: Հզօրագոյնն 'ի նցնէ հիմնեաց զթգրութն Հէյտարապատայ կամ կօլգօնտայ. և զբնակութն իւր հաստատեաց 'ի վիզափուռ: Այլ մողոլք զսա ևս փութով ի տրութ իւրեանց նուաճեցին 'ի ձեռն ովրանկզիպ թգրին. բայց 'ի լինել բազմխռովութեան 'ի հնդկաստան, սուպայն սորին 'նհնգի անդրէն կալաւ զանկախութին. և մինչև ցայժմ է ինքնիշխան տէր յիւրում նհնգի: Յայսմ ի են սուպայութեան հանքք ադամանդ քարանց. և այլոց պատուական ականց. յորս երևելի է հանքն գոլգովլըտուրայ. Նոյնպէս ծաղկեալ է 'ի նմ և վաճառականութիւն նկարեալ կտ՟ Չիթ պաստառաց, և այլն:

Գլխաւոր տեղիք նր՟ են:

Հէյտարապատ, կոչի ևս Պաքնաքար որ թարգմանի Պարտէզ Նակարայ, զի յառաջագոյն ոչ այլ ինչ գոյր անդ եթէ ոչ պարտէզ Թ՟գրի տեղւոյս. որ 'ի խնդրոյ կնոջ իւրոյ Նակարայ հիմնեաց աստէն ապարանս և քղք՟, յանուն նր՟ անուանեաց պարտէզ Նակարայ: Ունի պարիսպ խոնարհ առ որով անցանէ գետ՝ որ թափի 'ի ծոցն պանկալայի մերձ 'ի մախսուլիբադամ. և է քղք՟ մեծ, յորում գտանին բզմ՟ մեծաշէն և վայելուչ շինուածք, և ապարանք, մ՟նդ ապարանք սուպայլին. բնակիչքն են բազմահարուստք և լի գանձիւք. արտաքոյ քղքին են երկու լիճք որոց իւրաքանչիւրոց շրջապատ է իբրև 3 մղոն. և առ նոքօք տունք մեծամեծաց: Տէս ստորև և ըղ Կօլգօնտա. և ղէբէնկապատ:

Կօլգօնտա: Եղանէ սա 'ի բառէս Կօլգար, որ նշանակէ հովիւ. վս՟ զի գօդուբ շահ յետ յափշտակելոյ զայս սահման, 'ի խուզելն տեղի ինչ ամուր յապաստան անձին, հովիւ ոմն առաջնորդեալ եցոյց նմ՟ զայս տեղի, և յայն սակս կոչեաց յայս անուն: Է բերդ հէյտարապատայ 'ի վերայ լերին, հեռի 'ի նմանէ 6 մղոնաւ 'ի հիւսիսոյ արեւմտից. պարիսպն քարաշէն, ունի հինգ բոլորակաձև աշտարակս և ամրածիգ գործիս, առաջի պարսպին խրամ խորոյատակ, և առաջի դրանց բերդին կամուրջ 'ի վր՟ խրամին. շրջապատ նր՟ գոլով մեծ իբրև քղքի, մարթ է կոչել զսա քղք. պատմի թէ 'ի հէյտարապատայ մինչև 'ի կօլգօնտա, է լայն անցք ը՟երկրեայ առ 'ի փախչել բնակչաց յայս բերդ 'ի ժմկի պտզմի. փոքր ինչ հեռի 'ի կօլգօնտայէ են շիրիմք կմ՟ թիւրպէք հիմնողի բերդիս և հնգից թգրաց որք զնա նր՟ յաջորդեցին: Եւրոպայեցւոց մատենագիրք բզմ՟ ուրեք զհէյտարապատն կմ՟ զպակնակարն կօլգօնտա քաղաք կոչեն. իսկ զայս բերդ, բերդ կօլգօնտայի անուանեն. ում կոչէ և հայրն բուշ 'ի նամակն իւր գրեալ 1719 'ի բունդիչէրի: 'Ի շրջակայս կօլգօնտայի եղանէ ադամանդ ընտիր, ուստի ասի յԾ թմ. իսկ արծաթ և ոսկի թմ Ծի հաւաքի յայս տրուն կօլգօնտայի:

Ղէբէնկապատ: Է արուարձան հէյտարապատայ՝ ուր բնակէին հասարակ ժողովուրդք:

Գոլլուր: Գղ՟ է հռչակաւոր վս՟ իւրոց հանքացն ա-

դազսամանդ ականց. որք կարի մեծ են քան զանգամանդս ռաօլգօնտայ՝ որ 'ի սաւէրուէն վիզափուռայ. սակայն ստորին են պղծեցկութ̃ և պայծառութ̃ ։

Գուրջէնտէ ։ Է հռչակաւոր կռատուն. ուր խուռն ընկճանման ուխտաւորք կռապաշտից 'ի շրջակայ կողմանց, և է առ սահմանօքն գառնադիկայ. 'ի հարաւոյ կողմանէ միւսն 'ի վտակաց քրիշնայ գետոյն ։

Յայս նհնգ անկանին և այլ ք̃ղքք ծովեզերեայք. որք են Մասուլիբատամ, կմ̃ Մախսուսուլիբատամ. Գանփաձէր. Մոնտաշանաքար. Նարսափուռ. Վիզիգաբատամ. և Պիմլիբատամ ։ Այլ ք̃ղք այն ծովեզերեայ կողմանք միով անուամբ անուանին Գորոմանտել, 'ի յօդ. ժա. ունիմք խօսել զսց̃նէ, ուր և զգորոմանտելայ ։

Յօդ. է̃. Գոնդւան ։

Գոնդւան անուանի հիւսիսային ծովեզերեայ մասն արևմտեայ կողման ցամաքակղզւոյն. և պարունակէ զք̃ղքս՝ որք յառաջն էին կմ̃ 'ի մասնաւոր տաքսանն, և կմ̃ 'ի վիզափուռ, և կմ̃ յայլ նհնգս ։ Բնաւ չէ այլ ինչ նհնգ զանազան յայն նհնգայն. այլ մեր զայս գոնդւան եդեալ 'ի կարգս նհնգաց այսր ցամաքակղզւոյն, յայսմ վայրի ունիմք խօսել զամ̃ երևելի ծովեզերեայ ք̃ղքացն ։

Տաման ։ Է ք̃ղք ը̃ տ̃րութ̃ փորդուգալաց բաժանեալ յերկուս 'ի ձեռն համանուն գետոյն. և է 'ի մէջ ծոցոյն քամպահաթայ, կմ̃ քամպայեայ. 'ի հիւսիսոյ պադայիմայ ։ Այն կողմն ք̃ղքին՝ որ է յաջմէ գետոյն, կոչի Հին տաման. իսկ միւսն՝ որ է 'ի հակռ̃կ կողմն, Նոր տաման, յետինս այս գեղեցիկ է. Թէպէտ փոքր և սակաւաբնակ. որ և բաժանեալ է ը̃ երկայն յերիս ուղղագիծ փողոցս. զորս այլ ևս չորք խաչաձև ը̃ մէջ հատանեն ։ Տունք նր̃ գրեթէ առ հ̃րկ զատուցեալ են 'ի միմեանց. իւրաքանչիւրն ունելով իւր սեփական պարտէզ. և ը̃ մեծի մասին են միայարկ ։ Շրջապատ քաղաքին է իբրև 2 մղոն. պատեալ շուրջանակի պարսպաւ. և վառեալ պտ̃զմական զինուք. ունի և երևելի գունդ մի պահապան զօրաց՝ որոյ զօրագլուխն է միանգամայն հրամանատար և իշխան ք̃ղքին ։ Երեք մենաստանք են 'ի նմ̃. և մի ժողովրդապետութ̃ ։ Գտանին 'ի նմ̃

և

Պոմպայի : Ի փոքրիկ կղզի, զոր ոմանք յթագրոյց համարին լինել ՄԻԼԻԶԻԳԵՐԻՍ կղզին՝ յիշատակեալ 'ի Պտղոմեայ : Այլ վն՟ գոլոյ մօտ 'ի ցամաք անդր, եդաք 'ի ծովեզերեայս գոնգանեայ : Շրջապատ նր՟ է իբրև 20 մղոն և եթ. յորում է և քաղաք համանուն. և բերդ նր՟ ամուր և կանոնաւոր. այլ օդն յոռի և մահաբեր, որոց չեն ընտել տեղւոյն : Յայս կղզի զառաջինն յեւրոպացւոց փորթուգալք տիրեցին 'ի 1662. զոր ապա ետուն արքային անգղիոյ 'ի պատճառս ամուսնութե՟ դստեր արքային փորթուգալոյ, ընդ արքային բ՟ կարոլոսի. ապա արքայն անգղիոյ ետ զնա 'ի պարգև ընկերութե՟ վճռ՟կանաց անգղիացւոց արևելեան հնդկաստանի, վն՟ յաջողակութե՟ նաւահանգստին 'ի դիւրութի՟ նաւուց նր՟ և վաճառականութե՟. ը՟ որոյ իշխանութե՟ կայ մնայ մինչև ցայժմ :

Փորթուգալք 'ի սեփհական անդ զայս կղզի ունէին միայն իբրև դիպաւոր նաւահանգիստ. որ 'ի ժամկի խաղաղութե՟ լինէր 'ի հանգիստ նաւուց վճռ՟կանաց յաճախելոց յայն ծովեզերեայս : Իսկ 'ի ժամս պտրզմի՟ դիպան տեղի ձմերելոյ անդէն զօրաց, որ օգնեալ մեծ բերէր նր՟. զի այսպիսի քաջադէպ բանակատեղ ուրուրեմն դատանի 'ի ծովս հնդկաց : Այլ յետոյ օր ըստ օրէ ծաղկեալ բարգաւաճեցաւ 'ի նմ՟ և վաճառականութիւն յոյժ. զի ընկերութիւն վճռ՟կանաց անգղիացւոց արար զսա վաճառատեղի ամ՟ տուրևառութե՟ իւրոյ՝ որ 'ի մալապար, 'ի սուրատ, 'ի պարսկային ծոցն, և 'ի ծոցն արաբացւոց : Քանզի ամ՟ ամի առաքէ նաւս լի վաճառօք 'ի վաճառատեղիս իւր՝ որք են յարևմտեան ծովեզերեայս հնդկաց, 'ի կոմորինեան սարէ մինչև ցսուրատ. նաև յայլ տեղիս և 'ի նաւահանգիստս. ո՟պ 'ի սընտ, 'ի պասրա, և 'ի պէնտէրապաս, իբրև 1300 բեռինս 'ի պէտս ազգնելեաց :

Այլ յաւէտ շահաբեր է սորին ընկերութե՟, տուր և առութիւն որ ը՟ սուրատ. ուր տանին նաւուք երկաթ բղմ՟ և կապար. այլ և աստէնեղէն կերպաս. և 'ի դարձի իւրեանց բառնան անտի ազգի ազգի ձեռակերտս : Վն՟ սորա քաջայարմար դիրք զբղմ՟ անգղիացի վճռ՟կանս յինքն ձգեաց. որք աճեցուցին զտուրևառութե՟ նր՟ յոյժ : Այլ և բռնակալութե՟ Անկրիաս անուանեալ բարբարոս ազգին՝ բնակելոյ 'ի ցամաք անդր 'ի մերձակայ սահմանս կղզւոյն, զբղմս՟ 'ի պանեան ցեղէն՝ որք առ հ՟սրկ են լումայափոխք և վճռկանք փարթամք, 'ի սոյն կղզի փոխադրեալ. որոց գլխաւորն անձնատուր գոլով 'ի վաճառականութեան, միշտ 'ի նմին բարգաւաճութեան պահէին զայն։ Արդ 'ի Մալապարոյ բերեն փայտ 'ի պէտս շինուածոց. և Բաւիլէ անուանեալ նիւթ 'ի պէտս առագաստաց նաւուց։ Նաև մեծագին և բազմագանձ բեռինք և վաճառք նաւուցն որք 'ի սուրադայ ամի ամի գնան 'ի պասրա, 'ի Ճիտտա, և 'ի Մոքքէ, և երբեմն նաև 'ի չինումաչին, ը մասին են վճռկանացն սուրադայ, և ը մասին վճռկանացն պոմպայի։

Նոր Բասուլ։ Է կղզի երբև 24 մղոնաւ հեռի 'ի տապուլյ 'ի հիւսիսականոյն մերձ 'ի ծովն. որ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, այլ վայելուչ է և ամուր. և ունի ամրոց հզօր 'ի գլուխ լերին, զոր 'ի 1507 առին փորդուգալք։ 'Ի շրջակայ կղզւոյ սոյն են բազում մեծագին վաճառք և ձեռագործք, որք 'ի յարգի են յամ կողմանս հնդկաց և արևելեայց։ Գլխաւորն է մետաքս, զոր առաքէ 'ի կոա. 'ի համօրէն ծովն հնդկաց. որ լաւ ևս է քան զչինացւոյն։

Հին Բասուլ։ Կղզի մեծ և ընդարձակ քան զվերինն, այլ ոչ այնչափ վայելուչ և ամուր. երբև 8 մղոնաւ հեռի 'ի ծովէ. որում տիրեն բնակիչք երկրին։ Յայս քաղաքք գործեն ազգի ազգի սպասաւորականս մետաքսեայ կերպասս, և գեղեցիկ արկեղս և տուփս. որ է Ղուլթի, և այլ պէսպէս արհեստակերտս ը օրինակի և սովորութեան չինաց՝ բազմարուեստ Ճարտարութեամբ. քանզի բնակիչք նոցա Ճարտար են յոյժ և աշխատասէր։

Տապուլ, կամ Տապօլ։ Կղզի առ Գուճերաթ անուան գաւառ 'ի հիւսիսականոյն կոայի. 6 մղոնաւ հեռի 'ի ծովէ։ Այս կղզի յառաջն ծաղկեալ էր յոյժ. այլ յետոյ քանդեցաւ 'ի պատերազմաց։ Փորդուգալք 'ի 1508 տիրեցին նմա առ ալմեյդաւ սպարապետիւ իւրեանց, աւերեն 'ի հիմանց խանէն՝ որ առ նովին ժամանակօք թագաւորէր 'ի կոա. և զքաղաքն ողջոյն 'ի հուր և 'ի սուր մաշեցին։ Այսպէս յետ բազում ամաց բնակիչք տեղւոյն անդրէն յինքեանս ընկրկեցին զկղզին. բայց գտին զնա քանդեալ և աւերեալ. որ 'ի 1639 էր առանց դրանց և տանց պարսպաց. բոլոր ամրութիւնք նորա էին երկու փոքրիկ մարտկոցք 'ի կողմն գետոյն զինեալք չորիւք երկաթի հրազինուք։ Իսկ յամին 1641 եղև ընդ իշխանութեամբ ասուսայ նաւապետին Վիզափուռայ. այլ այժմ 'ի պատճառս բազմապետութեյանձնելոյ յԾովն մեռելոց . է զի՞ այս ոք առնէ նմ, և է զի՛ այն ոք : Բնակիչք տաղուլայ ըստ մասին կռապաշտք են և ըստ մասին մահմետականք, որոց գլխաւոր վաճառք են աղ, և պղպեղ, բայց սակաւ : Յառաջագոյն Հոլլս այս առաքէր ընծայութեան նաւս ընդ կարմիր ծովն, և Է ծովն պարսից . իսկ այժմ վաճառականութիւն նորա գրեթէ բոլորովին անկեալ է :

Են այլ ևս քաղաքք երևելիք 'ի ծովեզերեայս գաւառանայ . որք Դանդա . Սէբօլա . Բոտնա . են :

Յօդ Է . Գանարա :

Գանարա կոչին ծովեզերքն, որք ձգին 'ի հարաւակողմն գաւառանայ: Յառաջին ժամս փարթամ էր յոյժ այս երկիր, մինչ մարթ էր կոչել զնա անապառ շահմարանի արկղոյ . այլ երբև հառ զնա Հէյտէր ալի խանն կմ Հէյտէրնաէզն այն քան՝ հանրաւէր առ ձեռին, զամ վաճառս նր յինքն գրաւեալ . զոր նյ և եթ վաճառէ, որք տանին նմ զէնս և վառօդ և այլ պէսպէս գործիս պտղմի . որով և մեծապէս նուաճեաց տուրեաոլի շահավաճառութիւն նահանգին , զոր յառաջ ազատաբար առնէին նմին . միայն փորձութեամբ ազատ են յօրինաց աստի հէտէրնաէզին . որք վն զի տիրեցին երբեմն այսմ նահանգի, ունին զատուցելոյն իմն 'ի վ Ծ այլոց ազգաց : Իսկ հոլանտացիք և անգղիացիք ունին 'ի մ նուհնդիստ և դղեակս ինչ, որք անուանի են առձեռականս : Գլխաւոր տեղիք որչափ ինչ են մեզ ծանօթ, են սէ :

Գոա, կմ Տէսախոա : Քղք փարթամ հզօր և բազմավաճառ, որ և է գլխաւոր տեղի փորդուգալաց զոր ունին 'ի հնդիկս . երրև 75 մղոնաւ հեռի յծովրայ 'ի հիւսիսոյ կողմանէ . կառուցեալ 'ի կղզի ինչ, որոյ շրջապատն է երրև 27 մղոն : Նւհնդիստ նր է մի 'ի լաւագոյն նաւահանգստից աշխրհ . սակայն կարի նուազ է այժմ անդ վճռականութիւն . վն զի զինի կորուսանելոյ փորդուգալաց զբզմ արդաւանդ և բարեբեր տեղիս, զորս ունէին 'ի կողմանս յայնոսիկ, չնչակայ թշնամիք խափանեն զամ հայրորդութիւն նց Է յամայն . և չթողուն ձեռնհաս արձակ, բայց միայն զձեռն ծովու, Է որ կոա երկու և եթ նաւօք առյաճախելոյ յԾովն մաղալաց, է զի՛ այս ոք տիրէ նմ, և է զի՛ այն ոք ։ Բնակիչք առաւելոյ լաւ մասին կռապաշտք են և լռ մասին մահմետականք, որոց գլխաւոր վաճառք են աղ, և պղպեղ. բայց սակաւ ։ Յառաջագոյն ձեռս այս առաքէր բնակութեան նաւս ընդ Կարմիր ծովն, և Ը ծայն պարսից. իսկ այժմ վաճառականութն նորա գրեթէ բոլորովին անկեալ է ։

Են այլ ևս կղզիք երևելիք ՚ի ծովեզերեայս գաւառանայ. որ Գոանդա. Մէնօջա. Բ...ն. և ն ։

Յօդ Է. Գոանարա ։

Գոանարա կոչին ծովեզերք, որք ձգին ՚ի Հարաւակողմն գաւառանայ ։ Յառաջին ժամս վարթամ էր յոյժ այս երկիր, մինչ մարթ էր կոչել զնա անապատ շահմարան որևզօլ. այլ երբև կառ զնա հեյտեր ալի խանն կմ հնուերնակղն այնն քաղ՝ հավրաւէլ առ իմմսին, զնմ վաճառս նր յինքն գրաւեաց. զոր նչ և եթ վաճառէ, որք ունին նմ զէնս և վառօդ և այլ պէսպէս գործիս պիտմ. որով և ձծացես նուաղեցաւ տուրեաոէկ շահավաճառութիւն նահանգին, զոր յառաջն աշատարար առնէին ...մին. միայն փոքրուքանց ազատ էն յորինաց առաւ հնուերնակղն. որք վն զի տիրեցին երբեմն այսմ նհնգի, ունին ղասաւէլուն իմն ՚ի վԹ այլոց ազգաց ։ իսկ հոլանտացիք և անգղիացիք ունին ՚ի սմ նւհնգիստ և ջոկս ինչ, որք անուանին են առվճռականս ։ Գլխաւոր անզլք որշափ ինչ են մեծծամօթ, են այք ։

Կոա, կմ Տելլիխա ։ Քղք փարթամ հզօր և բազմավաճառ, որ և է գլխաւոր անգղի փոքրուքանց զոր ունին ՚ի հնդիկս. երբև 75 մղոնա հեռի յմծօրայ ՚ի հիւսիսոյ կողմանէ. կառուցեալ ՚ի կղզի ինչ, որոյ շրջապատն է երբև 27 մղոն ։ Նահնգիստ նր է մի ՚ի լաւագոյն նաւահանգստից ասիոյ. սակայն կարի նուազ է այժմ անդ վճռականութն. վն զի զնին կորուսանելոյ փորգուքանց զրկմ արգասեանց և բարեբեր ջրոյ, զորս ունէին ՚ի կողմանն յայնոսիկ, շրջակայ Թշնամիք խափանեն զնմ հաղորդութն նց ընդ ցամաքն. և չԹողուն ձնձաց առանձի, բայց միայն կոնմցե ծովու, Ը որ կոա երկու և եթ նաւոք առ-

նէ տուրեւառուն ը̅ս սխուռ ք̅ղքին, ը̅ս միւղէմանեկայ,
և ը̅ս մագավայ :

Լերինք՝ որք շուրջ պատեն զկոա ք̅ղքաւ, 'ի ցամաքակողմն՝ պատճառեն անդէն տօթ սաստիկ. և այն եւս ը̅ս խմէք է պտճռ չլինելոյ ն̅ր այնչափ մարդաշատ: Անդ նստի փոխարքայն և ը̅ն՛հանուր քննիչն փորդուքալաց 'ի մեծաշէն ապարանս. մեծ փողոց քաղաքին, որ կոչի Ռէալ պողոտայ երկայն իբրև 1500 քայլ, գեղեցիկ է յոյժ. առ որով տունք և անտի են հրապարակք ոսկերչաց և ականագործաց. և տունք մեծամեծ վաճառականաց: Իսկ 'ի կէսն փողոցին գոյ վայելուչ հրապարակ զարդարեալ բազմապատիկ հոյակապ շինուածովք. յորս երևելի է տունն խորհրդոյ ը̅ն՛հանուր քննութե. և տունն ք̅ղքին. և արքեպիսկոպոսարանն, առ որով է մենաստան մեծակառոյց Ֆրանչիսկեան կրօնաւորաց հ̅դ̅ձ հոյակապ եկեղեցեաւ. և յաւարտ փողոցին՝ է միւս եւս գեղեցիկ եկեղեցի անուանեալ Տերուհի ողորմութե. և առ նովաւ երևելի անկելանոց վ̅ր որբոց. ուր և միւս եւս անկելանոց մեծաշէն և փարթամ յոյժ յայլ կողմն ք̅ղքին: Բնակիչք ն̅ր պէսպէս են ազգաւ և կրօնիւ: Գետն որ ձեւացուցանէ զկղզին՝ յորում կառուցեալ կայ ք̅ղքն՝ կոչի Մանդովի. և է մի 'ի մեծագոյն գետոց անտի համօրէն ծովեզերեայց այնր
կողման:

Յամին 1500 էառ զայս ք̅ղք Ալփոնսոս Ալպուքուէրքէ. և այնուհետև եղև ժողովարան փարթամութեցն հնդկաց, և վաճառատեղի պերճահռչակ ամ̅ Ասի, և բանալի համօրէն տուրեւառութե արևելեայց. իսկ այժմ անկեալ է յոյժ և նուաղեալ 'ի նախնի մեծութե և 'ի ճոխութե իւրմէ. ռամկայն տաճարին ունի յաւետն բազմութեն զօրաց. որոց ռոճիկ ամի ամի հասանէ 390909 ոսկի վենետիկեան: Արքեպ̅սութիւն որ հիմնեցաւ առ ժամօք սրբոյն Ֆրանչիսկոսի Քսաւերեան. որոյ նշխարք մեծապատիւ յարգանօք պահին 'ի սմին ք̅ղքի 'ի պօնժէզու, ը̅ս բարի յս̅ անուանեալ եկեղեցւոյ:

Օնոր: Է նաւահանգիստ և բերդ ամուր ը̅ս տ̅րութ̅ հալանտացւոց. 'ի հիւսիսոյ պարձէլօրայ. որոյ շրջակայ երկիրն բերէ պղպեղ առատ, և որէզ սև,
որ առաւել 'ի համարի է ք̅ս զսպիտակն:

Պուլէլէրի: Բերդ և ամրոց անգղիացւոց հզօր. յորում են իբրև 800 բերդապահ զօրք. յորոց երեքհարիւր են եւրոպացիք. Թիւ բնակչաց ք̅ղքին հա-

սա

սանէ ց15000 · որոց երևելի մասն են անգղիացիք · զի 'ի սկզբան անդ հաստատեալ ժողովրդեան անգղիացւոց կնաց սմադր ։ Ընկերութեան անգղիացւոց վաճառականաց ամի ամի առնու սաալի միլիոն մի և 500 լիտր պղպեղ ։

Պորճեւոր · Պոլգաւոր, կամ Պոլգօւոր ։ Է նաւահանգիստ ծովու, զոր առեալ փորդուգալաց շինեցին անդէն ամրոց · այլ յետոյ առաւ 'ի հոլանտացւոց, որք տէրեն նմա մինչև ցայսօր ։

Մանկլօր, կամ Մանկալօր ։ Յառաջագոյն էր սա ընդ իշխանութեամբ փորդուգալաց · յորոց առին հոլանտացիք · ընդ որոց տէրութեամբ է մինչև ցայժմ ։ Քաղաքն է փոքր և յոռի ըստ շինուածոյ · ունի ամրոց փոքրիկ, այլ անզօր և անպիտան · ունի և նաւահանգիստ 'ի ծոց մի կիսաբոլոր · զոր առնեն երկու գետք մինչև են մտեալ 'ի ծովն ։ Բնութեամբ մակընթացութեան ծովու՝ ջուր առաւել բերէ 'ի նաւահանգիստ անդր · և 'ի լինել տեղատուութեան, անդրէն 'ի ծովն դառնայ ընդ բազում աւազս հոսեալ ։ Այս մանկլօր կամ մանկալօր է միանգամայն ընդ իշխանութեամբ կամ ռաճայութեամբ հնդկաց · որ 'ի հիւսիսոյ գանանորայ՝ (զորմէ ունիմք գրել սորին,) ձգի 'ի ծովեզերեայ կողմանս գանարայ ։ Երկիր նորա արգաւանդ է, բերէ պղպեղ, և առատ բրինձ ։ Բնակիչքն ըստ մեծի մասին են հնդիկք կռապաշտք ։

Յօդ Ը · Գառնատիկ · Գառնատ · կամ Բիշնակար ։

Ընդ անուամբս գառնատիկ՝ առնումք աստանօր զհամօրէն զայն սահմանս, որ ձգի ընդ մէջ տէրութեան մայսուրայ մինչև ցսուպայութիւն հէյտարապատայ, որ է ընտրելագոյն կողմն նախնի տէրութեան բիջնակարայ կամ պիսնակարայ · և ունի իւր սահման 'ի հարաւոյ զգանձաւոր, զմատուրէ, և զմայսուր · յարևմտից՝ զծովեզերեայս մալապարայ և գանարայ · 'ի հիւսիսոյ՝ զսուպայութիւն հէյտարապատայ · իսկ յարևելից՝ զովկիանոս ։ Եւ բաժանի 'ի բազում գաւառս, որոց զգլխաւոր տեղիս որչափ ինչ ծանօթ են մեզ աստօրագրեսցուք յառաջիկայդ · բայց զծովեզերեայ տեղիս միայն որք են գուրգըլուր, բոնդի-

Հէրի, Մելափուռ. և Մոնթրոս, ուստի մեք ստորագրել 'ի յօդ. ԺԶ. 'ի խօսելն զպորտմանուելոյ :

Գռանոգէհ, Գռանոք. որ կոչի և Բէյնոխոր, կամ Պլխնաքար : Ի՛ քղք որ 'ի նախնումն էր մայրաքաղաք մեծի և ճարձակ տէրուն բիշնակարայ : Եւ այժմ ևս է մեծ և բազմամարդ կառուցեալ 'ի գլուխ լերին. յորում են հոյակապ ապարանք, ուր յառաջին ժամս նստէր նախապապն գառնադրեալ ննջեցելին :

Գռնըրմբէտէ : Ի՛ քղք անջատեալ 'ի գաւառադրայ կամ 'ի բիշնակարայ' միայն 'ի ձեռն գետոյ. յայն սակս մարթ է համարել զնա նոյն ընդ առաջնոյն :

Անանդպոբուխամ : Քղք կառուցեալ 'ի վ՟ր միոյ 'ի վտակաց Փէննէր գետոյն. որ յետ բ՟զ՟մ ընթացից մտանէ յովկիանոսն առ կանկարբազնամ քղքաւ :

Քռնթչէմբէ, կամ Քռնթչէլբէ : Քղք յարևելեան կողմն անանդպարատեանոյ. զոր ոմանք նոյն համարին ընդ բիշնակարայ մայրաքղքի ն՟նգիս :

Գօլպուլամ : Քաղաք կառուցեալ 'ի միջնավայրի սորին Ծի : Պտղոմէոս յիշատակէ զԳոլպուլա անուն քղք 'ի հնդկաց յայսկոյս գանգէսի. որ գուցէ սոյն այս քղք իցէ :

Քռնէհլարամ : Քղք կառուցեալ 'ի մէջ գաւառադրայ և մոնթրոսի. գրեթէ նոյնչափ հեռի յերկոցունց ևս :

Արլպատ, կամ Արբգատ : Ի՛ գլխաւոր քղք համանուն նահապետութեան կամ փ՟ուեն. որոյ գլխաւոր իշխան և կառավար' առ երևոյթս է նահապետն, այլ բուն տէրութեան փ՟ուին է 'ի ձեռս անգղիացւոց. զորոյ պետրուն տասացեան յամին 1751, կացուցանելով իշխան զմահմէտ ալի խանն : Բայց 'ի սկզբան սորա' այս արարք անգղիացւոց' բազում և մեծամեծ դժուարութիւնս կրեաց. այլ սակայն զնոքն պատերազմօք և աւարառութիւնք, յաղթութիւնք և դաշնադրութիւնք որք ընդ բազում ամս ձգեցան, 'ի գլուխ ելին անգղիացիք : Յայնժամ առա նոր իշխանն' որ միշտ բազում թշնամիս ունէր' զզօրս իւր և զանձն ևս ապաստան արար առ անգղիացիս, 'ի մասին հաստատելով զպանակութն իւր. այլև առ 'ի զերծանել 'ի ծախուց և 'ի հարկաց, զոր եդեալ էին 'ի վ՟ր նր՟ա, զնա՝ զնաւաս երկրին ևս նց. որք 'ի բազում ամս հասանէին մինչև 31090909 ռուպի փակլօվեան. բայց և այժմ հասանեն 9763635 ռուպի. յորմէ 'ի բաց հանեալ 254545 ռուպի, որք զնան 'ի պահս հնդկաց ծախուց. և զնոյնչափ զոր տան ամի ամի ընծայական կամ ընծխանն

խանն առ 'ի ձեռս նր , միայն տակաւին նմ լոկ շահ 240000 ։ Ուստի սակս այսպիսի դաշնադրութե , զլաւագոյն մասն Գառնադիկ Նիզնգին ունին անգղիացիք Ը իւրեանց տէրութե ։

Ճէնճի , կմ Ճէնճէ ։ Գլխաւոր քղք համանուն գաւառի 'ի հարաւային կողմանս Գառնադիկ Նիզնգեն առ փոքրիկ գետով, որ հոսի 'ի հիւսիսոյ քոնդլիշէրայ ։ Անդ է բնակութի իշխանի գաւառիս , ուր ունի երկու մեծաշէն ապարանս , յորս փոփոխակի բնակէ ։

Յօդ Թ. Մալապար ։

Մալապար է հարաւային մասն արեւմտեայ ծովեզերեայց այսր ցամաքակղզւոյ ․ որ ձգի Ը մէջ կոմորինեան սարին , եւ Դէփլիկէրայ գետոյն ։ Յարեւելից ունի իւր սահմանակից զԳառնադիկ , զՄայսուր , զԳանարա ․ յարեւմտից եւ 'ի հարաւոյ՝ զովկիանոս ․ իսկ 'ի հիւսիսոյ՝ զծովեզերեայս Գանարայ ։ Յայս ծովեզերեայս Մալապարայ ըստ պատմէն՝ յառաջագոյն իշխէր մի միայն թգր ․ այլ 'ի Ը դարու բաժանեցաւ 'ի զնզն թգրութիւնս 'ի պատճառս ինչ զորմէ ստորեւ ունիմք պատմել ։ Եւ մինչեւ ցայժմ գտանին 'ի նմ չորք թգրութիւնք կմ ռաճայութիւնք հնդկաց , զորս յորոշեալս 'ի միմեանց՝ ուրոյն ուրոյն նշանակեսցուք յառաջիկայդ ։

Ա. Թագաւորութիւն Գանանօրայ ։

Այս տէրութիւն ունի իւր սահմանակից 'ի հիւսիսոյ՝ զտէրութիւն Մանկլօրայ որ 'ի Գանարա ․ 'ի հարաւոյ՝ զտէրութիւն Գալիգուդայ ։ Եւ ունի իւր գլխաւոր տեղի զԳանանոր , որ յառաջագոյն էր մայրաքղք համօրէն սորին տէրութե ․ իսկ այժմ վաճառատեղի հոլանտացւոց ․ է սա քղք մեծ եւ ամուր ․ գլխաւոր վաճառք նր են պղպեղ՝ որ լինի 'ի շրջակայս նր ․ այլեւ արմանոս փայտ ․ հիլ ․ ծթ Քէպրիւլէ ․ Թամբրհընտի ․ եւ կոճապղպեղ ․ այն է Զէնճէֆիլ ։ Առաջին սկզբնաւորիչ քղքիս եղեւ Ալմէյդա հիւպատոս փորթուգալ ․ որ հրաման առեալ 'ի թգրէն Գանանորայ՝ շինեաց ամրոց 'ի տեղւոջ, ուր է այժմ քաղաքն Կանանոր. զոր բնակիչք տեղւոյն բազում անգամ ջանացան առնուլ, այլ ոչ կարացին։ Ապա յամին 1664 առին զնա Հոլանտացիք, և ունին մինչև ցայժմ։ Այս քաղաք ունի և նաւահանգիստ պատուական ընդարձակ և ապահով քան զայլ ամենայն շրջակայ նաւահանգիստս։

Է. Թագաւորութիւն Գալիգուտայ.

Թագաւոր այսր Տէրութեան է մի ոմն 'ի պաշտամանեաց կամ 'ի քրմաց. ուստի այս Տէրութիւն միայն առ Հնդիկս, ուր իշխանազունք և եթ ելանեն յաթոռ թագաւորութեան. քանզի յայլ տեղիս թագաւորքն անձինք սոսկականք. մանաւանդ թէ ուրեք ուրեք այրք անտոհմք և արհամարհք այնչափ, զի թէ ընտանիք նոցա խոնարհեսցին ճաշել 'ի միասին ընդ թագաւորին, մերժին 'ի ցեղէ իւրեանց իբր անարգս և պիղծս. արդարև ոչ ոք պարծանս համարի անդ ճաշել ընդ թագաւոր իւրեանց։ Կառավարութիւն Գալիգուտայ յոռի է յոյժ և անկարգ։ Պաշտօնականութիւն նորա գրեթէ բովանդակ է 'ի ձեռս ոմանց սևոց. որք են դիրտասախական ազգաց, անհաւատարիմք և լի ամենայն ապականութեամբք։ Գլխաւոր բերդք նորա է Գալիգուտ. որ է տեսակ իմն պատուական մայրի. յանմատչելի 'ի դաշտս և 'ի լերինս նորա. իսկ քաղաքք են հետևեալքդ։

Գալիգուտ։ Է մայրաքաղաք մեծ, այլ անպարիսպ. որոյ շրջապատն է 9 մղոն. և իբրև 7000 տունք են 'ի նմա. ընդ առաւել մասին անջատք 'ի միմեանց. այլ առ հասարակ ցածունք և անշուք. ունի և նաւահանգիստ իբրև 3 մղոնաւ հեռի։ Առաջին հիմնադիր քաղաքիս եղև Չրամ Բերումալ իշխանակալն համօրէն Մալաբարայ, զոր 'ի պատուի ունէին յոյժ համօրէն ծովեզերեայ բնակիչք Հնդկաց։ Ըստ աւանդութեան արաբացւոց, և ըստ պատմութեան երկրին Հնդկաց, իբրև սկսան արաբացիք մտանել յաշխարհն Հնդկաց 'ի Ը դարուն, սոյն այս իշխանակալ սէր մեծ կալաւ առ մահմետական դենն. վասնորոյ և ընտրեաց երթալ 'ի Մէքքէ. և անդ վճարել զկեանս իւր։ Բայց նախ քան զերթալն՝ բաժանեաց զթագաւորութիւն իւրոյ յազգականս և 'ի սիրելիս իւր. և առաւ անտի ծագեցին այնչափ մանր թագաւորութիւնք 'ի Մալաբար։

Յետ մեկնելոյ սորա՝ Գալիգուտ քաղաքն այնչափ սիրելի և 'ի յարգի եղև արաբացւոց, մինչ առ սակաւ սակաւ ստորութիւն եղև անդ ուղղելոյ ընակալ իւրեանց.

եանց. Թէպէտ անյաջող է և վտանգաւոր նաւահանգիստ նր̃, սակայն և այնպէս եղև վաճառատեղի ծաղկեալ և բարգաւաճ յոյժ. որոյ զուգական ոչ գոյր 'ի համօրէն յայն Ծ̃։ Անդ տանէին ականս պատուականս, մարգարիտս, էլէքտրիոն՝ որ է Փէհրիպար. ոսկի, արծաթ. կերպասս մետաքսեայս և բամբակիս. շաքար. և ազգս ազգս դեղօրէից և համեմից. փայտս պատուականս, պէսպէս խէժս, կապոյտ լեղակս, և անուշահոտ ծխանելիս. և զայլ ևս պատուականագոյն բերս, զոր բերէ ասիա։ Զայս ևս մեծագին վաճառս տանէին անդր ըս̃ մասին ը̃դ ծով, և ըս̃ մեծի մասին ընդ ցամաք՝ բարձեալ 'ի վ̃ր ուղտուց, եզանց, և փղաց. ք̃զի նաւարկութիւն չէր այնչափ ապահով, և ոչ այնպէս յաճախ, որ̃ եղև այժմ։ Թ̃ր սորա 'ի ժմկին յորում մտին փորտուգալք 'ի Մալապար, բարգաւաճ էր յոյժ և մեծաշուք. որ կոչէր Զամօրին, ք̃ է Ինքնակալ մեծ. այլ զկնի տիրելոյ Եւրոպացւոց՝ կողմանց ինչ Ծ̃ի նր̃, և ը̃դ իւրեանց իշխանութ̃ գրաւելոյ զլաւագոյն ծովեզերեայ ք̃ղքս նր̃, անկաւ և մեծապէս անշքացաւ յառաջին վայելչութէ և 'ի փարթամութէ իւրմէ։

Գանօր, կմ̃ Գաւօր։ Է մայրաք̃ղք փոքրիկ ինչ գաւառի. որ յանուն ք̃ղքին գանօր անուանի. պատուականէ̃ յո̃ջագոյն 'ի զամօրիննեան տ̃րութն գալիգութեայ; յեզերս ծ̃ւուն 15, կմ̃ 18 մղոնաւ հեռի 'ի գալիգութեայ։

Բոննէնէ. և Պուլուր, կմ̃ Բուլուր։ Են գեօղք ը̃դ մէջ գանօրայ և գրանկանօրայ՝ որոց բնակիչք ըս̃ մեծի մասին են ձկնորսք։

Մայէն, կմ̃ Մահէ։ Է վաճառատեղի գաղղիացւոց՝ քանի մի մղոնաւ հեռի 'ի գալիգութեայ 'ի հիւսիսոյ կողմանէ, ուստի պղպեղ բ̃զմ ելանէ։

Ք̃. Թագաւորութ̃ Գոչինայ։

Գոչին էր Թ̃րութ̃ ծաղկէ̃լ և երևելի յորժամ փորտուգալք մտին 'ի Հնդիկս և առին զարքայանիստ ք̃ղք նր̃. այլ յետոյ վանեցին զնա անտի հոլանտացիք։ Իսկ մնացէ̃լ սահմանք գոչինայ կացին մնացին ը̃դ իշխանութ̃ հարազատ Թ̃րի իւրում. զոր ը̃դ 25 ամս առ սակաւ սակաւ յինքն գրաւեաց արքայն Տրավանգորայ։ Իսկ Թ̃րն գոչինայ մերկացկացեալ յնմ մատաղաձնոց իւրոց, առաքեցաւ ուպատառման լինել 'ի Դուլինի մայրաքղք իւր. ուր կարգեցաւ նմա հաս՝ ամին լինել 144,000. որ առնէ 6600 ոսկի վէնէտիկեան առ 'ի դարման կենաց իւրոց : Յայս Ծ գաւառին և սոսրիք. որոց վս պատմի թէ 'ի ժամս Թգրուն յունաց անհնարին նեղեալ 'ի չարչարանաց և 'ի տառապանաց, որովք նեղէին զնս յոյնք, սակս քաղկեդոնի ժողովոյն, հաստատած մի 'ի նոցէ գնացին փախստական յԾէն իւրեանց. և ծնդհորդեալ Է ցամաքն 'ի զինունն Ծս, զկնի հասին 'ի գոլին. յորոց ոմանք այսա դարձան յուղղափառ հաւատս: Իսկ այլք անխախտ ունէին մինչև ցայժմ զնեստորական աղանդն և զծէս իւրեանց: Սոցա կերպարանք բոլորովին փոխեալ է այժմ 'ի տարազ բնիկ սևամորթ հնդկաց. մինչև ոչինչ իմիք զանազանիլ արտաքուստ 'ի նոցէ. ոչ և փորձութեանք որք մերեալ են անդէն 'ի նախնի փորձութեանց որք գնացին 'ի Հնդիկս.

Գոլքն: Է քղք 'ի յուղթի և յարգաւանդ դաշտավայրի առ եզերբ մեծ գետոյն՝ որ բաժանի 'ի բզմ առաջս, յորս հնար է նաւել փոքր նաւուց: Սակայն և այնպէս չէ այնչափ ծաղկեալ 'ի նմ վաճառանութիւն: 'Ի միում յարուարձանիայց անտի քղքին՝ է հաստատած մի հրէից գինոք ազնուակ և հինկ. որք առաւասպէն թէ գնացին անդր 'ի ժամս գերութեան բաբելոնացւոց: Զայս քղք զառաջին առին փորտուգալք, ապա տաճկաք. ապա յամին 1662 պաշարեցին զնա հօլանտացիք. և յետ ութ աւուրց պաշարման, նենգութեամբ առին ի նմ: Մինչև Է իշխանութիւն փորտուգալաց էր կառուցին 'ի նմ և եպիսկոպոսն. այլ յետոյ բարձաւ: Օդ քաղաքիս է այնչափ առողջարար. ուր գոյ և ախտ ինչ յորմէ չարաչար այտնունն ձեռք կմ ոտք :

Բօրքա: Է քղք ընդ մէջ գոչինայ և դրանկանգորայ լինել 'ի հօլանտացւոց յետ առնլոյ նց գոչինայ՝ 'ի կղզի ինչ Ծ մասին ձևացուցեալ 'ի ծովու, և Ծ մասին 'ի գետոյ անտի գոչինայ. հեռի 45 մղոնաւ հեռի 'ի նմանէ 'ի հարաւոյ:

Գոչյան. որ կոչի եւ Աշնձանդ: Է տեղի ինչ հօլանտացւոց հեռի 6 մղոնաւ հեռի 'ի բօրքայ 'ի հարաւոյ:

Է. Թագաւորութիւն Դրաւանգօրայ։

Այս տէրութիւն ձգի մինչև ցսահմանս Կօչինայ. և ունի իւր սեպհական թագաւոր անկախ և ինքնագլուխ։ Փոքր մի յառաջ իշխանս այս էր մի յանինշան և յաղքատ իշխանացն հնդկաց. այլ մի ոմն 'ի թագաւորաց նոցա 'ի վերջին ժամս, ճոխացոյց զնա յոյժ, կազմեաց գունդ մի 'ի փախստական զօրաց անտի գաղղիացւոց և փորդուգալաց. որք 'ի պատերազմունս նոցա ընդ մպաջուլիս գործեցին յօգուտ տէրութեան դրավանգօրայ. իսկ 'ի ժամկի խաղաղութեան կացոյց զնոսա պահապանս կողադայ բերդին. եմոյծ 'ի թագաւորութեան իւրում գործարանս խոշորանիւթ բամբակի կտաւուց և այլոց իրաց, որք 'ի սկզբան անդ բարւոք ելս ունէին առ հոլանտացիս 'ի Պուդգուրէն, այլ յետոյ փոխադրեցան առ անգղիացիս՝ որ յավէնկին։

Երկուս տեղիս կամ կալուածս ունին եւրոպացիք 'ի սմին թագաւորութեան. մին է դանեաց. որք ունին սակաւ ինչ տեղի 'ի Քօլէչէլ։ Իսկ երկրորդն անգղիացւոց յԱնջէնկօ. որք ունին անդանօր չորս փոքրիկ մարտկոցս կառուցեալ 'ի լեզու ինչ աւազուտ երկրի. յորս կարգեալ կան՝ 150 զինուորք 'ի պահպանութեան, կէս մի անգղիացիք, և կէս մի սեաւ հնդիկք։ Գլխաւոր վաճառք նոցա՝ զոր հաւաքեն 'ի դրավանգօրայ իշխանէն՝ է պղպեղ, կինամոն հնդիկ, որ է Տարչին. և կեղև ինչ ծառոյ՝ որ կոչի Գայիրէ. յորմէ գործեն առասան 'ի պէտս նաւուց հնդկաց. այլև խոշորանիւթ պաստառ։

Դրավանգօր։ Է մայրաքաղաք սորին թագաւորութեան՝ կառուցեալ 'ի հարաւային ծագ ցամաքակղզւոյն. քանի մի մղոնաւ հեռի 'ի ծովէ։ Նա թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, բայց է բարւոք վաճառատեղի, զօրաւոր և փարթամ։

Են այլևս քաղաքք և գիւղք 'ի մալապար. զորոց բաց յանուանց չունիմք այլ ինչ ծանօթութիւն։

Աղրփէնդ։ Աւան առ սահմանօք տէրութեան գալիգուդայ ։

Տոլին Գօդդէյր . և Աչմաւբաչեամ ։ Են աւանք առ վանի գետով ։

Ջոնկէր Բոլամ . և Տոլապան ։ Են աւանք 'ի հարաւային մասին այսր տէրութեան ։

Են այլ ևս աւանք և գեօղք 'ի սմին տէրութեան՝ զորոց զանուանսն և եթ գիտեմք ։

Յօդ ԺԱ . Գորոմանտել ։

Որպէս անուանին համօրէն արևելեան ծովեզերեայք այսր ցամաքակղզւոյ, որ 'ի հարաւոյ ձգի մինչև ցօրիսսա . զոր ունիս տեսանել յՑացոյցն մեր, հանդէպ մալապարայ, գանարայ և գոնգանայ ։ Որպէս 'ի մալապար, նոյնպէս և յայս ծովեզերեայս 'ի հարաւային կողմանս լինի տօթ անհնարին . սկսեալ 'ի մայիս ամսոյ մինչև ցվերջն հոկտեմբերի . բայց գիշերն բարեխառն է վասն շնչելոյ ցօղադին լինչ հողմոյ 'ի հարաւոյ արևմտից . և բազում անգամ սոյն այս հողմն զովացուցիչ շնչէ և 'ի ցերեկի զկնի երից ժամուց միջօրէի ։ Իսկ յայլ ամիսս տարւոյն՝ օդ նորա թէպէտ ջերմ է յոյժ, այլ չէ այնչափ ինչ տապախառն ։ Իսկ յամսեանն նոյեմբերի և դեկտեմբերի՝ դրեթէ անընդհատ անձրևէ ։ Երկիր նորա բազում ուրեք աւազուտ է . և բաժանի 'ի մալապարոյ 'ի ձեռն անմատոյց բարձրաբերձ լերանց ։

Յառաջ քան զբաժանիլ ծովեզերեայց գորոմանտելայ . սոսա մինչև ցպանկալս, առեալ միանգամայն և զգանագիկ և զհէյտարապատ, էին, էր մի միայն տէրութիւն Բիճնակար, կամ Պիճնակար անուանեալ ։ Նախնի ինքնակալք այսպիսի մեծ և ընդարձակ տէրութեան՝ ըստ հաստատելոյ աւանդութեանց և պատմութեանց սորին Ազգի, ամենայն արդարութեամբ և իրաւամբ և առաքինութեամբ վարէին զկառավարութիւն իւրեանց . մեծապէս փայլեալ կային 'ի խնամս նահանգաց իւրեանց ։ Այլ յետոյ առ սակաւ սակաւ զայլոց ասիացւոցն կալան սովորութիւն, կալ մնալ փակեալ յապարանս իւրեանց 'ի գրգանս և 'ի հեշտութիւնս ընկղմեալ . և զհոգս Ազգին թողուլ 'ի ձեռս հասարակապետաց և պաշտօնատարաց . որոց սովին պատճառաւ ապստամբեալ, իւրաքանչիւրն եղև ինքնագլուխ տէր իւրում նահանգի և գաւառի . ուստի ապարին կուսակալքն գաւառաց, հէյտարապատայ կամ գոլգոնտայ, օրիսսայ, մանտուրայ, դանճաւուրայ, մալաւարայ, և ճինճայ. բայց ոչ՝ միայն զիշխանութիւն կալան զթգրականն. իսկ անուն՝ զիւրեանցն պահեցին նայիբ կոչեցեալ. որ այնինքն է կառավար կամ կուսակալ: Այս խռովութիք դեռ նոր էին՝ յորժամ եւրոպացիք հասին 'ի ծովեզերեայս կորոմանդելոյ: Առ նովին ժամօք առեւտրութին ը̄ օտարականաց 'ի կողմանսն յայնոսիկ նուազ էր յոյժ՝ ամփոփեալ միայն յադամանդ ակունս հէյտարապատայ կամ գոլգոնտայ, զոր տանէին 'ի գալիգուդ և 'ի սուրադ. և անտի յորմուզ և 'ի սուէզ. յորմէ սփռէին յեւրոպիա և յասիա: Իսկ այլ վաճառք էին սակաւ պաստառք սպիտակք, և նկարէնք. և այլ սոցին նման ձեռագործք. որք երբև հասին յեւրոպիա, նոր իմն գոլով այն նց, ըղձմք 'ի ծովեզերեայ ազգաց եւրոպիոյ՝ յորդորեալ գնացին 'ի կողմանսն յայնոսիկ: Զառաջինն զտեղի կալան յեզերս ծովու. ոմանք զօրութ̄ զինուց, այլ մեծ մասն քաղցրութ̄ յինքեանս յանկուցեալ զիշխանս տեղեացն, կալան անդէն իւրեանց սակաւ ինչ տեղի բնակութ̄, որոց սահմանք ցանգով փակեցան: Բայց ապա փոխ ցանգոյն կառուցին պարիսպս և ամրոցս. ուր առ անդորր և քաղցր կառավարութ̄, օրըստօրէ բազմացան բնակիչք. որոց բարգաւաճութին և անկախութ̄ 'ի նախանձ շարժեաց զիշխանս տեղեացն այնոցիկ. այլ չունէին զօրութի̄ բաւական առ եղծանել զնս. ուստի անշարժ կացին մնացին անդէն, օրըստօրէ և եւս ընդարձակեալ զկալուածս իւրեանց:

Բայց 'ի սկզբան անդ ոչինչ ընկերութ̄ վաճառականաց եւրոպացւոց, առնէր առեւտրութիս ադամանդ ականց, այլ թողեալ էր 'ի ձեռս մասնաւոր վաճառականաց. մ̄նդ հայոց. ապա առ սակաւ սակաւ անկաւ 'ի ձեռս անգղիացւոց ձեռնտուութ̄ և ընկերակցութ̄ վաճառականաց ազգիս մերոյ և հրէից՝ որք բնակէին ը̄ պաշտպանութ̄ նոցին անգղիացւոց բռ̄ և սիշինդ իսկ վկայէ: Այլ այժմ այս առեւտրութ̄ դրեթէ իսպառ խափանեալ է. վս զի 'ի բաժանել հնդկաց Յէ 'ի բազմապետութիս, իշխանք կողմանցն այնոցիկ կարծեցին զերթեւեկ օտարոտի ազգաց 'ի տեղեացն՝ յորս եղանեն այն ակունք: Վս̄ այժմ համօրէն վաճառք կորոմանդելոյ՝ են սպիտակս բամբակի պաստառք ազնիւք սպիտակք և նկարէնք, բերեալ 'ի պանկալայէ. որոց առեւտրութին բա փոքր ինչ մասին է 'ի ձեռս բուն բնակչաց նորա, որք կամ ազատակ վաճառեն, և կամ ներկեն և նկարեն՝ տանին և վաճառեն սնդրեն 'ի պանկալա առ հարիւրն 35 կամ 40 շահել: Իսկ մուսլմանն՝ որ է մեծագոյն մասն, բովանդակ է 'ի ձեռս օտարական ազգաց, հայոց, և այլոց ազգաց ումանց արևելեայց, և մինչ. եւրոպացւոց. յորս գտանին նաև 'ի պանեան ցեղերն հնդկաց՝ որք բնակեն 'ի կողմանսն յայնոսիկ:

Զվաճառս օտ. նաւք եւրոպացւոց տանին սխալեն յաշխարհն իմ. որք ըստ հաշուէին պերճենկայ ամի ամի հանեն 'ի գործամանութեան վն այլևայլ վաճառատեղեաց կամ նաւահանգստից հնդկաց նախ՝ 4000 բեռինս: Զի նաւք գաղղիացւոց 800 բեռինս բարձեալ տանին 'ի մալապար, 'ի մոգա, և 'ի կղզին գաղղիոյ: Անգղիացւոց 1200 'ի պոմպայի, 'ի մալապար, 'ի սումադրա, և 'ի փիլիպպեան կղզիս: Հոլանտացւոց 1500 'ի տեղիս իւրեանց զոր ունին յեզրն հնդկաց: Թող այլ 500 բեռինս առաքմանէ վն մանիլայի: Եւ գին բովանդակ 3500 բեռանցն՝ զոր նորին պեղենկայ է 305454 ոսկի վենետիկեան. 'ի բաց առեալ զ500 թանկագին բեռինս, որոց գին է 948 ոսկի: Իսկ յեւրոպիա տանին 9500 բեռինս. 800 'ի դանիա. 2500 'ի գաղղիա. 3000 յանգղիա. 3200 'ի հոլանտա: Եւ զի գին միոյ բեռին չէ ինչ աւելի քան 87 ոսկի վենետիկեան, վն և գին բոլոր բեռանց է 741818 ոսկի: Բայց զայս գումար դրամոց՝ ոչ եւրոպիա, և ոչ ասիա, զոր բոլորին առձեռն դրամովքն՝ նաղտ ըստ ըսկով վճարէ, այլ զոր մասին փոխանակութբ այլևայլ իրաց. զի եւրոպիա տայ երկաթ կապար պղինձ բուսա, որ է Մէրճան. ապակեղէնս, և այլ սոցին նմանս: Իսկ ասիա՝ համեմն՝ պղպեղ տրիղ շաքար ցորեան և արմաւ. որոց գինն բովանդակ է իբրև 436363 ոսկի. յորմէ յայտ է թէ առձեռն դրամք մտանեն 'ի գործամանութեան իբրև 545520 ոսկի: Այլ դ՝ յայս ծովեզերեայս գործամանութեան՝ ունիմք խօսել զամ ծովեզերեայ քաղաքացն և գիւղօրէթեցն՝ որք 'ի կամօրինեան սարէն ձգին մինչև ցօրիսսա. ուստի և զայնց ծովեզերեայ հնդկաց որք զոր ումանց Ցագրաց անկանեն 'ի նոյնպէս դաւանադիկ, և 'ի հէյտարապատ: Բայց զմիջրութիւնս և զմեծամեծս, որք են 'ի հարաւային կողմն՝ մերձ 'ի կամօրինեան սար, առ որոշումն՝ ուրոյն ուրոյն կարգեմք զոր սովաւ:

ա̅. Թագաւորութիւն Մառատուրայ:

Այս տէրութիւն որ 'ի կամորլինեան սարէ ձգի մինչև Ռզմարասլա, և ընդ մէջ տարածի 'ի ներքս 'ի ցամաքն, 'ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից զՄայսուր և զՀինձի· յարևելից՝ զՄարուա և զԳանձաւոր· 'ի հարաւոյ՝ զԾոմի· իսկ յարևմտից զՄալապար: Տարածութիւն նր̅ հաւասար է Ֆրին Փորթուգալաց· և մնացք նր̅ հասանեն ց8 միլիոն լերէ գաղղիական: Եօթանասուն իշխանութիւնք են 'ի սմին Թագաւորութեան· իւրաքանչիւրն ինքնիշխան յիւրում վիճակի· որք առ այլ ինչ չեն պարտական, բայց միայն վճարել ըզհարկն՝ զոր արկանէ 'ի վր̅ նոցա Թգ̅րն մառատուրայ: Սոյն այս Թգ̅ր, կարօղ է հեշտեաւ ժողովել գունդ մի 20000 հետևակ զօրաց, և 5000 հեծելոց· այլև 100 փիղս, որք 'ի պտ̅ղմունս հնդկաց պիտանացու են յոյժ: Գլխաւոր տեղիք նր̅ են:

Մառատուրա, կմ̅ Մառատուրեկ: Քղ̅ք՝ որ յառաջն էր մայրաքաղաք Թգ̅րութեանն մառատուրայ՝ կառուցեալ առ գետով 'ի խորին կողմն Ֆէին, կրկնապատիկ պարսպօք և բզ̅մ փոքր աշտարակօք, ամրացուցեալ և վառեալ պտ̅ղմական զինուք: Ունի ամրոց հզօր 'ի ձև քառակուսի, և առ նովաւ խրամ լայն և խորայատակ, պատեալ աստի և անտի ստորճար պարսպօք: Իսկ ամրոցն 'ի ներքուստ բաժանեալ է 'ի չորս մասունս: Յարևելեան և 'ի հարաւային մասին են արքունի ապարանքն և բազմապտոյտ պողոտայք, ծովակք, և անտառք, և մեծամեծ հոյակապ սրահք· յորոց մին հաստատեալ կայր 'ի վր̅ 20 սեաւ մարմարինեայ մեծամեծ սեանց· այլև տունք ցրուեալք աստ անդ· և այլ ևս զմբեթայարկ շինուածք, և փոքրիկ աշտարակք: Ասեն թէ զայն ապարանս շինեաց միումն ճարտարապետ եւրոպացի· վս̅ զի ը̅ պատմելոյ ականատես վկայից՝ բզ̅մ զարդք և ձևք տեսանին 'ի նմ̅ ը̅ կանոնաց ճարտարապետութեան եւրոպացւոց, խառնեալ ը̅ հնդկայինս:

'Ի Ժմկս Թգ̅րացն մառատուրայ՝ էր տեղի կանանց և հարճից Թգ̅րին, և ներքինեաց նց̅· յորում հակառակն դրումսուլմանայինդէն, որ առաւել ք̅ զայլ վայելչացուցանէր զապարանսն զայնոսիկ, հաւասարապէս կանայս բնակեցուցանէր: Իսկ 'ի միւս կողմն ամրոցին է հոյակապ տաճար Ջգքաւատէն անուանեալ կոչ·

և առ նովաւ քանի մի սրահք. յորոց 'ի միումն է մեծաշէն կառք. յորում յաւուրս տօնից եդեալ զկուռս շրջեցուցանեն յաղթանակաւ : Իսկ տաճարն շուրջանակի պատեալ է երրեակ պարսպօք. և 'ի միջոցի իւրաքանչիւրոցն տնկեալ կան գեղեցիկ կարգաւ ծառք մեծամեծք: Չորս մեծամեծ աշտարակս ունի առ մուտս չորից դրանց իւրոց: Իսկ արտաքոյ ամրոցին յարևելից կուսէ՝ են այլ ևս մեծամեծ կառք յաղթութեան, որ շրջեցուցանելոյ նոքօք զկուռսն 'ի թափօր. որք այնչափ մեծ են, մինչև ըստ ասելոյ հնդկաց, հազարաւոր մարդկան պիտոյք են առ 'ի ձգել զնոսա : Յառաջագոյն էին անդէն և եկեղեցիք քրիստոնէից, յորոց հնագոյնն որ նուիրեալ էր Աստուածածնին՝ էր ընդ խնամակալութեամբ յիսուսեան կրօնաւորաց. բայց այն եկեղեցիք առհասարակ քանդեցան, յորժամ էառ զքաղաքն թագաւորն մայսուրայ. այլ յետոյ շինեցաւ այլ նոր եկեղեցի մի քրիստոնէից յարուարձանս քաղաքին :

Այս քաղաք կարի անշքացաւ յառաջին վայելչութենէն յետ պատերազմի թագաւորին մայսուրայ. և մանաւանդ զկնի փոխադրելոյ զաթոռն թագաւորութեան վերջին թագաւորաց նոցա 'ի Դրիչինաբալ: Յամին 1757 առին անգղիացիք զքաղաքս զայս, և ամրացուցին զնա յոյժ. բայց ոչ վասն յաճախութեան տուրևառութեան նոցա. զի կարի նուազ է անդ վաճառականութիւն. այլ զի զմեծ մասն պաստառաց՝ զոր գործեն 'ի սմին թագաւորութեան վասն ասիոյ և ափրիկոյ՝ տանին 'ի վաճառատեղիս հոլանտացւոց 'ի ծովեզերեայս անուանեալ Բէսքէրիա, կամ Չենարան, այլ սակս եկամտից երկրին որ կարի առաւել է. քան զծախս, զոր ստիպին առնել 'ի պահպանութեան տէրութեան իւրեանց :

Դրիչինաբալ: Էր և սա մայրաքաղաք. այլ դրեթէ զլխովին քանդեցաւ 'ի դժնդակ պատերազմաց յառաւել ներքսակողմն ցամաքին 'ի հիւսիսոյ մատուրայ առ քավերի գետով. որ երևելի է քան զայլ ամենայն գետս գարոմանտելոյ: 'Ի նմին ժամու առին անգղիացիք և զսա, և արարին զնա վաճառատեղի ամուր և շահաբեր առաւել քան զմատուրա քաղաքդ. վասն զի մարթ է զսա ասել բանալի գանձաւորայ, մայսուրայ, և մատուրայ. որք առհասարակ են ընդ տէրութեամբ անգղիացւոց : Պոնտիշերին, կամ Պուտուչերին : Քաղաք մերձ 'ի ծովեզերեայս թագաւորութեան մատուրայ. որ սովորաբար կոչի Չենարան. ըստ իտալացւոց Բէսսէնէլիա. որ 'ի ձեռս հոլանտացւոց : 'Ի հեռաստ երևի սա քաղաք մեծաշէն՝ զարդարեալ պատուական շինուածովք, այլ 'ի մեր֊

Ձենաւոն 'ի նա՝ ոչինչ ը̄հատ զատանի յայլոց անշուք և յոռի ք̄զղրացն հնդկաց։ Թէպէտ բազմամարդ է, զի իբրև 50000 բնակիչք են 'ի նմ̄ քրիստոնեայք և հեթանոսք։ Հոլանտացիքն շինեցին անդէն ամրոց։ 'Ի բոլոր ծովեզերեայս երկրերիս չիք նաւահանգիստ բաց 'ի նաւահանգստէ անտի դուդգուինայ։

Է. Երկիր Մարաւայ։

Երկիրն մարաւայ ձգի յարևելից մատուրայ. 'ի հիւսիսոյ սահմանակից է դանճաւուրայ։ Չիք անդ քաղաք երևելի, այլ միայն աւանք ինչ յորոց գլխաւորքն են.

Գիեոնը ։ Աւան յափն ծոցոյն մանարայ 'ի հարաւոյ։

Օրեյիւր ։ Աւան առ դրամբ գետոյն Մատուրայ, Է որ մտանէ 'ի ծով։

Ը. Թագաւորութիւն Տանճաւուրայ։

Այս տէրութիւն յարևմտից սահմանակից է մատուրայ. 'ի հիւսիսոյ՝ մայսուրայ. 'ի հարաւոյ՝ մարաւայ. իսկ յարևելից ունի իւր սահման զովկիանոս։ Երկայնութիւն նր̄ է իբրև 100 մղոն. իսկ լայնութիւն 80 և եթ. ուստի փոքր է յոյժ։ Երկիր նորա արգաւանդ է և բարեբեր ք̄ զայլ տ̄մ տեղիս գորոմանտելայ. զոր ոռոգանէ Քովերի գետն մեծ, որ բղխանէ 'ի մայսուրայ յետ 400 և առաւել ևս մղոն ընթանալոյ. և 'ի մտանելն 'ի նա, բաժանի 'ի բզ̄մ առուակս ը̄ սահմանս նր̄ ողջոյն, պահէ զնա յանհնարին ցամաքութէ, պատճառեալ 'ի բոցակէզ սաստկոյ ամառն, որ տևէ ը̄ մեծագոյն մասն տարւոյն։ Գլխաւոր բերք նր̄ են որիզ առատ յոյժ, և ազգի ազգի արմատք 'ի պէտս ներկարարաց. թող զայլ բազմապատիկ ձեռագործս։ Յառաջին ժամս տարեկան մուտք նր̄ հասանէր 91,090909 ոսկի վենետիկեան. բայց զկնի փոխանակելոյ զնա եւրոպացւոց, մանգ անգղիացւոց, որք զմասն ինչ նր̄ ը̄ տէրութբ̄ իւրեանց գրաւեցին, կարի նուազեցան մուտք նր̄. և թերևս առ սակաւ սակաւ տիրեսցեն նաև համօրէն տէրութն. ո̄պ տիրեցին այլոց տեղեաց։ Գլխաւոր տեղիք սորին տէրութն՝ են հետևեալքդ։

Թանճաւուր: Մայրաքաղաք համանուն Թագաւորութե՛ յարեւմտեան կողմն նր, առ Քաւէրի գետով: Յառաջին ժամս ոչ էր սա քղք, այլ լոկ տաճար կռոց · ապա եղեն և այլ բզմ փոքրիկ ամրոցք առ նորին տճրւն, որք յետոյ առ սակաւ սակաւ փոխեցան 'ի քղք: Կրկին պարիսպ ունի, ապա և դրեշինապաւ · բայց չէ բարեշէն երբէք զինորայն: Յերկու մասն է բաժանեալ · 'ի հիւսիս, և 'ի հարաւ · 'ի հիւսիսայինն մասին են ապարանք Թգրին, յորս չէք ինչ մեծաշինութի, բայց միայն քանի մի գեղեցիկ աշտարակք: Իսկ 'ի հարաւային մասին չէք նշանաւոր շինուած · բայց տաճար մի կռոց, որ չէ ինչ մեծաշէն:

Նեկըպատան · որ Թարգմանի Քղք օձից · այսպէս կոչեն զսա հնդիկք վս յաճախութե օձից՝ որք անդ գտանին: Յառաջագոյն էր սա ի իշխանութե փորթուգալաց · յորոց 'ի 1658 առին հոլանտացիք ձեռնտուութե Թագաւորին Թանճաւուրայ, և բազմացուցին զբնակիչս նր · մինչև առաւել քան երկոտասան գեօղս շինել · զորս և լցուցին ուստայնանկօք: Զայս տեսեալ Թագաւորին Թանճաւուրայ, եւ պատճառ բռնեալ հոլանտացւոց, կամելով վարել զնս անտի, այլ կորացուցի հզձ կորստեամբ բզմ զօրաց դարձաւ յետս: Յամին 1690 հոլանտացիք շինեցին անդէն ամրոց · և 'ի 1742 պատեցին զքղքն պարսպաւ, զոր պահեն մինչև ցայժմ:

Յայս քղք հաւաքին ամ՛ դասատուք ասխտանիք և գունաւորք և նկարէնք նրբամանութիւք և խաշորանութիւք · զոր ընկերութեն հոլանտացւոց ծախէ 'ի պէտս եւրոպայ: Քաղաքս լայն են, և տունքն մեծամեծք յորս ի սովորութե փորթուգալաց՝ են մեծամեծ սենեակք և լայնարձակ սրահք և այլ տեղիք զբօսանաց: Են անդէն և քանի մի եկեղեցիք · որոց մին է ուղղափառաց ի խնամակալութե Ֆրանչիսկեան կրօնաւորի միոյ: Բնակիչք նր բզմ են · որոց մեծագոյն մասն են քրիստոնեայք սերեալք 'ի նախնի փորթուգալաց · իսկ ոմանք հեթանոսք են հնդիկք · և պանեանցեղք, որք վաճառականութիւս առնեն անդէն ընդ հովանաւորութե հոլանտացւոց: 'Ի հիւսիսային կողմն քղքին է արուարձան, յորում բազմութի կռատանց գտանին · այլ առհասարակ չքեղք և աղքատաշէնք · և կուռք նց են զզուելի, և այլ խառնակերպ այլանդակ կերպարանք կուռակերպք: Փոքր մի հեռի է անտի եւս կռատուն՝ որ ունի քարաշէն աշտարակ,

զոր բնակիչք տեղւոյն առասպելեն թէ անձնի է
շինեալ·

Գարիքալ։ Քղք 'ի վրի միոյ 'ի բերանոց անուն Գուջամ գետոյն՝ որ է մի 'ի վտակաց Քաւերի մեծի գետոյն. Է որ մարթ է նաւել 'ի հիւսիսակողմն Նեկաբադանայ · չորք մզկիթք տաճկացն են 'ի նմա. և 14 կռատունք։ Բնակիչք նր են իբրև 15000 · որոց մեծագոյն մասն պարապի 'ի գործել թաշկինակս հասարակս, և պատուաւոր խոշորանիւթս առ 'ի պէտս բնակչաց։ Զայս Քղք 'ի 1738 ետ 'ի պարգեւ գաղղիացւոց Թգր ոմն որ անկեալ էր յաթոռոյ, և ընդ ամ տեղիս շրջէր խնդրել օգնութ · այլ իբրև յաջողեցան իրք նորա, և անդրէն նստաւ յաթոռ իւր, վերստին էառ զքղքն։ Այլ 'ի 1739 մի ոմն նապապ էառ զնա, և ետ 'ի պարգեւ գաղղիացւոց նախնի բարեկամաց իւրոց · իսկ 'ի 1760 անդրէն առին զնա անգղիացիք · այլ յետոյ 'ի 1765 վերստին առաւ գաղղիացւոց։ Շրջակայ գաւառ քղքիս թէպէտ փոքր է, այլ բազմամարդ է յոյժ · զի 15 աւանս ունի·
յորոց գլխաւորն է հեատադայդ։

Թանճաւուր, կմ Դինճաւուր։ Աւան 'ի [illegible] Գարիքալայ · Թիւ բնակչաց նր հասանէ ց25000։ Անդ գործեն և ներկեն ազգի ազգի պաստառս պարկայինս, թէպէտ ոչ այնչափ լինի ազնիւ վն պատ-
վրոյ և փոփոխակերպեան կղզեաց։

Դրանքեպար, կմ Դրանկամպար · զոր հնդիկք բնակիչք տեղւոյն անուանեն Դարանկանփատ որ թարգմանի · Քաղաք ալեաց ծովու։ Է Քղք Ը իշխանութ դանեաց · 'ի վրի միոյ 'ի բերանոյ անուն Քաւերի գետոյն Է որ մտանէ 'ի ծովն · պարսպաւոր · ունի և ամրոց բաւական 'ի պաշտպանել զքղքն և զծովեզերեայս նր։ Շրջակայ երկիր որ՝ դանիք գնոյ առին 'ի Թգրէն Դանճաւուրայ, յոյր սակս ամի ամի վճարեն 1500 ոսկի վենետկեան։ Այս երկիր թէպէտ փոքր է · զի բոլոր շրջապատ նորա է իբրև 6 մղոն եւեթ, սակայն արգաւանդ է յոյժ և բարեբեր և բազմամարդ · զի ունի բնակիչս իբրև 30000 · յորոց 12 հազար բնակին 'ի Դրանկեպար · և այլքն 12 հազար յ[illegible] արձակ աւանի միում, յորում են բազմապատիկ գործարանք խոշոր արուեստից։ Իսկ այլք բնակին յայլ փոքրիկ աւանս՝ որք գրեթէ առհասարակ
գործավարք են խոշորանիւթ պաստառաց։

'Ի սոսա 300 եւեթ են եւրոպացի դանիք · յորոց 150
զին-

զինուորք են կարգեալ 'ի պահպանութիւն երկրին, որոց թոշակ յամին հասանէ 98727 ոսկի. որ գրեթէ հաւասարի մտիցն՝ զոր դանեք առնուն յերկրէ անտի ։ Ուստի ոչինչ կամ սակաւ օգուտ բերէ նց՟. այնզի՝ և դրինկիպար մայրաքաղաքն նր՟ թէպէտ հին է և բազմամարդ, այլ կարի նուազ է տուրևառութիւն նր՟. զոր թէպէտ գաղղիացիք առ ժամ մի ծաղկեցուցին, մինչ առին զկողմանսն զայնոսիկ, այլ զկնի դաշնադրութեան՝ որ եղև յամին 1763. իբրև ելին անտի նք՟, վերստին անշքացաւ և նուաղեցաւ վաճառականութիւն դրինկիպարայ ։ Երեք եկեղեցիք քրիստոնէից գտանին 'ի սմին քղ՟քի. մի՝ վս՟ դանեաց լուտերականաց. երկ՟դ՝ վս՟ բուն բնակչաց դարձելոց 'ի լուտերականութիւն. զի դանեք առաքեցին անդր քարոզիչս, որք և թարգմանեցին զա՟ծաշունչ գիրս 'ի լեզու հնդկաց. և զբզ՟մս 'ի նց՟նէ դարձուցին յաղանդ լուտերանց. եր՟դ եկեղեցին է ուղղափառաց ։ Մահմետականք ևս ունին անդանօր մզկիթ մի. որպէս և կռապաշտք հինգ կռատունս ։

Է. ԱՅԼ ՔԱՂԱՔՔ 'Ի ԾՈՎԵԶԵՐԵԱՅՍ ԿՈՐՈՄԱՆԴԵԼԱՅ ։

ԳՈՒՏՏԵԼՈՒՐ, կմ՟ ԿՈՒՏԵԼՈՒՐ. կոչի ևս ՍԲ ԴԱՒԻԹ. որ է քղ՟ք 'ի համանուն իւրում գաւառի ։ Այս քաղաք՝ ոչ՟ և հեռագոյնք մինչև ցմիախառնելիքադամ, անկանին 'ի գառնադիկ նահանգի ը՟ սահմանացն զոր որոշեցաք նմ՟ անդէն. այլ մեք ոչ՟ ասացաք՝ եդաք 'ի գորոմանտել. զի յայս անուն կոչին այն ամ՟ կողմանք ծովեզերեայք ։ Երկայնութիւն քղ՟քիս ունի մղոնաւ չափ ձգի յափն ծովու. և իբրև չորս մղոնաւ 'ի ցամաքն. և է ը՟ տրութ՟ անգղիացւոց. զոր առին յումեմնէ իշխանէ հնդկաց, տալով 'ի գին նր՟ 67500 ոսկի վենետիկեան. յետոյ հաստատեցին զամրուն սյ՟ 'ի սմ՟ նաև մողոլք. որք սուղ ինչ զկնի արեցին զառնադայ ։ Բայց ապա տեսեալ անգղիացւոց՝ եթէ վաճառատեղին զոր գտին նք՟ անդ, իբրև 2 մղոնաւ չափ հեռի է 'ի ծովէն, և զմտաւ ածեալ թէ հնար էր խափան կմ՟ արգելք ինչ լինել օգնութեանց առաքելոց նց՟ ը՟ ծովն, իբրև ասպարէզ կմ՟ ամրաձիգ մի հեռի 'ի տեղւոջէ անտի, շինեցին ամրոց անուանեալ ՍԲ ԴԱՒԻԹ. մերձ 'ի բերան գետոյն. յափն ծովուն. որ կոչեցաւ և դուրդըլուր յանուն գետոյ ։ Այս կառուցան այլ ևս երկու դղեակք.

յորս ամենին նաև 'ի վաճառականելն անդ՝ գտանին իբրև 60000 ոգիք. որոց գործ է ներկել և նկարել պաստառս, որք գան յայլոց նահանգաց Հնդկաց. և շինել պատուճակսն և գեղեցիկ սպիտակս կամ պընակս. այն է Թասպախ:

Բոնդիշերի, կամ Բոնդիշերի: Քաղաք երևելի ծովեզերեայ քանի մի մղոնաւ հեռի 'ի Գուրդըլուրայ 'ի հիւսիսակողմն. որ յառաջագոյն էր աւան փոքր և աննշան, այլ յանցանել 'ի ձեռս գաղղիացւոց, 'ի սուղ ժամի եղև քաղաք մեծ, բազմամարդ հզօր և անուանի: Շրջապատ նորա իբրև 3 մղոն. պատեալ յերից կողմանց հողակերտ պատուարաւ, և խորայատակ խրամով. և ուրեք ուրեք ամրացուցեալ ամբարտակօք. և նաւակայան նորա պաշտպանեալ յարմարագիր ամուր մարտկոցօք: Փողոցք նորա ըստ առաւել մասին լայնանիստ և ուղղագիծ. ունելով աստի և անտի ծառս մեծամեծս վարսախիտս 'ի հովանի և 'ի զովացումն տապոյ արեգական: Շինուածք տանց նորա վայելչակերտք: Են 'ի նմա երկու եկեղեցիք քրիստոնէից, և առ նոքօք բնակարանք, մին յիսուսեանց, իսկ միւսն քափուչինաց. մի մզկիթ տաճկաց. և 2 կռատունք. այլ յամենայն շինուածս նորա նշանաւոր իմն էր խորհրդարան քաղաքին մեծաշէն և հոյակապ: Իսկ թիւ բնակչաց 'ի 1761 համարէր 960 հազար. յորոց 4 հազարք եւրոպացիք էին, կամ խառն 'ի հօրէ եւրոպացւոյ, և 'ի մօրէ հնդկացւոյ. 10 հազար և աւելի մահմետականք. իսկ մնացեալքն բուն հնդիկք. յորոց իբր 15 հազար քրիստոնեայք էին. իսկ 'ի մօտակայ շէնս, որք կախեալ կան զքաղաքէ աստի, գտանէին բնակիչք իբր 10 հազար: Յայսմ վիճակի էր քաղաքս 'ի 1761 յորժամ առին զնա անգղիացիք, և հիմնայատակ արարին, քանդել և զամենայն ամրութիւնս նորա, և վարել զբնակիչս առհասարակ: Այլ 'ի 1765 իբրև անդրէն կալան գաղղիացիք զքաղաքն, նոյն հետայն համագումն դիմեցին անդր հնդիկք, որք ցրուեալ էին, և սկսան շինել զաւերակս բնակութեան իւրեանց. ուր և 'ի սուղ ժամի այնչափ բազմացան, զի 'ի 1770 թիւ նոցա համարէր 927 հազար: Այլ 'ի 1778 'ի դըլդուիլ նորոգ պատերազմի գաղղիացւոց ընդ անգղիացիս 'ի պատճառս ազատամտութեան ամերիկացւոց, Հեքդոր Մունհր սպարապետ անգղիացւոց յանկարծ իմն երևեցաւ 'ի ծովեզր քաղաքին ծանր նաւահանգստիւ հանդերձ 10 հազար պատերազմականօք. որոց Պէլլըքօմպ կուսակալ գաղղիացւոց թէպէտ իմն քաջութեամբ և ընդ երկար դի-

մա

ճանապարհաց, այլ զի շրջապատ ամրութիւնք քաղաքին ըստ առաւել մասին չեւ եւս էին լրացեալ, յայն սակս՝ ի կատարածի ստիպեցաւ հաշտութիւն խօսիլ ընդ անգղիացիս. տալով նոցա զերկիրն հանդերձ պատերազմաւոր պայմանօք ։ Այլ յետոյ անդրէն դարձաւ ՚ի ձեռս գաղղիացւոց, որք եբր ՚ի 1785 սկսան շինել զպարիսպս նորա լաւ եւս քան զառաջինն. առ որ գործէին 2000 հնդիկք արք եւ կանայք, մի մի փանօ առեալ յաւուրն, որ առնէ եբր 11 փող օսմանեան. եւ ՚ի 1789. եւ 90 հասեալ մերձ ՚ի կատարումն, չգիտեմ յինչ պատճառս՝ թողլին զգործն կիսակատար ՚ի հիւսիսակողմն քաղաքին. արձակեցին եւ զ4000 զօրականս, զոր պահէին անդ ։ Մի մասն պարսպին առ խրամով ցորվայր հասանէ ջուր ծովուն քարաշէն. իսկ մնացեալն հողակերտ պատնէշար լայնարձակ. եւ ՚ի մէջ ճանապարհ զուարճալի՝ ունելով յերկուց կողմանց մաջար ծառս հովանաւորս կանաչազգեստս ընդ ամենայն ՚ի ներքս եւ ՚ի զբօսանս քաղաքացւոց ։ ՚Ի վերջին ժամս քահանայք ռամիկք ՚ի կարգէ յիսուեանց հիմնեցին անդ եւ ուսումնարան, ուր ուսուցանէին զզանազան ուսմունս եւ լեզուս. եւ յաճախեն անդ ուսանողք յայլեայլ տեղեաց, մինչեւ ՚ի մանիլայէ ։ Այս քաղաք թէպէտ չունի գլխաւոր նաւահանգիստ, որ եւ ոչ այլ քաղաքք որք են ՚ի ծովեզերս կորոմանտելայ, սակայն սա ՚ի մէջ այլոց ունի զայս առաւելութիւն, զի նաւակայան սորա պատշաճական է. ուր նաւք կարեն խարիսխ արկանել առ ցամաքաւ ընդ պաշտպանութեամբ ամրոցացն ։ Եւ եւս՝ ոչ սակաւ նշանաւոր է այսմ նաւակայանի առ ամփոփանդ առաջնորդութիւն նաւուց՝ ըմբռն մի բարձր եբր 100 ձողաչափ. որ երեւի ՚ի 21 կամ 24 մղոնաչափ հեռաւորութենէ ։

Մելափուռ. Միլափուռ, կամ Մելափոռ. կոչի եւ Մէլիափոռ ։ Գիւղ ծովեզերեայ երեք մղոն ժամու հեռի ՚ի մատրասու կիսաւերակ ։ Յառաջագոյն ՚ի ժամանակս տէրութեան փորդուգալաց էր քաղաք բարեշէն, ունէր տունս, եւ այլ զանազան շինուածս քարաշէնս. բայց ապա յաղթութեամբ հոլանտացւոց զմեծ մասն կործանեցին նոքա՝ զոր ունէին ՚ի կողմանս յանուխն, ինքնակամ լքին զայս տեղի ՚ի ձեռս սուպանապատին, կամ թէ բլին հէյտարապատայ. յետոյ առին զնա գաղղիացիք ՚ի նաւապատէն. այլ ՚ի վախճանի անկաւ ՚ի ձեռս անգղիացւոց ։ Էր անդ եւ եկեղեցի մի մեծ յանուն սրբոյն թովմայի. յորում ամփո-

ըևա

բնակիչքն թէ պահի գեղարդն՝ որով խոցեցին զկող առաքելոյն Թովմասու. յանուն այսր եկեղեցւոյ, Միլափուռ՝ կոչի բզմ անգամ 'ի բնակչաց Սէն Թովմաս։ Անդ է և եպսարան լատինացւոց՝ որոյ թեմ ձգի մինչև ցպանկալա։ Պիչինգ գեղափոռ, և գ՟ղն Թովմաս, զի՟ն ք՟ղքս համարի 'ի բանից վանատեահայրն ճ՟նպհորդին, որ երբև զայլ և այլ ակեղխս ցուցանէ զն՟ 'ի պատմութեան իւրում. այլ ն՟ր Թովմաս է 'ի յարուարձանին Միլափուռայ, և մի համարի 'ի բնակչաց. զի ո՟չ պատմէն, յո՟րջագոյն միացեալ էր ը՟ ն՟մ. վ՟ն զի 'ի Միլափուռայ մինչև ցեկեղեցին ս՟րբ առաքելոյն՝ կային տունք. որք այժմ քանդեցան. ո՟չ նաև 'ի նոյն իսկ Միլափուռ բզմ տունք աստ և անդ կործանեցան, որով մնացեալքն ցրիւ եղեն բ՟այսոս 'ի մեհեանց. ուստի և եպ՟ն որ նստի 'ի ս՟րբ Թովմաս, ո՟չ կոչի եպս ս՟րյն Թովմայի՝ նոյնպէս և եպս Միլափուռայ. այն զի նոյն ճ՟նպհորդ՝ անջատէ 'ի Միլափուռայ ոչ այնչափ զայս եկեղեցի, ք՟ թէ զմիւս եկեղեցին ս՟րյն Թովմայի՝ որ է 'ի վ՟ր լերին. զորմէ տես 'ի հետադայդ։

Լերինն ս՟րյն Թովմայի։ Են երկու բլրաձև լերինք, մին մեծ, և միւսն փոքր. իբրև 2 ժամու հեռի 'ի Մադրասու. յորս գոն և երկու եկեղեցիք յանուն ս՟րյն Թովմայի։ Մօտակայ լեառն մադրասու է ժամ հեռի 'ի ն՟մ 6 և կէս անգղիական մղոնաւ, և 'ի գլուխ նորա սպարապալատ մենաստան ուր երբեմն բնակէին յիսուանք. առ եկեղեցեաւ մենաստանիս՝ է այր ճգնութեան ս՟րյն Թովմայի ը՟ առանձնելոյ բնակչաց, և խորան 'ի ն՟մ. և 'ի մենաստանի բղխէ ջուր յապառաժ վիմէ, յորոյ վ՟ր է և մատուռն. ք՟զի աղօթիւք ս՟րյն բղխեալ ասեն զայս ջուր, յորմէ առնուն աստ և անդ 'ի բժշկութիւն հիւանդաց, ոչ միայն քրիստոնեայք, այլև կռապաշտք. արտաքոյ մենաստանին ցուցանեն և զայլ տեղի աղօթից ս՟րյ առաքելոյն։

Առընթեր ժայռիս է գիւղ 'ի տափարակի կոչեցեալ Մաջլան. որոյ բնակիչք են կռապաշտ հնդիկ, որ [illegible]. երևելին աստէն աւերակք բազումք, զի յառաջագոյն կային բզմ տունք փորթուգալաց և հայոց. որք և ունէին պարտէզս և կալուածս, այլ այժմ քանդեցան.(ո՟չ նաև եկեղեցիք աստ և անդ,) 'ի պատճառս պատերազմաց և ապստամբելոյ մարաթայից։ Ընդ մէջ ժայռին և մատրան գեղջն՝ է գետակ որ 'ի ժամս անձրևաց առատանայ ամէ.

կոյժ. 'ի վ͞ր գետակիս մեծ իշխանն յաղագս հայոց պետրոս ուկանեան շինեաց քարաշէն կամուրջ մեծակառոյց բազմակամար 'ի գիւղուն անցաւորաց, յոր ասի թէ ծախեաց 30 հզր հուն, որ է ոսկի մադրասու և մօղոլաց. (մի հուն առնէ 4 ղ͞ռշ. և իբր 10 փ͞րկ.) և 'ի նորոգումն կամրջին հաստատեաց եկամուտ տուեա͞լ 'ի ձեռս անգղիացւոց:

իսկ միւս մեծ լեառն հեռի է 'ի մադրասու 9 անգղիական մղոնաւ. իսկ 'ի մեծ լեռնէն կէս փարսախաւ, ո͞պ դնէ հայրն դաշար 'ի թուղթն իւր. գրեա͞լ 'ի 1711. ուր և յիշատակէ զհայս : 'ի գագաթան ն͞ր է պարսպապատ եկեղեցի օրորոցաձև, ուր աւանդեն նահատակեա͞լ ս͞րյն թովմայի. և առ նովաւ բնակարան փոքր օգոստինեան կրօնաւորաց. զայս եկեղեցի նորոգեաց ջուղայեցի ոմն յաղագս հայոց. և նդ մակագրութն հայկական 'ի հիւսիսակողմն եկեղեցւոյն արտաքուստ, 'ի յիշատակ նորոգութե͞ն, որ և կայ թաղեա͞լ 'ի նմին եկեղեցւոջ հայկական տապանագիր ունելով 'ի վերայ: 'ի նմին եկեղեցւոջ է հրաշագործ պատկեր ս͞րյ ա͞ծածնին և խաչ փորագրեալ 'ի վէմ. զոր ս͞րյն թովմայի ասեն քանդակեալ. այս պատկեր և խաչ յամին իբրև 1556 գտաւ ը͞ երկրաւ 'ի բրելն զերկիր առ 'ի կառուցանել զեկեղեցի յանուն ս͞րյն թովմայի. երկայնութ͞ն խաչին է 4 ոտնաչափ. իսկ լայնութիւն 3. շուրջանակի զխաչիւն կամարաձև գրեա͞լ կան 36 տառք բայց ը͞ օրինակի հին գրուածոց հնդկաց. փորձուքալք ցուցեա͞լ երկուց հմտագոյն պրամանի քրմաց, երկոքին ևս միաբան այսպէս ընթերցան առանց ինչ դիտելոյ միոյն զմիւսոյն. թովմաս, այր ա͞յ. առաքեալ յորդւոյն ա͞յ, քարոզեաց զճշմարիտ հաւատս 'ի թ͞գրութեն սակամու. ուր գործեաց մեծամեծ սքանչելիս. և 'ի վախճանի ծունր եդեա͞լ 'ի վ͞ր այսր վիմի, 'ի միոյ 'ի պրամանից սերդաւ խոցեալ սպանաւ:

'ի ստորոտէ այսր լերին մինչ 'ի գլուխն անդ ուր կառուցեա͞լ կայ եկեղեցին, նախագրեա͞լ պետրոս ուկանեան՝ յամի ՟տ՟ն 1726 անբաւ ծախիւք եւ շինեա͞լ 160 քարաշէն աստիճանս սանդխոյ. ձ͞նմ͞հ աստիճանացն է շրջապատեալ. ը͞ մէջ քանի մի աստիճանաց շինեալ մի ղինի միոյ զառ 'ի վեր սալայատակ յաղեւայ. յերկուց կողմանց աստիճանացն որմ խոնարհ. և նստարան առ որմով. ունի և դուռն կամարակապ, և 'ի վ͞ր կամարին գրեա͞լ կայ հայկական գրով.

գրով յիշատակ շինուածն. եթող նա և եկամուտս 'ի ձեռս եպսին մշտափոխութեայ 'ի բեկեալ այսր ճանապարհի։ Միանգամ' յամին լինի անդ տասնօրեայ տօնավաճառ մեծ. ուր ժողովին երբեմն 15 հզր ուխտաւորք յամ' ազգաց և 'ի կռապաշտից. որք գնեն անդր 'ի բժշկութի և 'ի յուխտ նոյն կուռին, Թէպէտ և են միահաւասա։ Առ ստորոտով այսր լերին` է աւան Մանդ կոչեցեալ, որ է` լեառն, որ յառաջագոյն էր գեղեկայլին 'ի նմ երեք մասունք` յորոց վերջինն առն անդրանկացիք, և յայլ պէսս կարգեցին. իսկ զերկուսն յորում` կայ արձան աստուածոյն` ոչ մտանեն ուղղափառք. զայս արձան 'ի Ճեք̃ղում աւուր վերոգրեալ տօնավաճառին ազգն Թովմայեանց բռ̃ Չերմեանեգուլի և մեծահանդէս Թափօրիւ, ջահիւք հրավառուք և նուագօք բարձեալ տանէին 'ի գլուխ լերին 'ի վերոգրեալ եկեղեցին. և ձգի յառաջագոյն նախ յերկուս մասունս տանէին, և ապա 'ի լեառն հանէին, այժմ եւս 'ի յիշատակ այնր` անդրանկացիքն առաջի նոյն մատրանց, և այնպէս չուրջ ածեալ տանին յեկեղեցի լերինն. իսկ 'ի յետագայ աւուրն նովին հանդիսիւ դարձուցանեն 'ի նոյն մատուռն։ Յայսմ աւանի են և քանի ինչ տունք հայոց։

Ազգ Թովմայեան` կոչեցեալ մի հնդկաց, որք ըստ աւանդութեց քարոզութ̃ նոյն առաքելոյն Թովմայի դարձան 'ի Քս. յորոց կան մնան մինչև ցայժմ և պահեն տակաւին զնշանս ինչ քրիստոնէութե, բայց ընդ մ' հեթանոսական սնոտիապաշտութ̃ խառնեալ. զորս հարցաքննելով ծանեաւ զառաքելի ճգնութե և նահատակութ̃ նոյն առաքելոյն, զորս պատմեցաք։ Այլ 'ի ծանօթութիւս Ծագրութ̃ պիչինկայ իբր առասպելական իմն մերժի քարոզութ̃ նոյն Թովմայի անդէն. իսկ նախագրեալ աւանդութիւնք ընծայեն (Թէպէտ Ը կարծեօք) ժողովրդեան ինչ հայոց. որք 'ի Ը կմ Թ դարուն գնացեալ անդր, արկին սակ զարմանայոյ աւանդութեանց։ Այլ ոչ է տեղւոյս զայսմանէ յաղախնդիր լինել։

Մադրաս. առ. հնդիկս կոչի և ս Չենաբադնամ, կմ Չէնաբադնամ։ Է քղք շինեալ գուլէխմաթի ոլորանի լաւապարսպեայ, առաւել 'ի հարիւր ամօք յառաջ 'ի ներքին արգասեաց յափն ծովու 'ի դաշտավայրի. որ և բարգաւաճեալ յաճախեցաւ բնակչօք և ընդարձակեցաւ յաւելեալ մեծ նշանաւ, կմ նորն Թովմայի։ Ունի բերդ ամուր, զոր երբեմն առին գաղղիացիք յանգղիացւոց անտի, դարձեալ որք էին առ. բերդամն` առհասարակ քանդեցին, առ 'ի բառնալ հրապարակ առաջի բերդին 'ի դիւրութիւն պատերազմի · յորս կայր և եկեղեցի մի հայոց՝ զոր նոյնպէս քանդեցին · իսկ ապա յորժամ դ̃ձլ առին անգղիացիք, կրկին պարսպաամրացուցին: Ունի Մատրաս և երկու արուարձանս հեռի 'ի միմեանց, յորոց 'ի միումն բնակին քրիստոնեայք և տաճիկք · իսկ 'ի միւսումն կռապաշտք:

Արտաքոյ արուարձանիս այս 'ի ծովէ անտի սկսեալ մինչև մերձ 'ի բերդն՝ շուրջանակի պատէ պարիսպ մի խոնարհ՝ ձգեալ է երկայն յոյժ · առ 'ի դէմ ունել արշաւանաց մարաթայից հեծելազօրաց որք ստէպ յարձակին անդ: Բնակիչք նորա բաց յայլ եկամտից ազգաց, են իբրև 250 հզ̃ր, ծնեալք դրեթէ ամենքն 'ի հնդիկս · 'ի սոցանէ 15000 են արհեստաւորք՝ որոց գործ է նկարել, և ծաղկազարդ յօրինել պատուականն պաստառս, այլև հ̃րկ կտաւս բ̃մ յոյժ առ 'ի պէտս ծովեզերեայ կողմանց ասիոյ · մ̃նդ բնակչաց փիլիպպեան կղզեաց: Եւ իբրև 40000 պարապին 'ի գործել և 'ի վաճառել զանկյան ակն, և ապակեայ ակունս, առ 'ի զարդ կանանցն հնդկաց այնր կողման: Այլ կտաւագործք կարի սակաւ են: Իսկ մնացեալքն կէս մի վաճառականք են, և կէս մի յայլ պէսպէս գործս զբաղեալք: Ունի և է առ մի յառաւել բազմամարդ փարթամ և 'ի բարգաւաճ քաղաքացն հնդկաց · որ և կայ մնայ 'ի ձեռս անգղիացւոց · և թէպէտ մարաթայք բ̃մ անգամ յարձակեցան 'ի վ̃ր · նա և հէտէրնաէգ կամ հէյտարալի խանն, որ յամին 1769 պաշարեաց զՄատրաս 'ի ժամին, մինչ զօրք անգղիացւոց երթեալ էին յայլ կողմն ընդդէմ այլոց ապստամբաց մարաթայից, այլ անգղիացիք բ̃մ կաշառս տուեալ նմ̃, ազատեցին զք̃ղքն:

Ունին անդէն անգղիացիք պահապան զօրս 2500 · յորոց հազարն եւրոպացիք են · և ամի ամի հատուցանեն 10910 ոսկի վճռեալ 'ի մաքսից, 'ի հարկաց, և 'ի շահից վաճառականութե: Ուղղափառ հայք չունին անդէն եկեղեցի · զի զմեծագոյն եկեղեցին նց՝ որ կայր 'ի մէջ բերդին՝ քանդեցին անգղիացիք · և զեկեղեցին որ էր յարուարձանս անդ կարգեցին անկելանոց հիւանդաց · որոյ վ̃ս տան նց ամս յամենայ վարձս 15 ոսկի մատրասու · այժմ 'ի միում փոքրիկ եկեղեցւոջ կատարեն զժամայսն պաշտասմունս, որ է արտաքոյ ջըղքին ը̃ խնամակալութ քափուչին կրօնաւորաց:

Այլ մեծ մասն բնակչաց են մողոլք կռապաշտք, որք ունին մեհեանս բ̃մս· յորոց զմին ջըղե քանդեցին անգղիացիք սակս մօտ գոլոյ 'ի բերդն, փոխ ն̃ր շինեցին այլ մեհեան ծախիւք իւրեանց· զառաջին վէմն հիման եդ նոյն ինքն քաղաքապետն անգղիացի· և ը̃ նմին ոսկի մի մեծ յոյժ 'ի տիպ անգղիացւոց· և մուտս ևս սահմանեցին մեհենին: Ջերմագոյն են 'ի հեթանոսական աղանդս ք̃ զբնակիչս այլոց տեղեաց· ոչ թողուն օտար ազգաց մտանել 'ի մեհեանս իւրեանց՝ ո̃պ թողուն այլուր· և եթէ ոք մտցէ, պարտ է տուժել ոսկի հինգ· մինչև դատաւորն անգղիացւոց 'ի մտանելն 'ի մեծագին մեհեան ձնկունատ ելին ն̃ր, առ 'ի երդմնեցուցանել զոք ը̃ս սովորութե տեղւոյն, պարտ է նախ տալ ոսկիս հինգ, և ապա մտանել:

Են անդ և յազգէս հայոց իբրև 20 կմ̃ 25 տուն, որք բնակեն 'ի միում թաղի· պարապեալ̃ առհ̃րկ 'ի գործ վաճառականութե̃· ունին և եկեղեցի կից եկեղեցւոյն լատինացւոց, որ այժմ է հիւանդանոց ո̃պ ասացաք 'ի վերոյ· թէպէտ 'ի սկզբան անդ առին և զեկեղեցին հայոց 'ի բնակութի̃ հիւանդաց· այլ յետ ժմկաց ինչ անդրէն դարձուցին: Յայսքաղաք պայծառացաւ յանցեալ̃ դարու մեծ իշխանն և վաճառականն յազգէս հայոց, կոչեցեալ̃ պետրոս ուսկանեան, բարեհամբաւ յոյժ ազգս, և մի 'ի խորհրդակցաց խմբի ընկերութե̃ անգղիացւոց որ 'ի մադրաս· այր արդարակորով, բարեպէր, և խոնարհամիտ:

'Ի գալ Թ̃գրին 'ի մադրաս, նա ինքն հիւրընկալեաց զնա զաւուրս ինչ մեծապայծառ փառօք, մինչև կերպասիւք զարդարել զամ̃ կողմանս փողոցին և զըտակս ը̃ որ ունէր անցանել· 'ի յանձնել նմ̃ թագաւորին փոխարէն այսքան մեծարանաց խնդրել ինչ յինքենէ, նա խնդրեաց ունել և վաճառել զամ̃ վաճառս որք արտաքուստ գան յայն ջըղք, և անմաքս անցանելն 'ի ներքին սահմանս հնդկաց· զոր ընկալեալ յարքայէն ստացաւ գանձս անբաւս:

Յորժամ գաղղիացիք առեալ̃ զմադրաս 'ի ձեռաց անգղիացւոց, քանդեցին զամ̃ շինուածս՝ որք էին առ բերդաւ, երեսուն և երեք տուն էին ն̃ր անդէն, զորս ընդ այլսն առհ̃րկ կործանեցին, բայց յայլ տանց զոր ունէր 'ի բերդին անդ և զստացուածս և զգանձսն՝ որչափ ինչ կայր 'ի մատրանս, առեալ զնոյն տարան 'ի Բունդիշէրի ք՟ղք իւրեանց: Իսկ սպարապետ ն՟ց պատգամ յղեաց առ նա որ կայր փախուցեալ 'ի քաղաքն Դանեաց մերձ առ Մատրաս, գալ մատնել ը՟ տէրութե՟ Անգղիացւոց, և ժառանգել զամ՟ զստացուածս իւր, սպառնացեալ յարքունիս գրաւել զնոյն 'ի չանսալն: Ապա ն՟ր ը՟ վէհ և գեղեցիկ աւագութե՟ անձինն՝ իմաստութե՟ պ՟խնի արարեալ ասաց. Վ՟ զի զոր ունիմս այսչափ ճոխութե՟ ընչից՝ յԱնգղիացւոց տէրութե՟ ստացեալ ունիմ, 'ի նոյ՟ տէրութե՟ կամիմ մնալ հպատակ հաւատարիմ. այլ զստացուածսդ իմ զայդոսիկ, թէ հաճոյ թուին ձեզ բանքս, առէք ողորմութե՟ կարօտելոց. զի ոչ կարծեմ զԴանիացւոցդ գերահամբաւ արքունիս, կարօտիլ իմոց դուզնաքեայ ստացուածոց իբր 'ի լրումն ինչ թերութե՟ գանձուց: Սա 'ի մահու իւրում զանբաւ ինչս և զընծայս եթող կտակաւ ամ՟ երևելի ուխտատեղեաց այլևայլ ազգաց. և գտաւ յետ մահու ն՟ր բազմայայլոց ստացուածոց եօթն հարիւր. հազար ռուփի դրամ:

'Ի ծովեզերեայս Մատրասու՝ ալիք ովկիանոսի զարհուրելի լինին երևին. զի ցերկու գրկաչափ և աւաւել բարձրացեալ 'ի հեռուստ իբրև պարիսպ, ուժգին դղրդմամբ և անհնարին բռնութե՟ դիմեալ երիցս անգամ հարկանին մի զկնի միոյ ը՟ ցամաքն, ը՟ որ անհնարին էր նաւորդաց մերձենալ և ելանել 'ի ցամաք: Ապա ճարտարութե՟ բնակչաց եգիտ հնարս հանելոյ զն՟ 'ի ցամաք. զի շինեն անդէն նաւակ ամենևին [illegible] բևեռաց, այլ լոկ չուանաւ կից յարեալ կար[illegible]նդէն զտախտակսն, ոպ՟ զի 'ի հարկանել բռնութե՟ ալեաց 'ի ծանծաղ ծովայատակին մերձ յափն կոյս, տեղի տուեալ ուժգնութե՟, մի խորտակեսցին. և 'ի լինել նաւակին մօտ 'ի ցամաք, կան անդէն 'ի ծովափին արք քաջավարժք պատրաստականք 'ի ն՟ր Թովմայեան ազգէն, որք չուան ընկեցեալ 'ի նաւակն, ձգեն և պինդ ունին զնա. ոպ՟ զի 'ի դառնալն յետս բռնութե՟ ալեաց, մի ընկղմեսցի ը՟ նմա և նաւակն, և վտանգեսցի: Եւ այնպէս սակաւ առ սակաւ հազիւ ուրեմն և բազ՟ աշխատութե՟ մերձեցուցանեն 'ի ցամաքն:

Բուլիքատ : Է կալուած և ամրոց Հոլանտացւոց 'ի ծովեզերս 'ի հիւսիսակողմն Մատրասու, կոչեցեալ [illegible] [illegible]:

Մասուլիբաթամ, կամ Մասուլիպատամ: Էր սա յառաջն գեօղ անշքան, յոր ձկնորսք և եթ բնակէին, այլ այժմ 'ի պատճառս վաճառականութե՛ եղև քաղաք երևելի սա. ընդ բերանով Քիստնա կամ Քրիշնա գետոյն որ անկ-մտանէ 'ի ծովն, ունի և է ծովեզերեայս. որպէս անուանն իսկ յայտ առնէ. զի Բաթան. Բաթամ, կամ Բաթնամ, 'ի լեզու Հնդկաց նշանակէ քաղաք ծովեզերեայ: Էր սա տեղի յարմարական յոյժ վաճառականութե, որում 'ի 1749 տիրեցին Գաղղիացիք. այլ 'ի 1759 հանին զնա անտի Անգղիացիք, և ինքեանք տիրեցին: Այլ այժմ ոչ ևս է այնպէս ծաղկեալ և բարգաւաճ, որպ զոլին զնա Եւրոպացիք, յորժամ զառաջինն հասին 'ի Հնդիկս: Զի բայց 'ի սակաւուց և նկարէն պատասուաց, այլ ինչ արուեստական ոչ գործի անդէն. և թէպէտ աղիւ են պատուանք, բայց ոչ այնչափ յաճախութբ վաճառուին: Անգղիացիք ունին այժմ զմեծս զոյս երբև վաճառատեղի՝ յորում յաւէտ գնեն յայլոց, քան թէ վաճառեն. բայց 'ի ձեռն կարաւանաց՝ որք 'ի հեռաւոր տեղեաց գան անդր բառնալ զաղ, և 'ի ձեռն վաճառակից ընկերաց, զոր ունին 'ի ներքս 'ի ցամաքին, մուծին զգործածութե կտաւոց իւրեանց՝ 'ի ներքին և 'ի խորին կողմանս սուպայութեն Հէյտարապատայ և մանաւանդ ալքանայ, յոր յաւելէ և զաղն և ընմպաս՝ ամի ամի հանեն անտի 120000 ոսկի վէնեկեան, յորմէ 54545 ծախեն 'ի տեղւոջ իսկ:

Գոնտափալլիր: Էր գաւառ զոր 'ի 1767 առացին Անգղիացիք 'ի Նիզամալեայ նհ սուբայ նապապի Հէյտարապատայ: Մայրաքաղաք նր կոչի Գանտապալլիր, կամ Գոնտափալլիր. ոչինչ կարի հեռի 'ի Քիստնայ, կամ 'ի Քրիշնայ գետոյն 'ի հարաւոյ: Են այլ ևս տեղիք 'ի սմին գաւառի. որպ Բէնտէբոլէ. Մէալէբէլէ. ծովեզերեայք. և Հոսսինքոնտայ 'ի խորին կողմն ցամաքին:

Մոնտրաչոնսէր: Գաւառ զոր նոյնպէս առացին Անգղիացիք 'ի նոյն ամին 1767. և ունի իւր մայրաքաղաք զՄոնտրաչոն. որ է առ բերանով կանիայ կամ կնիայ գետոյն՝ 'ի հիւսիսոյ Մասուլիբաթամայ, և է տեղի անշքան:

Վիզակէբաթան. Վիզակաբաթան, կամ Վիզանքաբաթնամ: Քաղաք փոքր ծովեզերեայ որպ անուանն իսկ յայտ առնէ (զի նշանակէ վերագոյնդ) է տէրութե Անգղիացւոց. թիւ բնակչաց նորա հասանէ 94000. յառաւ վաճառականութե պատասուաց կարի բարգաւաճ է և ծաղկեալ:

Պիմլիպատնամ· կամ Պիմլիպատամ: Աւան ծովեզերեայ 'ի հիւսիսակողմն Վիզակապատամոյ, և մօտ առ նա· յառաջագոյն էր սա ընդ տէրութեամբ անգղիացւոց· այլ այժմ 'ի ձեռս հոլանտացւոց:

Են 'ի կողմանս յայսոսիկ այլեւս գաւառք· որպէս Ելուր· Մաչիլիպընտըր, կամ Մասուլիպընտըր· ուր դաղղիացիք ունին մեծական վաճառատեղի կոչեցեալ Եանան· որ յառաջագոյն ծաղկեալ էր, այլ այժմ ոչ նոյնպէս:

Ցիքաքօլա, կամ Չիքաքօլա: Աւան 'ի մէջ փոքրիկ գետոյ առ սահմանօք սուպայութեան Օրիսայ· զոր 'ի 1767 ամսեան անգղիացիք 'ի նապապէն Հէյտարապատայ:

Յօդ ԺԷ. Կղզիք առ Դեքան աշխարհաւ, կամ առ ցամաքակղզեաւն, որ յայսկոյս Գանգէսի:

Սէյլան, կամ Սիլէան, կամ Ցէյլան· 'ի բնակչաց կոչեցեալ Լանքաւա· իսկ 'ի նախնեաց ըստ ոմանց Տապրոբանէ: Է յարեւելեան կողմն հարաւային ծայրի ցամաքակղզւոյն մողոլաց, կամ Դեքանու, ծովին ընդ մէջ ծովին հնդկաց առ Կոմորինաւ, որ հանէ յայլ բազմագանձ Ծովն հնդկաց: Ամենայն եկեալք յեւրոպիոյ յարաբիոյ և 'ի պարսկէց, հարկաւ անդ ունին խարիսխ արկանել· մանաւանդ զի ունի նաւահանգիստս բարեպատեհս, յորս ըստ այլեւայլ եղանակաց տարւոյն ամենայն կարեն մտանել և ելանել ընդ ամ ողջոյն: Երկայնութիւն նորա 'ի հիւսիսոյ ընդ հարաւ իբրեւ 270 մղոն· իսկ լայնութիւն յարեւելից յարեւմուտս իբրեւ 200: Այս կղզի անջատեալ է 'ի ցամաքէն նեղ և սակաւաջուր նեղուցաւ· յորում գտանին սփռեալ աստ և անդ աւազակոյտք, փոքրիկ կղզեակք, և ժայռք· որք բացայայտ ցուցանեն, թէ երբեմն կցեալ էր ընդ ցամաքն յայնմ կողմանէ· յորմէ գուցէ անջատեցաւ 'ի ձեռն բուռն տեղատուութեան և մակընթացութեան ծովուն, որ կարի սաստիկ և սրընթաց է անդէն:

Յայս կղզի ըստ ստուգագոյն աւանդութեան բնակչաց սկսեալ 2000 ամօք յառաջ քան զգալուստն Քրիստոսի, մինչեւ 1100 ամն, և առաւել զկնի ծննդեան նորա տիրեցին միանգամայն 16 թագաւորք, կամ լաւ եւս ասել կասակալք · որք յետոյ միացան 'ի միապետութիւն յամի 1135 'ի ձեռն վիմելայ ուրումն · որ եղև միապետ 'ի վերայ համօրէն 16 դաւառացն: Եւ այս եղանակ կառավարութե̅ եկաց մնաց մինչև ց1505 · յորում 'ի մեռանել Թէզրի կղզւոյս, միապետութիւն նր̅ բաժանեցաւ յերիս կուսակալութիւնս ը̅ երից որդւոց նորա· յորմէ դրդուեցան պտզմունք, որք հանապազորդեցին նաև զկնի մահու նց̅ 'ի պտճս փառասիրութե̅ և թշնամութե̅ յաջորդաց նց̅: Յայս վիճակ և յայսպիսի ծուփս ալեկոծութե̅ կայր կղզին ողջոյն, յորժամ հասին անդր փորդուգալք: Սոքա զառաջինն ելին յայն կողմն կղզւոյն, որ կոչի Կոտտա · յորում առ նովին ժամօք տիրէին երեք իշխանք, Թոռունք Թէզրին · որ մեռաւ նախ քն̅ զժամանել անդր եւրոպացւոց · և էր 'ի մէջ նց̅ հնազորդ խռովութիւն և պտզմ · յորում ը̅ սովորութե̅ եւրոպացւոց փութով տողոսկեալ մտին և փորդուգալք, է՛ զի սմ̅, և է՛ զի նմա Թիկունս լեալ:

Եւ այսպէս 'ի սուղ ժմկի նենգութբ̅ և բռնութբ̅ բարձին 'ի միջոյ զիշխանս, որք տիրէին 'ի կողմա, և յայլ կողմանս կղզւոյն · այլ ապրեցուցին զորդիս նց̅, և զբազումս 'ի նց̅ մկրտեցին · կամելով նովին հնարիւ առնուլ զտէրութի 'ի վր̅ համօրէն կղզւոյն, և պատուհական արդասեաց նոցա: Վնյ և զկնի սակաւուց եղեն 'ի կղզի անդր չորք իշխանք քրիստոնեայք, բնիկ ալեանացիք · անուանեալք յովհաննէս, փիլիպպոս, յովհաննէս աւագրեան, և միուոնիոն · որք վարէին զԹգրական իշխանութե̅, բայց ը̅ բռնակալութբ̅ փորդուգալաց: Ընդ այսպիսի պատճառաւ կարծէին փորդուգալք ունել 'ի ձեռին զնմ̅ · այլ՝ յովհաննէս աւագրեան դժկամակեալ ը̅ այնպիսի գերութե̅, խոյս ետ 'ի խորին կողմն կղզւոյն և զօրաժողով լեալ 'ի համազգեաց անտի լուբոց· եհան տարագրեաց զփորդուգալս 'ի հայրենեաց լուբոց, և եղև տր̅ ինքնակալ միոյ երևելի մասին կղզւոյն · և Թէպէտ փորդուգալք յարուցին 'ի վերայ նր̅ զօրս 'ի զօրաւոր իշխանաց անտի կղզւոյն՝ այլ մերժեցան 'ի յուսոյ · վն̅ զի սա յաղթեաց և նմա: Ապա կաշառաբեկ արարին զառաջին իշխան նորա, որ յետոյ գրաւեաց զանուն Թգ̅րութե̅ ձեռնասունն նց̅, յորմէ պարտեալ յովհաննէս որ անուանեցաւ Սօերիա առաքեալն, խոյս ետ 'ի լերինս: Իսկ նոինքն իշխանն անուանեալ Դավիէր պանդար ակնունէր Թէ զինքն ունին Թգ̅րկ ցուցանել 'ի սեպհ տն̅

իւ

խերոյ· այլ՝ նոքա փոխանակ նորա թագաւորեցուցին զդուստր միոյ յիշխանաց անտի Կոդդայի՝ անուանեալ Տիկին կատարինէ, յառաջագոյն լեալ քրիստոնեայ : Ընդ որ ցասուցեալ պանտարայ, գնաց միաբանեցաւ ընդ ան Խերոմ յովհաննու, և բազում վնասս հասոյց փորդուգալաց: Յետ մեռանելոյ յովհաննու յաջորդեաց որդի նորա, որ եառ 'ի կնութիւն զտիկինն կատարինէ : Առ որոյ տէրութեամբ իշխանութիւն փորդուգալաց օրըստօրէ սկսաւ նուազիլ :

Առ նովին ժամօք, թէպէտ՝ 'ի սկիզբն ժէ դարուն հասին անդր և հոլանտացիք, որոց յառաջագոյն ոչ երբէք ճանապարհորդեալ էր յայն ծով: Իսկ իշխանք կղզւոյս ծանուցեալ զթշնամութիւն նոցա ընդ փորդուգալս, աճապարեցին և միաբանեցան ընդ նոսա· այլ դուլն պատերազմի, կամ դաշնադրութեան խաղաղութեան որ 'ի մէջ փորդուգալաց, և հոլանտացւոց և այլ արգելք ինչ ամս իբրև 12 նպաստեցին փորդուգալաց : Ընդ այն ժամս մեռաւ տիկինն կատարինէ· և այր նորա որդին յովհաննու արքայի յամի 1613 : Յայնժամ փորդուգալաց ժամ դիպող գտեալ երկպառակութիւն սերմանեցին 'ի մէջ իշխանացն կղզւոյս, զբազումս 'ի նոցանէ դրդուելով հետամուտ լինել թագաւորութեան · և ինքեանք օգնութիւն ընկալեալ յեւրոպիոյ, սկսան հիմնել ամրոցս շուրջ զկղզեաւն, առ 'ի հատանել զյոյս բնիկ տեարց կղզւոյն օգնութիւն ընդունելոյ յարտաքնոց : Եւ այսպէս 'ի սակաւ ժամկի զբազում տեղիս ամրացուցին, իբրև 9 ամրոցս կառուցեալ· որք գրաւեալ ունէին ընդ տէրութեամբ իւրեանց զսահման իմն 'ի բոլոր ծովեզերեայս կղզւոյն, իբրև 12 մղոն :

Այլ ոչ շատացեալ նովաւ՝ կամեցան տիրել և համօրէն կղզւոյն· ուստի և պատերազմաւ մտին 'ի ներքս 'ի խորին կողմն : Բայց հոլանտացիք ձեռնտու լեալ բնակչաց կղզւոյն՝ ոչ միայն յետս ընկրկեցին զնոսա, այլև յետ այսպէս անցից, նաև 'ի կղզւոյն իսկ խաղահանեցին վանեցին զնոսա · և նորաշէն ամրոցաց նոցա հոլանտացիք տիրեցին յամին 1656 : Որքան թէ ոչ մարդասիրագոյն, գէթ զգուշագոյն և բարեբախտ գտան քան զփորդուգալս, և միշտ պատսպարեցին զանձինս 'ի հանապազորդ դարանակալութեանց անտի, որով իշխանք տեղւոյն հնարէին և հնարին վնասել նոցա : Ուստի և դաշնադրութեամբք, պարգևօք, և երբեմն ևս բռնութեամբ, և այլ պէսպէս հնարիւք կացին մնացին 'ի կալուածս իւրեանց, զոր ստացան անդանօր, որ թուի թէ առաւել շահաւէտ էր նոցա քան զայլ ամենայն տեղիս· զոր ու-

նին

նչին յարևելեան Հնդկաստան. այլ յայս վերջին ժամանակս աւելի անգղիացիք 'ի ձեռաց նց:

Պատուականագոյն բերք կղզւոյս է Կինամոն կմ Դարչին որ այն ինքն է Տարչին: Արմատ սորա ծառոյ է ստուար բազմաճիւղ կարծր և սպիտակ. կեղև նր արտաքուստ է դեղնախառն կարմիր. իսկ 'ի ներքս անդ կարմրագոյն: Բուն ծառոյն բարձրանայ 38, կմ 310 ձող. որոյ կեղև ոստ և ոստոցն 'ի սկզբան անդ է կանաչագոյն. և ապա փոխի 'ի կարմրագոյն. տերևք նր նման են տերևոց դափնւոյ. բայց միայն սորայս չեն երկայն և սրածայր. 'ի սկզբան անդ ցորչափ են մատաղագոյնք, հրագոյն են. բայց ապա 'ի հնանալն և 'ի չորանալ 'ի վերին ծայրս փոխին 'ի մթին կանաչագոյն. իսկ 'ի ստորին կողմն 'ի պայծառագոյն կանաչ. Ծաղիկք նր մանր են և սպիտակ. և հոտ նց քաղցր և անուշակ, որք փունջ փունջս փթթին 'ի ծայրս ոստոց. ունի և պտուղ որ նման է կաղնոյ. բայց մանր քան զայն. որ սովորաբար հասանէ յամսեանն սեպտեմբերի. յեփելն զայս պտուղ 'ի ջուր, արձակէ իւղ որ 'ի ցրտանալ իւրում մոմանայ: Յիւղոյ անտի գործեն ճրագ. միայն 'ի պէտս թգրին սեղանոյ, որ 'ի վառելն է լուսոյն բուրէ և հոտ անոյշ: Իսկ կեղև ծառոյն է նոյն իսկ կինամոնն. զոր կեղևեն 'ի ծառոյն, դոսանայ բուն, այլ արմատ նր մնայ. յորմէ շառաւիղեն այլ ծառք. բաց 'ի շառաւիղաց ունի և սերմն, յորմէ բուսանին այլ ծառք: Որչափ դալարի և մատաղատունկ է ծառն այնչափ պատուական է կինամոնն նր. բայց և յայնմ գոյ խտիր. զի ազնուագոյնն է երկրորդական կեղևն քան զառաջինն, զոր բուն 'ի մի կեղևելոյ է գարնանային եղանակին՝ յորում առաւելու հիւթ նր: Իսկ կինամոնն հանեալ 'ի ծերացեալ ծառոց չէ այնչափ ինչ լաւ. ուստի առ հանել ազնիւ կինամոն, չէ պարտ թողուլ ծառոց նր անցանել զերիւք, կմ զչորս ամօք:

Այս բերք պատուական և 'ի բզմ իրս կարևոր կպարաւորեալ է 'ի 42 միջնաչափ տարածութե առ ծովեզերբ կղզւոյս, և ոչ անդր ևս. քզի ոչ թողուն հոլանդացիք զի բազմասցի, և եթէ ինքնին բուսցի ուրեք, 'ի բաց խլեն. զի մի առ յաճախութե զին և յարգ նր անկցի: Վնկ զկնի հանելոյ նց զփորթուգալս 'ի սէյլանայ, զհետ պնդեցան առնուլ 'ի ձեռաց նց և զթգրութին քօչինու որ 'ի ծովեզերս մալապարոյ. զոր և առին 'ի 1661. և առաջին գործն

'ի

'ի մտանելն անդ, եղև խապար սպառ ջնջել զնմ րդյս դարխանեայս. Քզի լինէր և անդ Թէպէտ ոչ այնպէս մեծ որպէս 'ի Սէյլան ։ Եւ այսպէս առ անյագ շահախնդրութեան հոլանտացւոց, բոլոր Ծ ստիպէ լնուլ զհարկատուութեն, զոր ունի առ այս համեմ 'ի 42 մղոնաչափ տարածութէ կղզւոյս. ուստի ասեն Թէ ամ ամի տանելն յեւրոպիա 300 հզ̄ր օխայ. նոյնչափ ևս 'ի հնդիկս, այլև յամերիկա. մանաւանդ 'ի բերու 'ի պէտս չոքօլաթի ։

Լինի 'ի սէյլան և պղպեղ, և խահֆէ, զոր հոլանտացիք մուծին անդր. բայց սորին է յոյժ քան զխահֆէն եէմէնու. և պտուղ ինչ անուանեալ Պէթէլ, որոյ բոյսն է նմանի բաղեղան պատատեալ զծառովք, համ նր̄ ախորժական է և նման համեմի, որ պահարի. այլ՝ յաճախակերութէն սևացուցանէ զատամունս և տկարացուցանէ. սակայն առ հնդիկս կարի 'ի գործ ածի. ուստի և այն ևս է մի 'ի գլխաւոր վաճառացն սէյլանացւոց ։ Եղանէ և Արեկալէ կոչեցեալ պտուղ, զոր 'ի պանկալա և այլուր Սըփարի կոչեն, որ նման է հնդկային ընկուզոյ. որ է հնեթխատան ձեվկղի, զոր նոյնպէս յաճախ 'ի կիր առնուն 'ի հնդիկս 'ի ծամել ։

Ունի և փիղս բազումս. վզի՝ և մի 'ի գլխաւոր վաճառաց նր̄ են ատամունք փղաց, այլև կենդանի փիղք, զորս տանին 'ի գորոմանտէլ. Թէպէտ այս վաճառս չէ այնչափ ինչ բարգաւաճ ։ Եւ 'ի ծովեզերեայս նր̄ գտանի ազգ մի ծովային խեցւոյ մանր և սպիտակ, դամրէ կոչեցեալ. զոր 'ի հնդիկս, կամ առ մաղոս 'ի գործ ածեն փոխ մանր դրամոց ։ Գտանի անդ և մարգարիտ. որ Թէպէտ սպիտակ է յոյժ, այլ չունի զայն աղւորութի, զոր ունի մարգարտին պարսկային ծոցոյ. Քզի չլինի սակաւուց կորուսանէ ըզգոյն իւր. և է գրեթէ բովանդակ 'ի ձեռս ընկերութ հոլանտացւոց. յորմէ ամ ամի շահին 18181 վէնէտիկեան ոսկի ։ Գտանի անդ և ազգ մի ական, որ յանուն կղզւոյն կոչի Սէյլանի ։ Բաց 'ի բնական վաճառաց սոցա, գործեն անդ և բազմ Թաշկինակս ընտիրս, և բամբակի պաստառս սպառողականս ։ Յայս ամ վաճառաց, բաց 'ի դարխանեայ, շահի ընկերութն հոլանտացւոց ամ ամի 181818 ոսկի վէնէտիկեան ։ Այլ զայն բովանդակ ծախեն 'ի պահպանութի և 'ի շինութի տեղեաց իւրեանց որ անդ. ուստի և նոյն միայն շահն զոր տանեն 'ի կենտամնէ, որ քիչ է յոյժ ։ Յն̄ ջին Ժամս ընկերութեն ունէր անդէն

400 զօրս 'ի պահպանութիւն կալուածոց և ամրոցաց իւրոց · այլ այժմ են իբրև 1500, կամ 1600 · զօրս քաւական համարին 'ի զգուշութիւն յերեսաց թգրին Կանդեայ, որ մի միայն մնացեալ է 'ի կղզի անդր: Յորժամ Փորդուգալք հասին 'ի Սելեան, գտին զնա բազմամարդ յոյժ, բնակեալ յերկուց այլ և այլ ազգաց · որք 'ի քարս և 'ի կառավարութե և 'ի կրօնի գլխովին օտար են 'ի միմեանց:

Մին անուանի Պէտաս · սք գրեթէ միշտ մերկ շրջին · և բնակին 'ի հիւսիսային կողմանս կղզւոյն, յապառաժուտ և յանբեր վայրի · և բաժանեալ են 'ի ցեղս ցեղս · յորոց իւրաքանչիւր ցեղ համարի իբրև տուն մի, և միում և եթ գլխոյ հնազանդի և թուին լինել առաջին բնակիչք կղզւոյն, որք միացեալ՝ միաբանութբ պատերազմեցան վս ազատութե իւրեանց: Սակաւ ինչ գիտեմք 'ի կրօնից իւրեանց · այն զի՝ բզմք յերկբայս են զնոցանէ թէ ունիցին արդեօք բնաւ ինչ պաշտօն: Ոչ ախորժեն հաղորդութի առնել ը՟ օտարականս · և յանցանելն ումանց ը՟ ծ՟ նց, խոյս զգուշանան · և թէպէտ քարուք հիւրընկալութ ցուցանեն նց, այլ առ ժամայն յետս դարձուցանեն զնա · կարի նախանձայոյզ են 'ի վերայ կանանց իւրեանց · և այն իսկ է պտճառ այնչափ խորշելոյ յօտարականաց:

Իսկ միւսն, որք բզմ են և հզօր քն զառաջինն, կոչին Քինկուլք, և բնակեն 'ի հարաւային կողմանս կղզւոյն, որք առ համեմատութ առաջնոց, առաւել քաղաքական են և ընտանի: Սոքա զգեցեալ շրջին, և բզմ իրօք նմանին հնդկաց, բայց կրօնիւ տարբերին 'ի նցնէ: Ճանաչեն զմի էակ գերագոյն, և ը՟ նովաւ զայլ ոգիս երկրորդականս և երրորդականս · և նմին ոչ ունին զանազան քահանայս կարգեալ · բայց յերկրորդական ոգիս առաւելագոյն պաշտեն զոմն Պուտաուլ անուանեալ · զոր համարին միջնորդ ը՟ ած և ը՟ մարդիկ: Քահանայք, կամ քուրմք նոցա 'ի պատուի են յոյժ առաջի ժողովրդեանն · զորս և ոչ նոյն իսկ իշխանն տր երկրին կարող է պատուհասել, թէպէտ և մեղանչեալ իցեն 'ի սպանութի անձին նր: Գիտեն զարհեստ պտզմի, որք և քաջութբ պաշտպանեցին զՏի իւրեանց ընդդէմ եւրոպացւոց, որոց և յաղթեցին բզմ անգամ: Խորամանկ են բարուք · և շահասէրք և կեղծաւորք և շողոմաքորք: Յերկուս լեզուս խօսին · մին է իբր աշխարհաբառ, որ հասարակ է ամենց · իսկ միւսն իբր գրաբառ և ռէբ, սեփականեն՟ քրմաց, և իրաց կրօնից նոցա :

Համօրէն կղզին այժմ բաժանեալ է յերկու տ՟րութիւնս. մին է տ՟րութին Կանտեայ, իսկ միւսն հոլանտացւոց, զորս յառաջիկայդ ստորագրեսցուք :

Տէրութիւն Կանտեայ :

Կանտի պարագրէ զներքին մասն կղզւոյն, և է ի տ՟րութ՟ե համազգի բնակչաց ն՟ր. ունի իւր սեփական թ՟գր` որոյ տ՟րութին է միապետական, և կոչի թ՟գր Կանտեայ : Բաժանի 'ի 20 գաւառս կ՟մ վիճակս. ('ի բաց առեալ զնահանգն նախայիշատակեալ պետտօ ազգին. որք են իբրև մասնաւոր հասարակապետութի.) յորս են. 5 քաղաքք երևելիք, որք կոչին : Ալլաւբէնիւր. Պանտօլա. Տինկլինիւր. Մրուանդինիւր. և Կանտի կառուցեալ 'ի միջին տեղւոջ կղզւոյն. մերձ առ գետն Մավէլլականկա. որ յառաջագոյն էր գլխաւոր մայրաքաղաք համօրէն կղզւոյն. և աթոռ նմ՟ թ՟գրաց ն՟ր. բայց զկնի հրդեհակեզ առնելոյ զնա հոլանտացւոց կարի նուաղեցաւ յառաջին ճոխութենէ և 'ի մեծութենէ իւրմէ. մանաւանդ զի և բնակութի թ՟գրի ն՟ր այլուր փոխադրեցաւ, որ և այն ևս սակաւ անշքացոյց զնա : Իսկ վ՟ այլոց չորից քաղաքաց, ոչ և վ՟ գաւառաց չունիմք ասել ինչ նշանակել, բայց միայն` զի այն 20 գաւառք կ՟մ վիճակք բաց 'ի հնգից, որք կոչին Վալլաւ. Հարդէրաթուլէ. Նուրէքալավա. Համբանթոթի. և Դումբանքօթ պարագրեալ 'ի բլուրս արգաւանդս և յոքնաբեղունս, առոգեալ 'ի պատուական ջուրց, միով անուամբ կոչին Գօնտէնտա 9 լեռնաստանք. և թ՟գրն որ տիրէ կոչի Թագաւոր գօնտէնտայից, կ՟մ լեռնաստանից :

Տէրութիւն Հոլանտացւոց :

Տէրութին հոլանտացւոց ձգեալ տարածի ը՟ բովանդակ շրջակայ եզերս կղզւոյն իբրև 36 մղոնաչափ լայնութ՟. և ուրեք ուրեք մինչև 950 մղոն. յորում բզ՟մ քաղաքք և ամրոցք գտանին : Նաև բոլոր Եաֆանապադամ, կ՟մ Ճաֆանաբադամ ցամաքակղզին, և տ՟րութին Վաննիայ, է ը՟ իշխանութ՟ ն՟ց. յորս յառաջագոյն տիրէր միայն իշխան բուն բնակ երկրի՟.

զոր սպանին փորդուգալք համդերձ համօրէն տամբ իւրով, և տիրեցին երկրի ն՟ր. յորոց յետոյ առին հոլանտացիք։ Բազում գիւղք են 'ի սմին տէրութ՟ն. զորս աւելորդ համարիմք 'ի մասնաւորի յիշատակել. վ՟ն զի հոլանտացիք ոչինչ զանազանութի դնեն 'ի ն՟մ. այլ թուէին միայն զամրոցս և զգիւղս նոցա. որոց գլխաւորքն են ս՟ք։

Քոլոմպօ։ Է գլխաւոր քաղաք համօրէն կղզւոյն, շինեալ 'ի վ՟ր լեռնէի ինչ հողոյ, որ ձևացուցանէ ըզծոց 'ի ծովն որ և է պատուական նաւահանգիստ վ՟ն միջակին նաւուց։ Այս քաղաք առ տ՟րութ՟բն փորդուգալաց էր մեծ յոյժ և ընդարձակ. զոր հոլանտացիք անձկացուցին առ 'ի կարող լինել սակաւ զօրօք պաշտպանել զնա. իսկ ը՟ղ հակառակն՝ զամրոցն ընդարձակեցին։ Իսկ թէպէտ չէ այնչափ ինչ մեծաշէն, բայց և ոչ կարի անշուք. զի ունի պատուական շինուածս, յորս երևելի են հոյակապ ապարանք իշխանին հոլանտացւոց։ Յամին 1520 փորդուգալք ամրացուցին զ՟գիւղս զայս. ո՟րք և զայլ բ՟զ՟մ տեղիս կղզւոյն. զորս 'ի 1656 ամին բազում դժնդակ պատերազմաց՝ առին հոլանտացիք յանուն թագաւորին գանտեայ. բայց անձանց սեփականեցին զնա. և աւերելով զաշէնն՝ բռնութ՟բ զինուցաւին և զանտառս դարչինեաց որք մերձ են 'ի քաղաքն։

Նէկոմպօ կամ **Նէկոմպօ**։ Է ամրոց երևելի շինեալ 'ի փորդուգալաց իբրև 25 մղոնաւ հեռի 'ի քոլոմպոյէ 'ի հիւսիսակողմն, շինեալ 'ի պաշտպանութի տեղւոյն, յորս լինին կինամոնք. 'ի ծովակողմն պաշտպանեալ է 'ի ծովէ և 'ի գետոյ միոյ, որ աստ ձևացուցանէ նաւահանգիստ պատուական վ՟ն փոքր նաւուց. իսկ 'ի ցամաքակողմն ունի՝ երկու պատուարս ամբակուռս։

Քիլաու, կամ **Քիլաւ**։ Նաւահանգիստ պատուական է ք՟ զայլ ա՟մ նաւահանգիստս կղզւոյն իբրև 20 մղոնաւ հեռի 'ի քոլոմպոյէ 'ի հիւսիսակողմն։

Գալէքէհէն, կամ **Գալէքէտէն**։ Է կղզի իբրև 16 մղոնաւ հեռի 'ի քիլաւայ 'ի հիւսիսակողմն. երկայնութ՟ն ն՟ր է իբրև 32 մղոն. և լայնութ՟ն իբրև 3. և փոքր մի աւելի։ Երկու աշտարակս ունի և ամրոց մի՝ համդերձ պահապան զօրօք։ Մօտ առ սա են և այլևս երկու փոքրիկ կղզիք կոչեցեալ Մոբէֆօ. և Քէփըռանիկ։

Մանար։ Է կղզի յարևմտեան ծովեզրն սէյլանայ և 'ի հիւսիսոյ նախընթացոյ կղզւոյն. զոր առին հո

լան

լանտացիք 'ի փորթուգալաց 'ի 1658 · յորում ամենոպն 'ի բաց հանին զնս 'ի Սէյլանայ · ունի իւր համանուն ջրղ, և պետս բզմս : Գլխաւոր վաճառք նր է ձուկն, որ առատ է անդանօր · 'ի նախնումն անուանի էր և 'ի պատճառս պատուական մարգարտաց, զորս հանէին 'ի շրջակայ եզերաց նր : 'Ի կղզւոյ աստի մինչև ցՌամանանգոյն կղզին, որ մօտ է 'ի ցամաքն, գտանին բզմ աւազակոյտք, կմ սակաւաջուր տեղիք 'ի ծովու ընդհատեալք անձուկ նեղուցիւք, զոր փորթուգալք կոչեցին Կամուրջ ադամայ :

Տէլֆտ · Միտտէլպուրկ · Ամստէրտամ · Լէյտըն Էնքհոյզէն · Ռոտտէրտամ · Ոռնէօտ · Ահփօրէն · Պռոչարինէ : Են փոքրիկ կղզիք ընդ մէջ նախագրեալ կամրջին ադամայ և ծայրին Ճաֆանաբադամայ · որք ը̃ն առաւել մասին ամրացուցեալ են, և պահպանեալ 'ի զօրականաց առ խափանելոյ զանցս նաւուց այլոց ազգաց : Աստ մուծանեն 'ի նաւս զփիղս, զոր ունին տանել յայլ տեղիս :

Ճաֆանաբադամ, կմ Ճաֆանաբադան, և կմ Ճաֆանաբադնամ : Է ցամաքակղզի, որ յառաջագոյն մասնաւոր Թգւորութի էր, բարեբեր և բազմամարդ · ունի անտառս բզմս, և դաշտս արգաւանդս · բայց ջուր բարի սակաւ : Ըստ բաժանի 'ի դ գւռս · ունի բզմ փոքրիկ քաղաքս, և 159 պետս և աւանս, և համանուն գլխաւոր քաղաք կառուցեալ 'ի գլուխ ինչ հողոյ, որածայր առարտեալ 'ի ծոցն, առ որով ձգի նեղուց անձուկ և երկայն, որ և ձևացուցանէ զայս ցամաքակղզի բաժանեալ 'ի չորս գւռս : Շրջապատ քաղաքիս է իբրև 4 միղոն · ունի բզմ գեղեցիկ փողոցս, վայելուչ շինուածս · յորս է մեծաշէն անկեղեաց մի, և եկեղեցի փոքր · և այլ բզմ շինուածք : Ունի և բերդ ամուր և մեծ շինեալ ը̃ն կանոնի, յորում բնակէ իշխանն հոլանտացւոց · և ամ պաշտօնատարք վաճառատեղւոյն ընկերութ̃ն նց : 'Ի նախնումն առաւել մեծաշէն և բարգաւաճ էր քաղաքս այս, զոր ցուցանեն և մնացորդք նախնի հոյակապ շինուածոց նր, և մանաւանդ մեծաշէն ջրհորոց : Զայս քաղաք 'ի 1658 առին հոլանտացիք 'ի փորթուգալաց : Փորթուգալք, որք յառաջ քան զհոլանտացիս տիրէին աշ, զհիւսիսային ծայր նր անուանեցին Սար ծայոէյ · ուր կայր և ամրոց · բայց այժմ աւերեալ է :

Դրինգօմալա, կմ Դրինքէնմալէ · որ և Գանգանէլւա : Է քա-

քաղաք յարևելեան եզերս սէյլեան կղզւոյն 'ի հիւսիսակողմն 'ի վ՟ր լեռնէ ինչ հողոյ, առ որով են նաւահանգիստք պատուականք և անքոյթք վ՟ն մեծ նաւուց • ունի և բերդ ամուր և հզօր • բայց չիք անդ վաճառականութիւն ինչ • քանզի երկիր ն՟ր ոչինչ վաճառս բերէ: Վ՟նկ բազում անգամ լքին զնա հոլանտացիք • բայց յետոյ առին վերստին երկուցեալ թէ գուցէ՝ այլոց ազգաց մտեալ 'ի նմ՟, միաբանեսցին ը՟ թգ՟րին կանտեայ 'ի վնաս իւրեանց:

Պատտագալա, կ՟մ Պատտէգալօ: Է քաղաք և ամրոց 'ի կղզի ինչ լինն մղոնաչափ • կալեալ զանունն 'ի գետոյն, որ մտանէ 'ի ծոց ծովու, առ որով կանգնեալ կայ ամրոց 'ի պաշտպանութ՟ն կղզւոյն:

Բունդա դէ Կալէ • կ՟մ Ծուագ կալայ: Է քաղաք մեծ, և հզօր շինեալ 'ի վ՟ր լեռնէ ինչ հողոյ, 'ի ծայր կղզւոյն 'ի հարաւակողմն: Ունի ծոց, կ՟մ նաւահանգիստ բաւական և վ՟ն մեծամեծ նաւուց, այլ մուտն ն՟ր վտանգաւոր է վ՟ն բազմապատիկ ժայռից, որք կան 'ի ծով անդր • առ որով 'ի բերան նաւահանգստին աստի և անտի են երկու ամրոցք • ուր նստի իշխան ոմն հոլանտացի: Յառաջագոյն մինչև էին առեալ հոլանտացիք զքոլոմպօ քաղաք, սա էր ն՟ց գլխաւոր տեղի 'ի սէյլան • անդ էր և աթոռ հանրական կուսակալին ն՟ց, ուստի ծաղկեալ յոյժ և բարգաւաճ • այլ այժմ ոչ ևս է նոյնպէս • սակայն և այնպէս նշանաւոր է առ 'նմ, զի անդ բառնան ըզբեռինս, զոր ունին առաքել յեւրոպիա:

Մաթուրէ: Աւան, կ՟մ ամրոց, ուր հոլանտացիք հաւաքեն զպղպեղ, և զխահֆէ • զոր ինքեանք մուծին 'ի սէյլեան կղզին:

Պելլինկամ: Է աւան երևելի առ կարմիր ծոցով 'ի հարաւային ծայր կղզւոյն, յարևելեան կողմն նախադրեալ բունդաս տէ կալէայ:

Դընէնկալէ: Աւան առ համանուն ծոցով յարևելից պելլինկամայ մօտ առ փոքրիկ գետ մի: 'Ի շրջակայ վիճակի ս՟ր է գլխաւոր տեղի որսոյ փղաց:

Բաջինէ: Աւան յարևելեան ծովեզերս կղզւոյս, նշանաւոր վասն երևելի կռատանն դրինքօլեայ որ 'ի վիճակին արեբադդեայ, ոչինչ կարի բացագոյն 'ի տեղւոջէ աստի 'ի հիւսիսակողմն:

Տինավաթա: Էր գլխաւոր քաղաք մասնաւոր իշխ՟ն թագաւորութ՟ն ը՟ մէջ երկուց առաջից Քուլնդուրա գետոյն • այլ այժմ աւերակ է:

Մադիւօ · Զետրոմալ: Են փոքր կղզիք:
Համպինկայ· Քանձնանդուր· Քոդեւր: Են ամրոցք ծովեզերեայք յայլևայլ կողմանս կղզւոյս:

Մալտիվեան, Լաքէդիվեան, Նաթելեան, և Անդամանեան կղզիք:

Մալտիվեան կղզիք են բազում մանր կղզիք ափունքն յովկիանոս անդր, որ ձգին առ եզերբք Մալապարայ, և 'ի խումբս խումբս բաժանեալք, որք կոչին Ատօլ, կամ նահանգք· և իւրաքանչիւրն կառուցանէ զմասնաւոր փոքրիկ իշխանութեան բաժանեալ յայլոց: Փորտուգալք գտին զնոսա 'ի 1507· այլ 'ի բաց լքին· ամենայնիւ գալլիացիք և անգղիացիք իբր անտերս և գժուարամատոյցս, և սակս յոռութեան օդոյն, և անարդիւնաւորութեան երկրին, զի ոչ բուսանին անդ ոչ ցորեան ոչ որիզ և ոչ այլ արմտիք· այլ միայն նուռն և լեմոն և կիտրոն և այլ այսպիսի պտուղք: Գտանի անդ և բուստ· այն է՝ մերջան· և ծովային խեց խխունջ մանր քովրի կոչեցեալ, զոր 'ի պանկալայ 'ի կիր արկանեն փոխանակ մանր դրամոց· այլև տրուսեկ, որ է ծովային խմն խեցի աղնիւ քան զատամն, որ երբեն երփն հարկանի: Այս կղզիք բաժանին 'ի ժԳ նահանգս մնաւկան խմն բաժանմամբ· և իւրաքանչիւրն պատեալ շուրջանակի բազմակոյտ քարամբք իբր պարսպաւ որ պաշտպանէ զնոսա 'ի բռնութենէ ծովու· և գժուարամատոյց գործէ մուտս Թշնամեաց շրջապատ իւրաքանչիւրոցն իբր 90 մղոն ոմանք յաւէտ և ոմանք նուազ, մի զկնի միոյ կարգաւ դասաւորեալք և երկայնեալք 'ի հիւսիսոյ 'ի հարաւ: Թիւ բնակչացն հասանէ ց12 հզր: Մեծագոյն մասն կղզեացն այնոցիկ է անապատ անբնակ· յորս ոչինչ բուսանի, բայց միայն խոտ և ծառք վայրենիք: Ընթիւ ծովային Թռչունք գտանին անդէն, նոյնպէս և խեցգետնին բազում յոյժ: Իսկ ջուր քաղցր չիք յամ կղզիս, այլ միայն յոմանս, յորս բնակութիւն է, և այն ոչ 'ի գետոյ· վն զի գետ բնաւ չիք 'ի նոսա, այլ 'ի ջրհորոց· քանզի ուր և բրեսցեն 3, կամ 4 ոտնաչափ խորութ, եւանէ ջուր քաղցր, նաև յեզերս անդ ծովուն: 'Ի նեղուցսն որք անջրպետեն 'ի միմեանց զխումբս կղզեաց, անուաւ բազմութ կոհակոծեալ դտանեն: Այս ամ կղզիք միանգամայն ունին իւրեանց ամփոփական Թգր զինքն մահմետականոր նստի 'ի Մալէ կղզին, որ գլխաւորն է յայլս. սակայն բոլոր շրջապատ նր̃ չէ ինչ աւելի՝ քան զերկս մղոնս: 'Ի սմանէ կալեալ նոքա զանուն. զի անունդ Տիվէ. նշանակէ Կղզի. յորմէ յայտ է թէ Մալտիվէ, նշանակէ Կղզի մալայի:

Բնակիչք նր̃ ըստ մեծի մասին արաբացիք են, կմ̃ նման են արաբացւոց 'ի գոյն երեսաց և դիմիւ: Ոմանք համարին զն̃ լինել 'ի քլիւկուլ ազգէ անտի, որ 'ի Սէյլան. բայց այլք ոչ հաւանին. վն̃ զի քիւկուլացիք սեաւ են, և բիրտ և յաղթանդամ. իսկ մալայիք 'ի դէրս և 'ի կազմած մարմնոյ նման են այլոց ազգաց, իսկ 'ի գոյնն՝ արաբացւոց: 'Ի մէջ նախնի Յունաց Պտղոմէոս ունէր ծանօթութի ըզսոցանէ, զորս եդ առաջի Տապրոբանեայ ո̃ է՝ Սէյլանոյ, ո̃ր և է: Ասէ թէ թիւ կղզեացս յայնժամ համարէր ց1378. գուցէ թէ և այժմ այնչափ լիցին, կմ̃ փոքր մի նուազ. թէպէտ և թագաւորն մալայի անուանէ զանձն թագաւոր 13 նահանգաց, և 12000 կղզեաց:

Այս ճշմարիտ է. թէ բզ̃մ մանր կղզիք աւերեալ կարեան 'ի բռնութէ ալեաց ծովուն: Յաճ̃ նեղուցս, որք են 'ի մէջ կղզեացն այնոցիկ այնչափ սակաւ է ջուրն, զի եթէ նէրբէին սրածայր ժայռքն, որք են 'ի նմ̃, և չկայր երկիւղ ձկանց ինչ Ամիոն անուանելոց, որք հաւասար են կոկորդիլոսաց, և կլանեն զմարդ, մարթ էր և ոտիւք անցանել 'ի կղզւոյ 'ի կղզի, մանաւանդ 'ի ժամս տեղատուութ ջուրց ծովու: Անուանք խմբից, կմ̃ նահանգաց կղզեացն են այսք.

ա. Թիլատում Մատէ.
բ. Միլատում Մատուլէ.
գ. Պատիփօլօ.
դ. Մալօս Մատուլ.
ե. Արիատօլլօն.
զ. Մալէ Աթթօլլօն.
է. Փուլիւտուլու.
ը. Մօլուգգէ.
թ. Նիլլանտուս.
ժ. Կօլլօ Մատուս.
ժա. Ադում Մատէ.
ժբ. Սուվատիւ.
ժգ. Ադուէ. և Բէլէս Մօլուգգէ:

Երկու յետինքս թէպէտ անջատ են 'ի միմեանց, սակայն համարին իբրև մի, վն̃ զի կարի փոքր են. Գլխաւոր կղզի, ո̃ր ասացաք է Մալէ կղզին. յորում չիք քաղաք. այլ միայն բնակութի տանց ցրուե̃ համօրէն կղզին: Ապարանք թագաւորին քարաշէն է, այլ գեղեցկայարկ, և շինուած նր̃ զլխովին պնդարանեալ 'ի շրջակայս իւր ունի պարտէզս և բուրաստանս և ջրհորս և աւազանս: Բայց 'ի սմանէ 'ի բոլոր կղզիս յայտնի չիք ինչ յիշատակաց արժանի:

Լաք.

Լաքքադիվեան կղզիքն են 'ի հիւսիսակողմն նախընթաց կղզեացդ. և ձգին ընդ երկայն առ Մալաբարաւ. որք ըստ մեծի մասին անբնակ են և աննշան. յորոց գլխաւորքն են:

Գուէլայի. Մուլիգիլի. Գուլբէնի. Գարդադուլի. Պրէդոբաթրա. Աքսինդ. Գիլիդան. Մինիգոյ:

Կամելեան կղզիք անկանին ընդ արևու նահանգաւ և ձգին յարևմտեան կողմն Մոռնոյ Սարին:

Սալսէթէ կղզին է 'ի հիւսիսակողմն պոմպայեայ, և 'ի հարաւակողմն պաքսայիմ քաղաքի, որք են 'ի ցամաքակղզին որ յայն կոյս գանգէսի, կից տըքրուն Չի: Երկայնութիւն է 26 մղոն. իսկ լայնութիւն 8 կամ 9. որ և է ընդ իշխանութեամբ մարաթայից, զոր առին 'ի փորթուգալաց, և սկսան այնուհետև ապստամբել 'ի ծովու, զառաջինն յարձակելն միայն 'ի վերայ փոքրիկ նաւուց հնդկաց. ապա այսպիսի ապստամբութեամբ առ սակաւ սակաւ այնչափ զօրացան, մինչև առնուլ նոցա և յեւրոպացւոց նաւս մեծամեծս: Այլ յամին 1722 անգղիացիք միացեալ ընդ փորթուգալացւոցն սպրդմաւ 'ի վերայ նոցա. այլ բռնադատեցան կորագլուխ և հանդերձ ըմ վնասու անդրէն ընդ կրունկն դառնալ: Նոյնպէս գաղղիաւ և հոլանտացւոց, որք 'ի 1724 եօթն մեծամեծ նաւուքն եկին 'ի վերայ նոցա: Ապա 'ի 1755 անգղիացիք միացեալ ընդ մարաթայից. առին զմեծ մասն ամրոցաց և նաւահանգստից, որք էին տեղիք ապստամբաց ծովային հինից. սասանի և այնուհետև ապահովեցաւ այն ճանապարհ:

Ցամաքկղզի յայնկոյս գանգէսի:

Այս մասն ևս Հնդկաստանչին է ցամաքակղզի բայց երկայնագոյն յոյժ քան զնախընթացն, որ յայնկոյս գանգէսի, կից քան զորքան, որ 'ի գծէ գիծերահաւասարին ձգի մինչև ցանդր ևս քան զարևադարձն խեցգետնի, մղոնս իբրև 1920: իսկ յարևմտից յարևելս ընդ 15 աստիճանս, մղոնս 900: Բայց 'ի հարաւակողմն 'ի նեղ ինչ ցամաքակղզի առաջանի: Զայս ամենայն տարածութիւն երկրի, յորում բազում թագաւորութիւնք, և մասնաւոր տէրութիւնք պարունակին, սովորութիւն եղև Չագրաց միով անուամբ կոչել: Ցամաք կղզին կամ Հնդկաստան որ յայնկոյս գանգէսի.

առ

տա ՚ի զանազանել ՚ի միւս մասնէ Հնդկաց երկրին, որ կոչի Ցամաք կղզի, կամ Հնդկաստան յայս կոյս Գանգեսի. որ և է մեծ ցամաքակղզին [illegible], և մասն Մողոլաց երկրի. զորմէ ցայս վայր ճառեսցուք: Արդ՝ զայս մասն Հնդկաց ոմանք ՚ի չորս ընդհանուր մասունս բաժանեն, ըստ չորից գլխաւոր կողմանց երկրի, այսինքն յարևելս, յարևմուտս, ՚ի հիւսիս և ՚ի հարաւ. այլ մեզ լաւ ևս թուեցաւ բաժանել յութն մեծամեծ նահանգս կամ երկիրս. որք են.

ա. Աքրա. ընդ որում և Դիլի. է. Ճեռն.
բ. Աջրագան. ե. Քանդահար.
գ. Հասա. ընդ որում և Բէհար. և Մուլէն. զ. Լահու.
է. Քուչինչին.
ը. Գոլոնդքին:

Այս ութն նահանգք էին այլևայլ տէրութիւնք. յորոց ոմանք յետոյ միացան ՚ի մի թագաւորութիւն որպէս ստորև ունիմք նշանակել, որպէս և զկառավարութիւն, և զկրօն, և զայլ այլապէս հանգամանս նոցա յիւրաքանչիւր տեղւոջ նշանակեսցուք, որչափ ինչ հնար իցէ մեզ տեղեկանալ զայնցանէ:

Յօդ ա. Թագաւորութիւն աշամայ, կամ ասեմայ. և դիփրայ:

Աշամ ՚ի հիւսիսոյ սահմանակից է գերեգդայ. յարևմտից՝ պանկալայի. յարևելից՝ Թագաւորութեան հաւայի. իսկ ՚ի հարաւոյ՝ արագանայ: Երկու մեծամեծ գետս ունի. մին կոչի Պրեհմափուտրէ. որ գնայ խառնի ՚ի Գանգէս ՚ի ներքոյ տաքայ քաղաքին պանկալայի. իսկ երկրորդն Զանդէկամ. կալեալ զանուն ՚ի քաղաքէ անտի առ որով բերէ յերկրին Արագանայ: Ունի սա իւր սեփական թագաւոր. և բնակիչք նորա կռապաշտք էն. ըստ օրինակի այլոց հնդկաց, որք յայսկոյս Գանգէսի, և յերկրին Մողոլաց: Ոմանք ասեն, թէ ՚ի նախնումն մասն էր սա պանկալայի, և թէ ՚ի սմա գտաւ զառաջինն վառօդն. յետոյ առաւ էանց ՚ի Պէկու և յերկիրն չինաց: Ունի բովս ոսկւոյ արծաթոյ երկաթոյ և կապարի. այլ թէ բոլորք կարգաւորեալ էին, առաւաւել ևս լինէին քան զոր են այժմ. այլ աղ, որ կարի պիտանացուն է մարդկան չունէր բնաւ, ուստի բնակիչք տեղւոյն, առնելցան հանել աղ 'ի բուսոց ինչ, է՟ երկար եփելով: Ապա 'ի սկզբան անցել՟ դարու ոմանք 'ի պաշտօնէից անտի պանկալայի գնացին անդր, կամելով և անդ մուծանել զանուն պաշտամանս իւրեանց. վ՟ զի մինչև ցայնժամ ընական օրէնք գնային անդէն: Սոքա հաւանեցուցին ժողովրդեան, թէ կարի հաճոյ լինէր չտ՟ծոյն, եթէ փոխանակ այնր աղի, զաղ մաքուր և ծովային 'ի կեր առնուին: Իսկ Թգ՟րն հաւանեցաւ է՟ այն, բայց ընդ սովին պայմանաւ. զի վաճառականութ՟ն աղին լիցի 'ի ձեռս իւր. և մի՟ոք կարասցէ բերել անդ աղ, բայց միայն պանկալացիք. և նաւակքն յորս բարձեալ բերեն աղ 'ի վեր ընդ գետն՝ զտեղի առնուցուն առ սահմանօք տ՟րութե իւրոյ: Սովին ստաբանութ՟բ պաշտօնէից բացաւ դուռն մեծի վաճառականութե պանկալացւոց. զի ամի ամի աղ բզ՟մ տանին անդր. որով է՟ հարիւրոյ երկերիւր շահին, և առաւել ևս: Եւ անտի բառնան սակաւ ինչ ոսկի և արծաթ և փղոսկր և բեհեզ մշկոյ, այն է մուսկի. և փայտ. և արծուճի և խէժ, այլ առաւել քան զամ՟ մետաքս որ առատ է յոյժ անդէն և լինի առանց ինչ խնամակալութե մարդկան. զի որդունքն գոյանան 'ի վ՟ր ծառոց, անդ աճեն անդ սնանին և անդէն գործեն զմետաքս: Իսկ բնակիչք չունին այլ ինչ առնել. բայց ժողովել զնոսա. և որք ուրեք ուրեք մտադրմամբ ծման, ինքնին արկանեն զսերմն: Եւ այս գրեթէ յամ՟ ամի երկոտասան անգամ լինի: 'Ի ցամաքային ժմկս առատագոյն լինի, քան յանձրևայինս: Այսպէս մետաքսից թէպէտ պայծառ են և շողշողուն, այլ սակաւատև և կարծր, զոր 'ի հնդիկս կոչեն

Մունկի:

Թգ՟րն աշամոյ է միապետ ինքնիշխան. իսկ ժողվ՟րդն թուի իջեալ յայլևայլ սերնդոց: Ջինոքա որք բնակին 'ի հարաւային կողմանս են թխագոյն հնդիկք. առափակունք. իսկ որք 'ի հիւսիսայինս գրեթէ ամէն ուռույցս ունին 'ի պարանոցն և գծագրութե դիմաց ն՟ց այլազան: Ամենին գրեթէ մերկշրջին, միայն զամօթոյն ծածկեալ ունելով փոքր ինչ կապերտ կտաւոյ սփածել՟ զմիջով: 'Ի գլուխս կրեն գլխարկ շուրջանակի զարդարել՟ ատամամբք խոզի. ունին և յականջս գինդս մեծամեծս ոսկի և արծաթի: Արք թողուն զհերս գլխոյ երկայնել մինչև ծածկել ըղթիկունս ևեթ. իսկ կանայք թոյլ տան աճել որչափ ինչ տայ բնութ՟ին: Բազմակին են. և իւրա-

քան

քանզի իւր տուն ունի շուրջանակի բակ. եւ աղբիւր մի ջրոյ առ 'ի պէտս բաղանեաց ընտանեաց տանն. եւ փիղ մի 'ի դիւրութիւն կանանց իւրեանց: Համեղագոյն կերակուր նոցա է միս շան. վասնզի յամենայն քաղաքս յամենայն ամիս տարւոյն լինի վաճառ շանց: Յայսմ երկրի են այգիք յոլովք. բայց 'ի խաղողոյ նոցա ոչ մզեն գինի, այլ թողուն ցամաքիլ, եւ ապա ձմերայն մզեն անտի հեղանիւթ իմն ոգելից, եւ զօրեղ քան զնմանութիւն ցքւոյ: Գլխաւոր տեղիք սորին թագաւորութեան են:

Զոնփուրա, կամ Հոնփուրա. որ ըստ ոմանց Ծագրաց է գլխաւոր մայրաքաղաք սորին թագաւորութեան կառուցեալ ի մէջ երկրին, քանի մի մղոնաւ հեռի 'ի Զադիկամ գետոյն յարեւմտեան կողմն:

Քօսփօրա: Քաղաք յարեւմտեան եզր նորին գետոյ 'ի հարաւոյ չամտորայի:

Ալլամ, կամ Ալլեմ: Է մայրաքաղաք, յորմէ առնու զանուն համօրէն թագաւորութիւնն կառուցեալ առ Լոփես գետով առ սահմանօքն գեկեդայ:

Պուէէբօրա: Է գլխաւոր քաղաք երկրին, կամ մասնաւոր թագաւորութեան. զոր ոմանք յԾագրաց չփոխեն ընդ թագաւոր աշխարհ. եւ է 'ի հարաւոյ քօսփօրայ, յարեւմտեան կողմն չադիկամ գետոյն:

Են անդ եւ այլ եւս քաղաքք որպէս Չիկէճ. մերձ 'ի պանկալա: Սէրօր. Քոնդօրա, սահմանակից դեւպեգայ: Զինիօն. 'ի հարաւակողմն Հոնայ կոչեցեալ լերին, կամ ծովակին, որոյ դիրք, եւ տարածումն չէ յայտ որչափ: Զաբօնա. են. յորոց զոմանս ունին տէրութիւն յԾագրացն մեր:

Յօդ Է. Թագաւորութիւն Արագանայ:

Այս թագաւորութիւն կայր ստորին է քան զթագաւորութիւն Աշամայ. զոր 'ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից. յարեւմտից՝ զպանկալա. 'ի հարաւոյ պատեալ է ովկիանոսիւ. իսկ յարեւելից ունի իւր սահման զթագաւորութիւնս Հուայի եւ Բեկուայ: Ոմանք յԾագրաց գրեալ չանդիկամ դնեն սահման ընդ մէջ սորին թագաւորութեան, եւ պանկալայի. արտաքս թողեալ զբանդիկամ քիղքն, զոր նոքա դնեն 'ի պանկալա: Այլ թեւակէս յառաջագոյն տիրեցին նմա մուղալք, եւ կարգեցին անդ զիշխանական. սակայն եւ այնպէս պարտէ համարիլ ըստ միայն քան թագաւորութեան սրագանայ · վն̃ զի բնակիչք նց̃ զնոյն ձևն ունին, զնոյն բնաւորութի̃ բարուց, և զնոյն լեզու զոր սրագանացիք :

Ունի բզ̃մ գետս · յորս գլխաւորքն են Ջանդէնամ · որ ելեալ 'ի Գիւլէնգայ, և անցեալ ը̃ Ֆն̃ աշխարհս, կմ̃ սահմայ մտանէ 'ի ծոցն պանկալայի մերձ 'ի բերանս գանգէսի : Աւրագան, որ կոչի ևս Քաւերէս · սա ևս է գետ մեծ · որ ելանէ 'ի լերանցն աշխարհս, և բաժանեալ յերկու առաջս, մտանէ յարագան, և անտի զերգու յովկիանոսն : Այլ մերձ 'ի բերան նր̃, գտանին 'ի ծովն բզ̃մ քարաժայռք և կոյտք աւազոյ ը̃ որս հարկ է անցանել բզ̃մ զգուշութ̃, նախ քան զմտանել 'ի տեղին, ուր գետս այս գործէ նաւահանգիստ խոր և բաւական ամ̃ ազգ̃ նաւուց վաճառականաց : 'ի ծովեզերեայ կողմանս սորին Ֆի ը̃ երկայն առ ծոցով պանկալայի չի են մանր կղզիք, քարաժայռք և ճախին տեղիք, յորս վտանգեալ բզ̃մ անգամ նաւքն, որք նաւեն 'ի կողմանսն յայնոսիկ : 'ի կղզիս անդ բնակին աղքատ ձկնորսք ոմանք, յորս չէր ինչ յիշատակաց արժանի :

'ի հարաւային կողմանս այսր Ֆի սակաւ են բնակիչք, այլ յաճախեն անդէն գազանք վայրենիք · զի վագր փիղ ցուլ վայրենի և այլ սոցին նման անընտել գազանք : Հիւսիսային կողմն 'ի նախնումն կարի բազմամարդ էր · այլ այժմ ոչ ևս է նոյնպէս, 'ի պատճառս պատերազմաց, և այլոց բազմապատիկ խռովութեանց, որք յաճախեն 'ի հնդիկս : Օդ երկրին կարի ջերմ է, այլ մաքուր և առողջարար · մանաւանդ յայնմ եղանակի տարւոյն, զոր նոքա ամառն անուանեն · զի 'ի միւս եղանակի զոր ձմեռն կոչեն, յորժամ տիրեն անձրևք, և օդք խոնաւք, յաճախեն տենդք վտանգաւորք, և այլ պէսպէս ախտք :

Յառաջին ժմկս սորայն արքայանիստ էր հզօր ինքնակալ, և աշխարհս համօրէն սահմանակից Թթ̃րաց : 'ի վախճան նախընթաց դարուն դեռևս ծաղկեալ էր թոռն նր̃, որ և կրէր մականուն այսպիսի * Բարձր և գերահռչակ ինքնակալ, որ պայծառացեալ փայլէ 'ի մէջ թագաւորաց տիեզերաց · նա̃ արեգակն 'ի մէջ աստեղաց երկնից · յորոյ 'ի կարողութէ̃ զարհուրին ամ̃ ազգք · մինչ յաղթական թշնամեաց իւրոց · և տր̃ սրբազնեացն ասէւոյ, եւն : Այս և այլ սոցին նման ճոխական վերտառութիւնք հնդիկ ինքնակալացն առնոյ՝ ցուցանեն զնախնի կարողութի թագաւորաց սորին երկրին · որք բաց յանհամար զօրաց ու‿

ունելին և 'ի ծովու բազում ցուկանաւս․ այն է՝ չէքովրիս, և այլ նաւս պիտոյի 'ի խափանել զվաճառականութիւն մերձաւոր ազգաց, և 'ի յափշտակել վաճառս և գերիս 'ի նոցանէ :

Յարքունիս անդ Թագաւորութեան գոյր սենեակ ինչ համակ ոսկեզէն, զարդարեալ առհասարակ արձանօք կռոց, և այլ զանազան ոսկի և ականակուռ զարդու, ուր պահեալ կային և երկու մեծամեծ և խբր անգին կարմիր յակինթք․ որոց վասն բազում պատերազմունս մղեցին շրջակայ Թագաւորք․ այսպիսի իմն պատրուակաւ, թէ որ միանգամ առնու զայն երկու յակինթս, ունի այնուհետև տիրել համօրէն մերձակայ Թագաւորութեանց:

Այլ այժմ որպէս թուի ոսկեզարդ սենեակն այն կողոպտեցաւ յայնչափ մեծամեծ խռովութիւնս և 'ի պատերազմունս, որք եղեն 'ի նմա :

'Ի հասանել անդ փորթուգալաց, յետ սուղ ինչ ժամանակի կարգեցան 'ի Թագաւորէն վերակացու, և կառավար ապատակաւոր նաւուց նոցա, որք ընդ երկար ժամանակս վարեցին զայն պաշտօն․ զի յայնմ ցուկանաւս էր մի ոմն հրամանատար 'ի փորթուգալաց․ որոց կարգեալ էր Թօշակ յարքունուստ․ և բայց յայնմանէ, նաև յաւարաց անաւունելին բաժին: Յամին 1690 'ի մեռանել Թագաւորին արագանայ, յարեան երկու որդիք նորա հակառակ միմեանց 'ի ժառանգել զաթոռն հայրենի․ յորմէ մեծամեծ քանդմունք և աւերածք գործեցան յերկրի անդ: Եւ ոչ միայն ընդ միմեանս ոչ էր այնչափ վասն իրաւանց յաջորդութեան, այլ որչափ վասն ժառանգելոյ զմեծագանձ ճոխութիւն հնդիկ իշխանի ուրումն, որ առ 'ի զերծանել զանձն և զգանձս իւր 'ի յափշտակելոյ ձեռաց մողոլաց, որոց և հարկատու էր, խոյս ետ հանդերձ գանձիւ իւրով առ Թագաւորն արագանայ․ ուր փոխանակ ապահովութեան կենաց և գանձուց, եգիտ մահ դառնագոյն: Իսկ երկպառակութիւն երկուց որդւոյն վեր 'ի վայր արարին զԹագաւորութիւնս զայս․ որ թէպէտ կայ մնայ և այժմ, բայց մեծապէս անկեալ և անչքացեալ յառաջին վայելչութենէ և 'ի կարողութենէ :

Վաճառականութիւն սորին ծի է 'ի ձեռս հայոց, և այլոց ազգաց՝ եւրոպացւոց, պանկալացւոց, և բենկչայոց օրիսայ, և քաթայքայ: Փորթուգալք, որպէս վերագոյնդ ասացաք կարգեալ էին 'ի Թագաւորէն արագանայ հրամանատարք նաւուց նորա, թողին զայն գործ և գնացին հաստատել զբնակութիւն իւրեանց 'ի

պան

պանկալայ, յորդորեալք 'ի խոստմանց իշխանին նր՟, այլ վրիպեցան 'ի յուսոյ, և կորուսին զերկոսեան ևս ։ Եւ փոքր ինչ մտին յարագան հոլանտացիք․ բայց առ սակաւ ժամ կացին անդ․ վն՟ զի 'ի 1683 լքին զտեղին ձանձրացեալք 'ի հանապազորդ նեղութեանց, և 'ի հարստահարութեանց բնակչաց երկրին ։

Վաճառք, որք ելանեն յԾէ աստի են փայտ պատուական 'ի պէտս շինուածոց․ կապար, անագ, վերնիճ, փղոսկր, և փիղ, զոր յայլմ կողմանց հնդկաց տանին անդր, և անտի սփռին յայլևայլ տեղիս․ որ և է մի 'ի գլխաւոր և 'ի շահաբեր վաճառաց այսր թագաւորութեան ։ Բաց 'ի փղաց զոր այլուստ տանին անդր, ունի և այլ բազմատեսակ անասունս․ ձի վայրի գոմէշ խաշն և այծ խոզ և եզն սագս, և բադս ևն․ այլև որիզ առատ և պատուական․ որ համով և ախտակութբ՟ գրեթէ անզուգական է ։ Վաճառեն անդ և պէսպէս ակունք պատուականք, և ոսկի․ բայց ք՟զի ոչ են նք՟ բերք այսր երկրի․ բ՟մք համարին լինել մնացորդս գանձուց նախայիշատակեալ հնդիկ իշխանին, զոր սպան թ՟գ՟րն արագանայ ։ Իսկ յայլ կողմանց տանին անդր ազգի ազգի ոստայնս, բամբակ, պղպեղ, և այլ պէսպէս համեմիչս, սանտալ փայտ երկաթ պողպատ պղինձ կաշի և անօթս հասարակս յախճապակեայս ։ Սորին դրամ նր՟ կոչի գանձէն, որ առնէ չորս վենետկեան լիրէ, առաւել ք՟ զմի ղուռուշ կոստանդնուպօլսոյ ըստ այժմեան արժելից․ իսկ փոքր մանր փողոյ 'ի գործ ածեն զծովային խիճ խեցի գունդի կոճցեալ, որպէս և 'ի պանկալայ և յայլ կողմանս հնդկաց ։

Դէն նց՟ նման է դենի բեկուռացւոց․ զոր ստորև ունիմք ստորագրել ։ Կռատունք նց՟ ը՟ մեծի մասին կառուցեալ կան 'ի գլուխս բարձրաւանդակաց, և են բոլորաձև․ յարինք նց՟ զարդարեալ պատկերօք ոսկեզօծ գնտակօք, և այլ պէսպէս քանդակօք ։ Որմունքն ամրակուռ, բայց մի միայն դուռն ունին․ իսկ պատուհան կամ բնաւ չունին, և կամ յոյժ սակաւ․ 'ի ներքս անդ են բ՟զմ արձանք առհասարակ նստեալք ոտն զոտամբ արկեալ․ յորս ոմանք են հրակայաձևք կաւակերտք ։ Ականջք նց՟ տարադէպ երկայն կախեալ զեթիկամեք, քանզի երկայն ականջս գեղեցիկ համարեալ են առ բնակիչս տեղւոյն, ոչ՟ և այլոց ազգաց լինել յայս ցամաքականի ։ Երեսք և ձեռք և ականջք նց՟ ոսկեզօծ են․ իսկ մնացեալ անդամք

մաս

մարմնոյ սեաւ․ որք և զգեցեալ ունին հանդերձս մեծագինս ։

Քուրմք նոցա բազում են յոյժ, որք վարեն անկէն կեանս, որոց գործ է դաստիարակել մանկանց․ և բնակեն 'ի մայր անտառս, որք ամ ուրեք կից են կատարս։ Հանդերձ նոցա դեղնագոյն, ոմն և գլխարկն․ և հերք գլխոյն կարճ ։ Բազում պարկեշտութեամբ և ծանրութեամբ շրջին 'ի փողոցս միշտ ունելով ընդ ինքեանս զբազմութիւն աշակերտաց, և ոչ երբեք միայն ։ 'Ի մատուցանել զպաշտօն կռոց, անկանին 'ի վերայ երեսաց առաջի նոցա, և ընծայեն նոցա ծաղիկս, և ազգի ազգի խունկս անուշահոտս ։ Ոչ ամ տաճարք նոցա միոյն յարգ ունին․ այլ են ոմանք, որք առաւել սրբազան համարելի են առ նոսա, որք և են ուխտատեղիք նոցա ։

Յամին միանգամ տանեն հանդիսաւոր Թափօր, տանելով 'ի նմին զմի 'ի կռոց անտի բարձեալ 'ի կառս, և բազմութիւն քրմաց նոցա զգեցեալ դեղնագոյն աթլաս։ Յայնմ հանդիսի՝ ոմանք առաւել փոյթեռանդն պաշտօնեայք կռոց՝ ինքնակամ արկանեն զանձինս ընդ անուոք կառացն, ուր ջախջախին ոսկերք, ոմանք ևս անդէն սատակամահ լինին ։

'Ի սմին Թագաւորութեան գտանին և բազմութիւնք քրիստոնէից և մահմէտականաց, որք ոչ միայն հրապարակաւ կատարեն զպաշտամունս իւրեանց, այլև կարող են առնուլ կանայս 'ի բնակչաց երկրին, և դարձուցանել 'ի հաւատս իւրեանց ․ Չէ յայտ թէ 'ի քանի գաւառս բաժանի այս Տ․ Ոմանք բաժանեն 'ի ժ̃ե կուսակալութիւնս, կէ գաւառս․ բայց յերկրատեսաց քաղաքաց անտի, զոր գտնեն նշանաւոր տեղիք այնց գաւառաց, յոլովք անծանօթ են ։ Յայն սակս 'ի բաց թողեալ մեր զայն բաժանումն նոցա, ունիմք յառաջիկայդ ստորագրել զանուանս 'ի քաղաքաց, զորս գտաք նշանակեալ 'ի գիրս Ծագրութեն սիէլինկայ ։

Աւըփան ։ Է գլխաւոր մայրաքաղաք համօրէն Թագաւորութեան․ կառուցեալ 'ի մէջ հովտի, որոյ շրջապատն է 15 մղոն․ ընդ մէջ բարձրաբերձ և ժայռաւոր լերանց, յորոց ընդ նեղ և ընդ անձուկ կիրճ ինչ հասի 'ի բազան գետն, անցեալ ընդ մէջ քաղաքին ։ Անցք լերանց 'ի քաղաքն կոյս փակեալ են հզօր դրամբք ։ Այս քաղաք, որպէս և այլ ամ քաղաքք որ յայնկոյս Գանգէսի, անշուք են, և աղքատաշէնք․ զի տունք նոցա առհասարակ փայտակերտք 'ի վերայ բարձր ցցից շինեալ են 'ի խորշել 'ի խոնաւութենէ և յօձոցմանէ գետոյն 'ի բարձրանալն ջուրց 'ի յորդութենէ անձրևաց ․ այլ

'ի

Է

'ինեղուն թիւնաւոր զեռնոց , որք յաճախեն ը̄ բովանդակ Յն : Եւ է յարևելեան կողմն Յին · մերձ 'ի սահմանս բէկուայ : Ընդարձակ է և բազմամարդ · ունի շուրջանակի պարիսպս · ոմանք 'ի փողոցաց նր̃ և 'ի հրապարակաց քարայատակ են , այլ խորտաբորտք , և տուապարք · ուստի և դժուարաքայլ , և յանձրևոյին ժամս լպրծուն : Գլխաւոր շինուած քաղաքին են ապարանք թգրին · բայց և այն անշուք :

Օրիէնկամ : Քղք՝ մերձ 'ի բերան արագանայ գետոյն , որ յառաջին բազմամարդ էր և բազմավաճառ , գոլով նաւահանգիստ պատուհական · այլ այժմ մեծապս անկել է 'ի նախնի ճոխութենէ իւրմէ · Թէպէտ և այժմ գնան անդ նաւք հնդկաց , ուր և նստի կուսակալ ոմն արագանցի : Փոքր ինչ հեռի 'ի Քղքէ աստի առ արագան գետով գոյ մեհեան երևելի ուխտատեղի այսր Յի · ուր յամ̃ կողմանց ընթանան բազմութի ուխտաւորաց նց , ուստի քան զամ̃ մեհեանս նց սա է փարթամ և բազմագանձ :

Պէրօէն : Քղք ծովեզերեայ քաջայարմար վճռկանութե · ունելով բ̃զմ գիւղորէս , և պատուհական նաւահանգիստ : Իշխան նր̃ է փոխարքայ , որոյ շուք և արտաքին հանդէսք գրեթէ ոչինչ ընդհատ են 'ի շքոյ թագաւորին արագանայ :

Ջանդէկամ : Քաղաք և նաւահանգիստ՝ գործեալ 'ի չանդի-կամ գետոյն : Յռ̃ջագոյն փորդուգալք ունէին անդէն կալուածս · յորոց տարագրեցին զնս հոլանտացիք : Իշխանութի անգղիացւոց պանկալայի ձգի և յայս Քղք · ոպ̃ և 'ի վ̃ր տխանկայ բազմավաճառ քաղաքին , որ մերձ է սմ̃ յարևելից կուսէ , զոր և բ̃րդ անգամ էառ ընդ իւրև ինքնակալն մողոլաց :

Րօմա : Քղք՝ աւուրբք ինչ հեռի 'ի պէրօէն քաղաքէ կառուցեալ 'ի դժուարամատոյց վայրի , թէ ը̄ ծով , սակս յաճախ և գրեթէ հանապազորդ ալէկոծութե , և թէ ը̄ ցամաք 'ի պատճառս պատառօղ գազանաց : Են այլևս բ̃զմ քաղաքք յայսմ թագաւորութե · ոպ̃ Ֆօրօմայ · Սէփօն · Ջօրա · Աշատրամ · Պուէէրա · Տօղրայ · որ է նաւահանգիստ 'ի հարաւակողմն արագան գետոյ :

Յօդ. Դ. Թագաւորութիւն Հաւայի, կամ բրամայ, բեկուայ, և միէնայ :

Այս երեք Թագաւորութիւնք՝ որք 'ի նախնումն զանազան էին և անկախ զմիմեանց, այժմ կացուցանեն զմի միայն Թագաւորութիւն կրկնապատիկ մեծ քան զՀամօրէն Հայաստանեայս, և բազմամարդ յոյժ: Վասն որոյ և մեք միով յօդուածով ունիմք խօսիլ զնմէ : Յարևելից ունի իւր սահմանն զԹագաւորութիւնն անուանեալ Լաօս, և զՏէրութիւնն չինաց • յարևմտից՝ զարագան, և զաշամ կամ զաշէմ• 'ի հարաւոյ՝ զովկիանոս, և զսիամ• իսկ 'ի հիւսիսոյ՝ զդիպէդ: Հարաւային կողմն որ առհասարակ է դիւր դաշտավայր• իսկ հիւսիսայինն ըստ առաւել մասին լեռնային • յորում են և լայնարձակ հովիտք արգաւանդք: Արտաքին կողմանք Տէրութեան լի են բազմախիտ անտառովք, մինչդեռ 'ի լեռնակողմանս առ. սահմանօքն արագանայ, ուր գտանին և անապատք վտանգաւորք 'ի պատճառս յաճախութեան գազանաց, որք են վագր և փիղ, և այլ ամէհի գազանք յաճախեալք առ սահմանօքն չինաց: Երկու հռչակաւոր գետք ոռոգանեն զայս Տէրութիւն• յորոց առաջինն յանուն Տէրութեան կոչի Հաւա• և է մի 'ի մեծամեծ գետոցն ասիոյ, որ ելանէ 'ի դիպեդայ, ուր կոչի Զամբու• և անցեալ ընդ հաւա արքայանիստ քաղաքն մտանէ յովկիանոս• Ջուր նորա սրընթաց է յոյժ քաղցր և մաքուր: Առ պագան քաղաքաւ ըստ պատմելոյ ուչաց մատենագրին • անհնարին լայնեալ ընդարձակի• և ունի անդէն զքարացուցիչ զօրութիւն, որ 'ի սուղ ժամանակի քարացուցանէ զփայտ: 'Ի սըրընկ նաւահանգստէ այսր Տէրութեան մինչև ցհաւա արքայանիստ քաղաք նորա որ է ճանապարհ երկամսօրեայ, (քանզի պարտ է ընդ հակառակն ընթացից ջուրց գնալ,) յերկուց կողմանց գետոյն առհասարակ են անտառք մեծամեծք ազգի ազգի ծառոց• որք ձգին 'ի խորս բազմօրեայ ճանապարհաւ, յորում գտանին բազում գիւղօրէք, և բազմատեսակ կենդանիք: Անդ առ ափն գետոյն կան բազմութիւնք կոկորդիլոս գազանաց, զոր Կումիր կոչեն, դարանեալք յաւազուտս գետոյն, մինչև չերևիլ բնաւ աչաց, և յելանել անցաւորաց արտաքս 'ի ցամաքն, կամ 'ի գալ գիւղականաց առ ափն գետոյ, յանկարծակի 'ի վերայ յարձակեալ կլանեն, ոչ միայն զմարդ, այլ և զեզն, և

զգո.

զգոմէշ ողջոյն ․ քանզի երկայնութիւն նոցա հասանէ յերկս դրկաչափս և առաւել ։ Գիւղականքն առ 'ի անքոյթ կալ 'ի սարսափելի գազանաց անտի, յերկուց կողմանց գետոյն մեծամեծ գերանօք փակեալ ունին զեզերսն ։

Իսկ երկրորդ գետն կոչի Բէկու որ նոյնպէս ելանէ 'ի գխալեգայ ․ և ոչինչ ընդ հատ է ըստ մեծութեան յառաջին գետոյ անտի ։ Բերանք երկուց գետոցս բազում են յոյժ ․ որք 'ի ձեռն բազմապատիկ և ընդխառնեալ վտակաց իւրեանց գրաւեն յեզերաց ծովուն տարածութիւն ընդ երկայն երից կամ չորից աստիճանաց ․ այսինքն՝ 180, կամ 240 մղոնաց ։ Այս գետք մեծապէս նպաստեն ոչ միայն արգասաւորութեան երկրին, այլ և առաւելապէս ճոխութեան և փարթամութեան 'ի ձեռն վաճառականութեան, որում դիւրացուցիչ են յոյժ ։

Բերք և վաճառք որ առաւել առատագոյնք՝ են որիզ, և այլ ազգի ազգի արմտիք, և բանջարք, և պէսպէս արմատք ․ ունի և վայրի անասունս չորքոտանիս, և զանազան տեսակս զարմանաւոր Թռչնոց ․ բազում յոյժ, մանաւանդ յանտառսն, որպէս և կապիկս անհամարս, որք վնասակար են յոյժ տանց և կարասեաց նոցա ․ զի զամենայն անօթս գտեալս 'ի տան խորտակեն, զկղմինդր տանեաց առհասարակ ցրուեն ։ Գտանին և բազում մեծամեծ փիղք 'ի նախագրեալ անտառսն և այլուր ․ զոր այսպիսի հնարիւք կենդանւոյն որսան ․ քանզի ունին յանտառսն անդ ցանկապատ տեղի մեծամեծ գերանօք չուրջանակի ամրակուռ հաստատեալ, ուր արձակեն զմատակ փիղ վարժեալ ․ որում զհետ պնդեալ արու փղաց, մտանեն անդ 'ի ներքս ․ և յայնժամ փակեն զմի դուռն, և 'ի միւս կողմանէ 'ի բաց հանեն զմատակ փիղն ․ անդ թողեալ զփիղսն առանց կերակրոց սովալլուկ, մինչև 'ի քաղցոյ տկարացեալ անկանիլն յերկիր, ապա կապեալ զնոսա՝ չափով տան նոցա կերակուր, մինչև առ սակաւ սակաւ ընտելանալ, զորս 'ի համօրէն հնդկաստան 'ի բազում պէտս, որպէս 'ի հանդէսս, 'ի պատերազմունս, և երբեմն և 'ի խաղարկութիւնս 'ի կիր արկանեն ։

Ունի, և զանազան դեղորայս, և ամպէր և մուշկ, նաև ազգի ազգի մետաքս ․ որպէս պղինձ երկաթ անագ կապար, և մանաւանդ ոսկի և արծաթ ․ վասնորոյ և առ աղքատս իսկ և առ դուեհիկս տեսանին բաղում ոսկի զարդք ․ և մեհեանք նոցա արտաքուստ ևս են ոսկեզօծեալ ։ Ունի և ազգի ազգի ակունս ․ որպէս ամեթօս, տոպազ, և յակինթ՝ կապոյտ, դեղին, և կարմիր ․ որք աստի սփռեն

Է ամ Ծ : Պատճառն թէ յայս Ծ մաքսապետք ոչ առնուն գրամս 'ի մաքս, այլ զորոշեալ մասն ինչ 'ի վաճառաց անտի. զի եթէ կտաւ են կմ մետաքս, մասն ինչ հատեալ առնուն անտի 'ի մաքս : Եւ ես ոչ 'ի գործ ածեն գրամս տպեալս, այլ անտիպ և անձև, զոր և կշռելով տան իրերաց, վն զի ըստ մք կրեն յանձինս կշիռ և զուռն, և զայլ հարկաւոր գործիս, զի 'ի լինել պիտոյից հանեալ զգործիսն, հատանեն զոսկին կմ զարծաթն, և այնպէս կշռեալ տան միմեանց. և յամ կրպակս միշտ պատրաստական գտանին այն գործիք : Վն զի ըստ մք 'ի փոքր և 'ի նուաղ առևտրութիս ոչ վճարեն վաղվաղակի, այլ սպասեն հասանել 'ի մեծ ինչ գումար գրամոց. և թէպէտ 'ի հնրկ առևտրութիս կապար 'ի գործ ածեն փոխ գրամոյ, բայց զայն ևս կշռելով տան : Զափք նց որոշեալ են 'ի թագաւորէն, բայց և ձևք չափուց են անսովոր, ջղեառաւել մեծագոյնն է յորինեալ ը ձևոյ աքաղաղի: Երևելի տեղի վաճառականութե ոչ, բաց յականց' որոց վաճառականութե առաւել լինի 'ի խորին կողմն Ծին և 'ի հաւս քղք, է նէհնդկստան սրբնկ, կմ սիրիամ կոչեցեալ: Յառաջին ժմկս յորժամ յաջողեալ էր տրութե փորգուքալաց 'ի հնդիկս. միայն նքն էին որք տուրևառուիս առնէին 'ի սմին Ծի. որք և իբրև տէարք էին երկրին. և առ նովքն ժմկօք կարի ծաղկեալ և բարգաւաճ էր Ծս այս, քն զայժմու ժմկիս. զի այժմ ոչ ոք գնայ անդր, բաց 'ի վաճռկանացն, որք բնակին 'ի գօրօմանտէլ և 'ի պանկալայ' 'ի հայոց և յայլ ազգաց. բայց պանկալացիք չեն կարօղ վաճառել անդ, բայց միայն խաշորանիւթ պաստառս : Ըստ որում ըստ մք 'ի նմնէ երթան անդ առաւել 'ի չինել և 'ի նորոգել զնաւս իւրեանց, քն սակս վաճռկանութե. զի բաց յերկաթոյ և 'ի պարանաց' գտանին անդէն ամ նիւթք կարևորք նաւուց, և այն' չափաւոր գնով. և ոչ ամ 'ի սուրատ, ուր ամ նիւթք նաւուց մեծագին վաճառին. յայն սակս նէհնդկստան սիրիամայ է այժմ իբրև գործարան իմն նաւուց, որք նաւեն միայն 'ի ծովս հնդկայ :

Բնակիչք նր ը բարուց մարգասէր են և քաղցրաբարոյ, ողորմած և խոնարհամիտ. բայց և կեղծաւոր զեղխ և անհաւատ. վն և կարի յաճախեալ է առ նս բազմակնութի. իբր 'ի ըստ մս բարձրահասակ են մարմնով, և դիմօք սպիտակ. զգենուն հանդերձս մեծագինս արք և կանայք, որ է պատմուճան երկայն ըստ թեզանեօք, զորս պատեն զմիջով :

կառավարութիւն սորին տրուեալ է միապետական ինքնիշխան ամենեւին · որոյ ինքնակալն շահ անուանի, և ոչ Աստուած · որպէս ոմանք յաշխարհագրաց ասեն, և վերտառութիւն նորա այս է ․՝ Արքայ արքայից, և բարեկամ և ազգակից Աստուծոց երկնից, և այլն · եղբայր արեգական · մերձաւոր ազգակից լուսնի և աստեղաց, և տէր տեղատուութեան և մակընթացութեան ծովու ||: Այս քեզ վերտառութիւն ծաղրական, որպէս և այլոց ինքնակալացն ի խելամէտ ամբարտաւանութեան : Կոչի և թագաւոր սպիտակ փղի · և 24 սպիտակ ամպհովանեաց, կամ տաղավարաց · որք են նշանակ 24 նահանգաց, յորոց վերայ իշխէ նա ինքն ինքնակալն : Զինուորական կարողութիւն նորա երևելի է ըստ բազմութեան թուոյ զօրացն, բայց ըստ զօրութեան՝ առ ոչինչ գրելի · զի զուրկ են յամենայն զինուորական արուեստից: Ո՛չ բաշխին յարքունուստ թոշակք զինուորաց, բայց միայն 'ի ժամս պատերազմի · և յաւարտել պատերազմին թէ յաջողակ և թէ ձախողակ, այր իւրաքանչիւր գնայ 'ի տուն իւր : Ուստի սուտ է այն՝ զոր ասեն ոմանք, թէ ինքնակալն հաւայի և բեկուայ ունի երբեմն յոտին միլիոն մի և կէս զօրաց : 'Ի նախնումն երեք այս թագաւորութիւնք անկախ էին զմիմեանց, որպէս և վերագոյնդ ասացաք, իւրաքանչիւրն ինքնագլուխ գոլով · յետոյ փոխեցաւ 'ի միապետութիւն այսպիսի առթիւ : Արքայն շիամայ և բեկուայ բարեկամ էին միմեանց և դաշնադիր · ապա 'ի ժամանակն դարուն բեկուացիք գողացան 'ի շիամացւոց զհռչակաւոր կուռս կոչեցեալ Սամմայի որում երկու ազգքն ևս պաշտօն տանէին : Արքայն շիամայ բողոք կալաւ սակս այսր գողութեան, և խնդրեաց յարքայէն բեկուայ դարձուցանել զաստուածն իւր · իսկ նա ոչ կամեցաւ տալ : Յայնմ ամի գոյացաւ սաստիկ երաշտութիւն, և առ 'ի թագաւորութեան շիամայ · զոր քուրմքն ասացին լինել պատիժ առաքեալ յԱստուծոց վասն անհոգութեան շիամացւոց 'ի դարձուցանել զսամմայի աստուածն իւրեանց : Վաղվաղակի արքայն շիամայ ել պատերազմաւ 'ի վերայ արքային բեկուայ, և երկիցս յաղթեաց նմա: Իսկ արքայն բեկուայ խնդրեաց օգնութիւն 'ի փորդուգալաց, յորոց և ընկալաւ 1000 զօրականս, որք 'ի փախուստ դարձուցին զշիամացիս, զարհուրեալք 'ի զինուց եւրոպացւոց: Վասն այսր մեծի յաղթութեան ընկալան փորդուգալք յարքայէն բեկուայ զամենայն զոր խնդրեցին · և մի ոմն 'ի զօրապետաց անտի փորդուգալաց կոչեցեալ փերէյրա, եղև ըստ հանուր սպարապետ համօրէն զօրացն բեկուացւոց : Այլ յանդգնեալ ոմն 'ի պատձեռս իշխանութ՟ե իւրոյ, եւ բռնութ՟ք յափշտակել զհարսն մի հրապարակաւ 'ի մայրաքաղաքն անդր յանդիման աչաց իշխանին, ընդ որ անհնարինս սրտմտեալ ժողովրդեան, առհ՟րկ յարձակեցան 'ի վրէժխնդրութ՟ի, և անդէն խողխողեցին զնա, ընդ այլոց փորդուքալաց զորս գտին. և զմարմին նո՟ կապեցին ընդ ձեռ փղի, և զայլ պէսպէս անարգանս ետուն նմ՟, և այսպէս ջնջեցան փորդուքալք առհ՟րկ 'ի բեկուայ:

Ապա տեսեալ չիամացւոց զարքայն բեկուայ զրկեալ 'ի ձեռնտուութ՟ե փորդուքալաց, ելին միւսանգամ 'ի վ՟ր նո՟. որոց ոչ կարելով ն՟ր զդէմ ունել, խնդրեաց իւր թիկունս զարքայն հաւայի, որ էր իշ՟խան մեծազօր: Գնաց սա յօգնութի բեկուացւոց, յաղթեաց, և տարագիր արար զչիամայսն 'ի բեկուայ: Բայց մինչ դառնալոյ անդրէն յտ՟ն իւր, դարձոյց զսուրն 'ի վ՟ր արքային բեկուայ, ընկէց զնա յաթոռոյ. և միացոյց զբեկու, և զսահմանակից նո՟ զիշխ՟ն տ՟ն ընդ տ՟ի տրութ՟ե իւրոյ:

Դենն բեկուացւոց գրեթէ ամ՟ երբք նոյն է ընդ դենի չիամացւոց, զի երկոքին եւ պաշտեն զմամնաւոր կուռս մանուկս և մեծամեծս, առ որս աստիկ յաճախեալ են նմանութիք, և դրօշե՟լք չքծոց իւրեանց, մեհենք 'ի տեղիս տեղիս, զորս 'ի վ՟ն նիւթոց շինեն, ոմ՟ յոսկւոյ յարծաթոյ 'ի քարէ և 'ի փայտէ, բայց ըլի մեծապանծ և անչափ զարդուք: Ունին և կռատունս գեղեցիկս բարձրաշէնս զմբեթայարկս և ոսկէզօծեալս, և մեծամեծ զանգակս. այլ 'ի մէջ անչափ անհամար կռատանց երկու են առաւել անուանի և մեծ, յորս կարեն կալ բիւրաւոր ժողովուրդք. մին կոչի Շենբիշմեալ, և միւսն Կեղ տլում: Քուրմք նց կոչին Դալաբոյնք, որք անկին վարեն կեանս. ագանին զզգեստս կանաչ, կմ՟ դեղին. և են 'ի պատուէի յաչս ժողովրդեան. տունք նց գեղեցիկ և զարդարեալ ամ՟ պատրաստութ՟ք. ոչ տան ծանրութ ուտեք վ՟ն պխտոյից մարմնոյ. զի գործեն ձեռօք իւրեանց զերկիր, որ նուիրեալ են կռատանց, և նովաւ դարմանեն զկեանս: Իսկ յորժամ կարեւոր ինչ պակասի նց, առաքեն զոմն յաշակերտաց իւրեանց մուրանալ, զգեցուցեալ նմ՟ զզգեստս որոշեալ առ այն գործ. որք շրջեալ տանէ 'ի տուն՝ զանգի առնուն առ դրան իւրաքանչիւր տանց երիցս հարկանելով զփոքրիկ թմբուկ ինչ՝ զոր կրեն 'ի ձեռին. և եթէ տան ինչ, անցեալ գնան յայլ տուն, առանց և եւ թախանձելոյ:

Պատմեն բզ՟մք, թէ սջ՟ք կարի մարդասիրութիւն ցուցանեն օտարականաց նաւակոծելոց. կերակրեն զն՟ս և զգեցուցանեն. և 'ի մէջ վանաց իւրեանց տուաքեն 'ի միասին, մինչև հասուցանել զնոսա 'ի սիրխամ նւհնգիստն, երթալ անտի յաշխ՟ իւրեանց, և եթէ ոք 'ի նց՟է հիւանդանայցէ, նախ բժշկեն զնա եթէ իցէ կարելի: Զայս մարդասիրութիւն ցուցանեն ամ՟ցն անխտիր յինչ կրօնէ և իցէ. և ոչ երբէք հարցանեն ումեք յորմէ՞ աղանդոյ ես դու. շատ է զի մարդ է, յայն սակս արժան է ասեն բարիս առնել նմ՟. բայց ոմ՟ պատմեն կեղծաւորութիւն և կախարդութիւն յաճախեալ է յոյժ առ նս՟:

Բզ՟մ և պէսպէս առասպելական աւանդութիւնս ունին զկռոց իւրեանց, որ սովորական է ամ՟ կռապաշտից. յորոց մի է և այն, զոր աւանդեն վ՟ս քեադեալ կռոց զոր ձևացուցանեն ընկողմանեալ և 'ի քուն. և ասեն թէ, 600 ամք են յորմէ հետէ ննջէ. և ոչ զարթիցէ, եթէ ոչ 'ի մերձենալ կատարածի աշխ՟իս. 'ի տաճար ս՟ր կարեն մտանել ամ՟քն: Ունին և այլ կուռս ինչ անուանեալ Տակուն. զորմէ ասեն թէ չէ 'ի կերպ մարդոյ. այլ զխակական կերպարանս ն՟ր գլխովն 'ի ծածուկ պահեն քուրմք ն՟ց, 'ի տաճար ս՟ր ոչ ումեք օրէն է մտանել, բայց միայն քրմաց. և ասեն թէ 'ի խորտակել և 'ի ջնջել քեադեալ չաստուծոյ զաշխ՟ս, սա անդէն վաղվաղակի վերստին նորոգեսցէ, կմ՟ նոր աշխ՟ հաստատեսցէ:

Ունին և զաղանդն հոգեփոխութե՟, ըստ օրինակի մաղլաց. զի համարին թէ 'ի մեռանիլ մարդոյ, եթէ բարի էր, դառնալ փոխի 'ի մարդ. իսկ եթէ չար, յանարգ անասունս: Զդիակունս մեռելոց ոչ թաղեն, այլ հրով այրեն. բայց 'ի հետս ս՟յ գտանին և նշանք ինչ ճշմարիտ հաւատոյ. զի թէպէտ պաշտեն զկուռս, այլ իմաստունք ն՟ց ընդունին և զա՟ծ գերագոյն տ՟ր արարիչ երկնի և երկրի, և անուանեն հայր և որդի և հոգի. զհայր կոչելով Փրայ, զորդին Սրայ, զհոգին Բուրդանայ, և զսոսա զերեսին Սունպայ: Եւ քուրմք ն՟ց ներքին պաշտամամբ պաշտեն զգերագոյն ա՟ծ էակ, զոր կոչեն գերագոյն, կմ՟ մեծ ա՟ծ. որում ոչ առնեն բնաւ պատկեր, կմ՟ նմանութե՟ ինչ. զի ասեն թէ չիք տեսութե՟, կմ՟ գաղափար ն՟ր 'ի մարդիկ:

Չունին 'ի կերակուրս այնչափ ինչ խտրութե՟ որպէս կռապաշտ հնդիկք յաշխ՟ին մողոլաց, զի զա՟մ կենդանիս ուտեն անխտիր զփիղ զշուն զկատու զմուկն և զգորտն, բայց ոչ զեզն. և ոչ սպանանեն, այլ սպասեն մինչև ցսատակել, և ապա ուտեն. ք՟զի զանասունս ընդունակս հոգւոյ համարին, ուստի և սպանանել զնս մարդասպանութի: Ունին պահս ամիսս վեց անընդհատ, յորում ոչ ուտեն միս, և ոչ ըմպեն ցքի, յետ պահոց առնեն տօն մեծահանդէս, զոր կոչեն Սգանքօդ, զորոյ զմեծաշուք հանդէս, և զնշ՟ն խաղարկութս որ 'ի վր՟ գետոյ չէ մարթ լեզուաւ պատմել, ք՟զի սոսկ տեսիլ այնչափ բազմութե նաւակացն զարդարելոց զաչս խտտղել հիացուցանեն. յորս ամ՟ ինչ ոսկեհուռն գիպակօք, և ոսկեղէն կազմածովք են զարդարել մինչև և թիակք նց՟ առհ՟րկ ոսկեզօծք. առնեն և բզ՟մ հրձգութս վառօթոյ: Այս թգ՟րութի այժմ բաժանի յերիս ընդհանուր մասունս, կմ՟ Տ՟ս. որք են Հաւա. Բէկլա. և Մէկէ որոց գլխաւոր քաղաքք են առաջիկայքդ:

Հաւա, որ կոչի ևս Պրամա: Է գլխաւոր մայրաք՟ղք և արքայանիստ այժմեան տրուե այսր Ծի առ հաւա, կմ՟ ջամբով գետով. մեծ և բարեշէն. տունք նորա բարձր են և քարաշէն. փողոցքն լայն և ուղիղ: Ապարանք թգ՟րին է գլխաւոր զարդ ք՟ղքին, որ ներքուստ և արտաքուստ է ոսկեզօծ. և շուրջանակի պատեալ քառակուսի պարսպաւ. որոյ իւրաքանչիւր կողմանք 800 քայլ են ը՟ երկայնութե: Ունի և զերիս բերդս ամուրս 'ի մէջ իւրերաց իբր բերդ 'ի բերդի. չի են 'ի նմ՟ մեծամեծ շինուածք, մնւնդ մեհեանք մեծագանձք: օդ նր՟ բարի է և առողջարար, ուստի և չիք 'ի նմա այնչափ ինչ հիւանդութի. ամ՟ ինչ առատ է անդ և սակաւագին:

Բնակիչք նր՟ բաց 'ի զնշ՟ն ազգաց հնդկաց են և բզ՟մ փորդուքբւք կոչեցեալ հնդիկ քրիստոնեայք, որոց թիւ ը՟ ոմանց հասանէ մինչև 94000 տուն կմ՟ գերդաստան: Գտանին անդ և բազմութիք հայոց, բայց ոչ որչափ յառաջին ժմկս. ուր ունին և եկեղեցի գեղեցիկ պայծառ և ոսկեզօծեալ, և բարձր զանգակատուն առ նովաւ, և սեննակք և բնակարանք քահանայից: Առաջին քահանայն որ գնաց անդ հովուել զեկեղեցին, ոմն ասեն եղև մովսէս վարդապետ յէջմիածնէ. զկնի նր՟ տր՟ նիկողայոս յերևանայ. ապա տր՟ պետրոս ջուղայեցի. ապա տր՟ աղէքսանդր. և զկնի նր՟ տր՟ իգնատիոս ջուղայեցի եղբայր տր՟ պետրոսին, որ եկաց անդէն ամս 12: Յայն ժմկս մերազնեայք որք կային անդէն՝ ունէին իշխանութի մծ. հաղարապետք ընչից և տան թգ՟րին լինէին 'ի մերոց. յորոց մի էր և պարոն նիկողոսն այրն անուանի, որ էր գանձապետ թագաւորին : Նաև վաճառականութիւն մեծամեծ իրաց, մինչդեռ ականց էր 'ի ձեռս նոցա · որպէս վկայէ նաև պիշլինկ Յագիր · հատ · ԻԸ · 'ի թուղթ 204 · ուր յետ գրելոյ թէ վաճառականութիւն ականց բարգաւաճ է 'ի մայրաքաղաքն անդ Հաւա, ասէ · Հայք հաստատեալ ունին անդէն զիշխանութիւն իւրեանց, որ դժուարացուցանէ զվաճառականութիւնս եւրոպացւոց, նաև անգղիացւոց ևս · որք յեւրոպացւոց անտի ինքեանք միայն ունին կալուած մի 'ի բեկու :

Պեգուն : Քաղաք մեծ ձգեալ ըստ երկայն առ Հաւա գետով · իբրև 150 մղոնաւ հեռի 'ի Հաւա մայրաքաղաքէն 'ի հարաւակողմն նորա, այլ այս քաղաք ըստ մեծի մասին աւերեալ է :

Բրան : Քաղաք կառուցեալ 'ի կղզի ինչ, որ է 'ի մէջ երկուց վտակաց Հաւա գետոյն :

Են և այլ բազում քաղաքք և գիւղօրէք առ նովին գետով · այսինքն Համղապա · Սըրա · Մէնդէմա · Բօլանէ · Նաբրէ · Նագա · Լէջէէ · Ջամ · Մէոթ · Բըդէէ · Տէկան · Պուպրանմ · Կըփամ · Տօնէբ · ևն :

Բէկու : Է քաղաք՝ որ 'ի նախնումն էր գլխաւոր մայրաքաղաք, և աթոռ արքայից բեկուայ · նախ քան զվերոյ յիշատակեալ խռովութիւնն, որք զհամօրէն տիրութիւն զայս արկին ընդ իշխանութեամբ ինքնակալին Հաւայի : Ձգի ըստ երկայն առ իւր համանուն գետով, որ յերկուս բաժանէ զնա · յորոց մին կոչի Նոր քաղաք · իսկ միւսն Հին քաղաք : 'Ի հին քաղաքն վաճառականք և արհեստաւորք բնակին · իսկ նորն էր բնակարան արքային, և արքունի պաշտօնատարաց յորժամ բեկու ունէր իւր սեփական թագ : Բայց իբրև անկաւ ընդ տիրութեամբ Հաւայի, այնուհետև արքունի ապարանք եղեն բնակարան փոխարքայի նորա · որ է իբրև քաղաք փոքր, կամ գեղեակ քաջ ամրացուցեալ ըստ սովորութեան երկրին : Տունք քաղաքիս նորոյն և հնոյն՝ առհասարակ փայտակերտ են, և ծածկեալ տերևովք · այլ համբարանոցք վաճառաց աղիւսաշէն և կամարակապ առ 'ի պատսպարութիւն վաճառաց 'ի հրոյ, որ բազում անգամ յաշխարհին հնդկաց ողջոյն քաղաքս ապականէ : Շրջապատ քաղաքիս է իբրև 18 մղոն, և է անպարիսպ :

Սըրիամ կամ Սըրինկ, զոր եւրոպացւոց Յագիրք կոչեն Սիրիամ : Է նաւահանգիստ, կամ բանդար երևելի առ բերանով Հաւա գետոյն յարևմտեան բեկուայ, 'ի կղզի ինչ ձևացուցեալ 'ի ծովու, և 'ի նոյն Հաւա գետոյն : Զայս և եթ նաւահանգիստ ունի բեկու · զի խցաւ նաւահանգիստն Մարտաբանայ, որ չէ այնչափ ինչ հեռի 'ի սմանէ և է պատուճական՝ բաւական ամ՟ ազգ նաւուց · Երից աւուրց ճ՟նպ՟հաւ հեռի է 'ի Բեկու հին յարքայանիստ քղքէն ը՟ գետն գնալով : Օդ նր՟ բարի է, և ջուր գետոյն բարեհամ, վ՟զի և չեն այնչափ յաճախեն՟ անդ հիւանդութիւ՟ք, և մարթ է զա՟մ ինչ համարձակ ուտել : Տունք և շինուածք նր՟, որպ՟ և այլ ամ՟ քղքաց առհ՟րկ փայտակերտ են մեծամեծ գերանովք շինեալք · քղ՟ի 'ի շրջակայ սահմանս նր՟ են անտառք մեծամեծ ծառոց, որոց փայտք պատուճական և պիտանի են 'ի շինուա՟ծս · վ՟զի շինեն անդ և մեծամեծ նաւս : Բնակիչք նր՟ են զնզն ազգ հնդկաց, և փորթուգալք, որք ազգաւ չեն փորթուգալք, այլ հնդիկք դարձեալ 'ի քրիստոնէութե՟, որ յանուն ազգին փորթուգալաց անուանին, որպ՟ և յայլ Յս հնդկաց : Քրիստոնէութի՟ն համարձակ է անդէն, մինչև մարթ է համարձակ զկռապաշտս դարձուցանել 'ի քրիստոնէական հաւտս · որպ՟ պատմեցաք և զարագանոյ Տէէն : Գտանին անդէն և բազմու՟ն հայոց, բայց ոչ որչափ յառաջին ժմկս, որոց ոմանք նորոգ եկեալ են 'ի Ճուղայոյ · և բզ՟մք ևս անդէն ծնեալ, ուր ունին և եկեղեցի : Ունին և եւրոպացիք կմ՟ հնդիկ փորթուգալք քրիստոնեայք մեծամեծ եկեղեցիս · յորոց զմին շինեցին հայք վ՟ն ումեմ՟ն քահանայի պօղոս անուն, ը՟ որ զշարեկին այլ քահանայք եւրոպացւոց · շինուած եկեղեցւոյն գեղեցիկ է մեծ և հոյակապ հանդերձ կաթուղիկէիւ, և զանգակատամբ, և բզ՟մ սենեակք առ նովաւ 'ի բնակութ՟ քահանայից, զորս առհ՟րկ շինել ետուն մերազնեայք, որոց գլուխ էր պարոն նիկողոսն ճուղայեցի աղալարենց, որ առաւել ք՟ զա՟մնին սէր ունէր առ քահանայն, յայլ և այլ տեղեաց ածեալ արուեստաւորս : Ամ՟ իրաց առատութի՟ է անդ, և ա՟մ ինչ դիւրագին · որպ՟ միս խուղ որիզ ձուկն շաքար, են :

Յամին 1600 արքայն արագանոյ զայս նաւհնգիստն 'ի պարգև փիլիպպոսի բրիդօնեան, որ էր ազգաւ փորթուգալ, թոյլ տուեալ ամրացուցանել զնա · և շինել անդէն քղք, լինել տեղի ապաստանի փախստականացն բեկուացւոց առ 'ի շինութե՟ Յի եւրոյ : Իսկ փիլիպպոս շինեաց վաղվաղակի ամրոց հզօր, զոր և ամրացոյց պատերազմական զինուք · ը՟ նմին ձեռն էարկ և 'ի շինու՟ն քղքին : Այլ արքայն արագանոյ հրապուրեալ յոմանց մահմետական հնդկաց · հրամայեաց փիլիպպոսի կործանել զամրոցն, ը՟ նմին և զքղքն : Իսկ նա դաշնադիր լեալ ը՟ մերձակայ իշխախանաց Հնդկաց, և ևս ամրացոյց զոր թէպէտ պաշարեցին արագանացիք, այլ ոչ ինչ կարացին առնել նմա։ Այս յամին 1608. հուր անկեալ 'ի քղք անդր, հրդեհակէզ արար զայն ամրոց. զոր վերստին շինեցին փորդուգալք 'ի բարձրավանդակ վայրի, ուր կայ մինչև ցայսօր, որոյ արուարձանք քառապատիկ մեծ են, ք՟ զքղքն։ Սակայն յետոյ, ոպ՟ վերագոյնդ նշանակեցաք, տարագրեցան անտի վն՟ բռնակալութեան իւրեանց՝ որով հարստահարէին զբուն բնակիչս երկրին։ Ուստի այժմ քղքն է 'ի ձեռս բեկուացւոց. ուր նստի քղքապետ ոմն, որ գրեթէ միշտ է յարքայական զարմէ։

Մարդաբան. զոր ոմանք դնեն 'ի թգ՟րութեն շիամայ։ Յառաջագոյն էր սա մի 'ի զօրաւոր քղքաց սորին տ՟րութե, քաջայարմար վճռկանութ՟ե. զի գոլով առ բերանով բեկու գետոյն, որ կոչէր և գետ մարդաբանայ, ունէր նաւահանգիստ մեծ՝ և բաւական ամ՟ ազգ նաւուց, առ համանուն ծոցով ծովու։ Իսկ արքայն հաւայի՝ զկնի ը՟ իւրև նուաճելոյ զբեկու, քանդեաց զքղքն, ը՟ նմին աւերեաց և զնաւահանգիստ նորա, ուր ոչ ևս կարեն մտանել նաւք, այլ միայն փոքրիկ նաւակք։

Են այլևս քղքք բազումք մերձ 'ի բերանս գետոյն հաւա, ոպ՟ Նէկրօն. Գոսմին. Որանգօն. Տալա. Բաղճէլին. սոքա երկոքեանս են 'ի կղզի ինչ ձևացուցեալ 'ի նոյն գետոյն. Տօնկա 'ի հիւսիսակողմն սիրիամ նաւահանգստին, զորմէ գրեցաք 'ի վերոյ։ Եւ առ բեկու գետովն մերձ 'ի ծով Սիւխամա. Մաթօնիօ. Շամփան։

Յօդ. Է. Թագաւորութ՟ի շիամայ ։

Յարևմտից ունի իւր սահմանակից զբեկու և զմալկխանոս. յարևելից զգամպայա կմ՟ զգամպօյա. և զլաօս. 'ի հիւսիսոյ ը՟ մասին զլաօս, և ը՟ մասին զմիէն, և զբեկու, իսկ 'ի հարաւոյ զմալկխանոս, որ ձևացուցանէ զընդարձակ և զերկայն ցամաքակղզին իւր, որ կոչի ցամաքակղզի մալաղայի։ Ընդ թրութ՟ շիամայ պարունակին թրուեքն Լաօս. և Գամպայա. զորոց խօսեսցուք մասնաւոր յօդուածովք։ Աշխարհս այս է լեռնային. քզի ըստ մեծի մասին դաշտավայրք նր՟ շուրջանակի պատեալ են լերամբք. և բաց յայնցանէ են 'ի նմ՟ միադօտի լերինք ինչ, որք ձգին ը՟ բազմօրեայ ճ՟նպհ, և գնան միանան ը՟ լերինս որ 'ի Թաթարստան: Սակայն 'ի վ՟ր այսր ամ՟ն արգաւանդ է յոյժ, մինչև ը՟ միոյ երկերիւր բերել: Եւ պատճառ առաւել արգասաւորութ՟ն երկրի ն՟ր են տիղմք, որք լինին 'ի յորդուէ անձրևաց, մնւնդ զի հող ն՟ր չէ ապառաժուտ. Թէպ՟տ զկնի անձրևաց խակ և խակ ցամաքին, և սաստիկ պնդանան, որ 'ի տեղիս տեղիս վնասէ յոյժ արգասաւորութ՟ն երկրին: Եւ 'ի կողմանս ինչ անհամար բազմութ՟ն ժժմանց եղծանեն զբերս ն՟ր, յորոց գլխաւորքն են ազգի ազգի արմտիք և պտուղք և գօգօ անուանել՟ ծառք և եղէգն շաքարաբեր, և այլ սոցին նման բերք՝ սեփականք Գին Հնդկաց: Իսկ լեռնային կողմանք լի են բազմախիտ անտառովք, յորս բուսանին և ստուար եղէգունք, բայց առաւելապէս 'ի գիճին վայրս. ունի և ազգ մի ծառոց բզ՟մ յոյժ, որք կարի պատուական են 'ի շինութ՟ն նաւուց: 'Ի վայրենի անասնոց յաճախագոյն գտանին անդ փիղ, ռնգեղջիւր, յովազ, վագր, և կապիկ բզ՟մ, եղջերու, և նապաստակ. ունի և ընտանի անասունս, ոպ՟ խաշինս և արջառս և այծս. նաև ընտանի հաւս, բայց սակաւ:

Այլ 'ի ցամաքակղզին այսր Գի՝ կոչեցել՟ Մալաքա, լինին ազգի ազգի Թռչունք անբաւք մի ք՟ զմի գեղեցիկ և սքանչելի գունովք, նոյնպ՟ս և զնզ՟ն բոյսք և խոտք առատք, հոտաւէտք և օգտակարք 'ի պէտս դեղորէից: Գտանին անդէն և ողնիք մեծամեծք, յամանս 'ի նջէ են դեղթափ կոչեցեալ բանզէհիր, որ թէպէտ և յայլ բզ՟մ կենդանիս լինի, ոպ՟ 'ի կապիկս, յայծս և՟ն, այլ պատուական ք՟ զամենին է ողնւոյն, որոյ ուտելով զվնասակար ինչ խոտ՝ լեղի ն՟ր պնդանայ առ սակաւ սակաւ իբրև զքար, և մարմին ն՟ր հիւծի, ոչ կարելով ճաշակել ինչ. զայսպիսիս գտեալ բնակչացն՝ ըմբռնեն, և զլեղի ն՟ր առնուն, որ լինի մարդկան դեղ օգտակար ը՟դէմ պէսպէս ծանր ախտից. մնւնդ ընդդէմ հիւծմնայ անուանեալ հիւանդութ՟ն. օգտէ և ըմբռնելոց 'ի ժանտախտէ, զի եդել՟ զայն 'ի ջուր առ քանի մի վայրկեանս, զոր դառնացուցանէ յոյժ, և ըմպեալ զջուրն, պտճռ՟է զբիրան. որ է գլխաւոր դեղ այսպիսի ջերմնատոչոր ախտից. այլ գործածութ՟ն ար՟ անծանօթ է եւրոպացի բժշկաց.

Որչափ դառնագոյն է այս դեղթափ, այնչափ ազնիւ է և օգտակար. և դառնութ՟ն սմանց 'ի լաւագունից այնչափ ազդու և զօրաւոր է, մինչև յունիլն զայն 'ի ձեռին, դառն որակութ՟ն ն՟ր ծաւալի ոչ միայն 'ի ձեռս այլ և 'ի վերին մասն բազկին · ուր վկայեն՝ որք զփորձ նորա առեալ են, 'ի մերձեցուցանել զլեզու 'ի բազուկն : Այս աշխարհ, որ կարծի լինել Ոփերոն ոսկի, կամ Ցամաքակղզին ոսկւոյ, յիշատակեալ 'ի նախնեաց, ըստ ոմանց Ծագրայց ունէր յառաջագոյն բազում բովս ոսկւոյ · զորս բազմութիւն ոսկիաձոյլ կռոցն հաստատեն՝ որք պահին 'ի տաճարս նոցա · բայց այժմ չիք, և ոչ մի · և թէպէտ յամին 1688 արքայն շիամայ եա յուղել զերկիրն ըստ ամենայն տեղիս, յոր գործ աշխատեցաւ և ոմն 'ի սպանիացւոց որ վարժ էր յայս արուեստ 'ի հանքս ամերիկոյ, այլ ոչ եգիտ բայց եթէ հանք մի պղնձոյ · յորում և փոքր ինչ ոսկի, այլ սակաւ յոյժ, և իբր ոչինչ : Եւ ոմն յեւրոպացւոց վինչէնդի կոչեցեալ, որ էր բժիշկ արքային շիամայ, եգիտ 'ի գլուխ միոյ 'ի լերանց նոցա բովս պատուական պողպատի 'ի վաղ ժամանակաց բացեալ · բայց չէ յայտ թէ յումմէ · եգիտ անդ և ակն վանի, և զառնիկ · ռամկ՝ · զռնեխ, կամ զառնիխ ասացեալ, և սպիտակ մարմարիոն, այլ և ոսկի, բայց ոչ յայտնեաց արքային : Չիք անդ. երկաթ · կամ գէթ ոչ գիտեն գործել զերկաթ · վասն զի չունին ոչ դանակս երկաթիս, և ոչ բևեռս : 'Ի լերինս նոցա գտանին և ազգի ազգի ականք պատուականք · որպէս զմրուխտ, յակինթ, անդամանդ, այն է՝ էլմաս · և այլ սոցին նմանք · այլ շահ և ոչ մի ինչ բերեն արքունի գանձուց · զի բովանդակն է 'ի ձեռս պաշտօնատարաց, որք են հաճոյից իւրեանց 'ի կեր առնուն զայսոսիկ :

Արտաքին վաճառականութիւն ստորին Ծի է 'ի ձեռս այլոց ազգաց, մանաւանդ եւրոպացւոց · յորս հոլանտացիք գլխաւոր էին, որք և կալուածս ունէին անդէն · զոր 'ի 1660 'ի բաց թողին, սակս անիրաւութեանց · զոր արարին նոցա պաշտօնեայք արքային, և այլ շիամացիք : Այլ փոքր ինչ զկնի, տեսեալ շիամացւոց զմեծ շահս առևտրուն իւրեանց · զոր 'ի հոլանտացւոց անտի շահէին, դարձեալ կոչեցին զնոսա · և արքայն շիամայ շնորհեաց նոցա բազում ազատութիւնս և առաւելութիւնս 'ի վերայ այլոց ամենայն ազգաց · որք յետոյ սովորութեամբ խափանեցան · այս ինչ եւեթ մնացեալ նոցա · զի նաւ նոցա կարէ ըստ մեծութեան գետոյն գնալ մինչև ցշիամ քաղաք · ուր նաւք այլոց ազգաց պարտաւորեալ են զկայ առնուլ 'ի բերան անդր նորին գետոյ : Բայց և այս 'ի յաճախել անդ և այլոց ազգաց, անօգուտ եղև նոցա : Ան զի արքայն շիամայ զամենայն առևտուրն երկրին յինքն գրաւեալ ունի, որ բաց 'ի պարգևաց զոր պահանջէ յարտաքնոց, ինքն միայնակ գնէ զվաճառս նց կարի նուազ գնով․ և զվաճառս երկրի իւրոյ ըստ հաճոյից իւրոց վաճառէ նց։ Վս և հոլանտացիք այժմ մի միայն նաւ տանին անդր, բարձեալ 'ի նմա երիվարս 'ի ձեռաց կղզւոյն, շաքար, համեմս, և կտաւս․ և առնուն անտի բերս ինչ կոչեցեալ առ նմ Գաշլին․ զերեսուն և զվեց օխայն իբրև 6 վենետիկեան ոսկւոյ․ և զպատոճական ինն խէժ, զոր 'ի գործ ածեն 'ի ներկս, զ144 տրամն ոսկւոյ․ և զատամունս փղաց, զորոյ զմի օխայն վաճառեն իբրև 4 տաճկական ղռշի և կիսոյ․ այլ և ոսկի աւազ․ զորոյ զմի մարքա, որ է մախալ 48, գնեն 26 ոսկւոյ։ Զայս ամ առևտրութի առնեն նք 'ի պատճառս Սափան անուանեալ փայտի, զորոյ զերեսուն և զվեց օխայն գնեն իբրև երկու պուռուշի և կիսոյ․ ապա թէ ոչ 'ի վաղուց արդեօք 'ի բաց թողեալ էին զայսպիսի առևտրութի․ որոց ծախք առաւելուն քան զշահն։

Երկու լեզուք և գիր են 'ի շիամ․ մին կոչի լեզու շիամացւոց․ իսկ միւսն պալիեցւոց․ և երկոքին ևս ունին սեփական տառս․ առաջինն ունի 37․ իսկ երկրորդն 33․ որք առհրկ բաղաձայնք են և լի նշանախեցիւք։ Արտասանութի շիամացւոց դժուարին է, գրեթէ ոչինչ ընդհատ 'ի սինէացւոց, որ արտանոց թուի ազգ ինն երգոց․ մեծագոյն մասն բառից նց միավանկ են։ Իսկ լեզուն պալիեցւոց՝ սեփական է ուսումնականաց նց և քրմաց, յորմէ առնուն զանուն զոհք նց, և ծէսք, և օրէնք, և պաշտօնք․ և է առ նմ իբր գրաբառ լեզու, և ոք․ զոր և բանաստեղծք նց 'ի կիր արկանեն 'ի շարադրութի ծիծաղկան առասպելաց իւրեանց։

Նախնի պատմութի սորին թէպէտ լի է առասպելեօք․ որք և երկու ընդհանուր դարս դնեն ազգի իւրեանց․ մի 545 ամօք յռջ ք զգալուստ փրկչին մերոյ յի․ յորում մեռաւ մեծն Սամոնա գոտոմ օրէնսդիր շիամացւոց, զոր խելաժէտ քուրմք նց և տգէտ ժողովրդն ածացուցին․ իսկ զերկրդ դարն սկսանին 638 ամօք զկնի ծննդեան փրկչին մերոյ․ որ գրեթէ հաւասարի հիճրէթին մահումետի․ այլ թողեալ զայսպիսի առասպելս նց յիշատակեսցուք զայնս, որք անցին ը նա 'ի վերջին ժամս։

Արդ՝ յամին 1679․ այր ոմն յոյն ազգաւ կոչեցեալ կոստանդին ևէրաքի, կմ ֆալքօն՝ այր անհանդարտ և փառամոլ ծնեալ 'ի չէֆալօնիա, յածեալ նախ աստ և անդ յեւրոպիա․ և մնդ յանգղիա, հուսկ յետոյ գնաց անկաւ ՚ի Սիամ․ ուր այնպ՟ս որսացաւ զսիրտ Թ՟գրին, մինչև յետ սուղ ժմկի լինել ն՟ր առաջին պաշտօնատար յարքունիս ն՟ր․ որ և անկոպար իշխանութ՟, մանաւանդ թէ բռնակալութ՟ կառավարէր զժողովուրդն․ և զի Թ՟գրն միշտ հիւանդագին էր, և անժառանգ․ եդ ՚ի միտ յաջորդել զկնի ն՟ր ՚ի Թ՟գրութ՟ Սիամայ: Եւ առ կատարումն խորհրդոց իւրոց՝ խորհեցաւ իւր Ֆիլկոնս առնուլ զգաղղիացիս․ ոպ՟ յռ՟ջագոյն արարին ոմանք ՚ի փառասիրաց իշխանացն Սիամայ․ որք ունելով իւրեանց օգնական 600 Ճարօնայիւ ը՟ հաճոյից իւրեանց կառավարէին զԹ՟գրութիւն: Արդ սա յամին 1684 առաքեաց հրեշտակս ՚ի գաղղիա, խնդրել նաւս և զօրս յարքայէն գաղղիացւոց: Իսկ մեծն լուդովիկոս ԺԴ, որ առ նովին ժամօք Թ՟գրէր, ընկալաւ զպատգամ ն՟ր՝ կամեցեալ նովին Ճ՟նպրհաւ տարածել զօրէնն իւր և յարևելեան հնդիկս:

Իբրև հասին գաղղիացիք ՚ի Սիամ, կոստանդին ետ ն՟ց զքաջայարմար նւ՟հնգիստն պանգօգայ, զոր ամրացուցին ն՟ք, որչափ ինչ մարթ էր: Իբրև ծանրացաւ հիւանդութ՟ Թ՟գրին և մերձ էր ՚ի մեռանել, կամեցեալ կոստանդնոյ կալ մնալ յիւրում իշխանութ՟՝ ջանայր հնարէր, զի մօնբի դօնսա որդեգիր արքային յաջորդեսցէ ՚ի տեղի ն՟ր, և բարձցի ՚ի կենաց մեծ սպարապետն զօրաց Սիամայ․ յորմէ երկնչէր մեծապէս: Բայց գաղղիացիք, որք չէին լեալ հասու խորհրդոյն կոստանդնոյ, չեղեն նմա ձեռնտու յայնմ՝ ոպ՟ պարտն էր: Արդ եղև սպարապետին խորհուրդն կոստանդնոյ, և առժամայն ետ հատանել զգլուխն մօնբի դօնսայ, ը՟ նմին սպան և զկոստանդին․ զոր ապա ՚ի չորս մասունս հատեալ, արկ ՚ի կերակուր շանց: Իսկ զօրապետն գաղղիացւոց անագան ուրեմն ՚ի վ՟ր հասեալ իրացն, թէպէտ սա ժմկ մի վիշտս ոչ սակաւս հասոյց բնակչաց երկրին․ այլ ՚ի վերջոյ ստիպեցաւ ելանել ՚ի Թ՟գրութ՟ անտի հանդերձ զօրօք իւրովք: Այսպէս անօրէն սպարապետն կորոյս զամ՟ իշխանս որք էին յարքայական զարմէ․ որոց և անկ էր յաջորդութիւն Թ՟գրութ՟․ և ինքն յափշտակեաց զԹագաւորութիւնն անուանեալ զանձն Թ՟գր Սիամայ, դանասերեայ ևն․ և խնամակալ քամպայեայ, եօհօրայ, բադանայ, և քլետայ: ՚ի ս՟ր սերնդոց Թ՟գրէն մինչև ցայժմ ՚ի Սիամ:

Տարեկան մուտք Թ՟գրութեն Սիամայ, է 3 միլիոն ոսկի վէնէտիկեան․ թող զայն, զոր առնու յայլ արտաքին Ծոց, որք յետոյ միացուցան ը՟ Թ՟գրութ՟ ն՟ր:

Իսկ ծախք նո՟ց սակաւ են յոյժ. զի ոչ տայ թոշակս զօրաց. այլ պարտական են ծախիւք իւրեանց զինուորիլ. և ո՛չ տայ վարձս ծառայից, զի գերի են ամենքն: Իսկ դենն չիամացւոյ գրեթէ ամ՟ իրօք նոյն է ընդ դենի բեկուացւոց, ո՟ր ասացաք 'ի վերոյ. հաւատան զհոգեփոխութ՟ն, որ է հն՟դկաց աղանդ համօրէն հընդկաց. այլև զմիութ՟ն այ՟. բայց ընդ նմին պաշտեն և կուռս. և մանաւորապէս զոմն անուանեալ Սամօնա գօտօմ, որ թարգմանի քհ՟նյ, կամ տալապօն անտառի. այն է անապատաւոր. զորմէ աւանդեն, թէ էր որդի թգ՟րի սէյլան կղզւոյն. այր բարերար տալապօնաց. մայրն նո՟ց կոչէր մաքա մանիա, ի՟ք մեծ մանիա, յղացաւ սա՟ն զսոյն զայս սամօնա գօտօմ 'ի հոտոյ ծաղկի միոյ, որ եղև նորոգիչ կրօնի նց՟, և ոչ առաջին հիմնադիր: Այլ ոմանք հաւանական համարին, թէ սոյս այր անուանի՝ էր մի ոմն 'ի պրամանաց անտի հնդկաց, որ յո՟ւլ՟ք զայլս դնացեալ քարոզեաց անդ զկրօնս պրամայ: Ընդ ժմկս ժմկս գնացին անդ և քարոզիչք քրիստոնէական հաւատոյ, այլ ոչինչ պտուղս արարին. զի թէպէտ 'ի ժմկս ոմուն. կմ՟ այլ ինչ կարօտութ՟ ոմանք տային զանձինս 'ի մկրտութի՟, ո՟ր եղև 'ի ժմկին՝ յորժամ գաղղիացիք ունէին տէրս, և եկեղեցի 'ի շիամ ք՟ղ՟ք. առ 'ի ընդունել նպաստս 'ի քրիստոնէից. բայց իբրև անցանէր սոքա, ոչ ևս կամէին լինել քրիստոնեայ:

Այս թագաւորութ՟ն առհասա՟րկ բաժանի 'ի Վերին, և 'ի Ստորին. կմ՟ 'ի Հիւսիսային, և 'ի Հարաւային. յորոց իւրաքանչիւրն պարունակէ եօթն եօթն գ՟աւս, որք ունին զանուն 'ի մայրաք՟ղ՟քաց իւրեանց: Նահանգք վերին, կմ՟ հիւսիսային մասին չիամայ են Բօրսըլուք. Սանքէլուք. Լաքոնդայ. Քամբէնկբէդ. Քօքօնրէբին. Բիէչօն. Բիդչայ: Իսկ ստորին, կմ՟ հարաւային մասին են. Եօհօր. Լիկօր. Պատանէր. Չանդաբօն. Տէնասէրիմ. Պօրփըլին. Պինկայ. Ցայս ամ՟ նահանգս իշխեն գ՟աւակալք. յորոց ոմանք ժառանգութ՟ ունին զայն պաշտօն, և ոմանք ընտրութ՟. առաջնոցն իշխանութ՟ն կայուն է ը՟ կենաց. իսկ յետնոցն ձգի Գ՟ ամս երիս: Այլ վ՟ զի սահմանք նէհնգացս անծանօթ են մեզ. նմին իրի յառաջիկայդ ունիմք ստորագրել զգլխաւոր ք՟ղ՟քն, որք գտանին ընդհանրապէս յայս Թ՟. նախ զհիւսիսակողմանն, ապա զհարաւայինն, կմ՟ ցամաքակղզւոյն, որ և մալաղա կոչի:

Հիւսիսային կողմն Շիամայ ·

Շիամ, կամ Օփէօչա · 'ի բնակչաց երկրին անուանեալ Մէնթէա, ինփեա : Է քղք̄ մեծ և գլխաւոր տեղի Շիամայ, յը̄արձակ դաշտավայրի ը̄ որ անցանէ Մէնամ կմ̄ Մէյնամ գետն : Շրջապատ նր̄ է իբրև 9 մղոն · ամրացուցել̄ պարսպօք և աշտարակօք · առ որով բերեն առուակք ինչ մենամ գետոյն, որք առնեն զնա կատարեալ ցամաքակղզի · զի յա̄մ կողմանց պատեն զնովաւ, բաց յարևելից կուսէ : Պարիսպք նր̄ ոչ պարփակեն և ոչ զվեցեր̄րդ մասն շինուածոց · և են անդէն բազմութին յոյժ կռատանց իբրև 300 · և առ նոքօք բնակարանք քրմաց · շուրջ զկռատամբք են բազում գամբարանք · յորոց վր̄ կանգնեալ կան բուրգք կմ̄ մահարձանք բարձրաբերձք · որք միանգամայն ը̄ աշտարակայն կռատանց, որոց գլուխք իբր 'ի բոլմս ծածկեալ են անագեայ թիթղամբ ոսկեզօծեալ · վայելուչ իմն երևին 'ի հեռուստ : Փողոցք քղք̄իս երկայն են և լայն և ուղիղ, ոմանք քարայատակք՝ և ոմանք ոչ, ուստի և աղմուտ · ընդհատեալ խրամօք՝ ը̄ որս անցանեն կամրջօք · և յայն սակս ոմանք յԵւրոպացւոց նմանեցուցանեն զնա վենետիկ քղք̄ի վս̄ բազմութե̄ կամրջաց նորա :

Տունք քղք̄իս ը̄ մեծի մասին եղէգնակերտ են 'ի վր̄ ցցից քանի մի ոտնաչափ բարձրութ̄բ յերկրէ · սենեակք նց̄ ցրիւ աստ և անդ 'ի մի բակ շրջափակեալ · ուստի ընտանիք միոյ տան ոչ կարեն բնակիլ ը̄ միով յարկաւ : Նաև ախոռք անասնոց նց̄ 'ի վր̄ ցցից շինեալ են՝ բարձր յերկրէ · առ 'ի պաշտպանիլ 'ի ջուրցն ողողմանէ : Սակաւ տունք գտանին 'ի նմա քարաշէնք, և այնք են օտարականաց են · Թգ̄րն ևս ետ շինել քանի մի քարաշէն տունս վս̄ դեսպանաց արտաքնոց : Իսկ ապարանք Թգ̄րին քարաշէն են, կառուցել̄ 'ի հիւսիսային կողմ̄ն քղք̄ին, և երրեակ պարսպօք շրջապատել̄ · ը̄ մէջ երեցունցն ևս երրեակ հրապարակք : Ներքինն՝ ուր բնակի Թգ̄րն, կոչի Վանկ · ուր կան անտառք պարտէզք և վտակք հոսական ջուրց · իսկ համօրէն տեղին՝ յորում են այս երեքին պարիսպք կոչի Բրասադ · յա̄մ նոճագս յորժամ բնակիչք տեղւոյն մտանեն կմ̄ ելանեն 'ի վանկ կոչեցեալ տեղին, ծունր կրկնեն խորին խոնարհութ̄բ · Նաև 'ի շրջիլն յայն տեղիս 'ի հեռուստ անցանեն առ առաջնով դրրամբ նր՟ : Բայց 'ի սմանէ ունի Թգ՟րն 'ի քղք անդր այլ ևս ապարանս :

Լօվօ, կ՟մ Լուվօ : Քաղաք մեծ և գեղեցիկ 'ի դաշտավայրի առ մենան գետով 'ի հիւսիսակողմն շիամայ. ուր բզ՟մ անգամ բնակի Թգ՟րն 'ի մեծաշէն պալատի իւրում :

Սինանկ ֆանկ, կ՟մ Սինկլաֆ : Քաղաք առ մենան գետով 'ի հիւսիսակողմն Ծ՟ին շիամայ :

Լանփանդայ : Քաղաք ընդ երկայն ձգեալ առ մենան գետով 'ի հարաւակողմն նախագրեալ քաղաքին :

Բուրսելուկ : Է քղք յարևելեան կողմն նորին մենան գետոյ 'ի հարաւոյ լանփանդայոյ :

Բէրապաֆ : Է տեղի որում Թգ՟րին վայելուչ, և զուարճալի . անդ անցուցանէ զժմկ մի տարւոյն :

Պանկօկ : Է մի միայն նուհնգիստ սորին տրուէ . ուր Թոյլ տուեալ է ամ՟ նաւուց վաճառականաց խարիսխ արկանել . որ և 55 միլոնաւ հեռի է 'ի շիամայ, 'ի բերան մենան գետոյն :

Տանասէրի, կ՟մ Տանասէրիմ : Քղք ծովեզերեայ յարևմտեան կողմն . յորմէ արևմտեան ծովեզերքն շիամայ կոչին Ծովեզերք Տանասէրիմայ . ոմ՟ և կղզիքն, որք 'ի մերձակայ ծով անդր կոչին Կղզիք Տանասէրիմայ :

Մէրկի, կ՟մ Մէրկուի : Քաղաք յարևմտեան կողմն Տանասէրիմայ : Ընկերութիւն վաճառականաց գաղղիացւոց ունէր անդ վաճառատեղի . զոր չինեաց առնել զձռկանութ ամ՟ ազգ ականց բեկուայ, և հաւոյի . այլ և անոգի, և փայտի 'ի պէտս շինուածոց :

Տաւայ : Քաղաք ծովեզերեայ 'ի հիւսիսակողմն Մէրկի քաղաքի . կառուցեալ 'ի սար ինչ, որ յանուն նր՟ կոչի Սար Տաւայայ :

Են անդ այլ ևս քաղաքք բազումք . յորոց զոմանս ունիս տեսանել յաշխարհացոյցն մեր :

Հարաւային կողմն շիամայ, կամ Ցամաք կղզին Մալաքա .

Մալաքա : Է գլխաւոր մայրաքղք համօրէն ցամաքակղզւոյն . որ 'ի նախնումն մինչև էր անկեալ ընդ իշխանութ՟ փորթուգալացւոց՝ էր աթոռ Թգ՟րացն մալաքայի . որ անկանի 'ի հարաւակողմն առ մալաքա անուանեալ հռչակաւոր նեղուցաւն, ընդ որ անցանեն ամ՟ նաւք, որք գնան կամ դառնան 'ի Ճաբօնայ, յՃէէն չինաց, 'ի տունգինայ, 'ի քօչինչինայ, 'ի քամպայս, 'ի Սիամայ, 'ի Եօհօրայ, և 'ի գերահռչակ կըղզեացն Մադագասքարայ, 'ի Ֆօռմօզայ, 'ի Փիլիպպեան կղզեաց, 'ի Մօլուքեան կղզեաց, 'ի Պանտայէ, 'ի Պօրնէօ կղզեաց, 'ի Ճաւայէ, 'ի Սումադրայէ, 'ի Պանկալայէ, 'ի Գօրօմանտէլայ, 'ի Մալապարայ, ևն:

Յետ 1744 Թուականին յայս նեղուց ոչ այնչափ ինչ յաճախեն Նաւք, որպէս և ոչ 'ի Նեղուցն պատգալիոյ. վասն զի գաղղիացիք գտին զնեղուցն պալեայ. և անգղիացիք զլամպօգայն, որք քաղաքայարմար ևս են: Վասն այլոց պատճառաց Մալաքա 'ի Նախնումն էր իբր վաճառանոցի համօրէն վաճառուց Նախայիշատակելոց աշխարհաց. նաև Նախ քան զտիրելն Նմա փորդուգալաց: Իսկ այժմ զի է ընդ տէրութեամբ հոլանտացւոց, կորոյս զնախնին պայծառութիւն իւր: Փորդուգալք առաջնորդեալք 'ի Մեծէն Ալպուքուերքեայ 'ի 1512 առին զնա, և գտին անդ անբաւ գանձս, և մեծամեծ համբարս վաճառաց: Շինեցին անդ ամրոց հզօր, և ամրացուցին զնաւք: Ապա 'ի 1641 հոլանտացիք առին 'ի փորդուգալաց, ընդ որոց իշխանութեամբ կայ մնայ մինչև ցայսօր:

Եւ է քաղաքս այս ընդարձակ 'ի լայնատարր դաշտավայրի, որ ձգի 'ի ծովակողմն առ պատուհական և յաջողակ ծոցովն ծովու. յոր մարթ է միշտ մտանել նաւուց, թէպէտ ոչ մինչև ցամրոցն. զի չէ ջուրն բաւական խոր առ Նովաւ: Այս ամրոց է դրեթէ բոլորաձև. կառուցեալ առ ոտս սրածայր փոքրիկ լերին, պարփակք նորա հինեալ կան 'ի վերայ ժայռից, որք բարձր են և ամուր: Հոլանտացիք և փորդուգալք ունին անդ եկեղեցիս: Յառաջագոյն թիւ բնակչաց քաղաքիս հասանէր ց12000. իսկ այժմ հազիւ 300 տունք գտանին 'ի նմա 'ի միասին առեալ զհոլանտացիս, ըզփորդուգալս, զչինէացիս, և զհնդիկս. յորս յաւէտ երևելի են չինէացիք. յորոց 'ի կրպակին գտանին ամենայն ազգ վաճառաց, որք 'ի գործ ածին 'ի նմին աշխարհի: Տունք նորա իբր 'ի բազմին քարաշէն են և փողոցքն երկայն և ուղիղ. բայց ոչ քարայատակ, ուստի յանձրևային ժամս տղմուտ են: Բուն մալաքացիք յարուարձանս նորա բնակին 'ի փոքրիկ խրճիթս. որք իբրև գերիք են հոլանտացւոց:

Շրջակայ սահմանն քաղաքիս յորում տիրեն հոլանտացիք ըստ երկայնութեան է իբրև 140 մղոն. իսկ ըստ լայնութեան ուրեք 38, և ուրեք 48. և է անդ կուսակալ մի հոլանտացի հանդերձ խորհրդականօք իւրովք, որք և յայլ տեղիս ընկերութեան. և թէպէտ յառաջագոյն կախեալ կային զնմանէ և այլ քանի մի տեղիք զոր ունին հոլանլանտացիք 'ի հնդիկս․ ուստի և սա անուանեցաւ գլխաւոր տեղի կամ աթոռ․ բայց այժմ ունի ընդ իւրև միայն զհետագայ քաղաքդ:

Գօվէա: Է գլխաւոր քղք համանուն իմն ճուռի տանեղ և խորին գետով․ 76 մղոնաւ հեռի 'ի ծովէ․ ուր նստի կուսակալ, կամ փոխարքայ անձնշան:

Լիկօր, կմ **Լինկօր**: Է քաղաք յարևմտեան կողմն դանգալամ՝ կղզւոյն, որոյ հիւսիսային ծայրն կոչի Կէպ Լիկօրայ:

Եօհօր, կմ **Եօր**․ որ կոչի և **Սօհօր**: Է գլխաւոր քղք համանուն նահանգի 'ի հարաւային ծայրի անդ այսր ցամաքակղզւոյ առ ծոցով ինչ ծովու ող 'ի նեղուցն Սինկափուրայ:

Պատուաւէր: Քաղաք՝ ուր նստի կուսակալն Եօհօրայ, մերձ 'ի բերան Եօհօր գետոյն: Նախնի պատուաւէր քղքն քանդեցաւ 'ի փորթուքալաց․ իսկ այժմեան չինեցաւ ձեռնտուութ̄ հոլանտացւոց, որ չնչին է և աղքատաչէն․ զի տունք նր̄ ը̄ մեծի մասին եղէգնեայ են․ իսկ մեծամեծայն փայտակերտ:

Փահանկ: Քաղաք անշուք 'ի սոյն եօհօր նահանգի առ համանուն գետով, որ ը̄ քղքն անցանէ, պատեալ շուրջանակի փայտակերտ պատնշօք, ը̄ նմանութ̄ պատուաւէր քղքին․ ոմն և չինուածք տանցն, և փողոցքն նման են ամենևին տանց և փողոցաց նր̄, բաժանեալք 'ի միմեանց եղէգնեայ ցանգօք, և գօգօ անուանեալ ծառովք: Իսկ Փահանկ գետ նր̄ ոչ կարի ինչ հեռի 'ի քղքէ անտի գործէ կղզի, ուր ը̄ երկու դրունս մտանէ 'ի ծովն․ յորոց մին, որ է 'ի հիւսիսակողմն՝ խոր է իբր 4 ձողաչափ․ և լայն իբրև 40: Ունի պատուական ծոց, կմ նաւահանգիստ նաւուց իբրև 200 քայլիւ հեռի յեզերաց ծովու, ուր գտանին պատուական ինքնաբուղխ աղբիւրք․ Սակայն չի են 'ի նմա աւազակոյտք և ցամաք տեղիք․ յայն սակս դժուարին է նաւուց նաւել մինչև ցքղք անդր: Այս գետ սուզանէ ընդհնդն ողջոյն, և հասանէ մինչև ցոտս մալէյեան լերանց․ գտանին 'ի նմ հատք ձոյլ ոսկւոյ․ զորոց պատմէ համիլթօն ոմն եթէ ետես ինքն անդր հատս, կմ բեկորս ոսկւոյ՝ 5, և մինչև 96 ունկի կշռով․ որք յաճախագոյնս գտանին 'ի խորագոյն և 'ի շատաջուր տեղիս գետոյն: Առ եզերբք սորին գետոյ անկեալ կայ պղպեղ, որ ամի ամի բերէ իբրև 300 պարկս և եթ․ այն է չնչաւ․ զի աւելի ք զայն ոչ տանի երկիրն: Ունի և եղէգն հնդկային ազնիւ, յորոց գործեն գաւազանս ընտիրս․ և ձուկն առատ, և որս վայրի ։ Օդ նր̅ չէ այնչափ առողջարար առ սաստիկ տապոյ և յաճախումն անձրևաց ։

Դուանկանօ, կմ̅ Դուինկան ։ Է տեղի լինի զուարճալի յոյժ առ գետով միով մերձ 'ի ծովն․ յորում են իբրև 1000 տունք, բայց ոչ 'ի միասին առ 'ի ձևացուցանել գիւղ, կմ̅ աւան, հանդերձ փողոցօք և հրապարակօք․ այլ ցրիւ ։ Կէսն բնակչաց նր̅ չինացիք են․ որք գտանեն անդէն վաճառս այնչափ, մինչև բաւական լինել նց̅ ամի ամի բեռնաւորել զերիս կմ̅ զչորս նաւս մեծամեծս․ որ գնան յածեն 'ի չինաս, 'ի քամպոյա, 'ի գունգին, և 'ի սամպաս ։

Բուդանի ։ Քաղաք՝ որ շինուածովք դրեթէ ոչինչ ը̅հատէ յառաջնոյն, կառուցեալ առ ծոցով ծովու 'ի վր̅ լեռանին, որ կոչի Սար Բուդանեայ․ որ և է 'ի հիւսիսակողմն քղքին, յարևելեան եզերս ցամաքակղզւոյն․ ունի մզկիթս տաճկաց, և կռատունս ։ 'Ի նախնումն էր սա քղք̅ բազմամարդ, բայց վս̅ կարի հեռաւորութե̅ իւրոյ յորքայանիստ քղքէ․ և վս̅ չորութե̅ և անօրէնութե̅ բնակչացն տեղի ետուն անտի ամ̅ օտարականք, որք վճռ̅կանութս առնէին անդէն․ ուստի և քղքն դարձաւ 'ի նուազումն և յաղքատութե̅ անդր, յորում լեալ էր երբեմն ։

Բրաւ, կմ̅ Բրահ ։ Է քաղաք՝ յափն ցամաքակղզւոյն յարևմտեան կողմն՝ 'ի վր̅ սրածայր ինչ հողոյ, որ ձևացուցանէ զծոց, յորում է Բէնրաւ կղզին 'ի հիւսիսակողմն սորին քղքի ։ Բնակիչք նր̅ են ազգ վայրենիք, գաղտնաբարոյք և անընտելք ։ Հոլանտացիք՝ որք ունէին անդ տեղի վաճառոյ, 'ի ժանտութե̅ բնակչացն ստիպեցան թողուլ զայն 'ի բաց, և խոյս տալ անտի ։

Յօդ Ե․ Թագաւորութի̅ քամպայայ, կմ̅ քամպօյայ․

Այս տ̅րութի̅ յարևելից ունի իւր սահման զքօչինչին․ յարևմտից՝ զսիամ․ 'ի հիւսիսոյ՝ զլաօս․ իսկ 'ի հարաւոյ՝ զովկիանոս ծովն ։ Ունի գետ մի մեծ Լափէա կոչեցեալ, որ բղխէ ը̅ մէջ Տ̅ին չինաց և դիւակդայ, և անցեալ ը̅ Թգ̅րութեն լաօսայ մտանէ յայս Տ̅, զոր և ը̅ մէջ բաժանէ, և զնորին անուն առնու․ այլ 'ի բնակչաց երկրին կոչի և Մէգան․ կմ̅ Մէգօն պոնաւ․ և

ա

ապա ը՟ երկու առաջս զեղու յովկիանոս անդր․ որոց մին գնայ ը՟ արեւելս, եւ պահէ զՔամպայայդ անուն. իսկ երկրորդն անուանի Պանոաւ, կ՟մ Բեներան փարանջերոյ : ՚Ի մուտս անդ ն՟ր յեզր ծովուն խորութ՟ի ն՟ր հազիւ հասանէ ցչորս ձողաչափ․ բայց ՚ի ներքին կողմանս ուրեք ուրեք խորագոյն է․ Վ՟ս եւ մարթ է նաւակաց գնալ մինչեւ ցմայրաքաղաքն ն՟ր, թէպէտ եւ ուրեք ուրեք սակս բարձրայատակ սահանացն ը՟ որ զառ՚ի վայր հոսին ջուրք, հարկ լինի ն՟ց ը՟ ցամաք ճանապարհորդել: Այս թ՟գրութի է ը՟ պաշտպանութ՟բ արքային քօչինչինայ․ բայց ունի եւ իւր սեփական թ՟գր, կ՟մ փոխարքայ․ որ յառաջն հարկատու էր արքային չինայ, այլ ՚ի 1717 անկաւ ը՟ թ՟րութ՟բ արքային քօչինչինայ : Գլխաւոր տեղիք սորին Ծ՟ի են :

Քամպօձեա, կամ Քամպօյա․ ՚ի բնակչաց Լաւուէք անուանեալ: Է գլխաւոր մայրաքաղաք սորին թ՟րութեն կառուցեալ առ մեգամն, կամ քամպայա գետով․ ուր նստի թ՟գրն, կ՟մ փոխարքայն: ՚Ի նախնումն էր ՚ի նմ՟ արքունի պալատ ինչ, որ էր գլխաւոր զարդ քաղաքին․ թէպէտ փայտակերտ, այլ առհասարակ ոսկեզօծ պէսպէս գեղեցիկ զարդուք զարդարեալ: Բնակիչք ն՟ր ը՟ առաւել մասին են բնիկ ազգ երկրին․ եւ ը՟ մասին օտարականք, ո՟պ ճապօնացիք, փորթուքալք, քօչինչինացիք, եւ մալաղացիք: Յառաջագոյն բ՟զմ էին անդ եւրոպացիք․ այլ այժմ ո՛չ եւս նոյնպէս․ եւ որք ենն՝ ը՟ մեծի մասին փորթուքալք են, եւ թօշակաւորք փոխարքային :

Թիջանո · Լանհօր · եւ Գարօլ : Են նւ՟հնգիստ յարեւմտեան ծովեզերեայ սորին թ՟րութե :

Քուբանի · եւ Սօաք : Են բերդք, եւ նւ՟հնգիստ, ուստի ելանէ փղոսկր, եւ խէժ, անուանեալ խէժ քամպայայ: Յայս երկու նւ՟հնգիստս ոչ ոք կարէ վաճառականութիւն առնել, առանց հրամանաց արքային քօչինչինայ․ յորմէ եւ փոխարքայն քամպայայ այնչափ երկնչի․ զի ՚ի 1720 ոչ իշխեաց առանց հաւանութ՟ն ն՟ր տուրեւառութիւն առնել ը՟ ումեմն եւրոպացւոյ՝ համիլթօն կոչեցեալ:

Պօնթամաս : Է նւ՟հնգիստ, եւ բերդ · որ յառաջագոյն երեւելի էր · այլ յամին 1717 առին զնա սիամացիք, եւ հրկեզ արարին : Յառաջքան զայն այս բերդ էր ՚ի համօրէն թ՟րութեն յայսմիկ, ուր յաւէտ ծաղկեալ եւ բարգաւաճ էր վաճառականութիւն ը՟ օտարականաց :

Յօդ Է. Թագաւորութիւն Լաօսայ ։

Յայսր աշխարհէ սակաւ ծանօթութիւն ունիմք ք̃ զայլոց Տաց Հնդկաց . ք̃զի ոչ յաճախեն անդ վաճառականք օտար ազգաց . յայն սակս համառօտիւ ունիմք անցանել զնովաւ ։ Արդ՝ այս Տ ունի իւր սահման յարեւմտից՝ զչխամ . յարեւելից՝ զդունգին . 'ի հարաւոյ՝ զքամպայս . իսկ 'ի հիւսիսոյ՝ զՏն չինաց ։ Բերք նր̃ են ազգի ազգի խեժք, կնդրուկ՝ այն է ասըլպէնտ, վէրնիճ, բեշկ մշկոյ աղնիւ, ոսկի սակաւ, և անասունք ինչ պատուական ականց . և առաւել ք̃ զամ̃ կարմիր յակինթ, և մարգարիտ՝ զոր քամպայացիք Մուք անուանեն։ Բայց զարմանք են, թէ զիա̃րդ մարթ է նմա, այնչափ հեռի գոլով 'ի ծովէ, ունել մարգարիտ, և առաքել 'ի ծովեզերեայ կողմանս ։

Բնակիչք Լաօսայ բազմօք նմանին չինաց , բայց սա փոքր մի առաւել խարտեաշ են , և ցամաք մարմնով , և գեղեցիկ ք̃ զչխամացիս , և զքամպայացիս , այլ նման են նց̃ գծագրութ̃ դիմաց , լեզուաւ և դենիւ ։ Բլթակ ականջաց սոցա երկայն են , ոպ̃ և բեկուացւոցն և այլոց ծովեզերեայ բնակչաց , զոր կանայք զարդարեն ոսկւով մինչև են ամուսնացեալ ։ Արքն 'ի վր̃ սրունից մինչև ցծունկս կոտեն ասղամբ պէսպէս ծաղիկս , կմ̃ այլ ինչ 'ի նշան բարեպաշտութ̃ , և առ յարգի լինելոյ առաջի այլոց ։ Ունին զդեն չխամացւոց և բեկուացւոց , և 'ի լեզու նց̃ խօսին . բայց միայն զի ոչ կարեն արտասանել զերկու տառս՝ Ր և Լ ։ Զբանս դենի և հաւատոյ իւրեանց գրեն 'ի վր̃ տերևոց ծառոց . իսկ զայլ բանս Տականս 'ի վերայ ստուար թղթոց կաւեղէն գրչօք ։

Գլխաւոր քաղաք նր̃ կոչի Վինգիան . որ է աթոռ թագաւորին ։ Զայս քաղաք ոմանք յՏագրաց Լանճիա , կմ̃ Լանդչանէ անուանեն ։

Ունի միւսևս քղ̃ք անուանեալ Չիուամայ , զոր եր̃կմայրաքաղաք սորին ո̃րաւ̃ տան ։

Յօդ Է. Թագաւորութիւն Քօչինչինայ:

Այս աշխարհ յարևելից ունի իւր սահման զծոց ծովուն դունգինայ, յարևմտից՝ զերկարաձիգ միագօտի լերինս, որք անջրպետեն զնա 'ի թագաւորութենէն քամպոյայ և լաօսայ. 'ի հիւսիսոյ՝ զդունգին. իսկ 'ի հարաւոյ՝ զծովն հնդկաց. որ և ձգի առ ափն ծովու ընդ երկայն իբրև մղոնս 750. իսկ ըստ լայնութեան 60 մղոնաւ ևեթ. ուստի և է երկարաձիգ լեզու: Յելս ժդ դարուն էր սա նահանգ դունգինայ. բայց այժմ է ինքնագլուխ թագաւորութիւն. յոր զայս օրինակ ամբարձաւ: Զի իշխան մի յարքայական զարմէ առաքեալ 'ի հարաւային նահանգս դունգինայ, կացուցաւ անդ կուսակալ նոցա, ընդ սովին պայմանաւ, զի պարտական լինել տալ զհամար կառավարութեան իւրոյ սպարապետին զօրաց արքային դունգինայ: Իսկ նա յայտնապէս ապստամբեալ, հիմնեաց 'ի քօչինչին զնոր թագաւորութիւն, ուր յայնմ օրէ մինչև ցայժմ տիրեն միմեանց զկնի յաջորդք նորա, 'ի բաց բաժանեալ յարքայէն դունգինայ:

Դէն սորին թագաւորութեան նոյն է ընդ չինաց, քանզի յառաջագոյն էր մի 'ի նահանգաց նոցա: Բազում մեծաշէն կռատունս ունի. ուր և քրիստոնեայք ունին եկեղեցիս գեղեցիկս: Բնակիչք նորա ըստ առաւել մասին տգեղ են կազմութեամբ մարմնոյ, և գծագրութեամբ դիմաց. առ որս գեղեցկութիւն համարեալ է ունել սեաւ ատամունս, և երկայն եղնգունս: Զայն նոցա քաղցր է. և ինքեանք կարի օգտակարք ընկերութեան մարդկան վասն անխոնջ աշխատասիրութեան իւրեանց. զի գործեն զամենայն գործ ծանրակիր, մշակեն զերկիր. որսան զձուկն. առնեն վաճառականութիւն. մտանեն 'ի պատերազմունս քաջութեամբ: Իսկ ըստ բարուց՝ քաղցրաբարոյք են և անկեղծք, մարդասէրք առ օտարականս, մանաւանդ քաղաքացիք, և մեծամեծք նոցա՝ որք ծանրաբարոյք են առաջի ռամկին, տիրեն զիրաւունս և զարդարութիւն, զոր և անյապաղ և առանց ինչ ծախուց վճարեն: Թէպէտ ոմանք 'ի մատենագրաց զայսոսիկ գեղեցիկ ձիրս քօչինչինացւոց յերկբայս արկանեն, բայց այլք հաստատեն:

Վաճառականութիւն սոցա ընդ արտաքնոց չէ այնչափ ինչ երևելի. գլխաւոր վաճառք նոցա են հալուէ, և այլ տեսակ մի անուշահոտ փայտի, կոչեցեալ Պեդել· մետաքս, բամբակ, մարմարիոն, փայտն կոչեցեալ Սապան· շաքար, և կասիայ, այն է՝ Խըյարչէնպէ : Երևելի վաճառականք սորին տէրութեան են չինացիք, որք գնան և 'ի Ճեաբօն, 'ի Մալաղա, և 'ի Ճաւա· վասն զի բնիկ քոչինչինացիք չեն այնչափ ինչ վարժք 'ի նաւարկութիւն : 'ի սմին երկրի գտանին և հանք մարմարիոնի, և բովք ոսկւոյ, և երկաթոյ· լինի անդ և որեզ, և եղէգն շաքարաբեր· և ազգ մի պատուական փայտի՝ որ կոչի փայտ արծուոյ· և Գալամպագ անուանեալ փայտն ազնիւ, զոր 'ի գործ ածեն 'ի պէտս արքունեացն որ աստ, և յայլ երկիրս : Ունի անտառս թթենեաց՝ յորս ճճեամք ինքնին գործեն զմետաքս առանց ինչ մարդկային խնամոց· ուստի բազում է յոյժ 'ի սմին երկրի այսպիսի վայրենի մետաքս, զոր ժողովեալ վաճառեն չինացիք· Բուսանի անդ և թէյ՝ բայց սակաւ, և պղպեղ, ևն :

Այս տէրութիւն 'ի ժբ նահանգս բաժանի· յորոց երեքն են 'ի հիւսիսակողմն· այսինքն Տէուաճէ· Գուանմղէոյ· Տէհլատ· Եօթն 'ի մէջն· որք են· Հուէ· Զամ· Գուանկնէա· Գուինին· Փուէն· Մուրու· Նուդրանկ : Եւ երկու 'ի հարաւակողմն· Ջէամբա· և Տօնայէ :

Նահանգն Հուէ որ առնու զանուն 'ի գլխաւոր մայրաքաղաքէ համօրէն տէրութեան, ուր է աթոռ թագաւորին, որ և յայն սակս կոչի և Նահանգ արքունեաց· է փարթամ ամենայն իրօք քան զայլ նահանգս· օդ նորա առողջ· ջուրքն բարի յոյժ՝ որ ուր ուրեմն գտանի յայլ նահանգս· և լի այլ ամենայն բարեօք :

Նահանգն Զամ, սահմանակից է հուէ նահանգին· մեծ է և փարթամ, 'ի լերինս իւր ունի բովս ոսկւոյ· այլ և փայտ արծուոյ, և գալամպագ :

Իսկ միջին նահանգք փոքր են· յորս երևելի է նահանգն Նուդրանկ, ոչ միայն վասն լաւութեան օդոյ և առատութեան արգասեաց, այլ և վասն յաճախութեան բունոց ինչ թռչնոց, որք մեծութեամբ չեն ինչ աւելի քան զծիծառունս, 'ի վերայ ժայռից առկախեալ : Եւ ասեն թէ բաղադրութիւն բունոցն այնոցիկ է 'ի փրփրոյ ջուրց ծովու, և 'ի հիւթոց ինչ որ ծորի 'ի կրծոց այնց թռչնոց· յորս հարեալ շառաւիղաց արեգական պնդացուցանեն զնա և սպիտակացուցանեն, և թափանցիկս գործեն : Բայց հատեալ 'ի ժայռից անտի, և արկեալ 'ի ջուր ջերմ, սեւանան, և ոմանք մանր մանր հատեալ, լինին համեմիչ ըմպելեաց· թէպէտ համ նորա չէ ամենևին ախորժական, այլ կարի զօրացուցիչ :

Ջէամբա նահանգն, որ է 'ի հարաւակողմն՝ անտառալից է, և ը՟ առաւել մասին անապատ անմարդի, ուր գտանի վագր, և փիղ: Օդ ն՟ր յոռի է ը՟ ամիս հինգ կ՟մ վեց, ջուրք ն՟ր և կերակրեղէնք, բաց 'ի ձկանց' վնասակարք. Երկիրն աւազուտ և անբեր: Այս նահանգ թէպէտ ը՟ բնական արգասեաց անբեր, այլ առ համեմատութ՟ այլոց, արգաւանդ և բեղմնաւոր գտաւ պտղով աւետարանին ք՟ի. վ՟ն զի բ՟զ՟մ քարոզիչք մեծամեծ դարձս գործեցին անդանօր, և գործեն մինչև ցայժմ:

Նահանգն անուանեալ Տօմպուտ է մի յերևելի նահանգաց սորին տ՟րութ՟, որ ձգի ը՟ երկայն յափն ծովու ը՟ նմանութ՟ Ձենովայի: Ունի զա՟մ ազգս պտղոց, և այլոց արգասեաց, այլև վաճառ բ՟զ՟մ ելանէ 'ի նմանէ: 'Ի սմին թ՟գրութ՟ չիք երևելի ինչ ք՟ղ՟ք, կ՟մ նուէնգիստ արժանի մասնաւոր իմն յիշատակի. բաց յերկուց հետադայ ք՟ղ՟քացդ, թէ արժան իցէ ք՟ղ՟ք անուանել զնո՟:

Հոուկ, կ՟մ Բէնէն: Է արքայանիստ տեղի, և գլուխ համօրէն այսր տ՟րութ՟, անձև և անշուք, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաւաքումն աղքատաշէն շինուածոց 'ի խումբս խումբս բաժանեալ, որք մի միայն գէօղս կացուցանեն 'ի գեղեցիկ դաշտավայրի, բաժանեալ յարևմուտս և յարևելս 'ի ձեռն գետոյ, յորոյ եզերս շինեալ կան բ՟զ՟մ փոքրիկ տունք. ունի քանի մի հրապարակս վայելուչս, և կրպակս յոլովս և բազմավաճառս: Ապարանք թ՟գրին փայտակերտ են, և միայարկ. շինեալ 'ի վ՟ր սեանց, որք են յոյնխաղ փայտէ. այն է' ապանոզ. և է 'ի հիւսիսակողմն գետոյն 'ի կղզի ինչ երկայն իբրև 3 մղոն. յորում բնակին նաև մանտարինք, կ՟մ ազնուական իշխանք արքունեաց. որ և յայն սակս կոչի Թագաւորական կղզի:

Ֆոյէֆօ, կ՟մ Դոյխօ: Է ե՟րկդ գլխաւոր տեղի սորին տ՟րի. որ երկու մղոնաչափ ձգի ը՟ երկայն առ գետով միով. ունի բ՟զ՟մ փողոցս, որք ը՟ մէջ հատանեն զմիմեանս. ուստի և 'ի հեռուստ վայելուչ իմն երևի. Կարի յաճախեն աստ չինացիք 'ի պատճառս նաւահանգստի իւրոյ. ուր և առնեն բ՟զ՟մ առևտուրս որիզոյ, շաքարի, մետաքսի, ողնխաղ փայտի, հալուէի և ոսկւոյ. տունք ն՟ց քարաշէն են. ունին անդ և տաճար մի կռոց:

Յայսմ թագաւորութ՟, ո՟չ և 'ի չիամ, և 'ի քամպայա գտանին ժողովուրդք ինչ վայրենիք. որք յանտառս և 'ի լերինս բնակեն. և չունին ո՛չ օրէնս, և ո՛չ կառավարութի, այլ ը՟ անասնոց' ը՟ բերման բնութ՟ վարին:

Յօդ Ը. Թագաւորութիւն Դունգինայ:

Այս թգ̃րութն̃ 'ի հիւսիսոյ ունի լեռ սահմանակից զՉին չինաց. 'ի հարաւոյ զքօչինչին. յարեւմտից զլաօս. իսկ յարեւելից՝ ծոց ծովու իւր համանուն, ը̃ մէջ դունգինայ և քօչինչինայ ածեալ կայ պարիսպ երկայնաձիգ սկսեալ 'ի լերանց որք սահմանակից են լաօսայ, մինչեւ ցծովն, անջրպետ ը̃ մէջ երկոցունց Ծացս կառուցեալ: Բզ̃մ գետս ունի. յորս գլխաւորն է Քալէ անուն գետն, որ ելանէ յՉէն չինաց, 'ի Իւնան նահանգէն, և անցեալ ընդ մէջ սորին թ̃րութ̃ե, մտանէ 'ի ծոցն դունգինայ:

Օդ նր̃ մաքուր է և առողջ, մանաւանդ 'ի ջերմ և 'ի ցամաք ժամս: Երկու եղանակք տարւոյ զանազանին 'ի սմին Եր̃ի, ոպ̃ և յայլ Եր̃ս ինչ ը̃ արեւադարձիւք՝ մին ցամաք, և միւսն անձրեւային: Առաջինն սկսանի յամսեանն մայիսի, և տեւէ մինչեւ ցօգոստոս. և յայնժամ անհնարինս սաստկանայ տապն. յոր և հողմունք ոչ այնչափ ինչ հնչեն: Իսկ եր̃կրդն 'ի սկզբնէ սեպտեմբերի մինչեւ ցմայիս. և յայնժամ յաճախեն մէգք, և անձրեւք:

Երկիր նր̃ արգաւանդ է յոյժ. բերէ ազգս ազգս արդասեաց, մանաւանդ որիզ, և պտուղս պատուականս. առատութիւն է անդ և լիմոնի կիտրոնի և այլ այսպիսի պտղոց: Ունի և բազմատեսակ անասունս վայրենիս և ընտանիս. զի յանտառս նր̃ լինեն վագր, եղջերու և կապիկ. ոպ̃ և 'ի դաշտս եզն և կով և խոզ. այլ խաշն և էշ և առիւծ չիք անդ: Ունի և ձուկն առատ 'ի գետոյ, և 'ի ծովու: 'Ի կողմանս ծովեզերեայց քօչինչինայ գտանի կրիայ բզ̃մ յոյժ, որոյ միսն համեղ է և պատուական:

Բնակիչք նր̃ իբր 'ի բզ̃մս բարեձեւ են մարմնով. Թխագոյն, և վարսք նց̃ ըստ մեծի մասին սեաւ երկայն և Թաւ. ներկեն զատամունս 'ի սեաւ. զի տգեղութիւն համարին զսպիտակութիւն ատամանց. աշխատասէր են և ճարտարամիտ և ուսումնասէր. համբոյրք և մարդասէրք առ օտարականս. մանաւանդ առ վաճառականս: Մեծամեծք 'ամբարհաւաճ են, և մեծամիտ. զօրականքն յանդգունք. իսկ խառնիճաղանճ ռամիկն կարի յօժարեալ 'ի գողութիւն, Թէպ̃տ և խստիւ պատժին:

Բազմակնութ՟ օրինաւոր է առ նս՟․ և դէն նց՟ նման է դենի չինաց։ Անչափ բազմամարդ է Տս՟ այս, զի բնակիչք նր՟ թէպէտ ժրաջան են 'ի գործ, սակայն անբաւ բազմութ՟ աղքատաց գտանի 'ի նմա, որք առ 'ի չգոյէ դարմանոյ կենաց, բզ՟մ անգամ բռնադատին վաճառել զորդիս իւրեանց, երբեմն և զանձինս ևս։ Կառավարութ՟ սորին թգ՟րութ՟ անկարգ է և չփոթ․ զի երկու իշխանք են 'ի նմա, որք ունին զանուն թագաւորի։ Մին կոչի Պօվա, որ թէպէտ է բնիկ և հարազատ թգ՟ր, այլ բաց յանուանէ և 'ի կնքոյ, չունի այլ ինչ իշխանութ՟ թգ՟րական․ Իսկ միւսն կոչի Քօվա, որ 'ի սկզբանն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ համ աշխարհական արքունի սպասաւոր․ իսկ այժմէ ինքն իշխան տր՟ ամ՟ գանձուց և ճոխութեց համօրէն թագաւորութ՟։ Պօվա բնիկ թգ՟րն փակեալ կայ յապարանս իւր իբրև 'ի բանտի․ որում լոկ առ երևոյթս ամի ամի խոստանայ ժղ՟ղդն նաև քօվայն զհաւատարմութ՟․ իսկ ը՟ այլում մասին՝ գլխովին առ ոչինչ է համարել։ Սակաւ ծառայք են նր՟․ զոր տայ նմա քօվայն ը՟ հաճոյից իւրոց․ չունի թիկնապահս․ և ոչ իսկ կարող է տալ պաշտօնս ինչ, ոչ ք՟ղքականս, և ոչ զինուորականս․ զի այն ամ՟ կախեալ կայ զհաճոյից քօվային։ Յաջորդութ՟ նր՟ ժառանգութ՟ անցանէ որդւոց յորդիս․ իսկ քօվայինն ընտրութ՟ է, զոր ընտրէ նոյն քօվայն նախ ք՟ զմեռանել իւր։ Սա բաց 'ի լինելոյ բացարձակ տր՟ գանձուց արքունեաց․ յիւր ձեռս ունի զամ՟ զօրութ՟ թգ՟րութ՟․ ունի իւր թիկնապահ 300 երիվարս, և 150 փիղս հանդերձ բազմութ՟ հետևակ զօրաց, որք կարգեալ կան 'ի պաշտպանութ՟ արքայանիստ ք՟ղքին, և այլ ևս 70․ մինչև 80 հազարս սփռեալս յայլ և յայլ կողմանս թագաւորութ՟։

Դունգինացիք չունին մասնաւոր դրամս, այլ 'ի կիր առնուն զդրամս եւրոպացւոց․ այլ և կտորուկս արծաթոյ աննշանս, և անտիպս, զոր կշռով տան, յայն սակս միշտ կրեն յանձինս զկշիռ։ Բայց գտանի առ նս՟ պղնձի ինչ դրամ․ որոց 1000 առնէ իբրև ղուռուշ և կէս կոստանդնուպօլսոյ։

Այս աշխարհ կարի անպատսպար է 'ի թշնամեաց, զի չունի ամրոցս․ յայն սակս մեծ մասն զօրաց նր՟ կարգեալ կան 'ի պահպանութ՟ առ սահմանօքն քօչինչինայ․ վս՟ զի երկու այս թգ՟րութ՟ անհաշտ թշնամութ՟ են ը՟դ միմեանս․ ուստի և բզ՟մ անգամ 'ի պահապանս երկոցունց կողմանց գնային առանձին մըրցմունք․ բայց ոչ երբէք ճակատին միմեանց օրինաւոր

պա

պաշտման ։ Նոյնպէս և ծովային զօրութ՟ արքային դունգինոյ չէ ինչ մեծ · Ք՟զի 60 և եԹ ցռկանաւս, այն է՝ չէքտիրիս ունի մանուածս, որք ը՟ լայնութ՟ են 10 և 12 ոտնաչափ, իսկ ը՟ երկայնութ՟ 60 · և 70 · որք հազիւ երկու ոտնաչափ և կէս մխին 'ի ջուր · յորս են զօրք սկսեալ 'ի 16 Թուոյ, մինչև 340 · զի առաւել ոչ կարեն տանել ։ Եւ ունին երկու առագաստս փոխաԹիս, մի 'ի խելս, և միւս ևս յառաջս · և Թէպէտ անպիտան են 'ի ծովու, սակայն 'ի լայն և 'ի խորին գետս բազում զօրեն ։

Պատմութ՟ սորին Թ՟գրութ՟ կարի անստոյգ է · այլ Թուի Թէ զձև և զկարգ Թ՟գրութ՟ սկսաւ առնուլ առ Ժմկօք Ե՟կդ ինքնակալին չինաց զոր դունգինացիք Թամնով անուանեն · 'ի սոյն անուն անուանեն և զառաջին գտիչ գործեաց երկրագործութ՟, որ բզ՟մ դարուք յառաջէ քան զԹուականն ք՟սի ։ Առ նովին Ժմկօք Ժղ՟վդքն բնակեալք յայսմ աշխարհի ոչ օրէնս ինչ ունէին, և ոչ ք՟ղքականութ՟ · մինչև Թոռն, կմ՟ որդի Թամնով ինքնակալին, ը՟ իւրև նուաճեալ զայս աշխարհ, հիմնեաց 'ի նմ՟ զնոր ինքնակալութ՟, և եմոյծ զ ք՟ղքականութ՟, որ եկաց մնաց ը՟ դարս բզ՟մս ։ Ապա ինքնակալն չինաց կամեցեալ յինքն նուաճել զդունգին, առաքեաց անդ Ժ՟ սպարապետս, որք առին զնա · և ինքեանք տիրեցին նմա, բաժանեալ 'ի Ժ՟ նահանգս · որոց եղեն ինքեանք ինքնագլուխ իշխանք ։ Ընդ այն Ժմկս յարեաւ հովիւ մի դունգինացի, որ սակաւ առ սակաւ Ժողովեալ զբազմութ՟ սրբկայից 'ի համազգեաց իւրոց, մի առ մի սպառագրեաց յաշխարհէ անտի զնախասացեալ Ժ՟ բռնակալս · և ինքն տիրեաց աշխարհին · որոյ տ՟րութ՟ին եկաց մնաց ամս 12 և եԹ · վ՟ն զի ինքնակալն չինաց վերստին տիրեաց աշխարհին, և ը՟ բզ՟մ Ժմկս կալաւ զնա ը՟ իւրև ։ Եւ յետ այնորիկ պատմութիւնք դունգինոյ՝ ոչ այլ ինչ ցուցանեն, եԹէ ոչ խռովութիւս, գործս անստոյգս, քանդմունս, անդադար ապստամբութիւնս · յորս ինքնակալքն դունգինոյ է զի 'ի Թշնամեաց, և է զի 'ի հպատակաց իւրեանց ընկեցան յաԹոռոյ ։

Այս աշխարհ յառաջագոյն ը՟ աշխարհին չինաց բաժանէր 'ի Ժ՟ նահանգս, որք անդադար փոփոխէին ը՟ յաւելլոյ զօրութ՟ իշխանաց, որք զբզ՟մ նահանգս ը՟ իւրեամբք նուաճեալ 'ի մի յօդէին, այլ Ք՟զի և այժմ հինգ իշխանք տիրեն 'ի նմա, յորոց ոմանք ազատ են · և ոմանք հարկատու · յայն սակս մարԹ է բաժանել զայն 'ի հինգ նահանգս, ը՟ հնգեցունց իշխանացն ։ Եւ ե-

Թէ յաւելցին 'ի սոսա այլ ևս երկու իշխանք լեռնաբնակ վայրենի ժողովրդոց. յորոց մին կոչի Թ͞գր Ջրոյ, իսկ միւսն Թ͞գր Հրոյ. լինին եօթն: Առաջինն է Թագաւորն Դունգինոյ: Եր͞կդ Քօչինչինայ, որ տիրապէս ոչ կոչի Թ͞գր. այլ Կնագա. ֆ՝ տուն, կմ͞ ցեղ ազնուական. այլ այժմ բաժանեալ է ն͞հնգս այս 'ի Դունգինոյ: Եր͞րդն է Թ͞գրն Քիւկանկայ, կմ͞ Չիւքանկայ, որ տիրէ 'ի Քիւանկ ն͞հնգն Չինաց: Չորրորդն է փոքրիկ Թ͞գրութին Պաօսայ: Հինգեր͞րդն է փոքուն Լաօսայ. (որ փոքր ասի, առ 'ի զ͞նզ͞նուե 'ի մեծէն, որ արտաքոյ է 'ի Դունգինոյ:) Իսկ վեցերորդն և եօթներ͞րդն են 'ի լեռնային կողմանս, ուր բնակին ժողովուրդք վայրենիք, յորոց կէս մի հնազանդին փոքրիկ Թ͞գրացն Ջրոյ, և Հրոյ:

Այլ Դունգինացիք այլազգ բաժանեն զերկիրն իւրեանց, ֆ՝ յերիս մասունս միայն: Իսկ զԴունգին առանձնակի 'ի վեց մասունս, ֆ յԱրեւելեան. յԱրեւմտեան, 'ի Հիւսիսայինն, և 'ի Հարաւայինն, 'ի Կուայօմ, և 'ի Թինհուա. զոր ոմանք յայժմեան Ծագրաց այլազգ կոչեն, զԱրեւելեանն Գեդօն, զԱրեւմտեանն Գեթայ. զՀիւսիսայինն Գեպաք զՀարաւայինն Գենամ. իսկ զերկու յետինս Գեահօյ և Թինան: Սակաւ ք͞ղքք գտանին 'ի սմին Ծի. այլ աւանք և գիւղք անհամարք. որք ը͞ն առաւել մասին են յը͞նդարձակ դաշտավայրի. զի մեծագոյն մասն Ծին է դիւր դաշտավայր. թէպէտ են 'ի նմա և բլուրք արգասաւորք, և լերինք մ͞ւնդ առ սահմանօք Ծին: Գլխաւոր տեղիք ն͞ր են հետագայքդ:

Գաշաօղ, կմ͞ Քէշօղ: Է գլխաւոր ք͞ղք համօրէն Թագաւորութե, յորում է և բնակութի Թ͞գրին. յընդարձակ դաշտավայրի, ոչ ինչ կարի հեռի 'ի Տօքեայ գետոյ. չունի պարիսպ և ոչ ամրոց: Իբրև 20 հազար տունք են 'ի նմա. գրեթէ առհ͞սրկ փայտակերտ, կմ͞ եղեգնաշէն. և ամ͞ տուն մերձ իւր ունի տեսակ մի փոքր քարաշէն առ 'ի պատսպարել 'ի նմա զկարասիս տան 'ի լինել հրկիզութե, որ կարի յաճախէ անդանօր. այլ և ջրհոր մի. և անօթ ինչ կապեալ 'ի ձող երկայն, 'ի շիջուցանել նովաւ զհրդեհն: Գլխաւոր փողոցք ն͞ր լայն են, այլ ոչ ը͞ն կարգի բաշխեալ, ուստի և տղմալից յանձրևային ժամս: Օդ ն͞ր բարի է: Երեք եւեթ ապարանք գտանին 'ի նմա. որոց գլխաւորն է այն՝ յորում բնակի պօվայն, կմ͞ Թ͞գրն, որ ը͞նդարձակ է յոյժ: Բարձրութի շրջապատ պարսպաց ն͞ր է 15 ոտնաչափ. գրեթէ նոյնչափ և թանձրութին

չէ

շինեալ յաղիւսոյ։ Բզ̃մ դրունս ունի, որոց գլխաւորն պահեալ է Թ̃գրին. և են ՚ի նմ̃ պարտէզք, վտակք ջուրց, մասնաւոր տեղիք անասնոց, և այլ սոցին նման զուարճութ̃ե վայրք։ Իսկ բուն ապարանք Թ̃գրին, և պաշտօնէից նր̃ փայտակերտ են։ Եւ պալատն յորում բնակի քօղայ իշխանն, ունի յանդիման իւր ընդարձակ դաշտ քառակուսի, ուր երբեմն զինուորք առնեն կրթութի̃ պ̃տրզմի։ Եւ հանդէպ սր̃ է միւս եւս ապարանք, որ և է զինարան Թ̃գրութե̃ն. յորում են 560 երկաթի մեծ հրազէնք, այն է Թօփ. և քանի մի ումբարտակ, Յ̃ հաւանթօփու։

Մերձ յայս տեղի է ախոռ մի, յորում գրեթէ միշտ պահին 200 փիղք, կմ̃ ՚ի պէտս պ̃տրզմի, և կամ ՚ի բառնալ զկարասիս զօրավարաց զօրուն, և առ նովաւ միւս եւս ընդարձակ ախոռ, ուր են իբրև 300 էրիվարք. ՚Ի սմին ք̃ղքի ունին անգղիացիք բնակարան ընդարձակ ՚ի հիւսիսային կողմն որ թէպէտ ցած է, բայց լաւ եւս է և կարգաւորեալ գրեթէ ք̃ զա̃մ շինուածս ք̃ղքին։ Մերձ անգղիացւոց ունին և հոլանտացիք սեփական տեղի, այլ փոքր քան զանգղիացւոցն։

Հէնն։ Է գլխաւոր մայրաք̃ղք հարաւային մասին այսր Յի իբրև 60 մղոնաւ հեռի ՚ի ճագաօվայ, մերձ ՚ի տեղին, ուր Քալէ անուն գետն բաժանի յերկուս առուս. և է սա ք̃ղք երևելի, և իշխանանիստ, որք կոչին մանտարինք, այլ անպարիսպ, ուր և այլ ք̃ղքք սորին Յի. 2000 տունս ունի։ Գաղղիացիք ունին ՚ի նմ̃ սեփական տեղի, այլև եմ̃սարան։

Յօդ Թ. Կղզիք առ ցամաք կղզեաւ որ յայնկոյս Գանգէսի։

Առ սովին ցամաք կղզեաւ յարևմտից և յարևելից գաւառին բազմութ̃ի կղզեաց մեծաց և մանուանց, յորոց զոմանս յայսմ վայրի յիշատակեսցուք. և նախ զարևմտեանս։

Կղզին Ցոլոյ։ Են մանր կղզիք իբրև 19 մղոնաւ հեռի ՚ի ցամաքէն առ արագանաւ։ Ընդ մէջ նեղուցին որ անջրպետէ զկղզիս զայսոսիկ ՚ի ցամաքէն, է ժայռ մի յորմէ բղխէ ջուր քաղցր։

Նէկէրայի։ Է կղզի յորմէ իբրև 38 մղոնաւ հեռի դոյ զարհուրելի ժայռ ինչ 'ի ծովուն, որ ոչ երևի, բայց միայն 'ի նուազել ջրոյն : Ասա կղզի, որ և կոչի Սուրնէկրայիսայ, նաև կղզի ադամանդի վս ձևոյն իւրոյ, փոքր է և անբեր : Եւ է մօտ 'ի ցամաքն բեկուայ Ծին : Ընդ մէջ կղզեացս այսոցիկ բզմ ժայռք գտանին 'ի ծովուն • յորս յամին 1704 գաղղիացիք կորուսին նաւ մի մեծ, որ տանէր մեծամեծ ռմբաձիգս եօթանասուն :

Գօգօյեան կղզիք : Յայս անուն կոչին սակս յաճախելոց 'ի նմա գօգօ անուանելոց ծառոց • որք հեռի են 'ի Նէկրայիս սարէն 60 մղոնաւ 'ի հրաւակողմն հանդէպ բեկուայ Ծին :

Բէրբէրէան կղզիք : Իբրև 108 մղոնաւ հեռի 'ի սարէ անուն Նէկրայիսայ մօտ 'ի բեկու • որք 'ի հեռուստ անտառալից երևին • և շուրջ զնոքօք են բզմ մեծամեծ ժայռք 'ի ծովու • յայն սակս կարի դժուարին է մատչել 'ի նմա նաւուց :

Գօլօփա : Կղզի իբրև 40 մղոնաւ հեռի 'ի ծովեզերէն բեկուայ :

Գտանին և այլ ևս բազում մանր կղզիք 'ի կողմանս յայսոսիկ հանդէպ ծովեզերացն բեկուայ :

Մէծ Հանդաման • Փոքր Հանդաման զորս կոչեն ևս Անփաման : Են երկու կղզիք հանդէպ Սիամայ : Առաջինն է երկայն յոյժ, բայց նեղ • հինգ աստիճանօք հեռի 'ի ծովեզերաց Սիամայ : Իսկ երկրդն է խումբ մի կղզեաց պատեալ շուրջանակի ժայռիւք 'ի հրւակողմն մեծին : Բնակիչք սորին վայրենիք, և մարդակերք :

Նարգէլ Փառաւ : Է լեառն ինչ և փոքրիկ կղզի մերձ 'ի Հանդամանն • բնակիչք նր սակաւ են, և վայրենիք : 'Ի շրջակայ ծովու սորին կղզւոյ գտանի ամպէր, (որ է դեղ, և ծխանելի) պատուական և առատ • քզի 'ի կղզի անդր առ ափն ծովու են մեծամեծ վայրենի ծառք 'ի ծոցն կոյս խոնարհեալ • յորս անհամար բազմութիւն մեղուաց գործեն մեղր և մոմ • և լուծեալ 'ի ջերմագին շողոյ արեգական, մեղրն և մոմն 'ի միասին 'ի վերուստ անտի հոսին 'ի ծոցն, զորս ուտեն մեծամեծ ձկունք ովկիանոսի և ջրային օձք • և երբեմն անմիջապս 'ի բերանս նց հոսի, զի ելեալ յերեսս ջուրց է այն բանան զբերանս • այլ ոչ կարացեալ մարսել զմոմն, փսխեն արտաքս, և ահա սյն է ամպէրն ծխանելի՝ զոր բնակիչք տեղւոյն որք մերձ յափին փոքրիկ նաւակօք, կմ է լող շուրջ զկղզեաւ իւրեանց՝ ժողովեն • և 'ի տեսանելն 'ի հեռուստ զանցաւոր նաւս՝ ելեալ 'ի վր փոքր տախտակաց գնան և վաճառեն նոցա նշանացի խօսելով · քանզի ոչ գիտեն զայլ լեզու բաց 'ի լեզուէ իւրեանց ։ Եւ փոխարէն առնուն ոչ դրամս որ յոչինչ համարելի է առ նոսա, այլ երկաթի գործիս, որպէս բրիչ, կացին, և այլն ։ Այս ամպէր գտանի և յայլ ծովեզերեայս Հնդկաց աշխարհի, բայց ոչ այնչափ առատ և պատուական, որչափ աստ ։

ՔԱՐՆԻԿԻ ԲԱՐ ։ Է կղզի 'ի հարաւակողմն հանդաման կղզւոյն ընդ մէջ նորա և Նիկոբարայ ։

ՆԻԿԻԲԱՐ · զոր եւրոպացիք գրեն ՆԻԿՕԲԱՐ ։ Են երկու կղզիք որք գործեն նեղուց, կամ անցք, անուանեալ ՆԵՂՈՒՑ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԵԱՅ · իբրև 150 մղոնաւ հեռի 'ի հիւսիսային ծայրէ Սումադրայ կղզւոյն, հանդէպ ցամաքակղզւոյն Մալաքայ ։ 'Ի միումն յայս կղզեաց եղանէ նարկիլ բազում յոյժ · քանզի համօրէն կղզին է իբրև մի միայն անտառ նարկիլ ծառոց · վասն որոյ բազումք յազգէս հայոց, որպէս և յայլոց ազգաց երթան անդ գնել ։ Բայց չունի առ ընթեր նաւահանգիստ · ուստի նաւք վաճառականաց ոչ կարեն մերձ առ նա խարիսխ արկանել · յայն սակս զպտուղս բնակիչք կղզւոյն բարձեալ տանին նաւակօք իւրեանց 'ի նաւս վաճառականաց ։ Նաև բազում անգամ 'ի դիպել ալեկոծութեան, հարկ է նաւուց տեղի տալ, և հեռանալ անտի ։

Առ բնակիչս այսր կղզւոյ չիք բնաւ տեսակ ինչ քաղաքականութեան · որպէս և այլ մերձակայ կղզեաց · ոչ բնակին բազմութեամբ 'ի միասին, այլ ցրիւ աստ և անդ, և բաժանեալ ըստ տանց · իսկ տունք նոցա են փոքրիկ խրճիթք խոտովք և ոստովք ծառոց ծածկեալ ։ Արք նոցա բոլորովին մերկ շրջին · իսկ կանայք ոստովք ծառոց ծածկեալ ունին զմերկութիւն իւրեանց, և երբեմն կտաւօք · կերակուր նոցա ոչ այլ ինչ է, բայց եթէ նոյն իսկ նարկիլ պտուղն, և արմատ ինչ սննդարար և յագեցուցիչ, որ և յայլ տեղիս Հնդկաց բուսանի առատ · զայն խարշեալ ուտեն · նաև 'ի կենդանեաց խոզ, հաւ, և ձուկն ։ Վարեն կեանս հասարակաց՝ ըստ ժամանակի առաջին դարուց աշխարհի · եթէ ոք աշխատի ինչ, այլք ևս աշխատին ընդ նմա · ոյք և կամին, և առնուն 'ի վարձ 'ի պտղոյ և յարդեանց երկրին ։

Չունին սոքա բնաւ կրօն ինչ, ոչ քուրմ, և ոչ պաշտամունս, այլ վարին բնական օրինօք · մանաւանդ յօրէնս ամուսնութեան, որում վրէժխնդիր են յոյժ · յոր թէ զոք տեսցեն անօրինեալ և բռնաբարեալ զկին ուրուք, իսկ և իսկ սպանանեն զնա ։ Ո՛չ գոյ առ նոսա գլխաւոր ոք դատաւոր և ընտրող վիճի և հակառակութեան · այլ 'ի լինել հարկին՝ խմբով վճարեն զիրսն ։

Զունին և դրամս, և ոչ առնուն յաւելքէ. 'ի տեսանելն զոսկի և զարծաթի դրամս 'ի բաց ընկենուն իբրև անպիտան ինչ. ուստի վաճառականք որք երթան անդր, փոխ դրամոց տան նց ստոճար կտաւս կապուտակս, զոր ոմանք 'ի կիր առնուն 'ի ծածկոյթ մերկութե մարմնոյ. ծխախոտ, որ յաճախեալ է յոյժ առ նս, և սուր, և կացին, կմ այլ ինչ գործի երկաթի բթացեալ և անպիտան. զորս 'ի գործ ածեննք հատանել զնարկիլ պտուղն. և 'ի պաշտպանութի անձանց. Ջզի բնակիչք մերձակայ կղզւոյն մարդակերք են, որք բզմ անգամ յարձակին 'ի վր որսալ զոք 'ի սոցանէ:

Իսկ ըստ բարուց միամիտ են և անխարդախ, բայց կասկածոտք. ընդ օտարական ազգս միշտ զգուշութբ և արթնութբ գնան կասկածեալ զի մի ինչ չարիս արասցեն նց. ուստի և յայսմ մասին կարի դիւրահաւան են թէ ոք ասասցէ, թէ այս ոք եկեալ է 'ի կորուսանել զձեզ. անդէն առանց ինչ քննելոյ սպանանեն: Չերք այժմ յօտար ազգաց ոք յերկիր նց. և որք երթան 'ի պէտս վաճառականութե, զգուշանան 'ի յամելոյ. և 'ի դիւրի ոչ մնան անդր երկուցեալք 'ի կասկածոտ և 'ի դիւրահաւան մտաց նց, որք ըստ բանից այլոց հաւատան: Սոքա կարի յարեալ են սիրով 'ի կարասիս տան իւրեանց. մինչև զոր միանգամ սեպհականեն և 'ի կիր առնուն 'ի պէտս իւրեանց, թէպէտև իցեն չնչինք և աղքատիկք, ոչ տան բնաւ ումեք, և ոչ փոխանակեն երբէք ընդ այլ իրաց, որչափ և պատուական իցէ և հաճոյական նց: Զե նաւակաց նց է նորատեսիլ ինչ և ծիծաղական. այլ ինքեանք կարի վարժ են և յաջողակ լողալ 'ի խորին յայն ծովովկիանոսի:

Ունին սեպհական ինչ լեզու, բայց դիտեն ինչ և 'ի բարբառոյ փորդուգալաց, այլ խառնեալ և այլայլեալ և նովաւ խօսին ընդ վաճառականս. Ջզի փորդուգալք յորժամ նաւարկէին 'ի զնին կողմանս հնդկաց առ 'ի դիւտ նորանոր երաց. մտին և յայս կղզի. և զի անուն նաւապետի որ զառաջինն եհաս անդր կոչէր անտոն, յայն սակս անտի մինչև ցայսօր զնմ նաւապետս, որք միանգամ գնան անդր քաջուղան անտօնեօ կոչեն. կարծելով թէ ըստ նաւապետաց անուն անտոն կոչի: Պատմի թէ յայնմ ժմկի յորում փորդուգալք հասին յայս կղզի, կրօնաւորք երկու մնացին առ նս. որոց մին էր քհնյ, և միւսն եղբայր ըսպասաւոր, առ 'ի սակաւ սակաւ դարձուցանել զնս

'ի

'ի քրիստոնէական հաւատս. ուր առ երկիւղի նց՟ փոփոխակի ննջէին 'ի գիշերի, 'ի պատրաստի ունելով միշտ զզէնս իւրեանց: Քահանայն բզ՟մ սիրով և եմաստութ՟ և քաղցրութ՟ կենակցէր ը՟ նս՟, որով սիրելի եղև յոյժ նց՟. այլ եղբայրն այլազգ սկսաւ վարիլ ը՟ կանայս նց՟, զոր իմացեալ քհ՟նյին, բզ՟մ անգամ խրատէր զնա ինքնին, նաև 'ի ձեռն բարեկամաց իւրոց զգուշանալ. մնւնդ՟ յայնպիսի երկրի, յորում վտանգ կենաց կայր առաջի:

Եւ յաւուր միում 'ի խրատելն զնա խստիւ քհ՟նյին, սխացեալ, ը՟ նա եղբօրն, յորժամ ննջէր քահանայն 'ի գիշերի առ ընթեր ունելով զզէնս ը՟ս սովորութ՟, հոժեաց եղբայրն զոմանս 'ի բնակչաց անտի կղզւոյն, և ցուցեալ նց՟ զզէնսն՝ ասէ. ահա սա եկեալ է նենգութ՟ կորուսանել և սպանանել զձեզ: Իբրև տեսին նք՟ զզէնս, մնւնդ՟ զհրազէնն, յորմէ յոյժ զարհուրին, իսկ և իսկ սպանին զքհ՟նյն. ապա կասկածեալ և զեղբօրէն, անդէն սպանին և զնա: Յայս կղզի բաց 'ի նարկէլ ծառոյն, ելանէ և եղէգն, յորմէ գործեն ընտիր և պատուական գաւազանս: Են այլևս բզ՟մ կղզիք 'ի կողմանս յայնոսիկ հանդէպ ցամաքակղզւոյն մալայայ: զորօրինակ,

Դանասէրի կղզիք: Որք են բազմութ՟ մանր կղզեաց յարևմտեան կողմն՟ չիամայ հանդէպ դանասէրիմ քղքի, յորմէ առնուն զանուն: Պուլոտիմոն. Դուրու. Դուլիկան. Սուրի. Բենմարէ. Յանտոնէլօն. Բանբանկ. Լինգա. և ն՟. յորոց զոմանս ունիս տեսանել յաշխարհացոյցն մեր:

Իսկ յարևելեան կողմն՟ նորին ցամաքակղզոյն են այսոքիկ:

Անամպաս. Նատունա. և կղզին Հոգւոյն սր՟յ: Են երեք խումբք փոքրիկ կղզեաց հեռի 'ի միմեանց ը՟ մէջ ցամաքակղզւոյն մալաղայ, և պօրնէական մեծի կղզւոյն, զորմէ ստորև ունիմք խօսիլ:

Պուրնան. Սէդատօրի. Պարփիւ. և Ձին: Են կղզիք և նաւհնգիստք 'ի ծոցն չիամայ:

Բուխան. Լօտօլ. Սանտօրին: Են աննշան կղզիք 'ի նոյն ծոց չիամայ:

Բուլօքօնդօր: Է կղզի 'ի հարաւակողմն 'ի ծոցն քամպայայ. ուր 'ի սկզբան անցեալ դարու անգղիացիք փոխադրեցին զվաճառատեղի իւրեանց 'ի քուսանայ, ընմ՟ և հաստատեալ ինչ ժողովրդեան. այլ յամին 1705 մակասարացիք յարձակեալ 'ի վր՟ մեծամեծ քանդմունս գործեցին 'ի նմա:

ԱՇԽԱՐՀ· Բ·

ՉԻՆ· կմ ՉԻՆՈՒՄԱՉԻՆ·

Ա· Անուն :

Այս երեւելի մասն ասիական աշխարհի կոչեցեալ իտ"·Քինա, երեւի թէ անծանօթ էր նախնեաց, որք գրեցին յռջ քան զգալուստ փրկչին մերոյ յաշխարհ· զի ոչ ոք 'ի նցէ, կմ գէթ զորոց մեք ունիմք զծանօթութի խօսեցան ինչ վն նր· միայն պտղոմէոս թուի թէ ունէր զընհանուր և զանորոշ իմն ծանօթութի· զի յիշատակէ զաշխարհ մի, զոր կոչէ Սին կմ Սինէացւոց աշխարհ· և զբնակիչս նր Սինէացիս· որ 'ի դրից տեղւոյն և 'ի սահմանաց, զոր դնէ նմ, երեւի լինել այս աշխարհ զորմէ է բան մեր· բայց յետոյ յաւելու ինչ ինչ որք գլխովին շփոթ և անորոշ առնեն զբան նր: Յայն սակս չեղլարիոս 'ի ծանօթութիս հին աշխարհի· գիրք Գ· գլ 23· 'ի խօսելն զպտղոմեան սինէացւոց աշխարհէ, ասէ թէ ոչ է այժմեանն չին·" չէ պարտ ասել· զսինէացիս պտղոմեայ շփոթել ընդ մերոց չինացն||: Իսկ իսահակ վոսսիոս 'ի ճառս տեւողութ աշխարհի· գլ· ժԲ· թղթ" 279· համարի թէ սինէացւոց աշխարհ յիշատակեալ 'ի պտղոմեայ լիցի չիամ կմ սիամ 'ի հնդկաց աշխարհի յայնկոյս գանգէսի: Այլ եղեւ եւս թէ ճշմարիտ լիցէ այս կարծիք վոսսիոսի· սակայն երեւի թէ պտղոմեանն սին 'ի մէջ առնու և զմասն ինչ չինաց աշխարհի· զի պտղոմէոս դնէ զայն յայնկոյս մեծի ծոցոյն· որ այժմ կոչի ծոց չիամայ՝ յարեւելեան կողմն յեզերս անծանօթ արեւելեան երկրի· ուր է այժմեանն չին:

Իսկ 'ի միջին ժմկի աշխարհագրաց եւրոպացւոց զառաջինն խօսեցաւ զսմանէ մարկոս պօղոս սեպուհ վենետակեան 'ի ժԳ դարու գիրք Բ· գլ· 10· և կոչէ զնա Քաթայի և Քաթա· և զմայրաքաղաք նր Քամպալու· որ այն ինքն է այժմեանն փէքին: Բայց անուանս քաթայի ընդ այն ժմկս իմանայէին միայն զհիւսիսային մասն չինաց աշխարհի· ոստի երկար ցուցանէ ասսեմանի· որ է մասն նախնի Սէրէիկոյ կմ Սէրայ աշխարհի ըստ գրելոյ ճէլլարիոսի համաստանեալ 'ի բանս պտղոմեայ: Այլ պատմութիւնք պօղոսի որ վն չինաց ընդ ժմկս բզմս յառասպելս համարեցան, մինչև մեծն ալպուքվէրք փորթուգալացի անգ-

նուլ

եալ զհրուանդանն բարեյուսոյ՝ եհաս Ը̄ ծով'ի ցամաք կղզին հնդկաց Ծի որ յայնկոյս գանգէսի, և առեալ զմալաքա, կալաւ ծանօթութիւն զայսր Ցէ․ զոր և վղվղկի ծանոյց թղթրի իւրում․ և անտի սփռեցաւ 'ի համօրէն եւրոպիա ։

Կոչի այս Ց յարաբացւոց Սին․ իսկ 'ի պարսից և յայլոց արևելեայց Չին․ զոր սաեն լինել մի յորդւոց յաբեթի, և 'ի նմէ առեալ զանուն․ իսկ այժմեանք ոմանք 'ի բարբարոսաց չինաց ածանցեալ կարծեն զայս անուն, առ որս Չին, կամ Սին, նշանակէ Մետաքս, որ վս զի անբաւ առատութբ գտանի անդէն, կամ զի ըստ այլոց ոմանց՝ նախ անդ սկսան գործել, վսկ սաէն այս անուն եդաւ նմ․ բայց զմեծ մասն նախնի անուանից Ցաց՝ տեսանեմք յանուանէ միոյ ուրուք 'ի նախահայրետաց նոցին կոչեցեալ․ եւրոպացիք զայս անուն փոխեցին 'ի Քինա, որ 'ի փոքրգունքալաց առարածեալ ասի Ը̄ համօրէն եւրոպիա, սակայն և եւրոպացիք 'ի գրեալն 'ի լատին բարբառ ոչ սաեն Քինա, այլ Սինէա կամ Սինացւոց աշխարհ ։ Մեք յայսմ վայրի ունիմք կոչել Չին․ բայց արևելեանք 'ի խօսիլն առհասարակ՝ կոչեն Չին-մաչին զՄաչին համարելով լինել անդրանիկ որդի Չինու ։ * Արևելեանք (ասէ Էրպլօ
« 'ի բառն Սին,) 'ի խօսիլն առհասարակ զՔինայէ, կո-
« չեն Չին և Մաչին․ զի և յանուանելն զբոլոր Թա-
« թարստան, կոչեն Եաճուճ և Մաճուճ, որ է Գոգ
« և Մագոգ Սբ գրոց, բայց սակայն գտանին Ցագիրք
« որք ասեն, թէ Չին անուամբ պարտ է իմանալ
« զՔինա հիւսիսային, զոր ըմք կարծեն նոյն որ
« Խաթա, կամ Խաթայի (Խիթայի), իսկ Մաչին անուամբ
« պարտ է իմանալ զՔինա հարաւային, առեալ 'ի
« նմ զքօչինչին, կդունգին, զթգրութիւն անան Ը̄
« չիամայ և Ը̄ բէկուայ ։։ Իսկ Չինք զՑ իւրեանց անուանեն Թիւղում խօշէ․ այլև Թինէն հիա․ որ թարգմանի Միջերկրեայ թրուն․ վս զի նք զերկիրն համարէին քառակուսի․ և զՑ իւրեանց դնեն 'ի միջակէտ նր երր գլուխ և իշխան համօրէն Ցի․ յոյր սակս զթրուն իւրեանց՝ սովորական մեծամտութբ կոչեն Ը̄ հանուր, կամ տիեզերական․ երբ թէ զամ զառ 'ի ներքոյ երկնից Ը̄ իւրով իշխանութբ ունի ։

Բ․ Դիրք Չինաց ։

Աշխարհն չինաց 'ի բաց թողեալ զԹաթարաստան, Ը̄ որում միացեալ է այժմ, ունի իւր սահման յարևմտից զԹիպէդ և զքօալի մեծ անապատն․ յարևելից՝ զովկիանոս. 'ի հարաւոյ՝ նոյնպէս զովկիանոս և մասամբ իւրն զծոցն Տունգինոյ. իսկ 'ի հիւսիսոյ՝ զԹաթարաստան չինաց. զոր յառաջագոյն ստորագրեցաք. յորմէ անջատի 'ի ձեռն հռչակաւոր պարսպին, որ է մի 'ի գլխաւոր հրաշալեացն աշխարհի. զոր 'ի դէպ համարիմք յայսմ վայրի ստորագրել. իբր զի է սահմանն որոշիչ այսր աշխարհի։

Արդ այն հաստատակառոյց պատուար, զոր մեք կոչեմք մեծ պարիսպ չինու, 'ի բարբառ չինաց կոչի Վուէնհամ չէն. երկայնութիւն նորա ըստ ոմանց է 1500 մղոն. իսկ ըստ այլոց մինչև ց2000. բարձրութիւն 30 կամ 40 ոտնաչափ. իսկ թանձրութիւն 15։ Եւ է համակ 'ի թրծեալ աղիւսոյ. սակայն՝ և այնպէս յայնչափ դարուց հետէ կայ մնայ ամբողջ։ Ուրեք ուրեք չափաւոր հեռաւորութեամբ է ամրացուցեալ հզօր աշտարակօք, յորս հանապազ կան զօրք կարգեալք 'ի պահպանութիւն սահմանաց. և 'ի կողմանս դիւրամատոյցս կառուցեալ կան մօտ առ մօտ երկու կամ երեք հողաբլուրք 'ի պաշտպանութիւն միմեանց։ Չորս դրունս ունի, և կամարս ինչ ընդ որս գետք անցանեն։ Այլ առաւել մեծ այն է. զի այն պատուար ոչ միայն 'ի դիւր տեղիս է շինեալ, այլ և 'ի վերայ բլրոց և լերանց. յայն սակս 'ի բազում տեղիս ելևէջս ունի ըստ բարձրութեան և ըստ խորութեան վայրացն ընդ որս անընդհատ շարունակի. և չունի ուրեք խրամատութիւն, բայց միայն 'ի նինգն փէքինու մօտ առ յովէն գետոյ, ուր լեառն մի զառ 'ի թափ և ժայռաւոր փոխանակէ զտեղի պարսպին, որ հզօր ևս է քան զբուն պարիսպն։ Եւ զի զճշմարիտն կամեցեալ ասել՝ կարծեմ թէ ոչինչ են առ սովաւ գերահռչակ բուրգք և մահարձանք Եգիպտոսի։ Զայս պատուար շինեաց չիհօհանդ ինքնակալ չինաց իբր 2000 ամօք յառաջ՝ առ 'ի խափանել զյարձակմունս Թաթարաց. սակայն ոչ ինչ արգել եղև որդւոյ Ճինկիզխանին, որ 'ի ժգ դարու եմուտ յայս աշխարհ. և յետ նորա 'ի ժէ դարու սունչի թագաւոր Թաթարաց. որ յինքն կալաւ զինքնակալութիւն չինաց. որպէս ունիմք պատմել ստորև։

Գ. Տարածութիւն և բազմամարդութիւն Չինաց։

Այս աշխարհ ըստ նախակարգեալ սահմանաց՝ է 'ի մէջ 20 և 42 աստիճանաց հիւսիսային լայնութեան. և 'ի մէջ 118 և 146 աստիճանաց երկայնութեան առեալ և ընդ քօրէա նինգն։ Եւ այսպէս լայնութիւն նորա 'ի հիւսիսոյ ընդ հարաւ է իբրև 22 աստիճան. որ առնէ 1320 մղոն

Ծա

Ծագրական. իսկ երկայնութիւն յարեւմտից յարեւելս 28 աստիճան. այ՟ 1680 մղոն. թող զկղզիս, զոր ունի շուրջ զիւրեւ. եւ զԹաթարաստան չինու. որոյ սահմանք ձգին մինչեւ ցամուր գետ. որ է ը՟ 55 աստիճանաւ լայնութե։ Վ՟ս չէք յԾի թգրութի այնչափ ընդարձակ ուր՟ք զսա, բաց 'ի թգրութէ մոսկովաց. բայց նոցայն մեծ մասն միանգ 'ի հիւսիսային կողմանս զուրկ է 'ի բնակչաց, սակս անհնարին սառնամանեաց. իսկ չինաց Ծ բազմամարդ է յոյժ ը՟ ամ՟ տեղիս. զի թիւ բնակչաց ն՟ր ը՟ ստուգագոյն հաշուի անցանէ զ120 միլիոնիւ. զոր այլք հաշուեցանեն ց130 միլիոն։ Եւ այս չէ ինչ անհաւանելի հայեցեալ յ՟ընդարձակութի երկրին. որ ը՟ ոմանց առաւել է ք՟ զկէսն եւրոպիոյ. առեալ ը՟ ն՟մ եւ զԹաթարս. եւ ինքնինք ն՟ր ը՟ հօրն քօնթեայ բաւական են առ մի մի թգրութն։

Եւ չէ իսկ դժուարին գիտել ճշտիւ զթիւ բնակչաց չինու. վ՟ս զի ը՟ օրինաց երկրին՝ ամ՟ տանուտր պարտական է ը՟ ծանր պատժով ունել 'ի վերայ աւագ դրան տան իւրոյ նշանակեալ զթիւ անձանց իւրոց բնտանեաց 'ի ծերոյ մինչեւ ցնորածին տղայն. եւ 'ի վ՟ր իւրաքանչիւր տասնեակ տանց կարգեալ կայ մի ոմն ոստիկան, որոյ գործ է զգուշանալ, զի անթերի պահեսցի այն օրէնք։ Նոյնպէս եւ թիւ ք՟ղքաց ն՟ր ըն՟մ է ը՟ բազմութե բնակչաց. որք եւ այնչափ մօտ են միմեանց, զի ա՟ռ աւէ հայրն քօնթի, յեղանել 'ի միոյ ք՟ղքէ՝ եւ ոչինչ կարի հեռացեալ երեւի միւսն։ Արդ՝ է պիչինկայ 150. եւ ը՟ այլոց 173 քաղաքք են անդ գլխաւորք եւ յառաջին կարգի. յորոց յոլովք ը՟ մեծութե եւ ը՟ բազմամարդութե եւ ը՟ հարստութե առաւելուն ք՟ զփարէզ եւ ք՟ զլոնտռա մայրաք՟ղքս գաղղիացւոց եւ անգղիացւոց, եւ 300 յե՟րկ՟ր կարգի. եւ 1160 յե՟րր՟դ եւ 'ի ստորին կարգի. որք եւ կախեալ կան զառաջնոց եւ զե՟րկ՟րդականաց. եւ ամ՟քն միանգամայն ըզփէքին ք՟ղքէ. թող զաւանս եւ զդեօղս, որք անհամար են. եւ զդղեակս եւ զամրոցս, զոր ոմանք հաշուեցանեն ց2000։

Այլ 'ի հնութե ընդարձակագոյն եւս տարածէր տ՟րութե չինաց, զի 'ի հարաւոյ եւ յարեւելից ունէր ը՟ իւրեւ զմոլուքեան կղզիս, որք են ը՟ հ՟րկածիւ. զմինտանաօ. զփիլիպպեան կղզիս, զգեղեցեկ կղզին, զոր եւրոպացիք ֆօրմօզա կոչեն. զլեգէոճիւեան կղզիս. եւ զմեծ տ՟րութեն ճաբօնայ. իսկ 'ի հնդկաց Ծի զպեկու, զսիամ, զլաօս եւ զքօչինչին. յարեւմտից՝ զթիպէդ, զլասաւ մինչեւ 'ի մողոլստան։ Բայց յետ դժուարին

րին է, և չասասցից անհնարին միոյ գլխոյ կառավարել զայսչափ զնիւթն և տարածութիւն աշխարհս. յայն սակս առ փոքր փոքր վտարանջեցին ելին 'ի հնազանդութենէ չինաց. և եղեն ինքնագլուխ թագաւորութիւնք. միայն Հայնան կղզի, և գեղեցիկ կղզին, որպէս և Թաթարաստան, այլ և քօրէա կամ Ճեան մնան մինչև ցայսօր ընդ տէրութեամբ նոցա։

Է. ԳԵՏՔ ՉԻՆԱՑ։

Բազում գետք գտանին յայսմ աշխարհի. որոց ոմանք բղխեն 'ի նոյն աշխարհէ, և ոմանք յայլուստ ելեալ՝ մտանեն անդ. ուր ընկալեալ զայլ գետս բազումս, և ընդարձակեալ անցանեն ընդ նահանգս նորին, և գնան անկանին յովկիանոս. յորոց գլխաւորքն են հետագայքդ։ ՔԵԱՆԳ. ՔԵԱՆ, կամ ԳԻՆԳԱՔԵԱՆԳ. յոմանց կոչի և ԼԻԱՆՔԵԱՆԳ, կամ ԵԱՆՑԵ. այլ և ԳԵՏ ԿԱՊՈՒՏԱԿ։ Է գետ մեծ և գլխաւոր քան զայլ ամենայն գետս չինաց, որ ելանէ 'ի խորին հիւսիսային կողմանց դիպէդայ. որպէս ասացաք 'ի ներածութեան անդ Թաթարաստանայ. և հոսեալ ընդ իւնան, ընդ սուչվէն, ընդ հուքվան և ընդ քեանճնեան կամ նանքին նահանգս չինաց մղոնս իբր 1320, երթայ անկանի յովկիանոսն արևելեան հանդէպ ջունմին կղզւոյ 30 մղոնաւ հեռի 'ի նանքին քաղաքէ, ընդ մէջ հատանելով յարևմտից յարևելս զամենայն աշխարհն չինաց։

Այս գետ խոր է յոյժ. զոր չինացիք իւրեանց սովորական չափազանցութեամբ անյատակ կոչեն։

Պիշինկ բազում շփոթ և հակառակ բանիւք ստորագրէ զայս գետ. զի յաշխարհին դիպէդայ կոչէ զնա միայն Գինգաքեանգ և Կապուտակ. իսկ աստ 'ի չինաց աշխարհի ոչ երբէք կոչէ Գինգաքեանգ. այլ ուրեք Քեան և Կապուտակ. և ուրեք Քեանգ. անդ ասէ թէ ելանէ յաշխարհէն դիպէդայ, և անցանէ ընդ համօրէն աշխարհն չինաց. և 'ի նանքին նահանգի մտանէ յովկիանոսն. իսկ աստ գրէ թէ ելանէ յիւնան նահանգէ չինաց, զհետ երթեալ յայսմ մասին սալմոնի։ Եւ չեն սոքա այլ և այլ գետք. նախ՝ զի նոյն իսկ պիշինկ որպէս ասա, նոյնպէս և յաշխարհին դիպէդայ զայն գետ կոչէ Կապուտակ. և զընթացս երկոցունց նոյնօրինակ ստորագրէ. իբր զի վերոյ երկոցուն ևս գրէ, թէ անցանեն ընդ համօրէն աշխարհն չինաց յարևմտից յարևելս. և երկրորդ զի այլ աշխարհագիրք և աշխարհացոյցք զնոյն քեանգ կամ քեան գետն կոչեցին կապուտակ՝ նոյն դնեն ընդ գինգաքեանգ գետոյն, և զակն նորա 'ի դիպէդ, և զընթացս նորա այնպէս ստորագրեն որպէս պիշինկ զընթացս գինգաքեանգ գետոյն, որպէս և նոր և ք̃ զամենին ուղղագոյն աշխարհացոյցք օնվիլսի կմ̃ տանվիլէայ · որոյ գոլով աշխարհագիր գաղղիացւոց արքային · և ուսուցիչ արքայորդւոյ դքսին օռլէանեայ, նորոգ չինեաց մեծամեծ աշխարհացոյցս իւրաքանչիւր նհ̃նգաց գիպէգայ և չինաց աշխարհի · զորոց և ինքն պիշինկ վկայէ թէ ք̃ զամ̃ աշխարհացոյցս, որք ստորագրեն զկողմանս ինչ այր աշխարհի, ստուգագոյն և առաւել ճշգրիտ թուին :

Հօհամ, կմ̃ Հօամհօ · որ կոչի և Դեղին գետ : Է եր̃կգ գլխաւոր գետ չինաց աշխարհի, որ ելանէ 'ի լերանց տանտի, որք սահմանեն զտուչվէն նհ̃նգ յարեւմտից, կմ̃ ը̃ այլոց 'ի գիպէգայ · և մտանէ 'ի թաթարաստան · ուր հոսեալ հարաւամ մի յայնկոյս նախայիշատակեալ մեծի պարսպին, և դարձեալ ը̃ հարաւ, մտանէ 'ի չին ը̃ մէջ չէնսի և չանսի նհ̃նգաց · և անցեալ ը̃ նհ̃նգն Հօնան · և ը̃ մասն ինչ նանքինոյ իբրև 1200 մղոնս հասեալ, մտանէ յովկիանոս 'ի հիւսիսակողմն քեանճ գետոյն : Այս գետ բ̃մ և մեծամեծ վնասս գործէ 'ի նհ̃նգս ը̃ որս անցանէ · զի յաճելն՝ ջուրք նր̃ զեղեալ արտաքս 'ի ծոցոյ գետոյն, հեղեղեն զշրջակայ վայրս · վասն այնորիկ աստի և անտի ունի թումբս հաստատակառոյցս : Սա թէպէտ մեծ է և շատաջուր, այլ ոչ է նաւարկելի · զի յատակ նր̃ ոչ է հաւասար · այլ է ուրեք զի խոր է · և է ուրեք զի ոչ նոյնպէս, և ուրեք ուրեք մեծամեծ քարինք կան գտանին :

Բաց 'ի գետոց են 'ի չին և խրամք ջրանցիցք կմ̃ ջրմուղք հոսական ջուրց մեծամեծք և մանունք հասեալք ը̃ բմ̃ տեղիս երկար և զարմանաւոր աշխատութբ̃ և անբաւ ծախիւք · որք աստի և անտի ունին թումբս հաստատունս ամրացուցեալս անտաշ քարամբք · և ուրեք ուրեք չափաւոր հեռաւորութբ̃ կամուրջս վիմատաշս, առ 'ի տալ անցս ճնպ̃հորդաց 'ի միոյ կողմանէ 'ի միւսն : Եւ թէ անթիւ են այն կամուրջք · այլ գլխաւորքն են իբր 300 · յորոց ոմանք են երեք կամարեան · ոմանք հինգ · և ոմանք մինչև ցեօթն · միջին կամարն բարձր է յոյժ ք̃ զայլս, զի նաւք մարթասցին 'ի ներքուստ անցանել առանց իջուցանելոյ զկայմն : Գրեն թէ յամ̃ նհ̃նգս են մի մի գլխաւոր երկայնաձիգ ջրմուղք · որք յերկուց կողմանց բաժանին յայլ և այլ առաջս · յորոց ելանեն անհամար վըտակք և բաշխին 'ի քղ̃քս և 'ի գեօղս, և ոմանք երթեալ հասանեն 'ի ծովակս կմ̃ 'ի լիճս, և անտի սփռեալ ոռոգանեն զշրջակայ երկիր · այլք հոսին 'ի խրամս քղ̃քաց և բերդից, ապա անտի անցեալ գնան յայլ տեղիս :

Յամ՟ ջրմուղս չինաց մին անուանի է յոյժ, զոր կոչեն մեծ ջրմուղ. և յիրաւի, վս՟ զի երկայնութիւնն է իբր 1200 մղոն. զի սկսեալ 'ի Քանթօն քղ՟քէ որ է 'ի հարաւակողմն, ձգի մինչև ցՓէքին մայրաքղ՟ք որ է 'ի հիւսիսային եզերս չինաց աշխարհի. և չէ ուրեք ը՟ հատեալ, բայց միայն իբր միոյ աւուր ճանապարհաւ առ Մօյիլին լերամբ, որ է յեզերս չանսի Նէնգին ։

Այլ քզ՟ի յայսչափ երկարաձիգ տարածութե՟ն՝ երկիրն ոչ է ը՟ ամ՟ տեղիս միապէս հարթ հաւասար, կմ՟ զի այսպէս ասացից՝ դիրք երկրին ոչ իջանէ ը՟ ամ՟ տեղիս մեղմով և համեմատաբար ըստ ընթացից ջուրց. այլ ուրեք ուրեք զառ 'ի թափ անկանի, յայն սակս կարևոր դատեցան յայնպիսի տեղիս շինել արգելս կմ՟ կապանս, զորս մարթ է կոչել սահմանս ջուրց. զի անդ ջուրք 'ի բարձրագոյն ջրմղէ անտի գահավէժ հոսին 'ի ստորինն յաւէտ և նուազ սրընթաց՝ ը՟ յաւէտ և նուազ զառ 'ի վայր գոլոյ երկրին ։ Եւ առ 'ի հանել զնաւակս 'ի ստորին ջրմղէ 'ի վերինն, յայնպիսի տեղիս սահմանեալ կան բազմութիւն մարդկան, որք բազմապատիկ սուսանօք կապեալ զնաւակս և աստի և անտի ձգեալ ուժգին՝ հանեն 'ի վերին ջրմուղ անդր. կմ՟ ը՟ հակառակն՝ 'ի վերին ջրմղէ իջուցանեն 'ի ստորինն ծանր դժնդակ և երկար աշխատութբ՟. վս՟ զի չև ևս ուսան շինել կապանս ջուրց ո՟րպ սովորութիւն է յեւրոպիա 'ի ձեռն դրանց. զոր բաւական է մի միայն մարդ սակաւ աշխատանօք բանալ և փակել. և սոյն նաւակաց առաւել ծանունց քջ՟ զդիւրացուցն՝ ինքնին 'ի ստորին ջուրց ելանել 'ի վերինն, կմ՟ 'ի վերնոյն իջանել 'ի ստորինն. ո՟րպ է տեսանել 'ի տրուն վէնէտիկոյ, և յայլ տեղիս ։

Այն ջրմուղք կարի պիտանի և շահաբեր են. նախ՝ զի առատապէս մատակարարեն ջուր յամ՟ քղ՟ս և 'ի գեօղս. և սոյնպէս զամ՟ անջրդի վայրս, արդիւնարարս և բերրաբեղունս գործեն. որք առանց այնր ոռոգման ամենևին ամուլ և անբեր լինէին ։ Երկրորդ՝ պահեն զերկիրն յողողմանէ ջուրց գետոց և հեղեղաց. զի 'ի յորդել ջուրց նց՟, և 'ի զեղանել արտաքս 'ի ծոցոյ, ծածկէին արդեօք զամ՟ շրջակայ վայրս, եթէ ոչ հաւաքէին 'ի ջրմուղն յայնոսիկ ։ Եւ թէպէտ տակաւին հօհամ գետն գործէ վնաս ոչ սակաւս յառատանալն, սակայն ևս մեծամեծս գործէր, եթէ չէին այն ջրմուղք ։ Այս իսկ եղև մի 'ի գլխաւոր պատճառաց, որք ստիպեցին զչինացիս բանալ զխրամս զայնոսիկ. զի եթէ հաւատասցուք նց՟, երկեր իւրեանց 'ի սկզբանէ անուն լճոյն էր և զրեթէ առհ՟րկ ծածկեալ 'ի ջուրց · ուստի և անբեր , և օդն յոռի · այլ իբրև բացան խրամք և ջրմուղք, այն լճացեալ ջուրք 'ի նմ՟ հաւաքեցան · և երեսք երկրի ցամաքեցան ։ Արդ՝ մեծապէս նպաստեն վաճ՟կանութե՟ · զի ընծայեն վաճ՟կանաց նց՟ ջրային ճնպհ՟ ը̅ ամ՟ կողմանս Չինի · բաց 'ի չանսի և չէնսի գաւառաց , ուր առնուազումն ջուրց , չեք այնպիսի ջրմուղ ։ Յայն սակս այն բազմութիւն ջրմղաց միշտ լի են նաւակօք , որք խուռնընթաց հնպզ՟ երթևեկեն 'ի նմ՟ տանելով վաճառս քղք 'ի քղքէ ։ Արդարև զարմանալի իմն է տեսանել զայն երթևեկ անհամար նաւակաց , որք բացեալ զփխալթի տապաստ (զի առագաստք նաւուց չենաց մեծաց և փոքունց են հիւսեալ 'ի նուրբ չերտից եղեգանց · որպ՟ ստորև ունիմք ասել) սրաթռիչ ընթանան 'ի նմ՟ , անցեալ ը̅ դաշտս և ը̅ հովիտս դալարագեղս և արգաւանդս · և շրջապատեալ յանհամար քղքաց և 'ի գիւղօրէից · զի քղքք և գիւղք ը̅ մեծի մասին են առ ջրմղօք ։

Արդ՝ թէպէտ ջրմուղք և գետք չինաց Չի՟ շահաբեր են յոյժ ։ որպ՟ տեսաք · սակայն զայս ևս պարտ է խոստովանիլ ը̅ հօրն քօնթեայ , թէ ոմանք յայնցանէ վտանգաւոր են յոյժ · և բզմ՟ ձկասուց պճռ՟ սակս բազմապատիկ սեպից ժայռից և քարանց , որք ափեալ կան 'ի նմ՟ · և սակս անհնարին դահավէժ ընթացից ջուրցն , մինչև չթողացուցանել նաւորդաց ը̅ հաճոյից ուղղել զընթացս նաւուց · Նմին իրի բզմ՟ անգամ ը̅հարկանին նաւք 'ի ժայռս և սպառսպուռ խորտակին ։ Ասի թէ 'ի Ֆօքիէն նհ՟նգի իբր ը̅ աւուրս ութ կմ՟ տասն միշտ յայնպիսի վտանգս հարկ է ճնպ՟հորդել · ուր չէք այլ ինչ տեսանել , եթէ ոչ սահանս և պտոյտս ջուրց և յորձանուտս · որք ը̅ հարեալ միմեանց , տան անդ տարուբերեն զնաւակս · և գրեթէ ոչ անցանէ օր , յորում նաւ մի ոչ խորտակեսցի · որ եթէ դիպեսցի մերձ յեզերս , դիւրին է մարդկան զերծանիլ · այլ եթէ 'ի մէջն յորձանաց հանդիպեսցի՝ որպէս լինի երբեմն , յայնժամ չէք զերծումն ։

Նա ինքն հայրն քօնթի , որ էառ զփորձ այնց վտանգաց հաստատէ , թէ յայնչափ ծովագնաց ճնպ՟հորդութե՟ իւրում , զոր արար ը̅ ամս բզմս 'ի մեծամեծ և յառաւել մրրկածուփ ծովս Չի՟ , ոչ կրեաց այնչափ վտանգս , որչափ յաւուրս տասն կրեաց 'ի վ՟ր ջուրց այնց սրընթաց ուղխից յՉի՟ն չինաց ։ Բայց

բզմ՟

բզ՟մ անգամ ը՟ ասելոյ նորին՝ խառնակումն նաւուց ոչ է այնչափ 'ի բռնութ՟է ջուրց, կմ՟ յանհմտութ՟է նաւավարաց, ք՟ն թէ 'ի սակաւութ՟է նց՟. զի եթէ փորձութ նաւավարաց, որ է սովորական թիւ որոց վարեն զնաւս, առնուին հնգետասան կմ՟ վեշտասան, յայնժամ բոլոր բռնութ՟ն ջուրց չէր բաւական յափշտակել զնաւս. սակայն նք՟ առ խնայելոյ 'ի ծախս, ոչ խնայեն կենաց՝ 'ի յայտնի վտանգս արկանելով զանձինս. և զայս գործէ 'ի նն՟ տարապայման ագահութ՟ն նոցա :

Ի. Օդ Չինաց :

Այս աշխ՟ գոլով ընդարձակ դրեթէ 'ի չափ կիսոյ եւրոպիոյ որպ՟ ասացաք. օդ նորա զնզ՟ն է յոյժ ը՟ զնզ՟նութ՟ե այլ և այլ հեռաւոր տեղեաց : 'Ի հիւսիսային կողմանս սաստիկ է ցուրտն 'ի ձմեռայնի իբրև ընդ ամիս չորս. ցա 'ի սկզբանէ ամսեանն նոյեմբերի մինչև ցմարտ. և յայնժամ սառեին անդ գետք և ջերմուղք առհասարակ այնչափ՝ մինչև համարձակ անցանել 'ի վ՟ր սառին ոչ միայն մարդկան և անասնոց, այլև կառաց. և լերինք ընդ այն ամիս միշտ ձիւնապատեն : Յարևելեան և յարևմտեան կողմանս բարեխառն է և քաղցր. զի թէպէտ 'ի ձմեռայնի լինի ձիւն. բայց ոչ տևէ ընդ երկար. նոյնպէս և յամառայնի տապ չնչին հողմունք զովացուցիչք : Իսկ 'ի հարաւային կողմանս 'ի ձմեռայնի ձիւն ոչ լինի. և ոչ սառն տեսանի բնաւ. այլ փ՟ոկ ձեան և սառին յաճախեն անդ կարկուտք, անձրևք, ջաղքք՝ մնդ՟ 'ի ժամս աշնանային գիշերահաւասարի. նոյնպէս է և 'ի գ՟ուս, որք անկանին ընդ արևադարձիւ խեցգետնի. իսկ յայլ ժամս տարւոյն միշտ պարզ են երկինք և պայծառ: Յամառայնի թէպէտ սաստիկ է անդ տօթն, այլ ոչ է անտանելի և ոչ կարէ նեղացուցիչ, զի ձգի առ բարեխառն գօտեաւ, ուր ջերմութ՟ն ամառայնոյ դրեթէ չէ ինչ ընդհատ 'ի ջերմութ՟է հարաւային մասին Իտալիոյ : 'Ի նոյն հարաւային կողմանս մշակք, և այլք որք գործեն գործս ծանրակիրս և աշխատալիս, սովորութ՟ ունին գործել ընդ առաւօտն մինչև մօտ ցօրհ՟րկ. և 'ի հասանել արեգականն 'ի կէտ միջօրէական, խոյս տան 'ի հովանաւոր տեղիս, կմ՟ 'ի գետնափոր փապարս հանգիստ առնուլ. ապա 'ի խոնարհել արեգական անդրէն 'ի գործ ելանեն. զի սահմանեալ ժմկ գործոյ նց՟ է ընդ առաւօտն և ընդ երեկս. իսկ ժմկ

զկնի

զինի ճաշուն և գիշերն 'ի հանդիսս առնել է նց̄ ։ Նոյնպէս ը̄ լաւութեն և ը̄ յոռութեն պէսպէս է օդն նր̄. զի 'ի հարաւային կողմանս, և ուրեք ուրեք 'ի ծովեզերեայ տեղիս՝ ուր ցած է երկիրն և լիճք յաճախ, Թանձր է և վնասակար. իսկ 'ի հիւսիսային և յարևելեան կողմանս՝ ուր յաճախ են լերինք, մաքուր է և առողջ. բայց ը̄ հանրապէս խօսելով օդ Ե̄ն չինացւոց բարի է և նուրբ. որում վկայէ և բարք բնակչաց նր̄ ։

Է. Բերք Չինաց ։

Հող երկրի նր̄ է ը̄ իրաց լինել աւազախառն՝ միջ և Թեթև և կակուղ, զոր բաւական է մի միայն եզն կամ կով արօրադրել. այն զի ասէ նիւհով, Թէ ինքն բազմ̄ անգամ ետես անդ աչօք՝ առն և կնոջ համդերձ իշով միով ձգել զարօր ։ Սակս այսպիսի կակղութեան և փափկութեան՝ երկիրն պէտս ունի սակաւ ուժգման առ 'ի պտղաբերութիւն, զի վաղվաղակի չորանայ ։ Եւ առ դիւրաւ բաշխելոյ զջուրս հաւասար չափով ը̄ ամ̄ տեղիս, զայլ հնարս ոչ գտանին, եթէ ոչ հարթել զերկիր և հաւասարել. ապա Թէ ոչ՝ բարձրագոյն տեղիք միշտ անջրդի մնային, իսկ խոնարհագոյնք հնպ̄զ խոնաւ և լճային ։ Վ̄ոյ Ե̄ն չինաց գրեթէ ը̄ ամ̄ տեղիս արգաւանդ է և բարեբեր. ոչ այնչափ առ պարարտութեան երկրին, ք̄ թէ առ ժրաջան մշակութեան բնակչաց նր̄. ուր զարհեստ հողագործութեն գրեթէ 'ի ծայր կատարելութեն հասուցին ։

Վ̄ն զի համօրէն չինք փոյթ մեծ ունին այնմ. այն զի՝ և նոյն ինքն ինքնակալ նց̄ առ պատուական երևեցուցանելոյ յաչս ժողովրդեան զայս գործ բազմարդիւն, և առ առաւել յորդորամիտս առնելոյ զնոսա առ այն, ամի ամի 'ի հանդիսաւոր տօնախմբութեն միում ինքնին արօրադրէ զսահմանափակ ինչ տեղի և սերմանէ ։ Զնոյն առնեն և համօրէն կուսակալք յիւրաքանչիւր նահանգս ։ Այլև ամ̄ օրէնք նց̄ և սահմանադրութիւնք ընդհանրականք իբր մի միայն յառաջադիր վախճան ունին զպարգաւաճումն երկրագործութեն ։ Վ̄ոյ չիք անդ տեսանել 'ի դաշտային տեղիս ծառս անպտուղս միայն առ 'ի զարդ. և ոչ ը̄արձակ պարտէզս և բուրաստանս անօգուտս 'ի պէտս զբօսանաց ևեթ կարգել. այլ ամ̄ տեղիք նց̄ մշակեալ են յարգիւնաւորութիւն պէսպէս արգասեաց ։

Բլուրք իսկ 'ի բազմս հարթեալ են և բաժանեալ 'ի բազմամապատիկ անջրպետութիւն կմ՟ տափարակէ՟ տեղիս պսակաձեւ մի ք՟ զմի 'ի վերոյ · որք գեղեցիկ լինին անսարան ընծայեցուցանելն աչաց · և իւրաքանչիւր անջրպետութիւն պատեալ է պատուարաւ · զի մի 'ի յորդել անձրևաց՝ սերմանիքն 'ի վայր հոսեսցին զոյգ ը՟ հողոյ ։ Այն բլուրք բաց յանձրևոյ, ոռոգանին և 'ի ջուրց ինքնաբուղխ աղբերաց հաւաքելոց 'ի մեծամեծ աւազանս, որք անտի ը՟ պիտոյից բաշխին յայլ և այլ տեղիս ։ Բ՟մ ուրեք ևս ուր չիք աղբիւր ինքնաբուղխ, զջուրս գետոց և ջրմղաց, որք անցանեն առ ստորոտով բլրոց, հանեն մինչև 'ի կատար նց՟ 'ի ձեռն բազմարուեստ գործեաց · որոյ զուգական ը՟ ասից պիւշինկայ՝ Թուի թէ չիք և յեւրոպիա · ուր այնչափ ծաղկե՟ են արուեստք ։ Եւ սակս այսպիսի ժրաջան աշխատասիրութե՟, սովորաբար յամին երիցս սերմանեն և ժողովեն արդիւնս 'ի բլրոց անտի · Նախ՝ արմատս ինչ, յորմէ մզեն իւղ · ապա բամբակ · և հուսկ յետոյ ազգ մի արմատոյ, զոր բադագ կոչեն ։ Այս կարգ մշակութե՟ և սերմանելոյ թէպէտ ոչ է անփոփոխ ը՟ ամ՟ տեղիս, սակայն իբր հնրկ՟ է ։ Նմանապէս և լերինք, որք անպիտան են 'ի մշակութե՟ չեն դատարկ · զի են 'ի նս՟ անտառք ծառոց 'ի պէտս շինուածոց և հրոյ · այլև բովք ազգի ազգի հրաշալեաց ։ Բայց այս արգասաւորութե՟ չինաց եր՟ի ոչ է միապէս ը՟ ամ՟ տեղիս · զի 'ի հարաւային կողմանս 'ի ցածուն տեղիս յամին երկիցս հնձեն · 'ի միջին կողմանս 'ի բարձր և յանջրդին տեղիս՝ միանգամ · բայց արմտիք նց՟ չեն այնպէս պատուական, ո՟ զարմտիս հարաւային կողմանց · իսկ 'ի հիւսիսային կողմանս առատութե՟ է ամ՟ ազգ արմտեաց ։ Արդ ը՟ հանրապ՟ խօսելով՝ 'ի չին առատութե՟ է ամ՟ի, ոչ միայն հարկաւորաց 'ի շահս և 'ի դարմանս մարդկային պիտոյիցս, այլև որոց 'ի վայելչութե՟ են 'ի փափկութե՟ և 'ի զուարճութե՟ ։ Ունի ցորեան, որիզ, գարի, կորեակ բազմատեսակ, սիսեռն սեաւ և դեղին, զոր տան և երիվարաց առ 'ի պարարտանալ · ոլոռն, բակլայ, ոսպ, կաղամբ, շոմին, շողգամ, բադադ և այլ պէսպ՟ս բանջարս և արմատս պատուականս ։

Սովորական պտուղք նց՟ են խնձոր, տանձ, սերկեւիլ, դեղձ, ծիրան, նուռն, նարինջ, կիտրոն, լեմոն, ընկոյզ, շագանակ, խաղող ազնիւ այլ ոչ այնչափ բ՟մ, յորմէ առնեն չամիչ · սեխ, դդում, վարունկ, ձէ՟թ այլատեսակ 'ի սերոցն, յորմէ ոչ մզեն իւղ ։ Այլ այս ամ՟ պտուղք, բաց 'ի նռանէ և 'ի ծաղկահամ ինչ խաղողոյ, գոյ, ստորին են յոյժ ք̃ զմերս · բայց սեխ նց̃ ազնիւ է · որում երեք տեսակք են · մի տեսակն է փոքր գրեթէ ՚ի չափ մեծ խնձորոյ · գոյն նր̃ դեղին համակ · քաղցրահամ եւ նրբակեղեւ · զոր առանց կեղեւելոյ ուտեն · երկդ̃ տեսակն, զոր կոչեն սեխ ջրային, մեծ է ք̃ զհս̃րկ սեխ մեր եւ երկայնաձեւ · մէջ նր̃ երբեմն սպիտակ է, եւ երբեմն կարմիր, քաղցր իբրեւ զշաքար եւ հիւթեղ եւ զովացուցիչ · որ եւ չունի ամենեւին զվնասակար ինչ որակութի̃ · յայն սակս ՚ի սաստիկ տօթագին ժմկս մարթ է ուտել զայն անվտանգ · իսկ երրդ̃ տեսակն է հս̃րկ՝ նման թանձրակեղեւ սեխից Իտալիոյ :

Բաց ՚ի հս̃րկ պտղոց աստի՝ են անդ եւ այլ տղչի ազգի պտուղք, որք առ մեզ ոչ երեւին · յորս նշանաւոր են հետագայքդ : Մանկլէ · է պտուղ անուշահոտ, մէջ նր̃ դեղին եւ հիւթալից եւ թթու գրեթէ ոպ̃ ըզլեմոն, կորիզ նր̃ է դեղ աղդու ը̃դդէմ հոսման արեան : Լէթքի · է պտուղ ՚ի չափ մեծութ̃ թարմ ընկուզոյ, այլ երկայնաձեւ եւ մաշկապատ · մէջն կակուղ եւ ջրալիր եւ առ փոքր մի թթու, այլ ախորժահամ · զոր չորացուցանեն ոպ̃ մեք զշլոր, եւ ուտեն ը̃ ամն̃ ողջոյն սովորաբար յորժամ ըմպեն զթէյ, այն է՝ չայ : Լուձիւ, կմ̃ Լօվլիէն ըս̃ ակն վիշապի · է պտուղ բոլորաձեւ նրբակեղեւ եւ մոխրագոյն · այլ ՚ի հասանելն փոխի ՚ի դեղին · մէջ նր̃ ջրալիր է եւ թթու եւ ՚ի ծայրագոյն աստիճանի ցուրտ, այլ անվնաս : Սեղէք · պտուղ որ լինի յամ̃ տեղիս ՚ի չինաց Ծի̃ · այլ համք եւ որակութիք նց̃ պէսպէս են ըս̃ պէսպիսութ̃ դրից տեղեացն : Որք լինին ՚ի հարաւային կողմանս ազնիւ են յոյժ նրբակեղեւ թափանցիկ եւ կարմրագոյն մնչդ̃ յորժամ հասանեն · ձեւ նց̃ է ձուաձեւ, այլ մեծ քան զհս̃րկ ձու · կորիզքն սեաւ եւ տափարակ · մէջն փափուկ ջրալիր եւ քաղցր, որ ինքնին հալի ՚ի բերանն զոր սովորաբար թարմ ուտեն · բայց եւ չորացուցանեն · եւ յայնժամ ըս̃ օրինակի մերումն թզոյ՝ առ սակաւ սակաւ գոյանայ ՚ի վր̃ նր̃ ալերանմանն գոյացութի̃ քաղցր : Բայց հիւսիսայինքն առ փոքր մի պինդ են եւ առաւել մնալից եւ տեւական, եւ համ նոցա չէ այնչափ քաղցր :

Ծառ Ճարպոյ կմ̃ Ճարպաբեր, է տեսակ ծառոյ, որոյ ոստք թիւրաթեկ են · տերեւքն սրտաձեւ, կարմիր եւ շողշողուն · իսկ պտուղ նր̃ գոյանայ ՚ի մէջ պարկաձեւ պատենի բաժանելոյ յերիս շերտս · որ ՚ի հասանելն ինքնին բացեալ լինի ը̃ մէջ՝ ըս̃ օրինակի պատեսնի շաղգամակաց. և յայնժամ երևին 'ի նմ՟ երեք ընկոյզք սպիտակք կաղնաչափք մեծութ՟բ. որք 'ի հեռաւստ գեղեցիկ իմն երևին 'ի մէջ կարմրաժեռ տերևոց ծառոյն. և ծառն իսկ ողջոյն թուի փունջ մի 'ի կարմիր և 'ի սպիտակ ծաղկանց կազմեալ: Այլ զարմանալին այն է, զի սպիտակ գոյացութին ֆ միջուկն արտաքին պատենին գունով հոտով և այլ ամ՟ իրօք նման է ճարպոյ անասնոց. յայն սակս և ծառն անուանի ճարպաբեր. և յիրաւի՝ զի չինացիք գործեն անտի ճրագս, ոպ՟ մեք 'ի ճարպոյ: Եւ առ 'ի ձուլել անտի ճրագ, շատ է լուծանել զայն հրով, որպէս լուծանեմք զճարպ անասնոց. բայց պիտոյ է խառնել 'ի նմ՟ և փոքր մի իւղ, զի լաւ ևս կակղասցի և զանգնեսցի, և հեշտաւ ձուլեսցի. բայց ոչ գիտեն զտել. և փխնկ բամբակեայ պատրուգի դնեն չիւղ փայտի պատեալ թելիւ կնիւնոյ, որ թէպէտ դիւրաւ վառի, այլ աղօտացուցանէ զլոյս բոցոյն, և արձակէ ծուխ և հոտ ծանր. իսկ եթէ զտէին, և դնէին 'ի նմ՟ պատրոյգ բամբակի, ճրագք նց՟ ոչ ինչ ը՟հատ լինէին 'ի մերոցն:

Նունուֆար կմ՟ Նէնուֆար. զոր չինացիք Պէթսի կմ՟ Փէթէլի կոչեն. է բոյս որ բուսանի 'ի ջուրս. բուն նր՟ է սպիտակ 'ի ներքուստ, իսկ արտաքուստ կարմրագոյն, և բաժանի 'ի բզ՟մ ոստս. համ նր՟ նման է կաղնոյ ֆ ֆնտըխի: Ասեն չինացիք թէ այն բոյս ունի զօրութի կակղացուցանելոյ զպղինձ. զոր և հայրն քօնթի հաստատէ փորձիւ. զի պատմէ թէ 'ի հասանել իւրում 'ի Համթշու քղք. ոմն 'ի չինաց առեալ փոքր ինչ յարմատոյ այնր բուսոյ, եդ 'ի մէջ նորա պղնձի դրամ մի թանձր. և առեալ զայն միւսում, որք էին ը՟ հօրն քօնթեայ, ասաց նմ՟ ծամել. զոր իբրև արար նա՝ զոյգ ը՟ արմատոյն և պղինձն մանրեցաւ 'ի բերան նր՟: Զինա. զոր չինացիք Լափաթամ կոչեն, կմ՟ ը՟ այլոց Ֆօլիմ. է բոյս ինչ՝ որ ը՟ ասելոյ ոմանց բուսանի միայն 'ի Սուչվէն նէննգի, և 'ի շրջակայս լեփինկայ. այլ ղօվինոս ասէ թէ գտանի և յԻւնան, 'ի Չէնսի, 'ի Չանսի և 'ի Լէաթօնկ յանտառասոճեաց. իսկ վայրենին, զոր բերեն առ մեզ, բուսանի անխտիր ը՟ ամ՟ տեղիս յե՟ին չինաց: Այս բոյս արձակէ ոստս կմ՟ բազուկս փշոտս. որք ճապաղին ը՟ երկիր և պատատին զծառովք զօրէն բաղեղան. տերևք նր՟ մեծ են և կանաչ և սրտաձև՝ նման ը՟ իմիք ջղախոտոյ. բերէ ղեղին ոսկեգոյն կողակս, իսկ արմատն սովորաբար է առոճայր իբրև զբազուկ մանկան.

կան, Թիւրաթեկ, ոստաղից · արտաքուստ առ սակաւ մի կարմրագոյն, իսկ 'ի ներքուստ դեղնախառն սպիտակ ։ Բայց են՝ որք սպիտակ են և արտաքուստ · և սոյնք լաւագոյն են ք՟ զկարմիրս, ո՟պ և ծանունքն ք՟ զթեթևս · չունի մասնաւոր ինչ հոտ ։ Այս արմատ է զովացուցիչ և մաքրողական արեան · զոր բըժիշկք եւրոպիոյ յաճախ 'ի կիր արկանեն 'ի բժշկութ՟ն ախտից պ՟տճառելոց յապականութ՟է արեան ։

Ծին սէնկ · կ՟մ Ծէնս էնկ · չինք կոչեն փէգ սի · բոյս՝ որ սովորաբար բարձրանայ իբրև կանգնաչափ, կ՟մ փոքր ինչ աւելի · բուն ն՟ր թաւամազ ստուար իբր մատնաչափ, ուղիղ և անոստ մինչև 'ի գագաթն · իսկ 'ի գագաթան արձակէ տերևս սրածայրս, որք ձևանան 'ի ձև հովանոյի · և 'ի միջոյ տերևոց ելանեն ոստք · որք 'ի ծայրս բերեն մանուշակագոյն ծաղիկս սկահաձևս բազմաթերթս · ապա կարմրագոյն պտուղս բոլորակս ողկուզօրէն · և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի երկու կորիզս ոսպնաձևս · որք են սերմ ն՟ր ։ Արմատ այսր բուսոյ 'ի մեզ կոչի լօշթակ · տճկ · ատամքէօքիւ · ֆր մարդարմատ · որպէս և անուանս Ծին սէնկ, Թարգմանի բոյս մարդկային կ՟մ մարդոյ · զի ը՟ իբրաց ինչ ունի զձև մարդկային մարմնոյ · իբր զի բաժանի յերկու ոստս, որք բերեն զնմանութ՟ի սրունից մարդոյ ։ Այս արմատ՝ եթէ արժանի իցէ հաւատալ չինացւոյ՝ գերազանցէ զօրութ՟ զա՟մ բժշկական բուսովք · համարեն առ ն՟մ իբր ըն՟հանուր դեղթափ ը՟դէմ ա՟մ ախտից · զոր յայն սակս կոչեն բոյս ոգելից · մաքուր ոգի երկրի · դեղ տուիչ անմահութ՟ե · զի մաքրէ զարիւն, ցրուէ զվնասակար հիւթս խառնեալս յարեան, քաղցրացուցանէ զարիւն 'ի խժային աղի հիւթոց, նորոգէ զոյժն տկարացեալ յերկար խօթութ՟է, զօրացուցանէ զստամոքսն · և որ առաւել է՝ բժշկէ զախտ թոքացաւութ՟ե՝ որ է վէրէմ, և զնչարգելութ՟ի ևն ։ Բայց գոլով սակաւագիւտ և մեծագին, յայն սակս մեծատունք ևեթ 'ի կիր արկանեն զայն՝ եթէ հիւանդ իցեն և եթէ առողջ ։ Հիւանդաց առ մի նուագ տան զհինգերորդ մասն միոյ ունկւոյ · իսկ առողջոց, որք առնուն 'ի պահպանութ՟ի առողջութ՟ե՝ զտասներորդ մասն միոյ ունկւոյ · հատանելով զայն 'ի մանր մասունս, և եռացուցեալ ջրով թէյչափ, մինչև երեք մասունք ջրոյն սպառեսցին, և մնասցէ միայն իբր սկահակ մի խահվէի, և արկեալ 'ի ն՟մ փոքր ինչ շաքար, տան ըմպել ։ Երբեմն և զտերևն 'ի կիր արկանեն ը՟ օրինակի թէյի ոչ նոյն չափով որով առնուն զթէյն, այլ սակաւ : Լինի առ 'ի հովանաւոր տեղիս 'ի մասնաւոր սահմանի, ուր են լերինք երկայնաձիգ, և անտառք . 10 հզր թաթարք կարգեալ կան 'ի ժողովել, որոց ժմկ է միայն ձմեռն, ոչ թողուն այլում ուտել . և առ 'ի զգուշութին առանձին ցանկով զատուցեալ է տեղին 'ի քանդօն պուէ . և առաջի նորա միշտ շրջին պահապանք . զամ տանին 'ի մաքսատուն կայսեր չինու, որ առնու անտի երկու ունկի յիւրաքանչիւր ժողովողաց լիբր հարկ, և զյաւելեալն գնէ, և ինքն անդրէն վաճառէ ժողովրդեան, մի կշիռն վաճառի 'ի չին՝ երից կշռոց արծաթոյ . իսկ յեւրոպա հոլանտացիք վաճառէին երբեմն ը կշռոյ ոսկւոյ, իսկ 'ի յետին ժմկս ոչ այնչափ ծանրագին . թերևս զի փորձն երկար ժմկաց ոչ եգիտ զզօրութին ըս համբաւոյն . ասի ևս թէ 'ի մնալն երկար լինի ճճեկեր և կորուսանէ զիւր զօրութին, բզմ անգամ վճռկանք եւրոպեանց խառնեն ը այն և զնինչին . որ է այլ բոյս, և առաւել հորկ :

Զայս բոյս ծանօթացուցին 'ի գաղղիա դեսպանք չիամայ թագաւորին զոր բերին առ Լուտովիկոս ժդ :

Հալուէ չինաց, այն է՝ եօտ աղաճը . է ծառ ինչ աղնիւ օտար 'ի հորկ անկոյ հալուէի, նման ձիթենւոյ . բուն նր բաղկանայ յեռատեսակ փայտէ . առաջինն՝ զորով անմիջապէս սպատէ կեղևն, է սեաւ և ծանր, անուանեալ փայտ արծուոյ կմ Արծուափայտ, աղնիւ յոյժ և սակաւագիւտ . երկրորդն սպիտակ և թեթև կոչեցեալ Քալէմպուկ . իսկ երրդն՝ որ է 'ի մէջն բնոյ ծառոյն անուանեալ Քալամպայ այնչափ 'ի յարգի է առ հնդիկս, և ը համօրէն առնու, մինչև կշռով ոսկւոյ վաճառել զայն . հոտ նորա անուշակ միանգամայն և օգտակար դեղ զօրացուցիչ նուաղելոց և ուշաթափելոց : Տերևօք նր գիւղականք ծածկեն զյարկս բնակութե իւրեանց . զոր վարեն և փնկ սկաւառակի . մանրաթելք տերևոյն նման են կանեփոյ կմ վշոյ, որք պիտանացու են 'ի պէտս իւր :

Զփուշս, որք են 'ի տերևսն 'ի կիր արկանեն փնկ բևեռաց : 'Ի հատանել զոստս 'ի բնոյ նր ծորէ հիւթ քաղցր իբրև զմեղր . որ յետ սակաւ միոյ փոխի 'ի քացախ պատուական՝ մարթ է ևս ուտել զփայտ ոստոյն, որ ունի զհամ շաքարեալ կիտրոնի :

Այլ յոմն բոյս չինու առաւել համբաւեալ՝ որ յաճախեալ է և առ մեզ, է բոյսն պատուական, զորոյ զանուն կոչեմք թէյ . այն է՝ չայ աղնիւ զօրաւոր և սքանչելի, որոյ նման չիք այլ ուրեք : Այս բոյս է ծառ փոքրիկ կմ՟ մանուկ թուփ նման մորում մրտենւոյ. թէպէտ և երբեմն առաւել աճէ և լինի ծառ մեծ. բուսանի 'ի սերմանէ արկելոյ 'ի հող 4. 5 մատնաչափ 'ի խոր: Յետ երից ամաց բերէ տերև առատ յոյժ. այլ յեօթնե՟րդումն սակաւ. և յայնժամ հերձատեն զբունսն. և պատուաստեն 'ի նմ՟ ընձիւղս, որք փութով աճեն. և իւրաքանչիւրն բերէ գրեթէ նոյնչափ, որչափ ծառն ողջոյն: Ծաղիկ նր՟ է սպիտակ նման վայրենի վարդի. իսկ պտուղն կմ՟ սերմն պէսպէս է. զի ոմանց է ոլոռնաձև, և 'ի միջի ունի հատս մանունս և դեղնագոյնս. ոմանց 'ի չափ բակլայի. այլ ձև նց՟ այլ և այլ է. ք՟ բոլորակ եռանկիւնի և երկայնաձև. և 'ի միջի ունի երկու կմ՟ երիս հատս կմ՟ կորիզս ոլոռնաձևս: Եւ լինի ը՟ բովանդակ աշխ՟ն չինաց. բայց ոչ ը՟ ամ՟ տեղիս ունի զնոյն զօրութի՟ և զպատուականութի՟. որք լինին 'ի հովիտս կմ՟ 'ի ստորոտս լերանց և 'ի քարուտ տեղիս լաւագոյն են ք՟ որք բուսանին 'ի դաշտս և 'ի կակուղ տեղիս:

Նոյնպէս առաւել պատուականք են, որք լինին 'ի հիւսիսային նահանգս, ք՟ որք 'ի հարաւայինս: Յամին երիցս քաղեն զտերևն նր՟. նախ' 'ի մարտի, յորժամ տերևքն մանր են քնքուշ և փափուկ, զոր չորացուցանեն 'ի հովանաւոր տեղիս. և այն կոչի թէյ թագաւորական. երբ զի ծախի 'ի պէտս ինքնակալին և արքունեաց նր՟ և իշխանաց երկրին. զոր ոչ երբէք հանեն արտաքս յաշխ՟է անտի իւրեանց. զե՟րկրդն ժողովեն յապրիլի. և յայնժամ առաւել մեծ են և դալարեալք. իսկ ե՟րդ անգամ ժողովեն 'ի մայիսի և յունիսի: Զերկոսին զայսուիկ նախ եդեալ 'ի ծակոտկէն անօթս և կալեալ 'ի վր՟ եռացեալ ջրոյ մինչև քաջ տամկասցին 'ի գոլորշեաց անտի ջրոյն. ապա սփռեն 'ի պղնձի ափսէայս, դնեն 'ի ներքոյ հուր մինչև ցամաքեալ չորասցին. յետոյ դնեն 'ի կապարեայ տուփս, և քաջ խնուն զբերանն. ասեն թէ ոչ ը՟ երկար 'ի բացի մնալով կորնչի բնական զօրութի՟ նր՟, կմ՟ գէթ նուաղի: Գործածութի՟ թէյին մուծաւ յեւրոպիա զառաջինն 'ի հոլանտացւոց. յորոց էանց առ անգղիացիս, և անտի յայլ տեղիս: Ոմանք ջանացին զբոյս նր՟ փոխադրել և յեւրոպիա. բայց մինչև ցայժմ ոչ լուաք թէ յաջողեալ իցէ:

Անուանի է և բամբակն առատ և ազնիւ, յորմէ գործեն բիւրազգի բամբակի պաստառս նրբաթելս 'ի հիացումն տեսողաց. և առաւել ք՟ զնմ՟ յաճախեալ է անդ մետաքս ընտիր. մինչ թէ ը՟ առաւել հաւանական կարծեաց՝ անդ նախ սկսան գործել մետաքսեայ կերպասս, և անտի եկին 'ի պարսս. իսկ 'ի պարսից տարածեցաւ յեւրոպիա: Ունի և ազգի ազգի համեմս, որպէս դարիճենիկ՝ որ է տարչին ազնիւ քան զսէյլանի կղզւոյ. պղպեղ. եղէգն շաքարաբեր. կոճապղպեղ՝ այն է՝ զէնճէֆիլ. ող, և այլ այսպէս համեմս և բոյսս բժշկականս: Անուանի է և Չիքու կոչեցեալ ծառն, յորմէ բղխէ հռչակաւոր խէժն չինաց, զոր այլազգեաց բարբառով վէռնիճ անուանեմք. որով օծանեն զյախճապակեայ անօթս. և սկաւառակս, և գզրոցս այն է՝ դուլթի, փոքրիկ արկեղս և տուփս և զայլ այսպէս անօթս և կահս փայտեղէնս և պղնձիս: Այն խէժ նման է հալեալ խէժի որ ծորէ 'ի սոճւոյ կամ 'ի չամ ծառոյ. այլ չունի հոտ. յորժամ կամին օծանել ինչ նովաւ, խառնեն 'ի նմա իւղ յաւէտ և նոճաղ ըստ պահանջելոյ նիւթոյ անօթոյն, զոր ունին օծանել:

Բաց յայլոց նորատեսակ արգասեաց գտանի 'ի չին և ազգ մի մամռոյ սպիտակ իբրև զձիւն յաճախեալ ըստ բովանդակ չին, բայց առաւելապէս 'ի հուքվան և 'ի քանթօն. որ ոչ է գործ մեղուաց, այլ փոքրիկ իմն կենդանւոյ, որ չէ ինչ մեծ քան զլու: Արդ՝ այն փոքրիկ որդն աներևոյթ կնճթաւ իւրով ծակէ ըզծառս, և ըստ մտեալ 'ի նմա ծծէ զհիւթ նորա. և փոխարկէ զայն 'ի մոմ սպիտակ. որ զօրէն արտասուաց ծորէ 'ի ծակտեաց անտի արտաքս. և գիւղականք ժողովեալ և արարեալ գնտակս, տանին 'ի վաճառ: Յետոյ ժողովեն 'ի ծակտեաց անտի և զկենդանիս, և պահեն. ապա 'ի գարնան արկանեն զսերմն նոցա առ բնովք այնց ծառոց, որք յարմարաւոր են բնութեան նոցա. ուր կենդանացեալ, ելանեն 'ի ծառն և սփռին յամենայն ոստս նորա. և վերստին սկսանին զվերոյգրեալ գործ իւրեանց, յոր անաշխատ վայելեն չինք:

Ունի և արօտս խոտաւէտս և ընտանի անասունս բազումս. որպէս անդեայս եզանց և կովուց. և հօտս ոչխարաց, ոչխարք նորա ըստ մեծի մասին դմակաւորք են. և ձիս և ջորիս և ուղտս. ձիք չինաց փոքր են և տգեղ, տկար և երկչոտ. և զի չունին պայտ յոտս, եղնգունք նոցա փութով մաշեալ եղծանին. և այնպէս զկնի հինգ կամ վեց ամաց զլխովին անպիտան լինին: Խոզք չինաց առհասարակ սեաւ են և կարճոտն, այնչափ զի փոր նոցա հասանէ 'ի գետին. և թէպէտ չեն այնչափ պարարտ որպէս առ մեզ. այլ միս նոցա համեղ է: Ունի և զամենայն տեսակս ընտանի հաւուց. յորս են, որք թէպէտ

նոյ

նոյնատեսակ են ը՟ մերումս· բայց արտաքին ձեւով այլազան։ Են անդ և վայրենի չորքոտանիք, ոպ՟ գայլ արջ խոզ և այլ պէսպէս գազանք· և նապաստակ եղջերու աղուէս և տեսակ մի եղջերուաճի՝ որ առ պորտով ունի մաշկեղէն պարկ, յորում գոյանայ հիւթ ինչ հոտաւոր յոյժ՝ որ թուի լինել մուշկ։

Ունի և ձուկն առատ 'ի ծովէ 'ի գետոց և 'ի ջրանցից· որ և է կերակուր անհամար բազմութ՟ե գետափնեայ բնակչաց։ Չինացիք որսան զձուկն ոչ միայն կարթիւ և ուռկանաւ ոպ՟ առ մեզ, այլև 'ի ձեռն մեծամեծ թռչնոց ինչ· զորս վարժեն 'ի ձկնորսութ՟ե· ոպ՟ առ մեզ վարժին շունք և բազէք յորս թռչնոց և չորքոտանեաց։ Տարեալ արձակեն զն՟ս առ գետովք և լճովք, որոց նոյնժամայն թռուցեալ սուզանին 'ի ջուր· և երկայնաձիգ կտուցաւ իւրեանց կալեալ զձուկն զմիջաց, բերեն յափն գետոյն առ տեարս իւրեանց· և ասի թէ յորժամ մեծ ձկան հանդիպիցին, զոր մին միայն ոչ է բաւական հանել 'ի ջրոյ անտի, այլք դիմեն յօգնութ՟ին նմ՟։ Եւ յորժամ տեարք նց՟ տեսանեն զն՟ս վաստակեալս, փոքր մի հանգիստ տան նց՟· բայց կերակուր ոչ տան· մինչև հարուստ մի որսացեն· և ը՟ բոլոր ժմկ՟ն որսորդութ՟ե արկանեն 'ի պարանոց նց՟ ուլանոց, այն է՝ թասմայ· զի մի կարասցեն կլանել զփոքր ձկունս, և յագեսցին· և ոչ ևս դիմեսցեն նոքին յօժարութ՟բ յորս։

Գտանին 'ի չին և բովք ոսկւոյ և արծաթոյ սնդկի պղնձոյ անագի և երկաթոյ· բայց բովք ոսկւոյ կան մնան անգործ, զի կմ՟ սակաւ պտղաբերեն մինչև առաւելուլ ծախուց ք՟ զօգուտն, և կմ՟ զի չատ համարին զոսկին, զոր գետք ինչ և ուղխք բարձեալ բերեն խառն ը՟ աւազոյ և ը՟ տղմոյ։ Նոյնպէս և արծաթահանք նց՟ անգործ լքեալ կան առ նուազութ՟ե արծաթոյ։ Են անդ և տեսակք ինչ ականց, և մագնիս, և քարահանք պատուական մարմարիոն քարանց։ Այլ այս ամ՟ բովք առ ոչինչ են առ համեմատութ՟բ պատուական հողոյ, յորմէ գործեն յախճապակի, այն է՝ փառֆաւլի երկատեսակ կմ՟ եռատեսակ· և անտի չինեն պէսպէս անօթս, որք 'ի յորդի են ը՟ ամ՟ տեղիս· և են մի 'ի գլխաւոր վաճառուց չինու։

Են 'ի չին և հրաբուղխ լերինք, որք երբեմն այնպ՟ս բորբոքին, մինչև զարհուրելի մրրիկս յարուցանել 'ի շրջակայ վայրս։ Այլև ջերմուկք· յորոց ոմանք 'ի վերին երեսս ցուրտ են· իսկ 'ի խորս անդ ջերմ· և ոմանք բոլորովին ջերմ, որք և եռան իբրև կաթմայ յեռանդեան • վ՟ն զի մ՟ք 'ի շրջակայ բնակչաց 'ի նշ՟ եփեալ հասուցանեն զկերակուր իւրեանց : Են անդ և լինին , յորս ասեն թէ փայտն փոխի յերկաթ , կամ յայլ նիւթ կարծր : Եւ 'ի հայնան կղզի ասի թէ գտանի ջուր , բայց չգիտեմ թէ գետ իցէ , եթէ լիճ • որ թէ ընկեսցի մանաւոր ինչ տեսակ ձկան , առ ժամայն քարանայ : Բայց այս , ո՟պ և փոխարկութի՟ փայտի՝ յերկաթ դժուարին ինձ թուի :

Է . Վաճառք Ձկանց :

Գլխաւոր վաճառք բաց յարդեանց երկրին , որք են թէյ , ոսկի , փայտ քաղամպայ , սաք , դեղոնչ• այն է՝ պուտնօթի • չինայ կամ քինինա ևն , են և պէսպէս արուեստակերտք • ո՟պ անօթք յախճապակեայք , զոր թէպէտ և 'ի ճապօն և այ գործեն , այլ չինացն լաւագոյն է քան զնոցայն ո՟պ և քան զայլոց ազգաց՝ մաքուր ազնիւ նուրբ փայլուն և թափանցիկ • և այդպէս ազգի մետաքսեայ կերպասք միագոյն , և գունագեղ նկարեալ • այլև դիպակք ոսկեթելք և արծաթաթելք • և գերազանց բամբակի պաստառք նրբահիւսք , և ռնդուսք , այն է՝ պլուրխնճիւկ անօսրունք պնդուզք և ծաղկեայք և ծաղկակէնք իբրև հիւսուածոյք • և պատկերք նկարեալք 'ի թուղթս զարմանագեղերանգօք , (այլ զուրկք յամ՟ արուեստից •) նաև 'ի հայելիս • բայց հայելիքն են յեւրոպիոյ • և հովահարս , այն է՝ եելփաղէ՝ ազնիւս և գեղեցիկս • և հովանոցս , ո՟ր փոքրիկ չատըրս • և այլ պէսպէս արհեստակերտս • ո՟պ և զնի՟ն արուեստական գործածս 'ի վառօթոյ :

Զվաճառականութի՟ չինու մարթ է բաժանել 'ի ներքին և յարտաքին : Ներքինն է առևտուր , զոր նոքա ընդ առնեն ը՟ միմեանս • զի ո՟պ գիրք և օդ նց և հող երկրին պէսպէս են ըստ լերանց , դաշտաց , ձորոց և հովտաց , և ըստ չորութե՟ և խոնաւութե՟ , ցրտութե՟ և ջերմութե՟ • նոյնպէս և բերք նց զնի՟ն են • զի են ինչ ինչ 'ի միում նահանգի , յորմէ զուրկ է միւսն • կամ ինչ ինչ առատ է 'ի միումն , իսկ յայլում նուազ • ո՟պ քանթօն նահանգ 'ի միում ամի բերէ որիզ և մետաքս այնչափ , որչափ նահանգն փէքինու ը՟ ամս տասն ոչ բերէ • և ը՟ հակառակն նահանգն փէքինու բերէ ցորեան և մրգացորեան առաւել քան զքանթօն : զնոյն է ասել և վ՟ն այլոց : Յայն սակս հարկ է նց զպէտս իւրեանց 'ի միմեանց լցուցանել • և այս իսկ է պատճառն , զի գետք և ջրմուղք չինու միշտ լի են նաւակօք, որ երթան և գան 'ի նհ՟նգէ 'ի նհ՟նգ, և ք՟ղքէ 'ի ք՟ղք : Իսկ արտաքինն է առեւտրութ՟ին, զոր առնէ ը՟ օտար ազգս : Այս վճ՟ռշահութ՟ն ը՟ արտաքինս ը՟ բզ՟մ ժմ՟կս սակաւ էր յոյժ և դրեթէ ոչինչ, 'ի պտճ՟ռս արհամարհ և առ ոչինչ համարելոյ չինաց զայլ ամ՟ ազգս, ը՟ որս անարժան համարէին անձանց առեւտրութ՟ս առնել · և անհնարին ծանրարեան կապալս և հարկս եդեալ էին 'ի վր՟ նց՟ : Բայց իբրև կալան Թաթարք զինքնակալութ՟ն նց՟, թեթևացուցին զկապալս, բարձին և զարգելս · որով այնուհետև մեծապ՟ս ը՟արձակեցաւ արտաքին վաճառաշահութ՟ն չինաց ը՟ ցամաք և ը՟ ծով : Եւ ինքեանք իսկ որք յռ՟ջագոյն ոչ ելանէին արտաքս ք՟ զծ՟ իւրեանց, սկսան այնուհետև առնել նաւարկութ՟ս սակս վճ՟ռշահութ՟ն 'ի հնդիկս, 'ի Ճաբօն, 'ի Ճեաւա կղզի, 'ի փիլիփպինեանս և յայլ կղզիս հնդկային ծովու : Ձև նաւուց նց՟ փոքր մի այլազան են 'ի նաւուց եւրոպացւոց · զի առաջք և յետոյք նց՟ են տափարակ քառակուսի · և 'ի ներքսակողմն ունին բզ՟մ անջրպետութ՟ս բաժանեալ 'ի խորշս խորշս առ 'ի զետեղել 'ի նս՟ զվաճառս այլևայլ վճ՟ռկանաց : Առագաստք նց՟ են փսիաթիք ծանրաշարժք, առ որ ոչ սակաւ աշխատութ՟ն պիտի 'ի պարզել և 'ի ժողովել սակս կարկամութե՟ն · այլ ամուր և դժուարահերձ :

Ընդ ցամաք ունի առեւտրութ՟ս ը՟ քօրէայ · որոյ բնակիչք, որք թուէին իջանել 'ի Թաթարաց՝ այժմ հարկատու են չինաց : Վաճառականք սոցա ամի ամի երկիցս երթան 'ի փէքին, ց՟ 'ի մարտի և յօգոստոսի · և տանին անդր թուղթ հս՟րկ 'ի մեծամեծ թերթս, զոր գնեն 'ի լուսամուտս տանց փոխ ապակւոյ · և այլ թուղթս ոսկեզօծս և նկարէնս · հովահարս · ծխախոտ ազնիւ, որ 'ի յարգի է 'ի փէքին · պաստառ բամբակի · և մորթս · այլև ազգ մի աղած ձկան, զոր որսան 'ի ծովս Ճաբօնայ · բայց տանին անդ և դրամս, զոր ստանան յեւրոպացւոց · վս՟ զի արգելեալ է նց՟ առնել առեւտրութ՟ 'ի չին լոկ փոխանակութ՟ իրաց : Իսկ ինքեանք առնուն 'ի չինաց՝ թէյ, մետաքս ազնիւ · և պէսպ՟ս մետաքսեայ կերպաս · յախճապակի անօթս և պղինձս : Ընդ պուխարացւոց, մնւ՟նդ փոքուն պուխարիոյ · որք տանին 'ի չին բուստ, որ 'ի յարգի է առ նս՟, և անդամանդ այն է՝ էլմաս անգործ, բայց 'ի ստորին աստիճանի, և այլ տեսակս հս՟րկ և դիւրագին ականց · վս՟ զի սակաւք գտանին առ չինս, որք յօժարեսցին գնել մեծագին ականս. զի առաւել պատուական է յաչս ն՟ց բուստ վարդագոյն, ք՟ զյակինթ կարմիր. տանին և ոսկեփոշի կմ՟ մանրիկ հատս ոսկւոյ, զոր ժողովեն 'ի հեղեղատաց անտի պուխարիոյ: Եւ փոխարէն առնուն 'ի չինաց մետաքսեայ կերպասս, թէյ, ծխախոտ, յախճապակեայ անօթս, արծաթ, կաշի 'ի պէսպէս կօշկաց, որ գայ 'ի չին 'ի մոսկովաստանու. և մորթս պէսպէս վայրենի երէոց, որք նոյնպ՟ս 'ի մոսկովաց գնան անդր, այլև բամբակի պաստառս, և գիպակս եւրոպիոյ, զոր տարե՟լ վաճառեն ղալմուխաց:

Առնեն չինացիք առևտուրս և ը՟ թաթարս, որք հարկատուեն ն՟ց, այլ համարեալ են իբրև ազգ օտար. տան ն՟ց թէյ, և գեղունչ. այն է պուռնօթի և այլ իրս. և 'ի ն՟ցնէ առնուն ոչխար, եղն, կով. և մորթս վայրի երէոց. և առաւել ք՟ զամ՟՝ զնախայիշատակե՟լ ձին սէնկ զարմատն և զտերևս ն՟ր. որ բուսանի 'ի թաթարաստան չինաց 'ի քարաժայռս լերանց: Իսկ ը՟ հնդիկս չունին չինացիք առևտուրս ը՟ ցամաք. վ՟ս զի յայն կողմն են լերինք անմատոյցք և աւազուտք դժուարակոխք, ը՟ որս դժուարին է յոյժ ճ՟նպրհորդել, այլ միայն ը՟ ծով: Վ՟սյ ցամաքային վ՟ճռկանութին չինաց սակաւ է:

Իսկ ծովայինն ծաղկե՟լ է յոյժ և ը՟արձակ, զի ձգի գրեթէ ը՟ աշխ՟ ամ՟. որ և հիմնեալ կայ 'ի մետաքսեայ կերպասս, 'ի թէյ, 'ի յախճապակի անօթս, և յայլ պէսպ՟ս արուեստակերտս, զորս աշխ՟ն չինաց մատակարարէ այլոց: Իսկ նոքին ը՟ունին 'ի ն՟ցնէ՝ այս՟ 'ի ճաբոնացւոց ոսկի և պղինձ. 'ի պագավիոյ կմ՟ 'ի ձեռւոյ կղզւոյն՝ պղպեղ և այլ պէսպ՟ս համեմս. զի թէպէտև 'ի չին լինի պղպեղ և այլ համեմ, այլ սակաւ. որ չէ բաւական բնակչաց ն՟ր. 'ի չիամայ փայտ 'ի պէսս ներկարարաց և վէռնիճ. 'ի գունգինոյ մետաքս, 'ի քօչինչինայ շաքար և ոսկի: Իսկ յեւրոպացւոց՝ այս՟ 'ի շվէտաց, 'ի դանեաց, 'ի հոլանտացւոց, յանգղիացւոց, 'ի գաղղիացւոց և 'ի փորդուգալաց ը՟ունի դրամս, և ձոյլս արծաթոյ և այլ իրս. որպ՟ս անագ, կապար, երկաթ, չուխայ և այլ ասուեղէն կերպասս. զի չինացիք զասր խուրեանց անգործ վաճառեն. բուստ, գոճազմ՝ այն է՝ քեհրիպար, ապակի, հայելի, ժամացոյցս և՟ն, զորս տանին անդ եւրոպացիք ոչ միայն յեւրոպիոյ, այլև 'ի զնզն՟ կողմանց հնդկաց աշխ՟ի, ուր ունին կալուածս: Իսկ նոքեանք առնուն 'ի չինաց թէյ, ծաղկեայ և անծաղիկ կերպասս

մե

մետաքսեայս · բամբակի պաստառս նրբաթելս, և ընդուսս պէսպէս · յախճապակի անօթս · և այլ ազգի ազգի արհեստակերտս, որք յառ՟ջագոյն 'ի յարգի էին յոյժ և առ եւրոպացիս · այլ այժմ ոչ նոյնպէս · վս՟ զի և ինքեանք գործեն զնմանակս նց · թէպէտ ը՟ երանգոց և ը՟ ազնուութե՟ նիւթոյն անհամեմատաբար առաւելուն ք՟ զեւրոպացւոցն : Վս՟յ այժմ առևտրութ՟ եւրոպացւոց ը՟ չինս չէ այնչափ ինչ ծաղկեալ · զի բաց 'ի թէյէն գրեթէ այլ ինչ իրաց չունին պէտս 'ի նց՟է : Այս ամ՟ վաճառք, զոր քսան կամ երեսուն նաւք բարձեալ բերեն յեւրոպիա, ը՟ հաշուէին ալչինկայ հասանէ ցերկու միլիոն ինն հարիւր հազար վէնետիկեան ոսկի դահեկան · յորմէ մեծ մասն ծախի 'ի թէյն · բայց այժմ կարծեմ թէ ոչ հասանէ 'ի նոյն չափ : Իսկ մոսկովք առնուն 'ի չինաց մանր մարգարիտս, և ձոյլս ոսկւոյ · և թէպէտ արգելեալ է յոյժ չինաց վաճառել ոսկի օտարաց, սակայն նոքին իսկ մանդարինք վաճառեն գաղտ որչափ և կարեն : Առնուն և մետաքսեայ կերպասս՝ և մետաքս անգործ · և բամբակ, բամբակի պաստառս սպիտակս և նկարէնս, և թուղթս ծաղկեայս, և դեղուենչ, շաքար, կոճապղպեղ, խաշնդեղ՝ որ է ռէվէնտ, և այլ պէսպ՟ս դեղօրայս և համեմս : Իսկ ինքեանք տանին անդ մորթս վայրի էրէոց, ոպ՟ սամոյր, քաքում, սեաւ և սպիտակ գայլս, որք գտանին 'ի սիպերիա առ լենայ գետով,

և այլ պէսպէս մորթս :

Նաւք եւրոպացւոց երթան միայն մինչև 'ի քանթօն քղք, բայց ոչ սակաւ վիշտս և տառապանս կրեն նք՟ անդ 'ի մաքսապետաց և 'ի պաշտօնէից նց, այլև 'ի վերակացուաց կարգելոց 'ի վր՟ օտարաց, եթէ առատ պարգևօք ոչ լցուսցեն զքաղց անյագ ագահութե՟ նց · թող զծանրաբեռն կապալս և հարկս, զոր բռնադատին վճարել սակս մտանելոյ 'ի նաւահանգիստ նց : Յառ՟ջագոյն կարող էին 'ի քանթօն քղքէ անցանել և 'ի ներքսակողմն ցոր վայր մարթ էր նաւակել նց ը՟ գետ · այլ յետոյ սակս դիպուածոց ինչ արգելին չինացիք չերթալ անդր ք՟ զքանթօն և ոչ քայլ մի ոտին · ը՟ նմին բարձին և զազատութիւն, զոր ունէին եւրոպացիք 'ի քղքի անդ · և սահմանեցին նց առանձին տեղի բնակութե՟ մեկուսի 'ի բուն բնակչաց քղքին, ը՟ որս ոչ կարեն առնել հաղորդակցութի՟ ինչ, այլ միայն ը՟ վերակացուս վճռկնութե՟, և

ը՟ ոմանց վճռկանաց :

Վս՟ վճռկանացն չինու այսպէս համբաւք հնչեն · զի ոմանք գովեն զնս իբր արդարակորովս և անխարդախս յանձն . և թէ չունիցին նք սովորութիւն երկար ատեն արկանել վաճառուց իւրեանց , այլ միանգամայն ասեն զգինն և զարդար գին նց , և այնուհետև այլ ինչ ոչ խօսին : Իսկ լօքեր անգղիացի , որ անձամբ էառ զփորձ նց ՚ի քանթօն քղք , և այլք ոմանք յեւրոպացւոց զհկռկն վկայեն , զի ասեն թէ անհնարին խորամանկութբ դաւաճանեն ՚ի կշիռս և ՚ի չափս յորժամ կանգնաւ չափեն , այլև ՚ի վաճառելն իւրս , մինչև զհոգն՝ ոչ ասի , փնկ որևիցէ վաճառել . և դժուարին է յոյժ ըմբռնել զխաբէութիւն նց : Վայ եթէ ոք յօտարաշխարհի վաճառականաց ՚ի ձեռն չունիցի միջնորդ , մի թէլլալ հաւատարիմ . որչափ և արթուն իցէ , անտարակոյս դաւաճանի ՚ի նցէ : Այլ ըստ ասելոյ Սալմոնի՝ գործ մեծ է գտանել անդ միջնորդ հաւատարիմ որ ոչ միաբանեսցի ընդ վաճառողին ՚ի դաւել զօտարականն . և յորժամ ՚ի յայտ գայ խաբէութիւն՝ ամենեքին չքմեղս ցուցեալ զանձինս , ծանրութբ իմն ասեն , յայս նուագ չեղաք բարւոք մտադիր , և յայնմանէ եղև այդ վրիպակ . յայլ անգամ արասցուք ոպ արժան է :

Գրեթէ զամ ինչ կշռով վաճառեն մինչև և զձու , և և զըմպելիս և զկենդանիս հաւս . յորում ոչ սակաւ դաւաճանութիւնս գործեն . զի պատմեն՝ թէ ՚ի վաճառել նց զընտանի հաւս կմ զաղաւնի , զսագ և զբադ՝ բանի խճողեն ՚ի բերան և ՚ի կոկորդս նց խիճս , զի առաւել ծանր կշռեսցեն : Երիտասարդ մի մեծազգի , որ Թուէր լեալ ազգաւ անգղիացի , պատմէ թէ անդ ՚ի չին դնոյ էառ իւրն խոզ բզմ ՚ի պէտս արանց նաւու իւրոյ . և իբրև ածին խոզք ՚ի նաւ անդր , վաղվաղակի սկսան մի առ մի սատակիլ . և ՚ի սակաւ աւուրս առհասարակ սատակեցան : Զայս համարի նա լեալ ՚ի դաւաճանութէ վաճառողացն . որք գուցէ զկնի վաճառելոյ ետուն նց վնասակար ինչ կերակուր : Եւ զկարծիս իւր հաստատէ այնու , զի ետես աչօք , որ յընկենուլ նաւավարաց իւրոց զմեռեալ խոզս ՚ի ծովն . նքա յորոց գնեալ էր , հանէին ՚ի ծովէ և առեալ ՚ի նաւակս տանէին առ ՚ի վերստին վաճառել այլոց իբր զենեալ ՚ի սպանդանոցի , ոպ համարի նա լինել : Այն զի ասէ լօքեր թէ այնչափ է ագահութն նց և շահասիրութն , զի յօժարութբ առնուն զսատակեալ խոզ մի փոխ կենդանւոյ , եթէ սատակեալն իցէ փոքր մի մեծ և պարարտ քան զկենդանին :

Սակս այսր անհագ շահասիրութեն չինաց ՚ի ներքին առեւտուրս խուրեանց բարձին զոսկի եւ զարծաթի դրամս . եւ փոխան նոցա սահմանեցին պղնձիս . վասն զի օր ըստ օրէ այնչափ բազմացան սուտ եւ պակասաւոր դրամք, մինչեւ ուր ուրեմն գտանել դրամս ճշմարիտս եւ ամբողջս : Արդ յաղագս դիպուածոյ ինչ, զոր ոչ նշանակեն պատմագիրք, նուազեցաւ եւ պղինձն, եւ սկսան այնուհետեւ զգօլըն անուանեալ խեցի ծավալին 'ի գործածել փոխանակ դրամոյ : Այլ զկնի սակաւուց արգելաւ, եւ ել հրաման յինքնակալէն, զի պղնձի անօթք, որք գտանեին 'ի բովանդակ տեղի անդ, տարցեն յարքունիս 'ի հատանել անտի դրամս . բայց եւ այն անբաւական գոլով, ձեռն արկին եւ 'ի պղնձի կուռս . յորմէ ասի թէ 400 մեհեանք քանդեցան : Զայս ամենայն 'ի պլիչլինկայ առեալ գրեցաք . այլ ճշմարտութեան նորա յառաջին պատմիչն է ապաստան :

Այժմեան դրամք չինացւոց են կտորակք պղնձոյ բոլորաձեւ, թանձր եւ անհարթ . չունին կնիք կամ պատկեր դրոշմեալ 'ի վերայ . այլ 'ի կողմն մի են չորք տառք, որք զանուն ինքնակալին նշանակեն . եւ 'ի միւս կողմն երկու . եւ 'ի միջին ունի ծակ քառակուսի, ընդ որ անցուցանեն զնոսա 'ի թել : Իսկ արծաթն, զոր վարեն յառեւտուրս չունի ոչ ձեւ դրամոյ . այլ է ձոյլ անձեւ, զոր կշռով տան միմեանց . յայն սակս ամենքն կրեն կշռորդս հանապազ . եւ եթէ լիցի ինչ կասկած վասն անմաքրութեան արծաթոյն, հատանեն անտի մասն ինչ . եւ այնու ճանաչեն թէ գոյ 'ի նմա խառնուրդ ինչ թէ ոչ : Այլ այնչափ հմուտ են յայսմ, զի եւ լոկ շօշափմամբ եւ տեսութեամբ, առանց հատանելոյ կարեն ճանաչել, մանաւանդ եթէ արծաթն ձուլեալ իցէ ըստ սովորական եղանակի նոցա : Իսկ ոսկին, որպէս ասէ հայրն քոնթի եւ այլք՝ ոչ 'ի գործ ածի անդ իբր դրամ . այլ գնի եւ վաճառի զօրէն այլոց վաճառաց, զոր յաճախ գնեն եւրոպացիք, բայց 'ի ծածուկ յոյժ, զի որպէս ասացաք՝ խստիւ արգելեալ է հանել անտի ոսկի արտաքս . սակայն նոքին իսկ մանտարինք 'ի ծածուկ վաճառեն . յորմէ բազումս շահին եւրոպացիք . զի անդ գին ոսկւոյ առ համեմատութեամբ արծաթոյն է իբր միոյ առ տասն . իսկ յեւրոպիա իբր միոյ առ հնգետասան . եւ այժմ առաւել . որով 'ի հարիւրոյ շահին 50:

Է. Բարք եւ Սովորութիւնք Չինաց :

Չինացիք իբր 'ի բազումս ըստ գրեց մարմնոյ կարճ են հաստակաւ, կամ լաւ եւս ասել միջահասակ . պլին_ դակազմ ուժեղակ լայնադէմք փոքրակն և սեաւ , կարճունչք տափակաքիթ , որ գեղեցիկ համարեալ է առ նս̃ · գոյն երեսաց նց̃ սպիտակ ոպ̃ մերս · բայց հ̃րկ ժղվ̃դն , մանաւանդ որք 'ի հիւսիսային և 'ի հարաւային կողմանս բնակին՝ թխագոյն են , զի զմեծ մասն կենաց 'ի բացի անցուցանեն 'ի տաժանակիր աշխատութիւնս : Մօրուք նց̃ սովորաբար երկայն են այլ անօսր : Սափրեն զհերս գլխոյ փունջ մի եւեթ թողեալ 'ի յետս կուսէ · զայս սովորութիւն թաթարք մուծին 'ի նս̃ առ 'ի նմանիլ ինքեանց · զի յռ̃ջ բնիկ չինացիք ոչ սափրէին զվարսս գլխոյ : Գրագէտք և վրժպ̃ք նց̃ թոյլ տան եղնգանց մատանցն աճել որչափ բերէ բնութիւն · որ զզուելի իմն է առ մեզ · այլ նք̃ զայն պարծանս համարին · զի նովաւ ցուցանեն թէ չեն պարապեալ 'ի ծառայական և 'ի մեքենական գործս , այլ միայն 'ի ներվարժմունս իմաստութեան : Աշխոյժ են և նրբամիտ , սթափք և աչալուրջք · մեծագործ և ծանրախորհուրդ , և դանդաղ յորոշումն և 'ի գործադրութիւն իրաց · և կարի մտադիր 'ի պատշաճողութիւնս : Բզ̃մք գովեն զնախանձ նց̃ , զոր ունին 'ի պահպանութիւն արդարութ̃ե և բարւոյ վարուց · այլ ը̃ այլոց ասելոյ՝ այն նախանձ զոր երևեցուցանեն չէ այնչափ հիմնեալ 'ի ներքին ճշ̃ սիրոյ իրաւասիրութեան և բարութեան նց̃ , ք̃ թէ 'ի հնացեալ իմն սովորութ̃ե , զոր ունին 'ի զսպել զամ̃ արտաքին նշանս ախտից և կրից · և մանաւանդ յինքնահաւան ամբարտաւանութ̃ե : Քանզի ոպ̃ հաստատեն զամ̃ մատենագիրք , որք խօսին զնց̃է , մեծամիտ են և ինքնահաճ ունելով զազգ իւրեանց 'ի համօրէն ազանց միջի իբր մի միայն ժողովուրդ ընտիր և իմաստուն՝ բնակեալ 'ի միջակէտն աշխ̃ի 'ի լինել գերագոյն օրէնսուսոյց և տնօրէն համայն աշխ̃ի : Իսկ զայլ ամ̃ ազինս համարէին վայրենիս , բիրտս և իբր մարդակերպ անասունս ցանկեալ և ցրուեալ յեզերս 'ի խորշս երկրի իբր դիրտս և յաւելուածս մարդկեղէն բնութ̃ե · յայս սակս և օրէնս ունէին չառնել բնաւ հաղորդութիւն ը̃ օտար ազգաց · անվայել համարելով անձանց ը̃ այնպիսի յետին սեռլքոյս ունել ինչ կցորդութ̃ի : Վս̃ այնորիկ յորժամ զառաջինն տեսին զեւրոպացիս զգօնս քաջավարժս յամ̃ գիտութիւնս և յարուեստս , յապուշ կրթեցան , ուստի է որպ̃ ասէին ը̃մ զարմացմամբ , այսչափ զգօնութ̃ի և իմաստութ̃ի , որոց չէ երբեք ընթերցեալ զգիրս մեր և ոչ զաշխ̃ մեր տեսեալ , գոլով այսչափ հեռի 'ի մէնջ : Եւ թէպէտ յետ այնորիկ առաջան վարկուին ինչ զեւրոպացւոց․ բայց միշտ ստորին ունելով զնս՟ ք՟ զինքեանս․ իսկ վս՟ այլոց ասիական ազանց ոչ փոխեցին զկարծիս իւրեանց․ ուստի իբր առակ է առ նս՟, թէ հոլանտացիք, որովք իմանան զեւրոպացիս՝ միականի են․ իսկ այլ ամ՟ ազգք կոյր․ ինքեանք միայն երկու աչս ունին :

Խորամանկ են յոյժ և նենգամիտ և ծայրագոյն կեղծաւորք․ որք և այնչափ քաջավարժ են ՚ի պատրուճակել առ արտաքս զկրից յարձակմունս, և անկիրս և բարեկեցիկս ձևանալ առ երեսս, զի թէ ոք չիցէ երկար փորձիւ և հմտութ՟ տեղեկացել՟ զներքին բարուց նց՟, հաստատութ՟ դնէ ՚ի միտ, թէ ամ՟ գործողութք նց՟ և գնացք անկեղծ են և կանոնաւորել՟ առաքինութ՟ : Վս՟ զի կենակցութի նց՟ և քղքավարութի քաղցր է, ախորժական և վայելուչ, այլ լի մօրդելոյզ շողոմութ՟ : Իսկ ՚ի ներքուստ այր իւրաքանչիւր միշտ հետամուտ է և ուշադիր ՚ի զննել զյօժարութի և զքերութի բնութե ընկերին, և զվախճան նր՟ ՚ի գործս իւր, զի ըս՟ այնմ կեղծաւորեալ, որսասցի զնա : Յորժմ՟ ըդ՟իմակս ինչ կրեն յումեքէ, առ ժամն ծածկեն առ արտաքս զամ՟ կիրս բարկութե, խաղաղ և անվրդով երևեցուցել՟ զանձինս․ և սպասեն դիպօղ ժամու․ յայնժամ ապա յեղակարծումն թափեն զծածկել՟ թոյն իւրեանց ըս՟ օրինակի ոխակալ ուղտուց : Ագահ են յոյժ և անհնարին շահախնդիր․ վճ՟ և աշխատաւորք և ժրաջանք ամ՟քն առհ՟րկ․ չիք առ նս՟ տեսանել դատարկապորտս կմ՟ անգործս : Աք՟ զամ՟ փոյթ իւրեանց ունին ՚ի նիւթական բազմաշահ արուեստս․ իսկ տեսական և ազատական արուեստք՝ իբ՟ տաղաչափութի, ճարտասանութի, երաժշտութի և այլ այսպիսի արուեստք և մակացութիք իբր անօգուտ՝ առ ոչինչ համարել՟ են առ նս՟, թէ ոչ առ ամ՟սին, գէթ հասարակաբար․ որք և միշտ ունին ՚ի բերանս իւրեանց զայս բան՝ Առ ինչ օգուտ է․ զի ամ՟ գործոց միւնդ՟ թէ և բովանդակ կենաց նց՟ առաջին և վերջին կանոն է լոկ շահասիրութի : Յայն սակս իբր անհնարին թուի չլինել ՚ի նս՟ ստախօսութե և խաբէութե․ որով ճշմարտի և նախայիշատակել՟ բանն յօքերայ անգղիացւոյ, զոր գրէ վս՟ դաւաճանութեց վճռ՟կանացն չինաց :

Կանայք չինու երբ ՚ի բզ՟մս են փոքրակն, կարճունիչ և սևաչեր․ և ոտք նց՟ միւնդ՟ մեծամեծ տիկնաց տարապայման փոքր․ վս՟ զի անդէն ՚ի ծնանիլ նց՟ պնդեն զոտս ուժգին, և ըս՟ ասելոյ ոմանց՝ ապուցանեն նց՟

երկաթի կօշիկս · զի մի՛ ը͞ս ածել հասանիցին և ոտքն͞ց ծծացին : Վ͞ս ոտք երեսնամեան կնոջ չէ՛ ինչ մեծ ք͞ն զոտս եւթնամեան տղայոյ · իսկ որունք ն͞ց ը͞ն հիւլին՝ սոոճար են և բոլոր մարմինն յոյր և փափկասուն · ոչ կարելով ն͞ց համարձակ շրջել և գործել · որով աւելորդ հիւթք մարմնոյ և թանձրամասունն ն͞ց մաչեւցին, որ ը͞ս օրէ յօրանան : Սկզբնապատճառ այսր տարադէպ սովորութեան ն͞ց, ը͞ս ասելոյ ոմանց՝ է լոկ գեղեցկութեն · զի ոտք փոքր գերադոյն գեղեցկութի համարել է առ կանայս չինաց · ո͞մ և պարարտն լինել և մսալիր, և փոքրակն և կարճունչ և մեծականջ : Իսկ ը͞ս այլոց՝ է տարապայման կասկած և նախանձաւորութե արանց, զոր կրեն զկանանց իւրեանց · յայն սակս՝ առեն զի մի կարասցեն ն͞ց համարձակ շրջել և երթալ ինքնին ուր և կամեսցին, զայս հնարս գտին · որ յետոյ էանց 'ի սովորութի, և 'ի գեղեցկութի :

Տիկնայք մեծատանց գրեթէ ոչ երբէք ելանեն 'ի հրապարակս · իսկ թէ երբէք ելանեն, ընկերակցութ͞բ բազմաց չքնաղ համեստութ͞բ · միշտ դադեն ունելով զձեռս 'ի լայն և յերկայն թեզանիս · հանդարտ և նազելի 'ի գնացս · այլ սովորաբար դահաւորակօք շրջին · զի ոչ զօրեն երկար յոտն կալ կամ հեռի շրջել սակս փոքրկութ ոտից · և յեղանել արտաքս զգլուխ և զաչս միշտ 'ի խոնարհ ունին : Շքեղս և մեծագինս զգենուն · մոլեալ են 'ի պճնազարդութի · զի յոլով առաւօտու ժամս ծախեն 'ի լուանալ և 'ի մաքրել զանձինս, և 'ի պճնապաճոյճ լինել : Սաստիկ զգուշութ͞բ ամփափակեալ պահին յառանձին բնակարանս, և ոչ երբէք ելանեն առն մարդոյ մինչդ մակամարդք և աղջկունք · զի և չինացիք առ որս օրէն է առնուլ բ͞զմ կանայս, ունին նամեհրամ խասգայն ը͞ս զօսմանցիս և ը͞ս զպարսիկս :

Զգեստ չինաց արանց և կանանց երկայն են ը͞ս սովորութե արեւելեայց, և լայնաթև · վերին կամ շըրջարեգոստ 'ի վ͞ր միւսեանց զգենուն մի ք͞ն զմի կարճ · 'ի ձմերայնի առնուն զանձամբ և մուշտակ երկայն ոչխարենի կամ սամուրենի, և կամ 'ի մորթոց այլոց վայրի էրէոց · թեզանիք մուշտակաց երկայն են և լայն, յորս պահեն զձեռս հնարն՝ եթէ այր և եթէ կին : Գլխարկք ն͞ց պէսպէս են ը͞ս պէսպիսութե եղանակաց · զի ամառայինն է սրածայր քիւլահաձև այլ կարճ, և սորին շրթունքն լայն նման ը͞ս խմբք գլխարկաց եւրոպացւոց, ո͞ր շափկայի · և է հիւսեալ 'ի նուրբ աղէնս եղեգանց ը͞ս օրինակի փախաթի · և ներքսակողմն նո՟ պատեալ է մետաքսեայ կերպասիւ . իսկ ՚ի գագաթան ունի կարմիր մետաքսեայ փունջ մեծ , որ յա՟մ կողմանց իջեալ , հասանէ մինչեւ ՚ի շրթունս գլխարկին . ւ՟յ յորժամ շրջին , փունջն այն ծածանի յա՟մ կողմանց ՚ի հովահարութէ եւ ՚ի շարժմանէ գըլխոյն . որ վայելուչ համարեալ է առ նո՟ :

Մանտարինք յորժամ գտանին ՚ի հանդիսի իմիք , փոխ այնր փնջի դնեն ՚ի ծայր գլխարկի իւրեանց ակն ինչ յեռեալ յոսկի . զո՟ անդամանդ հս՟րկ , կա՟մ ակատ , կա՟մ գոճաղիլ՝ որ է քէհրիպար . եւ կա՟մ ակն վանի . ոմանք եւս փոխ ական դնեն պնտասկաձեւ կոճակ մեծ շինեալ յոսկւ. թեալ գլխարկէ : Իսկ ձմերայնին գլխարկք նո՟ են ՚ի թանձր եւ թաւ խատիֆէէ սեաւ կամ մանուշակագոյն . ստորին կողմն պատեալ սամոյրիւ կա՟մ աղուեսու :. ՚Ի պարանոցս ՚ի ձմերայնի ունին ուսնոց լայն իբր չորս մատնաչափ ՚ի խատիֆէէ կա՟մ ՚ի սամոյրենւոյ եւ կա՟մ յայլ մորթոյ : ՚Ի մէջս կրեն գօտի մետաքսեայ երկայն . զերկոսին ծայրս նո՟ թողուն ՚ի կախ յառաջոյ , որք եւ հասանեն մինչեւ ՚ի ծունկս : Կօշիկք նո՟ են մետաքսեայ ՚ի ներքոյ պատեալ բամբակի պաստառաւ . բայց ունին եւ մաշկեղէն կօշիկս , զոր ագանին յորժամ երթան ուրեք ՚ի ձիո՟վ : Մանտարինք կրեն ՚ի վե՟ր հանդերձից ասղնագործ զարդ ինչ ոսկի կա՟մ արծաթի թելիւ գործեալ . որ է նշան իշխանութե կա՟մ պաշտաման նո՟ : Նշանք գաւառապացն են պէսպէս թռչունք ը՟ զինուորութե պաշտաման իւրեանց . իսկ սպարապետաց եւ զօրավարաց վիշապ , առիւծ , եւ ինձ :

Չինացիք ը՟ հանրապէս խօսելով՝ շատակեր են , եւ կերակուր նո՟ խոշոր : Ուտեն զա՟մ ինչ անխտիր . զի բաց ՚ի սովորական չորքոտանեաց եւ թռչնոց եւ ձըկանց , որք են կերակուր այլոց ազգացն եւ հրահանգեալ ժողովրդոց , ո՟ք ուտեն եւ զձի զկատու ըզշուն զպտորան եւ զօձ եւ զայլ զա՟մ ինչ : Բայց հս՟րկ եւ սովորական կերակուր նո՟ է որիզ ոլոռն եւ այլ արմտիք եւ բանջարք պարտիզաց : Կրկին օրինակաւ բազմին ՚ի սեղան . բնիկ չինացիք ուտեն ՚ի վե՟ր բարձր սեղանոյ ը՟ սովորութէ եւրոպացւոց բազմեալ յաթոռս . իսկ որք ՚ի թաթարաց իջանեն , նք ը՟ սովորութե պարսից ծնկնածալ նստին եւ ուտեն : Չունին ՚ի սեղանի ոչ պաստառ սփռեալ . ոչ թաշկինակ սրբել զձեռս . ոչ սկաւառակ , ոչ դրգալ , ոչ պտ՟ռաքաղ . այլ փոխ այսր ա՟մի ՚ի կեր առնուն փոքրիկ գաւազանս երամայրս՝ փղոսկրեայս , կա՟մ յազնիւ փայտէ արծաթազարդս ․ և նովաւ առնուն զմիս և զայլ թանձր կերակուրս ․ իսկ զորիզ , զոր սովորաբար ցամաք եփեն իբրև զփիլաւ ,, և զայլ այսպիսի կերակուրս սկտեղք տանին մօտ 'ի բերան , և նովին գաւազանաւ ձգեն 'ի բերան ։ Չեն բնաւ մաքրուն և քղքականութն 'ի սեղանս նց ։ Տանուտէր տանն կմ այլ ոք որ բաշխէ 'ի սեղանն զկերակուր ․ ձեռամբ կալեալ մանրէ զմիս խարշեալ կմ խորովեալ ․ և առանց սրբելոյ զձեռս մանրէ և զայլ կերակուրս առաջի այլոց բազմականաց ․ և նովին աղտեղի ձեռօք բաշխէ նց ․ որ անվայել իմն է գովեալ քղքականութե չինացւոց ․ զոր առ մեզ և ոչ գռեհիկք առնեն ։ 'Ի կոչունս մեծամեծաց ․ ուրոյն ուրոյն բազմին ․ և իւրաքանչիւր բազմական ունի սեղան մի առաջի առանձին , եթէ բազմութե հրաւիրելոց ոչ առխալեսցէ երկուց բազմիլ առ նովին սեղանով , այլ պատահէ երբեմն ․ բայց կերակուր նոյն է միօրինակ ․ և յայնժամ 'ի կիր առնուն և սկաւառակս յախճապակեայս այլև արծաթիս ։ Ըմպելի նց է թէյ ․ և տեսակ մի պօզայի , զոր հանեն յորիզոյ կմ յայլոց սերմանց ․ և այլ իմն ըմպելի դեղին և կարմրագոյն ոգելից և զօրեղ իբրև զօղի , զոր Սամշուէ կոչեն ․ որ և է առ նս տեսակ գինւոյ ․ զի թուի թէ գինի ոչ ունին , կմ սակաւ ։ Մեծամեծք լոկ ջուր ոչ ըմպեն ․ վս զի ջուրք Ծինչինաց ըստ մեծի մասին ծանր են և դժուարամարս ․ վսյ խառնեն 'ի նմ թէյ , սամշուէ ։ և կամ զլոկ ջուրն նախ եռացուցանեն և այնպէս ըմպեն ․ գուցէ առաւել սովորութ առ չինս միշտ ջերմ ըմպել ․ և ճշգրտն՝ զկերակուր իւրեանց ցուրտ ուտել ։ 'Ի ճաշս և 'ի կոչունս անբաւ խաղանս և սովորութս ունին ․ զի նախ քան զբազմիլ 'ի սեղան , տանուտէրն առեալ բաժակ ոսկի կմ արծաթի 'ի ձեռսն լի նախագրեալ ոգելից ըմպելեաւ 'ի վեր ամբառնայ և ողջունէ զմի ոք 'ի հրաւիրելոց որ նախապատիւ է 'ի նս ․ ապա ելեալ արտաքս և դարձուցեալ զերեսս ընդ հարաւ , ընծայէ զայն առաջին բաժակ աներևոյթ ոգւոց , զորս դնեն պաշտպանս տանն այնմիկ , և հեղու յերկիր ։ Յետ այնորիկ բազմին 'ի սեղան , այլ ոչ ոք մերձենայ 'ի կերակուր , եթէ ոչ զկնի երկար ողջունելոյ և յարգելոյ զմիմեանս պէսպէս անհեթեթ բեկբեկմամբ և կորացմամբ և երկրպագութ ։ Այլ սաճարապետ սեղանոյն տայ նշան պատրաստ լինել ամէն առ 'ի միանգամայն սկսանիլ ճաշել ։ Նախ՝ առնուն ամէնքն զփոքրիկ բաժակ վերոգրեալ սամշուէ ըմպել․

պելւոյ, և երկոքումբք ձեռօք կալեալ ամբառնան 'ի վեր ցբարձրութն գլխոյ, և անմռունչ լոկ արտաքին ակնարկութ՟ հրաւիրեն զմիմեանս հարուստ մի ժամ նախ ըմպել: Ապա ուշ եդեալ մնան, զի տաճարապետն տացէ նշան. յայնժամ ամենքն առնուն 'ի ձեռս զերկու փոքրիկ գաւազանս, որք են փոխ պատառաքաղ գործեաց. ամբառնան 'ի վեր, և առնեն նոքօք պէսպէս շարժմունս՝ գրեթէ որպ՟ առնեն զինուորք եւրոպիոյ 'ի զինուորական կրթութիւնս. ապա մխեալ զայնս 'ի սկաւառակն սկսանին ուտել ոչ կարի ձեպով զի մի յառաջեսցեն մի քան զմի. և ոչ յոյժ յամր, զի մի տացեն միմեանց սպասել. քզի երկոքին ևս անարգութիւն համարեալ է առ նս:

Իբրև ուտեն զմի կերակուրն՝ դնեն զգաւազանս 'ի վր սեղանոյ 'ի նոյն տեղի և 'ի նոյն դիրս, որպ՟ եդան 'ի սկզբանն. և մատուցանի ըմպելի. զոր ըմպեն վերոյասացեալ օրինակաւ: Յետոյ մատուցանի երկրորդ կերակուրն, և յայնժամ վերստին սկսանին նոյն շարժմունք. զոր առնեն և յայլ կերակուրս, և յտմ 'նրհագս ըմպելոյ մինչև ցաւարտ սեղանոյն. որ սովորաբար երկարի երիս կամ չորս ժամս. և ը՟ բոլոր ժմկն սեղանոյն լռութ՟ նստին. և 'ի տալ տաճարապետին զվերջին նշան, ելանեն 'ի սեղանոյ խոնջք և վաստակք. և փոքր մի ձեռն առեալ 'ի պարտեզ կմ 'ի բակ տանն՝ խօսակցին ը՟ միմեանս. ապա անդրէն դառնան 'ի սեղան ճաշակել քաղցրաւենիս և պտուղս և ըմպել զթէյ: Յայնժամ ածեն 'ի ներքս երգեցիկս և նուագածուս, որք երգեն և նուագեն, և առնեն անդ պէսպէս խաղս ձևացուցանելով զպատմութի չքնոյ նց, կմ ոմանց դիւցազանց. այլ թէ երգք նց, և թէ նուագարանք, որք են ծնծղայ, թմբուկ, և այլք մի տրտմաձայն սրնգի՝ են խառնաձայն իմն զօղանջմունք ծանր և անախորժ լսելեաց. և բանք խաղուց նց՝ որք սովորաբար են ոտանաւոր, անհեթեթ ամենևին և անարուեստ. զոր եւրոպացիք որք միանգամ լուան բերանալիր գարշին ոչ միայն որք իմաստունք, այլև բիրտ նաւավարք նց: Այս և այլ սոցին նման խորանք և սովորութիք իբր հայրենատուր աւանդութիք և օրէնք հաստատեալ և արմատացեալ են 'ի նս, զոր ոչ ոք իշխէ երբէք լուծանել. ոչ միայն մեծամեծք, այլև յետին արհեստաւորք և ռամիկք. զի և նք 'ի ճաշս իւրեանց, և 'ի կենակցութե ը՟ միմեանս ունին պէսպէս սովորութիս. թէպէտ ոչ այնչափ, որչափ մեծամեծքն:

Նոյն

Նոյնպէս յողջունելն զմիմեանս, կամ յերթալն յայցելութիւն միմեանց և յայլ ևս կենակցութիւնս անբաւ սովորութիւնս և գործս քաղաքավարութեան ունին։ Սովորական և հանրական ողջոյն նոցա է խաչաձև դնել զձեռս ՚ի կուրծս. և փոքր մի խոնարհել զգլուխ. իսկ յողջունելն զմեծամեծս ձեռնամած խոնարհին մինչ ՚ի գետին. և յերևելն ՚ի տուն զոք ՚ի մեծամեծաց ծունր կրկնեն միով ծնգաւն։ Յորժամ բարեկամք հանդիպին միմեանց ՚ի փողոցս կամ ՚ի հրապարակս, առաւել քան զքառորդ մի ժամու հարցաբանեն զողջունէ միմեանց նոյնպէս և ՚ի հրաժարիլ ՚ի միմեանց ոչ դոյզն ժամ ծախեն ՚ի հրաւիրել զմիմեանս յառաջել։ Ըստ նմին օրինակի յորժամ երթան ՚ի տուն յողջոյն միմեանց, անբաւ կանոնս և սովորութիւնս ունին և գործս յարգութեան, բազում անգամ ծախեն իբր կէս ժամ և աւելի մինչև ՚ի գրանէ մտցեն ՚ի տուն և բազմեսցին. զնոյն առնեն և ՚ի մեկնիլն ՚ի տանէ։ Խօսակցութիւն նոցա և կենակցութիւն ծանր են՝ համեստ քաղցր և պատշաճաւոր միմեանց. զոր ամենքն միաբանս պահեն. զի ՚ի բարոյական սկզբանց նոցա մին է այս, լինել քաղցր, համեստ, մարդասէր. և յամենայն ցուցանել հեզութիւն, զսպելով զյարձակումն կրից. զի այսու ասեն պահի խաղաղութիւն ՚ի մարդկային հասարակութեան։

Այսչափ ինչ վասն բարուց և սովորութեանց չինաց շատ լիցի. արդ տեսցուք ինչ և վասն քաղաքաց, տանց, և արքունի ճենհաց նոցա։ Քաղաքք չինուեն բաժանեալ յերիս կարգս ընտրեալք ՚ի միմեանց մեծութեամբ և նախապատուութեամբ իշխանութեան. և ամենայն բարք և սովորութիւնք նոցա ըստ հանրապետս ունին զմի օրինակ իմն տարազ, նոյնպէս և քաղաքք նոցա գրեթէ առհասարակ են միաձև. զի են քառակուսի որչափ ինչ ներեն դիրք տեղեաց. և բաժանեալ ՚ի չորս մասունս ՚ի ձեռն երկուց գլխաւոր փողոցաց, որք խաչաձև հատանեն զմիմեանս. և ձգին ուղղագիծ մինչև ցչորեսին գլխաւոր դրունս նոցա. զի ամենայն երևելի քաղաք չորս գլխաւոր դրունս ունի, որք հային ՚ի չորս կողմն աշխարհի. այսինքն յարևելս յարևմուտս ՚ի հարաւ և ՚ի հիւսիս. թող զայլ փոքր դրունս։ Իսկ այն չորք մասունք քաղաքաց դարձեալ բաժանին յայլ փոքրագոյնս, որք պարագրեն տասն տասն տունս. և ՚ի վերայ իւրաքանչիւր տասնեակ տանց կարգեալ կայ ոստիկան կամ վերակացու տեղեկանալ զամենայն անցից, որք անցանեն ընդդէմ օրինաց ՚ի փոքրիկ թաղի անդ իւրում. և ազդ առնել մանդարինի կամ քաղաքապետին։ Ամենայն տուն այնց թաղից պարտաւորին պահապան լինել և օգնել միմեանց. մինչ յորժամ դէպ լինի անդ վնաս ինչ, ըստ գիշերային գողութիւն, հրդեհ, մարդասպանութիւն, բոլոր Թաղն պարտաւոր է 'ի հատուցումն վնասուն: Նոյնպէս իւրաքանչիւր տանուտէր պարտական է համարս տալ վասն իւր անկարգութեան, որք գործին 'ի տան իւրում յորդիս կամ 'ի ծառայս: Բայց յերկուց նախադրելոց գլխաւոր փողոցաց, և այլ փողոցք քաղաքաց նորա սովորաբար ուղիղ են լայն և սալայատակ. սակայն և այնպէս ոչ սակաւ նեղութիւն կրեն, որք հետի շրջին 'ի նմա, վասն խուռն բազմութեան երթևեկաց, մանաւանդ ձիաւորաց և գահաւորակաց. քանզի չինացիք մանաւանդ մեծամեծք ձիովք և գահաւորակօք շրջին, ունելով յառաջոյ և զկնի բազմութիւն ծառայից:

Տունք նորա առհասարակ՝ մեծամեծաց և ռամիկանաց են փայտակերտք, միայարկք, և քառակուսիք, և միաչափ բարձրութեամբ, զի մի 'ի ներքսակողմն միմեանց հայեսցին: Չունին լուսամուտ 'ի վերայ փողոցի. այլ են շրջապատեալ որմով. և 'ի շրջապատի անդ են բազմաձև բակք և պարտէզք: Տունք մեծատանց են իբր պալատք մեծամեծք բաժանեալք 'ի բազմապատիկ սենեակս և սրահս. որք ունին և առանձին բնակարան վասն կանանց. բայց առհասարակ միայարկ են. իսկ պալատք մանդարինաց այնպէս բազմաձև են, որ թուին մի մի փոքրիկ դեօղք: Գլխաւոր զարդք տանց նորա են արկեղք, պահարանք նկարէնք և գեղափայլք. պէսպէս պատկերք մարդկան և չորքոտանեաց և թռչնոց. անօթք յախճապակեայք. և բիւրք փերթք մետաքսեայ կերպասուց ապխտակք կախեալ զորմովք, յորս գեղագրեալ դրեալ կան պէսպէս բարոյական խրատք: Մահիճք նորա շքեղ են պէսպէս քանդակօք յօրինեալ, և շրջապատեալ վարագուրաւ կամ սրսկապանօք, որք են կրկին, ամարայինն և ձմերայինն: Ամարայինքն են մետաքսեայ կերպասք նրբաթելք և ծաղկայօրինաճորակ. ոմանց է ընդուս, այն է՝ պխուրիւնձիւկ մեծագին և թափանցիկ: Իսկ ձմերայինքն 'ի թանձր ատլասէ, յորս նկարեալ կան վիշապք, թռչունք և այլ պէսպէս ուրուականն նմանութիւնք: Վերմակք նորա են եօրղանք, և անկողինք նման են մերոյն. [illegible] ևեթ [illegible], զի անկողինք նորա թանձր են յոյժ քան զմերս. և փխն բրդոյ բամպակս լնուն 'ի նմա:

Առ ամենայն երևելի քաղաքօք գտանին մի կամ երկու աշտարակք մեծահասակք ինն յարկեան դրուագեալք յախճապակեաւ. յորոց զմի՝ որ գերագոյն է քան զայլս՝ ունիմք ստորագրել յիւրում տեղւոջ: Նոյնպէս գրեթէ յամ երևելի քղքս կանգնեալ կան կամարք յաղթութեան 'ի պատիւ թգրաց և զօրապետաց ոմանց, որք երևելի եղեն քաջութբ, կմ՝ հնարեցին ինչ պիտանացու 'ի կեանս:

Արքունի ճնպհք շինեալ են յամ տեղիս դիւրեալ և հորդեալ են առ 'ի դիւրութեան ներքին վաճռկանութեանց. զի ը նախնի հռովմայեցւոց փոյթ մեծ ունէին 'ի վր ճնպհաց: 'Ի ճախճին և 'ի մօրուտ տեղիս, ուր սակս ցածութեան հաւաքեալ լճանան ջուրք, կուտեն հող և աւազ, և գործեն ճնպհ արահետ բարձր և անվտանգ 'ի ջուրց հեղեղէ: Իսկ ուր ըառաջ լինին լերինք և բլուրք, և խափանեն զանցս ճնպհաց, հարթեն և դիւրեն. իսկ ուր չէք հնար հարթելոյ, տաշեն ըղլեռան առ կողմս, և բանան ճնպհ. և 'ի տեղիս տեղիս առ շարունակելոյ զճնպհն 'ի մէջ երկուց լերանց կառուցեալ կան կամուրջք ահարկուք, որպիսի է հռչակաւոր կամուրջն 'ի չէնսինէնդլի, զոր անդ ունիմք ստորագրել: Նոյնպէս և 'ի վր ջրմղաց և գետոց ը ամ տեղիս են անհամար կամուրջք, առ 'ի տալ անցս ճնպհորդաց 'ի միոյ կողմանէ 'ի միւսն: Հսրկ ճնպհք են շինեալ սովորաբար են իբր ութսուն ոտնաչափ լայն. և հող երկրին աւազախառն, յայն սակս 'ի դադարել անձրևի՝ թէպէտ և յորդ տեղացեալ իցէ, վաղվաղակի ցամաքի, և ոչ լինի անդ տիղմ: 'Ի գաւառս ինչ առ ճնպհօք յաջմէ և յահեկէ են այլ ճնպհք կամ մայթք այն է՝ խալտըրըմ փոքր մի բարձր քն զբուն ճնպհն, շինեալ 'ի դիւրութեան այնոցիկ, որք հետի ճնպհորդեն. և առ նոքօք աստի և անտի տնկեալ կան կարգաւ ծառք մեծամեծք, որք հովանի առնեն անցաւորաց. և մէջ ը մէջ 'ի կէս փարսախէ 'ի կէս փարսախ կառուցեալ կան 'ի վր ճնպհի կամարք յաղթութեան բարձր իբր 30 ոտնաչափ, բաժանեալ յերիս դրունս կմ կամարս. յորոց վր դրեալ կան մեծամեծ տառիւք անուանք քղքաց, ուր հանեն այն ճանապարհք: Իսկ և առ ամ գլխաւոր ճնպհօք շինեալ կան փոքրիկ աշտարակք հողակերտք 'ի կէս փարսախէ 'ի կէս փարսախ հեռի 'ի միմեանց, յորոց վր կանգնեն արքունի դրօշս. և առ նոքօք են մի մի տուն 'ի բնակութեան զինուորաց կարգելոց 'ի պահպանութեան ճնպհաց: Վնկ ճնպհք շինեալ են ը ամ տեղիս անքոյթ են և ապահով 'ի գողոց և յաւազակաց. ուր սակս անհամար բազմութեան բնակչաց, երևի թէ հարկ էր գտանել և բազմութիւն գողոց և աւազակաց. զի

բա

բզմք 'ի նցէ 'ի յետին և 'ի դառն աղքատութենէն, և բզմ տառապանօք և ծանր աշխատութբ հազիւ հայթհայթեն զառօրէական դարման կենաց. սակայն և այնպէս ուր ուրեմն 'ի յայտ գայ տնգ գող կմ աւազակ. Են 'ի չինս և թղթաբեր սուրհանդակք կարգաւորեալք ը սուրհանդակաց եւրոպիոյ, և թէպէտ նք կացուցեալ են միայն 'ի պէտս արքունի իրաց, բայց և այլք կարող են յանձնել նց թուղթս կմ այլ իրս, տալով փոքր ինչ պարգևս կմ կաշառս իշխանին, որ կարգեալ կայ 'ի վր սուրհանդակաց. Չինացիք ըդ ցամաքային ճնպհորդութն իւրեանց առնեն ձիովք կմ ուղտուք, կմ ջորեօք, այլև գահաւորակօք, զոր տանին բազմութն մարդկան բարձեալ յուս իւրեանց. բզմք առնեն թէ նք և կառօք ճնպրհորդեն, այլ ոչ նշանակեն թէ որպիսի ինչ են կառք նց: Եւ 'ի բզմ տեղիս առ 'ի չգոյէ դրաստուց և ջրոյ, մարդիկ բարձեալ 'ի թիկունս զվաճառս, տանին քղքէ 'ի քղք գաւառ և դժնդակ աշխատանօք:

Ժ. Լեզու Չինաց:

Լեզու չինաց է առանձին իմն բարբառ օտար գըլխովին յայլ ամ լեզուաց. ը որս չունի ընաւ հաղորդութն ինչ կմ մերձաւորութն ոչ 'ի բառս, ոչ 'ի խօսս, և ոչ 'ի գիրս: Ըստ վկայելոյ հօրն Քոնթեայ 'ի լեզու նց գտանին միայն իբրու 330 բառք բնաւքն միավանկք, կմ գէթ այնպս թուէին յեղանակէ արտասանութն նց. զի այնպէս լերկ արտասանեն, որ մի միայն վանկ լսի: Այս սակաւ բառք չէին արդեօք բաւական 'ի յայտնել զամ որ ինչ կարևոր է 'ի մարդկային կեանս, եթէ ոչ էր նց գտեալ հնարս 'ի լնուլ զայն պակասութն. իսկ հնարքն են զնզն շեշտք և եղանակք 'ի հնչմունս բառից. զր սուր և բութ, լերկ և թաւ, սուղ և երկար, բարձր և ցած, կոկորդային և նուրբ, պարզ և եղանակաւոր են, որով բազմանան յոյժ իմացուածք և նշանակութիք բառից: Վսյ 'ի խօսելն հարկ է առ իւրաքանչիւր բառ կմ նշանակութն տալ զիւր սեփական շեշտ և եղանակ հնչման. ապա թէ ո՛չ՝ առ դոյզն ինչ այլայլութն մեծամեծ վրիպակք գործին. և բան խօսողին լինի ամենևին անիմանալի: Վզի բառք նց գրեթէ բովանդակ են համանուն բազմանշանակ. որք այլևայլութբ հնչմանց որոշին 'ի միմեանց: Զոր օրինակ. ահա նոյն բառ է, որ նշանակէ տր և գազան, որք լոկ եղանակաւ հնչման որոշին. ուստի եթէ ոք անտեղեակ լիցէ հարազատ հնչման ն՟ր փոխ առելոյ իր՝ գաղղան ասասցէ. ը՟ս այսմ և յայլ ի՟մ բառս: Նուազին լեզու ն՟ց, թէ խօսիցին ո՟ղ արժանն է, լինի նոր ազգ իմն երաժշտութ՟ն. յայր ուսկս և դժուարին է, և երկար և բազմաշխատ վարժութ՟ն պէտք են անվրէպ հնչել զիւրաքանչիւր բառ ն՟ց, զոր գրով բացատրել չէ հնար. այլ հարկ է վարժութ՟բ և եթ ուսանիլ, յար և նման մերոց երաժշտական երգոց. զի թէ ոք չլիցէ ուսեալ ախրա՟նս զեղանակս ն՟ց, լոկ 'ի խաղս ապաստանել, ոչ երբէք կարասցէ երգել ո՟ղ արժանն է:

Բարբառ չինաց է կոկորդային և հագագային. բայց ոչ այնպէս թանձր ո՟ղ արաբացւոց: Չիք 'ի նո՟ց հնչումն ռայի կ՟մ րէի. որ թուի երեւելի պակասութ՟ն, զի այս հնչմունք հն՟րկ են յոյժ բարբառս արեւելեայց և արեւմտեայց. և մ՟ծ մասն բառից ն՟ց միավ՟նս յանկին: Ոճ և եղանակ խօսից ն՟ց նուրբ է, մեղմին և համառօտ. սակաւ բառիւք բ՟զմ ինչ իմացուցանեն: Նաեւ ձայնք ն՟ց ոչ են ը՟ս մերոց ձայնից յօրինեալ վայելուչ դասաւորութ՟բ պարբերութ՟ց բանից, զի երբ ինքնաբերաբար և հարկաւ 'ի միմեանց բղխեսցին. և զարդարեալ յաճախութ՟բ բառից. այլ են իբր հաւաքումն գերաղանց փոխաբերութ՟ց, ընտիր ընտիր նմանութ՟ց, և իմաստալից առակաց և վճռոց իւրեանց նախնի իմաստասիրաց անյօդ և անշարայար. որոց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն գեղեցիկ է և ազդու. այլ բոլոր հաւաքումն և դասաւորութ՟ն ն՟ց ցրիւ, անկարգ և անարուեստ: Գլխաւոր լեզու չինաց է մի ը՟ս ի՟մ ոճելս, զոր կոչեն մանտարինեան և թ՟գրական. զի 'ի նոյն լեզու խօսին յարքունիս և յա՟մ ատեանս. և որ ոք ոչ գիտիցէ զայն լեզու ոչ կարէ ելանել յիշխանութ՟ն ինչ կ՟մ 'ի պաշտօն: Այլ բաց յը՟հանուր լեզուէ անտի իւրաքանչիւր ն՟հնգ ունի իւր սեփական բարբառ գրեթէ անիմանալի յայլոց. զոր մարթ է նմանեցուցանել մերումս Տաբառ լեզուի, որ ը՟ս զնիշն Դուռաց զնիշն է և անիմանալի միմեանց: Զունեին այբուբենս փակեալս սահմանաւոր թուով տառից յօդեալս ը՟ս միմեանս շարամանութ՟բ և հեգմամբ 'ի նշանակել զա՟մ ազգ բառից, ը՟ս այլոց գրագէտ ազանց. և զարմանան ը՟ս ն՟ց թէ զիա՞րդ կար՟ն սակաւ տառիւք զա՟մ խօսս իւրեանց յօդել, և այնչափ սուղ մատեանս յօրինել: Այլ փոխ տառից 'ի սկզբան միապետութ՟ն իւրեանց 'ի գործ ածէին ձեւագրութիւս ը՟ս սովորութ՟ն եգիպտացւոց 'ի յայտնել զմիտս, որ էր առաւել նկարագրութ՟ն, ք՟ գրուած ։ զի նկարելով զպատկեր իրացն յայտ առնէին զայնոսիկ ։ Այլ յետոյ տեսեալ թէ անբաւական էր այն 'ի բացատրել զա՟մ իմաստս խորհրդոց ։ ք՟զի թէպէտ հնար էր զմարդ, զթռչուն, զլեառն, զանտառ նկարել, բայց ոչ նոյնպէս զխիղճս, զսէր, զատելութ՟ն, զձայն, զգիտութ՟ն և զայլ անհամար իրս, որք անմարմին են ։ Նմին իրի հարկեցան հնարել նշանագիրս 'ի նշանակել զա՟մ ազգ բառից՝ ուստի և զա՟մ ազգ իրաց, և ոչ այբուբենս ։ վ՟ն զի որովհետև մի և նոյն բառ ն՟ց բ՟զմ ինչ նշանակէ, և նշանակութ՟քն որոշին 'ի զն՟զն ելևէջութ՟է ձայնի ։ և զի զայն ելևէջութիւնս չէ հնար տառիւք բաղյօդել և բացատրել, հարկ էր նշանագիրս սահմանել առ իւրաքանչիւր նշանակութ՟ն իւր, և ոչ այբուբենս ։ Եւ վ՟նկ բազմացան յոյժ նշանագիրք ն՟ց, մինչև անցանել այժմ զութսուն հազարօք, յանհնարինն վիշտ և 'ի տաժանութ՟ն՝ ոչ միայն օտարաց, որք ուսանին զայն լեզու, այլ և նոցին իսկ չինացւոց ։ որք զա՟մ ժամս կենաց ծախեն յուսումն այնց նշանագրաց ։ սակայն և այնպ՟ մեծ ինչ է, թէ գրագէտ ոք յետ բ՟զմ աշխատութեց՝ հասանիցէ 'ի տեղեկութ՟ն տասն հազարաց ։ ուստի և դժուարին է ն՟ց գտանել պարապ ուսանելոյ զառաւել կարևորս և զպիտանիս ։

Ո՟պ տառք, նոյնպէս և եղանակ գրելոյ չինաց օտար է յայլոց ազգաց ։ զի ոչ ձգեն ն՟ք զտողն յաջ կուսէ յահեակ՝ ը՟ս եւրոպեցւոց և արաբացւոց ։ և ոչ յահեակ կուսէ յաջակողմն՝ ը՟ս մեզ և ը՟ս յունաց և այլոց ազգաց եւրոպիոյ ։ այլ 'ի վերուստ 'ի խոնարհ ը՟ս էջն 'ի վայր ։ Եւ սկզբնաւորութ՟ն մատենից ն՟ց ոչ է 'ի ձախակողմանէ՝ ը՟ս մեզ, այլ յաջմէ՝ ը՟ս արաբացւոց ։ ուստի անդ սկսանին ն՟ք ուր մեք աւարտեմք ։ Եւ գրիչ ն՟ց ոչ է եղէգնեայ կ՟մ 'ի փետրոյ, այլ նուրբ վրձին, այն է՝ ֆուչայ, նման այնմ, որով նկարիչք զպատկերս նկարեն ։ Եւ ո՟պ թուղթ՝ առ հարկի արարին ն՟ք սովորութ՟ն այնպիսի կակուղ գրչաւ գրել ։ վ՟ն զի թուղթ ն՟ց նուրբ է յոյժ և կակուղ և գրեթէ թափանցիկ, յորոյ վ՟ր դժուարին էր կարծր գրչաւ գրել ։ և վ՟ն նոյն պ՟տճառի 'ի մի կողմն եւեթ թղթոյն գրեն ։ Այ՟ թուղթ չինաց է 'ի կեղևոյ Բամբուն կոչեցե՟լ ծառոյ ։ Հանեն զառաջին կեղևն, և առնուն զե՟րկրդն, որ է փափկագոյն, կակուղ, և սպիտակ ։ ծեծեն 'ի ջուր յստակ, և կազմեն անտի թուղթ ։ և փ՟նկ մածուցիկ նիւթոյ 'ի վ՟ր ածեն պաղլեղ, որ չտայ թոյլ ծծել զմելանն. և առնէ առաւել ողորկ և սահելի առ գրչաւ: Բայց այս թուղթ չէ ինչ տևական. ընդունի զխոնաւութի, և լինի ճճեկեր, թէ ոչ ստէպ թօթափեսցեն զմատեանս, և դիցեն յարևու: Վնկ ոչ գտանի ինչ ձեռագիր վաղնջուց յազգին չինաց. այլ հարկ է նորոգել ստէպ զգրատունս նց՝ օրինակելով, կմ միւսանգամ տպագրելով զհին գիրս ՚ի վր նոր թղթոց:

Նոյնպէս և տպագրութի նց այլազան է ՚ի մերմէս. զի նք փորագրեն զնշանագիրս իւրեանց ըստ ձեւոյ ձեռագրաց յայնչափ տախտակս, որչափ են երեսք մատենին, զոր կամին տպագրել. վյ այն տախտակք միայն առ նոյն մատեան ծառայեն: Զայս եղանակ տպագրութե զառաջինն ՚ի կիր արկին և յազգի մերում առաջին գտիչք տպագրութե. զոր յետոյ յայն աստիճան կատարելութե հասուցին յեւրոպիա, ք զոր կատարելագոյն և զմտաւ իսկ ածել երևի թէ չիցէ հնար. այլ չինացիք միշտ ՚ի նոյն կացին մնացին. ոչ եթէ առ տգիտութե, իբր թէ չգիտիցեն շինել և շարժական տառս, քզի ահա ունին և այնպիսի նշանագիրս փայտաշէնս, որով տպագրեն զթղթական վճիռս. որոց համառօտ գոլով՝ սակաւուց պէտս ունին, այլ զի նշանագիրք նոցա անհամար են, վյ և դժուարին՝ մնդ թէ անկարելի զնս ուրոյն ուրոյն ձուլել, և տալ առ միմեամբք շարայարել ՚ի տպագրել նոքօք մատեանս: Պարծին թէ ինքեանք գտին զարուեստ տպագրութե, ոչ և զվառօդ, և զբևեռացոյց ասլաք նաւուց, և զայլ գործիս չափաբանութե: Բայց այս անհաւանելի ինձ թուի. վզի քաջայայտ է ամգն, եթէ մեծի ճարտարութե պէտք են առ ՚ի նորոգ հնարել զինս, ք զհնարեալն կատարելագործել: Արդ՝ յայտ է թէ մինչև հաղորդեալ էին նց եւրոպացիք զգաղափարս արուեստի իւրեանց, այն ամ անկատար էին յոյժ առ նս. այն զի և այժմ գործիք չափաբանութե, ոչ և պատերազմականք չինաց առ համեմատութ եւրոպացւոցն՝ ոչինչ են ամենևին և իբր աղայականք:

Ժ. Դպրութիւն Չինաց:

Յաշխարհս չինաց չիք ուրեք հնրկաց համալսարան յորս աւանդեսցին գիտութիք և ազգի ազգի ազատական արհեստք. այլ միայն առանձնական դպրոցք կամ տունք, որք ըստ հօրն Քօնֆեայ լի են յամ քղքս.

ջիղքս. յորս ուսուցանեն մանկանց ճանաչել զնշանագիրս իւրեանց և 'ի թղթի ձևացուցանել կամ գրել, ընդ նոսին և զայլ մակացութիւնս. այլ զմեծ մասն ժամանակի, կամ բոլոր կենաց վատնեն յուսումն նշանագրաց:

Գլխաւոր մակացութիւնք և գիտութիւնք, որք ասին 'ի վաղնջուց ծաղկեալ առ չինս են երկրաչափութիւն, թըւաբանութիւն, և առաւել քան զամենայն՝ աստեղաբաշխութիւն: Այլ որ ինչ սքանչելի պատմի յայսմ մասին զնոցանէ բովանդակ առասպելք են: Վասն զի երկրաչափութիւն նոցա յետ այսչափ դարուց՝ այնպէս է, որպէս թէ նորոգ սկսեալ էր 'ի լոյս ելանել, աղքատ ամենևին և չնչին. բովանդակեալ 'ի քանի ինչ նախադասութիւնս գործնականս և դիւրինս. զուրկ 'ի տեսական սկզբանց և 'ի նախադասութեանց: Ըստ նմին օրինակի և թուաբանական գիտութիւն նոցա բովանդակի 'ի գործի ինչ, որ է փոքրիկ տախտակ ոտնաչափ մի և կէս երկայնութեամբ. և 'ի վերայ ունի տասն կամ երկոտասան գաւազանս զուգահեռականս. յորս անցուցեալ կան բազմութիւն մանր գնտակաց շարժականաց. և նոքօք վճարեն զամենայն հաշիւս իւրեանց. որպէս սովորութիւն է առնել և այլոց տխմար և բիրտ ժողովրդոց: Նոյնպէս և գիտութիւն աստեղաբաշխութեան անկատար է յոյժ:

Ճշմարիտ է թէ այժմ տոմարական գիտութիւն նոցա առ փոքր մի կարգաւորեալ է. և ժամանէ ցայն վայր, մինչև նախագուշակել զխաւարումունս արեգական և լուսնի. բայց զայն յեւրոպացւոց ունին 'ի հարց միաբանութեան յիսուսեանց. վասն զի նախ քան զհասանելն նոցա անդր, չինացիք այնչափ խոր 'ի տգիտութեան վարեալ էին 'ի մասին աստեղաբաշխութեան, մինչև համարել նոցա թէ 'ի խաւարել արեգական կամ լուսնի՝ վիշապ ահագին կլանէ զնոսա: Կարելի է, մանաւանդ թէ կարի հաւանելի թէ միայն ռամիկ ժողովուրդն էր յայս բիրտ կարծիս, և ոչ գիտնականք նոցա. որպէս և մինչև ցայսօր խառնիճաղանճք չինաց 'ի նոյն միտս են. որք տեսեալ զխաւարել արեգական կամ լուսնի, սկսանին ծնծղայս հարկանել, փողս հնչեցուցանել, լալ և մեծաձայն աղաղակել առ 'ի հալածական առնել զվիշապն: Սակայն այս ճշմարիտ է, թէ նաև նոյն իսկ աստեղաբաշխք նոցա, մինչչև էր հասեալ անդր յիսուսեանց, չունէին զպայծառ ծանօթութիւն զդրից երկնից, և գուցէ չունին և այժմ:

Եւ չէ՛ մարթ հաւատալ և զայն, զոր ասեն ոմանք զչինացւոց, թէ գիտեն նոքա գուշակել զդարձ գիտաւորաց. զկարգ պարբերութեց մոլորակաց զարեգակամբ, և զփոփոխս խաւարմանս նց՟. վս՟ զի առ այն բզմ՟ և այլ ծանօթութեց պէտք են, և նուրբ և խորին թուաբանութն. յոր չև են հասեալ չինացիք: Բայց զայս խոստովանիլ պարտ է, թէ ախտարմունք նց՟ քաջահմուտ են յերկնանց արուեստի, կամ գէթ այնպէս կարծեն. և չեն ինչ զարմանք. վս՟ զի առ ՚ի երևելի լինել յայնմ, շատ է՝ որ՟ ասէ հայրն քօնթի՝ լինել նենգամիտ խաբեբայ, և գիտել խորամանկութ՟ ստուս յօդել. յորում՝ ը՟ սաղմոնի, չիք իբրև զչինս: Վսյ՟ և բժշկք են ՚ի նոսա այնպիսի խաբեբայք, որք պարծին ՚ի ձեռն աստեղագիտութե՟ գուշակել զապագայս. և ամի ամի առնեն աղիւսակս, որով նշանակեն զբաջող և զանյաջող աւուրս վս՟ ամուսնութե՟ և վս՟ ճանապարհորդութե՟ ը՟ ծով և ը՟ ցամաք. և զայլ պէսպ՟ սուտ և խաբէական գուշակութիս: Տրամաբանական գիտութիւն, որ դուռն է այլոց գիտութեց՝ անծանօթ է նց՟. բնաբանութե՟ կամ բնական փիլիսոփայութե՟ և ճարտարապետութե՟՝ հազիւ նշմարանք ինչ երևին առ նս՟: Կարծեն ունիլ զգիտութի երաժշտութե՟. զորմէ պարծին ևս թէ ինքեանք հնարեցին, և յետոյ ՚ի վերջին ծայր կատարելութե՟ հասուցին. այլ կամ ագիտութբ խաբին, և կամ եթէ հնարեցին ևս, յետոյ իսպառ կորուսին. վս՟ զի այժմեան երաժշտութի նց՟ այնչափ բիրտ է և աներուեստ. զի և անուան իսկ երաժշտութե՟ չէ արժանի:

՚Ի բժշկական գիտութե՟ ևս տկար են և յետնորդ. զի բաց ՚ի ծանօթութէ՟ խոտոց ինչ և արմատոց, զոր առաւել ՚ի փորձոյ ունին և յաւանդութէ՟, քան ՚ի գրոց, յորոց և կազմեն զբզմ՟ դեղորայս իւրեանց, յայլում մասին գրեթէ չեն ինչ ընդհատ յայլոց բարբարոս ազգաց: Եւ թէպէտ պարծին նք՟ քաջ ճանաչել զզարկ բազկերակին, և անտի գուշակել զհանգամանս հիւանդութե՟ զծանրութի նր՟ և զտևողութի, և թէ մահաբեր իցէ թէ ոչ. բայց չէ պարտ և յայնմ՝ ասեն հարքն յիս՟եանք՝ կարի իմն վստահանալ ՚ի նս՟. զի սակաւք յոյժ գտանին, որք ունիցին զգոյզն ինչ տեղեկութի զայնմանէ: Եւ պտճռն՟ է, զի բժշկութիւն առ չինս է իբր մի ՚ի չնչին և յաւաւել գիւղին արհեստից. յոր ով և իցէ անխտիր համարձակ ձեռն արկանէ յորժմ՟ չունի զայլ արհեստ ՚ի ձեռին առ ՚ի նովաւ գտանել զաւօրեայ պէտս. զի չիք անդ փորձ և քննութի բժշկաց. վսյ՟ ամ՟ դատապարտանձն և գործատեաց անձամբ զանձն կացուցանէ բժիշկ ՚ի կորուստ եղկելի հիւանդաց:

գաց: Յայսմ տմէ զոր 'ի հաւատարիմ մատենագրաց առեալ գրեցաք, քաջայայտ երևի առաւել բանից նց, որք ներհունս քարոզեն զչինացիս յամ գիտութիւնս, և մնդ 'ի չափաբանականս, և յաստեղաբաշխութեան. զի ոպ տեսաք՝ ոչ այնք, և ոչ այլ գիտութիւնք երբէք ծաղկեցան առ նս. ապա թէ ոչ, զի՞ է զի յետ այսչափ բիւրաւոր դարուց ժմկաց, ը որս պանծանօք երկարաձգեն զհնութ տրութ իւրեանց, չեղև երբէք 'ի նս ոք երևելի 'ի գիտութ իմիք, ոպ 'ի չափաբանութ, յաստեղաբաշխութ կմ յայլ գիտութիս:

Իսկ յարհեստս թէ ոչ յամի, գէթ յոմանս արժանի են մեծապէս գովութ. ոպ 'ի բամբակի պաստառս զարմանաւորս, որք յիրաւի հիացուցանեն զտեսօղս. 'ի մետաքսեայ կերպասս, և յախճապակիս են. բայց ոչ նոյնպէս 'ի նկարս, մնդ մարդկային կերպարանաց. սակայն ինքեանք հաճելի են ը նկարս իւրեանց. և գերագոյն համարին զայնս ք զեւրոպացւոցն, և ծիծաղին ևս զնոքօք. որով բարձրաձայն քարոզեն զտգիտութ իւրեանց: Վս զի չեք բնաւ 'ի նկարս նց ոչ ստուերաց աղեկութ, և ոչ կանոնաւոր զուգախառնութ գունոց. և մնդ համեմատ չափակցութ անդամոց մարդկային մարմնոյ. Իսկ այն՝ զի զծաղիկս և զթռչունս լաւ ք զեւրոպացի նկարիչս երևին նկարել, այն է վն ազնուէութ և պայծառութ երանգոցն, և ոչ 'ի ճարտարութէ նց, յորս չեն պէտք այնչափ հմտութ ստուերաց, որչափ 'ի ստուերագրութիս մարդկային կերպարանաց: Այլ թէ ընդ այնպիսի սքանչելի գունոց, ունէին և քաջ հմտութ յարհեստին, ապաքէն զարմանալի լինէին նկարք նց:

Բայց տիրապէս խօսելով՝ գիտեն քաջ զհետ երթալ և նմանիլ արուեստակերտ գործոց եւրոպացւոց, այլ ծառայաբար. զի ոչ կարեն անտի զայլ ինչ հանճարել, կմ կատարելագործել. այլ լոկ նիւթապէս օրինակեն: Սակայն և յայնմ 'ի բզմս թերի գտանին. որ առաւել յայտնի երևի 'ի գործս, առ որս պիտոյ առաւել ինչ ուշիմութ, երկայնմտութ, զգուշաւորութի և ջանք, ոպ են փոքրիկ անուաւոր ժամացոյցք, հրազէնք, ոպ ատրձանք և ատրձանակք են. զորս ուսան յեւրոպացւոց. բայց դեռ բզմս ունին աշխատիլ մինչև հասցեն 'ի չափ կատարելութե նց: Սակայն և այնպէս զարմանալ արժան է և ը այսչափ իսկ զարգանալ նց յարուեստս և 'ի գիտութիս. Վն զի չունելով նց բնաւ հաղորդութ ը այլոց զգօնամիտ և հանճարեղ ազանց, ոչ ընկալան նպաստս մինչև ցայս 'ի նոցանէ յուղղել և 'ի կատարելագործել զարուեստ և զգիտութիւն իւրեանց, եթէ ոչ 'ի վերջին ժամանակս, յորում փոքր մի լուսաւորեցան 'ի հարցն յիսուսեանց 'ի տոմարական և 'ի չափաբանական գիտութիւնս. վասն զոր ինչ ունին իւրեանց ջանիւք և ուշիմութեամբ հանճարեցին. որ արդարև մեծ իմն է:

Ժա. Ազգք և պատմութիւն Չինաց:

Պատմագէտք չինաց անմիաբան են 'ի վերայ սկզբան և տևողութեան ինքնակալութեան կամ միապետութեան իւրեանց. Ոմանք 'ի նոցանէ իւրեանց բնածին չափազանց շաղակրատութեամբ զսկիզբն նորա բիւրաւոր դարուք յառաջ ձգեն. ասելով թէ առաւել քան 40 հազար ամք են յորմէ հետէ հիմնեցաւ ինքնակալութիւն իւրեանց. ուստի և հազարաւոր ամօք յառաջ քան զարարչութիւն աշխարհի: Այլ զգօնագոյնքն, որոց զհետ երթայ և հայրն Քոնթի, և այլք ոմանք 'ի մատենագրաց եւրոպացւոց, թողեալ զայս յիմարական առասպելս, ասեն թէ այս ինքնակալութիւն սկսաւ իբրու 4120 ամօք յառաջ 'ի թագաւորէ ումեմնէ որոյ անուն էր Յաօվ: Հատք ես՝ որոց զհետ երթան ժամանակագիրք եւրոպացւոց իբր առաւել հաւանելի կարծեաց՝ զսկիզբն նորա դնեն լինել 2952 ամօք յառաջ քան զգալուստ փրկչին մերոյ. վասն յայսմ ամի, որ է 1806 լինին 4758 ամք յորմէ հետէ հիմնեցաւ այս ինքնակալութիւն. 'ի յամի արարչութեան աշխարհի 2048. 392 ամօք յետ համաշխարհական ջրհեղեղին.

Այս կարծիք եթէ ճշմարիտ իցէ, առանց հակառակութեան սա լինի հնագոյն միապետութիւն որ լեալ իցէ յաշխարհի. Բայց ոչ սակաւ կասկածելի. «Որք զգուշագոյն քննեցին
« զիրագ՝ հարկեցան խոստովանիլ, թէ որ ինչ ասի
« յաղագս ծագման և վաղնջականութեան այսր երևելի
« ինքնակալութեան. և վասն յերկարաձիգ կարգի թագաւորաց
« չինու, զորս հաստուցանեն մինչև ց209. կամ ըստ այլոց
« ց236, որք եղին 'ի քսան և երկու տոհմից, և յա-
« ջորդեցին զմիմեանս, չէ ինչ հաւաստի. և ոչ հիմն-
« եալ յարժանահաւատ ինչ յիշատակ. բայց 'ի վերջ-
« նոց ամաց||: Քանզի հիմն սոյն հաստատեալ է 'ի հին յիշատակարանս և 'ի պատմութիւնս չինաց. իսկ առ նոսա չէք այժմ հին մատեան. վասն զի իբրու 2000 ամօք յառաջ մի ոմն յինքնակալաց նոցա ետ այրել 'ի հուր զամենայն մատեանս, որք գտան յաշխարհի անդ իւրում. նմին իրի որ ինչ յեղելոցն յառաջ քան զայն պատմի այժմ 'ի գիրս չի-

չինաց՝ լոկ յաւանդութիւնս հիմնել է. Թող զայն՝ զի և յետ այնորիկ բազում անգամ նորոգեցան մատեանք նց օրինակելով սակս դիւրեղծական թղթոյ նց, ոմ ասացաք 'ի վերոյ. և յօրինական անդ ոչ սակաւ փոփոխուն կարծի լեալ հրամանաւ ինքնակալաց նց կմ առ 'ի նոր կարգ ինչ մուծանել. և կմ առ 'ի և ևս մեծացուցանել 'ի միտս ժողովրդեան զգերազանցութն ազգի իւրեանց: Վզի պատմութիւք չինաց, որք պատմեն զվաղնջական իրաց երկբայական են: Այլ թողել զմանրազննին քննութն պատմութեց նց, դիցուք յառաջիկայդ զկարգ առաջնոց ինքնակալաց նց,
և զգլխաւոր գործս նց:

Արդ՝ ը նախակարգեալ երդ կարծեաց՝ առաջին հիմնադիր այսր երևելի ինքնակալութն եղև Ֆոհի. որ թգրեաց 2952 կմ 3000 ամօք յռջ ք գքն: Սա ը պատմելոյ չինաց՝ եած յընկերութն զժողովուրդ այնր ըարձակ երկրի. զի մինչև ցայն ժմկ բնակիչք նորա թափառական շրջէին 'ի լերինս և յանտառս՝ վարելով կեանս զօրէն անասնոց: Այլ յայսմ վայրի տարակոյս ըառաջ եկանէ, թէ զիարդ հնար եղև զվայրենի մարդիկ ածել յընկերութն և 'ի քղքականութն առանց լեզուի՝ որ իցէ հնրկ օրէնսդրին և վայրենի ժողովրդեան. և զիարդ մարթ էր լինել միոյ լեզուի նց՝ առանց ընկերութն կմ 'ի միասին բնակութն. այլ զայս ևս դասել 'ի կարգ առաջնոց առասպելեաց՝ մատեցուք յռջ: Սա ասեն չինացիք՝ կարգեաց օրէնս, հնարեաց զերաժշտութն, (այլք դնեն երաժշտութն առն հօմթեայ ինքնակալի.) հետամուտ եղև աստեղաբաշխութն, ընտրեաց զվիշապն 'ի նշան թգրութն չինաց, զոր վարեն մինչև ցայսօր. պաշտէր զգերակայ հոգի երկնի և երկրի. և մատուցանէր նմ զոհ եօթն ազգս անասնոց, զորս սնուցանէր յիւրում դարպասի: զՖոհի յաջորդեաց Ջիննում կմ Քսիննում, որ ուսոյց զերկրագործութն և զայլ արհեստս
յաւէտ կարևորս մարդկային կենաց:

Հօմթի թգրեաց 2697 ամօք յռջ ք գքն. նա հնարեաց զդարս կմ զվաթսնամեան շրջանս չինաց՝ աշխատասիրութբ Թանօվայ քաջ աստեղագիտի. եգիտ կմ պայծառացոյց զերաժշտութն, և զզէնս, և զկարթ ձկնորսութն, զսայլ, զնաւակ և զայն ամ, զոր պահանջէ արհեստ դարբնութն: Իսկ կին նր անուանել Լօվխաւ ուսոյց յարդարել և պատրաստել զմետաքս, և գործել նովաւ կերպասս: Սոյն այս ինքնակալ եդ նոր կարգ 'ի քղքական կառավարութն, կարգելով եօթն նախարարս կամ նախապատիւ պաշտօնատարս թագաւորութեան • զորս չինացիք Քալաօս կոչեն : Գրեաց և գիրս ինչ 'ի վերայ դեղորէից • յորմէ երևի թէ արհեստն դրութեան գոյր առ չինս և յառաջ քան զնա • այն զի՛ պատմութիւն չինաց աւանդէ, թէ Ֆօհի առաջին ինքնակալ նոցա գրեաց մատեան 'ի վերայ աստեղաբաշխութեան • այս և 'ի ժամս Ֆօհեայ ունէին չինացիք գիրս, կամ աւելի է թէ նա հնարեաց : Մեռաւ Հօամթի 2577 ամօք յառաջ քան զՔրիստոս :

Յետ նորա թագաւորեաց Քաաօ լաւօ, որ սկսաւ չինել քաղաքս և պատել զնոքօք պարիսպս • Հնարեաց զնորատեսակ իմն երաժշտութեան • և եմոյծ զսովորութիւն լծելոյ եզինս 'ի սայլս • և մեռաւ 2517 ամօք յառաջ քան զՔրիստոս :

Զսա յաջորդեաց Քօլէն հիօ Թոռն Հօամթեայ, որ օրէնս եդ, զի այնուհետև ոչ ոք իշխեսցէ զոհս մատուցանել բարձրելոյն կամ երկնից ինքնակալին, բայց 'ի թագաւորէն: Սա հնարեաց զտոմարն չինաց • և եդ սկիզբն տարւոյ զծնունդ լուսնոյ՝ որ յաւէտ մերձաւոր է գարնան • որ 'ի չինաց Ծի անկանի 'ի ժամանակս ջրհօսին, այս է՝ 'ի մերումս փետրուարի • վասն չինք մինչև ցայսօր զամիս և զամս լուսին ըստ ընթացից լուսնի • և զօրն սկսանին 'ի կէս գիշերոյ : Զկնի սորա կալաւ զթագաւորութիւն Թիքօ Թոռն նորա 2457 ամօք յառաջ քան զՔրիստոս • որ ունէր չորս կանայս • կացոյց վարժապետս ուսուցանել զժողովուրդն • և ինքն ուսոյց զձայնաւոր երաժշտութիւն:

Զկնի այսց վեց ինքնակալաց յաջորդեցին երկու հռչակաւոր ինքնակալք և օրէնսդիրք Եօվ կամ Յաօվ, որում ընծայեն ոմանք զհիմնարկութիւն ինքնակալութեան չինաց • և Սամ կամ Քսամ : Սոքա հաստատեցին զծէսս, և զսահմանադրութիւնս քաղաքականս • արարին և այլ բազում չինուածս • յորոց սակի է և այն, զոր պատմեն վասն Եօվայ, թէ ազատեաց զԾ չինաց յիննամեան ջրհեղեղէ • բացեալ ջրմուղս և առուս ընդ որս զծովացեալ ջուրս իջոյց 'ի ծով • և վասն այսր երախտեաց արժանացաւ ընդունել զգահն : Երկոքին սոքա ըստ աւանդելոյ պատմութեան չինաց թագաւորեցին ամս 150 (որ անհաւատալի է) զոր միացուցեալ ընդ 587 ամաց, յորս թագաւորեցին վեց նախակարգեալ ինքնակալք, ընդ ամենայն լինին 737 ամք : Արդ՝ յերկուց աստի երևելեաց, և 'ի վեցից առաջնոց իջանեն քսան տոհմք արքայականք, յորս եկաց մնաց թագաւորական իշխանութիւն ընդ դարս յոլովս 'ի սոսա յաջորդեալ և զայլ երկու տոհմս Թաթարաց, յորոց թագաւորեցին 'ի չինս՝ ընդ ամենն լինին քսան և երկու տոհմք :

Քան,

Քանզի նախ՝ պերահայեալ Չինկիզխանին ազգաւ Թաթար փոքր մի յառ՟ջ ք՟ զամ ամ՟ն 1200 տիրեաց մասին ինչ քաթայեայ. որ այն ինքն է հիւսիսային մասն չինու. ապա 'ի 1228 ուխտաթայ որդի նր՟ եառ և 'ի հարաւային մասանէ զնեղ՟ն տեղիս, ը՟ որս և զնանքին արքայանիստ ք՟ղք չինաց՝ զոր աւար հարեալ դարձու 'ի տեղի իւր. յետոյ որդի նր՟ գլուգ կմ՟ գույուգ. զկնի մանգոյ խան, որ մեռաւ 'ի 1260 ամ՟դ 'ի չինաց ծի: Սք՟ թէպէտ տիրեցին բ՟զմ տեղեաց չինու, այլ ոչ ոք 'ի ն՟ջէ կոչեալ զինքնակալութի՟ն նց՟. մն՟յ և ոչ իսկ կոչեցան ինքնակալք չինու: Ապա յարեաւ քուպլայս եղբայր մանգոյ խանին 'ի չինաց Վախքու անուանեալ, և յամին 1268 յաղթահարեալ զփիլթիմ բնիկ ինքնակալ չինաց, զոր Թաթարք Փաքփուր կոչեն. որ էր 'ի սաւմ յիննեւտասներ՟դ արքայական տոհմէ, զբոլոր թգ՟րութի՟ն չինու ը՟ իւրով ձ՟րութ՟ նուաճեաց, զինքնակալութի՟ն նց՟ 'ի տոհմն իւրենայ փոխեալ, և զաթոռ թգ՟րութե՟ իւրոյ հաստատեաց 'ի փեքին. ուր և թգ՟րեաց մինչև ց1295. և զնա յաջորդեցին այլ ևս ութ ինքնակալք 'ի նոյն իւրեանեան տոհմէ. ցք թէմուրխան կմ՟ քիմքում թոռն քուպլայոսի մինչև ցամ՟ն 1308. վուքում մինչև 1312. ձինքում մինչև 1321. իմքում մինչև 1324. գայթիմ մինչև 1329. միմքում մինչև 1330. վենքում մինչև 1333. և քուանթի մինչև 1369. որ եղև վերջին ինքնակալ 'ի Չինկիզխանեան սերնդոց յիւրեանեան տոհմէ: Քանզի յամին 1369 զօրացեալ չինաց՝ հանին վանեցին զԹաթարս յերկրէ իւրեանց. և վերստին սկսան բնիկ չինացիք թգ՟րել 'ի միմ տոհմէ. որք և թգ՟րեցին մինչև ցկէս նախանցեալ դարու. ցք ցամ ամ՟ն մերոյ 1645. զի 'ի նմին ամի հիւթայի կմ՟ Նիւքայի Թաթարք կալան զինքնակալութի՟ն չինու. և 'ի սերնդոց նց՟ թագաւորեն մինչև ցայսօր. զորոյ զպատմութի՟ն 'ի դէպ համարիմք համառօտել յայսմ վայրի:

Սունչի կմ՟ քուանչի և կմ՟ գաունթէ թգ՟ր Նիւքայ, որ է փոքրիկ ազ՟գ ինչ Թաթարաց 'ի հիւսիսոյ արևելից չինու, զոր յառաջագոյն յե՟ին մեծ Թաթարաց ստորագրեցաք, խնդրեաց զհատուցումն վնասուց ինչ և զրկանաց, զոր ժող՟վ իւր կրեալ էր յամանց 'ի զօրականաց չինաց, և 'ի մերժել զնա և յապախտ առնել զբանս նր՟ ինքնակալին չինաց, անձամբ կամեցաւ առնել իրաւունս: Այ՟ն զօրաժողով լեալ, յարձակեցաւ 'ի լէաթօնկ նհնգ, որ է արտաքոյ մեծի պարսպին: Իսկ ինքնակալն չինաց առաքեաց ը՟դէմ նր՟ զմի ոմն 'ի գլխաւոր սպարապետաց իւրոց ուսանկվէյ անուն յոգնախումբ զօրօք · և երկարեցաւ պ՟տզմ 'ի մէջ նց՟ է՟ հարուստ մի ժամ, երկոցուն կողմանց անպարտելի մնացել։ Ընդ այն ժամս սով մեծ եղև 'ի չին, և ժողովուրդք նեղնգաց ոմանց ոչ կարելով վճարել զասվորական հարկս յոյր սակս և 'ի խոշտանգանս մատնել 'ի հարկապահանջից, ապստամբեցան. գլուխ և առաջնորդ ապստամբութե ունելով զմի ոմն 'ի չինաց անուի լիւցունձ անուն։ Նա գումարեաց բազմութի աւանց պ՟տզմողաց, և գրաւեաց 'ի վր՟ փեքին արքայանիստ քաղաքի։ Այլ ք՟զի գիտէր՝ թէ դժուարին է նմ՟ պ՟տզմաւ առնուլ զքղքն զայն ամրապարիսպ · որում 'ի խաղաղութե ժմկի կային 'ի պահպանութե 80 հազար զինուորք ընտրելագոյնք 'ի համօրէն զօրուէն. նմին իրի յառաջագոյն 'ի ձեռն պարգևաց և մեծամեծ խոստմանց 'ի կամս իւր որսաց զներքինիս արքունեաց, որք առ նովին ժամու զօրաւոր էին յոյժ. զի 'ի ձեռս նց՟ էին գերագոյն իշխանութիք արքունի տանն. և զի դժկամակս ինչ կրել յինքնակալէն ոխուք էին ը՟ նմ՟, և համապատուն գործէին այլևայլ հնարիւք ատելի առնել զնա ժողովրդեան և զօրաց։ Յայն սակս 'ի հասանել լիւցունձայ 'ի փեքին, բացին առաջի նր՟ դրունս քաղաքին. և նա եմուտ իբր յաղթական 'ի քղք անդր։ Իսկ եղկելի ինքնակալն տեսել զանձն լքել 'ի թիկնապահ զօրաց իւրոց, և մատնել 'ի ձեռս թշնամւոյն, ընտրեաց զմահ, քան կենդանւոյն անկանել 'ի ձեռս ծառայից իւրոց։ Վ՟զի խոյս ետ մեկուսացեալ 'ի պարտէզ արքունեացն ը՟ միամօր դստեր իւրոյ. դրեաց գիր աղերսանաց առ լիւցունձ չթողացուցանել զզօրս իւր առնել չարիս ժողովրդեան. և ինքն սուր եդել 'ի պարանոց դստեր իւրոյ անգթին խողխողեաց զնա, զի մի անկցի 'ի ձեռս բռնակալին և պղծեսցի արքայական սերունդ իւր. ապա և անձին խեղդ արկել մեռաւ և նա։ Զնոյն արարին և դշխոյ տիկին նր՟, և քղքապետ քղքին և այլք ոմանք 'ի մեծամեծաց՝ արք և կանայք, որք էին 'ի կողմն ինքնակալին, առ երկիւղի ապստամբացն, և առ սաստիկ աղէտից վ՟ն մահու հարազատ ինքնակալի իւրեանց։ Եւ լիւցունձ անարգել տիրապետեալ արքունեաց, կալաւ զինքնակալութե չինաց։ Բայց ք՟զի դեռ կասկած երկիւղի կրէր 'ի սրտի 'ի ուսանկվէյայ սպարապետէն, աճապարեաց խաղալ 'ի վր՟ նր՟ մինչդեռ 'ի պ՟տզմի էր ը՟ թաթարս զի և զնա ը՟ իւրև հնա-

զան

զանդեցուսցէ. և զզօրսն յիւր կողմն ձգեսցէ. որով յամ կողմանց ապահովասցի տէրութն նր ։ Այլ վրիպեցաւ 'ի յուսոյ. քզի լուէր ուսանկվէյայ զամ անցս, որք անցին 'ի փէքին, մինչկի հաշտուի արար ընդ Թաթարս, և առեալ զնս յօգնութի, դարձոյց զդէմս իւր 'ի վերայ բռնակալին 'ի միասին ընդ Թաթարաց ։ Բայց նր ծանուցեալ զ'ի վերահաս վտանգն, փութացաւ կողոպտեալ զգանձն արքունի, յաւարի էառ զքղքն և այլ բիւր չարիս գործեաց ժողովրդեանն՝ և փախուցեալ անկաւ 'ի նհնգն չէնսի, լցեալ անբաւ ճոխութբ, միանգամայն և անիծիւք ժղվրդեան ։

Իսկ Թաթարաց մտեալ 'ի չին, եկին 'ի փէքին. և ուսանկվէյ հանդերձ իւրով գնդաւ պնդեցաւ զհետ բռնակալին ։ Եւ մինչդեռ նա հեռացեալ լինէր բռնակալին, առ 'ի բառնալ զնա 'ի միջոյ, սունչի Թգր Թաթարաց, որ անդէն 'ի ձեռին ունէր զփէքին և զարքունիսն նր, ետ քարոզել զանձն ինքնակալ չինաց. և այնպէս յինքն կալաւ զտէրութն նց ։ Եւ առ յաւէտ ամրացուցանելոյ զտէրութն իւր, մինչև էր դարձեալ ուսանկվէյայ՝ եհան 'ի քղքէ անտի զբնիկ չինս, և բնակեցոյց զնս արտաքոյ քղքին, ուր ետ շինել նոր քղք. և 'ի տեղի նց փոխադրեաց 'ի հին քղք անդր զԹաթարս, որք յառաջնմէ բնակէին 'ի չին ։ Իբրև դարձաւ ուսանկվէյ 'ի պտղմէն, և ետես զինքնակալութն իւրեանց մատնեալ 'ի ձեռս Թաթարաց, լցաւ զարմացմամբ և սրտմտութբ ընդ դաւաճանութն նց. այլ չէր առժամն ձեռնհաս բռնութբ վանել զնս, հարկեցաւ զլջանիլ և միաբանիլ ընդ սունչէայ, որ առեալ նմ երիս մեծամեծ նհնգս 'ի նհնգաց անտի չինաց Ծի, անուանեաց զնա Թգր ։ Իսկ նր մտեալ 'ի ժառանգութն նհնգաց իւրոց, 'ի սուղ ժմկի ժողովեալ յամ կողմանց դրամս և զօրս բզմս հորդան ետ գազանաբար 'ի վր Թաթարաց. և զառաջինն անդ ոչ սակաւ յաղթութիւն արար. և եթէ չէր կանխեալ օրհասի նր, (զի մեռաւ զկնի սակաւուց իւրով բնական մահուամբ,) կարծեմ թէ իսպառ հանեալ էր զԹաթարս 'ի չինաց Ծէ ։ Այլ որդի նր որ յաջորդեաց զնա, աննման գոլով հօրն արիութն, հանճարոյ և պտղմական վարժութց, 'ի պարտութն մատնեցաւ առաջի Թաթարաց. որոց ոչ սակաւ նպաստեցին և եւրոպացիք ուսուցանելով նց ձուլել թնդանօթս. և այլ զէնս կահս կարևորս 'ի պտղմի, որք ցայն վայր անծանօթ էին նց ։

Եւ ահա ըս այսմ մեծահամբաւ միահեծան տէրութն չինաց էանց 'ի ձեռս Թաթարաց յամի փրկչին մերոյ 1645. և մինչև ցայսօր կայ մնայ 'ի ձեռս նց: Եւ զի 'ի սկզբան անդ Թաթարքն սակաւաթիւ էին 'ի չին, ուստի խորագէտ Թգր նոցա հարկեցաւ զամ հնարս 'ի գործ դնել առ 'ի հաստատուն տրուն իւրոյ. յայն սակս հրամայեաց չինաց սափրել զվարս գլխոյ՝ փունջ մի եւեթ թողել 'ի գագաթան. զի չինացիք կրէին վարսս երկայնս, զոր փառս համարէին անձանց. և զգենուլ ը ձեւոյ զգեստուց Թաթարաց. Նոյնպէս և զզգեստ զօրաց նց փոխեաց 'ի տարազ զօրաց Թաթարաց: Զայս արար մի՝ 'ի բառնալ զարտաքին խտիր որ 'ի մէջ չինաց և Թաթարաց. և 'ի ծածկել այնու զսակաւութիւն Թաթարաց և զնուազութն զօրուն նց. երկուցեալ թէ գուցէ չինք յարիցեն 'ի վր նր, և հանցեն զնա և զամ Թաթարս յնէ իւրեանց: Եւ երկրդ՝ զի համարէր թէ 'ի ձեռն այսպիսի արտաքին նմանութն առ սակաւ սակաւ ներքին յօժարութն և բնաբերս բարք երկուց ազգաց ըխառնեսցին ը միմեանս: Եւ եւս գրեթէ զամ երեւելի իշխանութիս և պաշտօնս ար զկուսակալութն զքաղաքապետութն ետ բաշխեաց մեծամեծաց բնիկ չինաց. դիտելով այսու պարտաւորել զնս 'ի հաւատարմութն և 'ի հնազանդութն իւրեան. բայց 'ի պաշտօն զօրապետութն ոչ կացուցանէր 'ի նցէ: Պահեաց զամ նախնի օրէնս և զքղաքական սահմանադրութիս. ը նոսին և զհնրկ սովորութիս, զի մի նորաձեւութբ իւիք յապստամբութն գրգռեսցէ զնս. և զի միանգամայն ասացից՝ առաւել Թաթարք նմանեցան և հնազանդեցան չինաց, ք չինք նց. զի բաց 'ի վարսից և 'ի զգեստուց, յայլ ամ իրս Թաթարք զհետ գնացին չինաց. ուստի այժմ հազիւ նշմարի ինչ զնմնութն 'ի մէջ նց: Արդ՝ յետ միանալոյ տին չինաց ը Թաթարաստանու, առաւել զօրացաւ և չունի այնուհետեւ երկիւղ ինչ ուստեք. զի շրջակայ ազգքն տկար են և անզօր:

ժէ. Կառավարութն Չինաց:

Կառավարութին տրութն չինաց 'ի սկզբանէ անտի հիմնարկութն նր եղև միշտ՝ և է մինչև ցայսօր միապետական. և ը այնչափ դարս ժմկաց թէպէտ տոհմք արքայազունք փոփոխեցան, այլ տարազ կառավարութն նց ոչ երբեք: Յայն սակս լռել չինաց զառաջինն 'ի գետպանէն հոլանտացւոց զանուն հա-

սա

տարակայեսութե , գլխովին օտար և անլուր իմն թուեցաւ նց . և ոչ կարէին , ոչ և մինչև ցայժմ ոչ կարեն հասու լինել , թէ զիարդ հնար իցէ միոյ ձի և տրութե բզմ տեսակս ունել . որ թուի նոցա իբր հրէշ իմն բազմագլխեան . և չէին ինչ զարմանք , զի ինքեանք այնպէս տեսին , և այնպէս ուսան 'ի նախնեաց իւրեանց . յոյր սակս և զմտաւ ածել անգամ զայլ իմն տարազ կառավարութե ոչ կարեն :

Արդ թգրն չինաց , որ կոչի կայսր կմ ինքնակալ , զի բզմ փոքր թգրութիս ունի ժե իւրև , է գերագոյն գլուխ և տր ինքնիշխան համօրէն ձի նոցա . որում ածական պատիւ ընծայեն , կոչելով զնա նր . որդի երկնից , տր տյ . միակ տր և նախախնամօղ երկրի . մեծ հայր ժողովրդեան : Որ ուրեմն երևեցուցանէ զանձն ժողովրդեան . և չէ մարթ երբեք յանդիման լինել նմ , կմ խօսել առ նա` ոչ միայն իշխանաց , այլև եղբարց իւր նր , եթէ ոչ 'ի ծունկս անկել , և զերեսս մինչև յերկիր խոնարհել : Զայսպիսի մեծարանս ընծայեն և դատարկ աթոռոյ նր . զի ունին աւուրս ինչ սահմանել , յորս իշխանք ժողովին 'ի գաւիթ մի ապարանեաց 'ի ցուցանել զհնազանդութի իւրեանց առ ինքնակալն . և զնախագրեալ պատիւ և երկրպագութի ընծայեն լոկ աթոռոյն , թէպէտ և ինքնակալն չիցէ անդ : Այլ բանք բերանոյ նորա են իբր պատգամք ածայինք , և հրամանք նր են օրէնք անաղարտելիք . յորոց չիք հրաժեշտ կմ յապաղումն : Նա հաստատէ օրէնս` և զառաջինս բառնայ կմ փոխէ : Նա կարգէ 'ի դասս դիւցազանց , կմ զի յայտնի առացից` ածացուցանէ զայնոսիկ , որք առ կենդանութե նշանաւորք եղեն յառաքինութիս ինչ , և երախտաւոր առ թգրութե իւրեանց : Նա ընտրէ իւր յաջորդ . և կարող է մերժել զանդրանիկ իւր զօրինաւոր յաջորդ թգրութե` զծնեալ 'ի միջէ յերից տիկնաց անտի , որք կոչին դշխոյք , եթէ տեսցէ 'ի նմ անբաւականութի առ այնպիսի գերագոյն իշխանութի . և փոխան նր նստուցանել զորդի միոյ 'ի հարճից իւրոց , կմ զայլ ոք յորմէ տոհմէ և իցէ :

Բայց այս հազիւ երբեք դիպի . և ոչ իսկ արարին երբեք այնչափ ինքնակալք զայդպիսի ընտրութի առանց հաւանութե գերագոյն արքունի ատենի , զոր ստորև ունիմք նշանակել : Յորժամ ինքնակալն անուանէ զոք յորդւոց իւրոց իւր յաջորդ , այլ թէպէտ և երիցագոյն իցեն հասակաւ ք զնա , նոյն ժամայն մտանեն է նր հնազանդութի . և իւրաքանչիւր 'ինչէ երթայ բնակէ 'ի միում 'ի քղ̃քաց, որ սահմանեալ է նմ̃․ և ոչ կարէ ելանել անտի առանց յայտնի հրամանի ինքնակալին, ոչ վարէ անդ իշխանութ̃ ինչ, այլ է լոկ մեծազգի ոմն ազատ։

Դարձեալ նորին ինքնակալի է առնել ըստ̃ղմ կ̃մ խաղաղութ̃․ դաշինս հաստատել ը̃ն օտար տ̃րուեց որով և լիցէ պայմանաւ ը̃ս իւրոց հաճոյից․ միայն թէ չիցեն պայմանքն նուաստացուցիչ և անարգու թ̃գրուե իւրեանց։ Նա և կարող է փոխել զձև գրոց իւրեանց՝ ջնջել զառաջինս, և նորս սահմանել․ փոփոխել զանուանս քղ̃քաց և գ̃աւաց․ այլայլել զոճ̃ և զեղանակ գրելոյ և խօսելոյ․ բառնալ զհին սովորութիս և նորս մուծանել․ և նոր տարազ քղ̃քական կենակցուե սահմանել են։ Վճիռք և սահմանադրութիւնք գերագոյն ատենից համօրէն թ̃գրութե իւրոյ ընկալեալ կան․ զի առանց նր̃ հաւանութ̃ և հաստատութ̃ առ ոչինչ զօրեն։ Նր̃ է բաշխել զամ̃ քղ̃քական և հոգևոր իշխանութիւնս․ և զի միանգամայն ասացից՝ 'ի ձեռս նր̃ է տնտեսութ̃ բոլոր թ̃գրուե։

Այլ ք̃զի տիրապետութ̃ նր̃ ոչ է բռնական, այլ օրինաւոր միապետական․ վս̃ այնորիկ թէպէտ ը̃արձակ է յոյժ իշխանութ̃ նր̃․ և ը̃ս տսելոյ ոմանց իբր անսահման, սակայն ոչ է անկանոն և արտաքոյ օրէնաց․ ոչ̃ զի առնել նր̃ զամ̃, զոր ինչ լոկ հաճոյք իւր թելադրեն նմ̃․ այլ ուղղել և կարգաւորել օրէնօք, զորս ը̃ն դարս դարս հաստեցին նախնիք իմաստունք նց̃։ Օրինակ իմն, թէպէտ ինքնակալին է հաստել օրէնս, կմ̃ բառնալ և փոփոխել, այլ ոչ երբէք առնէ զայն առանց խորհրդոյ իշխանաց գերագոյն ատենի իւրոյ․ վս̃ զի 'ի տնտեսութ̃ մեծամեծ իրողութեց թ̃գրուե իւրոյ ունի այլ և այլ ատեանս և ժողովս, և նոքօք կատարէ զամ̃։

Առաջին և գլխաւոր՝ են երկու գերագոյն ատեանք․ մի՝ արտաքոյ կարգի, որոյ ատենակալք առհ̃րկ են յարքայական սերնդոց․ միւսն սովորական․ ուր բաց 'ի թագադարմ ատենակալաց՝ մտանեն և այլք ոմանք 'ի նախապատիւ իշխանաց, որք Բօյարք կոչին։ Սք̃ քննեն զամ̃ մեծամեծ իրողութիս թ̃գրուե․ զորս ապա ծանուցանեն ինքնակալին․ և ը̃ունին 'ի նմանէ զվերջին բացորոշութ̃։

Բաց յայսց երկուց գերագոյն ատենից են 'ի փէքին արքայանիստ քղ̃քի և այլ վեց գերագոյն ատեանք․ որոց իշխանութիւն ձգի 'ի վր̃ համօրէն թ̃գրութեն․ ունելով իւրաքանչիւրոց սեփական գործ ուղղել և կարգել ը՟ օրինաց երկրին: Առաջինն, որ անուանեալ կոչի Լիւփիւ կմ՟ Լիփօյ, հսկէ 'ի վ՟ր մանտարինաց, որք են իշխանք երկրին, և քննէ զամ՟ գնացս նց՟ 'ի պաշտաման իւրեանց. կացուցանէ կուսակալս և դատաւորս նհ՟նգաց. հաստատէ կմ՟ փոխէ զնս՟ ը՟ պիտոյից, բայց միշտ գիտութ՟ և հաւանութ՟ ինքնակալին: Երկ՟դն անուանեալ Հօփօն կմ՟ Հօփու, իշխէ 'ի վ՟ր արքունի գանձուց և ամ՟ արքունի հասից և մտից, և Թգրական՟ կալուածոց. ունի զհաշիւ համօրէն տանց բոլոր Թգրութե՟, զոր ամի ամի նորոգէ, և զկալուածոց և զընչից նց՟. և Թէ իւրաքանչիւր 'ի նցէ՟ որչափ ինչ պարտական է տալ յարքունիս ամի ամի: Եր՟դն կոչի Լիփու, որոյ է դատաստան առնել 'ի վ՟ր ամ՟ իրողութեց՟ կրօնի. կարգաւորել զհրեշտակութիս, զհանդիսական սօնս, և զամուսնութիս. այլև խնամ ունել զարգանալոյ գիտութեց՟ և արհեստից, և քաջ պահպանութե՟ նախնի սովորութեց՟: Չոր՟դն կոչեցեալ Փիմփու կմ՟ Փինփու, կարգեալ է 'ի վ՟ր պատերազմական գործոց, յայն սակս զնմ՟ կախեալ կան սպարապետք և զօրավարք. նր՟ է խնամ ունել բերդից, ամրոցաց, զինարանաց, նաւուց և այլ ամ՟ իրաց, որք հային 'ի զինուորութիս Թգրութե՟. ուստի և է նոյն, որ ինչ առ օտարանցիս՝ ձէնիկ ատեանի: Հինգեր՟դն կոչի Հինփու, որ դատէ զդատաստան յանցանաց կմ՟ արեան: Իսկ վեցեր՟դն Քօմփու, որ խնամ ունի Թգրական՟ կմ՟ հսրկաց՟ շինուածոց տաճարաց, կամրջաց, Թմբից, ջրմղաց, արքունի ճնպհաց՟, նաւուց են:

Իւրաքանչիւրն 'ի վեց ատենից աստի դարձեալ բաժանի յայլ փոքրիկ ժողովս կմ՟ խուռնս՝ ոմանք մինչև ցժե՟. զառաջինն 'ի փոքրիկ ժողովոց անտի կացուցանեն երեք անձինք և եթ. մի մի ոմն նախագահ, և երկու ընԹերակայք կմ՟ դահակիցք, և նց՟ հասանէ վերջին քննութ՟ ամ՟ իրաց, որք հային յայն ատեան: Իսկ այլք 'ի փոքրիկ ժողովոց են 'ի ներքոյ իւրեանց, զորս կացուցանեն մի նախագահ և ոմանք ատենակալք կմ՟ խորհրդականք, ամ՟ կախեալք զգլխաւոր նախագահէ առաջնոյ ժողովոյն. և չէ օրէն զդատ ինչ հանել առ ինքնակալն, մինչև իցէ քննեալ զայն ատեանն առ որ պատշաճի այն դատ: Եւ Թէպէտ ամ՟ նախակարգեալ գերագոյն ատենից որոշեալ են գործք, բայց զի մի զեղծանիցին գերագոյն իշխանութ՟ իւրեանց՝ այնպէս՟ անօրինել են իրողութիք նց՟, զի ունիցին կախումն զմիմեանց. յորս սակս բզմ՟ անգամ մի ատեանն ոչ կարէ ինքնին առանց միւսոյ՝ երբեմն և առանց նմին 'ի գլուխ տանիլ զիրս իւր ։ Օրինակ իմն ․ 'ի լինել պտզմի , չորց ատենին է որոշել զթիւ գնդից ․ կարգել նց զօրավարս , հրաման տալ չուոյ ։ Իսկ դրամն 'ի վճարել զթոշակ զօրաց , և առ այլ ամ պէտս պտզմի յերկց ատենէ մատակարարի ։ Արդ՝ յայտ է թէ չէ մարթ չու առնել զօրաց , թէպէտ և հրամայեսցէ չորց ատեանն , եթէ երկքն զդրամս ոչ մատակարարեսցէ ․ սոյնպէս գիտի և յայլ բզմ իրս ։

Այսպիսի ատեանք գտանին և 'ի գլխաւոր քղքս ամ նհնգաց ․ մն զի ը̅ս ատենլոյ սահմանի և այլոց առհսրկ՝ նհնգք չինաց ժե են իբր մի մի փոքրիկ թագաւորութիւնք ը̅ս ը̅արձակութե և բազմամարդութե ․ որք ունին և փոխարքայս , զորս Պուղանիս կոչեն ․ և իշխանութիւն կմ պաշտօն նց ձգի ը̅ ամս երիս ․ և դատաւորս և սահմանակալս , զորս հսրկ անուամբ Մանտարինս կոչեն ․ որք բաժանեալ են յինն կարգս ․ ամն են գրագէտք և իմաստունք ․ և թիւ բոլորեցուն ասի թէ հասանէ ց13000 ․ սք պարտական են զգլխաւոր իրաց տալ համար նախայիշատակելոյ գերագոյն ատենից փէքինու ։ Եւ թէպէտ մեծ է և ը̅արձակ իշխանութի նց ամն , այլ ոչ կարեն զոք 'ի մահ մատնել 'ի բոլոր թգւրութե չինաց՝ առանց յայտնի հրամանի ինքնակալին ։ Նոյնպէս և այլ ամ վճիռք նց 'ի մեծամեծ իրս չունին ինչ զօրութի առանց հաւանութե և հաստատութե ինքնակալին ։

Յամ ատենս յայտնի ունի ինքնակալն զմի 'ի հաւատարիմ պաշտօնէից ․ որ է իբր լրտես և քննիչ ամ գործոց և գնացից մանտարինաց և փոխարքայից ․ և զամ պակասութիս , զոր ըմբռնէ 'ի գործս կառավարութե նց՝ գրով ազդ առնէ գերագոյն ատենի փէքինու 'ի ծածուկ ․ սակայն կարող է և յայտնի ամբաստանել ։ Պաշտօն նորա ոչ է փոփոխական , այլ կայեալ ը̅ կենաց ․ և ոչ կարէ յայլ վերագոյն պաշտօն ելանել ․ և ոչ անկանիլ երբէք յիւրմէ պաշտօնանէ ։ Եւ այս իմաստութբ սահմանեալ է այսպէս ․ զի մի յոյժ յառաջադէմն լինելոյ յայլ մեծագոյն իշխանութի՝ յանդուգնութե մղեսցէ զնա , և մի երկիւղն կորուսանելոյ զպաշտօն իւր , արգելցէ զնա յամբաստանելոյ ։

Բաց յայսմանէ՝ յառաջին ժմկս ինքնակալք չինաց սովոր էին ը̅ ժմկս ժմկս առաքել յամ նհնգս և [illegible] լրտեսս այս իմաստունս խոհականս և հաւատարիմս

ան;

աւղեկանալ Թագաւորաւ 'ի ժղ̃վրդենէ զգնացից փոխարքայից և մանտարինաց, Թէ ոչ վարին նք̃ ը̃ ժողովրդեան. զի քաջ գիտէին ինքնակալք Թէ դժուարին է յոյժ սոսկական ժողովրդեան մուտ գտանել յարքունիս, և զբողոքս իւրեանց, Թէ ունիցին՝ հասուցանել յականջս նց̃ ։ Եւ լրտեսքն յորժամ հաւաստեաւ գտանէին զոք յանցաւոր և հալածահարօղ ժողովրդեան, ունէին իշխանութի 'ի բանտ արկանել, և յայտնի դատաստանաւ դատել ։ Այլ զկնի անցանելոյ 'ի ձեռս Թաթարաց Թգ̃րական իշխանութե̃ չինաց, այս սովորութի խափանեցաւ 'ի պտճ̃ռս պէսպէս անկարգութ̃ց լրտեսից ։ Սակայն փոխ այնր ունին զայլ եւս սովորութի, որ անլուր է յայլ Թգ̃րութիս. Իւր զի ամ̃ պաշտօնատարք, ոպ̃ փոխարքայք, մանտարինք, և քղ̃քապետք պարտաւորեալ են ը̃ ձմկս ձմկս անկեղծութ̃ և խորին խոնարհութ̃ ինքնին խոստովան լինել զամ̃ յանցանս և պակասութիս, զոր յանցանեն 'ի մատակարարութ̃ պաշտաման իւրեանց, և գրով առաքել առ ինքնակալն. զոր եթէ ոք զանց առնիցէ, կամ̃ ջանայցէ պատրուակել և Թանգուցել՝ խստիւ պատուհասի ։

Գլխաւոր կանոնք վարուց կամ̃ օրէնք քղ̃քականք չինաց են երեք կամ̃ չորք ։ Առաջինն պատուիրէ գերագոյն և գրեթէ ա̃ծավայել պատիւ և հնազանդութի̃ ընծայել ինքնակալին ։ Երկ̃րդն՝ սէր, մեծարանս, հնազանդութի̃ յո̃մի և գութ՝ որդւոց առ ծնօղս, ծառայից առ տեարս ։ Եր̃րդն՝ յարգութի և ակնածութի̃ ժողովրդեան առ մանտարինս իբր առ նոյն ինքն ինքնակալն, զոր յանդիման առնեն. որք առ 'ի պահել զայս վեհափառութի, միշտ մեծահանդէս և արքայավայել շքով ելանեն 'ի հրապարակ ։ Չո̃րդն՝ սէր և փոխադարձ բարեկամութի և քաղցր յարգոյ և պատշաճագիր կենակցութի ժղ̃վրդեան ը̃ միմեանս ։ Զայսսիկ չորեսին կանոնս ունին նք̃ իբր առաջին սկզբունս և հիմունս խաղաղութ̃, բարեկարգութ̃, հաստատութե̃ և երջանկութ̃ Թգ̃րութ̃ իւրեանց. վս̃յ կարի նախանձայոյզ են 'ի պահպանութի նց̃. և յանցաւորաց դժնդակ պատիժս սահմանեալ կան առանց երբէք ներելոյ ումեք մեծի և փոքու ։

Բաց յայսցանէ ունին և այլ հիմնական օրէնս, որք ոչ սակաւ նպաստեն առ բարւոք կառավարութի Թագաւորութե̃ ։ Նախ՝ ոչ տալ ումեք 'ի մանտարինաց կամ̃ 'ի փոխարքայից պաշտօն 'ի նահանգի կամ̃ 'ի քաղաքի ծննդեան իւրոյ. զի մի՛ արհամարհեսցի 'ի ժողովր-

դեդէնէ եթէ յանմնչան զարմէ իցէ · կամ զի մի զօրացեալ ընտանացի՝ եթէ մեծազգի ումն իցէ · և ևս զի մի տացի նմա առիթ ակնառուն նպաստելով ազգատոհմի իւրոյ · և զի յաւէտ հաւատարիմ լիցի առ իշխանակալն, գոլով զերծ 'ի բնական աղէտից հայրենաբութեան: Երկրորդ՝ զորդիս գլխաւոր պաշտօնատարաց պահել յարքունիս ընդ պատրուակաւ աղնուական դաստիարակութեան · այլ ըստ ճշմարտութեան պահին նոքա անդ իբր պատանդք 'ի զգուշութիւն և 'ի սանձ հարց նոցա: Երրորդ՝ ոչ երբէք վաճառել զպաշտօն ինչ, այլ ձրի տալ այնմ, որ առաւել յարմարաւոր է և արժանի · վասնզի այնոքիկ յորժամ հանդերձեալ են ումեք 'ի մանտարինաց տալ զերևելի ինչ պաշտօն, բազում քննութիւնս առնեն զկենաց և զվարուց նորա: Չորրորդ՝ ոչ երբէք թոյլ տալ օտարականի ումեք ունել մասն 'ի քաղաքական կառավարութեան իւրեանց: Հինգերորդ՝ զի աղնուականութիւնք և իշխանութիւնք մի անցցեն ժառանգութեամբ որդւոց յորդիս · նմին իրի՝ բաց 'ի տոհմէ Կոնփուտիոսի, որոյ աղնուատոհմութիւն սերնդեամբ իջանէ, այլ համօրէն բնակիչք Չինու յերկու դաս բաժանեալ են · ընդ յիշխանաւորս և 'ի ռամկականս · վասնզի 'ի մեռանել փոխարքայի կամ մանտարինի, որդիք նոցա ոչ անցանեն 'ի տեղի նոցա իրաւամբք ժառանգութեան · ուստի չիք ոք 'ի Չին, որ 'ի պատճառս աղնուատոհմութեան զերծ իցէ 'ի գլխահարկաց:

Վեցերորդ՝ պահել միշտ պատրաստական բազմութիւն զօրս, առ 'ի ահարկու երևել սահմանակից տէրութեանց · և խափանել զամենայն ներքին ապստամբութիւնս: Եօթներորդ՝ անվրէպ հատուցանել վարձս կամ պատիժս ըստ արժանեաց գործոց, ոչ երախտաւորաց թագաւորութեան իւրեանց տալ անուն ինչ պատուոյ, կամ կանգնել կամար յաղթութեան · և կամ յանցաւորաց պատիժ ըստ յանցանաց անխնայաբար: Ութերորդ՝ մի երբէք թագաւորեսցէ կին, թէպէտ և պակասեսցեն արու զաւակք յարքայական զարմէ · և մի կարասցեն կանայք առնել զմճռկանութիւն · զի նոքա սահմանեալ են 'ի բնութենէ 'ի գործ առ ներքին տնտեսութեանց, 'ի ծնունդ 'ի սնունդ և 'ի դաստիարակութիւն զաւակաց: Իններորդ՝ միշտ ծաղկեցուցանել զարուեստս վաճառուց ըստ ամենայն տեղիս թագաւորութեան իւրեանց · զի անտի կախեալ կայ ոչ միայն հարստութիւն իշխանակալին, այլև կեանք ժողովրդեան:

Մարթ է յաւելուլ իբր տասներորդ օրէնս · զի 'ի մեծամեծս և 'ի հնարաւորութիւնս չէ զի երբէք մուծանել իրաւագէտս և փաստաբանս 'ի մեկնել զօրէնս, և 'ի պաշտպանել կողմանց ոսոխաց . վ̃ն զի օրէնք չինաց սակաւ են և մեկն և պարզ . վ̃յ և չունին պէտս բացատրութե̃ . այլ այր իւրաքանչիւր ինքնին վարէ զդատ իւր , դրով մատուցեալ զպ̃տճառս իւր դատաւորաց :

Բաց յայսց առանձնակի օրինաց , որք համարեալ են իբր գլխաւորք՝ ունին և այլ վ̃ճն օրէնս և սովորութիւնս մասնաւորս , զորս մեծապէս ներբողեն հայրն քօնթի և այլք իբր իմաստունս , արդարս և կենցաղօգուտս . և յիրաւի , զի թէ ոչ բովանդակ՝ գէթ մեծ մասն ն̃ց այնպիսի է . սակայն լաւուն օրինաց սակաւ նպաստէ առ բարեկարգութ̃ թ̃գ̃րութե̃ , եթէ ոչ պահպանութի̃ ն̃ց նուաղ իցէ . իսկ 'ի չին՝ ասէ սալմօն հիմնեալ 'ի վկայութե̃ բազմաց մատենագրաց , որք գրեն զչինաց թէ , „ժողովուրդն և մանտարինք և պաշտօնա„ տարք թ̃գ̃րութե̃ ոչ միայն զհ̃կ̃ռկն օրինաց գործեն , „ այլև յարաժամ մարտնչին ը̃դ նոյն իսկ օրէնս . և „ ը̃դ իմաստուն սահմանադրութի̃ս թ̃գ̃րական̃ս . մինչ„ թէ 'ի գերադոյն գործառնութ̃է մինչև ցյետինն բո„ վանդակ մոլութի̃ է և յոռի մատակարարութի̃ || : Այս բան սալմօնի թուէր փոքր մի անցանել ը̃ս չափ . բայց ներբող հօրն քօնթեայ , որ երկնաչափ բարձրացուցանէ զ̃ք̃ղ̃քական բարեկարգութի̃ չինաց իբր մի միայն յծի , թէ չիցէ առաւել , գէթ հաւասարի նմ̃ ը̃ս չափազանցութե̃ : Վ̃յ զմիջինն պարտ է գնալ շաւիղ . և ասել թէ ո̃չ յայլ թ̃գ̃րութիս գտանի լաւուն և յոռուն , նոյնպէս և 'ի չին . այն զի՝ զուրկ գոլով ն̃ց 'ի ճշմարիտ կրօնից ա̃ծպաշտութե̃ , որ սանձ մեծ է 'ի զսպել զմարդ 'ի չարեաց , երևի թէ առաւելուն անդ անկարգութի̃ք . զի ըստ հրաման օրինաց , և արտաքին բռնութե̃ սակաւ զօրեն , եթէ զերկիւղ ա̃յ , որում յայտնի են ա̃մ խ̃հդք մարդկան չունիցի ոք 'ի սրտի : Այսչափ ինչ վ̃ն կանոնադրութե̃ց չինաց . արդ՝ ասասցուք ինչ և վ̃ն արտաքին շքոյ և փառաց ինքնակալին : Առաջին ինքնակալք բնիկ չինացիք հազիւ երբեք ելանէին 'ի հրապարակ , և ուր ուրեմն ցուցանէին զանձինս ժողովրդեան . իսկ այժմեան ինքնակալք , որք են յազգէ թաթարաց , զմիջին կալեալ ճ̃նպ̃հ , առաւել ընտելս ընծայեն զանձինս ժողովրդեան , և յաճախ ևս ելանեն արտաքս . զ̃ի յամսեանն իբր չորիցս . և գրեն թէ յա̃մ ամի ելանեն հանդերձ բազմութ̃բ իշխանաց և զօրաց 'ի զննել զսահմանս թաթարաստանու , և 'ի սթափումն որսոյ անդ 'ի թաթարաստան : Եւ յորժամ մեծամեծ խանք թաթարաց իբր երեսուն հի̃ քառասուն ազգայական շքով գան 'ի յարգութն ինքնակալին, և ընծայեն զամավորական հարկս. երբեմն և ոմանք 'ի նցէ ընծայեն զդստերս իւրեանց ինքնակալին 'ի կնութ, և ինքնակալն տայ զդուստր իւր նց. որոց է իբր պաշտպան ըդէմ արեւմտեան կմ ղալմուխ թաթարաց, որք հզօրագոյն են քն զսոսա : Անդ երեւի մեծաշուք փառք ինքնակալին, յորժամ բազմեալ կայ յատենի ունելով զիւրև երեսուն կմ քառասուն խանս արքայակերպս. և բազմութն իշխանաց 'ի զարդս փողփողեալս, և այլոց ստորին պաշտօնէից հազարաւորաց. որ ըստ պատմելոյ հարց յսեանց, որք ականատես եղեն այնմ, զարմացուցանէ զտեսօղն : Երբեմն և շրջին յայցելութ նհնգաց և գլխաւոր ջոկաց իւրեանց, բայց սակաւաթիւ արամբք և սուրհանդակօքն գնացիւք և իբր ծպտեալ. սակայն ծանուցեալ են ընդ ամ տեղիս. և յամ ջոկս, որք ընդ առաջ լինին նմա 'ի ճնպհի. և յամ դժուարին և 'ի վտանգաւոր կիրճս և անցս ճանապարհաց կարգեալ կայ բազմութն զօրաց 'ի պաշտպանութն նմա :

Այլ գերագոյն շուք և փառք արքայական մեծաւ երեւի յորժամ հանդիսիւ երթայ 'ի տաճարն մատուցանել զոհս : Ի սկիզբն այնր շքեղապանծ հանդիսի երթան զոյգ զոյգ յերկու կարգս քսան և չորս փողահարք. և նոյնչափ թմբկահարք ունելով 'ի գլուխ պսակս ոսկիս : Զկնի նց այլք քսան և չորք նոյնպս պսակաւորք ոսկի պսակօք. և 'ի ձեռս նց գաւազանս վեց և մինչև ցութ ոտնաչափ երկայն ներկեալ և ուրեք ուրեք ոսկեզօծ. որոց զհետ երթան հարիւր զինուորք տիգաւորք, տէգքն նց լուսնաձեւ. և զկնի նց հարիւր տասնապետք ունելով 'ի ձեռս լախտ կարմիր նկարեալ գունազեղ ծաղկօք և ոսկի պատկերօք. և առ նոքօք երկու զօրապետք տիգաւորք : Այս հինգ խումբք կացուցանեն զառաջին դասն :

Յետ այնր գան չորեքհարիւր լապտերք ճարտարագործք. և նոյնչափ ջահք փայտեղէնք ոսկեզօծք, որք վառին իբրև զմոմեղէն ճրագս մեր. զի իւղային են. և երկերիւր նիզակք. զորոց կախեալ կան մեծամեծ փունջք կմ ծոպք մետաքսեայք. և քսան և չորս դրօշակք, յորս նկարեալ կան երկոտասան կենդանակերպք. և այլ յիսուն և վեց համաստեղութիւնք երկնայինք. ապա երկերիւր հովահարք, այս է՝ ելեփազէ՝ ոսկեզօծք վեհապանծկարք. և քսան և չորք վանք կմ հովանոցք մեծագինք. զկնի այր արքունի պաշտօնեայք զարդարեալք 'ի հանդերձս չինաստանազարդա

բարձ

բարձեալ տանին սեղան փոքրիկ. և նմ՟ անօթք որ 'ի վր՟ նր՟ 'ի մաքուր ոսկւոյ:

Զկնի այսր նմ՟ երթայ ինքնակալն արքայապանծ փառօք, հեծեալ յերիվար օդապարիկ պալարակապ. ունելով զիւրև հարիւր պատանիս ազնուականս, որք են անձնապահ նր՟, և վերամբարձ տանին զվրանն կմ՟ զհովանոցն մեծ բովանդակ ոսկեզարդ և ակնակուռ գործ սքանչելի, որ հովանի առնէ ինքնակալին և երիվարի նր՟, և զկնի ածեն վեց կմ՟ ը̅ այլոց տան ձիս ազնուականս ասպաստանիկս. զարդարեալս ոսկեսար կազմածովք, և ասղնէգործ և ականակուռ վերարկուօք ը̅ զիլփոշիւք: Զկնի ինքնակալին երթան իշխանք արքայազունք, և նախապատիւ մանդարինք, և փոխարքայք, և գլխաւոր պաշտօնեայք արքունեաց, ամէն 'ի հանդերձս պատշաճեալս իւրեանց պաշտաման: Յետոյ գան հինգ հարիւր երիտասարդք ազնուականք. ունելով ը̅ իւրեանս իբր հազար սպասաւորս կմ՟ զինուորս զգեցեալս կարմրագոյն զգեստս մետաքսեայս զարդարեալս ոսկեթել ասղնէգործ աստղանշանօք: Զայս խումբ մարթ է ամբողջս կոչել զերդաստան արքայական. զի ա՟ք ամէն յարքունիս բնակեն: Յետ սց՟ արք երեսուն և վեց բարձեալ տանին գահ անծածկոյթ, որ նման է յաղթական կառաց. և այլ ևս արք հարիւր և քսան տանին զայլ գահ ծածկեալ. որ այնչափ մեծ է, զի մարթ է նստել 'ի նմ՟ աւելի ք՟ քառասուն անձանց: Ապա երթան չորք կառք՝ որոց երկու առաջինք ձգին 'ի փղաց, իսկ այլ երկուք յերիվարաց. և առ իւրաքանչիւր գահիւք և կառօք կարգեալ կան արք 50 'ի պահպանութ՟. և կառավարքն, և փիղք, և երիվարք առհ՟րկ զարդարեալ են 'ի զարդ գեղապանծ:

Հուսկ յետոյ երթան երկերիւր մանդարինք դրագետք կմ՟ վճ՟ռք. և երկերիւր զօրապետք ամ՟քն գեղաշուք զգեցեալ: Այս յոգնախումբ և մեծահանդէս չու այնպիսի իմն սքանչելի կարգաւ, և վսեմաքայլ գնացիւք և անշշունչ լռութ՟ երթայ 'ի տաճար անդր, մինչև յիրաւի հիացուցանել զամենեսին, որք նորոգ տեսանեն զայն:

ԺԴ. Նշան կմ՟ Կնիք. Վերտառութիւն. Մաքսք և Զօրք Չինաց:

Ոմանք ասեն թէ նշան թագաւորութ՟ չինաց են երեք մարդկային գլուխք սեաւք՝ երկուքն առ միմեամբք և հրդն 'ի վր՟ նց՟ եդեալ. բայց վերջինն. և պտճռ՟ վրիպանաց նց՟ թուի լինել այն, զի 'ի սեղանն յորոյ վր՟ ինքնակալն մատուցանէ զոհս 'ի տաճարի, նկարին հինգ մարդկային գլուխք. այլ երեւի թէ այն հինգ գլուխք զայլ ինչ խորհուրդ ունին : իսկ բուն նշան թգրու՟ չինաց է վիշապ, որ՟ հաստատեն համօրէն մատենագիրք, որք գրեցին զպ՟րութ՟ նց՟ զոր սահմանեաց փօհի առաջին ինքնակալ նց՟. որ՟ ասացաք 'ի վերոյ :

Վերտառութ՟ ինքնակալին է այսպիսի. « Որդի երկնից կմ՟ այ՟. (զի բառս երկինք հոմ է առ նս՟, որ նշանակէ երկինք միանգամայն և Ած՟.) Ինքնիշխան տր՟ երի՟. փաստաբան և միջնորդ ժողովրդեան. և հայր հայրենեաց ». զայս վերջին անուն 'ի մեծագոյն փառս համարին անձանց ինքնակալք չինաց. զի առաւել սիրելի է նց՟ հայր անուանիլ հայրենեաց և ժողովրդեան՝ որով 'ի սէր իւրեանց ձգեն զժողովուրդն, քան տր՟ կմ՟ իշխան, որ բռնութ՟ իմն ունի նշանակ :

Մուտք կմ՟ հասք թգրու՟ չինաց 'ի զնզն՟ գլխոց հաւաքին. 'ի գլխահարկաց, յորմէ ոչ ոք է զերծ և ոչ իսկ մանկտիք. 'ի մաքսից, 'ի բաժից, որք առատապտղաբերեն սակս ծաղկել՟ գոլոյ վաճառականու՟ յերի՟ նց՟. յընչից յարքունիս առելոյ, որ յաճախ հանդիպի. 'ի կապալաց, որք եդեալ կան 'ի վր՟ կալուածոց, և այլ ամ՟ ընչից ժողովրդեան. և յայլ զնզն՟ հարկաց. որք յիրաւի ծանր են. զի ասի թէ ամ՟ն պարտական են տալ յարքունիս ամի ամի զտասներ՟դ մասն ամ՟ հասութից և շահուց իւրեանց, զոր շահին. որ՟ եթէ յամին շահի հարիւր դհ՟ զտասն պարտական է արքայի :

Այլ ասէ հայրն քօնթի եթէ չինացիք չեն կարի աշխատաւորք և ճարտարք 'ի շահիլ, և երկիր նց՟ չէ այնպէս արդաւանդ, ապաքէն թգրութ՟ չինաց լինէր մի յաղքատ և 'ի յետին թգրուեց. բայց ժրաջան գոլով ժողովրդեան շահին այնչափ, զի յետ վճարելոյ զծանր ծանր հարկս, մնայ և իւրեանց բմ՟ : Դիւրին իմն եղանակ ունի տ՟րուն չինաց 'ի հաւաքել զհարկս 'ի ժողովրդենէ. զի ամի ամի առնեն անդ ցուցակ համօրէն տանց և ընչից նց՟, նշանակել՟ հանդերձ իւրաքանչիւրոց զպարտս, զոր ունին տալ արքայի, մի մի օրինակս բևեռեն 'ի վր՟ դրանց ամ՟ տանց : Եւ իւրաքանչիւր տանուտէր պարտական է ըստ այնմ գրուածոյ ինքնին տանել ինչ գանձանակն

բըռ֊

բռնութն՟ տանել և վճարել զնոյն գումար մանտարինաց կմ՟ ք՟ղքապետաց եր՟դ կարգի ք՟ղքաց ։ ապա թէ ոչ՝ ը՟ ծանր ծանր պատժովք անկանի ։ իսկ մանտարինք տան զհաշիւ գ՟ւռապետաց ։ և գ՟ւռապետքն վերագոյն ատենի փեքինու ։ Ուստի և առանց ծախուց թգ՟րուն, զոր պարտ էր ծախել 'ի հարկապահանջս, հարկք ժողովրդեան հաւաքին 'ի գանձս արքունի ։ Թող զայն վնաս, զոր հարկապահանջքն խորէին անտի ։ ոպ՟ տեսանի յայլ տ՟րութիւնս ։

Արդ՝ գումար բոլոր մտից տ՟րուն չինաց հաւաքել յամ՟ նախակարգել իւրոց ըստ հաշուէի հօրն քօնթեայ ։ որ հետամուտ եղև գիտել զայն ճշտիւ՝ հասանէ ց20 միլիոն և 600000 ստէրլին լիրէ անգղիական ։ որ առնէ իբր 43 միլեոն և 200000 վենետիկեան ոսկի դահեկան ։ Արդարև մեծ է այս գումար, բայց առ համեմատութե՟ այնպիսի ը՟արձակ և բազմամարդ Տի՝ սակաւ է ։ ահա մի միայն գաղղիա, որ փոքր ինչ է առ համեմատութե՟ Տին չինաց ։ և չունի գէթ զեօթներ՟դ մասն ժողովրդեան նց՟, սակայն մուտք նր՟ հասանեն գրեթէ 'ի կէսն մտից չինաց ։ Եւ անգղիա որ փոքր ևս է ք՟ զգաղղիա, սակայն 'ի ժմկս պտ՟զմաց ը՟ ամս բզ՟մս վճարեաց յարքունիս իբր կիսով չափ մտից չինաց ։ իսկ 'ի ժմկս խաղաղութ՟ե սովորական մուտք նր՟ է իբր չոր՟դ մասն մտից չինաց ։ 'ի մտից աստի մեծ մասն ծախի 'ի վճար թոշակաց կուսակալաց, քաղաքապետաց, զօրավարաց և զօրաց ։ և 'ի պէտս հն՟րկաց շինուածոց կամրջաց, ջրմղաց և ճանապարհաց ։ իսկ յաւելեալն հաւաքի 'ի գանձն արքունի ։

Նոյնպ՟ս և ըստ զինուորական զօրութ՟ե կարի զօրաւոր է այս տ՟րուն ։ զի ասեն թէ 'ի ժմկս խաղաղութ՟ե, յորժամ չէք ուստեք երկիւղ պտ՟զմի՝ սովորական թիւ կանոնաւորել զօրաց նր՟ հասանէ ցհինգ միլիոն ։ որք ըստ առաւել մասինն են հեծելք ։ լոկ փեքինն արքայանիստ ք՟ղքն ունի 'ի պահպանութ՟ի իւր միջապատրաստական 160 հազար հեծելս սպառազինելս սուսերօք և նետիւք ։ որք ունին և հրազէնս ու՟ թօփս, զոր յեւրոպացւոց ուսան ձուլել ։

Վախճան այսչափ յոգնախումբ զօրաց է պահել 'ի խաղաղութ՟ե զՏն ։ բայց զօրք չինաց ըստ վկայելոյ հօրն քօնթեայ՝ առաւել 'ի զարդ են և 'ի շուք թգ՟րութ՟ե նց՟, ք՟ 'ի դիմամարտել ը՟դէմ թշնամեաց 'ի պտ՟զմի ։ զի մեղկ են և կանացի և 'ի զինուորական կրթութիւնս թերի, մ՟ւնդ թէ անվարժ ։ ոչ միայն բնիկ չինք, այլև

սե

մերեալքն 'ի Թաթարաց · զի և ն՟ք խառն ը՟ չինանաւկէլ, զնոյն զգեցեալ ունին զվարդապետութի : Եւ թէպ՟տ 'ի սկիզբն մարտին քաջութ՟բ յարձակին, այլ ոչ զօրէն տոկալ յերկար · յայն սակս արևմտեան Թաթարք առ ոչինչ համարին զանթիւ բազմութ՟ն ն՟ց · և ծաղր ևս առնեն, ասելով թէ խրխնջիւն միոյ թաթար երիվարի բաւական է չփոթել զբովանդակ հեծելազօրսն չինաց · և սակաւաթիւ զօրք եւրոպացւոց քաջավարժք 'ի մարտս զինուորութե՟ն կարող են զհազարաւորս նոցին վանել : Զի ճարտարապետութե՟ն զինուորական դեռ ևս անկատար է առ չինս · վ՟ս զի հզօրագոյն ամրութ՟իք և պատուարանք գլխաւոր ք՟ղքաց ն՟ց ոչ այլ ինչ են, եթէ ոչ հողալից պատնէշ պաշտպանեալ անզօր և անպիտան երկաթի հրազինուք, կ՟ թօփերով · և աղիւսակերտ աշտարակօք : Սակայն այժմ յետ միանալոյ չինաց ը՟ Թաթարս, չունին ուստեք երկիւղ, եթէ ոչ՝ գուցէ 'ի ղալմուխ Թաթարաց · բայց և ն՟ց զօրութի այժմ՝ սակաւ է, զի են բաժանեալ 'ի բ՟զմ փոքրիկ իշ՟խանութիս ինքնագլուխս, որք միշտ թշնամութ՟բ են ը՟ միմեանս · զոր ինքնակալն չինաց գուն գործէ միշտ արծարծանել և աճեցուցանել :

Ասի թէ թ՟գւորութիւն չինաց օր ը՟ս օրէ բաշխէ զօրաց իւրոց որիզ, միս, և ձուկն առ 'ի դարման ինքեանց և ընտանեաց ն՟ց · և թոյլ տուեալ է ն՟ց գործել և զարհեստ իւրեանց · վ՟ս զի ոչ են միշտ զբաղեալ 'ի գործ զինուորական, այլ միայն 'ի սահմանեալ աւուրս ինչ ժողովին · ն՟մն սովորութի է և յայլ թ՟գւորութիս, ուր գիւղականք գրեալք 'ի զինուորութի, միանգամ կ՟մ երկիցս յեօթնեկի ժողովին առնել զզինուորական կրթութիս · իսկ յայլ աւուրս պարապին 'ի գործս իւրեանց :

ԺԷ. Կրօն Չինաց :

Ս՟ն նախնի կրօնի կ՟մ դենի չինաց մեծամեծս գրէ հայրն լուդովիկոս քօնթի 'ի թուղթն, որ առ պուխըլօն կարդինալն : Զի հաստատէ նա անդ, թէ ազգն չինաց իբր 2000 ամօք յ՟ռջ ք՟ զգալուստ փրկչին մերոյ պահեաց մաքուր և անթերի զծանօթութի միոյ և ճշմարտին ա՟յ · և ը՟ բովանդակ ժամն ը՟ այն այնպիսի իմն տարօրօք պաշտեաց զճշմարիտն ա՟ծ, որ կարէր լինել օրինակ և ուսումն քրիստոնէից : Եւ թէ հօամթէ երդ ինքնակալ ն՟ր, որ ն՟մ 'ի վեր անդր նշանա նակեցաք, Թգ՟րեաց 2697 ամօք յռ՟ջ ք՟ զք՟ս, կանգնեաց տաճար բազմօք յռ՟ջ ք՟ զտաճարն Սողոմոնեան ուր չինք պաշտէին զճշմարիտն ա՟ծ զոհիւք և պատարագօք :

Իսկ Քօվլէնհիօ Թոռն Նոյին հօամ Թեայ հիմնադիրդ ինքնակալ՝ ասէ թէ մի միայն տեղի չէ բաւական 'ի պաշտօն գերադոյն արքայի աշխարհաց, կացոյց քահանայս 'ի դուռս դուռս վերակացու լինել զոհից, պատուէր տուեալ ն՟ց ա՟մ արթնութ՟ հսկել, զի զոհք և պատարագք անխափան մատուսցին ա՟յ ը՟ ա՟մ տեղիս. և պաշտօնն ա՟յ կատարեսցի ա՟մ խոնարհութ՟ պատկառանօք և երկիւղածութ՟ : Եւ թէ յայն ա՟մ ժամս գտան առ. չինս հաւատացեալք ճշմարիտ սրբութ՟ պերճացեալք, հոգւով ա՟յ լցեալք, և կարի խիստ ճգնաւորք 'ի պահպանութ՟ կանոնաց մաքուր և ն՟ր սիրոյ. այնպէս՝ զի զօրութ՟ ն՟ց և զանէր՝ հաստատեաց ա՟ծ և զգանչելեօք : Եւ թէ ոչ ունէք յաղագս այնպիսի ճոխութ՟ աստուածեղէնեաց ա՟ծ զպարգև բարերարութեց և շնորհաց, ող՟ ազգին չինաց :

Այս զայսոսիկ և զայլ սոցին նման բանս գրէ նա վ՟ն նախնի չինաց 'ի գիրս, որ կրկին անգամ տպագրեցաւ 'ի փարէս 'ի գաղղիական բարբառ, ը՟ն յամին 1696 և 1697 սովին մակագրութ՟ Նորոգ յիշատակագրութ յաղագս այժմու համգամանաց չինաց աշխարհի : Սոր գանի լինչ լինէ ը՟դէմ ն՟ր գրոց և ը՟դէմ ողջամիտ վկայութե ն՟րյ եկեղեցւոյ : Յայն սակս գերահամբաւ ուսումն գաղղիական եկեղեցւոյ յամի տ՟ն 1700 'ի հոկտ՟. 18 'ի փարէս արքայանիստ քղ՟քի, 'ի ժողովն հարիւր վաթսուն ա՟ծ աբան վ՟դպետաց գումարելոց 'ի հոյակապ սորբոնեանն ճեմարանի, յետ երկամեայ քննութ՟՝ հանդիսիւ հերքեալ դատապարտեաց զբ՟զմ նախադասութս պարունակեալս յայն գիրս: Եւ 'ի վախճանի յայսր արար սրբազան համալսարանն, թէ ոչ են ն՟ր կամք հաստատել զայլ մնացեալս, որք պարունակին յայն գիրս : Եւ յիրաւի. վ՟ն զի բաց 'ի Թղթոց անտի, յորս ճառէ զկրօնից ն՟ց, և յայլ Թուղթս ն՟ր գտանին չափազանցութիւնք. յորոց սակի է և այն, յորում զչ՟րութն չինաց դնէր 'ի վերոյ ք՟ զհռոմի կարգ և պայման ընդունէ ամբաւանաց : 'Ամէ
' ազգութիւնք (ասէ) ը՟ հո՟րդ ընթացից իւրաց Ցն անկեալ
' են ը՟ տկարութ՟ տղայութ՟ . ծնեան անկերպարան և
' անկատար, և ող՟ մարդ զարգանան և կատարեն
' անցմամբ ժմկի . Իսկ չին եղեն զերծ 'ի հ՟նրկ օրի-
' նաց ընու՟, և ող՟ թէ յա՟յ (անմիջապէս) հիմնեալ

• էր այն եղանակ կառավարութեան նց որ ձեռնհասեալ
• կառավարել 'ի սկզբան անդ իւրում, քան թէ այժմ
• յետ փորձոյ և հաստատեալ իբր չորեք հազար ա-
• մաց ||:

Այլ թողեալ զայսպիսի անհիմն և ինքնաստեղծ զրոյցս, ասելի է թէ ազգն չինաց յռ̃ջ ք̃ զք̃ն կայր 'ի խաւարի կռապաշտութեան ը̃ օրինակի այլոց համօրէն ազգաց հեթանոսաց. զի ը̃ յայտնաբարբառ վկայութեանց ս̃բ գրոց հին և նոր կտակարանաց, բաց յազգէ եբրայեցւոց՝ ոչինչ այլ ազգ ուղղոյն, կամ ժողովուրդ միացեալ 'ի մի մարմին հասարակութեան, առ որս ոչ առաքեցան մարգարէք, դաւանեցաւ զՃշմարիտն Ած, և պաշտեաց զնա ուղ̃ պաշտամամբ: Ասացաք ազգ ուղղոյն և ժողովուրդ, առ որս ոչ առաքեցան մարգարէք. վ̃ զի յայտ է 'ի նոյն ս̃բ գրոց, թէ գաւմանաւոր անձինք ոմանք, որք ծանեան զՃշմարիտն Ած, և սրբութ̃բ պաշտեցին զնա. որպիսի ոք Մելքիսեդեկն էր, և Յոբ եդովմայեցի. գուցէ և այլք ոմանք, զորս ոչ յիշատակեն ս̃բ գիրք: Նոյնպէս յայտ է թէ նինուէացիք հեթանոսք հաւատացին 'ի Ճշմարիտն Ած քարոզութ̃բ Յովնանու մարգարէի, և ապաշխարեցին. և առ ժամ մի պաշտեցին զնա. ուսան և զՃշմարիտ հաւատս 'ի գալոց մեսիային: Իսկ առ չինացիս չեղեւ առաքումն մարգարէի. ապա կացին մնացին 'ի նախկին կռապաշտութեան իւրեանց: Այլ թէ զինչ պաշտէին, չէ յայտ. սակայն յօրինակէ այլոց ազգաց հեթանոսաց՝ երևի թէ և նք պաշտէին զարեգակն և զլուսին ը̃ պէսպէս անուամբ. ո̃պ պարսիկք և արաբացիք և այլք: Իսկ յետոյ եղեն 'ի նս̃ զնզ̃ն աղանդք, որոց գլխաւորքն, որք կան մինչև ցայժմ, երեք են:

Առաջինն է այն, զոր հնարեաց Լի լաօքին կամ Լաօքուն իմաստասէր չինացի. որ ը̃ աւանդութ̃ չինաց եղև փոքր մի յռ̃ջ ք̃ զկօնփուսիոս: Սա գրեաց բզմ̃ գիրս բարոյականս, յորս ուսուցանէ արհամարհել զփառս և զփարթամութիւն. հրաժարել յ̃շէ. սիրել զառանձնութիւն, որ ամբոխեալ զմիտս 'ի վերայ ջ̃ զերկրաւորս. և տայ թօթափել 'ի բաց զլուծ երկրաքարշ և նիւթականն: Ուսոյց թէ մի միայն է էակ գերագոյն յաւիտենական կամ Ած. որ թգ̃րէ 'ի վ̃ր այլոց ածոց՝ ո̃պ թգ̃ր 'ի վ̃ր իւրոց ստրկաց. բայց նիւթեղէն և մարմնաւոր քարոզէր զնա: Կարծի իմն հետամուտ եղև քիմիական արուեստի. զորոյ զգիւտ ոմանք սմա ընծայեն. այլև 'ի խնդիր փիլիսոփայական քարի. և այնպէս թէ գտանի հիւթ ինչ, որով մերթ է մարդոյ անմահանալ: Վ՟յ աշակերտք ն՟ր 'ի խնդիր լեալ այնմ հիւթոյ, ետուն զանձինս 'ի մոգուե՟. և այն աղանդ ն՟ց 'ի սուղ ժմկի համասփիւռ ծաւալեցաւ 'ի բոլոր Տ՟ն չինու, մինչև կանանց անգամ զհետ լինել այնմ առ 'ի գտանել զայն դեղ անմահութե: Զկնի ժմկաց այս իմաստասէր էանց 'ի թիւս ա՟ծոց չինաց, զոր մինչև ցայսօր պաշտեն ա՟ծային պաշտամամբ. որում կառուցանեն և տաճարս: Երկրորդ աղանդ ն՟ց է այն, զոր ուսոյց կոնփուտիոս գերահռչակ փիլիսոփայ չինաց, որ հիմնի 'ի բնական լոյս բանի, կմ՟ է նոյն իսկ բնական օրէնք: Սա 'ի գիրս իւր հաստատէ զգոյութի միոյ ա՟յ. զոր ասէ լինել էակ գերագոյն, ամենակատար, և սկիզբն և աղբիւր ա՟մ: Եւ եւս թէ բանն մեր է ածանցումն իմն կմ՟ հաղորդութի ա՟ծութե. որոյ գերագոյն օրէնք է համաձայնութի բնութե ը՟ բանի. և այն ա՟մ 'ի կեանս մարդկան՝ որ հկ՟կի այսց երկուց սկզբանց կմ՟ կանոնաց, ի՟ն բնութե և լուսոյ բանի, ոչ գոյ յերկնից. երկինք ասելով՝ իմանայ զա՟ծ. վ՟ն զի 'ի բարբառ չինաց չիք բառ ինչ սեփական ա՟յ: Սա ո՟ղ սպասմանն՝ ծնաւ 'ի քանթօն նէհնգ 'ի զարմէ հօամթեայ ինքնակալին իբր 600 ամօք յ՟ռջ ք՟ զ՟քս. և 'ի մանկութէ ետ զանձն յուսումն փիլիսոփայութե, մ՟ւ՟նդ բարոյականի. գրեաց բզ՟մ գիրս բարոյականս. յորոց ոմանք կորեան, և ոմանք կան մինչև ցայժմ. և աշակերտեաց զբզ՟մս 'ի չինաց. բայց ոչ երբէք քարոզեաց զանձն մարգարէ կմ՟ առաքեալ կմ՟ ն՟ր առ 'ի պաշտօն ը՟ունել 'ի ժողովրդենէ: Մեռաւ հգ՟ ամաց. ը՟ որ սուգ մեծ էառ համօրէն Տ՟ն չինաց. և 'ի յիշատակ ն՟ր, ինքնակալք չինաց յամ՟ նէհնգս կառուցին ապարանս, կմ՟ ը՟ ասելոյ ոմանց տաճարս. ուր ամի ամի 'ի սահմանեալ աւուրս ինչ ժողովին դպրապետք և իմաստունք առնել զյիշատակ ն՟ր և ընծայել նմա զպատիւ կմ՟ զպաշտօն իմն. 'ի ճակատ այնր ապարանից կմ՟ տաճարի գրե՟լ կայ գլխագրովք այսպիսի վերտառութի:

'Մեծի ուսուցչի, և նախապատիւ վ՟պետի, տաս-
• քինւոյ և ս՟րյ, այնմ՝ որ ուսոյց ինքնակալաց և
• Թագաւորաց ||:

Յայսմանէ պ՟տճառս առեալ՝ ասացին ոմանք թէ չինք ա՟ծային պաշտօն ընծայեն կոնփուտիոսի. ուստի և ունին զնա իբր մի 'ի չա՟ծոց իւրեանց: Բայց այլք հաստատեն և ասեն՝ թէ այն չինուածք ոչ են տաճարք կմ՟ աղօթատեղիք, այլ ճեմարանք իմաստասիրաց • և պատիւն և պաշտօնն զոր անդ ընծայեն կոնփուտիոսի՝ ոչ է ներգործութ՟ն կրօնի, այլ միայն քաղաքական իմն պաշտօն, զոր սովորութ՟ի է ընծայել մեծի ումեք, կ՟մ երախտաւորի հայրենեաց • որպէս է կոնփուտիոս առ չինս • այլ կրօնն, զոր ուսոյց նա՝ այժմ խոպան բարձեալ է, կ՟մ առ սակաւս մնացեալ • վ՟ն զի այժմ համօրէն չինացիք կ՟մ գլխովին անա՟ծ են, և կ՟մ կռապաշտ :

Իսկ եր՟դ աղանդն, որ է հնդկաց կրօն չինաց՝ է նոյն իսկ դենն գլխեղայ 'ի բ՟մ ժմկաց մուծեալ անդր, և հաստատապէս արմատացեալ : Սք՟ պաշտեն զՖօ կ՟մ Ֆօէ չ՟ծն • որ ը՟ս հօրն քոնթեայ է Լա չ՟ծն գիպետաց և թաթարաց : Բայց 'ի սմանէ ունին և այլ անհամար կուռս մեծամեծս և մանունս ոչ միայն 'ի մեհեանս, այլև 'ի տունս, 'ի նաւս, և յամ՟ անկիւնս փողոցաց : Յամ՟ կուռս չինաց երեք են գլխաւորք • Զառաջինն կոչեն Բագին անմահութ՟ե • որ է դրօշեալ մարդակերպ հսկայաձև և մեծափոր բազմեալ ծնկնածալ : Զերկրորդն կոչեն Բագին հեշտութ՟ց • որ նոյնպէս հսկայաձև է • զի բարձրութ՟ի նր՟ է քան տասնչափ : Իսկ զեր՟դն՝ զոր սովորաբար ը՟ մէջ երկոցունց ա՟ջ կանգնեն 'ի մեհեանս, կոչեն Լանկ արքայ • բարձրութ՟ն նր՟ է երեսուն տասնչափ • և 'ի գլուխն ունի պսակ ոսկի : Բաց 'ի մարդակերպ կռոց, ունին և ուրուականս դրօշեալս անասնոց • ը՟պ կապկաց, փղաց, վիշապաց և՟ն, զորս պաշտեն ա՟ծային պաշտամամբ • դուցէ՝ ասէ հայրն քոնթի, ը՟ պատրուակաւ, թ՟ Ֆօ չ՟ծն փոխակերպեալ իցէ յայն անասունս :

Բայց այնչափ է խելագարութ՟ն նց՟ յայսմ մասին, զի զնոյն կուռս զոր իբրև զա՟ծ պաշտեն, երբեմն 'ի յետին անարգութ՟ն արկանեն : Քանզի պատմի թէ յորժամ խնդրեն ինչ 'ի ն՟ցէ, եթէ երկարեսցի կատարումն խնդրուածոց իւրեանց, այնուհետև փոխեալ զպաշտօնն յանարգութ՟ն և 'ի նախատինս, սկսանին հայհոյել և նզովել զկուռսն • * Ո՛վ դու ապերախտ
• (ասեն՝) այսպէս հատուցանես ծառայութեանց մերոց • ահա
• բնակեցուցաք զքեզ 'ի հոյակապ տաճարի, և զօր
• հանապազ մատուցանեմք քեզ առատապէս առ
• ձիկս կերակրոյ և խունկս • իսկ դու յետ այսր ամ՟
• անտես առնես զմեզ 'ի կարիս մեր || : Եւ այսու ոչ շատացեալ, երբեմն պարան ևս արկեալ 'ի պարանոց կռոցն, ընկենուն 'ի վայր, և ը՟ քարշ ածեալ ը՟ փողոցս ձգձգեն 'ի տիղմս և յաղբիւս :

Իսկ եթէ դէպ լիցի յայնժամ ը՟ս բերման իմն հաստա-

նել խնդրուածոց իւրեանց · վճռեալ առնուն զդրօշեալն լուծանեն և մաքրեն, և մեծաւ հանդիսիւ տարեալ անդրէն 'ի տաճարն, դնեն 'ի տեղի իւրեանց · և անկեալ առաջի նր՟ երկիրպագանեն, և պէսպէս պատճառանս կցկցելով, անբասիր առնեն զանձինս :
* Գիտես' (ասեն,) զի մեք մարդիկ եմք կարճամիտք ·
‚ առաւել ք̃ զոր պարտն էր շտապեցաք · այլ վնասն
‚ 'ի քէն է · զի չէր պարտ և քեզ այսչափ ծանրալուր
‚ լինել, և տալ մեզ այսչափ ժմկս աղաչել ըզ-
‚ քեզ: Ո՛չ լաւ էր քեզ վաղագոյն կ̃տրել զխնդր-
‚ ուածս մեր · որով զերծուցեալ էիր զքեզ յայսչափ
‚ անարգանաց : Այլ եղելոյն չէք հնար · ահա խոստանամք
‚ վերստին ոսկեզօծել զքեզ · բայց ը̃ սո-
‚ վին պայմանաւ, զի մոռասցես, զոր ինչ արարաք
‚ քեզ ||:

Երբեմն ևս աքսորեն 'ի Թիք̃րուէ իւրեանց զոմանս 'ի կռոց անտի իբր ակարս և անպիտանս : Պատմէ նա ինքն հայրն քօնթի, թէ ումն չինացի յետ ե̃րկար ժմկս մատուցանելոյ զոհս և պ̃տրգս դրօշէլոյ միոյ խնդրելով օգնու̃ն 'ի նմէ · և յետ բաշխելոյ քրմաց նր՟ առատ տուրս ողորմու̃ե, որք մեծացուցանէին զկարողու̃ե դրօշէլոյն · և երաշխաւորէին ևս թէ անտարակոյս ունի նա կատարել զխնդրուածս նր՟ · իբրև ետես այրն զի խաբեցաւ 'ի յուսոյ, գնացեալ ամբաստան եղև առ դատաւոր տեղւոյն զդրօշէլոյն և զքրմաց : Իսկ դատաւորն քննել զիրս, զդրօշեալն դատապարտեաց 'ի մշտնջենաւոր աքսորանս իբր անպիտան ամենևին Թիք̃րուէ իւրեանց · և զտաճար նր՟ եւ հիմնայատակ առնել · իսկ զքուրմս պատժեաց խստու̃ե : Այսչափ է անմտու̃ե չինաց 'ի մասին կրօնի ըստ պատմելոյ հօրն քօնթեայ :

Քուրմք' զորս չինացիք Պօնց կոչեն բիւր են յոյժ ը̃ ամ տեղիս · ըստ ասելոյ ոմանց մինչև ց35000 · որք են վ̃թպրք և ուսուցիչք ժողովրդեան · և անդադար քարոզեն և հաստատեն 'ի միտս նց՟ զանուանի զգիւտական պաշտամունս կռոց · և զվ̃թպրուն մոլար աղանդոյն : Ընդունէին զհանդերձեալ հատուցումն բարւոյ և չարի · յայն սակս սուտ քարոզեն ժողովրդեան, ասելով : Մատուցէք նուէրս հոգւոյ նախնեաց ձերոց · և օգնեցէք նց՟ 'ի կարիս նց՟ · ապա թէ ոչ' զինի մահուան ձերոյ խստիւ տանջեսջիք մշտնջենական իմն և անը̃հատ հոգեփոխու̃թբ յանարգ և 'ի զազրատի մարմինս մտանելով · ք̃զի և առ չինս այս հոգեփոխու̃ե աղանդ հաստատեալ կայ · Ոմանք ևս 'ի քրմաց անտի զգետնուն զկերպարանս աստուածոցն վ՟ն մեղաց ժղ՟դեան. արկանեն մեծամեծ շղթայս 'ի պարանոցս. և այնպէս շրջելով ը՟ փողոցս, քարամբ կոծեն զգլուխս. ցեռեն զմարմինս, և զայլ սոցին նման դժնդակ գործս գործեն: Սք՟ ը՟ մեծի մասին բնակին առ ընթեր մեհենաց, որք սովորաբար են 'ի բացի արտաքոյ շինից. ուր ունին վանս և նորընծայարանս. յորս ընկալեալ զնորեկ պատանիս, մարզեն զն՟ն 'ի ձգունս անտանելիս առ ժամ մի. ապա տարեալ առաջի սեղանոյ գրօշելոց, բ՟զմ հանդիսիւ զգեցուցանեն նմա զզգեստ քրմի. և յաւարտիլ հանդիսին նորընծայն առնէ ձայն համօրէն քրմաց, որք առաջիկայ գտանին 'ի հանդիսին անդ. և զի յո՟մի ցուցցի յիմարութ՟ն նց՟, 'ի վախճան ձայնոյն արբենան ա՟մքին և մոլեգնին, և այնպէս վճարեն զհանդէս իւրեանց:

Բաց յայսց երից գլխաւոր աղանդից են անդ և գիտապաշտք. որք երկիրպագանեն չար ոգւոց, և մոլեալ են զհետ կախարդութե՟ց և հմայութե՟ց: Եւս մահմետականք, որք առաւել ք՟ 600 ամք են, զի կեան անդ խաղաղութ՟բ. գուցէ լցեն 'ի Թաթարաց. Այլ և հրեայք, զորոց ասի թէ իբր երկերիւր ամօք յ՟ռջ ք՟ զգալուստ փրկչին մերոյ չուացին անդր:

Բազմակնութիւն Թոյլ տուեալ է առ չինս. բայց ք՟զի սովորութ՟ է անդ գնել զաղջիկն, նմին իրի աղքատք սովորաբար մի միայն կին առնուն. իսկ մեծատունք ը՟հկ՟կն՝ առնուն զբազմութ՟ի կանանց, այլ 'ի բազմութ՟ե անտի մինն է միայն օրինաւոր կին. իսկ այլքն իբրև հարճք. սակայն որդիք ծնեալք 'ի նց՟է՝ ճանաչեն իւրեանց մայր զօրինաւոր կին հօր իւրեանց. և մտանեն 'ի ժառանգութ՟ի հօրն, որ՟պ զայլ օրինաւոր որդիս: Նոյնպէս և ինքնակալն ը՟ ասելոյ ոմանց՝ ունի մի միայն օրինաւոր կին, որ է Թագուհի. և ը՟ այլոց՝ երիս. իսկ բազմութ՟ի հարճիցն բաժանեալ են 'ի վեց դասս. և ամփոփեալ պահին յառանձին բնակարանս զօրէն գերեաց 'ի ձեռն ներքինաւոր կալանս դատապարտելոց: Վ՟յ լաւագոյն է յոյժ վիճակ կանանց աղքատաց՝ ք՟ զմեծատանցն. զի ն՟ք ազատ են և կարեն երթալ ուր և կամին. իսկ մեծատանցն ոչ:

Օրէնք չինաց ոչ տան Թոյլ առնուլ հարճս, բայց միայն մանտարինաց. և այնոցիկ, որք մինչև 'ի քառասնամեան հասակ ոչ ունիցին որդիս. այն զի պատիժք ևս սահմանեալ կան յօրէնս ն՟ց, այնոցիկ՝ որք զանցանէին զայսու օրինօք. սակայն այժմ ոչ ևս պահին այն օրէնք, զի որք միանգամ կարող են՝ առնուն հարճս որչափ և կամին ։ Չիք առ նս̄ մասնաւոր ինչ օրէնք 'ի վր̄ մերձաւորութե̄ արենակցութե̄ մինչ̄ 'ի մօր կողմանէ ․ բայց 'ի մէջ առաջնոյ աստիճանի ․ այլ և երկրորդի 'ի հօր կողմանէ ոչ երբէք առնեն ամուսնութի̄ ։

'Ի մատաղատունկ հասակի ամուսնացուցանեն զդուստերս իւրեանց , 'ի երկոտասան ամաց ․ իսկ զպատանիս երբ 'ի ժզ̄ մն̄ քսան ամաց ․ երբեմն և յօրօրոցի , այլ և յարգանդի իսկ մօրցն խօսին զնս̄ մանկանց ․ ենթադրել թէ մինն արու ծնցի և միւսն էգ ․ և զնոյն բան հարսնախօսութե̄ կատարեն ծնօղք և ազգականք ։ Առ չինս՝ դստերք են իբր մասն ընչից վաճառելի իրաց ծնողաց իւրեանց ․ զի ոչ միայն ոչ տան նց̄ օժիտս՝ բայց 'ի հանդերձից հարսանեաց ․ այլ ընդհկռ̄կն՝ վաճառեն զնոսա ․ առեալ գրամս 'ի գին նց̄ յաւէտ և նուազ ըստ որում սակ արկանեն ընդ միմեանս երկոքին կողմանք ։ Մեծապէս խորհին զաւուրս վր̄ հարսանեաց ․ քննեն զամիս և զօր և զժամ ծննդեան փեսային և հարսին ․ հարցանեն միշտ ցքուրմս , որք ըստ մեծի մասին մոգ են և հմայք ․ և ըստ խորհրդոց նց̄ ջանան առնել զժամ , զի մի չարեաց ինչ պատահեսցին ։

Կապ ամուսնութե̄ առ նս̄ ըստ ինքեան է անլուծանելի ․ բայց 'ի դիպուածս ինչ օրէնք նց̄ թոյլ տան արձակել զկանայս ․ որոց գլխաւորքն են ։ Եթէ շնասցի կինն , յայնժամ այրն կարող է և վաճառել զնա ում և իցէ ․ այլ այսպիսի դիպուած ուր ուրեմն հանդիպի ․ սակս մեծի զգուշութե̄ , զոր ունին 'ի վր̄ կանանց ։ Եթէ անհաշտ ատելութի̄ ծագեսցի 'ի մէջ առն և կնոջ , մինչև այնուհետև անհնարին լինել խաղաղութե̄ բնակել նց̄ ընդ միմեանս , բայց յայնժամ բաժանումն պարտի լինել հաւանութե̄ երկոցունց ։ Եթէ ամուլ իցէ կինն յետ քանի մի ամաց զկնի ամուսնութե̄ ։ Եթէ անհնազանդ իցէ սկեսրարն և սկեսրի իւրոյ , և լեզուանդար և խռովարար , մինչև անհանդուրժելի լինել ընտանեաց ։ Եթէ գողանայ կին գաղտ վատնէ զինչս տանն ։ Եթէ ախտացի զախտ փոխադրական , որ զախտ եղեփանդական , այն է ֆուէնկ ուսյուզու կմ̄ բորեն , որոյ բժշկութի̄ անկարելի իցէ , կմ̄ յոյժ դժուարին ։ Իսկ եթէ կինն ինքնին թողցէ զայրն՝ և առանց հրամանի նր̄ մեկնեսցի 'ի նմէ , անկանի ընդ պատժով հարիւր հարուածոց գաւազանի ․ և յայնժամ կարող է այր նր̄ վաճառել զնա ումն , որ առաւել գին տացէ նմ̄ , կմ̄ զի ռամկօրէն ասացից՝ մեզպաթով ծախել ։

Թոյլ տան ծնողացն 'ի բաց ընկենուլ զորդիս, կմ՟ վտարանել 'ի դերուն. յորժամ բզմ՟ են, և առ աղքատութե՟ ոչ կարեն պահել զնս՟. բզմ՟ անգամ և հեղձուցանեն իսկ. ակնունելով թէ հոգիք նց՟ փոխադրե՟ յայլ մարմին, թերևս բարեբաստագոյն վիճակի դիպեսցին. զի ոպ՟ 'ի վերայ ասացաք՝ ունին զաղանդ հոգեփոխութե՟. հաւատալով թէ հոգիք յետ մահու փոխին 'ի մարմնոյ 'ի մարմին: Այսչափ ինչ վս՟ սոցա. արդ ասասցուք ինչ և վս՟ խնամոց նց՟ 'ի վր՟ մեռելոց: Արգելեալ է առ չինս թաղել զմեռեալս 'ի մէջ շրջափակ պարսպաց քղքին, նոյնպէս և մուծանել 'ի քաղաք զդի մեռելոյ ուրուք արտաքոյ քղքի՝ թէպէտ և 'ի մեծատանց ոք իցէ: Վս՟ հնրկ ժողովրդեան են արտաքոյ քղքաց սահմանեալ տեղիք գերեզմանաց, ուր թաղին անխտիր ամենքն. իսկ իշխանք և մեծատունք ունին առանձին գամբարանս նոյնպէս արտաքոյ քղքաց յանշէն և յամայի վայրս 'ի վր՟ բնական կմ՟ արուեստակերտ բլրոց. զի թէ ուրեք չիցէ բլուր, կուտեն հող բզմ՟ և առնեն բլրակ: Դամբարանք նց՟ են մեծաշէն, որք բերեն զնմանութի՟ տան, կմ՟ փոքրիկ պալատի, և ունին երիս դրունս կմ՟ կամարս. մի մեծ 'ի միջի, և երկու փոքունս աստի և անտի: 'Ի ներքս 'ի դամբարանի անդ՝ է սեղան 'ի կճոյ կանգնեալ 'ի վր՟ գերեզմանի մեռելոյն. յորոյ վր՟ 'ի հանդիսի աւուրս ինչ տարւոյն որդիք և ազգականք և բարեկամք մեռելոյն եկեալ լուցանեն մոմեղէնս. և այրեն պէսպս՟ ոսկեզօծ թղթեղէն պատկերս մարդոյ և անասնոց. և բզմ՟ անգամ անկեալ 'ի վր՟ երեսաց երկիրպագանեն նց՟. և ապա առնեն անդ սեղան մեծահաց 'ի յիշատակ մեռելոյն, ուտեն և ըմպեն և հեղուն յերկիր գինի: Առնովին սեղանաւ կանգնեն և մահարձան և 'ի վերայ նր՟ գրեն զերևելի երևելի գործս մեռելոյն: Նմանք և 'ի տան իւրեանց կառուցանեն այնպիսի սեղան, և գրեն 'ի վր՟ նր՟ զանուն հօր և հաւու իւրեանց. և անդ կատարեն զնմ՟ նախասացեալ պաշտամունս մեռելոց: Իսկ իշխանազունք, որք ունին լաւական կարողութի՟, տաճարս ևս կանգնեն 'ի պատիւ և 'ի յիշատակ նախնեաց իւրեանց, որոց և զոհս մատուցանեն:

Այս սովորութի՟, որ ոմանց թուեցաւ լոկ ազգ իմն կռապաշտութե՟, այնպէս արմատացեալ է առ նս՟, զի քարոզիչք աւետարանին թէպէտ բզմ՟ աշխատեցան, սակայն ոչ կարացին զհաւատացեալսն 'ի քս՟ հրաժարեցուցանել անտի. վյ՟ հարկեցան թոյլ տալ այնմ իբր անվնաս ինչ սովորութ , համարելով զայն իբր քղքական իմն պաշտօն և մեծարանս ընծայել նախնեաց իւրեանց ։

Յորժամ ոք 'ի մեծատանց մեռանի , որդի նր վաղվաղակի գրով ազդ առնէ նմ ազգականաց և բարեկամաց զմահ հօր իւրոյ . և նշ ժողովեալ , լուանան զմեռեալն և ծխեն նմա խունկս անուշունս . և ապա զգեցուցեալ նմա զլաւագոյն հանդերձս նր , բազմեցուցանեն յաԹոռ , և սկսանին կոծ առնուլ 'ի վր նր . նախ կանայք և հարճք նր անկեալ 'ի վր երեսաց առաջի նր , բզմ անգամ երկրպագանեն նմ , և աշխարեն աղիողորմ ձայնիւ . ապա որդիք և այլ նմ ընտանիք նշ . յետոյ ազգականք և բարեկամք ։ Յաւուր երրդի դնեն զդի մեռելոյն 'ի տապանի կաղմելոյ 'ի մեծագին ինչ փայտէ . և ծեփեն զբոլոր տապանն Թանձր կպրով . զի ժահահոտուԹն դիոյն մի ելցէ արտաքս . և տարեալ հանգուցանեն 'ի վր սեղանոյ , զոր նորոգ կառուցանեն 'ի միում 'ի մեծագոյն սենեկաց տանն , զորոյ զորմունս պատեն սպիտակ պաստառաւ . զի սպիտակ գոյնն առ նմ է նշանակ սգոյ ։ Եւ աւուրս չորս կմ հինգ ազգականք և բարեկամք նր 'ի սահմանեալ ժամս եկեալ՝ ունելով զգեցեալ հանդերձս սպիտակս , բզմ անգամ ծունր կրկնեն նմ , և անկեալ 'ի վր երեսաց ողբս առնուն 'ի վր նր . զնոյն առնեն ընդ նմ և ընտանիք մեռելոյն և 'ի վր սեղանոյն ծխեն պէսպէս խունկս , անուշունս , լուցանեն մոմեղէնս . այրեն ոսկեզօծ Թուղթս և մետաքսեայ կերպասս , կարծելով Թէ այն իրք պիտանի եղիցին մեռելոյն 'ի հանդերձեալ Ծի ։

Յաւուրսն յայնոսիկ գան և քուրմք , և երգեն անդ ողբաձայն . և 'ի հասանել գիշերոյ բազմին ուտել և ըմպել առատապէս 'ի տան մեռելոյն . վն զի յայն աւուրս միշտ պատրաստեալ կայ անդ սեղան մեծահաց ։ Ոմանք յորդւոց առ սաստկագոյն աղէտից և ցաւոց , զոր ունին վն մահու հօր իւրեանց , պահեն զդի նր 'ի տան մինչև ցերիս և ցչորս ամս ամրափակեալ 'ի տապանի , յորմէ ոչ բուրէ ժահահոտուԹ . զի որպ ասացաք ծեփեալ է կպրով առհնրկ . և աւուրս հարիւր ոչ ննջեն 'ի սովորական մահիճս իւրեանց , այլ 'ի գետնի 'ի վր միոյ փսիաԹի առ տապանաւ հօրն . և ընդ այն աւուրս հրաժարեն 'ի մսոյ և 'ի գինւոյ ։

Իսկ յաւուր՝ յորում հանդերձեալ են Թաղել զմեռեալն , դարձեալ ժողովին 'ի տուն նր ազգականք և բա-

բարեկամք զգեցեալ հանդերձս սպիտակս. և ը՟ս առաջնոյ օրինակի այրեն ոսկեզօծ թուղթս 'ի վ՟ր տապանի ն՟ր. և մի առ մի անկեալ յերկիր, հարկանեն զճակատ 'ի գետին բ՟զմ անգամ. զնոյն առնէ ը՟ն ն՟ն և որդի մեռելոյն մինչև վաստակաբեկ լինել յերկար և 'ի բազմապատիկ գետնատարածութ՟եց: Իբրև կատարեն զա՟մ, զոր ինչ սովորութիւն է առնել 'ի տան, սկսանի թափոր թաղման: Նախ երթան ընտանիք և ծառայք մեռելոյն ունելով 'ի ձեռս՝ ոմանք թղթեղէն պատկերս արանց և կանանց և գերեաց և ազգի ազգի գազանաց, այլ և բերդս և մարտկոցս նոյնպ՟ս թղթեղէնս. կէսք վառեալ մոմեղէնս և խնկանոցս լի խնկօք, ոմանք և տանին սեղան բարելից. յորոյ վ՟ր եդեալ կան և ազգի ազգի խունկք անուշունք: Զկնի ա՟յ երթան քուրմք, որք հնչեցուցանեն պէսպէս նուագարանս, ո՟ր թմբուկ, սրինկ են ողբաձայն՝ այլ անարուեստ ամենեքին, և ոմանք 'ի ն՟ցէ տանին դրօշբոժոժաւորս. այլ և սեղան զոհի շինեալ 'ի պատիւ մեռելոյն: Այսպէս դայ դի մեռելոյն բարձեալ յարանց բազմաց, և ծածկեալ սպիտակ աստղագործ մետաքսեայ կերպասիւ. ունելով 'ի վ՟ր և հովանի: Զկնի դագաղայն երթան որդիք ն՟ր և ազգականք տխուր և թախծագին դիմօք, և իբր լուծեալք և վհատեալք 'ի սաստկութ՟է ցաւոց յեցեալք 'ի գաւազանս. ապա կանայք և դստերք մեռելոյն և հարսն ն՟ր նստեալ 'ի դահաւորակս ծածկելս սպիտակ կերպասիւք. որք ողբս առեալ բարձրաձայն աշխարեն զմեռեալն՝ ունելով ը՟ն ինքեանս և կանայս եղերականս:

Ժամանեալ 'ի տեղի գերեզմանին, նոյնժամայն կաղմեն սեղան մեծահաց, և այր մի զգեցեալ սպիտակ հանդերձս, և եդեալ զմի ձեռն 'ի վ՟ր միոյ անկեան սեղանոյ ծամածռէ և խանդարէ զերեսս, թիւրէ և թեքթեքէ զա՟մ անդամս մարմնոյ. ծուրեցուցանէ լորձունս. բաղխէ զօգն ձեռամբ. առնէ և այլ այսպիսիս՝ զօրէն դիւահար մոլեգնելոց. ապա յերկիր անկեալ մնայ անդ անշարժ առ վայր մի իբր 'ի հիացման. և յանկարծուստ իմն յարուցեալ, գրէ 'ի վ՟ր կարմիր թղթոյ բառս ինչ. զոր հանդիսիւ այրեն 'ի վ՟ր տապանին, ը՟ն նմին և զվերոյգրեալ թղթեղէն պատկերս և բերդս. զի կարծեն թէ այն պատկերք այրեցեալք, 'ի հանդերձեալ կենն փոխին յէրս, զորս յանդիման առնեն. ո՟ր պատկեր մարդոյ 'ի մարդ ճշմարիտ, առիւծուն յառիւծ, բերդին 'ի բերդ:

Ապա թաղեալ 'ի հող զմեռեալն, բարեկամք և ազգականք նր՟ և քուրմք բազմին ուտել և ըմպել․ և յարուցել՟ վերստին սկսանին զնախագրել՟ գետնատարածութիս և ծնրադրութիս, տալով զվերջին հրաժարական ողջոյն մեռելոյն․ և դառնան 'ի տուն արբեալք և յափրացեալք:

Ժամանակ սգոյ չինաց ձգի Գ ամս երիս․ և յիւրաքանչիւր ամսն այսպէս հանդերձս զգենուն․ յառաջնումն 'ի խոշորանիւթ սպիտակ կտաւոյ, այլ հին և կարկատուն, ունելով առ ստեաւն չուան գօտի․ իսկ 'ի գլուխս սեաւ գլխարկ․ յերկրորդումն նոյնպէս 'ի կտաւոյ, այլ փոքր մի նրբագոյն․ իսկ յերրորդումն կարօղ են և մետաքսեայս զգենուլ, այլ սպիտակ, և ոչ յայլ գոյն: Եւ Գ այն երիս ամս իշխանք ոչ կարեն վարել զգործ իշխանութե և պաշտաման իւրեանց․ և ոչ 'ի հրապարակական խրախութիս և 'ի խաղս երևել․ նոյնպս և կանայք մեռելոյն Գ այն ամս ոչ կարեն անդրէն ամուսնանալ: Յոմն պարտական են երևեցուցանել զանձինս սգաւորս 'ի դէմս 'ի զգեստս 'ի խօսս․ և մինչև ցսահմանել՟ ինչ ժմ՟կ ոչ կարեն ելանել 'ի հրապարակ․ և զկնի այնորիկ եթէ հարկ իցէ ուրեք երթալ, գահաւորակօք գնան մինչև ցերիս ամս: Բայց սուգ առն վ՟ն կնոջ ոչ է այսչափ երկար, այլ ամ մի և եթ․ նոյնչափ է վ՟ն եղբօր: Այլ արհեստաւորք և մշակք ազատեն յայսպիսի օրինաց խիստ և երկարատև սգոյ:

Քրիստոնէական կրօնն ես 'ի վաղնջուց ժմկաց եհաս յծ՟ն չինաց․ ոմ՟ միաբան հաստատեն երևելի մատենագիրք յունաց լատինացւոց և ասորւոց․ այլ թէ ե՞րբ, և յումմէ՞ զառաջինն քարոզեցաւ անդ, անյայտ է և անստոյգ: Ոմանք ասեն թէ նր՟ առաքեալն Թովմաս 'ի հնդկաց Ծէ չանց և 'ի չին․ և անդ ևս քարոզեաց զաւետարանն քրի․ և զրշ՟մս 'ի բնակչաց նր՟ դարձոյց 'ի ք՟ս: Այլ այս կարծիք չունի հաստատուն ինչ հիմն․ ոմ՟ ը՟արձակ ցուցանէ ասսեման վկայութբ՟ բազմաց մատենագրաց, 'ի մատենագր" արևել, հատ գ․ մասն ա․ թղթահամր 518․ 'ի տպագր․ հռովմայ: Այլք ը՟մբ հաստատեն թէ կրօնն քրիստոնէական զառաջինն յասորւոց նեստորականաց մուծաւ առ չինս յամի տ՟ն մերոյ 636 յաւուրս յեսուեաբուսի գաղաղացւոյ նեստորական պատրիարգի․ զի յորժամ Ձ զայն չէր բնաւ ուրեք յիշատակութի ինչ վ՟ն քրիստոնէութե չինաց:

Եւ զայս հաստատեն և այնու, զի 'ի 1625 ամի 'ի սիուկան կմ սիկանֆու գլխաւոր քղք չինաստանի նահանդէս 'ի փորելն 'ի հիմն տան միոյ, գտաւ տախտակ մարմարիոնեայ. յորում բաց յայլոց բանից գրեալ կայր և այս, Թէ 'ի 636 հասին 'ի չին քարոզք աւետարանին. վն այնր քարի ունիմք ընդարձակագոյն խօսիլ 'ի աստրագրութն սինական քիլքի, ուր և գտաւ: Սակայն են ոմանք, որք հաստատեն Թէ և յռջ ք զկայանիլ նեստորական աղանդոյ, գոյր քրիստոնէութն 'ի չին: Յայսմանէ ոմանք հաւանական համարին, Թէ 'ի հնդկաց հաւատացելոց 'ի քն քարոզութ սբյ առաքելոյն Թովմայի՝ զառաջինն մուծաւ քրիստոնէական կրօնն առ չինս. վսյ չէ ինչ անդէպ ասեն զսբն Թովմաս կոչել առաքել և վրդպտ հնդկաց և չինաց. զի հնդկաց անձամբ քարոզեաց զքն, իսկ չինաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց:

Ապա 'ի 1245 'ի դ Իննովկենտիոսէ առաքեցան 'ի Թաթարստան և 'ի չին քարոզիչք աւետարանին յերկուց կարգաց այ սբյն Փրանչիսկոսի և սբյն դոմինիկոսի. որք գտին 'ի Թաթարստան և 'ի չին նեստորականս բազումս, յորոց ոչ սակաւս դարձուցին յուղղափառ հաւատս, ոմ և զոմանս 'ի Թաթարաց և 'ի չինաց: Յետոյ դարձեալ պապն գ Նիկողայոս 'ի 1278 առաքեաց քարոզիչս 'ի կարգէ սբյն Փրանչիսկոսի առ քօլպայոս ինքնակալ Թաթարաց և չինաց: Նոյնպէս և Նիկողայոս դ 'ի 1289 առաքեաց անդր այլևս քարոզիչս. յորս երևելի էր հայրն յովհաննէս 'ի կօրվինեան լեռնէ 'ի կարգէ սբյն Փրանչիսկոսի, որ ըս որում ցուցանէ 'ի Թուղթս իւր, զոր գրեաց առ զնշն անձինս, բզմ ընդունելութն եգիտ առաջի ինքնակալին չինաց. և զբզմս 'ի Թաթարաց և 'ի չինաց դարձոյց 'ի քն: Վն այնորիկ 'ի 1307 կղեմէս ե առաքեաց եօթն եպսունս ձեռնադրել զյովհաննէս արքեպս փէքինու. Թէպէտ յեօթանց անտի երեք նեթ ողջանդամ հասին 'ի չին. որոց անուանք են գերարդոս, պերեգրինոս, և անդրէաս պերուսիացի. որք և 'ի 1308 ձեռնադրեցին զյովհաննէս. որոյ բզմ իմաստութ և սրբութ հովուեալ զայն նորածաղիկ եկեղեցի ըս ամս 25, մեռաւ 'ի 1333. և 'ի տեղի նր պապն յովհաննէս իբ կացոյց արքեպս փէքինու զնիկողայոս: Յաւուրս սր, այ 'ի 1338 ինքնակալն Թաթարաց, որ տիրէր և չինաց Տի հրեշտակս առաքեաց առ բենեդիկտոս ժբ, որ զայնու ժամաւ նստէր յաւենիոն. որ և մեծապէս պատուեալ զնս, և բզմ պարգևօք Ճոխացուցեալ արձակեաց. այլ և ինքն 'ի դիմաց իւրոց առաքեաց առ ինքնակալն չորս միանձուլեա 'ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի · այլ թէ զի՞նչ գործեցին նքա անդ, ոչ յիշատակի ուրեք ։

Ցայսմ ամէ, զոր ընդարձակ գրէ Ասսեմանն 'ի մատենագր. արևել, հատ գ. մասն ա, յայտնի երևի, թէ ցորչափ տէրութիւն չինաց էր ընդ ձեռամբ ինքնակալաց թաթարաց, քրիստոնէութիւն ծաղկեցաւ ոչ միայն 'ի թաթարաստան, այլև 'ի չին. և քրիստոնեայք յայտնի և հրապարակաւ կատարէին զուղղափառութեան պաշտամունս իւրեանց, ունելով եկեղեցիս և եպիսկոպոսս. վասն զի բաց 'ի յովհաննու արքեպիսկոպոսէ, որ նստէր 'ի փէքին, նաև այն երեք եպիսկոպոսունք, որք զնա ձեռնադրեցին, վարեցին զեպիսկոպոսական իշխանութիւն միմեանց զկնի 'ի քանթօն ծովեզերեայ քաղաքի. ուր սոյն գրէ նա ինքն անդրէաս պերուսիացի մի յերից եպիսկոպոսաց անտի, ոլկին մի մեծատուն յազգէս հայոց ծախիւք իւրովք եւս կառուցանել եկեղեցի մեծ և գեղեցիկ. զոր յովհաննէս արքեպիսկոպոս ըստ կամաց նորին տիկնոջ՝ արար եպիսկոպոսանիստ. ուր ուրեք նախայիշատակեալ եպիսկոպոսունքն նստան զկնի միմեանց ։

Այլ յամին 1369 զօրացեալ չինաց թօթափեցին ըզլուծ թաթարաց, վանեալ զնոսա խոյս յերկրէ իւրեանց. ընդ նոսին և զեպիսկոպոսս և զքահանայս եւրոպացիս և զայլ քրիստոնեայս հալածեցին անտի. նոյնպէս և նեստորականք, յորոց բազումք գտանէին անդ յայնժամ, դժնդակ հալածանս կրեցին 'ի նոցանէ. վասն զի կամ անդէն խապառապուռ անհետացան, և կամ հարկեցան մեկնել ինքեանք անտի ։ Եւ այնուհետև առ 'ի չգոյէ հովուաց առ սակաւ սակաւ խապառ անհետ եղև քրիստոնէութիւն 'ի չինաց Տէ, զի սոյն պատմէ հաւենաւգոկիոս յամին 1517 յորժամ զառաջինն փորդուգալք հասին 'ի չին. (որոյ յիշատակն զլխովին բարձեալ էր յեւրոպիոյ,) և ոչ իսկ հետս ընաւ քրիստոնէութեան գտին անդ. այլ բովանդակ Տն կայր 'ի կռապաշտութեան ։

Ապա յամին 1552 սրբն Ֆրանչիսկոս քսաւերեան 'ի միաբանութենէ յիսեանց վերստին սկսաւ քարոզել անդ զքն, որ և փոխեցաւ առ այ 'ի սանչիանմ կղզի 'ի քանթօն նէհնգի. յետոյ յամին 1688 մարմին նր փոխադրեցաւ անտի 'ի կօա մայրաքաղաք գանարայ ։

Ապա յամին 1600 մատթէոս րիկկիոս և այլք ոմանք արք առաքելաշնորհք 'ի նոյն յիսեան միաբանութենէ գնացին անդր. որք 'ի ձեռն չափաբերական այն է՝ մաթէմաթիքական գիտութեան և հնարնդ աստղաբաշխութեան՝ ապնջականութեան գտեալ առ ինքնակալն և առ մեծամեծս. սկսան պէսպէս հնարագիտութեամբ վերստին ծաւալել առ նոսա զքրիստոնէական հաւատս · և զի մի խորշելի երևեսցին յաչս ժողովրդեան իբր օտարազգիք ոմանք և նորակրօնք, 'ի սկզբան անդ զգենուին զ տարազու պօնցից կմ քրմաց նց · յորս սակս և կոչեցան արևելեան պօնցք: Եւ ևս թոյլ տային նորոգ հաւատացելոց 'ի հանդիսական աւուրս ինչ տարւոյն ժողովել ընդ այլոց կռապաշտից 'ի տաճարս կմ յապարանս կանգնեալս գրեթէ յամ քղքս 'ի պատիւ կօնփուտիոսի, և առնել անդ զ յիշատակ նր · առ որ հրաման ինքնակալին պարտաւորէր զամնին · և մատուցանել զասովորական նուէրս և զոհս տն երկնի և երկրի · (որով ասի թէ նք իմանային զճշմարիտն ած · զի ոպ ասացաք 'ի վեր անդր, չինք չունէին սեփական անուն այ ·) առնել սեղանս 'ի վր գերեզմանաց մեռելոց իւրեանց · և նուիրել նց զինի հեղեալ յերկիր, ընդ հին հեթանոսական սովորութ իւրեանց · և այլ այսպիսիս · զորս հարք յսեանք համարէին իբր լոկ քղքական պաշտամունս, և աւելորդապաշտութիւս ռամկաց, և ոչ գործ կրօնի · նմին իրի 'ի սկզբան անդ թոյլ տային նց առնել զայնս:

Եւ այսու՝ ընդ պատմելոյ նոցին յսեանց 'ի սուղ ժմկի առաւել քան զ50000 ոգիս 'ի չինաց անտի աշակերտեցին 'ի սբ հաւատն քսի · թող զտղայս, զորս ծնողք նց տեսեալ մերձ 'ի մահ դնէին 'ի փողոցս, և հարքն յսեանք մկրտէին զնս: Ընկալեալն և հրաման յինքնակալէն շինել եկեղեցիս, և հրապարակաւ կատարել զպաշտամունս ընդ քրիստոնէական ծիսի · և ասեն թէ թիւ եկեղեցեաց և մատրանց ընդ համօրէն աշխն չինաց էհաս ցերկերիւր:

Այլ յետոյ ժամանակէ անդր յեւրոպիոյ և այլոց քարոզչաց յայլմէ կարգէ, ոչ տային բնաւ հրաման նորոգ հաւատացելոց առնել զնախասացեալ պաշտամունս · յորմէ երկպառակութի մեծ անկաւ 'ի մէջ հարց յսեանց և նց · դատաստանն 'ի հռովմ ձգեցաւ · առաքեցան 'ի հռովմայ քննիչք · և յետ բզմ երթևեկութեց թղթոց և քննութեց, ել վճիռ 'ի հռովմայ, որով արգելան այն ամ գործողութիք: Ընդ այն ժմկս և ինքնակալն չինաց եհան հրովարտակ, որով տարագիր արար զքհնյս եւրոպացիս յերկրէ իւրմէ, և արգել ընդ ծանր պատժով զի մի ևս լսելի լիցի երբեք ուսումն և անուն քրիստոնէութ 'ի չին, յորմէ և ծագեցաւ հալածումն սաստիկ · որով 'ի սուղ ժմկի մերսամին ջնջեցաւ և անհետ եղև քրիստոնէութին յերկրէ չինաց: Ասի թէ 'ի վերջին հալածման անդ՝ մի կմ

եր

երկու ոմանք 'ի հարց յիւրեանց մնացին անդր իբր չափաբանք և աստեղաբաշխք թագաւորին . այլ սաստիկ պատուէր եղաւ նոցա մի երբէք խօսել ինչ ուրեք վասն կրօնի : Սակայն լսեմք թէ այժմ գտանին անդ 'ի փէքին 'ի բուն արքայանիստ քաղաքի ուղղափառ քահանայք եւրոպացիք յայլ և այլ կարգաց . որք են արտաքին գիտութեանց , տարածեն անդ և զուսումն քրիստոնէական հաւատոյ . իսկ 'ի 1786 ամի թէ բազում եկեղեցիք 'ի փէքին , յորս կատարեն անխափան ըզպաշտամունս քրիստոնէութեան :

ԺԵ. Բաժանումն Չինաց :

Այս ընդարձակ աշխարհ առհասարակ 'ի ձեռն քեանճ գետոյն բաժանի յերկու մասունս . մին 'ի Հիւսիսայինն , որ յառաջն Քաթայի կամ Քաթաւ անուանէր , ուր 'ի վեր անդր նշանակեցաք . որ և սահմանակից էր Թաթարաց . և 'ի Հարաւայինն . որ անուանեալ կոչէր Մանջին և Մաչին . և երկոքին սոքա դարձեալ յայլ և յայլ նահանգս բաժանին : Հիւսիսայինն բաժանի 'ի վեց նահանգս . ոմանք և զԼեաոթոնկ նահանգն աստ դնեն զորմէ մեք խօսեցաք 'ի ձեռս ստորագրութեան Թաթարացն չինաց . զի տիրապէս անդ անկանի : Իսկ հարաւային մասն բաժանի յինն նահանգս . վասն որոյ և համօրէն աշխարհ չինաց ըստ թուոյ նահանգաց կամ աշխարհաց մեծին Հայոց բաժանի 'ի ԺԵ նահանգս . որք են հետագայքդ :

ա. Փէչէլի .
բ. Չանսի .
գ. Չէնսի .
դ. Չանթոնկ .
ե. Սուչէն .
զ. Հոնան .
է. Քէանկնան կամ Նանքին .
ը. Հուքուան .
թ. Քէանկսի .
ժ. Չէքիանկ .
ժա. Ֆոքիէն .
ժբ. Քանթոն . կամ Քուանկթոն .
ժգ. Քուանկսի .
ժդ. Քուէյչէու .
ժե. Իւննան :

Զորս յառաջիկայդ միով միով յօդուածով ստորագրեսցուք հանդերձ գլխաւոր քաղաքօք իւրեանց ըստ դուզնաքեայ ծանօթութեանց , զոր կալաք զնոցանէ :

Յօդ ԺԶ. Փէչէլի։

Փէչէլի կամ Փէ-չէլի. և Պէչէլի։ Է նհ՟նգ ընդարձակ, որ յարևելից ունի իւր սահման զծոց մի ովկիանու, որ յանուն ն՟ր կոչի ծոց Փէչէլեաց. բայց ոմանք ծոց Հօանկեայ կամ Թանկեայ կոչեն. 'ի հիւսիսոյ զմեծ պարիսպն, որով բաժանի 'ի Թաթարաց. յարևմտից զՇանսի. իսկ 'ի հարաւոյ զՀօնան։ Ունի գետս բզ՟մս և ջրմուղս և ծովակս, որք բերեն ձուկն առատ։ Օդ ն՟ր ցուրտ է, և ձմեռն երկարատև և սաստիկ. ա՟մ գետք և ջրմուղք ն՟ր սառեն այնչափ, զի ոչ միայն մարդիկ և անասունք համարձակ գնան 'ի վ՟ր, այլև կառք բեռնաւորք։ Ուր ուրեմն անձրևէ անդ. այլ փոխ անձրևոյ յա՟մ առաւօտու իջանէ ցօղ յորդառատ։ Երկիր ն՟ր է բորակախառն, սակայն և այնպ՟ս առ ժրաջան մշակութե՟ բնակչաց բերէ ցորեան, և որիզ և մարացորեան առատ. այլև ազգի ազգի պտուղս և բանջարս պատուականս. ունի և մետաքս, բայց ոչ այնպ՟ս առատ ո՟պ Քանթօն նհ՟նգն. այլ կարի նուաղուն է անդ փայտի 'ի պէտս շինուածոյ և հրոյ. սակայն 'ի լերինս ն՟ր ուրեք ուրեք գտանի ածուխ հանքային, զոր այրեն փոխ փայտի, ո՟պ յԵւրոպիմ անգղիացիք։ Ասի թէ թիւ բնակչաց այսր գ՟ւռի հասանէ ց՟հինգ միլիոն։ Իսկ գլխաւոր տեղիք ն՟ր են հետագայքդ,

ՓԷ-ՔԻՆ, զոր մատենագիրք ժ՟գ դարու Քամպալու կոչեն. ո՟պ է տեսանել առ ասսեմանեայ. որ նշանակէ Իջևան կամ Բնակարան Թ՟գրի. ո՟պ և Փէքինն թարգմանի Արքունիք հիւսիսոյ։ Է գլխաւոր մայրաքղ՟ք համօրէն տ՟րուե՟ չինաց և աթոռ ինքնակալի ն՟ր, մեծ և ընդարձակ յոյժ. ամուր և բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ 'ի դաշտավայրի, և բաժանեալ յերկու մասունս. ա՟յ 'ի Քաղաք Թաթարաց, և 'ի Քաղաք չինաց։ Քղ՟քն Թաթարաց կոչի և Հին քաղաք. զի է հին Փէքին կամ Քամպալու քղ՟քն. զոր յորժամ առին Թաթարք, հանին անտի զբնիկ բնակիչս ն՟ր մինչ զիշխանս և զմեծամեծս. և ինքեանք կալան զբնակութիւն ն՟ց. իսկ զն՟մ բնակեցուցին արտաքոյ պարսպաց քղ՟քին. ուր 'ի սուղ ժմկի շինեցին ն՟ր քղ՟ք, և բնակեցան 'ի նմա. և յայն սակս անուանեցաւ քղք չինաց ․ կոչի և Նոր քաղաք ․ զի յանցեալ դարու չինեցաւ , ոպ՟ ասացաք 'ի վեր անդր 'ի ներածուե՟ : Հին քղքն է կատարեալ քառակուսի , գեղեցկանիստ , և մեծաշէն ք՟ զնորն , ունի դրունս 9 ․ իսկ նորն առաւել երկայն է ք՟ լայն ․ այլ ը՟ մեծութե՟ն՝ հաւասար հնոյն , բայց ը՟ մեծագործութե՟ չինուածոց 'ի վայր ք՟ զայն ․ եօթն դրունս ունի : Երկոքին ևս պարսպապատ են ․ և միացեալ կացուցանեն զմի քղք ․ որոյ շրջապատն է իբր 22 մղոն : Բարձրութե՟ պարսպաց նր՟ են իբր 150 ոտնաչափ ․ իսկ թանձրութիւն այնչափ է , զի գիշերապահ զինուորք երիվարօք շրջին 'ի վր՟ նր՟ ․ և ուրեք ուրեք են 'ի նմա քառակուսի ամուր աշտարակք ․ և առ նովաւ խրամ լայն և խորայատակ , այլ անջուր ․ թէպէտ եթէ կամեսցին կարօղ են արձակել 'ի նմա ջուր :

Երկու են գլխաւոր դրունք նր՟ ․ որք են երկու մեծամեծ և բարձր աշտարակք վրանաձևք առ միմեամբք ․ բայց անջատեալք յիրերաց ․ կողմունք նց՟ կապեալ և հաստատեալ բարձր և թանձր պարսպօք ․ և 'ի միջի նց՟ հրապարակ մեծ ը՟ մէյտան բաւական 500 զօրաց կարգաւ դասաւորելոց 'ի ճակատ : Առաջին մեծ աշտարակն , որ բերէ զնմանութի՟ն ամրոցի , և է 'ի դաշտակողմն կոյս 'ի գլուխ արքունի ճնպ՟հին՝ չունի մուտս ․ ք՟զի դուռն՝ որ հանէ 'ի հրապարակ անդր , է ը՟ մի կողմն նր՟ ը՟ պարիսպն : Իսկ 'ի յաջակողմն է երկր՟դ աշտարակն , որ հայի 'ի քղքն ․ և է երկրորդ դուռն ը՟ մեծութե՟ առաջնոյն : Անցք նր՟ խոր է յոյժ ․ ուստի և մթին ․ և կամարք երկոցունց ևս են համակ վիմատաշ ․ բայց մնացեալ որմունք աղիւսակերտք : Թիւ բնակչաց քղքիս ը՟ գրելոյ հօրն Լուդովիկոսի քօնթէայ 'ի վախճան ԺԷ դարու , յորժամ ինքն անդ էր աւելի էր ք՟ 2,500,000 : Համօրէն քաղաքն բաժանեալ է 'ի թաղս թաղս ․ և իւրաքանչիւր թաղ 'ի բզ՟մ փոքրիկ վիճակս ․ որք տասն տասն տունս պարագրեն ․ և իւրաքանչիւր վիճակ ունի իւր մանաւոր վերակացու կմ՟ դէտ ․ որ զամ՟ անկարգութի՟ս , որք դիպցին 'ի վիճակի իւրում պարտապան է ծանուցանել մանտարինի , որ իշխէ համօրէն թաղի : Զայսմանէ լիագոյն խօսեցաք 'ի վեր անդր 'ի ներածութե՟ ․ 'ի ճառելն զհանգամանաց քղքաց չինաց : 'Ի լինել երեկոյի յամ՟ փողոցաց ձգեն շղթայք ընդլայն ․ և ը՟ գիշերն ողջոյն բազմութի՟ պահապանաց պահեն ․ կէս մի հեծեալ շրջին ը՟ քղքն ․ և կէս մի հեծեալ 'ի ձի 'ի վր՟ պարսպաց քղքին : Փողոցք նր՟ ուղիղ են, և ձգին ընդերկայն ոմանք մինչև ցերիս մղոնս. Իսկ լայնութ՟ գլխաւոր փողոցաց ն՟ր չէ ինչ աւելի ՟ք 120 ոտնաչափ. այլ առհ՟սրկ աղտեղի են և փոշելից, մ՟նդ յամարայնի՝ յորժամ տիրէ ցամաքութ՟ն. զի յայնժամ փոշին իբր ծուխ Թանձր ելանէ 'ի յաճախութ՟է խառն բազմութ՟ն երթևեկաց՝ յանհնարին վիշտ, որոց շրջին 'ի նմ՟. զի զաչս անդամ բանալ ոչ կարեն: Յերկուց կողմանց փողոցաց են կրպակք անհամարք լի հարստութ՟բ, որք ունին երկու տախտակս առ դրամբ կախե՟լ աստի և անտի արտաքուստ, յորս ոսկի գրով նշանակե՟լ կան ա՟մ տեսակք վաճառաց, որք գտանին 'ի կրպակ անդր: Շինուածք տանց ն՟ր անշուքք են. զի են միայարկ, և ը՟ առաւել մասին փայտաշէնք՝ հիմնե՟լ 'ի վ՟ր մեծամեծ քարանց: Բայց գտանին անդ և մեծամեծ ապարանք, յորս նշանաւոր են արքունիք ինքնակալին կառուցեալ 'ի մէջ հին ՟քղքին. որ և է իբր փոքր ՟քղք. շրջապատ ն՟ր 3 կմ՟ 4 մղոն, պատե՟լ երկքկարգեան պարսպօք և խրամօք. և են անդ բազմապատիկ շինուածք մեծամեծք 'ի բնակութ՟ի իշխանաց և արքունի պաշտօնատարաց, և զնզ՟ն արհեստաւորաց. իսկ բուն պալատ ինքնակալին է 'ի ներքսակողմն. որոյ շինուածք մեծ են և հոյակապ, և շքեղութ՟ն և ճոխութ՟ն զարդուց ն՟ր անչափ, այլ դիրք շինուածոցն անկարգ. և ձև ն՟ց անհամեմատ:

ԵօԹն հոյակապ տաճարք կմ՟ մեհեանք են 'ի սմին քաղաքի. յորս երևելի են երկու տաճարք նուիրեալք երկնից և երկրի: Յառաջնումն են եօԹն մեծամեծ և հոյակապ սրահք ոչինչ ը՟հատ 'ի սրահից անտի, որք են յապարանս ինքնակալին: Յայս տաճար ամ ամի յաւուր ձմերային արևադարձի ինքնակալն մեծաւ հանդիսիւ զոհս և պատարագս մատուցանէ երկնից. ը՟ ա՟ն երկնից, ո՟մ ասեն. Նոյնպէս և յաւուր ամառային արևադարձի. և յերկուս գիշերահաւասարս, ը՟ գարնան և աշնան գրեԹէ նոյնչափ հանդիսիւ տանէ ողջակէզս յայլ տաճարս: Իսկ յերկրորդն, ը՟ 'ի տաճարն երկրի, Թագ դնեն ինքնակալք չինաց. որք յաւուր Թագադրութե՟ն իւրեանց զգեցե՟լ զգեստ հալոէի կմ՟ մշակի, և կալեալ զարծաԹի մաճ, ը՟մ հանդիսիւ զփոքրիկ մասն ինչ երկրի առ տաճարաւն արօրադրեն և սերմանեն: Եւ զայն առնեն մի՝ 'ի պատուել օրինակաւ իւրեանց զհողագործութ՟ն առ յորդորամիտս առնելոյ զժողո՟վն առ 'ի մտադիւր առ զանձինս 'ի նոյն գործ արդիւնաւոր. և երկրորդ՝ առ 'ի ցուցանել, թէ վն՟ զի ամ՟ հասք և մուտք գան նմա 'ի քրտանց ժողովրդեան . վն՟ այնորիկ պարտապան է քաջ խնամ՛ տանել նց՟ . և որչափ հնար է թեթևացուցանել զբեռն նց՟ : Պիշինկ ասէ թէ չէք 'ի փէքին գործածուն՟ կառաց . այլ փոխկ այնր 'ի կիր առնուն զահաւորակս, այն է' թախտըռէվանս և երիվարս . բայց հայրն քօնթի ականատես' բաց 'ի գահաւորակաց յիշէ և կառս 'ի ստորագրելն նր՟ զփէքին :

Չեանշուանիւեն : Է տեղի սթափուե՟ց ինքնակալին իւրև ինն մղոնաւ հեռի 'ի փէքինայ :

Խօնֆինկ : Է քղ՟ք մեծ և բարեչէն ծովեզերեայ առ բարձրաբերձ և անտառախիտ լերամբք . մօտ առ այս քղ՟ք սկսանի մեծ պարիսպն :

Սուէնհուա : Քաղաք մեծ և բազմամարդ և գեղեցիկ, մօտ առ մեծ պարիսպն . յորում են բզ՟մ մեծաչէն կամարք յաղթութե՟, կանգնեալք 'ի պատիւ ինքնակալաց ոմանց, և զօրապետաց, սակս մեծամեծ քաջագործութե՟ց նց՟ . որք և են մեծագոյն զարդք քաղաքին : 'Ի մերձակայ լերինս նորա գտանին քարահանք պատուականն մարմարիոն քարանց . և ազգ մի գեղնամորթ մկանց . որոց մորթք 'ի յարգի են յոյժ առ չինս :

Փաօթինկ : Քաղաք մեծ և ամրապարիսպ 'ի գեղեցիկ և զուարճալի վայրի, ուր նստի փոխարքայն նահանգին փէքինու : 'Ի մէջ շրջապատ պարսպաց նր՟ է լճ՟ կմ՟ ծովակ յորում լինին շուշան ծաղիկք :

Հօքիէն : Քղ՟ք մեծ բազմամարդ և գեղեցիկ և բարձրապարիսպ, կառուցեալ 'ի մէջ երկուց գետոց . շրջապատ նր՟ է իբրև չորս մղոն :

Քինթին : Քաղաք բարեչէն և բարձրապարիսպ . որոյ շրջապատն է իբր չորս մղոն : 'Ի մերձակայ լերինս նր՟ գտանին պէսպէս բոյսք բժշկականք :

Քուանփէ : Քաղաք բազմամարդ, առ որով գործեն յախճապակեայ անօթ . բայց յախճապակի նր՟ չէ 'ի լաւագունից անտի :

Թայմին կմ՟ **Թայմինկ** : Քաղաք բարեչէն յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի 'ի մէջ գետոց և լճից :

Թիէնծին : Քաղաք բազմամարդ և բազմավաճառ և փարթամ կառուցեալ առ մեծ ջրմղաւ : Սա յառաջագոյն էր լոկ գիւղաքղ՟ք . այլ յամին 1710 անուանեցաւ քղ՟ք յերկրորդ կարգի քղ՟քաց . զի է մի յերևելի վաճառատեղեաց, որք են առ արքունի մեծ ջրմղաւ : Աստ նստի մաքսապետ ազգին . և աստ բերեն նաւուք զփայտ 'ի պէտս հրոյ, և այլ ինչ՟ն իրս :

Փաօ

Փուրինչ . Բէլանճինչ . Չինըինչ : Են քաղաքք յայսմ նահանգի :

Յօդ Է . Չանսի . կամ Շանսի :

Այս նահանգ ունի իւր սահման յարևմտից զՇէնսի նահանգ . 'ի հիւսիսոյ՝ զմեծ պարիսպն, որով բաժանի 'ի Թաթարաստանու . յարևելից՝ զՓէչէլի . իսկ 'ի հարաւոյ՝ զՀօնան : Եւ Թէպէտ փոքր է ըստ տարածութեան, և երկիր նորա լեռնային, այլ կարի բազմամարդ : Գլխաւոր բերք նորա են խաղող ազնիւ և քաղցրահամ, յորմէ ոչ առնեն գինի, այլ չամիչ պատրաստական . և տանին յայլ և այլ գաւառս 'ի վաճառ : Են անդ և քարահանք մարմարիոն քարանց . և երկաթահանք . և յասպիս ակն գունազոյն . և այլ տեսակ մի քարի, որով ներկեն 'ի գոյն կապուտակ զյախճապակի անօթս . և տեսակ մի սեաւ հողոյ կամ ածուխ հանքային . զոր 'ի կիր առնուն ոչ միայն 'ի պէտս հրոյ . այլ և լուսեղէն և զանգեղէն գործեն անտի աղիւս վասն շինուածոց : Գտանին անդ և աղի ջուրք, յորոց հանեն աղ . այլ և ջերմուկք եռացեալք . որք այնչափ ջերմ են՝ զի 'ի սուղ ժամու եփեն զձու, և զայլ կերակուրս : Բայց որիզ և այլ սերմանիք, և փայտ՝ սակաւ է անդ : Գլխաւոր տեղիք նորա են հետևեալքդ :

Թայյէն : Գլխաւոր քաղաք այսր նահանգի . և մի 'ի վաղնջական քաղաքացն չինու (ուր երբեմն նստան և ինքնակալք .) մեծ, բազմամարդ, և ամրապարիսպ, կառուցեալ առ Ֆուէն գետով որ գնայ խառնի 'ի Հօհամ գետ : Շրջապատ նորա ըստ ոմանց՝ է 6 մղոն . իսկ ըստ ասելոյ այլոց՝ 9 : Ունի և բերդ, զոր պահեն Թաթար զօրք, որք են ընդ հրամանատարութեամբ բնիկ չինացի փոխարքայի նահանգին : Են անդ և բազում մեծաշէն դամբարանք մեծագործ երևելի արանց . զարդարեալք քանդակօք և պատկերօք առիւծուց, ձիոց և այլոց կենդանեաց : Յառաջագոյն էին 'ի նմին և բազում հոյակապ ապարանք . այլ այժմ ըստ առաւել մասին աւերակ են : 'Ի սմին քաղաքի գործեն պատուական կերպասս մետաքսեայս . և ոսկեթել և արծաթաթել դիպակս գեղեցիկս . և գորգս, այն է՝ խալի ազնիւ :

Փինկեան : Քաղաք մեծ և հին բազմամարդ և ամրապարիսպ . յար և նման Թայվէն քաղաքի . կառուցեալ յեզր ձակ և յարգաւանդ դաշտի առ Փուէն գետով 'ի հիւսիսակողմն սին քղքի : Ոչինչ կարի հեռի աստի է լիճ մեծ աղի . յորմէ գործեն աղ բզմ :

Սին : Քաղաք բարեշէն 'ի հարաւակողմն նախընթաց քաղաքի :

Ենկան . կմ Յէննան : Է քղք մերձ 'ի սահմանս չէնսի նհնգի, զոր ոմանք 'ի նմին նհնգի դնեն :

Լուէկան, կմ Լուխանկ, և կմ Լունկան : Քաղաք մեծ և պարսպապատ յարգաւանդ և 'ի բարեբեր վայրի :

Փուէնչէ, կմ Փուէնթէ : Քղք մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցել առ Փուէն գետով, յորմէ էառ զանուն իւր : Շրջակայ վիճակ նր բերէ որիզ առատ և այլ արմտիս . նմին իրի 'ի քղքի աստ հանեն յորիզոյ ազգ մի ցքւոյ զօրեղ և պատուական : Գտանին անդ և բզմ ինքնաբուղխ ջերմուկք առողջարարք :

Յօդ Գ . Չէնսի :

Այս նհնգ ձգի 'ի հիւսիսային արեւմտեան եզերս չինաց աշխի առ սահմանօք Թաթարաց . և ունի իւր սահման յարեւմտից զմեծ անապատն, զսիֆան և զգօգօնոր . յարեւելից՝ զշանսի և մասամբ իմն ըզզհօնան . 'ի հիւսիսոյ՝ զմեծ պարիսպն . իսկ 'ի հարաւոյ՝ զսուչուէն նահանգն : Եւ է մի յը̅արձակագոյն նհնգաց չինաց աշխի : Երկիր նր ը̅ մասին լեռնային է, և ը̅ մասին դաշտային . 'ի լերինս են պատուականք արօտք անասնոց . և եղջերու, և այծեամն, և ցուլ վայրենի, արջ, և այլ գազան մի՝ որ նման է ընձու, որոյ մորթ 'ի պատուի է առ չինս : Այլ և բովք ոսկւոյ, յորոց ուղխք յորդախաղացք բարձել բերեն ոսկեփոշի խառն ը̅ հողոյ և ը̅ աւազոյ : Գտանի անդ և ածուխ հանքային . և ազգ մի կակուղ քարի դեղնագոյն, որ ունի սեաւ բիծս . յորմէ կազմեն ըմպանակս . և բժիշկք նց ասեն թէ գինի ըմպել նովին բաժակաւ գեղթափ է ը̅դէմ թիւնից, և հրատապնայ տենդի ճր հիւմնայի են : Իսկ դաշտային տեղիք նր գոլով ոռոգել բազմութբ գետոց և վտակաց, արգաւանդ են, և բերեն ցորեան, գարի, կորեակ և այլ արմտիս առատ . այլ որիզ և պտուղս սակաւ : Ունի և մեղր, մոմ, խաշնդեղ այն է՝ ռէվէնտ . և

սամսահմանաւ փայտ աղնիւ. և պէսպէս բոյսս բժշկականս, և բամբակս 'ի կերակուր: Ունի և ընտանի անասունս բազումս, որպէս այծ, ոչխարս դմակաւորս, և երիվարս ևն: Գտանի անդ և տեսակ մի չղջիկան, զոր ուտեն չինացիք. միս նորա առաւել ախորժահամ համարեալ է առ նոսա, քան առ մեզ միս կաքաւուց. յաճախ է անդ և Թռչունն գեղեցիկ՝ կոչեցեալ ոսկեհաւ, սակս ոսկեգոյն փետրոց նորա:

Յայս նահանգ, որպէս և յայլ նահանգս չինաց գտանին բազում մեծամեծ կամարք յաղթութեան կանգնեալք 'ի պատիւ երևելի երևելի արանց. այլև մեծամեծ և հրաշալի կամուրջք. յորս անուանի է կամուրջն սուֆրանճ գետոյն, ձգեալ լեռնէ 'ի լեառն. երկայնութիւն նորա 400 կանգուն. բարձրութիւն 500 փոքր կանգուն. իսկ լայնութիւն 100, բովանդակեալ 'ի մի միայն կամար. զոր օտարազգի ճանապարհորդք 'ի գիրս իւրեանց կամուրջ Թռչական կոչեն. իսկ չինք կամուրջ երկնահաս կամ ամպահաս. որ արդարև անհաւատալի իմն էր. թէ ոչ արք արժանահաւատք և ականատեսք վկայէին: Գտանի միւս ևս երևելի կամուրջ 'ի չինաց աշխարհի, բայց չգիտեմք ստուգիւ թէ 'ի սմին նահանգի իցէ, եթէ այլուր. որոյ երկայն՝՝ 660 ձողաչափ. իսկ լայն՝՝ մի և կէս. տափարակ և անկամար, հաստատեալ 'ի վերայ 300 խարսխաց կամ սեանց: Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ:

Սիկան, կամ Սինկան, և Սիուկան. այլև Սինկանֆու: Քաղաք մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ յընդարձակ և արգասաւոր դաշտի առ հուէյ կամ խուէյ գետով, որ խառնի 'ի Հօհամ գետ մեծ: Պարիսպ նորա է կատարեալ քառակուսի. շրջապատ նորա ըստ հօրն քոնթեայ է 10 մղոն. իսկ ըստ այլոց 11 կամ 12. և պարիսպքն բարձր և թանձր. ունելով շուրջանակի և խրամ խորայատակ. և ամրացուցեալ աշտարակօք, որք իբր մի մի քարընկեց հեռի են 'ի միմեանց: Կան անդ մինչև ցայժմ հոյակապ ապարանք, ուր յառաջագոյն բնակէին ինքնակալք չինաց: Բնակիչք այսր քաղաքի, որպէս և համօրէն նահանգին զօրաւոր են, կորովի, և բարձրահասակք և քաջ պատերազմականք. վասն որոյ և զօրք նոցա գեր 'ի վերոյ են քան զայլ ամենայն զօրս չինաց: Են անդ և բազմութիւն զօրաց թաթարաց, կարգեալ 'ի պահպանութիւն հիւսիսային սահմանաց աշխարհին. յորոց վերայ իշխէ մի ոմն սպարապետ բնիկ չինացի. և բնակութիւն նորա պարսպաւ որոշեալ է 'ի քաղաքէն: Յայսմ վայրի 'ի դէպ համարիմ յիշատակել զհռչակաւոր գրոշածն 'ի քարեղէն արձանի, որ յամի Տն 1625 գտաւ 'ի Սանտուաէն աւանի, որ մօտ է առ այս քաղաք 'ի պեղելն զերկիր արկանել հիմն պարսպի միոյ. զոր քաղաքապետ տեղւոյն ետ հաւատարմութբ օրինակել. և դնել 'ի պահեստի 'ի սիկան քաղաքի ։

Արդ՝ այն հռչակաւոր յիշատակարան, զորմէ ըարձակ գրեն աԹանաս կիրքերիոս. անդրէաս մուլլերոս. եւսեբիոս հռենաւդոկիոս. և այլք բազմք որք իմաստունք, ըս որս և ասսեման 'ի մատենագր. արևել. հատ. դ. մասն ա. Թղթհմր 538 տպ՝ հռովմայ. է քարեղէն արձան մեծ, յորում են գրոշածք գրովք չինաց և ասորւոց. որ յարանց գիտնականաց նախ 'ի բարբառ չինաց յայտնաբանեցաւ. ապա Թարգմանեցաւ 'ի լեզու փորդուքալաց. յետոյ 'ի 1631 իտալերէն. և 'ի 1636 լատիներէն տպագրութբ 'ի լոյս ընծայեցաւ ։

Ի գլուխ արձանին գոյ նշան սբյ խաչի քանդակեալ ։ Վերնագիր չինաց գրոշածոյն է երեք տող. և իւրաքանչիւր տողի են երեք երեք տառք ։ Իսկ բուն գրոշածն է կը տող կմ էջ Թուէլ յաջմէ 'ի ձախակողմն. կմ 'ի ձախմէ յաջակողմն. իսկ Թուէլ 'ի վերուստ 'ի վայր ը սովորութե չինաց լինին իը տողք կմ էջք. և ամ բառք պարունակեալք 'ի նմ են իբր 1736. բայց քզի և 'ի լուսանցս գտանին քսան և հինգ բառք. վճյ ը ամ՝ են 1761 ։ Եւ ճառի 'ի նմ զմիութէ այ և զերրորդութէ անձանց. որ զամ արարածս յոչնչէ գոյացոյց, ըս նոսին և զմարդն առաջին, զոր սկզբնական արդարութբ ճոխացոյց, և տր ամի կացոյց ։ Ճառէ և զմեղացն ադամայ, և զպէսպս մոլորութեց որդւոց նր. որք փխկ արարչին զարարածս պաշտելով յերեք հարիւր վաԹսուն և հինգ աղանդս ասին հերձեալ ։ Ճառէ զմարդեղութէն քնի, զծննդենէ, զԹլփատութէ, զմահուանէ, զյարութէ եւզհամբարձմանէ ։ Եւ ես զգրոց հին և նոր կտակարանաց. զմկրտութէ, զխաչէ, և զերկրպագութէ ըս արևելեան կողմն ։ Ճառէ զքարոզութէ առաքելոց, և զբազմազան ծիսից քրիստոնէից, զզգեստուց նց, զպահոց, զաղօԹից, ըղխորհրդական խոստովանութէ, և զայլոց սովորութեց ։ Այս պատմի Թէ օլօփունէն քարոզ աւետարանին 'ի Թաչինայ ըս յասորւոց՝ եկած 'ի չին զօրէնս քրիստոնէից յամի փրկչին 636. յորժամ 'ի չին Թագաւորէր Թայսուամ երկդ, 'ի տոհմէ Թամիայ. որ է երեքտասաներրդ արքայազուն տոհմ չինու ։ Աւանդի և հրովարտակն, զոր յերկոտասաներրդ ամի տրուե իւրոյ, Ք յամի փրկչին 639 եհան, որով հաստատէ զքրիստոնէական կրօնն: Նա պատմի թէ հրամայեաց մանտարինաց կանգնել եկեղեցի. և տալ նախայիշատակեալ օլօփունէնայ քան պաշտօնեայս. և ետ նկարել զպատկեր նորա և կախել յորմն եկեղեցւոյն: Այս պատմին զանազան անցք, որք անցին ը̄ քրիստոնէական կրօնն 'ի չին յաջողակք և ձախողակք մինչև ցամ ա̃ն 907:

Իսկ գրուածն 'ի բարբառ ասորւոց յերկու մասունս բաժանի. 'ի միում մասին նշանակին անուանք եօթանասուն քարոզչաց աւետարանին քս̃ի, որք եկեալ յամի փրկչին 636 զքրիստոնէական հաւատս քարոզեցին 'ի չին. իսկ յեր̄կդումն նշանակին նոքա, որք կանգնեցին զայն արձան զորոց ասի թէ էին ատրէք նեստորականք. և ժամն՝ յորում կանգնեցաւ:

Սինգֆու, կմ̃ Սինհնֆու: Է գլխաւոր մերձ 'ի մեծ պարիսպն. որ 'ի հնումն էր մայրաք̃ղք տ̃րուե̃ն հեյայ կմ̃ դանկութայ, որ տիրէր և 'ի վ̄ր մասին ինչ չէնսի նա̃հնգին. և մնացել մասն թ̃գրութ̃ իւրոյ ձգել տարածէր 'ի թաթարաստան. և յամին 1226 քանդեցաւ 'ի Չինկիզխանէն:

Ֆօնկեան, կմ̃ Ֆօնդչեանկ: Քղ̃ք մեծ և բազմամարդ յարգաւանդ վայրի. որ յայս անուն անուանեցաւ յառասպելական թռչնոյ միոյ. զորմէ ասեն չինացիք ունել պէսպ̃ ոսկեփայլ գոյնս զարմանալիս: 'ի Քղ̃քի աստ դտանին բղ̃մ մեծամեծ շինուածք:

Քօնկեան: Է Քղ̃ք մեծ և բազմամարդ առ վէյ գետով. ունելով շուրջանակի անմատոյց լերինս. որք են նմ̃ փակ պարսպաց և ամրոցաց, և պահեն զնա յարշաւանաց թաթարաց: 'ի քաղաքի աստ է հոյակապ և մեծաշէն դամբարան. զորմէ ասեն թէ իցէ գերեզման Ֆօհեայ ինքնակալի հիմնարկուէի տ̃րուե̃ չինաց:

Փէնկլէանկ: Քղ̃ք մեծ և գեղեցիկ 'ի վ̄ր վէյ գետոյ 'ի զուարճալի և յարգաւանդ վայրի: 'ի Քղ̃քի աստ են բղ̃մ մեհեանք մեծաշէնք. այլև պալատ մի հոյակապ. որ է գլխաւոր զարդ Քղ̃քին:

Քօնէ, կմ̃ Քանէ: Ամրոց հզօր 'ի հիւսիսակողմն փէնկլէանկայ:

Լանչէօ, կմ̃ Լինխայոլ: Քղ̃ք կմ̃ բերդ ամուր առ հօհամօ գետով մերձ յաւարտ մեծի պարսպին. ուր ոչ սակաւ տուրևառք լինին 'ի մէջ թաթարաց և չինաց. զի թաթարք բերեն անդ մորթս ազգի ազգի վայրի կենդ̃ց, և 'ի չինաց առնուն փոխարէն պատառս:

Սե.

Սինէնկ ։ Ամրոց յաւաղուտ անապատի առ մեծի պարսպաւ մերձ 'ի սահմանս Թաթարաց գօղօնօրայ ։

Սօհէգօվ ։ Է նոյնպէս ամրոց յաւարտ մեծի պարսպին յեզր սահմանաց չինաց Ծի ։

Լէն, կամ Լէնկճաու ։ Քղք մերձ 'ի յեաւնէ գետ ոչինչ կարի հեռի 'ի մեծ պարսպէ անտի, շրջապատեալ լեռամբք․ յորս գտանին պէսպէս վայրենի գազանք․ որ ցուլք վայրենիք, և այլ տեսակ մի գազանի, որ եղջիւրս ունի․ իսկ մորթ նր նման է ընձու ։

Գիտել պարտ է, զի 'ի հիւսիսակողմն փէչէլեայ չանսեայ և չէնսեայ գոյ ըարձակ տարածութիւն երկրի շրջապատեալ 'ի մեծէ պարսպէն․ ուր գտանին պատուական քղքք և բազմունի բնակչաց․ գլխաւորքն 'ի քղքաց անտի են սք․ Թուէնեօն կամ Թայէնեօնէ, Հուէնչէն, Իւ․ Սօ, Հուաչէնհու, Փաօնկան, և Իւգէն ։

Յօդ Դ․ Սուչուէն ։

Սուչուէն կամ Սուչուէն և կամ Սէչուէն ։ Է մի յըարձակ և 'ի բեղմնաւոր նհնգացն չինաց Ծի․ որ ունի իւր սահման յարևմտից զսիփան և զդիպէդ․ յարևելից՝ զհուքվան․ 'ի հիւսիսոյ՝ զչէնսի․ իսկ 'ի հարաւոյ՝ զյունան և զքվէյճէվ ։ Այս նհնգ քանդեցաւ 'ի ժմկս պտղմաց Թաթարաց․ այլ այժմ անդրէն դարձ արար 'ի նախկին բարեշինութ իւր ։ Հօամ գետն և առաջք ինչ նր անցեալ ը մէջ այսր նհնգի յարևմտից յարևելս, արգասաւոր գործէ զերկիր նր․ որ և յայն սակս բերէ ցորեան և այլ ազգի ազգի արմտիս առատ․ և պտուղս բազմատեսակս․ և եղէգն շաքարաբեր․ և մետաքս ազնիւ և առատ․ և խաշնդեղ․ այն է՝ ռէվէնտ ։ Ունի և սնտիկ, և անագ, կապար․ և մագնիս քար, և աղ բզմ, զոր հանեն յաղի ջուրց ջրհորոց և լճից ինչ ։ Գտանի անդ և փոքրիկ Թռչուն ինչ գեղեցիկ յոյժ․ որոյ կտուցն կարմիր է․ և փետք փետրոց ունի 'ի վր աղուամաղ քնքուշ երփն երփն փայլեալ․ այլ կեանք նորա նուազ է․ զի հազիւ ապրի ամիս մի ։ Չինացիք առասպելեն զնմանէ թէ 'ի ծաղկէ միոյ ծնանի․ զորոյ և զանունն կրէ․ զի կոչի Թունղօնղունն յանուն ծաղկին ։ Գլխաւոր տեղիք այսր նհնգի են հետագայքդ ։

Չինդու, կամ Քինկթու, և կամ Չէնկթօն ։ Է գլխաւոր

Քղ՟ք այսր նհ՟նգի մեծ ամուր բազմամարդ և բազմավաճառ . կառուցեալ առ միով յառաջից քեանձ գետոյն : 'Ի քղ՟քի աստ է մեհեան մի մեծաշէն , և 'ի նմ՟ դամբարան միոյ 'ի նախնի հռչակաւոր ինքնակալացն չինու :

Սուչէօ, կմ՟ **Սօճըլա** : Քղ՟ք մեծ և բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ 'ի վ՟ր մեծի ջրմղի կմ՟ առուի, մօտ առ քեանձ գետն և առ լիճ մի : Շրջապատ քաղաքին է իբր 12 մղոն :

Մահօս : Քղ՟ք բարեշէն և բազմավաճառ առ քեանձ գետով :

Ոէնկօպ · **Եէննին** · **Խաննիւ** · **Լիւդան** · **Եայ** · **Տօլան** : Են քղ՟քք և աւանք :

Վոանքինկ : Քղ՟ք գեղեցիկ մեծ և բազմամարդ . շինեալ ընդ լանջակողմն լերին 'ի մուտս քինքայ գետոյն 'ի քեանձ գետն մեծ . տունք նր՟ և այլ շինուածք ըստ ձևոյ թատրոնի գեղեցկագոյն կարգաւ շինեալ կան ը՟ զառ 'ի վայր լերին : 'Ի սմին քղ՟քի շինեն տուփս գեղեցկանկարս :

Փաօնին, կմ՟ **Փաւնին** : Քաղաք մեծ և գեղեցկաշէն և բազմավաճառ կառուցեալ մերձ 'ի տեղին , ուր երկու առաջք քինքայ գետոյն խառնին 'ի միմեանս :

Լօնկան, կմ՟ **Լօնկնան** : Քաղաք ամուր և բազմամարդ կառուցեալ իբր նախապարիսպ ը՟դէմ արշաւանաց Թաթարաց :

Հանդօանկ · **Հանդէհօն** · **Զօնգի** · և **Փէյ** : Են քղ՟քք և բերդք 'ի սմին նհ՟նգի :

Յօդ Է · Հօնան :

Այս նհ՟նգ ունի իւր սահման յարևելից զշանթօնկ և զնանքին . յարևմտից՝ զշէնսի . 'ի հիւսիսոյ՝ զըշփէքին և զշանսի . իսկ 'ի հարաւոյ՝ զհուքուան և զըշքեանձսի : Օդ այսր նհ՟նգի մաքուր է բարեխառն և առողջարար . և երկիրն ը՟ առաւել մասին դաշտային , ջրարբի և քաջ մշակեալ . վ՟յ և արդաւանդ և բարեբեր , ամենայն և ամենազգիտ 'ի շահս և 'ի դարմանս մարդկային պիտոյից , կենաց և վայելչութե և փափուկ . մինչև կոչել չինաց զայս նհ՟նգ դրախտ Չի իւրեանց : Նմին իրի պատմեն նք՟ , թէ Ֆօհի առաջին ինքնակալ իւրեանց , և այլ նախնի ինքնակալք հարեալ 'ի սէր այսր նհ՟նգի անդ անցուցանէին զմեծ ման կենաց իւրեանց։ Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ։

Քայֆօնկ։ Է գլխաւոր քաղաք այսր նհ՟նգի մեծ, բազմամարդ և փարթամ՝ կառուցեալ 'ի դաշտավայրի իբր 4 մղոնաւ հեռի 'ի Հօամ՝ գետոյն մեծէ. շրջապատ նր՟ է իբր 9 մղոն։ Յառաջին ժմ՟կս առաւել մեծ էր և հոյակապ և գեղեցիկ, ուր բնակէին բզ՟մ իշխանազունք և արքայորդիք Ինքնակալաց Չինաց. այլ այժմ ոչ սակաւ անշքացեալ է։ Վ՟ն զի պատմի թէ յամի փրկչին 1642 մինչդեռ մի ոմն յիշխանաց ապստամբեալ յԻնքնակալէն պաշարեալ էր զքղ՟քս զայս բազմուբ՟ զօրաց, հրաման ետ Ինքնակալն յեղակարծ ժամու հատանել զթումբ Հօամ գետոյն. և յորձանք ջուրց նր՟ անհնարին բռնուբ՟ դիմեալ ը՟ զառ 'ի վայր. քանզի ծոց գետոյն առաւել բարձր է ք՟ք զշրջակայ դաշտն ուր քղ՟քն է շինեալ. կործանեաց գրեթէ զբոլոր քղ՟քն, և հեղեղեալ ծածկեաց զա՟մ գ՟ւռն. յորում ջրահեղձոյց կորեան ոգիք աւելի ք՟ք 300000։ Յետ այնորիկ վերստին շինեցաւ մերձ 'ի տեղին ուր էր յռ՟ջագոյն. բայց չէ ևս եհաս 'ի չափ առաջնոյն։

Հօագին։ Քղ՟ք մեծ յարևմտեան կողմն նախընթաց քղ՟քին առ քեանջ գետով։

Նանխանկ։ Քղ՟ք փոքր՝ այլ բարեշէն և բազմամարդ. շրջակայ վիճակ նր՟ կարի արգաւանդ է և բերրի. վ՟յ պարէնք կերակրոյ առատ են անդ և դիւրագին. ուր մարթ է բիւրաւոր զօրաց կալ մնալ ը՟երկար առանց նեղութե՟ ինչ բնակչաց։

Հօնան։ Քղ՟ք մեծ և բազմամարդ կառուցեալ 'ի մէջ լերանց և գետոց. որ ունի զանուն 'ի նհ՟նգէն, կմ՟ նհ՟նգն 'ի նմէ։ Վ՟ն այսր քղ՟քի ասեն Չինացիք թէ է 'ի միջակէտն բոլորակ հողագնտոյս մերոյ. զի նք՟ զն՟ իւրեանց համարին լինել 'ի մէջն բոլոր հողագնտոյս. և զքղ՟քս զայս կեդրոն նր՟։

Թէնֆօնկ հէէն։ Քղ՟ք փոքր, այլ հռչակաւոր սակս բարձր աշտարակի կմ՟ դիտանոցի միոյ, զոր ասեն կառուցեալ հազար ամօք յռ՟ջ ք՟ք զծն՟ քեւքօնի երևելի աստեղաբաշխի չինացւոյ 'ի զննել անտի զաստեղս. ուր տեսանի մինչև ցայսօր գործի իմն 'ի գտանել նովաւ զգիծն միջօրէական և զբարձրութի՟ բևեռին։ Չինք սմա ընծայեն զգիտակողմնացոյց սլաքին, զոր 'ի կիր առնուն նաւավարք։

Քըմէնէ։ Քաղաք ոչ այնչափ ինչ մեծ, այլ գեղեցիկ կառուցեալ 'ի զուարճալի և յարգաւանդ դաշտի 'ի մէջ գետոյ. նաւն և նարինջն այսր քղքի անուանի են առ չինս:

Իունինն, կմ Ջունինն: Քղք բազմամարդ առ վէյ գետով յընդարձակ և 'ի բեղմնաւոր դաշտավայրի:

Քունկինն: Քղք մեծ և բազմամարդ առ սահմանօք չանսեայ և փէքինու 'ի վր մեծի գետոյ միոյ. ուր գտանի տեսակ մի ջրային կենդանւոյ, որ նման է կոկորդիլոսի, զորոյ զճարպն վառեն 'ի կանթեղս փոխ ձիթոյ:

Յօդ Է. Չանթօնկ կմ Շանթօնկ.

Այս նահանգ ունի իւր սահման յարևելից զծովն նանքինու որ կոչի և ծով դեղին ը մէջ քօրէայ և չինու. 'ի հիւսիսոյ՝ զծոցն փէչէլեայ և մասամբ իւիք զփէչէլի նհնգն. յարևմտից՝ զհօնանն և ը մասն զփէչէլի. իսկ 'ի հարաւոյ՝ զնանքինն և զքեանձսի: Ընդ այս նհնգ անցանէ մեծ ջրմուղն թգրական, ընդ և ը նհնգն փէչէլեայ. այլ բաց յայնմանէ են անդ և գետք յոլովք մեծամեծք և փոքունք և լիճք, որք բերեն ձուկն առատ: Երկիր նր պատուական է և արգաւանդահող. բերէ որիզ և այլ արմտիս առատ. և ազգի ազգի պտուղս: Յաճախ են անդ և ընտանի և վայրենի հաւք պատուականք 'ի կերակուր. ընդ և որդն այն, զորմէ 'ի ներածութ խօսեցաք, որ կազմէ մոմ սպիտակ 'ի վր ծառոյ: Գտանի անդ և ազգ մի շերամոյ, որ կազմէ մետաքս 'ի վերայ ծառոց և թփոց, զոր կոչեն մետաքս վայրենի. որ առաւել տևողական է քան զընտանի մետաքս, բայց չունի ըզնորայն պայծառութի և ազնուութի: Հռչակաւոր է նհնգս այս առ չինս, սակս լինելոյ նր հայրենիք մեծի օրէնսդրի նց և վջալի կոնփուսիոսի: Իսկ գըլխաւոր տեղիք նր են հետագայքդ:

Ծինան, կմ Ցինան: Է գլխաւոր քղք այսր նհնգի, մեծ գեղեցիկ բազմաժողով և բազմավաճառ. կառուցեալ 'ի ջրարբի և յարգաւանդահող վայրի առ գետով միով: Գլխաւոր վաճառք նր են մետաքս ազնիւ ընտանի և վայրենի. գործեն անդ և ապակի պայծառ և գեղեցիկ, բայց այնչափ դիւրաբեկ է, զի և 'ի գոյզն հողմոյ խորտակի:

Լինցին, կմ Լեանցին: Քաղաք բարեշէն ծովեզերեայ կա-

կառուցեալ 'ի վերայ բլրոյ 'ի գեղեցիկ և 'ի զուարճալի վայրի :

Թէնֆու : Է նոյնպէս քաղաք ծովեզերեայ մեծ և բազմամարդ և բազմավաճառ · ունի նաւահանգիստ պատուական, և բերդ ամուր, զոր միշտ պահեն բազմութիւնք զինուորաց · ունի և քանի մի նաւս պատերազմի կարգեալս 'ի պահպանութիւն նաւահանգստի նորա :

Չէնֆու, կամ Շէնֆու : Քաղաք ծովեզերեայ, մեծ, բազմամարդ և բազմավաճառ և բարեկլից : 'Ի վիճակի այսր քաղաքի յորովայնս ոմանց կովուց գոյանայ քար երբ ձուաչափ փոքր մի դեղնագոյն և դիւրաբեկ · զոր երբ գեղթափ քան զբանդէհիր 'ի կեր առնուն ընդդէմ զանազան ախտից :

Լէնֆու, կամ Յէնֆու : Քաղաք մեծ և բարեշէն կառուցեալ յընդարձակ դաշտի առ գետով միով : 'Ի վիճակի այսր քաղաքի է Քիովֆէու քաղաք անուանի առ չինս, զի անդ ծնաւ կօնփուծիոս մեծ փիլիսոփայ նոցա · ուր և կառուցեալ կան բազում տաճարք և դամբարանք 'ի յիշատակ նորա :

Ուէին : Քաղաք մեծ և ամրապարիսպ կառուցեալ 'ի դաշտավայրի, զոր դնեն երկրորդ 'ի կարգս գլխաւոր քաղաքաց այսր նահանգի :

Փին, և Քէն : Են երկու քաղաքք այսր նահանգի 'ի հիւսիսակողմն նորա :

Յօդ Է. Նանքին :

Նանքին որ և Գիէանկնան : Է երկրորդ 'ի կարգս նահանգացն չինու զկնի Փէչէլեայ մեծ փարթամ և բազմամարդ · որ ունի իւր սահման յարևելից ըզմասն զայն ովկիանու, որ կոչի Ծոց Նանքինու · յարևմտից՝ զՀօնան և զՀուքվան · 'ի հիւսիսոյ՝ զՇանթօնկ · իսկ 'ի հարաւոյ՝ զՔէանսի : Ընդ այս նահանգ անցանէ քեանկ կամ քեամ գետն երևելի, որ մեծ է և շատաջուր քան զայլ ամենայն գետս չինու, և գնայ անկանի 'ի ծովն : Նոյնպէս և Հօամ երկրորդ երևելի գետ չինու ոռոգանէ զմասն ինչ սահմանաց նորա, և մտանէ 'ի նոյն ծոց Նանքինու : Բաց յերկուց մեծամեծ գետոց առաւել են անդ և այլ բազում գետք և վտակք, և լիճք մեծամեծք և մանունք, որք արգասաւորս գործեն զերկիր նորա · ուստի և առատութիւն է անդ ամենայնի · զի ունի որիզ, ցորեան և արմաւս և ազգի ազգի պտուղս. և բամբակ, մետաքս, խէժ մասնաւոր՝ որ այն ինքն է հռչակաւոր վէռնիքն չինու. որով օծանեն զպէսպէս ձեւակերտս. որք 'ի յարգի են ը̅ ա̅մ տեղիս : Ծաղկեալ է յոյժ և վաճառականութիւն յայսմ Նէնգի. ուր անհամար գործարանք գտանին մետաքսեայ կերպասուց, բամբակի պաստառաց, թղթոյ և մելանի, և այլ ազգի ազգի ձեւակերտաց. յայն սակս և հասն, զոր ամի ամի տայ այս Նէնգ ինքնակալին, ասի թէ հասանէ ց32 միլիոն ղռշ. թող զմաքսն, զոր առնուն 'ի վաճառաց. որ և այն չէ ինչ փոքր : Բնակիչք ն̃ր են ժրաջան 'ի գործս, ճարտարք, ուշիմամիտ և ուսումնասէր. յորոց ելանեն բա̃մ երևելի երևելի գրագէտք և իմաստունք, որք վ̃ս իմաստութե̃ իւրեանց ամբառնան յայլ և այլ իշխանութիւնս : Գլխաւոր տեղիք այսր Նէնգի են հետագայքդ :

Նանքին : Է գլխաւոր քաղաք այսր Նէնգի, և երբեմն մայրաք̃ղք համօրէն տէրութե̃ չինաց զկնի փէքինու. անուն ն̃ր թարգմանի՝ Արքունիք հարաւոյ. վ̃ս զի 'ի հնումն աստ էր աթոռ ինքնակալաց. զոր յետոյ փոխադրեցին 'ի փէքին. Նեղեալք 'ի հարստահարութեն Թաթարաց, որք ստէպ արշաւէին անդ 'ի ծովակողմանէ : Ընդ այն ժամս ք̃ղքս այս ը̅ կարծեաց չինաց գերազանցէր զայլ ա̅մ ք̃ղքօք համօրէն Ճ̃ի՝ մեծութ̃բ, գեղեցկութ̃բ և հարստութ̃բ. և էր շրջապատեալ երեք կարգեան պարսպօք. և շրջապատ վերջնոյն էր 48 մղոն. ո̃չ երևի մինչև ցայսօր յաւերակաց անտի. որ և էր [illegible] սահման գաւառի ք̃ ք̃ղքի միոյ : Նոյնպէս և նաւահանգիստ ն̃ր ը̅արձակ էր, խորայատակ և անքոյթ 'ի հողմոց, այլ այժմ 'ի զն̃ն տեղիս լցե̃լ է տղմով և աւազով, զոր Քեանձ գետն անդադար լնու 'ի նմ. վ̃յ և անբաւական մեծամեծ և ծանրաբեռն նաւուց : Ըստ նմին օրինակի և ք̃ղքն ոչ սակաւ անշքացե̃լ է յառաջնոյ վայելչութե̃ իւրմէ. սակայն և այնպէս գերագոյն է ք̃ զայլ ք̃ղքս չինու՝ բաց 'ի փէքինու. որ և է կառուցե̃լ 'ի վ̃ր Քեանձ մեծի գետոյն մերձ 'ի բերան ն̃ր, ը̅ որ մտանէ 'ի ծովն, և գործէ անդ նաւահանգիստ. շրջապատ ն̃ր այժմ է իբր 36 մղոն. թող զլայնարձակ արուարձանեայս ն̃ր. և է քաջ պատսպարեալ պարսպօք, և պահպանե̃լ 40 հազար զինուորօք. իսկ զթիւ բնակչաց ն̃ր հասուցանեն ցերկու միլիոն : Փողոցք ն̃ր են չափաւոր ը̅ լայնութե̃, այլ երկայն և քարայատակ. են 'ի նմ 'ի տեղիս տեղիս և առուք կմ̃ խրամք հոսական ջրոց,

Է

է՟ որս մարթ է նաւել նաւակօք ։ Ունի և բզ՟մ պալատս գեղեցիկս իշխանաց և ազնուականաց, բայց տունք հ՟րկ ք՟ղքացւոց ցածունք են և անշուք ։ Իսկ կրպակք նր՟ անհամար են և լի հարստութբ՟ ։ Արքունի ապարանք, ուր երբեմն բնակէին ինքնակալք չէր ինչ ը՟հատ մեծութ՟բ և շքեղութ՟բ յարքունեաց անտի փէքինու ։ այլ 'ի 1642 հրկէզ եղև, յորում ժմկի թաթարք կալան զինքնակալութն չինու ։ Վ՟յ չէք այժմ նշանաւոր ինչ շինուած 'ի նմ՟, բաց 'ի դրանց նր՟, որք գեղեցիկ են և մեծաշէն ։ և բաց 'ի մեհենաց ումանց ։

Այլ ը՟ զնամ երևելի է հռչակաւոր աշտարակն արտաքոյ դրան ք՟ղքին ։ անուանեալ աշտարակ յախճապակեայ ։ զի արտաքուստ համակ պատեալ է բազմագունի յախճապակեաւ ։ վ՟յ 'ի հարկանել ճառագայթից արեգական 'ի վ՟ր նր՟, շողշողեալ փայլէ յա՟մ կողմանց ։ Որմունք նր՟ են 'ի թրծեալ աղիւսոյ ։ որք այնպէս քաջ մածուցեալ են ընդ միմեանս, զի բոլոր շինուածն թուի միաստանի զանգուած ։ որ և է կառուցեալ 'ի վ՟ր հաստահիմն խարսխի ։ որ է բովանդակ յորձաքար վիմաց ժ՟բ աստիճանօք բարձր 'ի գետնոյ ։ և շրջապատեալ քարեղէն սիւնակօք ։ Բարձրութ՟ աշտարակին է 200 ոտնաչափ ։ և են 'ի նմ՟ 884 աստիճանք 'ի ստորոտէ մինչև 'ի գլուխն ։ Ձև նր՟ է ութանկիւնի ։ որոյ իւրաքանչիւր կողմն է հինգ ոտնաչափ ։ և բոլոր շրջապատն 40 ։ Բայց զայս չափ տարածութ՟ պարտ է իմանալ վ՟ս ստորին կողման ։ ք՟զի 'ի վերին կողմանս առ սակաւ սակաւ անձկանայ ։ 'Ի գագաթան է գունտ մի, զոր չինք համակ ոսկի ասեն ։ բայց ը՟ աւելոյ այլոց է ազնիւ ոսկեպատ ։ Այն աշտարակ է բաժանեալ յինն յարկս կմ՟ դստիկոնս ը՟ զաթս 'ի վ՟ր միմեանց ։ յիւրաքանչիւր յարկի է մի մի սենեակ զարդարեալ պէսպէս ոսկեզօծ քանդակօք, գունագեղ նկարուք և դրօշելովք կռոց ։ Ստորին սենեակն բարձր է և մեծ ք՟ զայլս ։ որ յերից մեծամեծ դրանց ենթ ընդունի զլոյս, զի չունի լուսամուտ ։ իսկ վերինքն յա՟մ կողմանս ունին մի մի լուսամուտ ։ Եւ ևս՝ առ իւրաքանչիւր յարկօք արտաքուստ են քիւք կմ՟ թևք ։ այն է՝ սաչախ, լայն և վայելչազարդ ։ և յա՟մ անկիւնս նց՟ կախեալ կան փոքրիկ զանգակք, որք 'ի շնչել հողմոց հնչեցուցանեն ձայն գեղեցիկ ներդաշնակութ՟ ։ Արդ՝ թէպէտ իբր 400 ամք են զի շինեցաւ այս աշտարակ, սակայն կայ մնայ ամբողջ և անարատ ։ Այս ք՟ղք է գլխաւոր ոսումնարան չինաց . անդ է և երևելի ճեմարանն բժշկաց նց՟ . ուր և գտանին բզ՟մ գրադարանք և վճ՟առք անուանիք առ նս՟, և դրատունք յոլովք . ոճ՟ և ուղղագոյն և ընտրելագոյն բարբառ չինաց է 'ի սմ՟ն քղ՟քի : Են անդ և բազմութ՟ն իշխանաց և արքունի գործակալաց :

Թայէին, կմ՟ Թայէինճ : Քղ՟ք գեղեցիկ բազմամարդ և բազմավաճառ յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի առ քեանճ մեծ գետով :

Չիթէու : Քաղաք մեծ և բարեշէն առ նովին քեանճ գետով :

Չինկիանկ, կմ՟ Քինկիանկ : Քղ՟ք փոքր, այլ բարեշէն ամրապարիսպ և հզօր կառուցեալ առ քեանճ գետով մերձ 'ի բերան նր՟, ք՟ որ մտանէ 'ի ծովն . ուստի և է սա իբր նախադուռն բոլոր տրու՟ն չինաց 'ի ծովակողմանէ : 'Ի շրջակայ վիճակի նր՟ գտանին բզ՟մ մեհեանք ցրիւ աստ և անդ, և առ նոքօք բնակարանք քրմաց :

Եանթէու, կմ՟ Ցանկէու : Քաղաք մեծ, բազմամարդ և բազմավաճառ մօտ առ քեանճ գետ . բնակիչք նորա աւելի են ք՟ 200000 . Թո՛ղ զԹաթար զօրս որք կան անդ 'ի պահպանութ՟ն քղ՟քին . գլխաւոր վաճառք նր՟ են աղ, նկարք կմ՟ պատկերք չինաց, զի բազմութ՟ն նկարչաց գտանին անդ . և այլ պէսպ՟ս ձեռակերտք :

Ֆօնկիանկ : Քղ՟ք մեծաշէն և ամուր կառուցեալ 'ի վր՟ բլրոյ առ վէյ գետով, որ մտանէ 'ի հօնկ լիճն : Են 'ի նմին բզ՟մ մեծամեծ շինուածք, ոճ՟ աշտարակք, մեհեանք և զամբարանք զորս շինեաց հօնկֆու թագաւոր չինաց . զորմէ ասի թէ 'ի մանկութ՟ն իւրում էր ծառայ խոհարարի միոյ . կմ՟ ըստ այլոց քուրմ անինչան . ապա սակս զգօնութ՟ն իւրոյ և քաջագործութ՟ն, որ արիաբար մարտուցեալ ընդդէմ Թաթարաց՝ վանեաց զնոսա յերէ՟ն չինաց, ամբարձաւ 'ի պատիւ ինքնակալութ՟ն . և զայս քղ՟ք արար իւր աթոռանիստ առ ժմկ մի :

Լիութէն, կմ՟ Լիուֆէ : Քղ՟ք բարեշէն և բազմամարդ 'ի զուարճալի և յարգաւանդ վայրի կառուցեալ մերձ առ շաւ լիճն . ուր է կղզի մի երկայնաձիգ արգաւանդ և բազմամարդ :

Կանթան, կմ՟ Կանթինկ : Քղ՟ք մեծ բազմավաճառ և փարթամ յարգաւանդ վայրի առ քեանճ գետով : Աստ նստի փոխարքայն արևմտեան մասին նհ՟նգին նանքինու :

Կինկիղէ : Քաղաք մեծ 'ի վր՟ լերին 'ի հարաւակողմն

Նանքին քղ՟քի ՚ի մէջ երկուց գետոց, որք միացեալ մտանեն ՚ի քեանձ գետ :

Սուչեու, կմ՟ Սուչու : Քղ՟ք մեծ գեղեցիկ բազմավաճառ և փարթամ ոչինչ կարի բացագոյն ՚ի ծովէ . զորմէ ասեն թէ նման է վէնէտիկ քաղաքի ունելով ՚ի ներքս ջրալից խրամս, ը՟ որ մարթ է շրջել նաւակօք : Ուր ՚ի մատենագրաց չինաց դրախտ երկրաւոր կոչէ զնա սակս գեղեցկուե՟ : Ունի բզ՟մ գործարանս մետաքսեայ կերպասուց և ոսկեթել դիպակաց : Աստ նստի փոխարքայն արևելեան մասին նհ՟նգին Նանքինու :

Վօչնան : Քղ՟ք մեծ և ամուր շրջապատեալ եաւապատիկ պարսպօք . ՚ի գէճ և ՚ի լճային տեղւոջ . և զի գիրք տեղւոյ նր՟ ցած է ք՟ զծոց հօսամ գետոյն . յայն սակս միշտ ՚ի վտանգի է ջրահեղձոյց լինելոյ ՚ի ջուրց այնր գետոյ . առ որով կառուցեալ կան թումբք հաստատակոյցք : Հինգ մղոնաւ հեռի ՚ի քղ՟քէ աստի է գիւղաքղ՟ք մի, որ և է նւհ՟նգիստ հօսամ գետոյն, անդ նստի իշխանն, որ վերակացու է գետոց և ջրմղաց :

Յօդ Է . Հուքուան .

Հուքուան, կմ՟ Հուքուանկ, և կմ՟ Հօնօքուանկ : Է մի ՚ի մեծագոյն նահանգացն չինու գրեթէ ՚ի միջակէտ անդր նր՟ . ունելով իւր սահմանակից ՚ի հիւսիսոյ զհօնան և զշէնսի . յարևմտից՝ զսուչուէն և զքուէիչէու . ՚ի հարաւոյ՝ զքուանկսի և զքանթօն . իսկ յարևելից՝ զքեանձսի : Բաց ՚ի քեանձ գետոյն, որ անցանէ ը՟ մէջ նր՟ յարևմտից յարևելս հոսեալ, և բաժանէ զնա յերկու մասունս ՚ի հիւսիսային և ՚ի հարաւային, ունի և այլ բզ՟մ գետս, որք ոռոգեալ զերկիր նորա, մտանեն ՚ի նոյն քեանձ գետ : Յայն սակս կարի արգաւանդ է և բարեբեր . ունելով ամենատեսակ արմտիս և պտուղս պատուականս առատապէս, և ձուկն ՚ի գետոց և ՚ի ծովակաց կմ՟ լճից . և պատուականս քարահանքս, և բովս երկաթոյ, անագի և այլոց հըրահալելեաց . գտանի անդ յաւազուտս և ՚ի խիճս ոսկեփոշի բերեալ յուղխից և ՚ի հեղեղաց . այլ և որդն այն փոքրիկ, որ ՚ի ծառս կազմէ մոմ սպիտակ : Իսկ գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ :

Վուչան, կմ՟ Վուփանձ : Է գլխաւոր քղ՟ք այսր նհ՟նգի մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ առ քեանձ գետով 'ի հիւսիսակողմն նո՛ր մերձ 'ի տեղին, ուր հան գետ խառնի 'ի քեանձ գետ անդր. իսկ արուարձանեայք նո՛ր անկանին յայնկոյս գետոյն 'ի հարաւակողմն նո՛ր: 'Ի ք̃ղքի աստ է աթոռ փոխարքայի համօրէն նհ̃նգին:

Դուէյան, կամ Թուէյան: Ք̃ղք բարեշէն և մարդաշատ 'ի հիւսիսակողմն նախընթաց ք̃ղքի: 'Ի վիճակի սորին ք̃ղքի յաճախ է այն տեսակ փոքրիկ որդան որ կաղմէ մոմ սպիտակ. զորմէ այլուր խօսեցաք:

Հանեանկ: Ք̃ղք մեծ բազմավաճառ և փարթամ հանդէպ վուչան ք̃ղքի ոչինչ կարի հեռի 'ի նմ̃է առ հան գետով, յորմէ կալեալ և զանուն իւր: Գոյ 'ի սմին ք̃ղքի աշտարակ մի բարձր շինեալ 'ի վաղ ժմկաց 'ի յիշատակ օրիորդի միոյ, որ 'ի դասս ա̃ծոց կամ դից համարեալ է 'ի չինաց:

Չանգայ, կամ Քանձիւ: Ք̃ղք մեծ շինեալ 'ի վ̃ր մեծի հուեն գետոյ ոչ յոյժ հեռի 'ի թօնթին լճէն: Ասի թէ 'ի շրջակայս սահմանս այսր ք̃ղքի իջանէ երբեմն ցօղ քաղցրահամ. որ այն ինքն է գազպէ:

Չինգտօվ, կամ Քինգթօ. Ք̃ղք մեծ և բարեշէն առ գետով միով, որ խառնի 'ի հուեն գետ մօտ առ այս ք̃ղք:

Հինթօ: Ք̃ղք մեծ և բազմամարդ առ հեն գետով:

Հանթօ: Ք̃ղք բարեշէն առ նովին հեն գետով 'ի հարաւակողմն նախընթաց ք̃ղքի:

Փուհինկ: Ք̃ղք մեծ և բազմամարդ շինեալ 'ի վ̃ր են գետոյն 'ի բեղմնաւոր և 'ի զուարճալի վայրի:

Թօնթին: Է լիճ մեծ կամ ծովակ 'ի մէջ այսր նհ̃նգի ը̃ 130 ստադիոնաւ երկայնութ̃. և ը̃ 30 ստադիոնաւ լայնութ̃. շրջապատ նո՛ր է իբր 250 մղոն. ուր մտանեն երեք կամ չորք գետք. և անտի ելանէ գետ մի մեծ, և գնայ խառնի 'ի քեանձ գետն:

Յօդ Թ. Քեանձսի, կամ Քիանկսի.

Ունի իւր սահման յարևելից՝ զչէքիան, և մասամբ իմն զնանքին. յարևմտից՝ զհուքվան. 'ի հարաւոյ՝ զքանթօն. և զֆօքիէն. իսկ 'ի հիւսիսոյ՝ նոյնպէս զնանքին: Ունի գետս բ̃զմս, որք գրեթէ առհ̃րկ մտանեն 'ի ծովակ մի մեծ կոչեցեալ փօյան կամ ղաւքե. որոյ շրջապատն է իբր 220 մղոն. և անտի ելանէ գետ մի, որ գնայ խառնի 'ի քեանձ: Յայս

ծո

ծովակ 'ի բզ՟մ տեղիս են յորձանուտք և պտոյտք ջուրց վտանգաւորք, յորս բզ՟մ անգամ ընկղմին նաւք ։ Ի յառաւել վտանգաւոր տեղւոջ 'ի վերայ սեպացեալ բարձր ժայռի միոյ կայ կառուցեալ մեհեան, զոր 'ի տեսանելն նաւավարաց 'ի հեռուստ՝ սկսանին հարկանել թմբուկս, 'ի զարթուցանել զկուռսն որ 'ի նմ՟ յօգնութ՟ հասանիլ ինքեանց · լուցանեն և մոմեղէնս 'ի պատիւ նց՟ · և ծխեն խունկս, և զենուն աքաղաղ մի · զի ասի թէ բնակիչք այսր նհնգի բիրտ են և գլխովին ընկղմեալ յաւելորդապաշտութիս առաւել ք՟ զայլ չինացիս, որք և կարի աղքատ և գծուծ կեանս վարեն, յայն սակս արհամարհեալ են յաչս այլոց չինաց ։ Իսկ գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ ։

Նանչան, կմ՟ Նանչանկ ։ Է գլխաւոր քղք՟ այսր նհնգի մեծ, բազմամարդ և բազմավաճառ, և մի 'ի գեղեցկագոյն քղքացն չինու կառուցեալ առ Քանչեանկ գետով, որ հոսի ընդ հիւսիս, և մտանէ 'ի նախայիշատակեալ փոյան ծովակն ։ Այս քղք՟ անուանի է առ չինս · զի է մի 'ի գլխաւոր ուսումնարանաց նց՟, ուր են բազմութ՟ իմաստնոց և գրագէտ արանց ։

Ուտե, կմ՟ Յէունտե ։ Քղք՟ փոքր, այլ բարեշէն և բազմամարդ 'ի հիւսիսակողմն նհնգիս ։ 'Ի վիճակի սորին քղքի ելանէ հողն, յորմէ չինեն զապակի 'ի բովանդակ Չն չինաց ։

Քօանսինկ ։ Քաղաք մեծ և բազմամարդ առ գետով միով, որ մտանէ 'ի փոյան ծովակն 'ի հարաւոյ արևելից ը՟ հիւսիս ընթացեալ ։

Քիէնտանճ ։ Քղք՟ մեծ և գեղեցիկ մերձ 'ի սահմանս Ֆօքիէն նհնգի առ գետով միով, որ մտանէ 'ի նոյն փոյան ծովակ ։ 'Ի քղքի աստ գտանին պալատք հոյակապք, և բզ՟մ մետաքսագործք, որք գործեն ոսկեթել դիպակս մեծագինս ։ Գործեն անդ և ըմպելի ինչ յորինեալ, որ ունի զզօրութ՟ գինւոյ ։

Քինտէօտէնճ ։ Գիւղաքղք մեծ և բազմամարդ և գլխաւոր տեղի յախճապակեայ անօթոց · զի ասի թէ են անդ առաւել ք՟ 500 գործարանք յախճապակեայ անօթոց, յորս գործեն իբր միլիոն մի գործաւորք ։

Քինտիանճ, կմ՟ Քիէնչտանճ ։ Քղք՟ մեծ և բազմամարդ առ Քեանճ գետով, ուր փոյան ծովակն կցի ը՟ նմին Քեանճ գետոյ ։ Ծաղկեալ է յոյժ 'ի քղքի աստ վաճառականութին, զի է նւհնգիստ նաւակաց, որք գան 'ի Նանքին և 'ի Հուքվան նահանգաց ը՟ Քեանճ գետն, այլև ը՟ փոյան ծովակն ։ Եւ յոյժ հեռի 'ի քաղաքէ աստի 'ի Քեանճ գետ անդր գտանին երբեմն և ծովային ձկունք · ո̃ր դլբին, սալամօն ձուկն, և այլ տեսակք ձկանց, բերե̃լք ՚ի ծովէ ՚ի ժամս մակընթացութե̃ ծովուն, որ այնչափ սաստիկ լինի անդ, զի յետս վանէ զընթացս գետոյն գրեթէ մինչև ցքաղաք անդր · որ երկերիւր մղոնաւ և աւելի հեռի է ՚ի ծովէ :

Քիէկան, կմ̃ Քիէնան : Քղ̃ք առ ափն գետոյ միոյ · առ որով են լերինք, յորս գտանին ոսկեհանք և արծաթահանք · բայց լքե̃լ կան անգործ :

Քանդչու, կմ̃ Քանֆու : Քղ̃ք մեծ և բազմավաճառ ՚ի հարաւային կողմն այսր նհնգի առ Քանքիանձ գետով մերձ ՚ի տեղին, ուր այլ գետ մի խառնի ՚ի նմ̃. ՚ի ք̃ղքի աստ նաւի փոխադրքայ : Ասին թէ ՚ի սահմանս այսր ք̃ղքի, է ջրհոր մի որ կրէ զտեղատուու̃ն և զմակընթացու̃ն · զի ՚ի 24 ժամու երկիցս ցամաքի և անդրէն լնանի :

Նանկան : Քղ̃ք մեծ և բազմամարդ մերձ ՚ի սահմանս Քանթօն նհնգի · ուր յաճախ են երթևեկք վաճառականաց · զի անդ հաւաքին վաճառք Քանթօնի · վ̃յ և է խոր շտեմարան կմ̃ համբարանոց վճ̃ռց նր̃ :

Յօդ Ժ. Չէքիան, կմ̃ Չէքիանձ :

Ունի իւր սահման յարևելից զովկիանոս · յարեմտից՝ զքեանձսի · ՚ի հիւսիսոյ՝ զնանքին · իսկ ՚ի հարաւոյ՝ զՖօքիէն : Նա է բազմամարդ և բազմավաճառ և արգաւանդ գեղեցիկ և զուարձալի, մինչև դրախտ անուանել զնա չինաց : Գլխաւոր վայելչութիւնք նր̃ են բազմապատիկ վտակք, և ջրմուղք կմ̃ խրամք ջրալիցք ձգե̃լ ը̃ ա̃մ կողմանս նր̃ : Անբաւ են անդ թթենիք, կմ̃ լաւ ևս ասել անտառք թթենեաց · վ̃յ ունի մետաքս բզ̃մյոյժ · յորմէ գործեն պէսպէս մետաքսեայ կերպաս անբաւս ը̃ նհնգն ողջոյն, և մ̃նւնդ ՚ի հանդքն մայրաքղքն նր̃ · և կերպասք նր̃ ազնիւ են և անուանի ՚ի բոլոր ա̃շն չինաց : Ասեն թէ գործածութի մետաքսի զառաջինն ՚ի սմին նհնգի գտաւ · յորմէ եկաց ՚ի հնդիկս, ՚ի պարս և յայլ կողմանս ասիոյ · ապա ՚ի յունաստան և յիտալիա · ուր ը̃ ժմկս բզ̃մս կշռով ոսկւոյ վաճառէին զմետաքս : Գլխաւոր տեղիք նր̃ են հետևեալք :

Հանդֆու, կմ̃ Հանչու · զոր ոմանք Համչըւ գրեն : Ի գլխաւոր քաղաք այսր Նէնգի մեծ բազմամարդ և բազմավաճառ և ծովեզերեայ. կառուցեալ 'ի մուտս չէքուԹօն կմ̄ չիէն գետոյն 'ի ծոց մի ովկիանոսի : Շրջապատ նր̄ է իբր 12 մղոն. և Թիւ բնակչացն համանէ ցմիլիոն մի : Տունք նր̄ բովանդակ են միայարկ ոտ̄ և այլոց քաղաքաց չինաց. փողոցքն չեն այնչափ ինչ ընդարձակք. բայց 'ի բազմ̄ տեղիս են 'ի նմ̄ մեծաշէն կամարք յաղԹուԹե̄ կանգնեալք 'ի պատիւ զնձ̄ն մեծագործ արանց. և չորք մեծաշէն աշտարակք եօԹնայարկեան. և անհամար կրպակք բազմահարուստք լի ամենատեսակ վաճառօք : Սունի և Նուէնգխաւ մեծ և պատուական առ բերանով նախայիշատակեալ չէքուԹօն գետոյ, յորոյ 'ի պաշտպանուԹի̄ կարգեալ կան 7000 ԹաԹար զինուորք ը̄ հրամանատարուԹ̄ սպարապետի, որ է յազգէ նց̄. և այլ ևս 3000 չինք : Ոչինչ կարի հեռի 'ի քաղաքէ աստի է լիճ մեծ կմ̄ ծովակ Սէհու կոչեցեալ. որոյ շրջապատն է իբր 6 մղոն. և մասն ինչ նր̄ անկանի 'ի նէնգն նամքինու. Ջուր նր̄ մաքուր է, ականակիտ և պատուական : Ընդ մէջ ծովակիս են երկու փոքրիկ կղզիք. և 'ի միում 'ի նց̄ է մեհեան մի կուռց և այլ շինուածք ինչ առ 'ի պէտս սԹափուԹ̄ց մեծամեծաց քաղաքիս :

Նիֆօն, կմ̄ Նինֆօն, և կմ̄ Նինկֆօ, զոր փորդուգալք լոչէն Լիամֆօ : Է ծովեզերեայ քղ̄ք մեծ բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ յընդարձակ դաշտավայրի մերձ 'ի տեղին՝ ուր երկու գետք խառնին ը̄ միմեանս և մտանեն 'ի ծով : Շրջապատ քղ̄քին է իբր 20 մղոն. և պարիսպ նր̄ քարաշէն ամրացուցեալ աշտարակօք : Սունի նաւահանգիստ մեծ և պատուական, որ և է գլխաւոր յարևելեան ծովեզերեայս չինու. և երևելի վաճառատեղի վաճառացն ճէաբօնայ, ուստի բարձեալ բերեն ոսկի, արծաԹ և պղինձ. և աստի տանին անդ մետաքս, շաքար, գինի և պէսպէս համեմունս ը̄ պահարս :

Թօսին, կմ̄ Թայսին : Քղ̄ք բարեշէն ոչինչ կարի հեռի 'ի ծովէն շինեալ առ գետով միով, և շրջապատեալ 'ի լերանց :

Կինհա, կմ̄ Ցէնհա : Քղ̄ք, որ Թէպէտ ը̄ տարածուԹե̄ չէ այնչափ ինչ մեծ, բայց գեղեցիկ է և բազմամարդ կառուցեալ մօտ 'ի ծոց մի ովկիանու 'ի վր̄ գետոյ, որ գնայ անկանի 'ի նոյն ծոց :

Քինհօա, կմ̄ Քինհըա : Քղ̄ք մեծ և բազմամարդ գրեԹէ ը̄ մէջ կ̄ուրին առ գետով միով, որ գնայ խառնի 'ի չէքուԹօն գետ : Այս քղ̄ք յռ̄ջագոյն անուանի էր սակս գեղեցկուԹե̄ շինուածոց նր̄. այլ յետոյ

Թաթարք այրեցին զմասն ինչ նր՟ · և քանդեցին զբ՟մ գեղեցիկ շինուածս. մ՟նյ այնուհետև անշքացաւ յոյժ ։ Բնակիչք նր՟ զօրաւոր են և քաջ պտ՟զմօղք և նշանաւոր 'ի մէջ չինաց ։ Շրջակայ վիճակ այսր ք՟ղքի արգաւանդ է, բերէ որիզ առատ և այլ արմտիս · յաճախ է անդ և ծառն ճարպոյ, զոր 'ի ներածութե՟ անդ ստորագրեցաք · այլև շլոր և այլ պտուղք ։

Քինկթեն, կմ՟ Քեանթեն ։ Քղ՟ք բարեշէն առ չէքուեթօն գետով 'ի հարաւակողմն նր՟ ։ 'Ի շրջակայ լերինս նր՟ են անտառք մեծամեծ ծառոց · յորոց հատանեն փայտ բզ՟մ 'ի պէտս շինուե՟ նաւուց և այլոց շինուածոց ։

Իէնկթեն ։ Քղ՟ք մեծ առ չէքուեթօն գետով մերձ 'ի տեղին՝ ուր այլ գետ մի խառնի 'ի նոյն գետ ։

Յօդ ժա՟ · Ֆօքիէն ։

Այս նհ՟նգ ունի իւր սահման յարևելից՝ զովկիանոս · 'ի հիւսիսոյ՝ զչէքիան · յարևմտից՝ զքեանսի · իսկ 'ի հարաւոյ՝ զքանթօն ։ Եւ թէպէտ փոքր է, այլ բազմամարդ · օդն մաքուր, և ցուրտն և տօթն բարեխառն · երկիրն լեռնային · բայց լերինք նորա չեն դատարկք · զի յոմանս են անտառք, յորոց հատանեն փայտ 'ի պէտս նաւուց և այլոց շինուածոց · և ոմանք են փորեալ և կակղեալ, և բաժանեալ յաստիճանս աստիճանս, որք բերեն պէսպէս արմտիս · և յոմանս են բովք հրահալելեաց ո՟պ կապարի, անագի, երկաթոյ և այլոց հանքաց ։ Ունի և այլ և այլ տեսակս պտղոց · յորս անուանի են նարինջ և կիտրոն քաղցրաճաշակ և անուշահոտ, յորմէ կազմեն քաղցրենիս ։ Բնակիչք նր՟ ճարտար են և ժրաջան և աշխատասէր և փոյթք 'ի վաճառականութ՟ · որք երթան 'ի ճէաբօն, 'ի փիլիպպեան կղզիս, 'ի չիամ և յայլ մերձակայ տեղիս շահավաճառութե՟ աղագաւ ։ Իսկ գլխաւոր տեղիք այսր նհ՟նգի են հետագայքդ ։

Ֆօքէօ, կմ՟ Ֆուչէօն ։ Է գլխաւոր քղ՟ք այսր նհ՟նգի մեծ և բազմամարդ և բազմավաճառ և աթոռ փոխարքայի համօրէն նհ՟նգին կառուցեալ առ գետով միով ոչ այնչափ ինչ հեռի 'ի ծովէն ։ Ունի նաւհ՟նգիստ պատշաճական, ուր յաճախեն նաւք ճէաբօնացւոց, հնդկաց, և եւրոպացւոց ։ Ունի և շինուածս մեծաշէնս · յորս երևելի է կամուրջ մի քարաշէն և մեծ յոյժ ։

Քիէնմինկ, կամ Քիէննինկ ։ Քաղաք փոքր և անշուք կառուցեալ առ գետով միով. զոր առին Թաթարք և զբնակիչս նր̃ կոտորեցին. իսկ ղ.ք̃ղ.քն հրկէզ արարին. և Թէպէտ յետոյ վերստին շինեցաւ, այլ չև ևս եհաս յառաջին մեծութիւն իւր ։

Չանչօ, կամ Չանթչօ ։ Բղք̃ 'ի հարաւակողմն նհնգին առ գետով միով ։

Չինթչօ ։ Բղք̃ ծովեզերեայ մեծ և բազմամարդ և բազմավաճառ. ուր լինին երևելի ռոճավաճառք. և յաճախեն վաճառականք յայլ և այլ տեղեաց ։

Եմուի, կամ Ամոյ ։ Է անուանի բերդ և նաւահանգիստ պատուականն 'ի կղզի մի համանուն, որոյ շրջապատն է իբր 50 մղոն. յաճախեն անդ նաւք վաճառականաց. վն̃ այնորիկ Ինքնակալն չինաց պահէ անդ գունդ մի 9000 Թաթար զօրաց 'ի պաշտպանութիւն կղզւոյն և նաւահանգստի նր̃ ։

Յօդ. ժէ̃. Քանթօն ։

Քանթօն կամ Քանթօնկ և կամ Քուանթօնգ ։ Է մի 'ի մեծագոյն նհնգաց չինաց ծի 'ի հարաւային եզերս նր̃. և ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զՔեանծսի և զՀուքվան և զՖօքիէն. 'ի հարաւոյ և յարևելից՝ զովկիանոս. իսկ յարևմտից՝ զՔվանկսի ։ Աստ սկսանի մեծ ջրմուղն կամ խրամն չինու, և ձգի մինչև ցփէքին. այլ բաց յայնմանէ են անդ և գետք և լիճք և հեղեղատք. վն̃յ երկիր նր̃ ը̃ ամ̃ տեղիս է ջրարբի և արգաւանդ բերելով գրեթէ զամ̃ տեսակս արմտեաց և պտղոց առատապէս ։ Ունի և ազգի ազգի հաւս ընտանիս և վայրենիս. այլև չորքոտանիս. և ձուկն առատ 'ի ծովէ. և բովս ոսկւոյ. և հանքս ականց պատուականաց. և անուշահոտ փայտ, յորմէ գործեն պէսպէս ձեռակերտս. և մետաքս և մոմ վայրենի ։ Բնակիչք նր̃ բզ̃մ են. աշխատասէրք և ուժեղք. ճարտարարուեստք և ուսումնասէրք և'ի տուրևառս վաճառաց քաջավարժք և գլխովին անձնատուրք. յայն սակս բազմութի յոյժ մեծատանց գտանին յայսմ նահանգի ։ Իսկ գլխաւոր տեղիք նր̃ են հետևեալքդ ։

Քանթօն, կամ Քանթօնկ, և կամ Քուանթօնգ. Է քղք մեծ մարդաշատ և բազմավաճառ, և փարթամ և անթունա֊

Նա֊

Նախապատիւ փոխարքայի ինքնակալին Չինաց, կառուցեալ առ Գայ գետով՝ մերձ 'ի մուտս նր՟ 'ի ծովանդր: Շրջապատ նր՟ աւելի է ք՟ 12 մղոնս. իսկ թիւ բնակչացն հանդերձ արուարձանօք իբր միլիոն մի եւ կէս, եթէ չիցէ աւելի: Ունի նաւահանգիստ մեծ եւ պատուական ինն մղոնաւ հեռի, ուր յաճախեն նաւք ամ՟ ազգաց ասիացւոց եւ եւրոպացւոց: 'Ի ծովակողմն ունի իւր պատուարան պարիսպ բարձրաբերձ ամրացուցեալ աշտարակօք եւ երկու դղեակս, նոյնպէս եւ 'ի ցամաքակողմն ամրակուռ պարիսպս եւ ամրոցս: Բազում են 'ի նմին տաճարք կռոց, եւ պալատք, եւ այլ մեծաշէն շինուածք եւ պարտէզք. եւ կամարք յաղթութ՟. զի 'ի դրանէ անտի քղքին, որ հանէ 'ի ծովն մինչեւ ցապարանս փոխարքայինն են երեսուն կամարք: Յառաջագոյն առաւել գեղեցիկ էր եւ մեծաշէն այս քաղաք, եւ այլ Թաթարք ոչ սակաւ քանդմունս գործեցին 'ի նմ՟. վն՟ այնորիկ այժմ անշուքացեալ է յառաջին վայելչութենէ անտի իւրմէ:

Ֆօշան: Քաղաք իբր 10 մղոնաւ հեռի 'ի Քանթօնէ. որ ըստ տարածութ՟ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, այլ բազմամարդ է եւ փարթամ եւ գլխաւոր վաճառատեղի օտարաց. են 'ի նմա եւ բազմուն՟ ոստայնանկաց:

Լէնծէու, կմ՟ **Լանծէու**: Քաղաք բարեշէն մերձ 'ի սահմանս հուքվանայ:

Զաօծէու, կմ՟ **Գաօծէու**: Քղք՟ ծովեզերեայ մեծ եւ բազմամարդ յարեւելեան կողմն առ մուտս գետոյ միոյ. ոչ կարի ինչ հեռի 'ի Փօքիէն նահանգէ: Գոյ 'ի նահանգի աստ միւսեւս քղք՟ յայս անուն անուանեալ յարեւմտեան կողմն ոչ ինչ կարի բացագոյն 'ի ծովէ:

Հէնծէու, կմ՟ **Վէնծէու**: Քաղաք բարեշէն. առ գետով միով, որ մօտ առ այս քղք՟ մտանէ 'ի ծովակ մի: 'Ի վր՟ գետոյն գոյ կամուրջ երկայնաձիգ, որ ըստ պատմելոյ ումանց ունի 40 կամարս, եւ 'ի ծովակի անդ են երկու փոքրիկ կղզիք բազմամարդք միացեալք քարաշէն կամրջաւ:

Հէնշէօն: Քաղաք 'ի հարաւակողմն նահանգին առ գետով միով:

Լուիծէու, կմ՟ **Լէիծէ**: Քղք՟ կառուցեալ 'ի լեզու ինչ հողոյ 'ի հարաւակողմն նահանգին հանդէպ հայնան կղզւոյն, յորմէ բաժանի անձուկ նեղուցաւ:

Յօդ ԺԴ. Քիանկսի:

Քիանկսի, կմ Քիանսի և Քիանսիճ: Է մի 'ի մեծագոյն հարաւային նհնգացն չինու, որ ունի իւր սահմանակից յարևելից զՔանթօն. 'ի հիւսիսոյ՝ զՆուքվան և զՔվէնչէվ. 'ի հարաւոյ արևմտից զԻւնան. իսկ 'ի հարաւոյ՝ զՔուանգսին և զծոց Նր: Հիւսիսային մասն նորա լեռնային է, իսկ հարաւայինն դաշտային. որ և ոռոգանի 'ի բզմ գետոց. վսյ արգաւանդ է և բերրի. ունի որիզ և այլ արմտիս առատ. և ազգի ազգի պտուղս. և մետաքս, մոմ վայրենի. գարիձնինիկ, այն է՝ տաքչինն առաւել անուշահոտ և համեղ քն զՑէյլանայ, և բովս ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ և այլոց հրահալելեաց, և ազգ մի ծառոյ, որ կոչի Սափառով, զոր 'ի կիր առնուն 'ի ներկս: Մասն ինչ այսր նհնգի որ ձգի առ սահմանօք դունգինայ Սէնթիս կոչեցեալ և բնակիչք նր Սէնմիացիք, ոչ է ընդ իշխանութ ինքնակալին չինաց, այլ է ինքնագլուխ հասարակութն. վն զի յորժամ Թաթարք կալան զինքնակալութն չինաց, մեծ մասն բն ակչաց այսր նհնգի, չեղեն անձնատուր նց. այլ միաբանեալ հաստատեցին 'ի մէջ իւրեանց առանձին տրութն ազատ և անկախ. յորս յետոյ յարեցան և այլք 'ի չինաց անոի, կէս մի ինքնակամ՝ և կէս մի տարագրեալք 'ի Թաթարաց, որք ոչ կամեցան մտանել ընդ հնազանդութ նց. վսյ այժմ այն մասն նհնգիս բազմամարդ է յոյժ. և բնակիչք նր արք զօրաւորք և քաջամարտիկք. որոց մի նաւ կարօղ է զդէմ ունիլ չորից նաւուց այլոց չինաց: Իսկ գլխաւոր տեղիք ինքնակալին չինաց 'ի սմին նհնգի են հետագայքդ:

Գուէյէինճ, կմ Գուէնչէինճ: Է գլխաւոր քղք այսր ֆուաբ առ քվէյ գետով բազմամարդ և ամուր չինեալ գրեթէ ըստ ձևոյ նախնի ամրոցաց եւրոպիոյ. վսյ չունի ամենևին զնմանութն ինչ ընդ այլոց քղքաց չինու: Անուանի է մելանն կմ Թանաքն, որ գործի 'ի քղքի աստ. զի լաւագոյն է քն զամ մելանս, որք գործին յայլ քաղաքս:

Չինկան, կմ Քինկնան: Քղք ամուր պարսպապատ 'ի վր գետոյ միոյ 'ի լեռնային վայրի առ սահմանօք գուանգինայ. 'ի հնումն էր գեօղ փոքրիկ, այլ յետոյ նաւ-

Նախագրեալ սէնմիացւոց կանգնեալ զնովաւ պարիսպս և ամրացուցեալ, արարին զնա գլխաւոր տեղի հասարակութեան իւրեանց։ Շրջակայ վիճակ նորա ոչ է ընդ բոլորին 'ի ձեռս սէնմիացւոց․ այլ մասն ինչ նորա է ընդ իշխանութեամբ թագաւորին գունգինայ։

Սէնկէն, կամ Սէնկէն։ Քաղաք փոքր առ գետով միով, որ խառնի 'ի դայ գետ։

Սինփու, կամ Սինչու։ Քաղաք բարեշէն և բազմամարդ 'ի մուտս գետոյ միոյ 'ի դայ գետ։ Շրջակայ վիճակն նորա բերէ գարիճենիկ աղնիւ, և ազգ մի խոտոյ, յորմէ գործեն պաստառս, որք երբեմն առաւել մեծագին են քան զմետաքսեայ կերպասս։

Նանինկ։ Քաղաք մեծ 'ի վերայ գետոյ միոյ, որ մտանէ 'ի դայ գետ յարգաւանդ վայրի․ 'ի շրջակայ լերինս նորա գտանին վարազք մեծամեծք 'ի չափ երնջոց․ և հերք քամակի նոցա երկայն են և սրածայր իբրև զասեղս։

Գուինկ։ Գիւղաքաղաք 'ի հարաւակողմն նահանգին առ գետով միով, որ իջանէ 'ի լերանց, բարձեալ բերէ ոսկեփոշի խառն ընդ աւազոյ։

Լինգփու։ Քաղաք բարեշէն ոչ այնչափ ինչ հեռի 'ի ծովէ․ 'ի վիճակ սորին քաղաքի լինին պէսպէս բոյսք բժշկականք։

Թայփինկ։ Քաղաք մեծ և բազմամարդ 'ի հարաւակողմն նահանգին, յերից կողմանց շրջապատեալ 'ի գետոյ միոյ, յարգաւանդ վայրի։ Ունի ընդ իւրև բազում գղեակս կառուցեալս առ սահմանօք գունգինայ 'ի սանձել զարշաւանս գունգինացւոց։

Ուփու։ Քաղաք 'ի մուտս գետոյ միոյ 'ի դայ գետ առ սահմանօք Քանթօնի։

Յօդ. ԺԷ. Քուէյչէվ, կամ Քէյթքև.

Նահանգս այս ունի իւր սահման յարևելից՝ զհուքվան․ 'ի հիւսիսոյ՝ զսուչվէն․ յարևմտից՝ զիւնան․ իսկ 'ի հարաւոյ՝ զքվանկսի։ Այս նահանգ առ համեմատութեամբ այլոց նահանգաց փոքր է․ և բնակիչք նորա սակաւ․ և երկիրն լեռնային յոյժ, վասն այսորիկ և բերք նորա սակաւ․ այլ ունի պատուական արօտս և երիվարս ընտիրս, որք անուանի են առ չինս․ և անբաւ բազմութիւն վայրենի թռչնոց։ Չիք անդ մետաքս բնաւ․ այլ փոխանակ նորա լինի անդ ազգ մի կանեփոյ, յորմէ գործեն պատուաս : Իսկ գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Քօյչնեան , կամ Քիչեյնան , և կամ Քուչէֆանկ : Եւ գլխաւոր քղք այսր նահանգի մեծ և բազմամարդ կառուցեալ առ գետով միով ը մէջ նհնգին ՚ի դաշտային վայրի :

Փէնէուչէն . Թուծնկէն . Սէնան . Չում . Թուայուան . Կյունշան . Լունչէնկ . Սէնըւէն : Են գլխաւոր տեղիք այսր նահանգի :

Յօդ ԺԵ . Իւնան , կամ Լոճիան :

Այս նահանգ ունի իւր սահմանակից ՚ի հիւսիսոյ՝ զՍուչուէն , յարևմտից և մասամբ իմն ՚ի հիւսիսոյ՝ զՏիպէդ . ՚ի հարաւոյ՝ զՀաւա , զՊէկու , զԼաօս , և զՏունկին . իսկ յարևելից՝ զՔվէյչէվ և զՔվանսի : Օդ նր քաղցր է և բարեխառն . և երկիրն ը մասին լեռնային , և ը մասին դաշտային , դաշտք նր ոռոգանին յանհամար գետոց և վտակաց . վտկ բեղմնաւոր են յոյժ , բերեն առատապէս զծմ , որ ինչ կարևոր է մարդկային կենաց : Երիվարք նր թեպէտ փոքր են , այլ ուժեղք աշխոյժք և արագընթացք : Գտանին անդ և պէսպէս տեսակք վայրի էրէոց . յորս է ազգ մի եղջերուէի , որ հազիւ ժամանէ ՚ի չափ հնրկ շանց մերոց . Ունի և բովս ոսկւոյ և արծաթոյ , և պղնձոյ և անագի . և ականս պատուականս . և քարահանքս ազնիւ մարմարիոն քարանց : Իսկ բնակիչք նր սնդակազմ են մարմնով , քաջառողջ և կորովի , ը նմին և հեզ , քաղցրաբարոյ և ուսումնասէր : Պատմութիւնք չինաց յիշատակեն զազգ մի կմ ժողովուրդ Լօլօ անուանեալ , որք տիրէին այսմ նհնգի ինքնիշխան իրու . և ը Ժմկս բզմս պտզմ մղէին ը չինս . այսպ հաշտութ արարին ը նս երկու պայմանօք . մի՝ զի գլխաւորք նց անուանեսցին մանտարինք , և զնոցայն ունիցին պատիւ . բայց հպատակ կայցեն փոխարքայի նհնգին կացուցելոյ յինքնակալէն չինաց . և երկրդ զի կառավարութ երկրի իւրեանց և դատաստանք լիցին ՚ի ձեռս նց : Սոյն այս իշխանք Լօլօցւոց կան մնան մինչև ցայսօր ը նովին պայմանօք . առանց փոփոխելոյ ինչ յայնցանէ . իշխանութ նց ժառանգութբ անցանէ որդւոց յորդիս .

դիս . և են ինքնագլուխ չունելով ընաւ կախումն ինչ 'ի ժողովրդենէ . որք արքայական պատիւ և հպատակութիւնս ընծայեն նմա : Կրօն սոցա և սովորութիւնք , նոյն և լեզու օտար է 'ի չինաց . և յաւէտ մերձաւոր կրօնից և սովորութեանց բեկուացւոց և չիամանցւոց : Իսկ գլխաւոր տեղիք նահանգիս են հետագայքդ :

Իունան : Է գլխաւոր քղք այսր նահանգի , մեծ բազմամարդ և բազմավաճառ և փարթամ առ եզերբ փոքրիկ ծովակի միոյ 'ի հիւսիսակողմն նորա . ունի բազում շինուածս գեղեցիկս , և պարտէզս վայելուչս : 'Ի քղքի աստ գործեն գորգս , այն է՝ խալի գեղեցիկս յոյժ : Աստ է աթոռ փոխարքային չինաց , որ իշխէ և Քվէյչէվ նահանգի :

Լինկիանֆ , կամ Լինկիանֆու : Քաղաք մեծ առ գետով միով մերձ 'ի սահմանս Տիպէդայ կամ Թաթարաց :

Իուննինա , կամ Իուննինկ : Քղք 'ի վերջին հիւսիսային սահմանս այսր նահանգի առ երի Տանկուդայ կամ Տիպէդայ :

Թալի : Քաղաք մեծ և բազմամարդ առ երկայնաձև լճիւ կամ ծովակաւ միով : 'Ի քղքի աստ շինեն սեղանս և այլ պէսպէս ձեռակերտս յազնիւ մարմարիոն քարանց . յորս 'ի բնէ են նմանութիւնք ծաղկանց , ծառոց , գետոց և լերանց . որք թուին նկարեալք արուեստիւ :

Սանթա . Իունչէ . Ցունդէհան . Քուանէն . Քիւնանֆ . Լիկիան . Նէննէն . Մունկին , կամ Մօնկլա : Են քղքք յայսմ նահանգի :

Յօդ. ԺԶ. Կղզիք որք են առ երի Չինաց :

Յարևելեան և 'ի հարաւային կողմանս չինու բազում կղզիք գտանին յովկիանոս անդր մեծամեծք և մանունք . յորոց ոմանք են ընդ տէրութեամբ չինաց . զգլխաւորս նոցա յառաջիկայդ նշանակեսցուք :

Չէվշան . որ կոչի և Կղզի Թուսանայ յանուն գլխաւոր քղքի նորա : Է կղզի յարևելեան կողմն Չէքիան նահանգի իբր 30 մղոնաւ հեռի 'ի բերանոյ Նիմփօ գետոյն : Լայնութիւն նորա է 15 մղոն . և է արգաւանդ և բազմամարդ . ուր անգղիացիք յորժամ հաստատեցին զընկերութիւն վաճառականաց ոստանդայն հնդկացին վաճառանոցի .

որ յետոյ բարձաւ 'ի միջոյ: Ունի նաւահանգիստ պատուական յարեւմտեան կողմն մերձ 'ի տեղին, ուր էր վաճառատեղի անգղիացւոց 'ի հովտի միում. ուր և այժմ գտանին իբր երկերիւր տունք 'ի պէտս վաճառականաց կղզւոյն, որք գան անդր առնել առևտուրս. այլ ընտանիք նց̃ բնակին 'ի Քուսան քղք̃ պարսպաւոր. որոյ շրջապատն է իբր 3 մղոն պաշտպանել̃ երկաթի հրացանիւք և իբր 3000 զինուորօք:

Փօնխօ: Է կղզի փոքրիկ մերձ առաջնոյն. որ և է երևելի ուխտատեղի չինաց. ուր ասի թէ գտանին իբր 400 փոքրիկ մեհեանք, և քուրմք աւելի քն̃ 4000:

Մաքաօ, կմ̃ Մաքաւ: Է կղզի մեծ հանդէպ Քանթօն նհնգի 'ի հարաւակողմն, ունի իւր համանուն մայրաքղք̃ շինել̃ 'ի փորտուգալաց, որ յառաջագոյն հռչակաւոր էր 'ի պտճռս ծաղկել̃ վճռկանութն̃ իւրոյ. բայց այժմ ոչ նոյնպէս: Զայս կղզի ետ 'ի պարգև փորտուգալաց ինքնակալն չինաց փխկ̃ մեծի քաջագործութն̃, զոր գործեցին նք̃ 'ի պաշտպանութն̃ չինաց ըդդէմ Ջանկսիլաօ կոչեցել̃ բռնակալին, որ բազմութ̃ հինից այնչափ զօրացաւ, մինչև պաշարել նց̃ զՔանթօն քղք̃. և մերձ էին առնուլ զնա: Այլ փորտուգալք 'ի վր̃ յարձակել̃, ազատեցին զքղքն. և զՋանկսիլաօ այնչափ 'ի նեղն հասուցին, զի բռնադատեցաւ խոյս տալ 'ի Մաքաօվ կղզի. ուր և ինքնին չոքաւ զիւրովլի. իսկ փորտուգալք ընկալել̃ զայս կղզի, շինեցին անդ քաղաք փոքրիկ, և կոչեցին զնա Մաքաօվ յանուն կռոցւոյն. որ մինչև ցայսօր է 'ի ձեռս նց̃. բայց ըն̃ գերագոյն իշխանութ̃ ինքնակալին չինաց. որ առնու բաժս և մաքս յամ̃ վաճառուց, որք մտանեն և ելանեն անտի: Առ սովին կղզեաւ են այլևս բզ̃մ փոքրիկ կղզիք, որք շուրջանակի գործեն 'ի միջի նաւահանգիստ անվտանգ 'ի հողմոց:

Սանչիան, կմ̃ Սանչիան, և կմ̃ Սափանա ըստ չինաց Զանչէլշան կմ̃ Եշնէլէն: Է փոքրիկ կղզի հանդէպ Քանթօն նհնգի 'ի հարաւային արևմտեան կողմն Մաքաօվայ. որ անուանի է առ եւրոպացիս, զի անդ փոխեցաւ առ ած̃ սրբն Ֆրանչիսկոս Քսաւերեան այրն առաքելաշնորհ յամին 1552. յետոյ 'ի 1688 մարմին նր̃ փոխադրեցաւ 'ի Կօա 'ի ձեռն արանց քրիստոնէից:

Հայնան: Է կղզի մեծ 'ի հարաւակողմն Քանթօն նահանգի հանդէպ երկայնաձիգ լեզուի հողոյ. ըն̃ որում թուէր թէ միացել̃ էր 'ի հնումն. ապա 'ի ձեռն գետնաշարժութ̃, կմ̃ բռնութ̃ ամեհի կոհակաց ծովու բաժանեցաւ ունելով անջրպետ 'ի միջի զնեղուց անձուկ ։ Շրջապատ այսր կղզւոյ է իբր 180 մղոն. և է լեռնային, այլ արգաւանդ և բազմամարդ. բնակիչք նր̅ կէս մի չինացիք են, որք բնակին 'ի ծովեզերեայ կողմանս կղզւոյն, և են ը̅ տ̅րութ̅ փոխարքային Քանթօնի. և կէս մի ժողովուրդ վայրենի անկախ և ինքնագլուխ. որոց բնակութիւն է 'ի խորին կողմանս կղզւոյն 'ի լերինս և յանտառս. ուր գտանին բովք ոսկւոյ և արծաթոյ. բայց թողեալ անգործ. շատացեալ նց̅ ժողովել զմանրիկ ձոյլս ոսկւոյ յաւազոյ անտի, զոր գետք և ուղխք բարձեալ բերեն 'ի լերանց ։ 'Ի ներքին կողմանս չիք ք̅ղք կմ̅ աւան. իսկ յեզերս նր̅ են այսոքիկ ։

ՔԻՕՆՉԷ ։ Է գլխաւոր ք̅ղք կղզւոյն մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ 'ի հիւսիսակողմն առ նեղուցաւն, որով բաժանի կղզին 'ի ցամաքէն ։ Ունի նաւահանգիստ մեծ և պատշաճական առ բերանով գետոյն մեծի, որ 'ի կղզւոյ անտի մտանէ 'ի ծով ։

ԴԱՆՉԷ. ՎԱՆՉԷ. ԵԱՅՉԷ ։ Են ծովեզերեայ քաղաքք այսր կղզւոյ ։

ԴԷՂՆԷՅԷՆ ԿՂԶԻ ։

ԴԷՂՆԷՅԷՆ կղզի յեւրոպացւոց Փօռմօզա անուանեալ. կոչի և Կղզի Թայօվանայ. յանուն մայրաքաղաքի իւրոյ. և է մեծ և բազմամարդ հանդէպ Ֆօքիէն նահանգի չինաց իբր 65 մղոնաւ հեռի 'ի նմ̅է ը̅ արեւադարձիւ խեցգետնի ։ Շրջապատ նր̅ է իբր 500 մղոն. և երկիրն 'ի միջին կողմանս լեռնային. իսկ յեզերս դիւր և արգաւանդ. ունի արմտիս առատ, և ազգի ազգի պտուղս. և ծխախոտ. և շաքար. և 'ի լերինս նր̅ գտանին բովք ոսկւոյ, և արծաթոյ և այլոց հրահալելեաց. այլ լքեալ անգործ ։ Չիք անդ վայրենի գազան, բաց 'ի կապկաց. այլ ընտանի անասունք բզմ̅ են ։ Այս կղզի 'ի ձեռն շղթայաշար լերանց բաժանի յերկու մասունս. ի̅ յարեւելեան հիւսիս. և յարեւմտեան հարաւ ։ Յարեւելեան մասին են բուն բնակք կղզւոյն. որք են վայրենիք, կմ̅ դեռ այնպս̅ համարեալք 'ի չինաց. ը̅ որս անհաշտ թշնամութ̅ են. արագընթացք իբր զայծեամն. և հմուտք յաղեղնաւորութ̅. բայց միանգամայն են բարեբարոյք, միամիտք, խաղաղասէրք. ատեան զգողութիւն և զաւազակութս. վ̅ն չիք առ նս̅ դող ։ Զգեստ նց̅ 'ի մորթոյ եղջերուէի. և անկողին նց̅ 'ի տերեւոց ։ Այլք և կանայք կրեն վարսս երկայնս · և գինդս յականջս · և մանեակս 'ի պարանոցս · և ապարանջանս 'ի բազուկս , և փունջ մի 'ի փետրոց թռչնոց 'ի գլուխս : Ներկեն զատամունս 'ի գոյն սեաւ · որ գեղեցկութիւն համարել̃ է առ նս̃ · և ասղամբ կատեն զբազուկս և զայլ անդամս՝ նմանութիւնս ծաղկանց, թռչնոց, ձկանց և այլոց կենդանեաց ձևացուցանելով : Զմշակութիւն երկրի և զայլ տարժանաւոր աշխատութիւնս կանայք առնեն · իսկ արք վարին իբրև զաղնոճականս չինաց , յորսորդութիւնս և յայլ այսպիսի գործս ևեթ պարապին : Տունք նց̃ են եղեգնակերտ միայարկ և աղքատին : Ունին և կռատունս և քուրմս , որք զոհս մատուցանեն կռոց նց̃ · զի դեռևս կռապաշտ են · սակայն ասի թէ գտանին անդ քրիստոնեայք : Իսկ յարևմտեան մասին, ուր է թայօվան մայրաքղք կղզւոյն չինք բնակին · բայց գտանին անդ բազմութիւն և 'ի բուն բնակչաց կղզւոյն :

Եւրոպացւոց զառաջինն փորդուգալք հասին յայս կղզի , և տիրեցին արևմտեան մասին նր̃ · ապա եկեա̃լ հոլանտացւոց՝ առին 'ի ձեռաց նց̃ : 'Ի ժամին , յորում թաթարք կալան զինքնակալութ չինաց , առեալ ք̃ տասն հազարք 'ի չինաց անտի փախեան յայս կղզի հանդերձ տամբ և ամ̃ ընչիւք իւրեանց · և կացին մնացին ամս ինչ ը̃ ծրուք̃ հոլանտացւոց , կամ̃ գէթ խաղաղութ̃ ը̃ նս̃ : Այլ յետոյ մի ոմն չինացի զօգդինկա անուն որդի Եկուարայ յաննշան զարմէ · որոյ գործ էր աւազակութ , փախուցեա̃լ յճ̃է չենաց առ ահի թաթարաց, եկն քանի մի փոքրիկ նաւուք յայս կղզի · և պաշարեաց զամրոցն հոլանտացւոց անուանեա̃լ Նոր զէլանտա · զոր զկնի ը̃երկար պատերազմի ստիպեցան հոլանտացիք տալ 'ի ձեռս նր̃ յամին 1662 : Ապա 'ի 1683 ինքնակալն չինաց տիրեաց համօրէն կղզւոյն · և այնուհետև կայ մնայ ը̃ ծրուք̃ նր̃ : Իսկ գլխաւոր տեղիք կղզւոյս են հետևեալք :

Գայքդ :

Թայօվան : Է գլխաւոր քղք կղզւոյս առ ափն ծովու յարևմտեան կողմն · մեծ , բազմամարդ , և բազմավաճառ և փարթամ ոչ ինչ ը̃հատ յայլոց երևելի քաղաքաց չինու : Ունի նաւահանգիստ բարեպատեհ · ուր յաճախեն նաւք այլևայլ ազգաց · և առ նովաւ ամրոց հզօր շինեա̃լ 'ի հոլանտացւոց · զոր և կոչեցին ամրոց զէլանտայի : Աստ նստի կուսակալ իշխան կարգեա̃լ յինքնակալէն չինու · ունելով ը̃ իւրև 10 հազար զինուորս կարգեա̃լ 'ի պահպանութիւն կղզւոյն :

Փօն

Ֆօնտան, կամ Ֆօնդան. և Զաբօ: Են երկու ծովեզերեայ քղ̃քք յարևմտեան կողմն կղզւոյն:

Պօլօման: Քաղաք բարեշէն ծովեզերեայ յարևելեան կողմն:

Թայչէն. և Փաբտօծ: Են երկու միջական կղզիք յարևելեան կողմն այսր կղզւոյ:

Փօնկհու: Է խումբ փոքրիկ կղզեաց հանդէպ Թայօվան քաղաքի:

ԼԷՔԷՈՆԵԱՆ ԿՂԶԻՔ:

Այս կղզիք ձգին ը̃ արևելս և ը̃ հիւսիս գեղեցիկ կամ Ֆօրմօզայ կղզւոյն. և ունին իւրեանց անփական թ̃գր, բայց հարկատու ինքնակալին չինաց: Մանրակրկիտ գրէ զսոցանէ հայրն կօպիլ 'ի միաբանութէ̃ յիսուսեանց 'ի թղթին իւր գրեալ 'ի 3 նոյեմբ' 'ի 1752 առ հայրն պէրթիէ. յորմէ ինչ ինչ 'ի գլխաւորացն նշանակեսցուք աստանօր. զհետ երթեալ համառօտութե̃ն պիչլինկայ:

Արդ՝ այս կղզիք սկսեալ 'ի գիւսիւ կղզւոյն, որ է մի 'ի հարաւային մեծամեծ կղզեացն Ճէաբօնայ՝ ըղղթայաբար ձգին մինչև ցկղզին գեղեցիկ. և ը̃ թ̃ւ են երեսուն և եօթն. թող զայնոսիկ, որք կախեալ կան զՃէաբօնայ. և են իբր մասունք նր̃: 'Ի հարաւակողմն գիւսիւ կղզւոյն են եօթն փոքրիկ կղզիք անուանեալք Դամասչիմա կամ Դանայքսիմա և Դանագումինա, յորս Ճէաբօնացիք իշխեն: 'Ի հարաւոյ այսց կղզեաց են այլևս ութն. որք են ը̃ տ̃րուէ թ̃գրին լեգէօնեայ կղզւոյն. և կոչին Ովֆու չիմա. Իօ կղզիք ովֆուայ, գլխաւորին 'ինն 'ի բնակչաց երկրին կոչի Ովֆու. իսկ 'ի չինաց Դադաօ. որ թարգմանի մեծ կղզի: Այս կղզիք արգաւանդ են և բազմամարդ. բաց 'ի գիգիայ անուանեալ կղզւոյն, որ չէ անտառօք. ուր գտանին բազմապատիկ մեծամեծ և գեղեցիկ մայր ծառք, ոճ̃ և յովֆու:

'Ի հարաւոյ արևմտից այսց կղզեաց է մեծ լեգէոն կղզին. յորմէ և այլք իբրև 'ի գլխաւորէ կալան զանուն. երկայնութի̃ նր̃ 'ի հարաւոյ ը̃ հիւսիս է իբր 186 մղոն. իսկ չափ լայնութե̃ նր̃ չէք որոշակի նշանակեալ. և է ը̃ մէջ 25 աստիճանաց և 30 րոպէից և 28 աստիճանաց հիւսիսային լայնութե̃. և ը̃ 146 երկայնութե̃: Թ̃գր նր̃ բնակի 'ի հարաւակողմն կղզւոյն յապարանս ինչ անուանեալ Չէվլէ, մերձ 'ի թ̃գրկան քաջղքն · որ կոչի՝ Քինդթէն, կմ՟ Քէուչէնի : Յարեւմտեան կողմն կղզւոյն են այլեւս տասն կղզիք արգաւանդ եւ բազմամարդք · բաց 'ի միոյն, որ կոչի Լանկհոջի թան · յթ կղզի ծծմբոյ, վն՟ զի կարի ծծմբային է :

Յարեւելեան կողմն գեղեցիկ կղզւոյն են այլեւս եօթնեասն կղզիք, որք են ը՟ իշխանութ՟ Թգ՟րին, լէգեոնեայ կղզւոյն · յորոց 'ի միում, որ մեծ է ք՟ զայլս, գտանին բզ՟մ գեօղք, գիւղաքղ՟ք եւ քղ՟քք · որ իբր 300 ամօք յռջ՝ յերկուս ինքնագլուխ թ՟րութ՟ս բաժանեալ էր, եւ յայն սակս ոմանք յԱ՟գրաց կոչեցին զնա կղզի Երից Թգ՟րաց · որ եւ է բազմամարդ եւ բարեբեր · զի ունի զամ՟, որք կարեւոր են 'ի պէտս եւ 'ի դիւրութ՟ կենաց մարդկան : Բնակիչք նր՟ քաղցրաբարոյ են եւ մարդասէր · դենիւ կռապաշտ · ունին քուրմս, զորս պօնզ կոչեն, որք սնեալ եւ վարժեալ են 'ի Ճեաբօն : Սովորաբար վարեն գրով Ճեաբօնացւոց, այլ դիրք դենի նց՟ եւ գիտութեց գրովք չինաց են գրեալ : Իսկ լեզու նց՟ տարբեր է 'ի բարբառոյ չինաց եւ Ճեաբօնացւոց · թէպ՟տ յերկոցունց եւս ունի բզ՟մ բառս խառնեալ :

Յօդ. ԺԷ. Գօրէա :

Այս ծ՟ է ը՟արձակ ցամաք կղզի, զոր բնակիչք նր՟ կոչեն Քաօլի, կմ՟ Քօօլին · իսկ Ճեաբօնացիք եւ եւրոպացիք Քօրէա : Եւ ունի իբր սահման յարեւելից զլայնարձակ ծոց մի ծովու, որ յանուն նր՟ կոչի ծով Գօրէայ, այլեւ ծով Ճեաբօնայ · զի յարեւմտից պատէ զնիփօն կղզին Ճեաբօնայ. յարեւելից՝ զլեաւթօնկ եւ զմեծ ծոցն ծովու, զոր կոչեն դեղին ծով · 'ի հիւսիսոյ՝ զնիւքայի Թաթարս · իսկ 'ի հարաւոյ՝ զովկիանոս : Լայնութ՟ նր՟ է իբր 300 մղոն · եւ է ը՟ մէջ 142։ եւ 147 աստիճանաց երկայնութ՟ · եւ ը՟ մէջ 34 եւ 42։ աստիճանաց լայնութ՟ : Ունի գետս բզ՟մս, որք գրեթէ առհսրկ 'ի ծովն անկանին : Գլխաւոր գետ նր՟ Յալօ կոչի, որ 'ի մերձենալ 'ի ծովն ը՟արձակեալ լայնանայ իբր 9 մղոնս · եւ գործէ անդ ծոց մեծ : Երկիր նր՟ արգաւանդ է · բերէ զամ՟, որ ինչ հարկաւոր է մարդկային կենաց · բայց առաւելապ՟ս որիզ, եւ այլ ազգի ազգի արմտիս · եւ պէսպ՟ս խոտս բժշկականս : 'Ի լերինս իւր ունի եւ բովս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ մարգարիտ 'ի ծովն Ճեաբօնայ : Կն՟ բնակչաց նր՟ ոմանք

աատեն, թէ 'ի չինաց անուն են. իսկ այլք թէ 'ի թաթարաց. այլ զիարդ և իցէ լեզու նց կարի մերձաւոր է լեզուին չինաց. ոճ և գիր նց, և եղանակ կառավարութեն 'ի չինաց առեալ են: Յօժարին են 'ի նաւարկութիս. սիրեն և զուսումն և զդպրութի. իսկ զենիւ զհետ երթան թաթարաց, պաշտեն զՇաքա չածն կմ որ նա ինքն է Ֆօ չած թաթարաց. և Լագիպեդգացւոց: Քուրմք նց կմ պօնզք յոյժ նման են և համամիտ քրմաց չինաց և ճեաբօնացւոց. ոչ թաղեն փութով զմեռեալս, այլ եդեալ 'ի տապանի ծեփեն կպրով. և պահեն զամս երիս 'ի տան 'ի խորշ մի ամրախից: Ունին իւրեանց սեփական թգր, զոր ածօրէն պատուեն. այլ կախեալ կայ նա զինքնակալէն չինաց, և հարկատու է նմ: 'Ի վախճանի ժէ դարուն ճեաբօնացիք կալան զայս աշխարհ. և տիրեցին նմա առ փոքր ինչ ժմկ. յետոյ անդրէն դարձաւ ը գերագոյն տրուք չինաց. Այս ցամաք կղզի բաժանի յութն գաւառս. յորս են 360 քաղաքք մեծամեծք և փոքունք. թող զամրոցս. որոց գլխաւորքն են հետագայքդ:

Քինկիտաօ, կմ Քին-կի-տաօ: Է գլխաւոր քղք համօրէն տրութեն Քօրէայ մեծ, բազմամարդ, բազմավաճառ և արքայանիստ, կառուցեալ գրեթէ ը մէջ Քօրէայ աշխարհի առ մեծ գետով միով: Ըստ ոմանց աշխարհագրաց չինք զայս քղք յռաջագոյն Բինկանձ կոչէին. իսկ ճեաբօնացիք Սէօլ կոչեն: Այլ գտանի 'ի Քօրէա և այլ քաղաք մի բնիկ անուանեալ 'ի հիւսիսակողմն իւր երկու աստիճանօք հեռի 'ի քինքիտայ:

Այդան. Ճանօհան, կմ Ճանփան. Մօհան. Մօպէն. Սօր: Են քղքք 'ի հիւսիսակողմն այսր աշխարհի:

Փինկանձ. Փուօ. Փօնթէն. Հայմէն: Են քղքք յարևմտեան կողմն ոչինչ կարի հեռի 'ի դեղին ծովէն:

Թօնչման, կմ Թօնդջան. Լիթսին. Հօնխաչէն. Թաօչէն. Թէյչէն: Են քաղաքք սորին տրութն յարևելեան կողմն նր:

Բինչհայի, կմ Փինհայ: Է ծովեզերեայ քղք և նաւահանգիստ յարևելեան կողմն այսր աշխարհի հանդէպ նիփօն մեծի կղզւոյն ճեաբօնացւոց:

Չէօգօնկ, կմ Չօսին. և Չինանհօա: Են երկու երևելի կղզիք յարևմտեան կողմն Քօրէայ 'ի ծոցն անուանեալ դեղին ծով:

Գուանլէնէտ. Չինէֆօ. Կանհայէ. Ճօնկօմա. Թէտին. Նանտաօ: Են կղզիք 'ի հարաւակողմն Քօրէայ ը տրութբ թագաւորի նր:

ԱՇԽԱՐՀ. Թ.

ՃԵԱԲՕՆ. կմ ՅԱԲՕՆ:

ա. Անուն:

Այս անուն անծանօթ է բնակչացն. այլ նք յանուն գլխաւորի կղզեաց իւրեանց կոչեն Նիֆօն, և է ածանցեալ յաղաւաղելոյ փորդուքալաց վանունս Ճէ բուէն, կմ Ջէպէնկ, որով չինք կոչեն զկղզին Նիփօն. 'ի հնումն ժամանց կոչէր Եաբադեան կղզի. է հաւաքումն և կուտակութն բազմապատիկ կղզեաց. զոր յայն սակս մարթ էր կոչել մեծ բրիտանիա ասիոյ: Է թգրութն մեծ, հզօր, փարթամ և բազմաժողով. զորմէ բնաւ չունէին ծանօթութն ինչ եւրոպացիք մինչև ցամ տն 1542. յորում ամի հողմն ինչ սաստկավարեաց զնաւ մի փորդուքալաց յափն միոյ 'ի կղզեաց անտի. ուր բնակիչք կղզւոյն մարդասիրութբ ընկալան զնս. և ետուն նց զամ, որ ինչ հարկաւոր էր 'ի նորոգել զնաւ իւրեանց: Այսպս դարձ արարեալ անտի 'ի կոա, ծանուցին հիւպատոսի տեղւոյն. և նա վճարեալ առաքեաց անդր այլ և նաւս 'ի զննել զերկիրն. այլ և քարոզիչս 'ի քարոզել բնակչաց տեղւոյն զհաւատս քսի յսի. որք գտեալ զերին անդ թգրութն մեծ և ժողովուրդ բզմ 'ի վաղ ժմկաց հիմնեալ և հաստատեալ:

բ. Տարածութն և Բազմամարդութն Ճեաբօնայ:

Կղզիք Ճեաբօնայ են ը մէջ 146. և 159 աստիճանաց երկայնութն. և ը լայնութն ծ 'ի հիւսիսոյ հասարակ 'ի մէջ 29. և 41. իսկ ը տեղահարրեայ 'ի մէջ 31. և 42 աստիճանաց, յարևելեան կողմն գօրեայ և չինաց ծի: Այլ զինքական տարածութն նր չէ մարթ ճշտիւ նշանակել. վս զի ոչ է երկիր միատանի, այլ ը որում ասացաք՝ հաւաքումն բազում կղզեաց:

Եւ է բազմամարդ յոյժ. զի ասի թէ ունի 13 հզր քղքս. և 900 հազար գիւղաքղքս և գեօղս. վսյ չէն ինչ զարմանք, թէ մեծ մասն արքունի Ճնպհացն Ճեաբօնայ միշտ լի լիցեն երթևեկօք. ոչ ինչ ը հաս 'ի փողոցաց մեծամեծ և բազմամարդ քաղաքաց ․ զոր աչօք ետես Կեմփեր հօլանտացի ․ չորեքս արարեալ զճնպհ՟ տօգայտօվայ ․ Թէպէտ յայն ճնպհ՟ առաւել յաճախեն երթեւեկք ․ զի ուղիղ հանէ յեդով յարքայանիստ քաղաք Ճեաբօնայ, և 'ի գիւրութե՟ն ճնպհորդաց ը՟ ամ՟ տեղիս գտանին մեծամեծ պանդոկք կազմ և պատրաստ ամ՟ իրօք ․ և ճնպհ՟քն հարթեալ են և գեղեցկացք ․ և չափ մղոնաց 'ի նո՟ քարամբք նշանակեալ ․ որք ոչ սակաւ դիւրութ՟ն ընծայեն ճնպհորդաց ։

Է․ Գետք Ճեաբօնայ ։

'Ի կղզիս Ճեաբօնայ չիք երեւելի գետ ինչ մեծ և չատաջուր ․ այլ ամ՟ գետք նց՟ գրեթէ չեն այլ ինչ, բայց եթէ հեղեղատք և ուղխք սրընթացք ․ յորս չէ մարթ կամուրջս կանգնել ․ և ոչ նաւակօք նաւել սակս զահավէժ ընթացից նց՟ ․ որոց գլխաւորքն են հետեւեալքդ ։

Իօրանկա ․ որ և Ոուօյին, կմ՟ Ոօյինկաւա ։ Է գետ երեւելի ոչ ինչ կարի բացադոյն 'ի ծովէ, որ ելանէ 'ի գըլխոյ լերին միոյ ․ լայնութ՟ի նր՟ 'ի մերձենալն 'ի ծով է իբր մղոն մի ․ իսկ ընթացքն այնչափ սաստիկ և զահավէժ, մինչև մեծամեծ վէմս ձգել ը՟ իւր ․ վսյ՟ ոչ հետի, և ոչ երիվարաւ հնար է անվտանգ անցանել ը՟ այն գետ ․ Եւս և յայնպիսում ժմկի՟՝ յորում բարձրութ՟ն ջուրց նր՟ հազիւ հասանէ ցերկու ոտնաչափ ։ Յայն սակս հարկ է առնուլ 'ի վարձու առս հինգ կմ՟ վեց զօրաւորս և քաջ տեղեակս հանգամանաց յատակի գետոյն, զի կալեալ զերիվարն հանդերձ հեծելովն՝ անցեն յայնկոյս ։ Եւ թէպէտ այսչափ վտանգաւոր է անցք գետոյս, սակայն հազիւ երբեք դիպի անդ վտանգ ինչ կենաց ․ քզի՟ ը՟ օրինաց երկրին, նք՟ որք անցուցանեն ը՟ գետն ունին տուժել փոխ կենաց ճնպհորդացն, զորս անցուցանեն ։

Ոմի, կմ՟ Եօտօ կաւա ։ Է գետ, որ ելանէ 'ի համանուն ծովակէ ․ զորմէ աւանդեն Ճեաբօնացիք ․ թէ 'ի գիշերի միում յանկարծակի իմն սկսաւ բղխել իբր 2000 ամօք յռջ՟ ։ Այս գետ յարեւելից ը՟ հարաւ հոսեալ, գնայ անկանի 'ի ծովն մերձ առ Օզաքա քղք՟ ։

Դօանկաւա, կմ՟ Դօնէգա ։ Գետ երեւելի, որ 'ի հիւսիսոյ արեւմտից հոսի ը՟ արեւելեան հարաւ ․ և անցեալ ը՟ մէջ յեդով մայրաքղքի՟ Ճեաբօնացւոց, գնայ անկանի 'ի ծովն ։

Ասուքաւա ։ Այս գետ կմ՟ հեղեղատ անդադար փոխէ խէ ղդերս ընթացից Եւրոց : Դաշտնին 'ի Ճէապօն և ծովակք կ՟մ լիճք մեծամեծք, յորս մարթ է և նաւարկել փոքրիկ նաւակօք, որպէս է ծովակն Օմիշայ կ՟մ օմեայ յօմի գ՟ւռի․ ուր որսան սաղոմոն ձուկն բ՟զմ և պատուական :

Են անդ և ինքնաբուղխ ջերմուկք մ՟նդ յուսչէն և 'ի Ֆինկօ գ՟ւռս․ այլև բ՟զմ հրաբուղխ լերինք․ որոց գլխաւորքն են հրաբուղխ լեառն Ֆիրանտօ կղզւոյն․ որ 'ի բ՟զմ դարուց այրի․ և աշագին բոմբիւնս և շառաչիւնս արձակէ․ և լերինքն սաչուսմա և Ֆինկօ գ՟ւռաց․ այլ յաւէտ ք՟ զ՟մ նշանաւոր է հրաբուղխ լեառն չիքուսէն գ՟ւռին․ ուր յռ՟ջագոյն էր հանքածխոյ․ այլ յետոյ յանկարծակի իմն հրդեհել, անհնարինս բորբոքեցաւ․ և վառի կարծեմ թէ մինչև ցայսօր : Գտանի միւսևս հրաբուղխ լեառն մերձ 'ի շիմպառա․ որ թէպէտ բոց սակաւ արձակէ, այլ ծուխ թանձր և ժահահոտութ՟ի մահաբեր․ և առ նովաւ դողայ երկիրն ը՟ ոտիւք բ՟զմ մղոնաւ տարածուք՟, իսկ յանձրևելն բոլոր այնր տարածութ՟ե թուի եռալ, յայտ է թէ սակս ստորերկրեայ հրոյ : Յայս բազմապատիկ մշտավառ ստորերկրեայ հրայրեցուէ, և յինքնաբուղխ ջերմկաց՝ յայտնի երևի, թէ երկիրն Ճէապօնայ լի է ծծմբով․ յորմէ և պատճառին 'ի նմա սաստիկ սասանութիք երկրի զարհուրելիք, մինչև կործանել զք՟զքս․ սակայն Ճէապօնացիք ոչ ինչ զանգիտեն․ զոր ռամիկ ժողովուրդն կարծէ պատճառել 'ի շարժմանէ կէտ ձկան մեծի․ որ 'ի թիկունս իւր բարձեալ ունի զերկիր : Բայց 'ի հրաբուղխ լերանց զատի, ունի և այլ բ՟զմ բարձրաբերձ լերինս, յորս անուանի են լերինք սուրունկայ գ՟ւռին․ որք թէպէտ 54 մղոնաւ են 'ի ներքս 'ի ցամաքն, սակայն իբրև 'ի 120 մղոնաւ հեռաւորութ՟է երևին 'ի ծովէ : Բարձրագոյնն 'ի ն՟ցէ բրգաձև աւարտի․ և գլուխ ն՟ր միշտ ձիւնապատ է․ իսկ այլք շուրջ զնովաւ իբր բլուրս երևին․ թէպէտ և բարձր են յոյժ : Ասի թէ 'ի գագաթան ն՟ր է վիհ մեծ, յորմէ 'ի հնումն ծուխ թանձրամած ելանէր :

Դ․ ՕԴ ՃԷԱՊՕՆԱՅ :

Օդ Ճէապօնայ կղզեաց կարի բարեխառն է և առողջարար․ որ յայտ անտի է, զի բնակիչք ն՟ր առողջ են, ուժեղ և երկայնակեաց, այլ անհաստատ է յոյժ և փոփոխական․ 'ի ձմերայնի ցուրտ և ձիւ-

Նարեր․ իսկ յամարայնի սաստիկ տօթագին, մինչ 'ի տիրել շնիկ աստեղ ։ Յաճախ են անդ անձրևք՝ ը̄ ամ̃ն ողջոյն․ այլ առաւել յորդեն յամսեանն յունիսի և յուլիսի․ զոր յայն ատիս Ճենաքենացիք կոչեն Մաջուքի․ ո̄ է ամիսք ջուրց ։ Բայց անձրևք նր̄ ոչ են կանոնաւոր ոպ̃ յարևելեան հնդկային ջերմագին գաւառս ։ Նոյնպէս և որոտք և փայլատակունք յաճախեն անդ յոյժ․ ոպ̃ և Թաթառ, այն է՝ ամպի խոռթուռ սաստիկ իջանէ 'ի շրջակայ ծովս նր̄․ զոր Ճենաքենացիք համարեն ջրային վիշապ երկայնատուտ ։ Վս̄ այնորիկ վտանգաւոր է յոյժ նաւարկութի̄ն 'ի կողմանս կղզեաց Ճենաքենայ․ մինչ զի լի են անդ 'ի ծովու և ժայռք մեծամեծք․ ուր գտանին և վտանգաւոր յորձանուտք ։

Է․ Երկիր Ճենաքենայ ։

Աշխարհն Ճենաքենացւոց գրեթէ ը̄ ամ̃ տեղիս լեռնային է և անտառալից․ ուստի և երկիր նր̄ ը̄ ինքեան անբեր է․ բայց ժրաջան մշակութ բազմամբոխ բնակչաց նր̄, ուրք և ոչ թզաչափ մի տեղի թողուն անգործ՝ ոչ միայն 'ի դիւր երկրի և 'ի հովիտս, այլև յանբեր լերինս, արգասաւորս և բեղմնաւորս գործեն զնա ։ Այն զի՝ օրէնս ունին Ճենաքենացիք, զի թէ ոք ը̄ ամ մի ողջոյն անգործ թողուցու զկալուածս իւր, կորուսանէ զի̄րաւն նր̄ ։ Վս̄յ ունի ցորեան ը̄ բաւականին․ որիզ առատ, կորեակ, գարի, բակլայ, թէյ՝ այն է՝ չայ, կանեփ, բամբակ և ազգի ազգի ծառս, և ծաղիկս պէսպէս ընտանիս և վայրենիս․ և բոյսս սակաւագիւտս և նորանշանս․ յորս առաւել նշանաւորք են նախ՝ ծառն թղթաբեր․ ը̄ Ճենաքենացւոց Գասսի անուանեալ․ զի 'ի կեղեւոյ նր̄ գործեն թուղթս․ այլև մանեն չուանս․ և անկանեն ոստայնս․ գործեն և պատրոյգս դիւրավառս, որ ը̄ հասանելն 'ի հուր, նոյնժամայն վառի ։ Երկ̄դ՝ ծառն անուանեալ Արուսի․ որ բերէ զհիւթ ինչ սպիտակագոյն, որ լինի վէրնիճ ազնիւ․ և նովաւ Ճենաքենացիք օծանեն զանօթս սեղանոյ իւրեանց․ ոպ̃ և զանօթս թղթի․ զի նախապատիւ ունին զայնպիսի անօթս, ք̄ զարծաթիս ։ Եր̄րդ՝ ծառն անուանեալ Գուա որ կոչի և ծառ քափուրայ․ այն է քեաֆիւրի․ զի 'ի տերևոց և յարմատոյ նր̄ լոկ եռացմամբ 'ի ջուր գործեն ազգ մի քափուրայ․ բայց սաստիկն է այն յոյժ․ ք̄ զքափուրն պօռնէօ կղզւոյն ։ Չո̄րդ՝ ծառն կոչեցեալ Սանսիօ · միջակն ըստ մեծութեան և փշալից · կեղև նորա և փեճեկ պտղոյն են ճեաբոնացւոց փոխ պղպեղի և կոճապղպեղի · որպէս և տերևն է համեմիչ կերակրոց ։ Ունի և այնպիսի տեսակս դարնեաց, և Թթենի բազում յոյժ · այլ պտուղ նորա անհամ և անպիտան 'ի կերակուր · բայց տերևն պատճառական 'ի դարման շերամոյ · զի շերամ բազում դարմանեն ։ Ունի և ազգի ազգի պտուղս, որպէս կիտրոն, նարինջ · այլև լեմոն՝ բայց սակաւ, և այն՝ միայն 'ի պարտէզս · դեղձ · ծիրան · շլոր երկատեսակ · իսկ զկեռասենի դարմանեն լոկ վասն ծաղկին, որ 'ի գարնանային ժամս գեղեցիկ երևի ։ Նոյնպէս և որԹս խաղողոյ սակաւ անկեն · զի ասի Թէ խաղողն անդ ոչ ժամանէ 'ի կատարեալ հասունութիւն ։ Ունի և այնպիսի ընկոյզս, յորս նշանաւոր է ընկոյզն, զոր Քայա կոչեն · որ յորժամ Թարմ է անհամ է · այլ երբև հնանայ, առ փոքր մի համեղանայ · իւղ նորա քաղցր է երբև զիւղ նշոյ · որ և լուծողական է և առողջարար, որով համեմեն և զկերս ։ Են ևս զնոյն տեսակս վայրենի անպտուղ ծառոց, յորս առաւել յաճախեալ են եղևնին ծառք · և նոճիք ոչ միայն յանտառս, այլև 'ի քաղաքս և 'ի գեօղս · և բազմատեսակ բոյսս, որոց արմատք, տերևք, ծաղիկք և պտուղք ոչ միայն են 'ի կերակուր մարդկան, այլև 'ի պէտս ներկոյ · որպիսի է բոյսն անուանեալ Սէն, և բոյսն Տըսխու կոչեցեալ, յորմէ մելան լինի ։

Ունի և բովս ոսկւոյ 'ի զնոյն տեղիս · որք յառաջագոյն բազում էին և առատաբեր · այլ յետոյ ոմանք ծածկեցան 'ի պէսպէս արկածից, որպէս առատաբեր բովք ոսկւոյ 'ի քէքունկօ գաւառի · որ լի է այժմ ջրով · վասնորոյ և անհնարին է գործել անդ ։ Խորհուրդ կալան երբեմն բանալ անցս ջրոյն ընդ ապառաժ վէմս, որ է հանդէպ մօտից նորա · այլ երբև ձեռն 'ի գործ արկին, յանկարծակի իմն յարեաւ մրրիկ սաստիկ, մինչև Թուէր քանդել զերկին · յորմէ զարհուրեալ Ճեաբոնացւոց, եդին 'ի մտի, Թէ տէրն տեղւոյն ոչ հաճի Թէ բացցեն անդ բովք · վասնորոյ կայ մնայ մինչև ցայսօր ջրալից ։ Նոյնպէս դիպաւ երբեմն և 'ի յամաքուսա կղզին · զի մինչդեռ սկսան պեղել զբովս ինչ ոսկւոյ, յանկարծուստ բղխեաց 'ի լեռնէ անտի ջուր յորդառատ սաստիկ բռնութեամբ, և փախստական արար զգործաւորս առհասարակ · վասնորոյ Թողու և այն տեղի անգործ մինչև ցայսօր ։

Ունի և արծաԹ ընտիր · որոյ նման ասի Թէ չիք ուրեք, զոր երբեմն 'ի չին փոխանակէին ընդ ոսկւոյ համաչափ կշռով։ Եւ տեսակ մի մետաղի, որ է խառնեալ 'ի պղնձոյ յարծաթոյ և յոսկւոյ. զոր Ճափօնացիք Սօվա կամ Սաովաս կոչեն. և գործեն անտի պէսպէս ձեռակերտս. որք գունով, և փայլողութ̃ ոչինչ իւիք զիջանին յոսկւոյ։ Ունի և անդ պատուական և երկաթ, բայց սակաւ. և առաւել ք̃ զամ̃ պղինձ բզ̃մ յոյժ. որ և է մի 'ի գլխաւոր վաճառաց նր̃։ Ունի և զնշ̃ն տեսակս ակատ կոչեցեալ ական. և այլ ականս հնդկաց. ոմ̃ և սաստիկ մարգարտաբեր 'ի ծովեզերս իւր. և ը̃ մարկոսի պօղոսի վենետիկեցւոյ՝ մարգարիտ կարմիր, որ այնչափ 'ի յարգի է, որչափ սպիտակն. և ազգի ազգի ծովային խեցիս պատուականս, և քարաբոյսս բազմատեսակս բուսեալ 'ի ծովու. և գաճաղմ. և պէսպէս տեսակս ձկանց անծանօթս առ մեզ։ Եւ 'ի գետ մի յետեսինկօ կոչ̃եալ գտանի խեղեյն գոյացութի̃ խիճ կարմրագոյն, զոր խեղ քարի կոչեն, բայց ոչ ը̃ գետն բոլոր, այլ միայն 'ի տեղիս, յորս ջուրն իբր լճացեալ՝ կայ անշարժ. զոր հաւաքեալ 'ի վեր առնուն 'ի լապտերս փոխ ձիթոյ։ Իսկ զաղն գործեն 'ի ջուրց ծովու. զի չիք անդ աղահանք։

Ունի և ընտանի անասունս, որ̃ կով գոմէշ ձի, շուն և կատու. այլ ոչ էշ ջորի ուղտ և փիղ։ Փորդուգալք ածին անդ և ոչխարս և այծս. որք 'ի սկզբան անդ բազմացան յոյժ. բայց ք̃զի Ճափօնացիք ոչ ուտեն զմիս նց̃, և ոչ գիտեն գործել զասր և զմորթ նց̃, նմին իրի զկնի տարագրութե̃ փորդուգալաց, թողին զնս̃ յանտառս վայրենանալ իբր անպիտանս իւեանց։ Նոյնպէս և զկովս և զցուլս սնուցանեն միայն վս̃ հերկագործութե̃. և վս̃ լծելոյ զնս̃ 'ի սայլս. ք̃զի ոչ ուտեն զմիս նց̃. ոմ̃ և ոչ զկաթն, և ոչ կոգի 'ի պտճ̃ռս աւանդոյ հոգեփոխութե̃. զի կարծեն թէ հոգիք նախնեանց զկնի մահուան 'ի նս̃ փոխադրին։ 'Ի Ֆիրէն կոչ̃ի սնուցանեն և խոզս, ոչ 'ի պէտս իւեանց, զի ոչ ուտեն զխոզենի, այլ վս̃ վաճառելոյ չինաց. ք̃զի թէպէտ և չինք ըն̃ունին զաւանդ հոգեփոխութե̃. բայց չեն այնչափ երկիւղած 'ի ճիշդ պահպանութե̃ սկզբանց նր̃, որչափ Ճափօնացիք։

Այլ առաւել ք̃ զամ̃ տեսակս ընտանի անասնոց յաճախեն անդ շունք, որք առ թրուք̃ Ցինայօս ինքնակալին Ճափօնայ, որ թգ̃րեր 'ի [illegible], յորում անդ պաս̃ կեմփեր հոլանտացի, այնչափ բազմացեալ էին, մինչև լնուլ զամ̃ փողոցս ք̃ղքաց և գիւղօրէից յանհնարին վիշտ անցաւորաց ը̃ փողոցս։ Քանզի նա ինքն ինքնակալն էր շնասէր յոյժ. և փոյթ մեծ ունէր յաձուկս և 'ի պահպանութ̄ն նց̄ . երբ զի ծնեալ էր ը̄ համաստեղութ̄բ շնիկ աստեղ : Եւ հրաման ետ զի իւրաքանչիւր թաղ այնչափ ինչ թուով շունս պահեսցէ և սնուսցէ . յայն սակս յոյժ փողոցս լցեալ կային մանր խրճիթք յայլ և այլ տեղիս 'ի հանգիստ շանց . և 'ի հիւանդանալ նց̄ , պարտական էին բժշ̄կ խնամով դարման տանել նց̄ : Ընդ ծանր պատժով արգելեալ էր հարկանել զշունս . իսկ սպանումն շան էր յանցանք գլխապարտութ̄ն : Յորժամ սատակէր շուն մի , պարտական էին տեարքն կմ̄ խնամակալուք նց̄ բառնալ տանել զնս̄ 'ի գլուխս լերանց , և անդ թաղել : Պատմի թէ մի ոմն մինչդեռ բարձեալ յուս իւր զշուն մի մեռեալ հանէր 'ի լեառն 'ի թաղել , վաստակեալ 'ի ծանրութ̄է բեռին , սկսաւ նզովել զօր ծննդեան Թգ̄րին , և զայլմարդական պատուէր նր̄ , որ այնչափ վիշտս հասուցանէ բոլոր երկրին . իսկ ընկեր նր̄ , որ երթայր ը̄ նմ̄ , սաստեաց նմա ը̄ կատակս՝ լռել 'ի տրտնջելոյ . այլ մնւնդ պարտ է քեզ փառս տալ դից , զի Թգ̄ր մեր ոչ ծնաւ ը̄ համաստեղութ̄բ ձիոյ . ապա թէ ոչ՝ առաւել ծանր և դժուարակիր լինէր այսօր բեռն քո :

Իսկ վայրենի չորքոտանիք Ճեաբօնայ են արջ , այծեամն , աղուէս . զոր ռամիկ ժողովուրդն կարծէ սատանայի մարմին զգեցեալ սակս խաբուսիկ բարուց նր̄ . վայրենի շուն , վարազ , նապաստակ և կապիկ , այլ սակաւ , որք կարի դիւրաւ ընտելանան . իսկ առիւծ , ինձ , յովազ , և այլ ամեհի գազանս չիք տեսանել 'ի Ճեաբօն . ոչ̄ և օձք և այլ թունաւոր զեռունք ուր ուրեմն երևին անդ : Բայց գտանի տեսակ մի մրջման սպիտակ իբր զձիւն անհնարին վնասակար . զի մտեալ 'ի շտեմարանս ցորենոյ կմ̄ այլոց իրաց , 'ի սուղ ժմկի ապականեն զա̄մ ինչ . մի միայն հնարս գտին Ճեաբօնացիք մինչև ցայժմ 'ի զերծուցանել զիրս իւրեանց յամենածախ ժանեաց նց̄ , որ ցանել աղ 'ի վր̄ իրացն , զի խորշին նք̄ յաղէ : Անհաշտ թշնամի են այլոց հն̄րկ մրջմանց . վս̄ ուր ուրեք այս սպիտակ մրջինք մտանեն , անկարելի է այլ տեսակ մրջման անդ մուտ գտանել :

Ունի և ընտանի հաւս . և ազգի ազգի վայրենի թռչունս . յորոց ոմանք այնչափ ընտել են , զի մարթ էր դասել զնս̄ 'ի թիւս ընտանի հաւուց . ոչ̄ կռունկք , որք մասնաւոր օրինօք պահին 'ի զուարճութ̄ն և 'ի ծնյութ̄է ինքնակալին . որք և բարեգուշակք համարեալ են առ նս̄ . ոչ̄ և կրիայն սակս երկարութ̄ե կենաց՝ ըստ խելացնոր առասպելեաց Ճեաբօնացւոց. յայն տակս նկարել՟ կան պատկերք ն՟ց յորմունս արքունի տաճարանից և մեհենաց: Գտանին երկու տեսակք վայրենի սագուց. մին սպիտակ իբրև զձիւն. և ծայրք թևոցն սևաւ. իսկ երկ՟գն մոխրագոյն, երկոքին ևս այնպ՟ս ընտանի են, զի մարդ է դիւրաւ մերձենալ 'ի ն՟ս. այլև ըմբռնել ձեռօք: Եւ թէպ՟տ վնաս բ՟զմ գործեն յարտորայս, սակայն ը՟ պատժով գլխապարտութեան արգելել՟ է սպանանել: Վ՟ս այնորիկ գիւղականք բռնադատին վարմ արկանել շուրջ զարտորէիւք 'ի պահպանութ՟ի հնձոց իւրեանց յապականագործ թռչնոց անտի: Են անդ և պէսպ՟ս վայրենի բադք. յորս է տեսակ մի, զոր Ճեաբօնացիք քիմօտուի կոչեն. որ այնչափ գեղեցիկ է. զի օտարականք, որք տեսանեն զպատկեր ն՟ր նկարել՟, ոչ կարեն հաւատալ, թէ գոցի իրօք այնպիսի թռչուն. ամ՟ փետուրք ն՟ր երփներփն շողշողեն. միայն պարանոցն է միագոյն կարմրափայլ, իսկ 'ի գլուխն ունի գեղեցիկ ցցունս: Գոյ անդ և արագիլ ը՟ ամ՟ տեղիս յաճախել՟. և տեսակ մի վայրի աղաւնւոյ. և այլ այլ թռչունք:

'Ի շրջակայ ծովս են կէտք մեծամեծք, որք կարի չահաբեր են Ճեաբօնացւոց. զի ո՟պ ասեն տեղահարբեն՝ չիք 'ի ն՟ս ինչ անպիտան, բաց յողնաշար ոսկերաց. միսն ն՟ց, որ սովորաբար է սևագոյն՝ նման է մորթոյ եղին. միսն կարմրագոյն և պատուական 'ի կերակուր. ո՟պ և ողիքն և այլ ամ՟ ներքին անդամանք ն՟ց. ճարպն յիւղ լապտերաց և յայլ պէտս. իսկ 'ի ջլային մասանց գործեն լարս 'ի պէտս նուագարանաց, նոյնպէս և յոսկերաց ծնօտից, և թևոց շինեն պէսպ՟ս ձեռակերտս. ը՟ որս և կշռորդս գեղեցիկս: Գտանի անդ և ձի կմ՟ շուն ծովային. որ է նորատեսիլ ազգ ձկան. երկայն 'ի չափ հասակի տասնամեայ մանկան. գլուխն բերանն և պարանոցն մեծ. և որովայնն լայն իբրև զպարկ լցեալ. ատամունքն մանր՝ այլ սայրասուր ը՟ ատամանց օձից. իսկ 'ի ներքոյ որովայնի ունի երկու ոտս լայնս և աճառայինս. և մատունս նման մատանց ձեռաց փոքրիկ մանկան, և ասեն թէ միս ն՟ր պատուական է 'ի կերակուր:

Է. Վաճառք Ճեաբօնայ:

Գլխաւոր վաճառք, որք ելանեն 'ի Ճեաբօնայ են՝ արծաթ ազնիւ յոյժ. զոր ո՟պ 'ի վերոյ ասացաք՝

ցոք՝ ը՟ ոսկւոյ փոխանակելին երբեմն 'ի չին. արոյր ազնիւ. որ է բաղադրութիւն ինչ յոսկւոյ յարծաթոյ և 'ի պղնձոյ. ոսկի՝ թէպէտ ոմանք ասեն, թէ թագաւորական օրինօք արգելեալ է հանել ոսկի արտաքս յՃէ անտի. բայց այն արգելք գուցէ թէ իցէ 'ի վ՟ր ձոյլ ոսկւոյ կմ՟ ոսկի դրամոց. ք՟զի յայտ է թէ հոլանտացիք հանեն անտի ոսկեթել բզ՟մ։ Քափուր, եղջիւր անասնոց. մորթ կէտ ձկանց. զոր Ճէապօնացիք քաջ գիտեն գործել. գաւազան եղեգնեայ ազնիւ. որիզ պատուական. ազգի ազգի թէյ. քաղցռենիք այն է՝ ուէչէլ 'ի զնզ՟ն պտղոց. վէրնիճ. այլև տեսակք ինչ հ՟որկ ականց։ Պէսպէս ձեռակերտք, զ՟ր անօթք յախճապակեայք ընտիրք. հովահարք յո ելփաղէ. տուփք և արկեղք ճարտարագործք նկարէնք և ոսկէնիւչ ծաղկօք յօրինեալք. անօթք բզ՟մ ճարտարութ՟բ հիւսե՟լ 'ի նրբաթել եղեգանց. և այլ սոցին նման զնզ՟ն արհեստակերտք։ Այլ առաւել ք՟ զամ՟ պղինձ մաքրե՟լ և անմաքուր, զոր բառնան անտի հոլանտացիք։

Մինչև ցամ՟ն 1637 կմ՟ 1638 ամ՟ ազգք կարող էին գնալ 'ի Ճէապօն, և համարձակ տուրև առիկ լինել անդ. այլ յամին 1638 անլուծանելի օրինօք տարագրեցան անտի փորդուգալք յաւէժաբար. և առհասարակ ամ՟ օտարազգիք մ՟ն՟դ եւրոպացիք. միայն հոլանտացիք 'ի ձեռն անարժան հնարից (զոր 'ի ճառելն սուրբ վկրօնից Ճէապօնացւոց ունիմք յիշատակել) զերծ կացուցին զազգ իւրեանց յօրինաց անտի. զի թոյլ ետուն նց՟, ոչ՟ և չինաց առնել վաճառականութիւն անդէն։ Բայց այնչափ արգելք և նախատական պայմանք եդան 'ի վ՟ր նց՟, մինչև յիրաւի զարմանալ, որոց ողջ իկ միտս ունին, թէ զիա՟րդ հոլանտացիք ազգ ազնուական և երևելի կարծեցեալ յեւրոպիա, յանձն առնուն զայնչափ դժնդակ նախատինս 'ի բարբարոս յամբարտաւան ազգէ անտի, ուր և օգուտն զոր շահին չէ ինչ մեծ։

Քանզի ոչ՟ ասէ կեմփեր հոլանտացի, տարագրեալ կան նք՟ 'ի տէսիմա արհեստական կղզի փոքրիկ, որ է հանդէպ նաւհնգստի նանկասագ. ք՟ղքի, կամրջակապե՟լ ը՟ ցամաք։ Եւ անդ՝ զօրէն գերեաց շրջափակե՟լ պահին 'ի մէջ զօրաց և դահճաց Ճէապօնացւոց. որք միանգամայն և լրտեսք են նց՟ մ՟ն՟դ 'ի հասանել նաւուց նց՟։ Յորժամ հասանին անդր նաւք հոլանտացւոց, վաղվաղակի մերկացուցանեն զնս՟ յամ՟ զինուց. հանե՟լ 'ի ցամաք զհրացէնս, զվառօթ. ը՟ որս և զղ_ ղեկ նաւուն, և զառագաստս. և այնպէս երբեմն 'ի բանտի արգելեալ պահեն զն՟ա: Նոյնպէս և զա՟մ վաճառս ն՟ց Ճեաբօնացիք հանեն 'ի ցամաք. բայց նախ ք՟ ըղմերձենալ առ ն՟ա, հանդերձ երդնուն չթողուլ զհոլանտացիս առնել զհաղորդութի՟ ինչ ը՟ ումեք 'ի Ճեաբօնացւոց. և չտալ ն՟ց ընաւ համարձակութի՟. և չառնել բարեկամութի՟ ինչ ը՟ ն՟ա. յորմէ յայտ է թէ վաստթարագոյն համարին զն՟ա, ք՟ զկեալին ստրուկս: Եւ որ առաւել զարմացման է արժանի, եղկելի հոլանտացիք փոխանակ այսպիսի գոլ անարգանաց, զոր ընդունին 'ի նոցէ, պարտապան են և առատ թոշակս տալ ն՟ց:

Ըստ ասելոյ կեմփերայ՝ անարգութի՟ մեծ համարել է առ Ճեաբօնացիս գէթ սակաւ ինչ ընտանութի՟ և բարեկամութի՟ ցուցանել հոլանտացւոց. յայն սակս ամ՟ք՟ն միշտ պ՟տճառս խնդրեն 'ի նախատել և 'ի սպառ ոտնակոխ առնել զն՟ա: Ոչ երբեք քաղցրութե՟ խօսին ը՟ ն՟ա. այլ միշտ իշխանաբար և արհամարհելով: 'ի վաճառել ինչ ն՟ց չափազանց գինս պահանջեն վ՟ն չնչին իրաց. զի ա՟մ իրօք գուն գործեն խափանել զօգուտ ն՟ց: Գողութի՟ն ը՟ սաստիկ պատժոյք արգելեալ է առ Ճեաբօնացիս. այլ յորժամ ոք գողանայ ինչ 'ի հոլանտացւոց, եթէ ըմբռնեսցի 'ի գործ գողութե՟, առնուն զգողօնն 'ի նմանէ. և զինուորք, որք պահեն զկղզի հոլանտացւոց՝ առ փոքր մի գանեն զնա, և արձակեն. իսկ եթէ ոք մեծ ինչ չարիս գործեսցէ ն՟ց, առ սուղ ինչ ժ՟մկ աքսորեն զնա: Այլ վայ է հոլանտացւոց, եթէ թագուցեն ինչ 'ի մաքսաւորաց. որոյ պատիժն է մահ անվրէպ գլխատմամբ կ՟մ 'ի խաչ հանելով 'ի նախատինս քրիստոնէութե՟: Ոչ են կարող հոլանտացիք գիրս առաքել ուրեք, և ոչ ընդունիլ, առանց տեսանելոյ զայն կուսակալ իշխանին և նշանակելոյ 'ի մատենի: Յ՟ջագոյն յորժամ ոք 'ի հոլանտացւոց մեռանէր 'ի Նանկասակ, 'ի ծով ընկենուին զմարմին ն՟ր իբր անարժան հողոյ երկրին. այլ այժմ ստացան փոքր ինչ տեղի անպիտան 'ի լերին 'ի նասայ 'ի թաղել անդ զմեռե՟լս իւրեանց: Ահա զայսպիսի և զայլ սոցին նման նախատինս և անարգանս անբաւս կրեն անդ հոլանտացիք, զորս ը՟ երկար գրէ կեմփեր. և յաւելու զկնի, գիտեմ ասէ, զի բ՟մք վ՟նկ եպերեն զմեր հոլանտացիս. այլ ն՟ց չէ ինչ փոյթ. զի խոնարհ են. ուստի և ոչ խորշին յանարգանաց վ՟ն շահասիրութե՟. եթէ արդարև խոնարհութի՟ արժան իցէ ասել զայն, և ոչ յետին

դըծգծծութեան և տմարդութեան․ որ է ծնունդ գարշելի ագահութեան ։ Սակայն զեարդ և իցէ, հոլանտացիք յանձն առնուն զայն, և շարունակեն ընդ Ճէաբօնացւոց զառևտրութիւն իւրեանց․ որ յոքնագոյն առաւել ծաղկեալ էր․ զի ամի ամի եօթն նաւս առաքէին անդ․ այլ յետոյ 'ի պատճառս պէսպէս արգելլեաց, որք օր ըստ օրէ յաճախեցին, նուազեցաւ յոյժ․ վասնզի այժմ զերիս և եթ կամ չորս նաւս առաքեն․ որք տանին անդ մետաքս անգործ 'ի չինաց Տէ 'ի դունդքինայ, 'ի պանկալայէ, և 'ի պարսից․ և ազգի ազգի կերպասս մետաքսեայս և ասուեղէնս 'ի հնդկաց և յեւրոպիոյ․ բայց առաւել ոսկեթել ծաղկանց․ չուխայ եւրոպիոյ․ փայտ պրազիլու 'ի պէտս ներկարարաց․ մորթս գոմշոյ և եղջերուէի և այլոց ընտանի և վայրենի չորքոտանեաց․ դեղնագոյն սեկ՝ այն է՝ սաֆրան․ պղպեղ․ շաքար․ մեխակ․ ընկոյզ հնդկային այն է՝ հինտիստան ընկոյզի․ սանտալ փայտ սպիտակ․ քափուր 'ի պարսաէ, 'ի պօրնեան կղզեաց, և 'ի սումադրայէ, կինաքարիս, սնտիկ, քրքում 'ի պանկալայէ, բորակ, պաղլեղ, կապար, բուստ, այն է՝ մերճան․ հայելի յեւրոպիոյ, աչքնոց, դէտակն, խոշորացոյց ապակի, և պէսպէս ապակեղէն անօթս, և այլ արուեստականս և բնական իրս ։

Բայց յայսմ ամէ՝ ըստ ասելոյ պէշլինկայ, ոչ կարեն վաճառել աւելի քան 45454 վէնէտիկեան ոսկւոյ․ որում փոխարէն առնուն սնտի 11000․ և երբեմն մինչև 20000 տաղանդ պղինձ մաքրեալ․ Թող զանմաքուրն․ քափուր Ճէաբօնայ․ յախճապակեայ անօթս, և տուփս, և արկեղս նկարէնս, և հոմահարս են․ Թէպէտ այժմ այսպիսի ձեռակերտք չունին այնչափ ինչ յարգ յեւրոպիա ։ Նոյն յայսմ ամէ՝ ըստ կեմփերայ շահէին հոլանտացիք 60 'ի հարիւրոյ․ այլ 'ի բաց հանեալ զամ ծախս, ոչ մնայ նոցա շահ աւելի, քան 40 կամ 45․ " օգուտ սա-
‚ կաւ, ասէ կեմփեր վասն այնպիսի ընկերութեան վաճա-
‚ ռականաց, որ այնչափ ծախս առնէ յարեւելեան
‚ հնդիկս․ վասնզի չէր արժան պահել զայս մասն առ-
‚ ևտրութեան, եթէ վաճառք, զոր հանեմք 'ի Ճէաբօ-
‚ նայ՝ մինչդեռ պղինձն մաքրեալ ոչ բերէին մեզ նոյն-
‚ չափ շահս և աւելի․ ուստի և բոլոր շահն կարէ
‚ հասանիլ ց80 կամ 85 'ի հարիւրոյ․ այն զի և ծախք
‚ ոչ են նոյնչափ յամ ամի ||։

Չէ ինչ ըստ հնաւ և առևտրութեան չինաց, զոր առնեն անդ․ վասնզի և նոքա գրեթէ ըստ նոյին պայմանօք և արգելմամբք անկեալ կան, ըստ որում հոլանտացիք․ սակս տանելոյ նոցա երբեմն անդ և վաճառելոյ ոմանց վաճառականաց Ճեաբօնացւոց 'ի միասին ընդ գրոց կոնֆուտիոսի մեծի օրէնսդրի իւրեանց` և գիրս ինչ քրիստոնէից, յորդորեցելք 'ի քարոզչաց եւրոպացւոց:

Է. Դպրութիւն Ճեաբօնայ:

Ճեաբօնացիք ընդհանրապէս խօսելով սրամիտ են և ուսումնասէր. ունին բազում դպրոցս յամ քաղաքս. զի որպէս տեսանի 'ի գիրս ողջունի սրբոյն Փրանկիսկոսի քսաւերեան` լոկ 'ի Մէաքօ քաղաքի և 'ի շրջակայս նորա յիւրում ժամանակի էին չորք մեծամեծ դպրոցք. թող զդպրոցս այլոց գլխաւոր քաղաքաց. և յիւրաքանչիւրսն էին 3 կամ 4000 մանկունք: Իսկ այժմ առաւել յաճախեալ են. և մնան 'ի նոսա մանկունք ընդ դաստիարակութեամբ քրմաց, (զի նոքա իմաստնագոյնք համարեալ են առ Ճեաբօնացիս) մինչև 'ի ժդ ամ հասակի. ապա հանեալ զնոսա անտի, տան 'ի ձեռս նոցա ըղսուր. և մարզեն 'ի զինուորութեան. վասն զի ամենայն տէլահարբեայ` մարթ է զՃեաբօնացիս կոչել զինուորս 'ի ծնէ: Ունին և առանձին դպրոցս 'ի ձև մենաստանաց` վասն աղջկանց. ուր ուսուցանեն նոցա ընթեռնուլ և գրել. և մարզեն զնոսա 'ի տաղաչափութիւն և յերաժշտութիւն: Սակայն ընդ այնչափ բազմութեան դպրոցաց, և յաճախութեան գրոց և գրատանց` զոր ասեն ունել նոցա, ուսմունք գիտութեանց չեն ինչ ծաղկեալ 'ի նոսա. զի այն բազմութիւն գրեանց նոցա զայլոց իրաց ոչ ճառեն, բայց զբարոյական ուսմանց, զպատմութեանց, զբժշկութեան, զտաղաչափութեան, և զքանաստեղծութեան. որ առաւել քան զայլ մակացութիւնս ծաղկեալ է առ նոսա: Ունին և ընդ դուզնաքեայ իմն ծանօթութիւն զթուաբանութեան և զչափաբանութեան. այլ 'ի բնաբանական, և 'ի մետաֆիզիքական, ևս առաւել յաստեղաբաշխական մակացութեանց գրեթէ ամենեւին զուրկ են:

Ասի թէ չունին և գիրս իրաւանց. բայց միայն քանի մի համառօտ սահմանադրութիւնս. զոր ճշտիւ պահեն. թէպէտ չէ յայտ ստուգիւ, թէ նոցա է հաստեալ, եթէ յայլոց առեալ. որպէս և զվաթսնամեան շրջանս իւրեանց, որով չափեն զդարս, 'ի չինաց առին: Եւ զայն առնեն համեմատելով զնշանագիրս երկոտասան համաստեղութեանց երկնից ընդ նշանագիրս տասն տարերաց. զի նշանագիրք համաստեղութեանց հինգ անգամ համեմատեալ ընդ նշանագրաց տասն տարերաց. կամ այն տասն տարերք վեց անգամ համեմատեալ ընդ նշանաց համաստեղութեց, արտադրեն վախճանն նշանագիրս բաղադրել̄ս • յորոց իւրաքանչիւրն ծառայէ առ մի ամ̄ • գրեթէ որ̄ առ մեզ գիր տարւոյն : Եւ թէպտ̄ անուամբ՝ տասն տարերս թուեն, զի 'ի համեմատութ̄ ն̄ց ը̄ համաստեղութեց՝ ելցէ շրջան ն̄ց • այլ իրք հինգ եւեթ դնեն • ծ̄ զփայտ, զհուր, զհող, զմետաղ եւ զջուր : Իսկ անուանք համաստեղութեց զոր ն̄ք Բեգդա կոչեն, 'ի բարբառ ն̄ց են այսոքիկ • Նէ՝ մուկն • Ուս՝ ցուլ • Թօռա՝ վագր • Ով՝ նապաստակ • Դրաջ՝ վիշապ • Մի՝ օձ • Ումա՝ ձի • Թիսգուռէ՝ խոյ • Եէսայի՝ կապիկ • Դօռի՝ աքաղաղ • Ին՝ շուն • Ի՝ խոզ : Սովին անուամբք եւ սովին կարգաւ թուեն զերկոտասան ժամս աւուր • եւ զերկոտասան մասունս, յորս բաժանեն զիւրաքանչիւր ժամ : Տիէ կոչեն զմիջոց Ժմկի որ 'ի մէջ ծագման արեգական եւ մտից ն̄ր • զոր բաժանեն 'ի վեց ժամս կմ̄ մասունս հաւասարս • նոյնպէս եւ զգիշերն, որ է 'ի մէջ մտից եւ ծագման արեգական՝ 'ի նոյնչափ ժամս բաժանեն : Վ̄ս ժամք ն̄ց յաւէտ եւ նուազ երկայն են ք̄ զմ̄ն եղանակաց տարւոյն • ք̄զի յայտ է թէ 'ի ձմերայնի ժամք գիշերոյ երկարագոյն են ք̄ զժամս տուընջեան • որ̄ եւ ը̄ հկ̄ն՝ յամարայնի ժամք տուընջեան երկարագոյն են ք̄ զգիշերոյ • զի տիւն ամարան համեմատի գիշերոյ ձմերան : Իսկ զամիս եւ զտարիս չափեն ը̄ ընթացից լուսնոյ • վ̄ս յիւրաքանչիւր երկու կմ̄ երիս ամս արեգական՝ մի տարի ն̄ց լինի երեքտասան ամիս • ուստի եւ նահանջ առնեն • իսկ զտարեգլուխն սկսանին 'ի ծննդեան լուսնի, որ անմիջապ̄ յառաջէ կմ̄ զհետ գայ հինգեր̄դ աւուր փետրվարի : Այլ առ համեմատութ̄ այլոց գիտութեց՝ առաւել ծաղկել̄ է առ Ճեաբօնացիս բժշկական գիտութն • զոր յաւէտ 'ի պատուի ունին ք̄ զարհեստ վիրահատութ̄ • վ̄ս թուէի թէ չիք անդ վիրահատ առանձինն • զի որք գրեն զպատմութ̄ Ճեաբօնացւոց ոչ յիշեն վիրահատս • այլ բժիշկք կատարեն եւ զգործ ն̄ց • որք եւ ուր եւ երթան՝ միշտ ունին ը̄ ինքեանս զծառայ, որ բարձել̄ տանի զարկղ • յորում բզ̄մ տեսակք խոտոց գտանին յայլ եւ այլ պարկս ամփոփել̄ • եւ 'ի խոտոց անտի, զոր համարեն բժշկարար իւրաքանչիւր ախտի, տան առժամայն ախտացելոյն : Կարի քաջ ճանաչեն զզարկ բազկերակի • մինչեւ ը̄ ոմանց ասելոյ՝ կէս ժամ կալել̄ մատամբ զզարկ բազկին, գտանեն զպատճառս եւ զարմատ ախտին : Չունին սովորութի բնաւ 'ի հիւանդաց հանել արիւն • եւ ոչ երբեք տան նոցա եփել կերակուր, համարելով թէ ստամոքսն տկարացեալ ոչ կարէ մարսել ինչ, որ չիցէ յեռում բնական որպիսութեան: Զոր ինչ խնդրէ հիւանդն տան նմա համարձակ. զի ասեն թէ բնութիւն իմաստուն ըզգուշաւոր է. վասնզի թէպէտ և այլայլեալ իցեն հիւթք նորա, ոչ բաղձայ վնասակարաց. բայց յայսմ վրիպին նոքա ընդդէմ յայտնի փորձոյ: Գլխաւոր փոյթ բժշկացն Ճէապոնացւոց է կանխել և զդէմ ունիլ հիւանդութեանց 'ի ձեռն ստէպ բաղանեաց:

Իսկ 'ի նկարս նման են Չինաց. քաջավարժք 'ի նկարել ծաղիկս, թռչունս, ծառս են. այլ ոչ մարդկային կերպարանս: Նոյնպէս ներհունք գործել յախճապակեայ անօթս. հովահարս և այլ պէսպէս ձեռակերտս: Բայց 'ի քանդակս, և յարուեստ ոսկեզօծելոյ. և 'ի գործ ոսկեթել կերպասուց գերազանցեն քան զՉինս:

Ը. Բարք և Սովորութիւնք Ճէապոնացւոց:

Ճէապոնացիք, ըստ գրելոյ պէչլինկայ՝ իբր 'ի բազում միջահասակ են և վայելչագեղ մարմնով. իսկ ակլահարբէ ասէ թէ սովորաբար կարճ են հասակաւ. և կազմուածք մարմնոյ նոցա անհամեմատ և տգեղ, թխագէմ. փքրակն, բայց խորանկեալ որպէս աչք Չինաց թաւայօն կարճունչ և փոքր ինչ տափակաքիթք, այլ ծայրն արտաքս ցցուեալ. Ծնօտքն հարթ և ողորկ և սակաւամօրուս, բայց և զսակաւն զայն սափրեն կամ արմատաքի 'ի բաց խլեն, զի մի բնաւ բուսցին. և սրունքն ոտից նոցա ստուար անհամեմատ այլոց մասանց մարմնոյ: Այլ ըստ նորին ակլահարբեայ՝ այս ստորագրութիւն մարմնոյ կամ դիմագրութիւն ոչ անկանի 'ի վերայ համօրէն բնակչաց Ճէապոնայ. վասնզի ոչ է ամ ազլս նոյն օրինակ տգեղ են. այն զի մեծամեծք նոցա՝ առհասարակ 'ի դէմս իւրեանց ցուցանեն զազնուական և զմեծահանձնական իմն խոժոռութիւն և ծանրութիւն բնական, որ վայելչութիւն իմն ընծայէ նոցա, և ծածկէ զբնական տգեղութիւն: Ուժեղ են և աշխատասէր, և ժրաջան և մեծագործ. յիշողութիւն նոցա սուր. երեւակայութիւն սթափ աշխոյժ և զօրաւոր. և ընտրողութիւն աջալուրջ և արագ: Սիրեն զուսումն գիտութեանց և զարուեստս, յորս սրտի մտօք պարապին: Սովորութիւնք նոցա և ախորժակք հակառակ են մերոց սովորութեանց. նախապատիւ ունին զսեաւ ատամունս քան զսպիտակս. միշտ ջերմ ըմպեն. և ոչ կարեն տանիլ մերոց ըմպելեաց և հատոց • զի սովորական ըմպելին նց՟ փխն՟ գինւոյ է տեսակ մի պատրաստական գարեջրոյ, զոր գործեն յորիզոյ ։ Սեաւ գոյնն առ նս՟ է նշանակ ուրախութե՟ • իսկ սպիտակն սգոյ և տրտմութե՟ ։

Հսրկ՟ ժողովուրդն կմ՟ քղքացիք, որք ըստ առաւել մասին վճռկան են, և արհեստաւոր, և զինուոր, 'ի կերակուրս և յըմպելիս, ոպ՟ և 'ի զարդս հանդերձից չափաւոր են և խորշին յաւելորդաց ։ Զգեստ նց՟ է պարեգօտ, որ հասանէ մինչև 'ի կէսն սրունից գրեթէ ըստ սովորութե՟ պարսից • նոյնպէս և Թեզանիք նց՟ կարճ, զի հազիւ հասանեն մինչև ցարմունկն • իսկ մնացեալ մասն բազկաց մերկ է • և ոմքն կրեն զէնս մաքրափայլս ։ Տունք նց՟, ոպ՟ և ապարանք մեծամեծաց, և մեծ մասն այլոց շինուածոց փայտակերտ • որմունք նց՟ տախտակաշէն պատեալ Թանձր փախաթիւ սակս սոսկալ գետնաշարժութե՟ • իսկ չափ բարձրութե՟ նց՟ ըստ օրինաց երկրին է մինչև ցվեց ձող • այ՟ 36 ոտնաչափ, և ոչ աւելի • բայց սակաւք գտանին, որք ունիցին և զնոյն չափ բարձրութե՟ • զի և արքունի պալատք միայարկ են • Թէպէտ սուղ ինչ բարձր 'ի գետնոյ ։ Չիք 'ի տունս նց՟ աւելորդ ինչ, այլ միայն հարկաւորք • որք առհսրկ՟ ջինջ են և մաքրափայլ • քզի Ճէապօնացիք մաքրասէր են յոյժ ։ Ոչ ունին վառարան 'ի սենեակս, այլ 'ի ձմերայնի Թոնիր ըստ սովորութե՟ արևելեայց ։ Եւ գրեթէ ամ՟ տուն ունի մասնաւոր շինուած քարաշէն • ուր ամրափակեալ պահեն զպատուականս յընչից իւրեանց յերեսաց հրդեհից յաճախելոց անդէն սակս փայտակերտ շինուածոց նոցա ։

Իսկ մեծամեծք և ազնուականք նց՟ ըստ հկռկն՟՝ յոյժ շքեղ են և փառաւոր • մինչև 'ի մեծագին զարդս ըզգեստուց և տանց, և 'ի բազմութե՟ պաշտօնէից զարքայականն բերեալ զշուք ։ Զգեստ նց՟ ազնուական և փառազարդ • պատմուճան ոզձիւաւոր մետաքսեայ ոսկեթել, լայն և երկայն Թեզանիւք, զոր Թողուն 'ի կախ • և 'ի վր՟ վերարկու մեծ նոյնպէս ոսկեթել ։ 'Ի պարանոցս կրեն վարշամակ նրբանիւթ • և 'ի մէջս գօտի մետաքսեայ ոսկեթել • և դաշնակ՝ այն է՝ խանջէր 'ի գօտիս • որոյ դաստակ 'ի բազումս և պատուական է ականակուռ և մարգարտայեռ ։ Հերք գլխոյ սափրեալք յառաջոյ կողմանէ գրեթէ մինչև ցկէս գլխոյն, և մնացեալ վարսք Թողեալ 'ի կախ զծածրակաւ • և սավառ՝ ոպ՟ և ձևով զգեստուց որոշին 'ի հսրկ՟ քղքացւոց • որք 'ի յետուստ սափրեն զհերս ։ Այս տա֊

բաղ յօրինուածոյ հերաց վայելուչ համարեալ յոյժ առ նոսա, գրեթէ միշտ բացադրելով շրջին, 'ի ցուցանել. իսկ յորժամ ելանեն 'ի ճանապարհ, դնեն գլխարկ ըստ սովորութեան եւրոպացւոց, այն է՝ չափով մեծ հիւսեալ բազմարուեստ ճարտարութեամբ 'ի յարդից կամ 'ի նրբաթել եղեգանց. զոր լայն ժապաւինաւ կապեն ընդ կզակաւ, զի մի 'ի բաց տարցին 'ի հողմոց: Տիկնայք նոցա առաւել գեղապանծ զգենուն. զվարս զնոյն օրինակաւ յօրինեալ ըստ աստիճանի մեծութեան իւրեանց: Հասարակ կանանց ամենեցուն գէսք ժողովեալ են 'ի գագաթան գլխոյ, եւ անդ կապեալ ընդ ասեղն մեծ, որ է արծաթի կամ ոսկի: Իսկ տիկնայք մեծուհիք յակոյս զթիկամբք արկեալ զգէսս եւ 'ի փունջս փունջս կապեալ. յականջս ունին ասեղն մեծ. զորմէ կախեալ կայ ակն պատուական կամ մարգարիտ. եւ առ իւրաքանչիւր ունկամբ կարգ մի մարգարտոյ: Բազում ըզգեստս զգենուն 'ի վերայ միմեանց, երբեմն մինչեւ ցհարիւր. եւ 'ի վերայ ամենայն առնուն վերարկու լայն եւ երկայն, որոյ ստորոտք իբրեւ չորս ոտնաչափ երկայնութեամբ քարշին զկնի 'ի գնալս. զի 'ի թուոց զգեստուց ճանաչի աստիճան մեծութեան նոցա. բայց այն բազմութիւն զգեստուց ոչինչ ծանրութիւն բերեն նոցա, առ կարի իմն նրբութեան եւ թեթեւութեան: Ունին եւ գօտի լայն ասղնեգործ ծաղկօք յօրինեալ գեղեցիկ եւ մեծագին: Յորժամ ելանեն 'ի հրապարակ, միշտ ունին ընդ ինքեանս զբազմութիւն օրիորդաց 'ի զարդ գեղաշուք պճնելոց, եւ աղախնայս բազումս, յորոց ոմանք տանին հովահարս, այն է՝ յելփազէ. իսկ այլք հովանոցս մեծագինս ոսկեզարդս, որք բերեն զնմանութիւն ամպհովանեաց: Չէ օրէն նոցա երթալ յայցելութիւն ումեք, եթէ ոչ միանգամ 'ի տարւոջ. եւ յորժամ ընդունին զոք՝ եկեալ յայցելութիւն իւրեանց, արկանեն քօղ զգլխով, ըստ վաղնջական սովորութեան երկրին, որպէս եւ կանայք քրիստոնեայք, որք էին անդ յառաջագոյն՝ ոչ միայն մեծամեծք, այլ եւ ռամկականք յորժամ երթային յեկեղեցի, ունէին քօղ զերեսօք երկայն մինչեւ ցոտս. յորմէ մարթ է 'ի միտ առնուլ զգեղեցիկ պարկեշտութիւն կանանց քրիստոնէից Չենաստանացւոց: Ապարանք նոցա թէպէտ փայտակերտք, ուստի եւ արտաքուստ անշուք. այլ ընդարձակ են, համեմատ եւ վայելչակերտ, եւ 'ի ներքս փառազարդք. որք եւ յերկու մասունս բաժանեալ են. մի մասն է վասն կանանց որք ոչ ումեք երեւին. իսկ երկրորդ մասն է վասն արանց, որ միշտ բաց է ամենեցուն: Ունին եւ պարտէզս գեղեցիկս, որք ընդ մա-

սին

ցին սալայատակ են գունագոյն բոլորաձև քարամբք և ըստ մասին խճիւ պատեալ. բայց առհասարակ ջինջ և մաքուր: 'Ի պարտէզս նց՟ ը՟ ամ՟ տեղիս տեսանի արուեստական կամաւոր խառնափնդորութ՟ իմն մեծապէս զուարճացուցիչ աչաց. զի փոքրիկ քարաժայռք արհեստաշէնք է որս հոսին սահանք ջուրց. փոքրիկ անտառք ձեռատունկք. վտակք կարկաջահոսք. ձկնարանք լի ձկամբք. ծառք պտղաբերք. և պէսպէս բոյսք նորատեսակք:

Ճաշք և խնջոյք նց՟ մեծածախ են. կերակուրք համադամք. և սկահակք, որք մատուցանին 'ի սեղան պճնազարդեալք. ոտ՟ և ճիրանք և կտուց թռչնոց, որք մատչին 'ի սեղան, են ոսկեզօծեալ: 'Ի խնջոյս սովորութ՟ ունին ածել և նուագածուս. զի 'ի ճաշակել բերանոյ զհամադամս, ը՟ նմին և աչք և ականջք զմայլեսցին: Այլ առաւել զարմանալի այն է, զի 'ի մէջ այնչափ բազմութ՟ ծառայից և սպասաւորաց, որք են 'ի խոհանոցի. և որք 'ի սպասաւորութ՟ բազմականաց՝ ոչ լսի բարբառ բնաւ:

Իսկ ըստ բարոյական մասին առաջին սկիզբն և արմատ առաքինութեց և մոլութեց համարէին Ճեպօնացւոց. և կանոն ամ՟ ախորժակաց և գործոց նց՟՝ է փառքն. ք՟զի անհնարին փառասէր են և պատուամոլ: Ամենեքեան 'ի մեծամեծաց մինչև ցյետին բեռնակիրն նախանձախնդիր են յոյժ պատուոյ անձանց. գծուծ ամ՟էին թէ լուիցէ բան, յորում սուտերք ինչ անգոսնութեց երևեսցին՝ ոչ միայն 'ի հեռ՟րկցէ, այլև յիշխանաւորէ, խնդրէ հատուցումն պատուոյ իւրոյ հրապարակաւ: Վ՟յ ամ՟քն զգոյշ են 'ի բանս և յամ՟ կենցաղակցութս. զի պատիւն և յարգութիւն փոխադարձ է անդ յամենին յիշխանաւորս և 'ի սոսկականս: Անկեղծ են և ճշմարտախօս. և խորշին մեծապէս 'ի նենգութե և յերկդիմի բանից. և առաւել 'ի ստութէ. զի ամ՟ թեթև ստութ՟ ոչ մնայ անպատիժ առ նս՟: Եւ ը՟ հկռ՟ն՝ անարգ են առ նս՟ և ատելի մարդելոյզ շողոմարարք. ասի թէ ամ՟ մեծամեծք և պճնուականք ունին մի մի ազդարարս 'ի ծանուցանել իւրեանց անկեղծութ՟ զամ՟ վրիպակս և զպակասութիս, զոր գործեն 'ի բանս և 'ի գործս: Վեհանձն են և մեծախորհուրդ. խրոխտ և յանդուգն, զոր և 'ի դէմս և յամ՟ շարժմունս ցուցանեն. և աներկիւղ են յոյժ. զի և մահն, որ մեծ է ք՟ զամ՟ չարս աստի կենաց, յաչս նց՟ թուի թէ համարեալ իցէ իբր տղայական խաղալիկ. զոր սակս դուզնաքեայ փառաց.

կմ 'ի պաշտպանութ պատուոյ, և կմ վն այլոց որ և լիցէ չնչին նոցա վեհանձնութ իմն կմ լաւ ևս ասացից՝ դաղմանական մոլեգնութ անձին բերեն:

Եւ այս յայտ է 'ի բզմ դիպուածոց, զորս յիշատակեն մատենագիրք. յորոց սակի է և այն, զոր պատմէ Կեմփեր: Արք երկու ազնուականք պատահեն միմեանց յարքունի ապարանս 'ի վր սանդխոց յելանել միոյն և յիջանել միւսոյն, սուրք նց զոր ունէին ածեն ը մէջ, ըհարան միմեանց. ը որ նա՝ որ իջանէր զայրացաւ, անարգանս համարելով զայն անձին. իսկ միւսն կամեցեալ անբասիր առնել զանձն, դիպուած է ասէ. բայց և այնպէս չեղև ինչ վնաս, զի երկոքին սուսերքս չեն մի քն զմի առաւել: Եւ ասէ առաջինն. ոչ այդպէս, այլ ահա ես ցուցից քեզ թէ գոյ զինչ նուէն 'ի նմ. և հանեալ զսուր՝ իւրին էհերձ զորովայն իւր. և անկաւ անդ 'ի վերայ սանդխոց: Իսկ երկրորդն աճապարեալ ընթացաւ 'ի վեր, և եդեալ 'ի վր սեղանոյ զսկի տեղն, զոր ունէր 'ի ձեռին, դարձաւ վաղվաղակի. և այն ինչ շունչն 'ի բերան էր առաջնոյն, ասէ ցնա՝ ես յառաջէի արդեօք քն զքեզ, եթէ չէի պարապեալ 'ի սպասաւորութ արքային. սակայն փութացայց վաղվաղակի գալ զկնի քո. զայս ասաց, և անդէն մխեաց զսուրն 'ի սիրտ իւր. և անկաւ մերձ առաջնոյն. ուր և երկոքին չարամահ սատակեցան: Ահա այսպէս են ամ ընթացք Ճնաբոնացւոց՝ չափազանցք. վն թէպէտ և երևեցին առաքինականք, սակայն չեն ճշմարիտ առաքինութ կմ արիութ, այլ մոլեգնութ և կատաղութ. զի առաքինութին միջասահման է 'ի մէջ աւելորդին և նուազին:

Արհամարհօղ են շահաստացութ կմ լաւ ևս ասացից՝ չեն շահախնդիր և ընչաքաղց ը օրինակի չինաց. վն տուր և առիկ վաճառաշահութին իբր չնչին արուեստ համարեալ է առ նս. Նմին իրի հսրկ ժողովուրդն դրեթէ առհասարակ աղքատ է. բայց միանգամայն և անկարօտ. և խորշի յաւելորդաց. զի ոպ վերագոյնդ ասացաք՝ չեք տեսանել 'ի տուեալս նց աւելորդ ինչ: Իսկ մեծութ և գանձ երկրին բովանդակ հաւաքեալ կայ առ մեծամեծս և իշխանս, որք քաջ գիտեն վարել նովաւ. զի ասի թէ չեք ուրեք տեսանել այնչափ շքեղութի, և փառք, և զարդուց և պաշտօնէից յաճախութ, ոպ առ Ճնաբոնացիս: Այլ որ առաւել զարմացման է արժանի, ժողովուրդն տեսեալ զայսչափ ճոխութ նց և շքեղ, ոչ ցանկան բնաւ նց և ոչ նախանձին: Եւ եթէ դէպ լիցի ումեք 'ի մեծամեծաց անտի անանկանալ, ոչ ընկճի յանձն իւր, և ոչ նուաստանայ յաչս այլոց · այլ կայ մնայ յիւրում պատուի, որպէս յառաջն · և մեծահանձնութեամբ իմն անկարօտ ցուցանէ զինքն յամենայնի · ոչ ումեք շնթէ, ոչ զոք աղերսէ, և ոչ ցուցանէ ումենևին զցանկութիւն ինչ գտանելոյ անդրէն յառաջին մեծութեան իւր :

Հաստատուն են և հաւատարիմ 'ի բարեկամութեան, զոր ոչինչ ընդհատ համարին 'ի կապոյ ամուսնութեան · վասնզի բազում անգամ անցանեն զչափն, զոր սահմանեն օրէնք բարեկամութեան : Ուր ուրեք դէպ լինի պաշտպանել կամ ծառայել բարեկամի, անդ ոչ խորհին վտանգ ընչից և կենաց : Ոչինչ տանջանք դժնդակ կարող է հանել 'ի բերանոյ յանցաւորի զանուն գործակցի իւրոյ 'ի չարիս : Նոյնպէս՝ յորժամ ոք թէպէտ և անծանօթ՝ դիմէ 'ի պաշտպանութիւն ուրուք, նա այնուհետև դնէ վասն նորա ոչ միայն զինչս, այլ և թէ հարկ լիցի՝ զկեանս ևս և զկին և զորդիս : Եւ ահա յայսմ՝ կամեցեալ ողորմիլ և բարերարել օտարի, յընտանիս իւրեանց անիրաւեն : Սիրեն զճշմարտութիւն և զարդարութիւն · վասնզի կամակար հնազանդին օրինաց և վճռոյ, որ դատապարտէ զյանցանս · զոր և ինքնին խոստովան լինին : Հայրն համարձակ 'ի մահ դատապարտէ զորդի առանց ցուցանելոյ բնաւ զնշան բնական ողջաւից և կարեկցութեան · Նոյնպէս և այրն զկին · տէրն զծառայն · Քանզի ըստ օրինաց Ճեաբօնացւոց՝ սոքա պարտապան են տալ համար վասն յանցանաց որդւոց, կանանց և ծառայից իւրեանց · յայսմ սակս ունին մահու չափ իշխանութիւն 'ի վերայ նոցա :

Ծանր են և սակաւախօս, բայց մեծաբան և անպարծ : Կասկածոտ և ոխակալ և քինախնդիր յոյժ · զի ոչ երբեք գիտեն մոռանալ զվնաս կրեալ յումեքէ · այլ միշտ հետամուտ են գտանել ժամ դիպող 'ի հանել զվրէժ · բայց ջանան ծածուկ իրք պատրուակել զոխս, զոր կրեն 'ի սրտի · հաշտ և անդորր ձևանան առաջի թշնամւոյն · քաղցրութեամբ խօսին ընդ նմա · և եթէ պէտք ինչ իցեն ծառայութիւն ևս առնեն նոցա · բայց միանգամայն և հնարս մեքենայեն վրիժուց հատուցման · վասնզի ասէ Կեմփեր, ոչ երբեք այնպէս երկնչելի է 'ի Ճեաբօնացւոց, որպէս յորժամ հաշտ անդորր և խաղաղ երևեցուցանեն զանձինս : Եւ եթէ ոչ յաջողեսցի նոցա ինքնին առնուլ զվրէժ, թողուն զայն կտակաւ որդւոց իւրեանց իբր պարտս 'ի հատուցանել : Զի բնութեամբ գազանաբարոյ են անգութ և անողորմ ոչ միայն առ օտարս, այլ և առ ընտանիս իւրեանց ·

եանց . խիստ և տմարդի առ օտարս և առ անաւագս . և արհամարհօղ օտար ազգաց . զի սակս ներտարրացեալ ինքնահաւան ամբարտաւանութե̃ , զամ̃ ազինս ծի առ անարգս նուաստս և արհամարհս ունին : Այս այսպիսի են բարք և սովորութիւնք Ճեաբօնացւոց , ը̅ գրելոյ կեմփերայ . որ ը̅ ամս երկուս եկաց 'ի Ճեաբօն . և երկիցս ը̅ դեսպանին հոլանտացւոց գնաց 'ի յեդով արքայանիստ ք̃ղք Ճեաբօնայ՝ առ թ̃գր ն̃ց :

Թ . Լեզու Ճեաբօնացւոց :

Կեմփեր հաստատէ , թէ լեզու Ճեաբօնացւոց է մայր լեզու . բայց այլք պնդեն թէ եղանէ 'ի լեզուէն չինաց . իբր զի կարի մօտաւոր է այնմ . ոճ̃ և տառք ոց̃ և տարազ գրելոյ ամենևին նման է ն̃ց . զի և առ սոսա տառքն են նշանագիրք իրաց , զոր 'նշանակեն . վ̃յ անթիւ են տառք ն̃ց ը̅ անհամար բազմութե̃ իրաց : 'Ի գրելն՝ վերուստ 'ի վայր իջանեն ը̅ սովորութե̃ չինաց . դասաւորելով զտառսն ոչ առ միմեամբ , այլ 'ի ներքոյ միմեանց . այս ինչ է միայն խտիր ը̅ գիրս չինաց և Ճեաբօնացւոց , զի Ճեաբօնացիք ունին մանիկս , որք երբեմն նախադասին և երբեմն յետադասին բառից . զոր չունին չինացիք : Ըստ ասելոյ կեմփերայ չունին զհնչումն Հ տառիս . այլ փոխանակ ն̃ր Ֆ , ասեն . և ամ̃ բառք ն̃ց համառօտ են . կ̃մ միավանկ կ̃մ երկավանկ , և սակաւք դտանին եռավանկք կ̃մ քառավանկք : Ասի թէ լեզու ն̃ց մաքուր է , և յօդաւոր , և դիւրալուր օտարաց . այլև ճոխ յոյժ 'ի բառս մինչ վարել զայնուիկ համեմատութ̃ ոչ միայն հասակի և իշխանութե̃ խօսողաց և ունկնդրաց , այլև առն և կնոջ : Նոյնպ̃ քաջայարմար է տաղաչափութե̃ց և բանաստեղծութե̃ց . վ̃յ ասի թէ տաղաչափութիւնք ն̃ց ունին զմանաւոր իմն վայելչութի̃ և քաղցրութի̃ . զոր առաւելապ̃ 'ի թաղերգութիւնս վարեն . ք̃զի և Ճեաբօնացիք ունին սովորութի̃ թաղերգութե̃ս առնելոյ :

Բաց 'ի հ̃սրկ լեզուէ անտի , որով վարին ամ̃ն , ունին և այլ լեզու հին իբր գրաբառ . որ սրբազան համարեալ է առ ն̃ս . զի ամ̃ աղօթք ն̃ց , և նախնի օրէնք՝ ամ̃ն այնք , որք առ դեն ն̃ց հային , 'ի նոյն լեզու գրեալ են . զոր ոչ ոք 'ի ն̃ցնէ իմանայ այժմ , և ոչ իսկ քուրմք . որք թարգմանս գիրս իւրեանց առեն զանձինս , և սուտ պարծին քաջ իմանալ զայն բարբառ վաղնջական :

Ժ .

Ժ. Ազնոյ Ճենաբօնացւոց ։

Առ սկզբնաւորութեան բնակչաց կղզեացն Ճէնաբօնայ՝ պէսպէս առասպելս աւանդեն. զի ըստ Տէլահարբեայ՝ արևելեայք պատմեն թէ սկիզբն նց՟ եղև 'ի չինաց՝ զայս օրինակ ։ Մի ոմն յինքնակալաց անտի չինաց ցանկացե՟լ գտանել դեղ անմահութեան կ՟մ գէթ երկարելոյ զմարդկային կեանս, կացոյց արս իմաստունս և ներհունս 'ի բժշկութեան արհեստի 'ի խնդիր լինել այնմ անգիւտ դեղոյ ։ Յայնժամ մի ոմն 'ի գլխաւոր բժշկաց նր՟, որ տաղտկացե՟լ էր յանողորմ բռնակալութենէ նր՟, սոյին պտ՟ճառաւ խորհեցաւ թափել զանձն 'ի լծոյ ծառայութեան նր՟. վ՟սյ առաց արքային, թէ ինքն քաջ տեղեկացե՟լ ծանեաւ, եթէ դեղն զոր խնդրէր նա, գտանի 'ի մերձակայ կղզիս. որ և է բոյս ինչ այնչափ քնքուշ և փափուկ, զի առ 'ի պահել զա՟մ զօրութ՟ն նր՟ և զազդուութ՟ն, հարկ է անմեղ և փափկաձեռն մանկանց քաղել զայն ։ Յայն սակս հրամանաւ նորին ինքնակալի ժողովեաց նա 300 տղայս և նոյնչափ աղջկունս, և էանց 'ի Նիփոն կղզի. որք մեծացե՟լ անդէն՝ լցին բնակչօք զկղզին ։ Զայս պատմութ՟ն կ՟մ առասպել, ը՟դունին և Ճենաբօնացիք. և ցուցանեն մինչև ցայսօր զնւ՟հնգիստն, ուր հասին ն՟ք զառաջինն. և զտեղի բնակութ՟ն նց՟. այլև զմնացուածս ինչ աւերակաց տաճարի միոյ կառուցելոյ 'ի պատիւ և յանուն գլխաւորի նոցա. սակս մուծանելոյ նր՟ 'ի Ճենաբօն զգիտութ՟ս, զարհեստս և զք՟ղքականութ՟ն չինաց ։ Բայց ոչ ը՟դունին թէ սկզբնաւորութ՟ն իւրեանց եղև 'ի նց՟է. ք՟զի 'ի ձեռն ժամագրութ՟ ինքնակալաց իւրեանց՝ ցուցանեն, թէ ինքնակալն չինաց, առ որով պատմի լեալ այն դիպուած, թ՟գւորեաց 453 ամօք զկնի Սինմու կ՟մ Լինմու առաջնր՟դ ինքնակալին Ճենաբօնայ. վ՟սյ և բ՟զմ դարուք յ՟ռջ կղզիք իւրեանց լի էին բնակչօք ։ Քանզի և ըս՟ նմ՟ օրինակի չինաց պնդեն լինել ինքեանց նախնագոյն ք՟ զայլ ա՟մ ազգս աշխ՟ի. ուստի և զժամագրութ՟ն իւրեանց ձգեն յ՟ռջ ք՟ հազարաւոր դարս, մինչև յառաջել և ք՟ զարարչութ՟ն աշխ՟ի ։

Այլ որ առաւել հաւաստի երևի 'ի պատմութիս նց՟, է այն, զոր ասեն թէ մի ոմն Սիննու կ՟մ Սինմու անուն այր մեծազօր հիմնեաց զինքնակալութ՟ն նց՟ 660 ամօք յառաջ ք՟ զգալուստ փրկչին մերոյ յ՟ի. և զի անյայտ է տոհմն նր՟, նմին իսկ Ճենաբօնացիք ը՟դ առասպելաբանէր բարոյից իւրեանց՝ ասեն մ՟ն ն՟ր ծնեալ ՚ի կիսա՟ծոց կմ՟ դից, որք ը՟ նախընթաց դարս յոլովս կառավարեցին զՃ՟ իւրեանց: Սոյն այս սեննոս ո՟ղ և յաջորդք ն՟ր կոչէին տայիր. այ՟ քհնյապետ. ք՟ղի ը՟ թագաւորական իշխանութե՟ ունէին և զքհնյապետական իշխանութի՟ որով ը՟արձակ էր յոյժ իշխանութի՟ ն՟ց: Այլ զօրքն բովանդակ էին ՚ի ձեռս միոյ գլխաւոր սպարապետի, զոր Գուպօ կոչէին. և ք՟ղի մեծ էր յոյժ իշխանութի՟ ն՟ր. նմին իրի կարի զգուշաւորք էին տայիրք ՚ի կացուցանել զոք յայն պաշտօն. և յառաւել ապահովութի՟ սովորաբար տային զայն երէց որդւոյ իւրեանց, յորժմ՟ բղ՟մ որդիք էին ն՟ց. զի զերէց որդի պահէին ՚ի յաջորդութի՟ արքայական աթոռոյ: Այլ մի ոմն ՚ի մեծ սպարապետաց անտի Ձերոզիմոս անուն՝ ՚ի յառնել խռովութե՟ իրիք և քաղաքական ստ՟ղի ՚ի ժողովրդեան, ժամ դիպօղ գտեալ, թօթափեաց զլուծ տայիրին. և յինքն գրաւեալ զ՟տրութի՟ գաւառաց ոմանց, արկ հիմն նոր ինքնակալութե՟. և կոչեցաւ դուպօսամա. այ՟ ինքնակալ ՟տր կմ՟ կայսր:

Իսկ ՚ի ԺԶ՟ դարուն զկնի ծննդեան փրկչին նս՟ ինքն տայիրն առաւել նախանձայոյզ լեալ հոգևորական իշխանութե՟ իւրում, ք՟ ք՟ղքականին, որ ծանր էր և բազմավիշտ մ՟նւնդ ՚ի ստ՟ձեռս նոր ինքնակալին, ըդ ք՟ղքական տնտեսութի՟ Ճ՟ին բաժանեաց ՚ի բղ՟մ կուսակալութիս. կացուցեալ ն՟ց կուսակալս զմեծամեծս ՟տրութե՟ իւրոյ. յինքն պահելով զգերագոյն իշխանութի՟ ՚ի վ՟ր ամ՟ցն: Յայսմանէ ծագեցին մեծամեծ երկպառակութիք և ներքին պատերազմունք և ապստամբութիք ը՟դէմ տայիրին. զոր առ սակաւ սակաւ գլխովին մերկացուցին ՚ի ք՟ղքական իշխանութե՟. որով միապետական ՟տրութի՟ Ճեաբօնայ փոխեցաւ ՚ի բազմապետութի՟. զի իւրաքանչիւր կուսակալ եղև ինքնիշխան ՟տր յիւրում վ՟ճակի:

Յայսմ վիճակի էր Ճեաբօն յորժամ զառաջինն հասին անդր փորթուգալք. ը՟ որս և ս՟ն Ֆրանչիսկոս Քսաւերեան առաջին առաքեալ Ճեաբօնացւոց: Այլ ՚ի ԺԷ՟ դարուն եայկօսամա՝ մի ՚ի նախասացել՟ դուպօսամա կոչեցեալ սպարապետաց բռնացեալ ՚ի վ՟ր այլոց կուսակալաց, յինքն կալաւ զք՟ղքական ՟տրութի՟ համօրէն Ճեաբօնայ, որով բազմապետութիւն վերստին փոխեցաւ ՚ի միապետութի՟. և ք՟ղքական և հոգևորական իշխանութիք բաժանեցան յերկու ինքնակալս. տայիրին թողաւ լոկ հոգևորական իշխանութի՟. ը՟

նմին տուեալ նմ. և Մէաքօ վաղնջական աթոռանիստ ք̃ղք նր̃ հանդերձ շրջակայ վիճակաւ. իսկ Գուպօսամա հաստատեաց զաթոռ իւր 'ի Յեդով քաղաք : Զայսու ժմկաւ սկսան դժնդակ հալածմունք ը̃դդէմ նորածաղիկ քրիստոնէից Ճէպօնայ. որ և ձգեցաւ դրեթէ ը̃ ամս հարիւր. մինչև իսպառ սպառեալ բարձան 'ի Ճէպօնայ հետք քրիստոնէութե̃, ո̃ց ստորև 'ի ճառս կրօնի ն̃ց ունիմք ասել :

Այլ յայսմ վայրի 'ի դէպ վարկանիմ համառօտիւ իմն ստորագրել զհանգամանս տայիրին : Արդ՝ սա պարծի զանձնէ սերեալ յա̃ծոց կմ̃ 'ի դից. վ̃յ և գեր ք̃ զմարդ համարեալ է 'ի ժողովրդենէ. և ա̃ծավայել պատուով պատուեալ 'ի ն̃ցնէ : Անարժան համարի անձին, և պղծութե̃ գերագոյն սրբութե̃ իւրոյ դնէթ ծագիւ ոտին հպիլ 'ի գետին կմ̃ բացօթեայ շրջել ը̃ արեգակամբ. այլ յորժամ երթայ ուրեք, բարձի 'ի գահաւորակ մեծաշուք, և սպասաւորք նորա յուս բարձեալ տանին զնա : Ոչ երբեք ինքնին թոյլ տայ փոքրել զհերս և զմօրուս. և ոչ զեղնգունս հատանել. ք̃զի այնչափ 'ի պատուի ունի զմարմին իւր, մինչ նաև զայն աւելորդս իբր սրբազան նշխարս՝ չհամարի արժան 'ի բաց հատանել : Բայց քանզի նեղի բ̃զմ անգամ յայնցանէ, նմին իրի սովորութե̃ եղև զի յորժամ ինքն ննջէ, սպասաւորք նր̃ հատանեն զեղնգունս. և փոքրեն զհերս և զմօրուս. վ̃ն զի զոր ինչ առնեն նմ̃ յայնժամ, այն ն̃մ ակամայ համարեալ է և գողունի. թէպէտ նա բ̃զմ անգամ արթուն է, այլ կեղծէ 'ի քուն լինել :

Յա̃մ օր 'ի նոր անօթս մատուցանեն նմ̃ կերակուր. և զկնի ճաշոյն առ ժամայն խորտակեն զա̃մ անօթս, որք միանգամ մատուցան 'ի սեղան նր̃. որք և յայն սակս են 'ի հո̃րկ կաւոյ՝ վ̃յ և դիւրագին այլ մաքուր. ապա թէ ոչ՝ անտանելի լինէին ծախքն. և ոչ ոք յՃապանաց իշխէ բնաւ ուտել կմ̃ ըմպել յանօթոց անտի. զի ը̃ մտօք աւելորդապաշտութե̃ իւրեանց՝ հաստատեալ ունին 'ի միտս, թէ նոյնժամայն ելունդք վնասակարք ելանեն 'ի բերան և 'ի կոկորդս : Նոյնպէս և զհանդերձս, որք են երկու մետաքսեայ պարեգօտք մի կարմիր, և միւս ևս սեաւ. և վերարկու մետաքսեայ նրբաթել. և գլխարկ ըստ սովորութե̃ եւրոպացւոց՝ յա̃մ օր փոխէ. և միշտ նորս առնու. զոր ը̃ նմին օրինակի՝ ոչ ոք առանց յայտնի հրամանի կմ̃ թոյլտուութե̃ նր̃ համարձակի արկանել զանձամբ, երկուցեալ 'ի վաղահաս դիցն պատուհասէ · ջղի ծամ ինչ, որ միանգամ մերձենայ 'ի մարմին նր՟ , որ և նուիրեալ համարեալ է:

Յառաջին ժմկս սովորութիւն ունէր յոյժ առաւօտու իբրու ժամս չորս բազմիլ 'ի գահոյս իւր թագ 'ի գլուխ անշարժ ամենևին : Զայն անշարժութի՟ ունէին Ճեաբօնացիք իբր գուշակ անդորրութե՟ և խաղաղութե՟ տէրութե՟ իւրեանց · իսկ եթէ ը՟ բերման ինչ շարժէր, կմ՟ դարձուցանէր զաչս 'ի կողմն գ՟ւռի միոյ, ահ պատէր զա՟մնին՝ սուր, և սով, և հրդեհ, և սասանութիւն երկրի և այլ մեծ ինչ պատուհաս կարծելով գուշակել: Այլ յետոյ հնարիւք իմն զերծուցին տայիրք զանձինս 'ի դժուարընտել սովորութե՟ անտի · զի այժմ փոխ ինքեանց՝ դնեն 'ի վ՟ր գահոյից լոկ զթագն · զի հաւանեցուցին ժողովրդեան, թէ անշարժութի՟ թագին՝ որ առաւել ապահով է՝ անդ 'ի գահոյս զնոյն ներգործէ, զոր ինչ անշարժութի՟ տայիրին : Այլ այս տայիր ը՟ սովորութե՟ նախորդաց իւրոց առնու երկոտասան կանայս · թող զհարճս · և որդիք ծնեալք 'ի սոցանէ՝ յաջորդեն զաթոռ նր՟ · զի 'ի մեռանիլ իւրում՝ իշխանք արքունեաց նր՟, որք առհասարակ եկեղեցական են, վղվ՟ղկի նստուցանեն զնա, որում անկ է իրաւունք յաջորդութե՟ : Իսկ եթէ լիցեն նր՟ բզ՟մ որդիք յայլևայլ կանանց, որք ունիցին իրաւունս յաջորդութե՟ , յայնժամ, զի մի խռովութի՟ ինչ ծագեսցի 'ի պտ՟ճառս նց՟ · որպ՟ ծագեցաւ երբեմն, որ և վրդովեաց զբոլոր տէրութիւն, զա՟մն նստուցանեն միմեանց զկնի երկար կմ՟ համառօտ ը՟ յաւէտ և նուազ իրաւանց, զոր ունի իւրաքանչիւրն: Եւ երբեմն նա ինքն տայիրն առ կենդանութե՟ իւրով սահմանէ զկարգ և զչափ ժմկի թգ՟ւորելոյ որդւոց իւրոց, 'ի հաճեցուցանել զմտս ամ՟ցն : Բայց այս փոփոխութիւնք ամենևին ծածուկ են 'ի ժողովրդենէ, մինչև կարգ յաջորդութե՟ հասցէ առ այն, որում անկ է հաստատութե՟ տիրել:

Սովորութե՟ է 'ի Ճեաբօն, զի ինքնակալն 'ի հինգ կմ՟ 'ի վեց ամս միանգամ բազմամբոխ արամբք և մեծաշուք հանդիսիւ երթայ յայցելութիւն տայիրին 'ի յեդովայ մինչև 'ի Մէաքօ իբր 125 մղոն ճնպ՟ · և ընծայէ նմ՟ զհպատակութի՟ և զհնազանդութիւն, տայ և պարգևս մեծամեծս · նոյնպէս և տայիրն փոխարէն ընծայէ նմ՟ պարգևս արքայավայելս · այլև զանազան վաւերական անուանս պատուոյ : Այլ այս հպատակութի՟ է լոկ արտաքին և առ երևոյթ ինչ յարգութե՟ · զի իրօք ոչինչ իշխանութի՟ ունի տայիրն 'ի վ՟ր իննակալին . և ոչ 'ի վ̅ր այլ ք̅ղ̅քական իրաց . զի այժմ յետ տիրելոյ աշխարհական ինքնակալի, բովանդակ իշխանութ̅ն տայիրին ամփոփեալ է 'ի հոգևորս եւեթ . ք̅ք դասակարգել զարս երևելիս 'ի կարգս դից , կմ̅ ա̅ծացուցանել . կացուցանել մեհենական պաշտօնեայս 'ի զարմէ տայիրից , որք բազմացեալ են յոյժ . որք և ունին սեփական զգեստ , որով զնզ̅նին յաշխարհականաց . այլ և շնորհել անուանս պատուոյ , դասել զհոգևոր դասս և̅ն ։

ԺԱ . Կառավարութիւն Ճեաբօնայ ։

Քաղաքական կառավարութիւն Ճեաբօնայ է միապետական . ինքնակալ նո̅ր է ամենևին անկախ և ինքնիշխան . զոր՝ ո̅պ̅ ասացաք , կոչեն Գուպօ սամա . և ա̅ծավայել պատուով պաշտեն զնա ։ Յորժամ կուսակալք և այլ մեծամեծ իշխանք երկրին յանդիման լինին նմ̅ , յափիթերս մտանեն 'ի սրահ մի մեծ . ուր նա ինքն ինքնակալն բազմեալ նստի 'ի մթին վերնատան յետ կոյս վանդակապատ պատուհանի . և ոչ երբէք ինքնին անմիջապէ̅ս խօսի ինչ ը̅ նո̅ , այլ միջնորդութ̅ գլխաւոր իշխանի միոյ , զոր Մագինպինկօ կոչեն . որ է իբրև երկ̅դ արքայի . զի անվայել համարին , թէ բարբառ ինքնակալին հասցէ անմիջապէս 'ի լսելիս ստրկաց իւրոց . զոր իբր պատգամ ա̅ծային ունին ։ Նոյնպէ̅ս յորժամ 'ի բաց ելանեն յերեսաց արքայի՝ քառոտանի , և զդէմս խոնարհեալ ունելով մինչ 'ի գետին՝ յետս յետս գնան զօրէն խեցգետնոյ՝ մինչև 'ի դուռն մեծի սրահին ։

Այն օրինակ յանդիման լինին նմ̅ և դեսպանք հօլանտացւոց . ը̅ միում 'ի նց̅է դասու և կեմփեր . որ մանրամասն ստորագրէ զճ̅ն̅պ̅հորդութ̅ իւրեանց , զոր 'ի Տեսիմայ կղզւոյն արարին մինչև 'ի յեդով արքայանիստ ք̅ղ̅ք . և զհանդէսն , որով մուծին զնո̅ առաջի ինքնակալին . և զողջայական հարցմունս , զոր արարին նց̅ , զկնի աւարտելոյ բանից դեսպանութ̅ . և զանարգանս , զոր ցուցին ան̅դ նց̅ ։ Քանզի պատմէ նա ինքն կեմփեր , թէ յետ աւարտելոյ բանից դեսպանութ̅ն . կամեցեալ կատարել զկանացի բաղձանս կանանց և օրիորդաց ինքնակալին , որք ը̅ նմին ինքնակալի եկին 'ի զննին հօլանտացւոց , բազմեալ յետ կոյս վանդակաց . 'ի բաց առին զսեաւ վերարկուս 'ի թիկանց հօլանտացւոց , զոր ունէին արկեալ զանձամբք ը̅ սովորութ̅ Ճեաբօնացւոց . ո̅պ̅ զի երևեացն ձև զգեստուց նոցա · և հրամայեցին նոցա յոտն կալ , ըն յաջն 'ի գուճս եկին · ճեմել զկայ առնուլ · ողջունել զմիմեանս ըստ սովորութեան եւրոպացւոց · ըն տանուլ · ձևանալ զօրէն արբեցելոց · խօսել 'ի լեզու ճեաբօնացւոց խժդժաբար թոթովելով · ընթեռնուլ 'ի բարբառ հոլանտացւոց · երգել , կաքաւել ևն · ես ասէ կեմփեր 'ի կաքաւել խմուն , երգել ցուցս սիրոյ 'ի բարբառ գերմանացւոց · և այլ սոցին նման խեղկատակութիւս հրամայեցին նոցա առնել 'ի զբօսանս և 'ի զուարճութիւն կանանց և օրիորդաց ինքնակալին , և այլոց իշխանաց , որք կային անդ · միայն գեսպան նոցա զերծ գտաւ յայսպիսի անարգալից միմոսական խենեշութենէ · որ և ցուցանէր զանձն անհաճեալ և գժգմնեալ յոյժ ընդ այնպիսի նախատինս և արհամարհանս , զոր առնէին իւրոց պաշտօնատարաց · այլ ճեաբօնացիք առ ոչինչ գրէին զնորայն գծկամակութիւն և զտրտմութիւն : Զայս յայսմ վայրի յիշատակեցաք 'ի ցուցանել զգնացս , որով գնան ճեաբօնացիք ընդ հոլանտացիս · զորս՝ ոչ յայտ է , առ վատթարագոյնս ունին , քան զյետին ստրուկս իւրեանց : Եւ այս 'ի հատուցումն քաջագործութեան իւրեանց · որով արարին մշտնջենական վճռով տարագիր լինել 'ի ճեաբօնայ այլոց ամենայն ազգաց քրիստոնէից : Այլ մեք անդրէն 'ի կարգ բանից մերոց մատիցուք :

Արդ՝ ինքնակալն ճեաբօնայ է գերագոյն տէր երկրին · և ունի ընդ իւրև զանազան պաշտօնատարութիւնս · և ատեանս կամ ժողովս յարքունիս իւր · և նոքօք անմիջապէս կառավարէ զամենայն տէրութիւն իւրոյ : 'Ի մէջ արքունի պաշտօնատարաց առաջին է՝ նախայիշատակեալ մագինօ պինկօ կոչեցեալ իշխանն · որ է երկրորդ զկնի ինքնակալին · ոչ եպարքոսն օսմանցւոց թագաւորութեան · 'ի ձեռաց որոյ անցանեն ամենայն գլխաւոր իրողութիւնք թագաւորութեան : Երկրորդն է մեծ իշխանն , որ կառավարէ զարտաքին իրողութիւնս : Եւ երրորդն է փաստաբանն յեդով քաղաքի : Նոյնպէս և 'ի ժողովս կամ յատեանս գլխաւորքն են երեք · որք կոչին ժողով կամ ատեան գերագոյն · զոր կացուցանեն հինգ նախարարք · ժողով չորից ստորակարգեալ խորհրդականաց · և ժողով իշխանաց ուր տեղեաց · որոց գործ է դատել և սահմանել զվէճս և զհակառակութիւնս , որք դիպին 'ի քաղաքական և 'ի մեհենական իրողութիւնս : Իսկ յիրս կրօնի գլխաւոր իշխան և իբր երկրորդ ինքնակալ է տայիրն · այն է՝ քրմապետն , որ ունի ընդ իւրև զանհամար պաշ-

տօռօնատարս մեհենականս: Բայց 'ի սոցանէ յա՟մ ըս՟ւս են առանձին կուսակալք. որոց իշխանութ՟ի ժառանգութ՟ք անցանէ յորդւոց որդիս: Նոյնպէս և 'ի վեց կայսերական ք՟ղ՟քս են երկու երկու գլխաւոր քաղաքապետք զորս Գօնսամա կոչեն, բայց 'ի Նանկասագ ք՟ղ՟քէն, ուր 'ի 1688 յաւելաւ և եր՟դ ք՟ղ՟քապետ յառաւել զգուշութ՟ի օտարականաց սակս վաճառականութ՟ե: Եւ ս՟ք փոփոխակի կառավարեն զք՟ղ՟քս իւրեանց. և ունին ը՟ ձեռամբ բզ՟մ պաշտօնատարս ընտրեալս և կացուցեալս յինքնակալէն յօգնութ՟ի ն՟ց. միանգամայն և 'ի լրտեսել զա՟մ գնացս ն՟ց: Քանզի ինքնակալք Ճեաբօնայ մինչ 'ի կասկածանս գոլով ապստամբելոյ ժողովրդեան. զի և ինքեանք ապստամբութ՟ք Թգ՟րեցին, յափշտակելով 'ի ձեռաց տայիրին զք՟ղ՟քական իշխանութ՟ին. վ՟ոյ ամենազգաստ արթնութ՟ք հսկեն յարաժամ 'ի վ՟ր կուսակալաց, իշխանաց և մեծամեծաց. և բիւր հնարս գործեն 'ի չմեծանալ ն՟ց ընչիւք և զօրանալ. մինչ պտ՟ճռս տալով ն՟ց առնել ծախս մեծամեծս: Զի թէ զա՟մ գլխաւոր կուսակալք և ք՟ղ՟քապետք պարտաւորեալ են ամի ամի երթալ 'ի յեդով արքայանիստ ք՟ղ՟ք անհամար պաշտօնէիւք և մեծահանդէս շքով և մնալ անդ ը՟ ամիս մի. իսկ այլ իշխանք և մեծամեծք յերկուս կ՟մ գէթ յերիս ամս միանգամ. յորում անհուն գանձս վատնեն: Բայց նախ քան զմտանել ն՟ց 'ի սահմանս արքայանիստ ք՟ղ՟քի, քննեն զա՟մ ինչս ն՟ց արքունի սպասաւորք. որոց մեծապէս պատուիրեալ է չթողուլ զէնս ընաւ մուծանել 'ի ք՟ղ՟ք անդր: Կանայք և որդիք ն՟ց սովօրաբար 'ի յեդով ընակին մեծապ՟ն պատուով և բզ՟մ շքով, զոր ոչ կարեն նուաճեցուցանել: Բզ՟մ անգամ ինքնակալք ձեռն արկանեն 'ի մեծամեծ գործս բազմածախս 'ի պէտս հ՟նրկաց օգտի, և մեղմով իմ՟ն զծախսն 'ի վ՟ր իշխանաց արկանեն: Տան ն՟ց կանայս յօրիորդաց անտի, որք յարքունիս են առ 'ի մեծագոյն ծախս արկանելոյ զն՟ն. Ք՟զի հարկաւորին վ՟ն ն՟ց շինել մեծամեծ ապարանս. և տալ նոցա յընկերութ՟ի օրիորդս բզ՟մս և աղախնայս 'ի սպասաւորութ՟ի: Եւ երբեմն կամեցեալ ինքնակալին մեծարել զո՟ք յիշխանաց իւրոց, երթայ 'ի ճաշ 'ի տուն ն՟ր: Արդարև մեծ է այս պատիւ. բայց նոյնչափ մեծ են և ծախք. մինչև սպառել զինչս եղկելի իշխանին. վ՟ն զի որ ինչ ազնուագոյն է և սակաւագիւտ և մեծագին՝ զայն հարկ է հանել 'ի սեղան մեծի արքայի: Ո՟ղ ահա պատմէ սալմօն, Թէ իշխան մի սիրելի արքայլ դաինակոսայ առաքեաց նմ՟ 'ի պարգև երկու եւեթ ձուկն, զոր Ճափօնացիք Դայ կոչեն. որ է տեսակ մի ազնիւ և սակաւագիւտ ձկան. զոր գնեաց ը՟ 12000 վէնէտկեան լիրէի: Յայսմանէ մարթ է 'ի միտ առնուլ, թէ որչափ իցեն ծախքն այնպիսի մեծի սեղանոյ: Սակայն և այնպէս յօժարամիտ առնեն զայնչափ ծախս սակս մեծի փառաց, որ լինի նոցա գալստեամբ արքային 'ի տունս իւրեանց:

Եւ ևս պատմէ տէլանչարբէ, թէ յորժամ ոք 'ի մեծամեծ իշխանաց շինէ նոր ապարանս, երեք ամօք յառաջ հրաւիրէ զինքնակալն 'ի ճաշ. և յայն երիս ամս բովանդակ պատրաստէ 'ի պատրաստութե՟ ընդունելութե՟ ինքնակալին. որ և բաց 'ի սովորական մեծ դրանէ, շինէ և այլ մասնաւոր դուռն մեծ և հոյակապ քանդակազարդ և ոսկեզօծ. ը՟ որ միայն ինքնակալն մտանէ. և այնուհետև փակե՟լ մնայ միշտ: Զայս և զայլ սոցին նման սովորութիւս ինքնակալք հնարեցին 'ի վատնումն ընչից իշխանաց և մեծամեծաց երկրին. զի մի զանձ բ՟զ՟մ կուտե՟լ՝ յապստամբութե՟ մտաբերիցեն: Որ՟ վ՟ս սորին պ՟ճ՟ռի ը՟ պատմելոյ սովորէնի՝ արս իբր հարիւր հազար փոփոխակի միշտ զբաղեցուցանէ 'ի շինել ապարանս, և այլ հ՟րկաց շինուածս. յը՟լայնել և 'ի հորդել զհ՟րկաց ճ՟նպ՟րհս, և յայլ այսպիսի գործառնութիւնս 'ի պէտս հ՟րկաց շինութե՟: Եւ ևս ը՟ ամ՟ տեղիս ինքնակալք Ճափօնայ ունին լրտեսս 'ի զննել զամ՟ գնացս իշխանաց և մեծամեծաց, և 'ի գիտել զխորհուրդս նց՟: Եւ գուն գործեն ամ՟ հնարիւք քակել զնոսա 'ի միմեանց. և չտալ տեղի նց՟ միաբանութե՟ և դաշնադրութե՟ ինչ առնելոյ ը՟ միմեանս: Եւ զի միանգամայն առացից՝ ջանան միշտ նկունս և նուաճեալս ը՟ հնազանդութե՟ իւրեանց ունել զնս՟: Զսոյն զգուշութի՟ ունին և 'ի վ՟ր տայիրին. առ որով կարգեալ են ստուար գունդ մի զօրաց ը՟ պատրուակաւ մեծարանաց և պահպանութե՟ անձին նր՟. բայց իսկական վախճան նց՟ է նահանջ արկանել նց՟, զի մի երբեք փորձեսցեն անդրէն 'ի ձեռս բերել զառաջին անկապար իշխանութե՟ իւրեանց: Այսչափ ինչ վս՟ ը՟հանրական կառավարութե՟ Ճափօնայ. արդ՝ տեսցուք ինչ և վս՟ մասնաւոր կառավարութե՟ զօրաց:

Որ՟ 'ի վերոյ յիշատակեցաք՝ կայսերական զօրք ունին երկու երկու գլխաւոր զօրապետս. իսկ նան կասագ ունի զերիս. և ը՟ նն այլ ևս բ՟զ՟մ իշխանս և պաշտօնատարս մի ք՟ զմի վերադոյն՝ կարգեալս 'ի պէտս

զնին

զնզն իրողութեց : Նոյնպէս և այլ նմ ճղձք բայց 'ի գլխաւոր ճղքապետաց ունին և այլ զնզն վերակացուս կարգեալս 'ի վր մասնաւոր իրաց : Զի իւրաքանչիւր Թաղ ունի իւր սեփական վերակացու որ կոչի օդդօնա . որո գործ է խնամ ունել, զի գիշերային պահպանութք կատարեսցին . և նմ պատուէրք և կանոնադրութք ճղքապետաց և գլխաւոր պաշտօնատարաց անվրէպ 'ի գլուխ տարցին : Ունի զցուցակ ամենայնից բնակչաց իւրաքանչիւր տան Թաղի իւրոյ . ոպ և այնոցիկ, որք ծնանին և որք մեռանին . որք ամուսնանան . որք փոխեն զբնակութի իւրեանց յայլ Թաղ . որք երթեալ են 'ի ճնպհ, հանդերձ նմ պարագայիւք աստիճանի արուեստի և կրօնի : Եթէ ծագեսցի վէճ ինչ 'ի մէջ նց, կոչէ զնս առաջի իւր, և առաջադրէ նց զեղանակ իմն միաբանութե և հաշտութե . այլ ոչ կարէ բռնադատել զնս յանձն առնուլ զայն : Պատժէ զթեթև յանցանս բանտարկութբ կմ այլ ինչ պատժօք . բայց զերևելի յանցաւորս տայ ըմբռնել . և զյանցանս նց հանէ յատեան վերագոյն դատաւորաց : Եւ զի միանգամայն ասացից՝ պարտական է տալ համար նմի, որ ինչ վնաս գործի 'ի Թաղի իւրում :

Սա ունի երիս փոխանորդս կմ օգնականս : Առաջինն է դպիր . որոյ է հրատարակել զպատուէրս նր . տալ վկայականս և գիրս հրամանի 'ի փոխել զբնակութի այլուր կմ երթալ 'ի ճնպհ . առ սմա են մատեանք, յորս նշանակեալ կան ամենայնք բնակչաց այնր Թաղի և նմ ինչք նց : Երկդն է գանձապետ, զոր Դաքուրա քաու կոչեն . իբ պահապան ականց . զի սա պահէ զհսրկաց դրամս այնր Թաղի : Իսկ երրդն կոչի Նիդսիեօսի . իբ լրտես . որոյ գործ է ծանուցանել օդդօնային Թէ որք ծնանին և որք մեռանին . որք փոխեն զբնակութի և զայլ նմ, որ ինչ պատկանի առ օդդօնայն : 'Ի ձեռն սր անցանեն նմ մուրհակք աղերսանաց իբ արզուհալք, և վկայականք : Սա հաւաքէ զդրամս, զոր Թաղն իւր պարտական է տալ ճղքապետաց և գլխաւոր պաշտօնատարաց : Ցնմ գիշերի երկիցս շրջին պահապանք յիւրաքանչիւր Թաղս . և ը գիշերն ողջոյն հարկանեն զերկու փայտս ը միմեանս . որ է տեսակ մի կոչնակի՝ 'ի նշան արթնութե . բայց շառաչիւն նր ոչ սակաւ անհանգիստ առնէ զբնակիչս : Այլ փողոցք ունին դրունս . զորս գիշերային փակեն, բզմ անգամ և 'ի ցերեկի առկ որ և է թեթև պտճառի . ոպ ահա 'ի նմանկատար

Քղք՟ միշտ ամրափակեն զդրունս յելանել անտի օտարական նաւուց · զի մի ոք 'ի բնակչաց փախիցէ · եւ այնչափ խիստ է այս զգուշութի, զի մինչեւ անյայտ լիցի նաւն յաչաց տեսուէ , յայնժամ թաղս առնեն զճիշտ քննութ՟. եւ նախայիշատակեալ լրտեսն յանուանէ կոչէ զիւրաքանչիւրս 'ի բնակչաց · որք պարտական են այնմ ։ Եթէ ոք յայնպիսում ժմկի պէտս ունիցի վ՟ս կարեւոր ինչ գործոյ երթալ յայլ թաղ , առնու վկայական գիր յօգդօնայէ · որ ը՟ վկայական գրոյն տայ նմ՟ եւ ուղեկից զմի 'ի պահապանաց թաղի իւրոյ , զի մի գաւ ինչ գործեսցէ ։ Եւ յորժամ ոք կամի փոխել զբնակութի յայլ թաղ , պարտ է նմ՟ նախ առնուլ 'ի բնակչաց թաղի իւրոյ զվկայական գիրս՝ զկենաց եւ զվարուց իւրոց եւ զընտանեաց · եւ զայլ գիր արձաման , եւ տալ զայնոսիկ օգդօնայի թաղին՝ ուր կամի երթալ հանդերձ մուրհակաւ աղերսանաց · ցուցանելով 'ի նմ՟ զպատճառ որոյ վ՟ս կամի փոխել զբնակութի իւր · ը՟ նմին մատուցանէ նմ՟ սակաւ ինչ ձուկն 'ի պարգեւ ։ Իսկ օգդօնայն ընկալեալ զհաւանութի թաղի իւրոյ , (զոր երբեմն զլանան սակս մոլեկան եւ գայթակղեցուցիչ վարուց նր՟) ընդունի զնա ընդ պաշտպանութ՟ իւրով ։ Ապա նա ինքն նոր բնակիչն պարտական է առնել ճաշ խմբին , որոյ եղեւ ինքն անդամ · զի իւրաքանչիւր թաղ բաժանեալ է 'ի զնդ՟ն խումբս ։ Եւ եթէ կամիցի վաճառել զառաջին տուն իւր , պարտ է նմ՟ նախ առնուլ զհաւանութի ամ՟ շրջակայ դրացեաց տան իւրոյ · քզի կարող են նք՟ արգելուլ զգնողն , զորմէ համբաւ չար հնչիցէ ։

Յորժամ ոք հանդերձեալ է երթալ ուրեք 'ի ճնպհ՟ առնու 'ի գլխոյ խմբի իւրոյ կամ 'ի տանուտէրէ , եթէ բնակի 'ի տան 'ի վարձու կալեալ՝ վկայական գիր · յորում նշանակի անունն եւ մականունն եւ թաղն բնակութ՟ իւրոյ , եւ տեղին ուր երթայ , եւ գործն վ՟ որոյ երթայ , եւ չափ ժմկի ճնպհորդութ՟ իւրոյ · որում ստորագրեն բզմք 'ի դատաւորաց քաղաքին ։

Յորժամ կռիւ ինչ ծագէ 'ի մէջ բնակչաց թաղի իմեք , դրացիքն պարտական են խաղաղացուցանել զնս · իսկ եթէ մարդասպանութի դիպեսցի , յայնժամ ոչ միայն մարդասպանն 'ի մահ դատապարտի , թէպէտ եւ լոկ 'ի պաշտպանութե անձին սպանեալ իցէ , այլ եւ բնակիչք երից տանց առաւել մօտաւորաց տեղւոյն սպանութե , բանտարգել լինին 'ի տունս իւրեանց ը՟ բզմ՟ ամիս , ամրափակեալ զդրունս եւ զպատուհանս ։ Իսկ այլ բնակիչք այնր թաղի դատապար֊

տին 'ի գործ արքունի ծառայութե՟ երկար կմ՟ համառօտ, ը՟ յաւէտ և նուազ անհոգութե՟ 'ի խափանել զայն սպանութի. և պետք կմ՟ վերակացուք թաղին խստագոյնս պատժին : Նոյնպէս ը՟ պատժով գլխապարտութե՟ արգելեալ է անդ սուր հանել. վ՟զի եթէ ոք 'ի կռուել ը՟ ումեք՝ հանցէ սուր, թէպէտ և ոչ մերձեցուցէ զսուրն 'ի թշնամին, սակայն և այնպս՟ մահապարտ է : Ը՟ նմին և այլ զնչին խիստ օրէնս և սովորութիս. որք վ՟ չնչին յանցանաց 'ի մահ դատապարտեն : Իսկ սովորական պատիժք մահու ճեաբօնացւոց են հերձումն որովայնի, որ է պատիժ մեծամեծաց. խաչ՝ որ թուի լինել 'ի նախատինս քրիստոնէութե՟. հուր. գլխատումն. և անդամ անդամ յօշել, կապել ը՟ ձետ ձիոյ : Բայց վ՟ քրիստոնէից հնարեցին և այլ ազգի ազգի դժնդակ տանջանս առնել ք՟ զնախնի գազանաբարոյ հալածիչս 'ի ք՟ս հաւատացելոց :

ԺԷ. Կնիք. Մաքսք. և Զօրք Ճէաբօնացւոց :

Ըստ ասելոյ հոլանտացւոց, որք յաճախեն 'ի Ճեաբօն, կնիք ինքնակալի նմ՟ է վահան ձուաձև գեղին ոսկեփայլ. և 'ի վ՟ր նր՟ են վեց արծաթափայլ աստեղք ցրիւ. ունելով շուրջանակի առ 'ի զարդ ոսկի՛ կետս կմ՟ ծիլս : Իսկ այլք ասեն թէ են երեք մ՟րդկային գլուխք արծաթիք 'ի վ՟ր սեաւ ենթակայի. Տարեկան մուտք այսր ինքնակալութե՟ 'ի մաքսից, 'ի բաժից, 'ի հարկաց և յայլ ամ՟ իրաց՝ մեծ է յոյժ, զի թէ արժանի իցէ հաւատալ՝ հասանէ 972,727,272 ոսկի. ք՟ եօթանասուն և երկու միլիոն եօթն հարիւր քսան և եօթն հազար երկու հարիւր եօթանասուն և երկու ոսկի. զոր ոմանք և ևս առաւելուն : Իսկ դրամք նց՟, զորս յերիս տեղիս ևեթ հատանեն. ք՟ 'ի Թէտօ. 'ի Մեաքօ, և 'ի Սարվուկայ՝ պէսպս՟ են : Յոսկի դրամս՝ մեծագոյնն, զոր օպան կոչեն՝ է ձուաձև և ունի չորս կնիքս տայիրայց և թագաւորաց. որ արժէ իբր ԺԷ վենետիկեան ոսկի : Իսկ յարծաթի դրամսն, գլխաւորն է գօպանկ կոչեցեալ դրամն. որոյ յարգ կմ՟ արժէք է իբր հինգ դալեր կմ՟ ղարաղուշ : Բայց 'ի դրամոց աստի վարեն և բակլայաձև և ձողաձև կտորս արծաթոյ, որք ունին փոքրիկ կնիքս 'ի վ՟ր. զորս կշռով տան միմեանց : Ը՟ նմին և պղնձի դրամս, զորս Սեննի կոչեն. որք ունելով քառակուսի ծակ 'ի մէջի, անցուցանեն զայնս ը՟ թել :

Ըստ ճոխութեան տարեկան մտից ինքնակալին Ճէապօնայ՝ մեծ է և զինուորական զօրութիւն նորա. զի ասի թէ թիւ թոշակաւոր զօրացն նորա է հարիւր հազար հետևակաց, և քսան հազար հեծելոց : Այլ բաց 'ի սոցանէ կուսակալք և իշխանք ամենայն միանգամայն պարտապան են տալ ինքնակալին 30800 հետևակս. և 380800 հեծեալս : Սոքա առհասարակ բաժանեալ են յայլ և այլ խումբս և գունդս. այսինքն 'ի հնգեակս, յերեսնաւորս, 'ի հարիւրաւորս, յերկերիւրս, 'ի հազարաւորս են. և ունին զիւրեանց զօրապետս և զօրագլուխս մի քան զմի մեծ. և 'ի վերայ ամենեցուն է մի ոմն գերագոյն սպարապետ : Զէնք հետևակ զօրաց են սաղաւարտ, վահան, երկու թուր, մի սուճին և ատրճան, այն է՝ թիւֆէնկ : Իսկ հեծեալք յոտից մինչև 'ի գլուխ զրահաւոր են, և ունին ատրճանակ. այն է՝ փիշտով, նետ, նիզակ և թուր : Ունին և թնդանօթս՝ այսինքն թօփս. զորս եւրոպացիք մուծին առ նոսա. որպէս և զայլ հրազէնս : Այսչափ են սովորական զօրք ինքնակալին Ճէապօնացւոց. սակայն եթէ հարկ ինչ լինի, կարող է 'ի սուղ ժամանակի հանել այլևս անհամար զօրս քաջամարտս, քան զոր 'ի վերոյ նշանակեցաք, Ճէապօնացիք առհասարակ 'ի մանկութենէ վարժեալ 'ի զինուորութիւն. զորս յայն սակս մարթ է կոչել զինուորս 'ի ծնէ, որք և այնչափ յօժարեալ են 'ի զէն, զի և 'ի գիշերի զսուր իւրեանց առ մահճօք դնեն. յոր առ դոյզն ինչ պատճառի վաղվաղակի ձեռն արկանեն. վասն որոյ եթէ չէր արգելեալ ընդ պատժովք գլխապարտութեան սուր հանել, անդադար մարդասպանութիւնք լինէին 'ի Ճէապօն :

ԺԷ. Կրօն Ճէապօնացւոց :

Սոքա առհասարակ կռապաշտ են. որք ըստ նախնի յունաց և հռովմայեցւոց բաց 'ի բնիկ աստուածոց իւրեանց, պաշտեն և զայլ աստուածս կամ կուռս օտարոտիս ըստ հաճոյից և ըստ առանձնական շահու իւրեանց : Իսկ 'ի պատճառս այնչափ զանազան աստուածոց՝ զանազան աղանդք ծագեցին առ նոսա. ըստ մինչև ցերկոտասան. զորս ըստ սահմանի մարթ է բովանդակել յերկուս գլխաւորս : Առաջինն կոչի Սինդօ կամ Քամիցօ. որ է գլխաւոր վաղնջական և սեփական դեն Ճէապօնացւոց. և որ է տիրապետ գլուխ մեծ տայիրին կամ քրմապետն Ճէապօնայ. թէպէտ ըստ որում է ընդհանուր քահանայապետ իշխէ և այլոց : Հետևօղք այսր աղանդոյ Սինդօեանք կամ Թիօպուսեանք կոչին. իսկ քուրմք նոցա Քամուսք : Այս աղանդ է.

ունի զմի Հաւկ գերագոյն, զոր ուսուցանէ բնակիլ 'ի բարձրագոյն երկինս. ը՟ նմին ը՟ունի և զայլ ստորին ա՟ծս. զորս կոչէ եօթն ոգիս երկնայինս, որք թուէին լինել եօթն մոլորակ. և առասպելեն զնց՟է՛ թէ եղեն ՆԷ արեգական բազմօք յռ՟ջ ք՟ զերկինս և զերկիր և քան զմարդիկ. և թէ ը՟ միլիոնաւոր ամս բնակեցան 'ի Ճէաբօն. զի 'ի սկզբան անդ միայն Ճէաբօն գոյր յաշխ՟ի. իսկ այլ մասունք հողագնտոյս յետոյ հաստատեցան։ Եւ թէ մի յեօթն ա՟ծոց անուն Իսանակի ծնաւ զայլ հինգ ա՟ծս ստորինս. զորս երկրաւոր ա՟ծս կոչեն. որոց առաջինն կոչի դէն սեօ տայի սին. զոր իբր պաշտպան Ճէաբօնայ ը՟ ամ՛ տեղիս տրու՟ն Ճէաբօնացւոց 'ի յարգի ունին։ Այլ ոչ նց՟, և ոչ այնմ՛ գերագոյն Հաւկի զայլ ինչ պաշտօն մատուցանեն, բայց միայն յերդնուլ յանուն նց՟. զի հեռի են 'ի մ՟նջ ասեն, ոչ կարեն լսել զաղօթս մեր. և ոչ իսկ օգնել ինչ մեզ։ Այլ բաց 'ի նց՟է ունի այս աղանդ և այլ ա՟ծս անհամարս, զորս Քամ՛ կմ՟ Սին կոչէ. որք են հոգիք ինքնակալաց Ճէաբօնայ, և այլոց երևելի արանց երախտաւորաց աշխ՟ի իւրեանց, զորս տայիրք նց՟ ա՟ծացուցին, և օր ը՟ օրէ ա՟ծացուցանեն ոչ միայն զինքնակալս, այլ և զայլս ոմանս նշանաւոր անձինս. որք եթէ չունիցին ինչ գործ երևելի, սուտ սքանչելիս համբաւեն զնց՟է։

Զսոսա պաշտեն հետևօղք այսր աղանդոյ, ք՟զի համարին ունել նց՟ միջնաւոր խնամս 'ի վ՟ր ժողովրդեան, յորոց միջի բնակեցան երբեմն. և յանուն նց՟ շինեն տաճարս, որք այնչափ բազմաթիւ են յամ՟ քաղաքս, մինչ գրեթէ հաւասարիլ թուոյ տանց. այլ յ՟րկ փայտակերտ անշուք և փոքր. ձև նց՟ է քառակուսի. բարձրութ՟ին իբրև երիս մարդաչափս, կմ՟ փոքր մի աւելի. իսկ լայնութ՟ին զերկս երիս. և բարձր 'ի գետնոյ երիս կմ՟ չորս ոտնաչափս 'ի վ՟ր ստուար և ամուր ցցից հաստատեալ. և լուսամուտք նց՟ վանդակապատ. Նյնպ՟ս և 'ի ներքս անզարդ են գլխովին. զի չէք այլ ինչ 'ի նս՟, բայց միայն բոլորաձև կերպաուածք ինչ թղթեղէնք և 'ի միջի հայելիք, զի որք մտանեն անդր տեսցեն զդէմս իւրեանց 'ի նս՟։ Յամենայն գաւանիս և գրօշեալք կմ՟ նկարք փակեալք յարկեղս. այնպիսի տաճարք ֆօնկու կոչին, թ՟ր Ճշմարիտ տաճար, որք և առաւել 'ի պատուի են ք՟ զայլս. և առաւել յաճախին 'ի նս՟. ուր 'ի մասնէն երկիրպագանեն այնց արկեղաց. իսկ այլ տաճարք գրեթէ միշտ փակեալ կան. և ոչ ոք երթայ 'ի նս՟։

Գլխաւոր սկզբունք և կանոն վարուց այսր աղանդոյ են այսոքիկ. նախ՝ ներքին մաքրութիւն սրտի. զի առնել զոր ինչ թելադրէ խիղճ մտաց իբրև բարի, և հրաժարել յայնմանէ, զոր չար համարին։ Յայսմ այնչափ զգուշաւոր են, զի թէ ունիցին ինչ խիղճ յանձինս, ոչ իշխեն մտանել 'ի մեհեանս։ Բայց այս խիղճ նոցա ըստ մեծի մասին է 'ի վերայ ծիծաղական սնոտիապաշտութեանց. իսկ զիսկական չարիս մեծամեծս գործելն համարձակ, և ինչ ոչ խղճեն։ Երկրորդ՝ հրաժարել յարտաքին պղծութեանց. զի ոչ ուտել զմիս այլոց չորքոտանեաց ոչ ընտանեաց և ոչ վայրենեաց՝ բաց յեղջերուէ. նոյնպէս և ոչ զմիս հաւուց ոչ ընտանեաց և ոչ վայրենեաց, բայց միայն կռնկան և ջրային հաւուց. և ոչ իսկ զէնուլ. ապա թէ ոչ՝ պղծին. և աւուրս ինչ ոչ կարեն մտանել 'ի մեհեանս։ Ոչ մերձենալ 'ի մարմին մեռելոյ, և ոչ կալ առընթեր 'ի մեռանիլ ուրուք, մանաւանդ եթէ իցէ ազգական և ընտանի. զի յայնժամ առաւել մեծ համարի պղծութիւն։ Ոչ շօշափել զմարմին արեամբ իւրեանց կամ օտարի. ապա թէ ոչ՝ աւուրս եօթն պիղծ համարին։ Եւ եթէ զք 'ի գործելն 'ի մեհենի ուրեք, թէպէտ և 'ի գլխաւոր մեհենի Խախոյ, ըստ պատահման վէրս ինչ գործեսցէ 'ի մարմնի, պղծի մեհեանն այն, զոր հարկ է քակել և անդրէն նորոգ շինել։ Երրորդ՝ երթալ յուխտ 'ի մեհեանն Խախոյ ամի ամի, կամ գէթ միանգամ 'ի կեանս. զորմէ ստորև ընդարձակագոյնս ունիմք խօսել։ Չորրորդ՝ ճնշել և խոշտանգել զմարմին։ Եւ հինգերորդ՝ բազում զգուշութեամբ պահել զաւուրս տօնից։ Այլ զայս ամենայն խարանս բաց 'ի միանձանց նոցա և ճգնաւորաց, սակաւք գտանին 'ի նոսա, որք ճշտիւ պահեսցեն։

Տօնք նոցա ունին սահմանեալ աւուրս. որպէս առաջին, միջին և վերջին աւուրք ամսոյ, և այլ խորհրդաւոր աւուրք ինչ. որպէս երրորդ օր երրորդ ամսոյ, հինգերորդ օր հինգերորդ ամսոյ. եօթներորդ եօթներորդին. և իններորդ իններորդին, բայց յամենայն տօնս գլխաւորն է առաջին օր տարւոյ։ Այլ այս տօնք նոցա են մանաւանդ աւուրք ուրախութեան և խրախճանութեանց քան թէ կրօնաւորութեան. քանզի յաւուրսն յայնոսիկ ամենեքին ըստ իւրաքանչիւր կարի զարդարին որչափ կարեն. և երթան 'ի մեհեանս. ուր միանգամ կամ երկիցս հայեցեալ ընդ վանդակապատ պատուհանս. և արկեալ տուրս ողորմութեան 'ի գանձանակն վասն աղքատաց. և փոքր մի հնչեցուցեալ զփոքրիկ զանգակս 'ի զուարճութիւն աստուծոյն՝ որ 'ի մեհենին անդ պաշտի, ելանեն 'ի բաց. և զայն օր ողջոյն 'ի խրախութիւնս անցուցանեն . իսկ 'ի սկիզբն տարւոյն զամիս մի ողջոյն, բայց առաւելագոյն զառաջին երիս աւուրս բոլոր 'ի խաղս 'ի խրախճանութիւնս և 'ի զինջն զեղխութիւնս վատնեն . Ը̃ այն աւուրս երթան և յայցելութիւն միմեանց և տան պարգևս իրերաց ։ Բայց 'ի տօնից առաւել՝ ունելն և այլ տօնս ինչ հնորկաց, զոր կատարեն Ը̃ բոլոր Ճեաբօն . որ է տօնն դեն սէօ տայի սին չածոյն . և այլ ևս տօնս ինչ մասնաւորս . որք կատարին միայն 'ի գեւղս ումանս կամ քաղաքս . այլ տօնն սուվա չածոյն կատարի միայն 'ի Նանկասագ քաղաքի ։ Այս ազանդ ունի և պէսպէս խումբս միանձանց արանց և կանանց . յորս երկու են երևելի . որ է կարգն կամ ընկերութին եամմաբոսաց, և կուրաց ։ Եամմաբօսք, որ ըստ սալմոնի՝ թարգմանի քաջք . իսկ ըստ աէլահարբեայ՝ զինուորք լեռնականք, են կարգեալք 'ի պաշտօն և 'ի ծառայութիւն քրմաց. խիստ և դժնդակ կեանս վարեն . միշտ 'ի լերինս և յանտառս և յամայի անբնակ վայրս թափառեալք . և ամի ամի ելանեն 'ի գլուխ բարձր ժայռաւոր և սեպացեալ լերին յուխտ գերեզմանի հիմնադրի ընկերութեան իւրեանց . և 'ի դառնալն անտի ողջամբ, առաջնորդ նոցա տայ նոցա իշխանութիւն զգենուլ լաւ ևս զգեստս ։ Եօթն անգամ յաւուրն լուանան 'ի ջուր ցուրտ՝ ևս և 'ի սաստիկ ձմերայնի, և եօթնհարիւր և ութսուն ծունր կրկնեն յիւրաքանչիւր ծնրադրութեան երկրպագումբք ձեռօք կոծելով զգլուխս ։ Այսպիսի և այլ սոցին նման ճգնութիւնք հաւատացուցին ժողովրդեան եթէ մեծ է զօրութիւն իւրեանց . և թէ աստուածքն լսեն ամենայն խնդրուածոց իւրեանց . հմայելով՝ բազում անգամ փարատեն զցաւս . մեկնեն զերազս, գտանեն զկորուստս . և զայլ այսպիսիս բազումս առնեն . զի առհասարակ կախարդ են և դիւաց արբանեակք ։

Իսկ կարգ կուրաց երկու են . երկոքին ևս երևելիք առ Ճեաբօնացիս . որք կոչին Պուսէց սատօ . որ է բուսեցեան կոյրք . և Ֆէքի սատօ . այն է՝ Ֆէքեան կոյրք ։ Առաջինն հաստատեցաւ 'ի յիշատակ երևելի իշխանի միոյ . որոյ առ սաստիկ ցաւոց և անընդհատ արտասուաց Ը̃ մահ համանւոյ իւրոյ՝ կուրացան երկոքին աչք ։ Այս միաբանութիւն չէ այնչափ ինչ տարածեալ, զի միայն քուրմք մտանեն 'ի նմա, բայց և 'ի նոցանէ նոքա և եթ, որք կամ 'ի բնէ կոյր ծնանին, և կամ 'ի սաստիկ կրից հիւանդ 'ի սիրոյ կուրանան ։ Իսկ երկրորդ միաբանութին կուրաց ասի թէ սկիզբն կալաւ 'ի քաջ և 'ի հաւատարիմ զօրականէ միոյ, որ կոչէր Ֆէքի ։

Սա 'ի դժնդակ երկպառակութե̃, յորում մեծ սպարապետն զօրաց Ճեաբօնացւոց Ճէրդիմոս կ̃մ յէրօսիմոս անուն ապստամբեցաւ յինքնակալէն տայրայ, ունէր զկողմն նորին տայիրայ, և յերկարել պտ̃ղմի, մեռաւ ինքնակալն. և ինքն Ֆէքէի ձերբակալ եղև 'ի Ճէրօդիմոսէ. և ք̃զի հռչակեալ էր անպարտելի քաջուն նր̃ և հաւատարմութե̃, Ճէրօդիմոս բ̃զմ մեծարանօք պահէր զնա 'ի կալանս. և ա̃մ զօրութբ̃ դուն գործէր յինքն յանկուցանել զնա, և սպարապետ 'ի վ̃ր զօրաց իւրոց կացուցանել: Այլ նա ո̃չ իւրում վեհանձնութե̃ ետ պ̃խնի Ճէրօդիմոսի. 'Եղէ ես, ասէ, ծառայ հաւատարիմ Տ̃ն բարերարի. այլ այժմ զկնի մեռանելոյ նորա, մի՛ ոք ակնկալցի ունել զիս իւր բարեկամ հաւատարիմ: Խոստովանիմ թէ բազմօք պարտապան եմ քեզ. և ըզկեանս իմ գլխովին 'ի քէն ճանաչեմ. բայց սակայն այնչափ է թշուառութի̃ իմ, զի ոչ կարեմ դարձուցանել 'ի քեզ զաչս իմ, և չգրգռել առնուլ զգլուխ քո փոխ արեան տ̃ն իմոյ: Վ̃յ ահա փոխանակեցից մեծի երախտեաց քոց որ առ իս՝ զայսպիսի դժնէհայեաց աչս իմ||. զայս ասացեալ՝ եհան զերկոսին աչս իւր, և մատոյց նմ̃ 'ի պարգև: Ընդ այս գործ զարհուրե̃լ միանգամայն և սքանչեալ Ճէրօդիմոսի, արձակեաց զնա յազատութի̃. իսկ նր̃ գնացեալ 'ի Ֆիուկա գ̃ւռ, ուսաւ շինեցուցանել նր̃ ճգնարանս. և կացոյց զմիաբանութի̃ կուրաց. որ յանուն նր̃ կոչի միաբանութի̃ Ֆէքէան կուրաց. որ և ը̃արձակ է յոյժ և ծաւալե̃լ ը̃ համօրէն աշխարհն Ճեաբօնայ, զի ա̃մ կոյրք յինչ կարգի և իցեն մեծատունք և աղքատք՝ մտանեն 'ի միաբանութի̃ յայն. իսկ գլխաւոր նց̃, որ կոչի Օսիօքֆնամի 'ի մեաքօ յապարանս տայիրայ. որում տայիրն ամի ամի տայ 4300 դռ̃չ 'ի պարգէն: Ունին և գ̃ւռապետս յա̃մ գ̃ւռս, զորս Քօնկիօ կոչեն. և իւրաքանչիւր գաւառապետ ունի իւր խորհրդականս, որք կոչին Քօթօ: Սք̃ սափրեն ըզգլուխս ողջոյն ըս̃ սովորութե̃ նախայիշատակե̃լ պոնմեցեան կուրաց, բայց ինքեանք աշխարհիկ են. ուտի և զգենուն ըս̃ սովորութե̃ աշխարհականաց: Ոչ մուրանան, այլ որք աղքատ են հայթհայթեն զդարման կենաց երգելով և նուագածութբ̃ յապարանս մեծամեծաց, 'ի տօնս, 'ի թափօրս, 'ի խրախճանս, 'ի հարսանիս և յայլ այսպիսի հն̃րկաց խրախութե̃: Վ̃յ ոչ ունիք ծանրանան. Այսչափ ինչ վ̃ր առաջնոյ աղանդոյ Ճեաբօնացւոց:

Երկ՟դ՝ աղանդն Պուտասսօ · որ Թարգմանի Կանոն օտարականաց · ք՟զի հետեւօղք ն՟ր կոչեցեալք պուտասսօյեանք՝ բաց 'ի կռոցն Ճէաբօնայ պաշտեն եւ զկուռս օտարոտիս , մա՟նդ զչինացն եւ զչխամացւոց · եւ առվաւ միայն զանազանելն յառաջնոյ աղանդոյ · զի նա միայն զբնիկ ա՟ծս Ճէաբօնայ պաշտէ : Գըլխաւոր չա՟ծոյ Ամիտա կոչի · զոր համարին գերագոյն հրամանատար եւ անօրինիչ երկնային տեղեաց , եւ փրկիչ հոգւոց մարդկան · զի ն՟ր միջնորդութ՟ եւեթ հնար է ամէն լինել երջանիկ 'ի հանդերձել կեանս · վ՟յ եւ ունին զնա իբրեւ միջնորդ ը՟ ա՟ծ եւ ընդ մարդիկ : Պատմեն , թէ բ՟զմ Ճմկաւ յառաջ դրոշել ն՟ր դաւ 'ի Ֆագուկա կ՟ղւոի , ուր արձակէր ճառագայթս լուսափայլս · յայն սակս շինեցին անդէն տաճար յանուն ն՟ր : Պաշտեն եւ զՋաքա կ՟մ Սաքա չա՟ծն չինաց բ՟զմ պաշտօնասիրութ՟ սակս խոստանալոյ ն՟ր զանմահութ՟ի յերանագոյն կեանս 'ի վարձ առաքինի գործոց մա՟նդ անձնասպանութե՟ն :

Վ՟յ գրէ Տէլահարբէ , թէ կարի յաճախ է տեսանել անդ կամաւոր անձնասպանութ՟իս · բ՟զմք յայսպիսի խելացնոր յիմարաց առ վաղագոյն ժամանելոյ 'ի խոստացել երանութե՟ն , մտել 'ի ծով նաւակօք , քարինս մեծամեծս լնուն 'ի նաւակն կ՟մ ծակեն · եւ առ սակաւ սակաւ սուզանին 'ի խորս ծովու երգելով զերգս օրհնութե՟ առ չա՟ծն իւրեանց : Իսկ բազմութ՟ի մարդկան կայցել առ ափն ծովու 'ի զննելն այնմ դժոխային տեսարանի , մեծաբարբառ գովեն զքաջութ՟ի ն՟ց · եւ խնդրեն օրհնութ՟ի 'ի ն՟ցէ մինչեւ իցեն խորասուզել : Ոմանք տան հիւսել զանձինս յորմս , թողեալ փոքրիկ ծերպ 'ի պէտս տուրեւառութե՟ն շնչոյ · եւ անդ սովալլուկ սատակին : Այլք դահավէժ լինին կամաւորապէս 'ի վառել բովս ծծմբոյ : Կէսք ընկանին 'ի ներքոյ անւոց կառաց , յորս բարձել տանին զկուռս · եւ խորտակել ոսկերաց՝ չարաչար սատակին · իսկ այլք այլովք զնի՟ն օրինակօք զրաւեն զանձինս 'ի կենաց : Ահա այսչափ է մոլեգնութ՟ի որոց զուրկ են 'ի ծանօթութէ ճշմարիտ ա՟ծպաշտութե՟ն : Պաշտեն եւ զԿօնփուցիոս հռչակաւոր օրէնսդիրն չինաց · որում ինքնակալն Ճէաբօնայ յանցել դարու կանգնեաց տաճար հոյակապ 'ի յեդօ արքայանիստ ք՟ղք : Ունին եւ այլ անհամար փոքրիկ ա՟ծս · եւ եւս իւրաքանչիւր տուն ունի իւր սեփական կուռս զնի՟նս · յորս գլխաւորքն երկու են , որք յա՟մ տունս գտանին · մին է եղնադըրուխ , որ ը՟ մոլար կարծեաց ն՟ց պահէ զբնակիչս տան յախտից և 'ի հիւանդութենց մնունդ 'ի ծաղկէ. Իսկ եր̃կրին է դրօշե̃լ դժոխատիպ դիւանման. զոր Լոս կոչեն. և համարին, թէ սարսափելի տեսլեամբ իւրով 'ի բաց հեռացուցանէ 'ի տանց ն̃ց զա̃մ չար արկածս:

Տաճարք կի̃մ մեհեանք այսր աղանդոյ ոչ են անշուք և անզարդ իբ̃ մեհենաց առաջնոյ աղանդոյն, այլ մեծաշէն և գեղազարդք, յորս են անթիւ կուռք տարակերպք մեծամեծք և մանունք. զերկուս 'ի կռոց անտի ստորագրէ Սալմօն, որք կոչին Տայպօտ և Գուանվէն: Տայպօտն ասէ մեծ է յոյժ. զի լայնութի̃ թիկանց նորա է հինգ գրկաչափ. ականջքն երկայն. հերքն թաւ և դառուղ. 'ի գլուխն ունի պսակ. և է բովանդակ ոսկեզօծ՝ բաց 'ի ճակատու՝ և զգեստաւորեալ. միայն լանջքն մերկ: Նստեալ է 'ի վ̃ր ծաղկի տան զոտամբ եդե̃լ. և զաջ բազուկն վերանաձև ունի 'ի վեր ամբարձեալ. իսկ զձախն 'ի վ̃ր կրծոց. և շուրջ զնովաւ են այլ անհամար կուռք այլատարազք նստե̃լք նոյնպէս 'ի վ̃ր ծաղկանց: Իսկ գուանվէն, որ նոյնպէս մեծ է յոյժ, ունի եօթն ձեռս, և թագ 'ի գլուխ հանդերձ շրջասփիւռ ոսկիճառագայթիւք. և շուրջ զնովաւ վեշտասան հսկայաձև արձանք դիւցազանց. և այլ ևս անհամար դրօշե̃լք մեծամեծք և մանունք յա̃մ կողմանս մեհենին. որք ը̃ ասելոյ ոմանց են 33333. յորոց բզ̃մք քան ձեռս ունին: Ա̃ք սովորու̃ն ունին 'ի վ̃ր սեղանոյ զոհից վառել մոմեղէնս, և երբեմն ը̃ բովանդակ տաճարն. և 'ի սեղանի անդ 'ի վ̃ր փոքրիկ տախտակաց դրե̃լ կան անուանք ինքնակալաց, որք եղեն յաղանդոյ սմին. զորս քուրմք ն̃ց 'ի մատուցանել զոհս կռոց, միշտ յիշատակեն յաղօթս:

Գլխաւոր սկզբունք և կանոնք վարուց ն̃ց են այսոքիկ: Ոչ գողանալ, ոչ շնալ, ոչ ստել, ոչ ըմպել գինի կի̃մ զայլ արբեցուցիչ ըմպելի, և պահել զայլ ևս այսպէս խորական կանոնս. և առնել ազգի ազգի ճգնութիւնս և խոշտանկանս մարմնոյ. զի այս աղանդ առաւել խիստ է ք̃ զառաջինն. յայն սակս և քուրմք ն̃ց հանապազ քարոզեն ժողովրդեան զապաշխարութի̃ 'ի քաւութի̃ սնոտի մեղաց ինչ գործելոց 'ի նախապաշտաւն իւրեանց. Թողե̃լ զխակական չարիս մեծամեծս, զորս բնաւ իսկ մեղս ոչ համարին: Վ̃րդք 'ի հետեւողաց այսր աղանդոյ զգլխով և զբոլոր մարմնով 'ի խորլին ձմերայնի տան լնուլ ջուր ցուրտ մինչև ցերկերիւր դոյլս. և բնաւ սարսափումն ինչ ոչ ցուցանեն ։ Այլ և ուխտեն յաւուրն հազարաւոր անգամ կարդալ զգլխ իւրեանց տարածել 'ի գետնի ․ և յիւրաքանչիւր նուագս հարկանեն զճակատ ը̅ գետին, մինչև պատառոտել մորթոյ ճակատու ։ Այլ առաւել սարսափելի ճգնութի նց՝ է երկար և դժընդակ ուխտագնացութիւն, զոր ամի ամի առնեն պաշտօնասէրք զաքայ կռոց ։

Զի ը̅ գրելոյ տէրահարբեայ՝ ժողովին ամի ամի 'ի նորա ջըղք, որ 24 մղոնաւ հեռի է 'ի մեաքօայ իբր 200 ուխտաւորք ․ և անտի ելանեն 'ի ճնպհ 'ի տօթագլին աւուրս ամսրան բացագլուխ և բոկոտն ճանապարհորդել ը̅ անշէն անապատս, ը̅ անտառս, և ը̅ ապառաժուտ լերինս ․ յորս 'ի սայրասուր քարանց պատառոտին ներբանք ոտից նց ․ երկայնութի այսր դժոխային ճնպհի է իբրև 215 մղոն ․ իւրաքանչիւր 'ի նցէ ինքնին բարձել տանելով զպաշար իւր, որ է որիզ խարակել ․ յորմէ երկիցս յաւուրն ջ յառաւօտու և յերեկոյի առնուն մի մի բուռն չափ ․ և ըմպեն երիս բաժակս ջրոյ ։ 'Ի սկզբան անդ բառնան ը̅ ինքեանս և ջուր ․ զի յառաջին ութ աւուրս ը̅ անջրդի վայրս ճնպհորդեն ․ ուր չիք գտանել և ոչ կաթիլ մի ջրոյ ։ Բայց դէպ լինի երբեմն, զի սպառի ջուր նց կամ նեխել ապականի ․ վյ բզմք հիւանդանան ․ յորոց եթէ ոք առ սաստիկ ծարաւոյ տկարացեալ՝ ոչև զօրեսցէ գնալ ը̅ այլոց, թողուն զնա յանշէն անապատի անդ անխնամ՝ 'ի կերակուր գազանաց ։ Իբրև քսան և չորս մղոնաւ հեռի 'ի նորա ջըղքէ, սկսանին ճնպհորդել ը̅ ապառաժուտ լերինս ․ և անդ ուղեկցին նց քուրմք ոմանք իբրև հոգևոր առաջնորդք՝ որք դիւամոլք գազանաբարոյք ․ որոց լոկ տեսիլ դժոխատիպ դիմաց՝ զարհուրեցուցանէ ։ Եւ առ ժամայն սկսանին պատուիրել ուխտաւորաց խիստ պահս, և լռութի սաստիկ, և այլ պէսպէս դժնդակ ճգնութիս ։ Եւ այնչափ խիստ է դժնէութի նց, զի սակս ամ թեթև յանցանաց կալել զյանցաւորն՝ կախեն զբազկաց 'ի վր ծառոյ, զոր նախ գտանեն 'ի ճնպհի ․ և թողուն զերկելին յայն անտանելի տանջանս, մինչև 'ի պակասել զօրութե բազկաց, և անկանիլ 'ի վայր ը̅ զառ'իվայրս լերին, ը̅ որ գահավէժ թաւալել 'ի ժայռէ 'ի ժայռ, քանզի խաղաւ մարմին նր ․ և այնպէս չարաման կորնչի ։ Այլ որ առաւել դժնդակ է՝ ոչ ոք 'ի բազմութէ անտի ուխտաւորաց, որ տեսանէ զայն աղէտ դառնութե, իշխէ բնաւ նշան ինչ ցաւոյ և կարեկցութե ցուցանել ․ թէ-

պէտ

պէս և մերձաւոր ազգակից, կմ՟ հայր կմ՟ որդի իւր իցէ դատապարտեալն. ապաթէ ոչ՝ անդէն վճռելի և զնա 'ի նոյն օրինակ տանջանս մատնեն անօրէն քուրմք. որք թուէին դեռ մարմնացեալք, քն՟ թէ մարդիկ հողեղէնք:

'Ի կէսն ճնպ՟հորդութե՟ հասանեն 'ի դաշտ մի, ուր քուրմք հրամայեն ամ՟ն նստիլ 'ի գետնի՝ խաչաձև ամփոփել զբազուկս առ լանջօք, և զերեսս եդեալ 'ի վր՟ ծնգաց. որ է սովորական դիրք մարմնոյ ճնաբռնացուց յաղօթելն, և մնան այնպս՟ կծկեալ ը՟ ժամս 24 լուռ, անսասան և անշարժ ամենևին. զի թէ ոք դէթ առ փոքր մի շարժեսցի, շարաչար հարուածի 'ի քրմաց անտի, որք շրջին զնովօք. և այնպս՟ առնեն դքննութե՟ խղճի մտաց, պատրաստելով զանձինս 'ի խոստովանութի՟ ամ՟ մեղաց, զոր զկնի վերջին ուխտագնացութե՟ գործեալ են: Յետ այնորիկ վերստին ելանեն 'ի ճնպ՟հ, և անցեալ զլեառն լեռնային, հասանեն 'ի լեառն կմ՟ 'ի ժայռ մի մեծ և բարձր, որ թուէր յամպս հասանել: 'Ի գլուխ այնր ապառաժուտ լերին, ուր է բուն ուխտատեղի նց՟, գոյ երկաթի ձող երկայն, զորմէ կախեալ կայ երկաթաթ կշիռ մեծ. 'ի մի կողմն նր՟ դնեն զուխտաւորս մի առ մի. իսկ 'ի միւսն հաւասարակշիռ ծանրութի՟, և երկայնել զձողն հանդերձ կշռորդաւ, ձգեն արտաքս. և մնայ տառապեալ ուխտաւորն կախեալ 'ի վր՟ անդնդախոր վհի. որոյ տեսութին եւեթ ահարեկ և մահաթափ առնէ. և անտի բարձր ձայնիւ մի առ մի խոստովան լինի ըզմեղս. և իբրև աւարտէ հանեն զնա, և զայլ ոք դնեն 'ի տեղի նր՟ կարգաւ մինչև 'ի վերջինն: Բայց 'ի պատմելն զմեղս քուրմք արեան նց՟ ծարաւիք՝ ամ՟ զգուշութբ՟ ուշադիր լինին. և եթէ տեսցեն զոք, զի ոչ յայտնի սպառ, այլ ջանայ ծածկել, կմ՟ նուազեցուցանել, ցնցեն զձողն, և ընկենուն զեղկելին 'ի վհն՟ անդր 'ի կորուստ:

Իբրև ամ՟քն անցանեն ը՟ այս վտանգ մահաբեր, յայնժամ քուրմք առեալ զնս՟, որք մնան կենդանի, ածեն 'ի տաճար զաքայ չքնոյն. ուր կայ ոսկեձոյլ արձան նր՟ հսկայաձև, և շուրջ զնովաւ այլ բազմապատիկ կուռք մեծամեծք և մանունք. և անդ մատուցանեն նմ՟ զերկրպագութի՟: Եւ կացեալ 'ի լերին անդ աւուրս 25, շրջին յայլ և այլ ուխտատեղիս. ապա առեալ հրաման 'ի քրմաց, տալով նց՟ առատ պարգևս, ամ՟քն 'ի միասին երթան յայլ տաճար մի. և անդ եւ կատարեալ զուխտ իւրեանց՝ առնեն խրախութի՟ մեծ.

և մեկնել 'ի միմեանց, այլ իւրաքանչիւր դառնայ 'ի տուն իւր է ճնա՟պհ է որ կամի. և ոչ է այն դժոխային ճնա՟պհ է որ ածաւ 'ի քրմաց :

Իսկ եր՟րդ աղանդ Ճեաբօնացւոց զհետ երթայ վարդապետութե՟ն կօնփուտիոսի հռչակաւոր օրէնսդրի չինաց : Հետեւօղք նր՟ Սինտօսեանք կոչին. և պահեն զկանոնս փիլիսոփայից, զորս առեն հիմնեալ 'ի բնական օրէնս : Զուներն կուռս, ոչ մեհեանս, և ը՟ս ասելոյ ոմանց՝ և ոչ կրօնս բնաւ. այլ գլխովին անկրօն են և անա՟ծ. թէ՟պտ սալմօն ոչ հաւանի այսմ. ա՟պ և ոչ կօնփուտիոսի լինել անա՟ծ. զի չէ մարթ առէ միաբանել անա՟ծութե՟ն է այնց դերազանց օրինաց, զորս նա գրեաց. և զի ս՟ք եւս զնորայն ունին օրէնս. վ՟սյ ոչ ընծայեմ առէ զհաւանութի՟ն ն՟ց, որք անա՟ծս ասեն զոսսա, եթէ սուրբագոյն ապացուցիւ ոչ հաւաստեսցեն : Սակայն վ՟կայութի՟ն ս՟ց չէ հեռի յանա՟ծութե՟է. քզի զԾս գտեն 'ի յաւիտենից. և զմարդ և զանասուն գործ բնութե՟ն՝ արտադրել յերկնից և յերկրէ. յորոց մին արարող է, իսկ միւսն կրօրող. և թէպէտ գտեն զէակ մի անմարմին և մտաւոր, զոր և ասեն կառավար Ծի, այլ ոչ արարիչ նր՟. յորմէ երեւի թէ եղական համարին զնա և սահմանաւոր. վ՟սյ և ոչ ա՟ծ, ուստի և ոչ իսկ պաշտեն զնա. այլ զա՟մ բարիս յոր վայելեն՝ ե՟կնից, ք՟ր ազդեցութե՟ն երկնային լուսաւորաց և երկրի ընծայեն : Զգերագոյն կատարելութի՟ն և զլրումն ա՟մ բարեաց և երջանկութե՟ն՝ գտեն 'ի համձուն և 'ի բերկրութե՟ն, զոր ունի հոգին 'ի վարել առաքինի վարս. և ուսուցանեն, թէ մարդ բանաւոր գոլով, պարտական է գործել զառաքինութի՟ն, և բանիւ վարելով՝ տարորոշել զանձն յանբանից : Իսկ կանոնք վարուց ն՟ց են այսոքիկ : Ատնել զարդարութի՟ն և զիրաւունս ա՟մյն : Սիրով և իմաստութե՟բ կառավարել զհպատակս, վայելչապէս և շնորհալի քաղաքավարել. ազատ խիղճ մտաց ունել. ք՟ր առ ոչինչ օրէնս կա՟մ կրօն կա՟մ պաշտօն կալել. (որ է իսկական անա՟ծութի՟ն) և սիրտ անկեղծ : Ս՟ք վայելուչ և գերազանց գործ համարին զփորովլի երթալ առ ազատելոյ զանձն 'ի վատանուն մահուանէ կա՟մ 'ի ձեռաց յաղթական թշնամւոյ :

Այս աղանդ 'ի նախնումն ընդարձակեալ էր յոյժ որ և փոյթ մեծ ունէր ծաղկեցուցանել զարհեստս և զգիտութիւնս 'ի Ճեաբօն, վ՟սյ ըս՟մք 'ի ժողովրդենէ զհետ երթային նմ՟ : Այլ զկնի հալածանաց, որ յարուցաւ ընդդէմ քրիստոնէից՝ կարի նուաղեցաւ և խանգարեցաւ :

ցաւ : Քանզի որովհետեւ հետեւողք նր̃ ոչ պաշտեն կուռս, կարծիս ունին զնչէ լինել 'ի ծածուկ քրիստոնեայ կմ̃ հակամէտ 'ի քրիստոնէութեն • վ̃յ հրաման առաքիկ եւ 'ի վ̃ր նց̃ ունիլ կուռս 'ի տունս իւրեանց, եւ ցուցանել զնմ̃ գրացեայ, որք պարտական են վեկայել առաջի դատաւորաց վ̃ն նց̃ • այլ եւ սեղանս 'ի մատուցանել 'ի վ̃ր նց̃ խունկս կաց : Պատմի թէ յանցել դարու իշխանն սխսենայ եւ խնալայ այր իմաստասէր՝ ձեռն էարկ զայս աղանդ անդրէն յառաջին պայծառութի̃ն դարձուցանել: Նմին իրի հրամնեաց դպրոց մեծ, զոր եւ ճոխացոյց բզ̃մ ազատութե̃ք • եւ կացոյց 'ի նմա սրս իմաստունս • կամեցեալ խելամուտ առնել ժողովրդեան թէ զխմրդ ծիծաղական է եւ առասպելական գենն կռապաշտութե̃ • կմ̃ յայտնի ասացից՝ կամէր խափանել անկրօնս եւ անմտս առնել զնս̃ • այլ ոչ կարաց կատարել՝ զոր կամէր • քանզի քուրմք երկրին ամբաստան եղեն զնմէ առ ինքնակալն, զոր եւ այնչափ զայրացուցին ընդդէմ նր̃, զի թէ չէր ամաչարել հրաժարել յիշխանութե̃ իւրմէ, թողել զայն որդւոյ իւրում, չարախօսաւոր մահու կորնչէր : Սակայն տակաւին գտանին անդ բզ̃մք 'ի սոյն աղանդոյ, մանաւանդ 'ի մէջ մեծամեծաց • բայց առ երեւոյթս պաշտեն զկուռս :

'Ի վեշտասաներ̃րդ դարուն ծագեցաւ լոյս աւետարանին քս̃ի 'ի Ճապոն • եւ 'ի սուղ ժմկի ոչ սակաւ տարածեցաւ : Քանզի յամի փրկչին 1540 երիտասարդ մի Ճապոնացի հասել 'ի Գօա քղք հնդկաց՝ ընկալաւ անդ զքրիստոնէական հաւատս 'ի ձեռն փորդուքալացի հարց յիսեանց • եւ ը̃ն իւրում հայրենասէր բարուց ցանկանալով եւ զհայրենին ծ̃ իւր բաժանորդ առնել այնմ մեծի շնորհի • յորդորեաց ըզփորդուքալս առաքել 'ի Ճապոն նաւ մի իբրեւ 'ի պտ̃ճս վճռականութ̃ե • յոր եմուտ եւ ինքն եւ ամենք 'ի հարց յիսեան կարգի : Սոքա 'ի ձեռն ժրաջան եւ անխոնջ աշխատասիրութե̃ 'ի սուղ ժմկի զբզ̃մս 'ի Ճապոնացւոց անուն աշակերտեցին 'ի քս̃ : Այլ առաւել բազմացաւ անդ թիւ հաւատացելոց յամի 1549 'ի հասանել անդր սբ̃յն Փրանկիսկոսի քսաւերեան առաքելաշնորհ առն • որոյ վաստակք շնորհօք տն̃ արդիւնաբեր եղեն, զի երեք կուսակալք ճ̃ պունկօյայ, արիմայ եւ մուրայ հաւատացեալ 'ի քս̃, հրետակս արձակեցին առ պապն հռոմայ գրիգոր ժգ̃ մատուցանել նմ̃ զհնազանդութե̃ 'ի դիմաց իւրեանց: Այլ բռնաւորութիւն չարանախանձ թշնամի ամ̃ բարեաց բեաց, փութով արկ ը՟դէմ արգելս գեղեցիկ յառաջադիմութե՟ ք՟նական հաւատոյ. յարուցե՟լ հալածանս 'ի վ՟ր քրիստոնէից. որում ը՟ պատմելոյ հոլանտացւոց՝ փորդուքալք ետուն պտ՟ճառս: Զի ասեն, թէ իբրեւ օր ը՟ օրէ բազմանայր թիւ հաւատացելոց, փորդուքալացի քարոզիչք սկսան քարոզել, թէ եկեղեցականք ոչ են ը՟ իրաւութբ՟ Ճական իշխանաց. յոր կեմփեր հոլանտացի յաւելու եւ զամբարտաւանութե՟ եւ զագահութե՟ փորդուքալաց. եւ զօշաքաղութե՟ ոմանց քարոզչաց. յորմէ կարծիս էառ Ինքնակալն, թէ փորդուքալք այսու հնարիւն անդրէն նորոգել զառաջին մարմնաւոր իշխանութե՟ն տայիրին, զոր նորոգ կորուսե՟լ էր. յափշտակելով 'ի ձեռաց իւրոց զթգ՟րական իշխանութե՟ն: Բայց փորդուքալք այլազգ պատմեն. եւ պնդեն՝ թէ զայսպիսի սուտ կարծիս զինքեանց՝ հոլանտացիք սերմանեցին 'ի միտս իշխանացն Ճէաբօնայ. զի ատելի արարե՟լ զն՟ն յաչս ն՟ց, ինքեանք միայն կալցեն զվաճառականութե՟ն Ճէաբօնայ. այլ եւ առ ժամս ատելութե՟ն, զոր կրէին ը՟դէմ հռովմայ աթոռոյն, տեսեալ զՃէաբօնացի քրիստոնեայս խոնարհիլ 'ի հնազանդութե՟ նր՟: Այլ զիարդ եւ իցէ. յամին 1586 ել հրաման սաստիկ 'ի դայիքօ Ինքնակալէն Ճէաբօնայ զի մի ընաւ քարոզեսցի յան՟ սահմանս տէրութե՟ իւրոյ քրիստոնէական հաւատք. եւ համօրէն քարոզիչք իսպառ տարադիր լիցին անտի. եւ մի եւս իշխեսցեն փորդուքալք եւ սպանիացիք ածել անդ քհ՟նյս. միանգամայն սաստիկ պատուէր ետաւ ամ՟ նախարարաց եւ ք՟ղքապետաց քաղցրութբ՟ եւ բռնութբ՟ դարձուցանել զժղ՟վդ իւրեանց անդրէն յառաջին օրէնս կռապաշտութե՟. եւ յայսմանէ սկսաւ հալածումն եւ խոշտանգանք քրիստոնէից:

Յետ ամաց ինչ պատահեցան եւ այլ դիպուածք, որք եւս առաւել բորբոքեցին զհրդեհ հալածանաց: Զի պատմի թէ եպ՟ս ոմն փորդուքալացի 'ի 1596 պատահե՟լ 'ի Ճ՟նիգ՟հի՝ միում 'ի կուսակալաց Ճէաբօնայ, որ մեծահանդէս շքով երթայր յարքունիս, ոչ կացոյց զկառս իւր 'ի մատուցանել նմ՟ մեծարանս, ը՟ սովորութե՟ երկրին. թէպ՟տ եւ աղդ արարին նմ՟. այլ էանց առ 'նովաւ եւ գնաց զճ՟ն՟պհ՟ իւր, ոչինչ նշան յարգութե՟ ցուցե՟լ նմ՟. ը՟ որ անհնարինս սրտմտեալ իշխանին՝ հատոյց յականջս Ինքնակալին, արհամարհութե՟ համարելով զայն Ինքեան: Եւ եւս ը՟ այն ժմ՟կս ձեռն արկին քրիստոնեայք շինել եկեղեցի 'ի Մեաքօ աթոռանիստ ք՟ղքի տայիրին, ոչ անսացե՟լ խոր-

հըր

հրդոյ ոմանց խոհական հարց քարոզչաց , որք խրատէին զն՟ս 'ի բաց թողուլ զայն շինուած յայնպիսում դառն ժմկի , յորում հալածումն տարածէր 'ի վ՟ր կայր քրիստոնէից ։ Հասին 'ի նմին ժմկի եւ այլ քարոզիչք ոմանք սպանիացիք 'ի Ֆրանկիսկեան կարգէ առաքեալք իբրեւ դեսպան յիշխանէն մանիլայի սպանիացւոյ . եւ ը՟դդէմ յայտնի հրամանի ինքնակալին հրապարակաւ քարոզէին զքրիստոնէութի՟ 'ի փողոցս մէյաքօայ ։ Եւ ահա այս ամ՟ դիպուածք իսպառ տարակոտոր արարին զքրիստոնէութի՟ 'ի Ճեաբօնայ . զի այնուհետեւ ը՟ ամ՟ տեղիս եւս ք՟ զեւս վառեցաւ բորբոքեցաւ հրդեհ հալածանաց . եւ ծովացաւ երկիրն Ճեաբօնայ անմեղ արեամբ քրիստոնէից . զորս ազգի ազգի դժնդակ խոշտանկանօք եւ դառն տանջանօք անողորմ կոտորէին . յորում անցուցին զպաղանութի՟ հռովմէական կայսերաց ։

'ի նոյն հալածանս ը՟ բնիկ Ճեաբօնացիս՝ կոտորեցին եւ զա՟մ փորդուգալացի եւ սպանիացի ք՟հնյս , զորս գտին . բայց վաճառականաց փորդուգալաց խնայեցին , առ 'ի հաղորդել ը՟ նմ՟ զառեւտուրս վաճառուց . զի ոչ կամէին զրկել 'ի զնչ՟ն իրաց անտի , զորս փորդուգալք տանէին անդր ։ Նմին իրի 'ի 1635 շինեցին վաճառատեղի 'ի տեսիմայ կղզին հանդէպ նանկասագ ք՟ղքի , եւ ետուն զայն 'ի բնակութի՟ փորդուգալաց . արգելեալ նց՟ չմտանել 'ի նանկասագ ք՟ղք ։ Այլ յետ սակաւուց եւ անտի տարագրեցան իսպառ 'ի ձեռն մատնութե՟ , զոր արարին հոլանտացիք ։

Զի մերձ 'ի սարն բարեյուսոյ կալան նւ՟ք զնաւ մի փորդուգալաց եւ գտին 'ի նմ՟ թուղթ առաքեալ առ թգ՟րն փորդուգալաց 'ի գլխաւոր գործակալէ նց՟ որ 'ի Ճեաբօն . որ ազգաւ Ճեաբօնացի էր , այլ կրօնիւ քրիստոնեայ ։ Ասէ կեմփեր թէ 'ի նմին թղթի յայտնի գրեալ կայր ծածուկ միաբանութի՟ եւ դաշնադրութի՟ Ճեաբօնացի քրիստոնէից ը՟ փորդուգալս առ 'ի բառնալ զինքնակալն . եւ թգ՟րեցուցանել զոք 'ի քրիստոնեայ իշխանաց անտի Ճեաբօնացւոց . դրեալ էր եւս թէ դեռ ոչ հասին նաւք եւ զօրք խոստացեալք 'ի փորդուգալայ . յիշէր յանուանէ եւ զիշխանս միաբանեալս յայն դաշնադրութի՟ ։ Զայն գիր հոլանտացիք իբր միմիայն միջնորդ 'ի գլուխ տանելոյ զբազմաժմկեայ մախանս , զոր կրէին ը՟դդէմ փորդուգալաց , վաղվաղակի հասուցին 'ի ձեռս իշխանին նանկասագ ք՟ղքի ։ Ասէ թէ ը՟ այն ժմկս կալան Ճեաբօնացիք եւ զայլ գիր մի , զոր նա ինքն գործակալն առաքէր առ փորդուգալս որք էին 'ի Մէակօ ք̃ղքի: Վ̃ս վ̃կցնի հրամանեաւ իշխանն Նանկասակեայ 'ի բանս արկանել զգործակալն. և թէպէտ նա համարձակ և ազատադէմ ասէր և ուրանայր թէ չէ իւր գրել. ոչ և փորձութեանք ուրանային. սակայն ասի թէ 'ի կնքոյն և 'ի տարազու գրոյն ստուգեցին նորայն լինել. ուստի և դժնդակ տանջանօք սպանին զգործակալն. և անդառնալի վճռով յաւէժաբար տարագրեցին անտի զփորձութեալս և զայլ ամ̃ ազգս քրիստոնէից, բաց 'ի հոլանտացւոց:

Եւ այնուհետեւ դարձեալ բորբոքեցաւ հրդեհ հալածանաց, դարձեալ սկսան յաճախել նորանոր տանջանարանք, և անխնայ կոտորած քրիստոնէից. որոց ասել է թէ զուր տարապարտուց մեռանին, քաջալերեալ զանձինս, միաբանեցան ամ̃քն, զէն առին, գունդ կազմեցին, ելին 'ի ճակատ ը̃դդէմ զօրաց ինքնակալին. յառաջնումն անդ զգունդ մի ստուար կռապաշտից խորտակեցին. այլ յերկրորդում պ̃տզմի, որ ը̃ սալմօնի՝ երկարեցաւ աւուրս երիս, յորում էր և ինքնակալն անձամբ, 'ի պարտութե մատնեցան քրիստոնեայք. իսկ ապրեալքն 'ի նց̃է դիմեալ ամրացան 'ի բերդն Սխամպարայ. ուր անպարտելի քաջութբ պաշտպանէին անձանց, մինչև բանադատեցաւ ինքնակալն խնդրել օգնութե 'ի դօքեպեքերայ վերակացուէ վճ̃ռկանութե հոլանտացւոց 'ի Ֆիրանտօ. և նր̃ վ̃կցնի հասեալ անդր միով արքունի նաւաւ (զի յայնժամ՝ մի միայն նաւ հոլանտացի գտանէր անդ) սկսաւ չարագոյն ևս ք̃ զբուն կռապաշտ ճեապօնացիս մարտնչել ը̃դդէմ քրիստոնէից, աւուրս հնգետասան անխոնջ ռմբաձիգ լեալ 'ի բերդ անդր, մինչև քանդեալ կործանեաց. և զքրիստոնեայս ամրացեալս 'ի նմա իսպառ սպառ կոտորեաց: Եւ այնու բարձաւ և իսպառ անհետ եղև 'ի Ճեապօնայ երկրպագելի անունն յի̃ք̃ի 'ի մշտնջենաւոր նախատինս հոլանտացւոց. որք 'ի վարձ այսպիսի արագալուր հնազանդութե խնդրոյ ինքնակալին՝ ակնունէին միանգամայն ժառանգել զամ̃ ազատութիւնս և զարտօնութիւնս և զճոխութիւնս. յորոց՝ 'ի ձեռն մատնութե խաբեանց, կողոպտեցան փորձութեալք:

Այլ վրիպեցան 'ի յուսոյ. զի թէպէտ թոյլ տուաւ նց̃ առնել անդ վճ̃ռկանութիւնս, բայց առ ժամայն ետուն քանդել 'ի հիմանց զվճ̃ռնոց նց̃, զոր նորոգ շինեալ էին 'ի Ֆիրանտօ 'ի կոփածոյ քարանց. վ̃ս զի թուական փրկչին մերոյ քանդակեալ կայր 'ի վ̃ր. և փո-

փոխադրեցին զնս՟ 'ի տէսիմայ փոքրիկ կղզի, որ տըճեալ էր փորդուքալաց: Եւ փն՟կ ը՟արձակ ազատութեանց, որոց ակնունէին, զնղ՟ն կապանք եդան 'ի վ՟ր նց՟ հանդերձ անարգալից պայմանօք. զորս ահա 'ի վեր անդր 'ի ճառս վաճառոյն ճեաբօնայ յիշատակեցաք. յորոց ըս՟ հն՟րկաց համբաւոյ՝ մին էր այս. զի ուրասցեն զքս՟. և առ ոտս կոխեսցեն զնր՟ խաչն: Բայց կեմփեր հոլանտացի յորժամ գտաւ 'ի ճեաբօն, ամ՟ խնամով փոյթ կալեալ ստուգել զայս յայլ և այլ գրուածոց և 'ի ծերոց ճեաբօնայ. այլ ոչ ինչ կարաց գտանել. բայց միայն զայս. թէ հոլանտացիք ասէին թէ չեմք քրիստոնեայք, այլ հոլանտացիք, կմ՟ չեմք քրիստոնեայք ոպ՟ զփորդուքալս և զսպանիացիս: Եւ նա խոստովանի թէ իսպառ անհետ առնէին, ոպ՟ և այժմ 'ի հասանել անդ, անհետ առնեն զամ՟ արտաքին նշանս քրիստոնէութե՟. որ՟ առնուլ 'ի բերան զանուն յս՟ի քս՟ի. առնել աղօթս ը՟ սովորութ՟ քրիստոնէից. պահել զօր կիւրակէի. ը՟դէմ դառնալ կմ՟ գէթ տհաճութե՟ ցուցանել 'ի լսել զհայհոյութիս ը՟դէմ ա՟ծն մերոյ ևն՟. և զի միանգամայն ասացից՝ ամ՟ իրօք ցուցանել զանձինս ոչ քրիստոնեայս, կմ՟ յայտնի անհաւատ ձեւանալ. որ ոչ ինչ ը՟հատ է 'ի յայտնի ուրացութե՟. կմ՟ առ ոտս կոխելոյ զնր՟ խաչն:

Այլ մեք դարձցուք անդրէն 'ի կարգ բանից մերոց: Յետ այսոց վերջին հարուածոց քրիստոնէից, կամեցե՟լ ճեաբօնացւոց անաղարտելի արգելս դնել ը՟դէմ քրիստոնէութե՟ 'ի չմտանելն միւսանգամ յշխ՟ իւրեանց, դիւաշունչ խորհրդով դժոխային օրէնս հաստատեցին: Քանզի ամի ամի 'ի վերջին ամսեան տարւոյ վերակացուք ամ՟ թաղից հանդերձ առնեն բնակչաց թաղի իւրեանց. գրելով 'ի ցուցակի զանուն, զհասակ, զտեղի և զօր ծննդեան, զարուեստ և զաղանդ բնակչաց իւրաքանչիւր տան, և ապա յերկբորդում աւուր նոր տարւոյ շրջին տանէ 'ի տուն. ունելով ը՟ իւրեանս և երկու դահիճս. որք բարձե՟լ տանին զերկրպագելի պատկեր խաչելութե՟ փրկչին մերոյ. և զա՟ծամօր կուսին, և ըս՟ ցուցակին մի առ մի յանուանէ կոչելով զամ՟ բնակիչս տան, հրամայեն նց՟ առ ոտս կոխել զայն ս՟ր պատկերս, մինչև ցնորածին մանկունս, զորս մարք նց՟ կալեալ 'ի գիրկս դնեն զոտս նց՟ 'ի վ՟ր ս՟ր պատկերացն. Ո՛վ դժոխային ամբարշտութե՟. ապա տանուտ՟ր տանն զկնիք իւր դրօշմէ 'ի վ՟ր ցուցակին 'ի հաստատութե՟ վկայութե՟, թէ այն հրաման կատարեցաւ 'ի տան իւրում: Զայս ա-

վը

վարութ՟ն գիւտահնար Ճէաբօնացիք եէֆումի կ՟մ Ճէֆումի կոչեն. որ թարգմանի պատկերակոխութ՟ն. որ և է հանդիսական ուրացութ՟ն քրիստոնէական հաւատոց. և ապա զցուցակն զայն հանդերձ կնքով համօրէն տանուտերց տանին առ քղ՟քապետն: Սալմօն ասէ թէ զայս հանդիսական գործ ուրացութ՟ն ոչ առնեն ը՟ն ամ՟ տեղիս Ճէաբօնիայ, այլ միայն 'ի Նանկասագ քղ՟քի և 'ի գ՟ւռս Օմուրայ և Պունկայ, ուր առաւելագոյն ծաղկեցաւ քրիստոնէական կրօնն: Սակայն թուի թէ 'ի սկզբան անդ ը՟հանուր էր սակս գլխական ատելութ՟ն, զոր ունէին ը՟դէմ քրիստոնէութ՟ն, և վ՟ս առաւել ապահովութ՟ն, առ 'ի չիմանալոյ յանկեան ուրեք հետք քրիստոնէից:

Այս հրդեհ հալածանաց, որ երկարեցաւ ը՟ ամս իբր հարիւր և առաւել, 'ի սկզբան անդ սաստիկ էր յոյժ. զի որք միանգամ հրաժարէին 'ի կոխելոյ զ՟րբ պատկերս զայնոսիկ, կ՟մ զայլ ինչ նշան քրիստոնէութ՟ն ցուցանէին, վղ՟ղկի 'ի տանջանս մահու մատնէին. և եթէ 'ի տան ուրուք ըմբռնէին զոք 'ի քրիստոնեայ քհ՟նյից, զքհ՟նյն և զընտանիս տանն դատն տանջանօք սպանանէին. միանգամայն և զդրացիս դժնդակ պատժօք պատուհասէին, սակս ոչ մատնելոյ զլինել քրիստոնեայ քհ՟նյի 'ի տան դրացւոյ իւրեանց: Այլ զկնի ժմկց 'ի փոփոխել ինքնակալաց Ճէաբօնիայ, առ փոքր փոքր մեղմացաւ խստութ՟ն հալածանաց. և այնուհետև զորոց կարծիս քրիստոնէութ՟ն առնուին, 'ի մշտնջենաւոր բանտս արկանէին 'ի Նանկասագ քղ՟քի. զայն բանտ Ճէաբօնացիք կօքուրա կոչեն. այս է՝ գժոխք. զի որ միանգամ անդ արկանի. չունի այնուհետև յոյս ազատութ՟ն երբէք: Պատմէ Կեմփեր, թէ յիւրում ժմկի, որ չէր իսկ հեռի 'ի վերջին հալածանաց աստի, էին ը՟ մք 'ի Ճէաբօնացւոց 'ի բանտի անդ ը՟ այլ չարագործս, սակս քրիստոնէութ՟ն. որ ը՟ այն ժմկս էր յանցանք քրէական մեծ ք՟ զայլ ամ՟ եղեռնական ոճիրս: Իսկ այժմ լուաք թէ առաւել և ևս զիջեալ մեղմացաւ այն խստութ՟ն հալածանաց ը՟դէմ քրիստոնէից, մինչև մատնել անդ և քհ՟նյից, բայց 'ի ծածուկ ամենևին. վ՟յ թուի թէ այժմ գտանին անդ քրիստոնեայք: Այսչափ ինչ վ՟ս կրօնից Ճէաբօնիայ և վ՟ս այլոց ը՟հանուր հանգամանաց ն՟ր. արդ նշանակեսցուք յառաջիկայդ զբաժանումն գ՟ւռաց ն՟ր:

ԺԷ. Բաժանումն Ճէաբօնայ:

Տէրութիւն Ճեաբօնայ 'ի բազմապատիկ գաւառս բաժանի. որք պարփակին յերիս մեծամեծ կղզիս. որք են Նիփոն, որ մեծ է քան զայլս, յորմէ բոլոր ազգն առնու զանունն. Գիւսիւ կամ Գիուսիւ. և Սիգօգ կամ Սայգօֆ և Փօսմա: Առ սոքիմբք երեւք մեծամեծ կղզեօք կան սփռեալ և այլ բազմապատիկ մանր կղզիք. յորոց ոմանք ապառաժուտ են և անբերք. այլք արգաւանդք բարեբերք և բազմամարդք: Մխաւն կամ մանաւուն ինքնակալն Ճեաբօնացւոց բաժանեաց ըզտէրութիւն յեօթն մեծամեծ նահանգս. որպէս 'ի հինգ նահանգս Նիփոնի, որք են Թօգայտօ. Թօսանտօ. Ֆօգուա, կամ Բօգգուատօղ. Սանինտօ. Սամյօտօղ. և յերիս կղզիս. որք են Գիւքասիւ. Սիքօք, և Աւաճի. բայց երկու յետինքդ զմի նահանգ կացուցանեն: Այլ յետոյ 'ի 681 դենմու ինքնակալն բաժանեաց զհամօրէն տէրութիւն 'ի 66 նահանգս կամ գաւառս իւրաքանչիւրոց մի մի փոխարքայս կամ կուսակալս կարգեալ. յորս յաւելեալ և զերկու կղզիս ղՕքի, կամ Իքի. և զՉուսիմա, կամ Իտուսիմա. զոր երկերիւր ամօք յառաջ առին Ճեաբօնացիք 'ի գորէացւոց: Վերջոյ համօրէն տէրութիւն Ճեաբօնացւոց բովանդակի 'ի 68 կուսակալութիւնս. որք յետոյ զկնի տիրելոյ Ճեաբօնացւոց և այլոց տեղեաց՝ բաժանեցան 'ի 104 փոքրիկ գաւառս: Արդ՝ կամեցեալ յայսմ վայրի ստորագրել զայս Ճ, 'ի նախակարգեալ բաժանմանց կալցուք զմիատնեան բաժանումն:

* * *

Նիփօն կղզի:

Այս կղզի որ է գլխաւոր 'ի կղզեան Ճեաբօնայ. և մեծ քան զամենայն կղզիս նորա բաժանի 'ի հինգ նահանգս, որոց վերագոյնդ նշանակեցաք. զորս յառաջիկայդ ստորագրեսցուք:

Յօդ Ա. Թօգայտօ:

Թօգայտօ նշանակէ երկիր հարաւոյ. և պարունակէ հնգետասան գաւառս 'ի 68. կուսակալութեանց անտի Ճեաբօնայ. որք են:

Իկա, կմ Իսիւ : Որ է երկնի ջերմագին, այլ ոչ այնչափ բերրի · զի բաց 'ի խոտոց ինչ, որք են 'ի պէտս դեղորէից, և պտղաբեր, և անպտուղ ծառոց, այլ ինչ նշանաւոր բերս ոչ ունի · որ և բաժանի 'ի չորս փոքրիկ վիճակս :

Իսէ, կմ Սէյսիւ : Այս գւռ գրեթէ ըստ բոլորին պատեալ է 'ի ծովու · երկայնութիւն նր է իբրև երից աւուրց ճնպհ արգաւանդ է և բարեբեր, և զուարճալի 'ի պատճառս բազմապատիկ գեղեցիկ բլրոց :

Սիմա, կմ Սիսիւ : Է փոքրիկ տարածութիւն երկրի իբրև կէս աւուր ճնպհ · չոր և անբեր, այլ 'ի ծովեզերեայ կողմանս ունի ձուկն, և ազգի ազգի ծովային խխունջս առատ :

Օվարի, կմ Պիսիւ : Զգի 'ի ներքսակողմն կղզւոյն · և է մի յառաւել արգաւանդ և 'ի բազմամարդ գաւառացն ճէպօնայ · երկայնութիւն նր է իբրև երից աւուրց ճնպհ · և բաժանի 'ի 9 փոքրիկ վիճակս :

Միկավա, կմ Միկիւն : Այս գաւառ անբեր է և աղքատ · լի են 'ի նմ հեղեղատք, փոքրիկ գետք, և լճացեալ ջուրք · երկայնութիւն նր է իբրև միոյ աւուր ճնպհ · և է բաժանել 'ի 8 փոքրիկ վիճակս :

Թօթօմի, կմ Ենսիւ : Կարի արգաւանդ է, փարթամ և զուարճալի · ունի բազում գեղեցիկ բլուրս, և գետս կարկաջահոսս, և ահանակիսս · և հովիտս, և դաշտս արգաւանդս · գեղեցիկ քաղաքս, և գեօղս · երկայնութիւն նր է ճնպհ երկուց աւուրց և կիսոյ · և բաժանի 'ի 18 վիճակս :

Սուրունկա, կմ Սինսիւ, արգաւանդ է, և զուարճալի · ունի բլուրս գեղեցիկս, և դաշտս արգասաւորս, և ջրկքս ըղձմն, և գեօղս · մեծութիւն նր գրեթէ է ըստ չափոյ նախընթաց գաւառին · և բաժանի 'ի 7 փոքրիկ վիճակս :

Գայիսիւն, կմ Քօսիւն · դաշտային է · բերէ որեզ առատ · և խոտս բժշկականս, և ծառս · ունի արօտս խոտաւէտս · և անասունս բազումս, մանաւանդ երիվարս · երկայնութիւն նր իբրև երկուց աւուրց ճնպհ · և բաժանի 'ի 4 վիճակս :

Իզումօ, կմ Թօսիւն : Է երկայն ցամաքակղզի ոչ այնչափ ինչ բերրի · զի լեռնային է, սակայն ուրեք ուրեք ունի դաշտավայրս · որք բերեն որեզ · ունի և աղ առատ · և ձուկն : Երիս վիճակս ունի 'ի ցամաքին, այլև երկուս 'ի կղզիս մօտաւորս :

Սակամի, կմ Սօսիւն, դաշտային է, բայց չէ այնչափ ինչ արգասաւոր : Ունի ձուկն առատ, և կրիայ · և խեցգետին. այլև փայտ բազում՝ 'ի պէտս շինուածոց. և բաժանի 'ի 8 վիճակս:

Մուսաշի, կմ Պուշիու: Այս գաւառ մեծ է քան զամ նախընթաց գաւառս. զի երկայնութն նր է հնգօրեայ ճնպհ. դաշտային է. և արգաւանդ. այլ չունի անտառս փայտի: Եւ բաժանի 'ի 12 վիճակս: Անդ է Յեդով արքայանիստ մայրաքաղաքն համօրէն Ճապօնայ:

Աւա, կմ Ֆօօշու: Է գաւառ անշուք և ամայի. զի բնակիչք նր սակաւ են. ունի լերինս և բլուրս, և դետս բզմս. ուրեք ուրեք և դաշտային տեղիս, որք բերեն որիզ, և զայլ արմտիս, և ձուկն բազում. զոր որսան 'ի մերձակայ ծովէն: Երկայնութն նր է միոյ աւուր ճնպհ. և բաժանի 'ի 4 վիճակս:

Կազուսա, կմ Քօշու. լեռնային է և ապառաժուտ, ոստի և անբեր: Մեծագոյն մասն բնակչաց նր կտաւագործ են. որք գործեն կտաւս 'ի կանեփոյ, և նաւաւ դարմանեն զկեանս. և բաժանի 'ի 11 վիճակս:

Փիթաչ, կմ Սէյօլ: Այս գաւառ մեծ է, և քառակուսի, երկայն եռօրեայ ճնպհ, նոյնչափ է և լայնութն: Չէ այնչափ ինչ արգաւանդ. բայց մետաքս բզմ բերէ. յորմէ բնակիչք նր գործեն պէսպէս կերպաս և բաժանի 'ի 11 վիճակս. յորոց ոմանք կղզիք են:

Սէօսա, կմ Սէնօսա. լեռնային է, ունի անտառս բզմս. և ազգի ազգի թռչունս. երկայնութն նր է եռօրեայ ճնպհ. և բաժանի 'ի 15 վիճակս:

Այս ամ գաւառք միանգամայն՝ ամի ամի պտղաբերեն. իբրև 3 միլիոն. երկու հարիւր չորեքտասան հազար քառ. ցորենոյ:

Յօդ Է. Թոսանտօ:

Թոսանտօ. նշանակէ լեռնային երկիր արևելեան. և պարագրէ ութն գաւառս, որք են:

Օօմի: Է գաւառ արգաւանդ. ունի լերինս, և բլուրս, և դետս, այլև դաշտս պարարտս և բերրիս, որք բերեն ցորեան, որիզ, և այլ արմտիս առատ յոյժ, որ Ը ամից ճապօնացւոց Է միոյ բերեն հազար: Երկայնութն նր է եռօրեայ ճնպհ և կիսոյ. և բաժանի 'ի 13 վիճակս:

Մինօ, կմ Քօշու, գրեթէ չէ ինչ ընդհատ յառաջնոյն, գեղեցկութ դրիցն, և արգասաւորութ երկրին.

րին․ Երկայնութ՟ն ն՟ր է եռօրեայ ճ՟նպհ․ և բաժանի 'ի 18 վիճակս:

Սինանօղ, կմ՟ Սինանօ: Այս գ՟ւռ ցրտային է, որ հեռի գոլով 'ի ծովէն, ձուկն և աղ սակաւ ունի․ նոյնպէս և անասունք ն՟ր սակաւ են, 'ի պատճառս նուազութ՟ն արօտոյ: Սակայն բերէ թթենի և մետաքս բ՟զմ․ նոյնպ՟ս և կանեփ, և վուշ․ յորոց պէսպէս ձեռագործս առնեն բնակիչք ն՟ր: Երկայնութ՟ն ն՟ր է հնգօրեայ ճ՟նպհ․ և բաժանի 'ի 11 վիճակս:

Քօզուքէ, կմ՟ Ձեօսիւ: Այս գ՟ւռ ջերմ է․ և գլխաւոր բերք ն՟ր են թթենիք․ բայց մետաքս ն՟ր չէ այնչափ լաւ․ վ՟ն և կերպասն, զոր գործեն անդ ոչ է 'ի համարի: Երկայնութ՟ն ն՟ր է չորեքօրեայ ճ՟նպհ․ և բաժանի 'ի 14 վիճակս:

Սիմօձուքէ, կմ՟ Եասիւ: Այս գ՟ւռ դաշտային է, և արգաւանդաւոր․ բերէ ցորեան, ոլոռ, և այլ ազգի ազգի սերմանիս առատ․ ունի և արօտս անասնոց խոտաւէտս: Երկայնութ՟ն ն՟ր է երից աւուրց և կիսոյ ճ՟նպհ և բաժանի 'ի 9 վիճակս:

Մուցին, կմ՟ Օշիւ: Այս գ՟ւռ մեծ է քան զամ՟ գ՟ւռս Ճեաբօնայ․ զի երկայնութ՟ն ն՟ր է վեշտասան աւուրց ճ՟նպհ․ և արգաւանդ․ և այլոց ունի զամ՟, որ ինչ կարեւոր է 'ի պէտս քաղաքական կենաց: Յառաջագոյն 'ի միասին է՟ հետագայ տեղւո գաւառիդ՝ ունէր իւր սեփական հրամանատար իշխան, այլ այժմ բաժանեալ է 'ի 54 կմ՟ 55 վիճակս:

Տէվա, կմ՟ Ուսիու: Ի գ՟ւռ մեծ․ երկայն հնգօրեայ ճ՟նպհ․ ունի արօտս բ՟զմս․ և անտառս բազմածառս․ և ազգի ազգի պատուական բոյսս: Ասեն թէ գաւառն սկսանի անդէն 15 աւուրբք յա՟ռջ քան զայլ տեղիս: և բաժանի 'ի 12 վիճակս:

Ըստ հին ցուցակաց, կմ՟ հաշուէից բերք այսց ութ գաւառացս համաձէին 93 միլիոն վեց հարիւր երեսուն և երկու հազար քոռ ցորենոյ․ այլ այժմ ասեն թէ աւելեա՟լ է յոյժ:

Յօդ է՟․ Ֆօգու, կմ՟ Ռոգուտօւլ:

Անուանի Յեգօս․ Ռոգօտօղ․ նշանակէ երկիր հիւսիսային․ և պարունակէ զեօթն հետագայ գ՟ւռս: Վագասա, կմ՟ Սագուքիւ: Ի գ՟ւռ փոքրիկ՝ կիսոյ աւուր ճնպհ ընդ երկայնութ առ ափն ծովու'ի հիւսիսակողմն. ուստի և ունի ձուկն բզմ, և խեցգետին, և կրիայ. և այլ խեցեմորթս. այլ և բովս երկաթոյ. և բաժանի 'ի 3 վիճակս :

Եօդէօզէն, կամ Իչիօփու. Հարաւային կողմն նր լեռնային է. իսկ հիւսիսայինն դաշտային, և արգաւանդ. ունի արօտս խոտաւէտս. և անասունս բզմս. բերէ կանեփ առատ, և մետաքս, և որիզ : Երկայնութն նր է եռօրեայ ճնպհ. և բաժանի 'ի 12 վիճակս :

Գանկա, կամ Գաքիու : Է երկիր բարի, և արգաւանդ. բերէ որիզ առատ յոյժ. գործեն անդ քացախ, պատուական, զոր Սագի, և Եօյա կոչեն, որով և բզմ տուրևառութիւն առնեն. ունի և գործարանս կերպասուց. երկայնութն նր է երկուց աւուրց և կիսոյ ճնպհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Նօտօ, կամ Սէշիու : Է ցամաքակղզի, որ ունի բովս երկաթոյ, և ձուկն առատ. այլ երկիր նր անբեր է. ցորեանն, և այլ արմտիք անագան ուրեմն ժամանեն անդ 'ի հունձս, քան յայլ տեղիս : Երկայնութն նորա է երկուց աւուրց և կիսոյ ճանապարհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Եէդչիու, կամ Քօյշիու : Այս գւռ կարի արգաւանդ է. բերէ ցորեան. և այլ արմտիս առատ յոյժ. անդ շինեն խեցեղէն անօթս 'ի մասնաւոր լաւն կաւոյ, որք ընդ ամ տեղիս 'ի յարգի են. ունի և փայտս 'ի պէտս շինուածոց. Երկայնութն նր է եռօրեայ ճնպհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Եէդչիգօ, կամ Դէշիու : Այս գաւառ լեռնային է. մանաւանդ 'ի հարաւային կողմանս իւր, բայց արգասաւոր է. բերէ մետաքս. և կանեփ. Երկայնութն նր է վեցօրեայ ճնպհ. և բաժանի 'ի 7 վիճակս :

Համօրէն այս գւռք, հանդերձ Սատօ կղզեաւ, որ է մի 'ի գւռաց սորին նահանգի, զոր ստորև ունիմք ստորագրել, ամի ամի բերեն իբրև միլիոն մի և հինգ հարիւր երեսուն և վեց հազար քօու ցորենոյ :

Յօդ Է. Սանինտօ :

Սանինտօ. Նշանակէ լեռնային երկիր հիւսիսոյ. պարունակէ զութն հետագայ գւռս :

Դօմպա, կամ Դամպա, կամ Դանշիու : Այս գւռ թէպէտ չէ կարի արգաւանդ. բայց և ոչ այնչափ անբեր.

բեր · գլխաւոր բերքն նր՟ են ցորեան, որիզ, լուսլեաս · այն է՝ ֆասուլեայ · և այլ արմտիք · այլև փայտ ՚ի պէտս հրոյ: Երկայնութիւն նր՟ է երկուց աւուրց և կիսոյ ճնպհ · և բաժանի ՚ի 6 վիճակս ։

Գաւլօ: Այս գ՟ւռ բերէ մետաքս · և կանեփ բմբ՟ · ունի և ձուկն առատ՝ գոլով ծովեզերեայ: Երկայնուն նր՟ է միոյ աւուր և կիսոյ ճնպհ · և բաժանի ՚ի 5 վիճակս :

Դաւիմա · գրեթէ յամի նման է նախընթաց գ՟ւռիդ · բայց միայն ըս՟ տարածութն փոքր մի մեծ է ք՟ զնա · զի երկայնութիւն նր՟ է երկօրեայ ճնպհ · և բաժանի ՚ի 8 վիճակս :

Խմաղա, կմ՟ Խնոխա: Այս գ՟ւռ հաւասար է Դաւիմա գ՟ւռին մեծութ՟բ, և արգասաւորութ՟բ · գործեն անդ բմբ՟ մետաքսեայ կերպասս, այլ խոշորս · և բաժանի ՚ի 7 վիճակս:

Փօգէ, կմ՟ Փագաանի. Այս գ՟ւռ թէպէտ չէ այնչափ ինչ արգասաւոր · սակայն բերէ չափաւոր ցորեան · մետաքս · և կանեփ · ունի և գործարանս պէսպէս ձեռակերտաց: Երկայնութիւն նր՟ է երկուց աւուրց և կիսոյ ճնպհ · և բաժանի ՚ի 6 վիճակս:

Գաստամօ, կմ՟ Ոնոխա: Է լերաւ ցամաքակղզի, ունելով շուրջանակի զծովն գօրկոյ · և է արգաւանդ յոյժ, բերէ ազգս ազգս արմտեաց առատ, և ծառս, և խոտս ՚ի պէտս դեղօրէից · ունի և արօտս անասնոց: Անդ գործեն պէսպէս խոշորանիւթ կերպասս: Երկայնուն նր՟ է երկուց աւուրց և կիսոյ ճնպհ · և բաժանի ՚ի 10 վիճակս :

Իոշաֆ, կմ՟ Սէֆէխոխա: Այս գ՟ւռ չէ այնչափ ինչ արգասաւոր · գլխաւոր բերք նր՟ է կանեփ · ունի և աղ · այլ սակաւ: Բնակիչք նր՟ կրկնապատիկ հարկս տան իշխանին նր՟: Երկայնուն նր՟ է երկօրեայ ճնպհ · և բաժանի ՚ի 5 վիճակս:

Տարեկան բերք հանդերձ օդի կղզեաւ, որ է մի ՚ի գ՟ւռաց նր՟, բերէ յամին եօթանասուն և ինն հազար քոռ ցորենոյ:

Յօդ Ե · Սամիոտոլ ·

Սամիոտոլ · որ նշանակէ լեռնային, կմ՟ ջերմ երկիր հարաւային · և բովանդակէ յութն հեռադեայ գաւառս :

Ֆարիմայ, կմ՟ Պանսիւ: Այս գ՟ւռ արգաւանդ է. ունի առատապէս զա՟մ, որ ինչ կարևոր է կենաց մարդկան. այլև գործարանս մետաքսուց ձեռագործաց. ոպ՟ կերպասուց, թղթոյ, և չուխայի: Երկայնութիւն նր՟ է երից աւուրց և կիսոյ ճանապարհ. և բաժանի 'ի 14 վիճակս:

Միմասագա, կմ՟ Սագուսիւ. Թէպէտ չէ այնչափ ինչ արգասաւոր, սակայն ունի չափաւորապէս, որչափ ինչ հարկաւոր է 'ի պէտս բնակչաց իւրոց. պտուղ բազում բերէ. որ̄ և ազգի ազգի խոտս 'ի պէտս դեղօրէից: Այս գ՟ւռ 'ի մէջ ա՟մ գ՟ւռացն Ճապօնայ յաւէտ պատսպարեալ է 'ի հողմոց: Երկայնութիւն նր՟ է եռօրեայ ճ՟նպհ. և բաժանի 'ի 8 վիճակս:

Պիզէն, կմ՟ Պիսիւ. Ջերմ է, և չափաւորապէս արգասաւոր. մետաքս բազում բերէ. պտուղք պարտիզաց նր՟ վաղագոյն հասանեն, քան այլոց մերձակայ գ՟ւռաց: Երկայնութ՟ն նր՟ է եօթն աւուրց ճ՟նպհ. և բաժանի 'ի 11 վիճակս:

Պիտչիւ, կմ՟ Ֆիշին: Է գ՟ւռ փոքրիկ, այլ պատուական և բարեբեր յոյժ. ցորեան, և կանեփ կարի դիւրագին են անդէն: Երկայնութ՟ն նր՟ է կիսոյ աւուր ճ՟նպհ. և բաժանի 'ի 9 վիճակս:

Պինկօ, կմ՟ Ֆինսիւ. Թէպէտ չէ այնչափ առատաբեր. ոպ՟ նախընթաց գ՟ւռդ. բայց բերէ ըստ բաւականին ցորեան, և որիզ: Երկայնութ՟ն նր՟ է երկուց աւուրց ճ՟նպհ. և փոքր մի աւելի. և բաժանի 'ի 14 վիճակս:

Ակի, կմ՟ Կէսիւ: Այս գաւառ լեռնային է, և չոր. գլխաւոր բերք նր՟ են փայտ 'ի պէտս շինուածոց. զի ունի անտառս յոլովս. և ազգի ազգի սունկս. որ է մանթար. բերէ և աղ. և ցորեան, և որիզ, և այլ սերմանիս. այլ սակաւ: Երկայնութ՟ն նր՟ է երկօրեայ ճ՟նպհ. և բաժանի 'ի 8 վիճակս:

Սադօ: Ունի պատուական արօտս անասնոց. և բանջարս 'ի կերակուր մարդկան. և 'ի ծովեզերեայ կողմանս նր՟ ազգի ազգի ձկունս, և պէսպէս ծովային խեցեմորթս: Երկայնութ՟ն նր՟ է եռօրեայ ճ՟նպհ. և բաժանի 'ի 8 վիճակս:

Նակատօ, կմ՟ Դօսիւ: Է արգասաւոր յոյժ. զի բերէ կրկնապատիկ առաւել, ք՟ որչափ ինչ բաւական է 'ի պէտս բնակչաց նր՟: Երկայնութ՟ն նր՟ է երկուց աւուրց և կիսոյ ճ՟նպհ. և բաժանի 'ի 6 վիճակս:

Տարեկան մուտք այսր նահանգի է երեք միլիոն մի և եօթն հարիւր երեսուն և հինգ հզ՟ր քոռ ցորենոյ:

Յօդ Է. Գիւսիւ ։

Այս կղզի է մի յեօթն Տաց, կմ՟ նհ՟նգացն Ճեաբօնայ, որ կոչի և Սայգայտօ. և նշանակէ ընդարձակ տարածութիւն արեւմտեան ծովեզերեայց. բաժանեալ յինն գաւառս ։

Չիգուգուէն ։ Այս գւռ՟ չափաւորապէս արգասաւոր է, բերէ ցորեան, որիզ, և այլ արմտիս ։ Ունի գործարանս, ուր գործին անբաւ անօթս պատուականս յախճապակեայս ։ Եւ բաժանի ՚ի 24 վիճակս ։

Չիգուգօ ։ Է գւռ՟ մեծ, և արգաւանդ, բերէ ցորեան և որիզ. և զայլ արմտիս առատ ։ ՚Ի ծովեզերեայ կողմանս իւր ունի և ձուկն առատ, և խեցգետին, որ այն ինքն է ըստախօզ, և այլ ծովային խեցեմորթս ։ Բզմ՟ քաղցրեղէնս՝ որ է ըռէչէլ, գործեն անդ, և առաքեն յայլ գւռս՟ ՚ի վաճառ ։ Երկայնութիւն նր՟ է հնգօրեայ ճնպհ՟. և բաժանի ՚ի 10 վիճակս ։

Պուզէն ։ Այս գաւառ անուանի է վս՟ ազգի ազգի բժշկական խոտոց իւրոց ։ Անդ գործեն պէսպէս մետաքսեայ պատուական կերպասս. յորոց յոլովք գնան յարքունիս իբրև մաքս ։ Երկայնութիւն նր՟ է չորեքօրեայ ճնպհ՟. և բաժանի ՚ի 8 վիճակս ։

Պունկօ ։ Չէ այնչափ ինչ արգասաւոր, բերէ թթենիս. և կանեփ. և խոտս բժշկականս. ունի և գործարանս չուխայի ։ Երկայնութիւն նր՟ է եռօրեայ ճանապարհ. և բաժանի ՚ի 8 վիճակս ։

Ֆիզէն ։ Այս գւռ՟ թէպէտ չէ այնչափ ինչ բերրի. այլ ունի ձուկն առատ. և թռչունս վայրենիս. այլև բզմ՟ գործարանս չուխայի ։ Բոլոր շրջապատ նր՟ է իբրև հնգօրեայ ճնպհ՟. և բաժանի ՚ի 11 վիճակս ։

Ֆիկօ ։ Փայտ բազում ունի ՚ի պէտս շինուածոց, և հրոյ. ունի և ցորեան. և այլ արմտիս, և ձուկն. որչափ ինչ բաւական է բնակչաց ։ Շրջապատ նր՟ է եռօրեայ ճնպհ՟. և բաժանի ՚ի 14 վիճակս ։

Դիւկօ, կմ՟ Նիշիու ։ Այս գւռ՟ այնչափ բերս բերէ, որ հազիւ բաւական է կարևոր պիտոյից բնակչաց, զի զմեծ մասն նր՟ գրաւեն ապառաժուտ և անբեր լերինք ։ Երկայնութիւն նր՟ է եռօրեայ ճնպհ՟. և բաժանի ՚ի 5 վիճակս ։

Օսում, կմ՟ Կուշու. Թէպէտ փոքր է, սակայն արգաւանդ, և լիացեալ ամ՟ կարևոր պիտոյիւք. մանաւանդ

Ծոքայնոք : Անդ գործեն թուղթ բմ̃բ. և մետաքսեայ կերպաս :

Սալսամա, կամ Սադօնա. չէ այնչափ ինչ արգասաւոր. գլխաւոր բերք նո̃ր են թթենիք, և կանեփ. գործեն և անդ չուխայ սակաւ, բայց ազնիւ, և բաժանի 'ի 14 վիճակս :

Մուտք համօրէն ինն գաւառացս այսոցիկ յամին հասանեն յերկու միլիոն հարիւր և տասն հազար քսացորենոյ :

Յօդ Է. Սիքօք. և Աւատսի, կամ Աւօատսի կղզիք :

Այս երկու երեւելի կղզիք կացուցանեն զեօթներորդն, կամ նահանգն Ճէապօնոյ. որք միանգամայն կոչին և Նանգայտօ. որ նշանակէ երկիր հարաւային. ը̃ որս է և մեծ գաւառն անուանեալ Գինօգունի. որ է հարաւային գլուխն Ճէապօնոյ. և բաժանին 'ի 6 հետագայ գաւառս :

Գինօգունի, կամ Գինքիու : Այս գաւառ թէպէտ գաւառային է, բայց անբեր, չունի ոչ պտուղս, և ոչ արմտիս. յերից կողմանց պատեալ 'ի ծովու : Բոլոր շրջապատ նո̃ր է երեք չորեքօրեայ և կիսոյ ճանպ̃հ. և բաժանի 'ի 7 վիճակս :

Աւաճի, կամ Աւատսի : Այս կղզի անբեր է. թէպէտ ունի ձուկն, և աղ, այլ այնչափ ինչ, որ հազիւ բաւական է բնակչաց իւրոց. գործեն անդ և չուխայ խոշոր : Երկայնութի̃ նո̃ր է իբրև միոյ աւուր ճանպ̃հ. և բաժանի 'ի 2 փոքրիկ վիճակս. ը̃ նովաւ են և երկու կղզիքն անուանեալք Մուսիմա. և Տէսիմա :

Աւա, կամ Աւօնօ : Այս գաւառ դիրեթէ ը̃ բոլորին լեռնային է. ուստի և ոչ այնչափ արգասաւոր. բայց ունի արօտս և անտառս. և ազգի ազգի թռչունս : Երկայնութի̃ նո̃ր է իբր երկօրեայ ճանպ̃հ. և բաժանի 'ի 9 վիճակս :

Սանուքի, կամ Սանուսիու. Ունի բազում հեղեղատս, լերինս, և դաշտս արգասաւորս, որք բերեն ցորեան, օրիզ և զայլ արմտիս առատ : Անուանի է գաւառս այս առ Ճէապօնացիս վ̃ս երեւելի արանց, որք ը̃ ժամս ժամս ելին անտի : Երկայնութի̃ նո̃ր է երեքօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 11 վիճակս :

Իէօ, կ՟մ Գօսի : Այս գ՟ւռ ը՟ մասին աւազուտ է, և ը՟ մասին արգաւանդ․ և բերէ որիզ, կանեփ, թթենիս 'ի պէտս շերամոյ․ և պէսպ՟ս բոյս բժշկականս : Երկայնութիւն նր՟ է երկօրեայ ճ՟նպհ․ և բաժանի 'ի 14 վիճակս :

Դօսա, կ՟մ Դօնսա : Արգաւանդ է յոյժ, բերէ ազգի ազգի արմտիս առատ․ ունի և պտուղս, և փայտ 'ի պէտս հրոյ և շինուածոյ, և զայլ ամ՟ ինչ, որք հարկաւոր են մարդկային կենաց : Երկայնութի՟ն նր՟ է ը՟ չափու նախընթաց գաւառիդ․ այլ լայնութիւն է իբրև 'ի կէս նորա :

Տարեկան բերք այսց վեց գաւառաց ժամանէ ցյիսնաւուն հազար քոռ ցորենոյ :

Յօդ Ը․ Գլխաւոր քաղաքք Ճեապօնայ :

Թէպէտ բազմապատիկ ք՟ղքս ունի Ճեապօն, ո՟չ 'ի վեր անդր նշանակեցաք․ այլ ք՟զի Յադիրք՝ զորս ունէաք 'ի ձեռս բայց 'ի գլխաւոր ք՟ղքաց ինչ նր՟, զորս հարևանցի ի՟մն յիշատակեն՝ զայլոց ինչ ոչ խօսին, կ՟մ զի չունին զծանօթութի՟ն ինչ զն՟ցէ, և կ՟մ զի չկայր ինչ 'ի նո՟ յիշատակաց արժանի : Վ՟յ և մեք զնոցայն յիշատակեսցուք ևեթ յայսմ վայրի առաջին դիցուք համառօտիւ․ յորս գլխաւորքն են վեց․ զորս Ճեապօնացիք վ՟ն փարթամութեան, մեծութեան և բազմամարդութեան արքայականս կոչեն :

ՅԵԴՈՎ, կ՟մ Եէդօ : Է այժմ գլխաւոր և առաջին մայրաք՟ղք համօրէն տէրութեան Ճեապօնայ, աթոռ ինքնակալին նր՟ և բազմաթիւ իշխանաց և մեծամեծաց․ մեծ և բազմամարդ և բազմավաճառ․ և շտեմարան արուեստից և անհամար արուեստաւորաց․ կառուցեալ իբր ը՟նդ 35 աստիճանաւ և 30 րոպէիւ հիւսիսային լայնութեան առ դունկուս կ՟մ դօնքաւ գետով․ որ անցեալ ը՟ մէջ ք՟ղքին, գնայ անկանի 'ի ծովն ը՟ հինգ առաջս․ ուր և ձևացուցանէ նաւահանգիստ մեծ և պատուական : 'Ի վ՟ր այսր գետոյ են բազմապատիկ կամուրջք մեծաշէնք, յորոց մին, որոյ երկայնութիւն է իբր 42 կանգուն՝ երևելի է․ զի է միջակէտ հն՟րկաց, յորմէ չափին ճ՟նպհք և հեռաւորութիք տեղեաց համօրէն տէրութ՟ն Ճեապօնայ : Երկայնութի՟ն ք՟ղքիս է իբր 35 մղոն կ՟մ ը՟ այլոց՝ միոյ աւուր ճանապարհ. լայնութիւն իբրեւ 25. իսկ բոլոր շրջապատն 100: Եւ է անպարիսպ. այլ փոխանակ պարսպաց ունի բազում խրամս խորայատակս. և առ նոքօք հողակերտ թումբս մեծամեծս ամրակառոյցս և ծառալիցս: Իսկ թիւ բնակչաց բազում յոյժ, ըստ ոմանց առաւել քան զերիս միլիոնս. այլ ձեւ քաղաքին անկարգ. զի առ սակաւ սակաւ շինեցաւ. և շինուածք տանց նորա անշուք գետնայարկ ցածունք, և ըստ մեծի մասին փայտակերտք սակս սաստիկ գետնաշարժութեան. արտաքուստ ծեփեալ կաւով. և 'ի ներքուստ պատեալ ծաղկենկար թղթովք. և ներքին անջրպետք սենեկաց բոլորովին թղթեղէնք. իսկ յարկք նոցա մանր տախտակօք կամ շերտիւք ծածկեալ: Եւ զի յաճախ պատահէ անդ հրդեհ, սակս փայտակերտ շինուածոց նորա. վասն այնորիկ ամենայն տուն պարտական է ունել մշտապատրաստական յառաստաղ անդր տանն տակառ մի մեծ լի ջրով. և զամենայն գործիս կարեւորս 'ի շիջուցանել զհուր: Այս պատրաստութիւն այն բաւական է շիջուցանել զհուր միոյ մասնաւոր տան, այլ 'ի սաստկանալ հրդեհին՝ այնուհետեւ ոչինչ օգտէ, վասնզի յայնպիսի ժամս չունին զայլ հնար դադարեցուցանել զճարակ հրոյն, բայց եթէ կործանելով զմերձակայ տունս. զի մի հրոյն գտեալ ճարակ եւս քան զեւս տարածեսցի: Յայն սակս պահապանք հրդեհից մաշկահանդերձ եւ բազմաթիւ զցայգ և զցերեկ շրջին ընդ փողոցս քաղաքին, ունելով երկաթի գործիս 'ի քանդել զմերձակայ շինուածս ուր պատահեն հրդեհք: Այս հրկիզութիւնք թէպէտ մնաս բազում բերեն բնակչաց, բայց միանգամայն և նորոգեն և վայելչացուցանեն զքաղաքն, և կանոնաւորեն զփողոցս նորա, զի փոխանակ առաջնոց թիւրաթեկ և անկարգ փողոցաց. շինեն փողոցս ուղիղս և կանոնաւորս. որք գրեթէ ուղղանկիւն հատանեն զմիմեանս:

Յամենայն թաղս նորա լի են մեհեանք կռոց մեծամեծք և մանունք. և մենաստանք քրմաց և միանձանց դիւաց: Այլեւ բազում մեծամեծ ապարանք իշխանաց և մեծատանց՝ որոշեալք 'ի հասարակ տանց շրջափակ պարսպօք և մեծաշէն դրամբք, որք ունին առաջի աստիճանս կանոնաւորս և վայելուչս. այլ բովանդակ միայարկ են, թէպէտ առ փոքր մի բարձր 'ի գետնոյ. և 'ի ներքուստ բաժանեալք 'ի բազում բնակարանս զարդարեալս մեծագին զարդու: Բայց գլուխ ամենայն շինուածոց քաղաքիս են արքունիք ինքնակալին կառուցեալ գրեթէ ընդ մէջ քաղաքին. ձեւ նորա է բոլորակ՝ այլ անկանոն. և շրջապատն իբրեւ 15 մղոն. բովանդակեալ յերիս մեծամեծ դղեակս , որք շրջապատեն զմիմեամբք . և պարսպօք և խրամօք որոշին 'ի միմեանց . առ դուրս իւրաքանչիւրոց կարգեալ կան բազմութի̃ պահապանաց : Առաջին դղեակն ը̃արձակ է յոյժ , որ շրջապատէ զեր̃կդն՝ և զմասն ինչ եր̃դին , որ և այնչափ ճն̃պհս ունի և խրամս ջրալիցս և անջուրս , զի կեմփեր ոչ կարացեալ ըմբռնել զդիրս նց̃ , առ ճշգրտիւ գծագրելոյ 'ի թղթի : Յայսմ մասին բնակին ստորին կարգի իշխանք և պաշտօնեայք ինքնակալին՝ հանգերձ իւրեանց ընտանեօք : Եր̃կդն փոքր է ք̃ զառաջինն . և է յանդիման եր̃դին , բաժանել̃ յերկոցունց եւս բարձր պարսպօք և խրամօք և շարժական կամրջօք : Ունի բզ̃մ հոյակապ և չքնաղազարդ ապարանս 'ի բնակութի̃ գլխաւոր իշխանաց տ̃րութեն , արքունի խորհրդականաց , և նախապատիւ պաշտօնէից , և ամ̃ մեծամեծաց . որոց պաշտօնն այս է̃ միշտ առընթեր ինքնակալին գտանիլ : Իսկ եր̃դն , զոր տէրապէս արժան է կոչել արքունի ապարանք . զի անդ է բնակութի̃ ինքնակալին և կանանց և որդւոց նր̃՝ է 'ի բարձրագոյն վայրի ք̃ զառաջինսն . շրջապատեալ քարաշէն ամրակուռ պարսպօք . ուր և բովանդակ շինուած ապարանից է 'ի մեծամեծ որձաքար կոփածոյ վիմաց շարայարելոց առանց մածուցիկ կրոյ , և առանց խիղբս երկաթիս ագուցանելոյ 'ի միջի առ 'ի հաստատութե̃ . զի 'ի լինել սասանութե̃ երկրի , տեղի տայցեն միմեանց քարինքն :

Յերկուց կողմանց ունի երկու փոքրիկ դղեակս ամրակուռս , որք են բնակարանք որդւոց արքայի . և ը̃ մէջ ապարանից աշտարակ քառակուսի՝ բարձր ք̃ զայլ շինուածս 'ի բզ̃մ յարկս բաժանել̃ . և այնպէս զարդարուն , զի 'ի հեռուստ զբոլոր շինուածն շքեղ և հոյակապ երևեցուցանէ : Իսկ 'ի ներքս անդ են բնակարանք , դահլիճք և սրահք մեծամեծք . և անհամար սենեակք մեծաշուք զարդարեալք . առաստաղք գերանք և սիւնք առհն̃րկ են 'ի սակաւագիւտ մեծագին և անփուտ փայտից . որոց երանգք բնաւ̃ս ձևացուցանեն ծաղիկս , և այլ զն̃չն նորաձև պատկերս և նմանութի̃ս . իսկ 'ի յատակս սենեկաց և սրահից սփռել̃ կան ճարտարահիւս սպիտակ փսիաթք ոսկեհիւս վերջաւորօք զարդարել̃ք : Անդ է և դանձատուն արքունի գանձուց . որոյ դրունք պղնձի են . և առաստաղն երկաթի 'ի պաշտպանութն յերեսաց հրոյ : Պատմեն , թէ յարքունիս անդ է շինուած ինչ գետնափոր , յորոյ վ̃ր ջուր անցանէ . անդ՝ յորոտալն երկնից՝ խոյս տուեալ թաքչի ինքնակալն. Ք՟ղն Ճեաբօնացիք համարին թէ ը՟ այնչափ թանձրութ՟ որոց չէ հնար թափանցել շանթից երկնից. յորմէ երկնչին յոյժ:

Ոչինչ կարի հեռի 'ի ք՟ղքէ աստի 'ի տեղի մի կոչեցեալ Ունզէն, ուր կարգեալ կայ խումբ զօրաց 'ի պահպանութեան, կեմփեր՝ յերթալ իւրում ը՟ դեսպանին հոլանդացւոյ 'ի յեդով՝ ետես անդ հինգ մատուռս. և յիւրաքանչիւրսն մի մի քուրմս, որք զարհուրելի ձայնիւ գոչէին. միանգամայն և հնչեցուցանէին փոքրիկ զանգակս. և ամ՟քն՝ որք ը՟ այն անցանէին՝ արկանէին դրամս 'ի մատուռս, և առնուին 'ի քրմաց անտի թուղթս. զոր կապեալ ը՟ քար, ընկենուին 'ի մերձակայ լիճ անդր Ցայկօնա կոչեցեալ: Եհարց կեմփեր պատճառ այնր օտարոտի գործոյ. և ասացաւ նմ՟, թէ 'ի լճի անդ 'ի մասնաւոր ինչ տեղւոջ, զոր Ճեաբօնացիք Սայնօկ Կաւարա կոչեն, է քաւարան մանկանց, որք մեռանին մինչչև են հասեալ յեօթներորդ ամ հասակի. և տանջին անդ, մինչև 'ի ձեռն աղօթուց ծնդ՟հորդաց ազատեսցին: Իսկ 'ի թուղթսն, զոր ընկենուին 'ի լիճն, գրեալ կային անուանք ա՟ծոց և դից նց՟. և ասացաւ նմ՟ թէ յորժամ սկսանին ջնջիլ այն անուանք, թեթևանան 'ի տանջանաց հոգիք մանկանց. իսկ յորժամ բոլորովին անհետ լինին գըրուածքն, յայնժամ և մանկունք ազատին 'ի պատառ:

Մէակօ, կամ Միակօ. զոր Ճեաբօնացիք առասական անուամբ առ 'ի պատիւ՝ կոչեն Քէօ, որ թարգմանի Ք՟ղք. իբր զի գոլով աթոռ տայիրին կամ մեծի քահանայապետի իւրեանց, համարեալ է մայրաք՟ղք համօրէն տէրութ՟ Ճեաբօնայ. ուր և էր յառաջագոյն՝ յորժ՟ տայիրն ը՟ հաւասար իշխանութ՟; ունէր և զինքնակալութ՟ն աշխարհական: Է ք՟ղք մեծ բազմամարդ և բազմավաճառ յոյժ մինչև համարիլ իբրև հն՟րկաց շտեմարան վաճառացն Ճեաբօնայ. կառուցեալ յեամեթթօ կամ եամաթսիրօ գ՟ւռի յը՟արձակ դաշտավայրի, որ շրջապատեալ է դալարագեղ բլրովք և լերամբք. և ոռոգեալ ակնակիտ վտակօք ջուրց: Երկայնութ՟ ք՟ղքին է իբր 3 մղոն. և լայնութիւն 2. 'ի սկիզբն անցեալ դարու ունէր տունս աւելի քան 100000. իսկ թիւ բնակչաց նր՟ ը՟ր հաշուէին, որ արարաւ նոյնպէս 'ի սկիզբն անցեալ դարու, զոր յիշատակէ տէլահարբէ, էր աւելի ք՟ 600000. թող զպաշտօնեայս տայիրին, որք բզ՟մ են յոյժ. և զօտարականս, որք յաճախեն անդ յամ՟ կողմանց Ճեաբօնայ.

նայ. վ՟զի մինչ իբր միլիոն մի մարդկան գտանին անդ: փողոցք ն՟ր ը՟ մեծի մասին նեղ են, այլ կանոնաւոր և երկայնաձիգ. իսկ շինուածք տանցն ցածուն և փայտակերտ. որմունքն ծեփեալ կաւով ը՟ սովորութ՟ տանց յեւրոպայ. որք և ը՟ յեւրոպացւոց՝ ունին միշտ պատրաստական ջուր և գործիս կարևորս 'ի շիջուցանել զհրդեհս: Են անդ և բ՟զ՟մ հոյակապ և ը՟արձակ ապարանք մեծամեծաց, և անհամար մեհեանք կռոց. և մենաստանք դիւանուէր միանձանց: Այլ յամ՟ շինուածս երևելի են ապարանք տայիրին, կառուցեալ 'ի հիւսիսային կողմն ք՟ղ՟քին. որ է մեծ և ը՟արձակ յոյժ. զի պարփակէ զթաղ մի ողջոյն. և ունի 'ի ներքս բ՟զ՟մ շինուածս մեծամեծս, յորս բնակին իշխանք և պաշտօնեայք ն՟ր. և երկոտասան կ՟մ երեքտասան պողոտայս պարսպօք և խրամօք որոշեալս յայլոց մասանց ք՟ղ՟քին: Իսկ յարևմտեան կողմն քաղաքին է դղեակ մեծաշէն բովանդակ 'ի կոփածոյ քարանց, ուր իջևանի ինքնակալն, յորժամ գայ յայցելութն տայիրին: Յայս ք՟ղ՟ք մեծապէս ծաղկեալ են արհեստք. ուր գործեն ազգի ազգի ոսկեթել դիպակս. պէսպէս արուեստաշէն ձեռակերտս ոսկիս և արծաթիս և յայլոց հրաշալելեաց՝ մ՟ն՟ւ՟նդ պողպատեայս. և թիթեղս ընտիր. և ամ՟ տեսակս զինուց. և այլ զն՟ն ձեռակերտս:

Օզաքա: Է ք՟ղ՟ք մեծ բազմամարդ և բազմավաճառ 'ի հարաւոյ արևմտից Միաքոնի 'ի գեղեցիկ դաշտավայրի՝ մերձ 'ի ծովն առ. ափն կ՟մ Իոտօկաւա կոչեցեալ գետով. որոյ մի մասն խառնեալ ը՟ այլոց երկուց գետոց, մտանէ 'ի ք՟ղ՟քն. և անդ բաժանի 'ի բ՟զ՟մ առուակս դրեթէ ը՟ ք՟ղ՟քն ողջոյն. 'ի մեծ դիւրութե՟ բնակչաց ն՟ր. ուր և 'ի բ՟զ՟մ տեղիս կառուցեալ կան կամուրջք պատուականք: Բազմամարդ է յոյժ. զի թէ ճշմարիտ է այն՝ զոր ասեն Ճէաբօնացիք, կարող է լինել 'ի բնակչաց նորոց հանել 80000 զօրս պ՟տ՟րզմականս, յայտ է թէ թիւ բնակչաց ն՟ր բ՟զ՟մ է յոյժ: Դիրք այսր ք՟ղ՟քի կարի յարմարաւոր է վ՟ճ՟ռկանութե՟ ը՟ ջուր և ը՟ ցամաք. վ՟զի լինին 'ի նմ՟ մեծամեծ վաճառականք, արհեստաւորք և գործաւորք. և ամ՟ ինչ դիւրագին է անդ՝ ոչ միայն հարկաւորքն, այլև որք 'ի դիւրութե՟ են 'ի զուարճութե՟ և 'ի փափկութե՟. յայն սակս Ճէաբօնացիք կոչեն զնա տեսարան զուարճութեց. ուր խուռն ընթանան մեծամեծք Ճէաբօնայ յամ՟ կողմանց 'ի վայելել 'ի զուարճութիս:

Նանկասաք: Է քաղաք մեծ բազմամարդ և բազմավաճառ.

ձառ. և մի 'ի հնգից ծովեզերեայ վաճառատեղեաց տէրութեն Ճենաբօնայ . կառուցեալ 'ի գլուսիւ կմ̃ սայգօգ կղզի 'ի Փիտան գ̃ուրի առ ափն ծովու յանբեր վայրի 'ի մէջ ակապացեալ ժայռից և բարձրաբերձ լերանց ը̃ 32 աստիճանս և 36 րոպէիւ լայնութե̃ ։ Զունի շուրջանակի պարիսպս , ո̃պ և մեծ մասն այլոց քաղաքաց Ճենաբօնայ . և ոչ բերդ և ոչ այլ ինչ ամրութի̃ ։ Բնակիչք նր̃ ը̃ առաւել մասին են արհեստաւորք և բեռնակիրք խառն ը̃ այլոց խառնաղանճ անուայ ժողովրդոց . իսկ վճ̃ռկանք մեծատունք սակաւք գտանին անդ ։ Ունի նւ̃հնգիստ մեծ և պատուական , ուր խարիսխս արկանեն և օտարազգիք ք̃ հոլանտացիք և չինացիք ևեթ . զի նոցա միայն թոյլ տուեալ է առնել վճ̃ռկանութի̃ 'ի Ճենաբօն . բայց ը̃ բազմապատիկ ծանր ծանր պայմանօք . յորոց մի է և այս . զի յայս նւ̃հնգիստ ևեթ կարող լինին մտանել . և եթէ նաւ ինչ նր̃ վարեալ 'ի մրրկաց կմ̃ յայլ ինչ դիպուածոց անկցի յայլ տեղի Ճենաբօնայ , մի̃ իշխեսցէ ոք բնաւ 'ի նաւէ անտի ելանել 'ի ցամաք . այլ 'ի դադարել վաճառքին , նոյնժամայն ելեալ գնասցէ 'ի նւ̃հնգիստ առաջնորդութ̃ ծովեզերեայ պահապանաց Ճենաբօնացւոց . և 'ի ժամանել անդր , նաւապետն յուցցէ զպտ̃ճռ ք̃ղքապետին , յորոյ սակս հարկեցաւ երթալ յայլ տեղի ։ Ընդ մէջ այսր ք̃ղքի է բանտ հնդկաց , զոր Ճենաբօնացիք կաքուչա կոչեն . ք̃ դժոխք , ո̃պ 'ի վէր անդր ասացաք . զի որք միանգամ անդ արկանին , չունին այնուհետև յոյս ազատու̃ . զի անդ արկանեն զմեծամեծ չարագործս , ը̃ որս և զնմ̃ , զորոց գուցէ կարծիք քրիստոնէութ̃ ։ Յամին 1690 կմ̃ 91 . յորժմ̃ անդ գտաւ կեմֆեր , էին 'ի բանտի անդ քրիստոնեայք ոմանք , որք յօժարութբ̃ ընտրէին մնալ անդ զնմ̃ աւուրս կենաց իւրեանց , ք̃ ուրացութ̃ հաւատոյ՝ զերծանել 'ի դառն տառապանաց անտի . այն զի՝ չէին ևս այնչափ մարզեալ 'ի մասունս քրիստոնէական հաւատոյ . այլ զն̃ միայն գիտէին , և զմայր նր̃ զամենօրհնեալ ո̃ւ կոյս ա̃ծածին ։

Առ սովին ք̃ղքաւ է տեսանել փոքրիկ կղզի կամրջակցեալ ը̃ ք̃ղքին . որ է վաճառատեղի և բնակարան հոլանտացւոց , պահեալ 'ի զինուորաց Ճենաբօնացւոց . իսկ չինացիք և այլ արևելեայք համադենք Ճենաբօնացւոց , բնակին յարևելեան կողմն ք̃ղքին 'ի շրջափակ տեղւոջ . ուր ունին զերիս մեհեանս մեծաշէնս և քուրմս բզ̃մս ։

Ֆունայի, կ՟մ Ֆունէօ : Է գլխաւոր քաղաք գիւսիւ կղզւոյն յարևելեան կողմն ն՟ր 'ի պունկօ գ՟ւռի . որոյ կուսակալն եղև մի 'ի ն՟ցէ, որք հրեշտակս առաքեցին առ ԺԳ գրիգոր պապն հռովմայ հնազանդութն և հպատակութն խոստանալով ն՟մ, զկնի ընդունելոյ իւրոյ հանդերձ բազմութ՟բ ժողովրդեան իւրոյ զքրիստոնէական ուղղափառ հաւատս :

Դօսա, կ՟մ Դոծնա : Է մի յերևելի քղ՟քաց Ճեաբօնայ 'ի Սիքօք կղզի, և գլխաւոր տեղի համանուն գ՟ւռի . զգեստք բնակչաց ն՟ր այլաձև են 'ի զգեստուց այլոց Ճեաբօնացւոց :

Բայց 'ի վե՛ց մայրաքղ՟քաց աստի յիշատակին և այլ քանի մի քաղաքք 'ի Նիփօն կղզի, զորոց զանուանս ևեթ գիտեմք . ո՟ր Նամպու . Սաքաա . Կեսիմա : Որք են ծովեզերեայ քղ՟քք Նիփօնայ 'ի հիւսիսային արևելեան կողմն նորա :

Նակնա . Նիտոգա . Օյմա . Նայնա . Զոտամա : Են քղ՟քք 'ի մէջն Նիփօնայ 'ի հիւսիսոյ ընդ հարաւ ձգեալ :

Ֆիրօյա . Սաքաբօ . Դիէբանէս . Օնիպու : Են ծովեզերեայ տեղիք յարևմտեան կողմն ն՟ր :

Յօդ Թ . Կղզիք, որք են ընդ տէրութ՟բ Ճեաբօնայ :

Բայց 'ի նախայիշատակել կղզեաց, են և այլ փոքր կղզիք ինչ, յորս տիրէ ինքնակալն Ճեաբօնացւոց, յորոց զոմանս յառաջիկայդ նշանակեսցուք :

Սադօ, կ՟մ Սաշիւ : Է կղզի 'ի հիւսիսային արևմտեան կողմն Նիփօնայ հանդէպ Եէդըսինկօ, կ՟մ Գեսիւ գաւառին : Շրջապատ ն՟ր է իբրև եռօրեայ ճ՟նպհ . և է մի 'ի գ՟ւռաց փոքու ինքնակալին . բերէ ցորեան և որիզ առատ . ունի և անտառս և արօտս խոտաւէտս . և անասունս բազում . և բաժանի 'ի 4 վիճակս :

Օքի, կ՟մ Ինսիւ : Կղզի 'ի ծովն գօրէայ . է մի 'ի գաւառացն սանինտօ ինքնակալին Ճեաբօնայ : Երկայնութն ն՟ր է իբրև երկօրեայ ճ՟նպհ . իսկ երկիրն անջրդի, և անբեր . և բաժանի 'ի 25 վիճակս :

Ֆիռանտօ, և Կօտօեան կղզիք : Են փոքրիկ կղզիք յարևմտեան կողմն գիւսիւ կղզւոյն Ճեաբօնայ :

Իքէօ : Կղզի փոքր 'ի հարաւակողմն գիւսիւ կղզւոյն :

Կոսիմա : Կղզի փոքր յարևելեան կողմն Նիփօնայ :

Թագ

Թագասիոլ. թ՟ կղզի երկայն 18 ձողաչափ. զոր 'ի 1675 գտին Ձէապօնացիք 'ի ձեռն փոքրիկ նաւակի միոյ, որ ը՟ստ բերման վարեցաւ անդ 'ի բռնութէ հողմոյ. Թէպէտ փոքր է, բայց կարի ամրացուցեալ 'ի բնութէ, առ որ դժուարին է մերձենալ. որ և է տեղի ապաստանաց մեծամեծացն Ձէապօնայ, որք անկանին յաչաց Թագաւորին:

Իգէ սուսսիմա, կամ Իգէ. և Սուսսիմա, կամ Դուսսիմա: Են երկու կղզիք. որք յա՟ռջագոյն էին ը՟ն տ՟րութ՟բ իշխանին սասասումայ, զոր առին Ձէապօնացիք 'ի գօրեացւոց 'ի վերջին պ՟տրզմի: Իշխան ն՟ց է յազգէ անտի բուն բնակչաց տեղւոյն, այլ հնազանդեալ Թագաւորին Ձէապօնայ: Երկայնութիւն Իգէի, կամ Իկիու կղզւոյն է իբրև երկուց աւուրց ճ՟նպհ. և բաժանի յերկու գ՟ւռս: Իսկ երկ՟րդն առ փոքր մի մեծագոյն է. և բաժանի ը՟ն առաջնոյն: Թէպէտ չեն այնչափ արգասաւորք. բայց անուանի են առ Ձէապօնացիս վ՟ն ալէսպ՟ս նորանշան իրաց, որ գտանին անդ, և վ՟ն բազմութ՟ե կռոցն, զորս պաշտեն բնակիչք ն՟ց:

Եսօլ, կամ Եսօս. յաոնիմա. ժ՟ կղզի եսօլա: Այս կղզի ձգի 'ի հիւսիսային արևելեան կողմն գօրէայ ծովուն. և է մեծ, և մարգաշատ. ունի և գեղեցիկ դաշտավայրս, որք լքեալ կան անգործ. զի բնակիչք նորա վայրենի են, որք դարմանեն զկեանս ձկամբք, և որսովք. Թէպ՟տ ունին և ընտանի անասունս: Բնակումն ն՟ց է 'ի խրճիթս փայտակերտս: Հարաւային կողմն սորին կղզւոյ, կալեալ կայ զիշխանէն մադսումայեայ, որ ունի անդ ամրոցս:

Մադսուսմայի, կամ Մադսիմագի. 'ի ռուսաց Մադսմանէֆա, անուանեալ: Է կղզի որ առնու զանուն իւր 'ի գըլխաւոր Ք՟ղքէ որ մերձ է եսօլ կամ եսօս կղզւոյն 'ի հարաւային կուսէ: Այս կղզի է 'ի նեղուցն սանկարայ. և է ը՟ն տ՟րութ՟բ Ձէապօնացւոց, ո՟չ միայն հաստատեն նոր պատմագիրք, այլև Ցացոյցք Ձէապօնայ: Իշխանն սորին կղզւոյ պարտաւոր է ամի ամի գնալ 'ի Ձէապօն, և յանդիման առնել ինքնակալին զհարկս իւր, որք են մորթք վայրի էրէոց, փետուրք սակաւագիւտք Թռչնոց, և արծաթ:

Սախալէն, կամ Սախալիա: Է կղզի մեծ 'ի ծոցն գամչադգայ հանդէպ դրանց ամուր գետոյ: Յամին 1728 ռուսք կամ մոսկովք հասին անդր. և կալեալ զառհմանաւոր լ՟նի տեղի 'ի ծովու մարգարտաբեր. որոց ը՟նդէմ կացին չինք, պնդելով. Թէ այն կղզի չէ՛ու Թաթարաց պատկանի. այլ մոսկովք բռնագոյն գոլով

'ի

՚ի ծովու . որպէս և ՚ի ցամաքի .Ջ. գելինս , ընդ իշխանութեամբ իւրեանց ունին զտեղին զայն մինչև ցայսօր . ուստի և մարգարիտ բազում հանեն : Են և այլ բազում կղզիք հանդէպ Ճապօնայ յարևելեան կողմն , որոց զանուանս ևեթ գիտեմք , որպէս Նօգինգիմա . որ և կղզի վառեալ . Ֆունինոյօ , որ և Տոբոքոսիմա : Եբինօսանդ . զի են երեք կղզիք առ ընթեր միմեանց , ընդ մէջ 29 , և 30 աստիճանաց հիւսիսային լայնութեան :

Բինգօ Գէ Ճիմա : Է ընդ մէջ 31 և 32 աստիճանաց հիւսիսային լայնութեան :

Հիրտօօ . Մաղատղէկի . Տեուգէնօզիգա . Փոնաս : Են ընդ մէջ 24 , և 26 աստիճանաց հիւսիսային լայնութեան :

Կղզիք հարաւային մասին Ասիոյ :

Յայսմ վայրի ունիմք ստորագրել զամենայն երևելի կղզիս , որք ՚ի վերջին դարս գտան ՚ի հարաւային կողմանս Ասիոյ :

Յօդ. Ա. Մարիաննեան , կամ աւազակաց կղզիք :

Այս կղզիք , որք են ՚ի հարաւոյ արևելից Ճապօնայ . զառաջինն կոչեցան կղզիք աւազակաց , կամ գողոց ՚ի Մագելլանեայ , որ եգիտ զնոսա յամին 1520 . վասն զի բնակիչք նոցա գողացան զերկաթեղէն գործիս ինչ նորա : Այլ ՚ի սպանիացւոց անուանեցան Մարիաննեան յանուն դշխոյի իւրեանց Մարիամու Աննայի աւստրիացւոյ . որ ՚ի 1660 առաքեաց անդր քարոզիչս : Օդ նոցա մաքուր է և առողջ . և տօթն չէ այնչափ ինչ սաստիկ , թէպէտ և են ընդ այրեցած գօտեաւ : Բնակիչք նոցա ըստ բարուց կարի նման են Ճապօնացւոց , յորոց թուին ունել զծագումն : Ամբարտաւանք են ըստ նոցա , և փառամոլ , ժանտք , և ոխակալք , և անհնարին վրէժխնդիրք . և անհաստատք ՚ի բանս և ՚ի խորհուրդս . սաստիկ սիրեն զխաղալ , և զկաքաւել , և ընթանալ յասպարիզի : Առողջ են , և պարարտք . թէպէտ կերակուր նոցա ոչ այլ ինչ է , եթէ ոչ ազգի ազգի արմատք, և պտուղ, և իբր 'ի բնէ մս երկայնակեացք: Եղու ն՟ց նոյն է. որ ինչ բնակչացն Փիլիպպեան կղզեաց: Մեծագոյն պակասութ կղզեացս այն է, զի չունին յարմարաւոր նաւահանգիստ: Շրջակայ ծովն կոչի արշիպեղագոս սրբոյն ղազարու. և է մասն հարաւային ովկիանոսի:

Այս կղզիք փոքր են և աննշան, սակայն յառաջին ժամս բազմամարդ էին, թէպէտ այժմ ոչ են նոյնպէս, զի մեծ մասն ն՟ց գրեթէ անապատ է. բայց 'ի ռօդա անուանեալ Է կղզւոյն. ուր սպանիացիք՝ Է որոց տէրութ են մինչև ցայսօր, բնակեցուցին իբրև 300 հնդիկս 'ի մշակել որիզ:

Իսկ այլ կղզիք բերեն ազգի ազգի պատուական պտուղս առատ յոյժ. ունին և եղինս. և վարազս, որ է վայրի խոզ, և թռչունս յոլովս: Գտանին 'ի նմա և բազմապատիկ զեռունք, որք վիշտ մեծ են բնակչաց նոցա:

Բաժանին 'ի հիւսիսային, և 'ի հարաւային. որք կոչին, Թ.հն, կամ Թինեա. կոչեցին և կղզի սրբոյն Լաւրենտիոսի: Կղ'' Վերափոխման: Ագրիհան կամ Կղ'' սրբոյն Փրանչիսկոսի Քսաւերեան: Բակօ, կամ Կղ''. սրբոյն Իգնատիոսի: Ալամական, կամ Կղ'' յղութեան: Կուկուան, կամ Կղ'' սրբոյն Փիլիպպոսի: Սարիկան, կամ Կղ'' սրբոյն Կարոլոսի: Անատաան, կամ Անատաայան, և կամ Կղ'' սրբոյն յովակիմայ: Զէյփան, կամ Կղ'' սրբոյն յովսեփայ: Թինեան, կամ Պօնավիսդա: Ակիկեան, կամ Կղ'' Սր հրեշտակի: Սերփանա, կամ Ռօտա. որ և Կղ'' սրբոյն Աննայի: Կուան, կամ Կուահան. որ և Կղ'' սրբոյն յովհաննու: և է գլխաւոր և մեծագոյն 'ի մէջ սոցին, որոյ շրջապատն ըստ սպանիացւոց սահմանաց՝ է իբրև 90 մղոն. և ունի իբրև 4000 բնակիչս. յորոց վերայ իշխէ մի ոմն հիւպատոս սպանիացի, և ունի իբր 150 զինուորս:

Գլխաւոր քաղաք նր կոչի ՍԲ Իգնատիոս ագանայ. որ է քաղաք գեղեցիկ, շինուածք տանց նր քարաշէն. և 'ի պատուական փայտից. զոր ուր ուրեմն է տեսանել 'ի կողմանս յայնոսիկ: Ունի երկու փոքրիկ մարտկոցս վառեալս զինու: Նաւք մանիլլայի. որք դառնան 'ի Մեքսիքոնէ անդ առնուն զհանգիստ: Բնակիչք նր ըստ մեծի մասին հնդիկ են, ք սպանիացիք. որք ըստ առաջին տեսլեան երևին լինել ճարտարամիտք և քաջասիրտք:

Յօդ Է. Փիլիպպեան կղզիք, կմ̄ մանիլեան կղզիք.

Զայսոսիկ կղզիս յեւրոպացւոց անտի զառաջինն եգիտ մաճելլանոս յետ անցանելոյ 'ի հիւսիսային ովկիանոսէ 'ի հարաւայինն ը̄ նեղուցն, զոր յիւր անուն կոչեաց նեղուց մաճելլանեան: Սոյն այս դերահռչակ նաւապետ ճախողակս եղեն կրել 'ի հայրենիս իւր յետ փորթուգալաց, էանց 'ի ծառայութեն արքային սպանիոյ, որ առ նովին ժամանակօք էր կարոլոս Ե. աւստրիացի. եւ յամին 1521 գտեալ նա զկղզիս զայսոսիկ, կոչեաց զն̄ս մանիլայք. որք կոչեցան եւ կարոլեանք, յանուն նորին Ե կարոլոսի: Յետոյ 'ի 1564. փիլիպպոս Բ արքայն սպանիոյ, ձեռն էարկ տիրել 'նց. զորս կարոլոս Ե չեւ եւս էր արկեալ գլխովին ը̄ տրութ̄ իւրով. վն̄ զի արքայն փորթուգալաց ետ նմ̄ 392727 ոսկի. զի 'ի բաց թողցէ զն̄ս. Քզի վնասակար իմն համարէր մերձ ունել զսպանիացիս կղզեաց իւրոց, յորոց առնոյր ինքն համեմս: Արդ՝ միքայէլ լոփէզ եգասպեան գլուխ կարգեալ նաւուց փիլիպպոսի Բ, էառ յաջողութ̄ զկղզիսն, եւ կոչեաց զն̄ս փիլիպպեան կղզիս. յանուն նորին երկ̄ փիլիպպոսի սպանիացւոց արքային, եւ 'ի զեպու կղզին, ուր մաճելլանոս յա̄ջագոյն խողխողեցաւ, բնակեցոյց հաստատած մի ժողովրդեան. իսկ ինքն հաստատեաց զբնակութի̄ իւր 'ի լուսոն կղզի, որ մեծ է քան զայլ կղզիս:

'Ի ժամանել սպանիացւոց, գտին անդր երիս ազգս, կմ̄ ժղ̄վդս զնիշ̄նս ա̄ք՝ մալեցիս. որք ասէին զանձանց լինել 'ի պօրնէան կղզեաց. եւ 'ի մալաքայէ, եւ բնակէին 'ի ծովեզերեայս. յորոց սերեալ են տակալացիք, կմ̄ բուն բնակք մանիլայի. բիսայացիս, որք եւ բինտադոսք կոչին. յորոց բզ̄մք գտանին 'ի Սամար, 'ի փանայի 'ի լէյթէ եւ յայլ բզ̄մ կղզիս. որք թուին գնացեալ անդր 'ի մակասարայ, կմ̄ 'ի չէլէպէս կղզեաց: Եւ սեաւս, որոց բնակութի̄ է 'ի լերինս, եւ 'ի քարանձաւս ը̄ վայրենի անասնոց, որք եւ կարծին լինել առաջին բնակիչք սոցին կղզեաց: Զունին ընդնաւ զնմանութի̄ ինչ ը̄ այլոց բնակչաց տեղւոյս, այլ վայրենիք են, անգութք, եւ գազանաբարոյք, եւ անհաշտ.

հաշտ Թշնամի սպանիացւոց : Թիւ կղզեացս, ը͞ս ոմանց ժամանեն ց1200. երկիր նր͞ արգաւանդ. ունին և բազս ոսկւոյ, և արծաթոյ. այլև մարգարիտ 'ի շրջակայ եզերս ծովուն : 'ի նմին ծովու գտանի և ազգ մի խառնակերպ ձկան, մերձաւոր տեսլեամբ առասպելական յուշկապարկին՝ նախնի բանաստեղծից. որ ը͞ս իրաց ինչ բերէ զնմանութիւն կնոջ 'ի գլուխն. և 'ի լանջս որ և յայն սակս կնաձուկն կոչի : Գտանին անդ և ստորերկրեայ հրայրեայք, և նորին աղագաւ յաճախեն անդ երկրաշարժութիւնք, և հրաբուղխք պատառեածք երկրի : Թիւ բուն բնակչաց նր͞ յամին 1752 էր միլիոն մի, և 360000 և առաւել, իսկ բուն սպանիացիք իբրև 3000 ևեթ. և բաց 'ի նր͞է այլևս 9000 ծնեալք 'ի խառն սերնդոց, յ͞ 'ի հօրէ սպանիացւոյ. որք իբրև սպանիացիք համարին. և առ այս 12 հ͞զր ոգիք ևեթ, նուաճեալ զայլսն իբրև զմիլիոն մի և կէս բնակիչս: Որք յռ͞ջագոյն բազմօք առաւել էին. ո͞ր պատմութիւնք սոցին կղզեաց ցուցանեն, որք զԹիւ բնակչաց նր͞ 'ի բ͞զմ միլիոնս հասուցանեն, զորս կորոյս անգթութիւն եւրոպացւոց: Օգուտն, զոր սպանիացիք հանեն 'ի բազմամարդ կղզեաց աստի, չէ այնչափ ինչ, որչափ կարծի. և յայն սակս, հազիւ թէ առեալ էին զնս͞, և առ խորհէին 'ի բաց թողուլ, իբրև վնասակար տ͞րու իւրեանց. բայց փիլիպպոս Ե͞, ո͞ր և յաջորդքն նր͞ միշտ 'ի բաց մերժեցին զայն առաջադրութիւն. ակնունելով թէ առ յապայն առաւել ևս պտղաբերեսցէ. և յիրաւի պտղաբերէր, եթէ ը͞ս արժանեաց լինէր կառավարութիւն նր͞ :

Մեք յայսմ վայրի միայն զգլխաւորսն յայնց կղզեաց ունիմք ստորագրել, աւելորդ իմն համարել͞ մ͞նդ. թէ գուցէ անկարելի զանուանսն ևս յիշատակել. յորս չէք ինչ նշանաւոր յիշատակաց արժանի :

Մանիլայ, կ͞մ լուսոն, կ͞մ լուզօն կղզի :

Այս կղզի մեծ է քան զայլ ամ͞ փիլիպպեան կղզիս, և է արգաւանդ. բերէ որիզ, ցորեան և պտուղ, և այլ ազգս ազգս արմտեաց. ունի ընտանի անասունս բ͞զմ, ո͞ր կովս, եզինս, և երիվարս : Օդ նր͞ բարի է և առողջարար, և ջուրն պատուական : Այլ է անդ ազգ մի գժնդակ ախտի, զոր մարթէ կոչել կարկամուն. իբր զի թէ ոք ը͞ս քերանս պաղով, ցրտացի.

կի, առժամայն ամ՛ անդամք մարմնոյն կարկամեալ կաշկանդին, մինչև լինել իբր կոճղ անշարժ գլխավին. և եթէ ոչ աճապարեն փութով դարմանեսցի, յանցանել 24 ժամուց մեռանի: Այլ ոմն խոտն դժնդակ է, նոյնպս և դարման նր դժնդակագոյն. յոր պատառունք տերևոյն քաջավարժ են. որք բեկոլաւ նուրբ ատակէնոյ, կմ՛ կարկամ ատղանեաւ ժդնակի չփեն զամ՛ անդամս մարմնոյն մինչև հասել արեան ը մորթն. այսպիսի անտանելի ցաւով բժշկեն զախտացեալն: Անի և ծոց մեծ յարևմտեան կողմն ձգեալ 'ի ներքս ը ցամաքն. որոյ տրամագիծ է իբրև 30 մղոն: Գլխաւոր տեղիք նր են:

Մանիլա: Մայրաքաղաք համօրէն կղզւոյն, որ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ. այլ բազմամարդ է, և է արքեպիսկոպոսիւ, և աթոռ հիւպատոսի, կմ՛ փոխարքայի սպանիացւոց. անդ է և դերագոյն ատեան հաստատեալ վս համօրէն սպանիացւոց եղելոց 'ի կղզիսն յայնոսիկ: Անի և նաւահանգիստ պատշաճական կոչեցեալ կաւիտէ, կմ՛ կավիտէ. 6 մղոնաւ հեռի 'ի քղքէ անտի 'ի հարաւակողմն. առ որով կայ և գործարան նաւուց, ուր գործեն նաւս պէտս վս եւրոպիոյ: Յաճախեն անդ նաւք, թէպէտ մուտ նր դժուարին է սակս բազմապատիկ ժայռից, որք սփռեալ գտանին առ նովաւ, բայց ոչ ոք յազգաց, ոչ յեւրոպացւոց, և ոչ յասիացւոց կարող է անդ վաճառականութիւն առնել, բայց 'ի չինաց, 'ի հնդկաց, և 'ի հայոց. վսյ ամենեք յօտար ազգաց կամեցեալ առևտրութիւն առնել անդանօր, յանուն հայոց առնեն, կմ՛ 'ի հայոց առաքին առնել վաճառականութիւն անդ վս ինքեանց: Իսկ վաճառքն, յորս յածի առևտուրն սորին քղքի, գլխաւորաբար են այնք, որք կրեալ են բերուճոյ, և մեքսիկոնի որ համեմք. այն է՝ պղպեղ. մետաքս 'ի չինու. մետաքսեայ սռնապանք, և կերպասք, բեհեզք, և կտաւք նկարէնք, այն է՝ չիթ. և այլ պէսպէս իրք յԾէն հընդկաց: Զայս ամ՛ վաճառս 'ի մի, և երբեմն եւս յերկու նաւս բարձեալ տանին ամի ամի յադափուլկ քղք մեքսիկոնի. որոց ամ՛ ծախք յարքունուստ ելանեն, և շահ վաճառականութեան այնորիկ կարգեալ է 'ի դարման մենաստանացն մանիլայի: Եւ յետոյ դառնան նաւքն այնոքիկ բարձեալ վաճառս եւրոպացւոց. որ արծաթ, շաքարեղէնս, և որդան կարմիր: Անդ գործեն և զգլխարկս, զոր ռամկօրէն աճմու գտակ կոչեն, որք են երկայնաձև և 'ի վերուստ ճղճղէն: Զայս քղք շինեաց լօփէզ եգասպեան. զոր 'ի 1590 շուրջ պա-

տեաց

սեւոյ պարսպով գօմէզ փերէզ, որ կառոյց և զամրոցն սրբոյն յակովբայ :

Նոր սէգովիա : Է եպիսկոպոսարան, և նաւահանգիստ 'ի հիւսիսակողմն կղզւոյն առ բերանով կայեան գետոյն :

Նոր կաւսէրէս : Է եպիսկոպոսարան, և նաւահանգիստ յարևելեան կողմն մանիլայի :

Մինտանաօ :

Այս կղզի է յաւէտ 'ի հարաւ քան զայլ ամենայն փիլիպպեան կղզիս, որ թէպէտ լեռնային է · այլ ունի հովիտս արգաւանդս ոռոգեալս բազմապատիկ ականակիտ և բարեհամ վտակօք · ուստի և առհասարակ խօսելով բերրի և արգասաւոր · բերէ մեղրապտուղս ընտիրս, և սօսս, և պատշաճական լեմոնս, կիտրոնս, նարինջս ևն, այլև հնդկային ընկոյզ, և մեխակ, և այլ ազգի ազգի սակաւագիւտ պտուղս : 'Ի լերինս նորա գտանի և ոսկի բազում : Պէսպէս ազգք բնակեն 'ի նմա, յորոց ոմանք ազատ են, և ոմանք յանտառս և 'ի լերինս բնակեալք : Իսկ այլք են ընդ իշխանութեամբ սուլտանի միոյ, որոյ բնակութիւն է 'ի մինտանաօ քաղաք : Սոյն այս իշխան, որպէս և համօրէն ժողովուրդ նորա առհասարակ մահմետական են : Յայս կղզի յառաջագոյն և սպանիացիք ունէին կալուածս · այլ երբև ելեալ անտի գնային յօգնութիւն մանիլայ կղզւոյն, սուլտանն մինտանաօոյ ժամ դիպօղ գտեալ, քանդեաց զամենայն ամրոցս նոցա : և այնուհետև բնաւ արգելաւ նոցա կոխել անդէն : Գլխաւոր տեղի նորա է :

Մինտանաօ, կամ Գռադուկ : Է քաղաք ամուր յեզերս կղզւոյն 'ի հարաւակողմն : Տունք նորա ցածուն են, և անշուք, շինեալք 'ի վերայ ցցից, որպէս 'ի հնդիկս որ յայնկոյս գանգէսի · Նաև նոյն իսկ ապարանք սուլտանին, կամ թագաւորի կղզւոյն նոյնպէս է շինեալ : Ունի նաւահանգիստ պատշաճական, ուր կարէ յամփոփել նաւք · վասն որոյ և է մի 'ի բազմավաճառ քաղաքացն փիլիպպեան կղզեաց : Գլխաւոր վաճառք նորա են ոսկի, և այլ բերք երկրին, զոր օտար ազգաց վաճառեն · յորոց փոխարէն և ինքեանք առնուն պէսպէս իրս առ 'ի պէտս իւրեանց :

Զեպա :

Զեպու, կամ Սեպու : Է կղզի փոքր. այլ բազմամարդ, և հզօր. ընդ ամրոցովք պատսպարեալ : Գլխաւոր տեղի նր՟ է :

Անուան Յսի՟ : Է քաղաք ամուր, և եպսկպսնիստ. որոյ եպսն՟ է ը՟ արքեպսիւ՟ Մանիլայի, ուր և եպսն՟ Գասերեզայ, և Նոր Սեգովիայ. 'ի սմին ք՟ղքի է և մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց :

Սամոր, կամ Պէնտայէ :

Այս կղզի է, ուր զառաջինն եհաս Մաճելլանոս. 'ի հիւսիսակողմն Մինտանաօյ, գեղեցիկ է, և զուարճալի, ք՟ զա՟մ փիլիպպեան կղզիս : Գլխաւոր ք՟ղք նր՟ է Կուպիլան :

Կղզիք սրբոյն Յոհաննու. Բարակոյ, և Նոր Փիլիպպեանք :

Սրբոյն Յոհաննու : Է յարևելեան կողմն Մինտա֊նաօյ. ունի իւր սեփական թ՟գր ինքնիշխան, և անկախ 'ի սպանիացւոց :

Բարակօ : Է յարևմտեան կողմն փիլիպպեան կղզեաց անբեր, և բնակիչք նր՟ սակաւ, որք ազատ են, ը՟ ոչ ուրուք իշխնութբ՟ անկեալ :

Նոր Փիլիպպեան կղզիք. որք կոչին և Փալաւս, կամ Փալաոս : Են յարևելեան կողմն փիլիպպեան կղզեաց. որք ծանուցան յաւարտ նախընթաց դարու, որք թէպէտ ը՟մ՟ են թուով, այլ ինչ ոչ գրեն զնոցանէ Աշխարհագիրք. զի սակաւ ծանօթութի՟ ունին զնոցանէ, և ասեն թէ չեն ինչ երևելիք :

Բայց 'ի նոցանէ են այլևս քանի մի երևելի կղզիք 'ի մէջ փիլիպպեան կղզեաց. զորոց զանուանս և եթ գիտեմք, և են ս՟ք : Տոմարան. Նեկրո, կամ Նեկրոս. Մինդորօ. Պագօ. Լէյթէ. Փանայէ. Գուանիանպամաս. Կագայանաս. Պառաղուանգ. Գուալամիանէ. Լէնէգաբարա. Բօհօլօն ևն :

Յօդ Գ․ Մոլուղեան կղզիք․

Մոլուղեան կղզիք են բազմու՟ն կղզեաց 'ի հարաւակողմն փիլիպպեան կղզեաց։ Չէ յայտ թէ երբ եղև սկիզբն բնակու՟ն մարդկան 'ի նմ՟ և աճելու՟ն․ բայց հաւաստի է 'ի պատմու՟նց, թէ 'ի սկզբ՟ն ԺԶ դարուն բնակիչք նր՟ վայրենիք էին․ և թէպէտ գլխաւորք նց՟ ունէին զանուն թգ՟րի, այլ իշխանու՟ն նց՟ նուաղ էր յոյժ, զոր ը՟ հաճոյից տային նց՟ ժողովուրդք իւրեանց։ Փոքր մի յռ՟ջ ունէին ինչ ինչ 'ի մահմետական աղանդոյն խառնել ը՟ կռապաշտու՟ն։ Դարմանէին զկեանս որսորդու՟թ վայրենի երէոց, և ձկնորսու՟թ, ոչ գիտելով բնաւ թէ զի՞նչ իցէ երկրագործու՟ն։ Բայց ունին և ծառս ինչ, որք բզմ՟ նպաստեն նց՟, որ՟ Գօգօ անուանել՟ ծառն շահաբեր, և յաճախ 'ի մեծագոյն մասին ասիոյ։ Արմատ նր՟ իբրև 20 ոտնաչափ ձգի 'ի խորս երկրի․ իսկ բունն իբրև 30 կմ՟ 40 ոտնաչափ 'ի վեր բարձրանայ․ փայտ նր՟ սպնգային է, ուստի և անպիտան 'ի շինուած, իսկ 'ի գագաթան ունի փունջ մի 10 կմ՟ 12 մեծամեծ տերևոց, որք լինին 'ի պէտս ծածկութի տանց․ զոր յամին երիցս հատանեն, և նոյնչափ անգամ բողբոջեն 'ի նմանէ ընձիւղք ստուարք, որք բերեն սան, կմ՟ երկոտասան պտուղս իբրև կէս ոտնաչափ մեծութ՟բ, որք կոչին գօգօ։ Յառաջին կեղևոյ կմ՟ պատենից այնր պտղոյ գործեն հն՟րկ կտաւս և առագաստս 'ի պէտս նաւուց։ Յերկրորդէն, որ կարծր է յոյժ, առնեն փոքրիկ անօթս 'ի պէտս տան։ Ներքին կողմն կեղևոյն ծածկել՟ է սպիտակ և խիտ մսանաւ, զոր ծմլեալ, մզեն անտի իւղ, որ կարի յաճախել՟ է առ հնդիկս։ Իսկ ներքին, որ մնայ զկնի մզելոյն, լինի 'ի կերակուր հաւուց, և անասնոց, և 'ի ժմկս սովու նաև մարդկան։ Իսկ 'ի մէջն ներքին պտղոյ է ջուր քաղցր յոյժ և ցուրտ, որ է կարի զովացուցիչ և առողջարար ըմպելի․ բայց քաղցրութ՟ի նր՟ առողջացուցիչ է։ 'Ի հատանելն զնախատաց ընձիւղս, հոսի հիւթ սպիտակ, զոր ժողովեն յանօթս, և ցորչափ թարմ է, ունի զհամ անոյշ գինւոյ։

Սագու։ Է նշաստեայ ծառ ինչ, որ՟ և նախագրեալն զոր հատել՟ և 'ի մասունս կտրել՟, հանեն զմէջ նր՟, որ է աղէրանման, և խառնեն ջրով, և ապա մզեն ընդ մաղ. յոր մնան թանձրագոյն մասունքն. իսկ զնիւթն անցեալ ընդ մաղ՝ արկանեն 'ի փուռն, ուր թանձրացեալ խառանոյ, և լինի զանգուած կարծր, որ ընդ ամս բազումս պահի, զոր ապա թացեալ 'ի ջուր եփեն և ուտեն: Այս կղզիք բերեն և մեխակ առատ և պատուական, և հնդկային ընկոյզ: Ծառն մեխակաբեր ըստ կեղեւոյն նման է ձիթենւոյ, և է բազմաձիւղ. բերէ ծաղիկս բազում յոյժ. իսկ ծաղիկք նորա զառաջինն սպիտակ են. ապա կանաչագոյն. հուսկ յետոյ 'ի գոյն կարմիր փոխին, և կարծրանան, և յայնժամ են որպիսիս մեխակ, այն է խարէմֆիլ. որք չորացեալ լինին մթագոյն դեղին. զոր սկսանին քաղել յամսեանն հոկտեմբերի մինչև ցփետրվար: Ծառ նորա բուսանի 'ի մեխակաց անտի, որք չորացեալ 'ի վերայ ծառոյն, և լեալ ստուար 'ի չափ բոյթ մատին, անկանին յերկիր. բայց ոչ տան պտուղ, եթէ ոչ զկնի ինն ամաց: Իսկ ծառն հնդկային ընկուզոյ առնէ ըստ բարձրութեան մերումս տանձենւոյ. փայտ նորա ողողալից է, կեղեւն մոխրագոյն, ոստքն մանր և գլորակոր. իսկ տերեւքն գաւուզ և անուշահոտ. որք երկու երկու բուսանին 'ի վերայ միոյ կանթի. զկնի ծաղկանց յաջորդէ պտուղն ձուաձեւ մեծութեամբ, գունով նմանեալ ծիրանւոյ: Կեղեւ նորա խիստ է յոյժ և պինդ, գրեթէ ըստ կեղեւոյ մերումս ընկուզոյ ցորչափ է 'ի վերայ ծառոյն: Յորժամ հասանէ պտուղն, ինքնին բացեալ լինի. և երեւի ընկոյզն պատեալ մաշկաւ. և յայնժամ պարտ է քաղել զայն, մինչև իցէ մաշկին, կամ ծաղկին չորացեալ, և ընկուզոյ կորուսեալ զհոտն, յորում է գլխաւոր ազնուութիւն նորա:

Չինք երբեմն 'ի միջին դարսն զառաջինն ծանուցին յասիա զազնուութիւն համեմիցս, ծաւալելով զայն 'ի Հնդիկս, յորոց եանց 'ի Պարսս, և յԱրաբիա, և ապա յԵւրոպիա. ուր յառաջ քան զայն անծանօթ էին ամենեւին: Արաբացիք, որք ընդ այն ժամս տիրէին վաճառականութեանց գրեթէ բոլոր ծովի, երբեմն կալան զծանօթութիւն այնց բարեբեր կղզեաց, իսկ և իսկ ընդ կարմիր ծովն նաւարկեալ հասին անդր, և տիրեցին նոցա: Ապա յամին 1520 գնացին անդր փորդուգալք, որք 'ի սուղ ժամանակի տիրեցին նոցա. և ընդ բազում ժամս ընդ ձեռամբ իւրեանց կալան, զոր յետոյ բաժանեցին ընդ սպանիացիս, յորժամ փորդուգալ միացեալ էր ընդ սպանիոյ: Ապա հասեալ անդր և հոլանտացւոց, և միացեալ ընդ բուն բնակչաց երկրին, հանին վտարեցին անտի իսպազփորդուգալս, և զսպանիացիս. և նոքեանք կալան զհամօրէն վաճառականութիւն համեմից, բռնադատելով զթգրս դէլիմանտեայ, և զխոտորայ խաղաղ ընչել յձեռուն իւրեանց զամ զծառսն նմանացել համեմից, որոյ փոխարէն սահմանեցին ամի ամի տալ տաւանոյն 5863 ոսկի դահեկան. իսկ Եւրկդին 12 հազար. և առ 'ի անվրէպ 'ի գործ դնել զայս դաշնադրուն, միշտ պահեն անդ հոլանտացիք գունդ մի 700 զօրաց եւրոպացւոց յահ և յերկիւղ բնակչաց տեղւոյն։ Եւ այնպէս ոպ զկինամոնն՝ նոյնպէս և զմեխակ և զընկոյզ հնդկային առհասարակ է ձեռամբ իւրեանց ունին գրաւեալ հոլանտացիք. որք և միշտ յառաջագոյն ամբարեալ պահեն զպաշար 10, 12, և մինչև 16 ամաց, զի ոչ երբէք կամին 'ի վաճառ հանել առ մերձակայ ազգս զպտուղս նորոյ ամին. այլ միշտ զառաւել 4ինն, զոր 'ի 1760 վաճառեցին զարդիւնս քաղեալ 'ի 1744 ամին, եթէ հասանէ յետոյ յաւելանայ ամբարեալն, կամ 'ի ծով ընկենուն ոչ աւելն, և կամ ձգեն 'ի հուր. առ 'ի չանկանել 'ի ձեռս այլոց, զոր պատմէ ականատեսն պօմար, որ 'ի 1760 'ի 10 յունիսի ետես յամստրդամ այրել զաւելորդս այնչափ համեմից՝ որոց գին բովանդակ համարեալ լինէր 8 միլիոն արծաթոյ գուլղիացւոց, նոյնչափ ևս ունէին այրել վաղուէեան աւուր, և յայնմ պահու ոչ ումեք թողուին մերձենալ առնուլ ինչ անտի։ Սակայն 'ի վր այս ամ զգուշութեն նց, երբեմն երբեմն նաւաստեք նց հանեն արտաքս. յորժամ 'ի նաւարկելն յանդունդս ովկիանոսի վաճառեցին ինչ ինչ նաւուց այլոց ազգաց. և զմնացեալն թացին ջրով. առ 'ի հաւասարաչափ գտանել զկշիռ բեռին, յորժամ հասցեն 'ի նաւահանգիստ իւրեանց։

Վաճառականութիւն մոլուքեան կղզեացս այժմ տկար է յոյժ սակս նուազութեան դրամոց. զի այլուստ ոչ մտանեն դրամք 'ի կղզիսն յայնոսիկ, բայց միայն 'ի պատճառս վարձուց, զոր հոլանտացիք տան տեղակալ իշխանաց իւրեանց և 'ի թոշակ զօրաց. որոյ գումարն յամին հասանէ 912727 ոսկի, բայց այն լիով փոխարինի նց 'ի ծառոց անտի մեխակի, և ընկուզոյ, զորս ունին նոքեանց սեփական յամենայն 'ի կղզեաց անտի. ոպ յիւրում տեղւոջ նշանակեսցուք։ Մոլուքեան կղզիք բաժանին 'ի մեծամեծս, և 'ի փոքունս. մեծագոյնքն են հետագայքն։

Զէլէպէնս , կա̅մ Մակասսար ։

Այս կղզի մեծագոյն է ք̅ զա̅մ մոլուքեան կղզիս · տրամագիծ ն̅ր է իբրև 240 մղոն · որ թէպէտ ը̅ այրեցած գօտեաւ անկանի , սակայն և այնպէս բազմամարդ է , գոլով օդոյ ն̅ր բարեխառն 'ի պատճառս յաճախ անձրևաց , և ցրտաշունչ հիւսիսային հողմոց ։ Բնակիչք ն̅ր զօրաւոր են և քաջասիրտ գրեթէ ք̅ զայլ ա̅մ բնակիչս հարաւային ասիոյ ։ Սոքա յռ̅ջագոյն կռապաշտ էին , և պաշտէին զարեգակն , և զլուսին · այլ յետոյ 'ի մտանել անդ արաբացւոց ընկալան զդենն մահմետական ։ Եւրոպացւոց զառաջինն փորդուքալք հասին անդր · բայց 'ի 1660 հոլանտացիք հանին զն̅ս անտի ։ Եւ թէպէտ սոքա անոճամբք չեն տեարք համօրէն կղզւոյն , այլ միայն նաւահանգստին , և գլխաւոր ամրոցին , որ շատ է ն̅ց առ 'ի նահանջել անտի զայլ ա̅մ ազգս եւրոպացւոց · սակայն իրք բոլոր կղզւոյն տիրեն ։ Վն̅ զի զբուն ազգային իշխանս , որք մասն մասն տիրեն կղզւոյն , գրեթէ բոլորովին ը̅ ձեռամբ նուաճեալ ունին · զորս պատրուակաւ բարւոյ ն̅ց , և խաղաղական միաբանութե̅ , մերկացուցին յա̅մ զինուց · ուստի և են այժմ հոլանտացիք իբրև ինքնատեարք կղզւոյն ։

Յարտաքնոց ազգաց միայն չինացիք վաճռականութիւն առնեն յայս կղզի , որք բարձեալ տանին անդր ծըխախոտ , ոսկեթել , որ է սըրմայ , անօթս յախճապակեայս , մետաքս անգործ · իսկ հոլանտացիք վաճառեն անդր ափիոն · որ է աֆիոն · հնդկանիւթս , խէժս , պաստառս նրբաթելս , և սառճարս · և առնուն փոխարէն փոքր մի ոսկի , և որեզ բզ̅մ , և մոմ , և գերիս · այլև թրիփամ · որ է ազգ մի պատուական սնկոյ ։ 'Ի մաքսից տեղւոյն առնու ընկերութիւն հոլանտացւոց իբրև 7272 ոսկի · զոր ծախէ 'ի պէտս ժողովրդեան իւրեանց բնակելոց 'ի կողմանսն յայնոսիկ , որք են իբրև 150000 ։

Այս կղզի բերէ ազգի ազգի պտուղս պատուականս , և փայտս սակաւագիւտս · ո̅պ զսանտալ անուանեալ փայտն , և զքալամպաք ։ Ունի և արջառս բզ̅մս , և երիվարս , և գոմէշս՝ և եղջերուս և այլ վայրենի անասունս · ո̅պ և կապիկս մեծամեծս և կատաղիս , որք կարի վնասակար են և վտանգաւոր · բայց ոչ կարեն այնչափ բազմանալ · վն̅ զի գտանի անդ ազգ մի օձի անհնարին թշնամի նոցա յարաժամ հետամուտ 'ի սատակել զնոսա : Այս կղզի բաժանեալ է 'ի բազում վիճակս, յորս գլխաւորն է վիճակն, կամ նահանգն Մակասարայ, որ զկեան նորա գրեթէ դրաւէ :

Մակասար : Է գլխաւոր քաղաք սորին կղզւոյ, որ ունի նաւահանգիստ պատուական . առ որով հոլանտացիք կառուցին ամրոց հզօր 'ի պաշտպանութիւն նորա, և առ յապահովս առնելոյ զվճռականութիւն իւրեանց :

Եօճֆանփան : Է նաւահանգիստ 'ի հարաւակողմն Մակասարայ ընդ իշխանութեամբ հոլանտացւոց, առ որով ունին ամրոց, որ և է վաճառատեղի շահեկան յոյժ, և օգտակար առևտրութեան ընդ մերձակայ տեղեաց :

Ամպոյնա, կամ Ամպոյնէ :

Է կղզի փոքր յարևելեան կողմն Մակասարայ, կամ Ճելեպեան կղզւոյն . արգասաւոր յոյժ, և փարթամ գրեթէ քան զայլ ամենայն մոլուքեան կղզիս . վասն ընկերութիւն վճռականաց հոլանտացւոց անդ ևեթ սահմանեաց մշակել զմեխակս, որ և 4000 սահմանափակ չափս գետնոյ բաժանեաց 'ի մէջ բնակչաց երկրին, յորոց իւրաքանչիւրն ըստ վճռոյ, զոր արարին 'ի 1720 . պարտի ունել գէթ 125 ծառս մեխակաբերս . և այնպէս բովանդակ ծառքն լինին հինգ հարիւր հազար . յորոց իւրաքանչիւրն սովորաբար բերէ մի օխայ մեխակ, և ունելի ևս . ուստի և բոլոր բերքն միանգամայն ըստ կշռոյն, առաւել է քան զկէս միլիոն օխայ : Երկու միլիոն օխայ մեխակ միշտ ամբարեալ պահի յեւրոպիա, և մի միլիոն 'ի հնդիկս . որպէս զի եթէ յամս ինչ ոչ պտղաբերեսցեն ծառքն, կամ այլ ինչ պատահար դիպեսցի, ունիցին միշտ պատրաստական : Վասն հինգ օխայ մեխակի վճարեն մշակողաց իբրև 2 մարչիլ, և 8 փողս . երբեմն ևս փոխն դրամոյ, տան կապուտակ կտաւս գօրօմանտելայ : Յեզերս սորին կղզւոյ գտանի 'ի ծովու և բուսն պատուական . հոլանտացիք կառուցին անդէն ամրոց հզօր, և վաճառատեղի, որ զկնի ամրոցին պատավիոյ լաւագոյն է քան զայլ ամենայն ամրոցս, զոր ունին 'ի կղզիս հնդկաց :

Պանտէան կղզիք ։

Այս կղզիք իբրև 60 մղոնաւ հեռի են 'ի Նախալընթայց Ամպոյնա կղզւոյ, որք հինգ են թուով. յորոց երկուքն անգործ են, և իբր անբնակ, իսկ երեքն անուանի են վ՟ս բերելոյ ընկոյզ հնդկային ։ Այս կղզիք են միայն յամ՟ կղզիս արևելեան Հնդկաց, յորս բոլորովին հոլանտացիք տիրեն, և բնակիչք ն՟ց գրեթէ բոլոր օտարազգիք են. վ՟ս զի իբրև հասին անդր հոլանտացիք, գտին զի բուն բնակիչք ն՟ց վայրենիք էին, անգութք, գաղանաբարոյք, և անհաւատարիմք, յայն սակս հրամայեաց ընկերութին հոլանտացւոց, առհ՟րկ սպանել զն՟ս. և փոխ ն՟ց էած անդր սպիտակս, յորս և բաժանեաց զերկիրն. որք իբր 'ի բազումս անհնազանդաւ են բարուք, և ծոյլք 'ի գործս, ուստի և 'ի մերձակայ կղզեաց տանին անդ գերիս 'ի մշակել զերկիր ։

'Ի Ռօզէնգէն անուանեալ փոքրիկ կղզին գտանին յոլովք դատաստանաւ աքսորեալք 'ի պատիժ յանցանաց. նաև երիտասարդք ոմանք խեռաբարոյք և ստամբակք անդ տարադրին, ո՟պ զի յուղղութի եկեսցեն ։ Յայն սակս պանտեան կղզիքն կոչեցան և Կղզիք պատժապարտաց ։ Օդ սորին կղզւոյ յոռի է յոյժ, և վնասակար կենաց, վ՟յ և կարճին կեանք եւրոպեացն այնոցիկ ։

Պուրօ ։

Այս կղզի ը՟ երկայնութե՟ է իբրև 180 մղոն. իսկ ը՟ լայնութե՟ ուրեք 45 և ուրեք 54 ։ Զառաջինն Պորտուգալք մտին անդ. ապա 'ի 1613 'ի վ՟ր եկեալ հոլանտացւոց, հանին զն՟ս անտի. բայց և ն՟ք փութով լքանէին զայս կղզի 'ի սակս անարգասաւորութե՟ ն՟ր, թէ ոչ երկնչէին, թէ ով 'ի զօրաւոր թշնամեաց անտի ն՟ց գնացեալ տիրեսցէ ն՟մ, և յարաժամ խոչ՟ման լինէին ինքեանց ։ Սակայն և այժմ Պորտուգալք 'ի հիւսիսակողմն կղզւոյն ունին երկու կալուածս, որք կոչին Լէֆաօ. և Աէօխալ ։

Կայեան ։ Ի ամրոց անդօր, շինեալ 'ի հոլանտացւոց, յորոյ 'ի պահպանութե՟ կարգեալ կան իբրև 50 ևեթ զինուորք ։

Իսկ այլ կղզիք, որք գտանին շուրջ զմոլուքեան կղզեօք ը՟ արեւմուտս, և ը՟ արեւելս, չեն ինչ երեւելի. և վ՟ն զի եւրոպացիք չունին 'ի ն՟ս կալուածս, յայնսակս և Տագիրք ն՟ց բաց յանուանց այլ ինչ ոչ յիշատակեն զն՟ցէ. յորոց գլխաւորքն են Էնտէ, կ՟մ Փլորէս. Րօթթէ, կ՟մ Րօտէս. Սօլօր. Լարէնթուքա, որք են վաճառատեղիք հոլանտացւոց: Գունսմապալա. Սօն. Սէձաօ. Աշխանարէ. Լաուպալա. Օմպա. Րօմա. Մօա. Լաքէր. Հանթէ. Դընձօրլաութ. Վէտտէլ. Դէնէրնաթ. Դէէփօր. Մօթիր. Մաքեան. Կղզի Բութոնոյ. Սէ՟ Մաթթէոս. Ուպի. Մօրօթայի. Արու:

Ջերամ:

Է կղզի մեծ, և բազմամարդ 'ի հարաւային կողմն Նոր Կուինէայի, և 'ի հարաւոյ արեւելից փիդ անուանեալ նեղուցին. որ է անջրպետ ը՟ մէջ Ջերամայ, և Ճիլոլօ մեծի կղզւոյն: Շրջակայ եզերք ն՟ր ը՟ մասին անտառալից են, և ը՟ մասին մշակեալ, իսկ ներքին կողմանք լեռնայինք. յորս են վարհուրելի բարձրաբերձ լերինք սեպացեալք: Բնակիչք ն՟ր զօրաւոր են, և քաջ պատերազմականք. և անհաշտ թշնամիք հոլանտացւոց 'ի պատճառս անագորոյն բռնակալութե՟ ն՟ց. իբր զի երբեմն հասին ն՟ք 'ի կղզի անդր, ը՟ անյագ ագահութե՟ իւրեանց, սկսան բռնան տանել բնակչաց կղզւոյն խլել 'ի բաց զամ՟ բոյսս համեմից 'ի կալուածոց ն՟ց, կամելով ը՟ իշխանութե՟ իւրեանց գրաւել զամ՟ բերս կղզւոյն. և զբնակիչս ն՟ց տարուկս և գործավարս իւրեանց առնել. զ՟ր արարին և 'ի մոլուքեան կղզիս: Այլ ս՟ք քաջ գտեալ, իսպառ հանին վանեցին անտի զն՟ս. սակայն տակաւին միշտ յերկիւղի են, զի մի միւսանգամ ը՟ լծով բռնակալութե՟ հոլանտացւոց նուաճեսցին. վ՟յ ասի թէ բ՟զ՟մ անձկանօք ակնկալեալ սպասեն, թէ ոք յազգաց ասիացւոց, կ՟մ եւրոպացւոց հասցէ ն՟ց յօգնութե՟. որով ապահովասցին յերկիւղէ անտի հոլանտացւոց: Յամին 1769 երբ հասին անդր գաղղիացիք, կարծելով թէ հոլանտացիք ունիցին անդ կալուածս, հրազէնս արձակեալ ողջունեցին զն՟ս, և դրօշ հոլանտացւոց կանգնեցին: Բայց յետոյ ծանեան, թէ այն նշան վարհուրեցոյց զբնակիչս. որք փխ՟կ գալոյ 'ի ծովեզերն, և մատակարարելոյ ն՟ց զպէտս, որոց կարօտ էին յոյժ, աւհ՟նրկ բ՟զ՟մ խուճապով խոյս ետուն յեղերաց անտի կղզւոյն. մինչ ոչ ես տեսանել գաղղիացւոց զոք 'ի նմէ:

Պուրօ, կ՟մ Պօէրօ:

Ի կղզի յարեւմտեան կողմն Ճերամայ, ոչ ինչ կարեհեւոր 'ի նմանէ. այլ փոքր ք՟ զնա: Ունի երկու մեծամեծ գետս, որք կոչին Սանէու. եւ Հազօ: Երկիր ն՟ր լեռնային է. ուստի եւ չէ այնչափ ինչ արգաւանդ. գլխաւոր բերք ն՟ր են ոպնիազ փայտ սեաւ եւ սպիտակ, եւ այլ տեսակք պատուական փայտից. եւ ազգի ազգի պտուղք. որ՟պ գօգօ, անանաս, պանան. որք անծանօթ են առ մեզ. եւ լեմոն, կիտրոն, նարինջ, եւ այլ այսպիսի պտուղք, բայց ոչ այնչափ առատ, եւ որիզ պատուական. չէ յայտ թէ արդեօք 'ի նախնումն գտանէին 'ի կղզի աստ համեմք. բայց այժմ յայտ է թէ ոչ գտանի: Ունի յանտառսն իւր եւ՝ պէսպէս թռչունս երփներանգս, եւ գեղեցկափետուրս, եւ ընտանի անասունս. եւ եղջերու բազ՟մ, զոր հոլանտացիք զառաջինն տարան անդր, ուր 'ի սուղ ժմկի աճեցին՟ բազմացան: Գտանի անդ եւ այն տեսակ վայրենի կատուի, որ կրէ զկորիւնս իւր 'ի պարկի կախելոյ զորովայնէ. եւ տեսակ մի մեծ չղջիկան, որ ունի թեւս փչալիցս. եւ առ եզերբք ասպօ գետոյն յանտառսն գտանին մեծամեծ կոկորդիլոսք, որք գիշերայն ելեալ յանտառաց անտի յափշտակեն եւ պատառեն զմարդ, եւ զանասուն զոր միանգամ գտանեն. ա՟պ բազ՟մ անգամ դիպաւ, զի յափշտակեցին զմարդիկ 'ի նաւակաց, որք նաւէին ը՟ գետն, եւ պատառեցին: Բնակիչք ն՟ր յերկու ցեղս բաժանին, որք կոչին սեաւք, եւ ալֆուրայք: Սեաւքն 'ի միասին բնակին 'ի շրջակայ վայրս կալուածոց հոլանտացւոց, որք դենիւ մահմէտական են. կերակուր ն՟ց է Սակօյ պտուղ. ձուկն, եւ սակաւ որիզ. զոր 'ի հոլանտացւոց գնեն. եւ ը՟ բարուց ընտրեն, ծոյլ 'ի գործս, եւ վատասիրտ, որք եւ միշտ յերկիւղի են 'ի պապուասաց անտի բնակչաց Նոր կուինեայի, որք երբեք երբեք արշաւեն 'ի վ՟ր ն՟ց կողոպտել զն՟ս, եւ գերել: Ս՟ք 'ի բազ՟մ խումբս բաժանեա՟լ են եւ իւրաքանչիւրն ունի իւր սեփական գլուխ, կ՟մ իշխան. զոր Օրէնքայ կոչեն. եւ բնակին մօտ 'ի տեղի բնակութե՟ հիւպատոսին հոլանտացւոց. որ նոքօք վարէ զմղեղն. յայն սակս զգուշութ՟ դնայ ը՟ ն՟ս. եւ ա՟պ զի

զազնման զինս ը̃ լծով իւրեանց պահեալ ունիցին, պէտս խորամանկ հնարիւք սերմանեցին երկպառակութ̃ և բաժանումն 'ի նսա, ոմ̃ ստրաբին և յայլ կղզիս արևելեան հնդկաց : Աստի եթէ ոք յիշխանաց անտի ապստամբութ̃ն խորհեսցի, այլ ոք առ ժամայն մատնէ զնա • զոր հոլանտացիք իսկոյն տան սպանանել :

Իսկ աղփուրեանք ամ̃ իրօք ազատ են • և չունին ինչ թշնամութ̃ ը̃ հոլանտացիս, որք և ցրիւ բնակին յանմատոյց լերինս : Կերակուր նց̃ է Սակով պտուղ, և որս վայրենի • իսկ զկրօնից նց̃ ինչ ոչ գիտեն աշխարհագիրք • բայց երևի թէ ոչ են մահմէտական • վս̃ զի ուտեն զխոզենի :

Իշխանք նց̃ մերթ ը̃ մերթ գնան յայցելութ̃ հիւպատոսին հոլանտացւոց, չունելով ինչ երկիւղ 'ի նմէ. Այս կղզի յառաջագոյն էր ը̃ տէրութ̃ թգ̃րին Տեռնատէ կղզւոյն, և հարկատու նմա, այլ այժմ ոչ ևս: Գլխաւոր տեղի նր̃ կոչի Գայէլի, որ է ք̃ղք, կմ̃ աւան անշուք առ համանուն ծոցով յը̃արձակ և 'ի ճախճախուտ դաշտի ը̃ մէջ սովէլը, և այլոց գետոց: Բնակիչք նր̃ են սևաւքն, որք յառաջագոյն ցրիւ բնակէին 'ի ժ̃բ գեօղս • անդ է և գլխաւոր վաճառատեղին հոլանտացւոց • որք յառաջագոյն ունէին անդ և ամրոց քարաշէն • բայց 'ի 1680 դիպուածով իմն 'ի հիմանց տապալեցաւ • ուստի այժմ չունին ամրոց • այլ միայն սահմանափակ իմն տեղի շրջապատեալ ցցովք • յորոյ 'ի պահպանութ̃ կարգեալ կան արք 25, և վեց հրաձիգք • այն է՝ թօփ : Յամին 1770 յորժամ գնացին անդր գաղղիացիք • ունէին հոլանտացիք անդ երիս նաւս պտղմ̃ • յորս էին արք 50 եւրոպացիք, որք և պատրաստ կէին 'ի ծոցն մոլուքեան կղզեաց ը̃դէմ պապուաց, և ջերամացւոց :

Սաուա , կմ̃ Սէպուա :

Այս կղզի կարի անծանօթ է • զոր ոչ գտաք նշանակեալ յաշխարհացոյցս, զորս ունէաք 'ի ձեռին • զի թէպէտ ոմանք զՍավ կղզին, զոր և շփոթեն ը̃ Սանտել պօսք անուանեալ կղզւոյն՝ նոյն համարին ը̃ այսմ • բայց ը̃ պիշինկայ, սա այլ է 'ի նց̃է, ոմ̃ և 'ի գիլօլոյ • և 'ի րօդեսայ, և յայլ ամ̃ կղզեաց հնդկային ծովու : Որ չէ այնչափ ինչ մեծ • զի երկայնութ̃ նր̃ է իբրև 24 մղոն • իսկ լայնութ̃ին անծանօթ է, զի հիւսիսային եզերք նր̃ չևևս են զննեալ • բայց բաղմամարդ է, և արգաւանդ • բերէ ազգի ազգի պտու-

ղեա

ուտական պտուղս. որպէս սրմա, գօգօ, Թամրհնդի, լեմոն, կիտրոն և այլ այսպիսի պտուղս; բերէ և ցորեան, և որիզ, և մսրացորեան, կորեակ, և պէսպէս պատուական բանջարս 'ի կերակուր մարդկան. և մեղրապոպ, և սեխ, և դդում, և եղէգն շաքարաբեր, բայց սակաւ. այլև ծխախոտ, և բամպակ. գտանի անդ և սակաւ ինչ կինամոն. անկեալ 'ի սակս փափկութեան և վասն վաճառականութեան. այլ դուցէ թէ չիցէ այն ճշմարիտ կինամոն. վասն զի հոլանտացիք ջանան 'ի բռպառասպուս ջնջել զբոյսս համեմից 'ի կղզեաց հընդկաց, որոց համեմք ոչ անցանեն 'ի ձեռս նոցա: Բայց 'ի պտղոց ատոխին անդ և այլ մասնաւոր պտուղք, յորս է ազգ մի պտղոյ, զոր Պլիմպի կոչեն երկայն իբրև 3 կամ 4 մատնաչափ, 'ի մէջն ստուար իբրև մատնաչափ մի աւարտեալ յերկու սրածայր ծագս. պատեան նորա է մաշկ բաց կանաչագոյն. և ունի 'ի մէջն սերմանս կարգեալս 'ի ձև տառեղ: Համ նորա ազդու, և կծու, այլ ախորժական. զոր եփեալ ուտեն: Ունի և ընտանի անասունս, որպէս խոյ, խոզ, էշ, երիվար, շուն, կատու, և գոմէշ. բայց գոմէշք նորա այլազան են 'ի գոմշուց մերոց. զի ականջք նոցա մեծ, և մորթն անճաւ, և գրեթէ լերկ գլխովին. եղջիւրքն երկայն և կոր. և մարմնով վտիտ, մանաւանդ յամարայնի. ուստի և միս նոցա սակաւ է, բայց համեղ: Երիվարքն փոքր են. զի բարձրութիւն նոցա չէ ինչ աւելի քան 6, կամ 7 թզաչափ. այլ թեթև են յոյժ, և արագընթացք. յորս սովորաբար նստին առանց թամբի: Նոյնպէս և խոյք նորա բազմօք զանազանին 'ի մերոց. զի փոխանակ գզաթու՝ ունին զաւե ըստ օրինակի ուղտուց. ականջք նոցա մեծ են և երկայն կախեալ 'ի ներքոյ եղջերաց. իսկ դէմքն նման այծու. և մարմինն վտիտ. և միս նոցա անհամ, և յոռի: Եւ ըստ հակառակն խոզքն պարարտ են յոյժ, և միս նոցա փափուկ, և համեղ: Ունի և ընտանի հաւս պարարտս. այլ ձու նոցա փոքր է յոյժ գրեթէ ըստ ձուոյ աղաւնեաց.

և աղաւնիս, և այլ ազգս ազգս թռչնոց:

Իսկ բնակիչք նորա կարճ են հասակաւ, և թխագոյն. մեծամեծաց և ռամկաց հերքն սեաւ և երկայն: Զգեստ արանց և կանանց է 'ի բամպակի կտաւոյ խայտաճամուկ, զոր բուն բնակիչք նորա գործեն. իսկ կերակուրն խոզենի և միս ձկաց և գոմշոյ և ընտանի հաւք, զորս սովորաբար խարշեալ ուտեն. և քանզի նուազութիւն է անդ փայտի, յայն սակս առ 'ի սակաւ հրով հասուցանել զկերակուր իւրեանց; բրեն ընդ հողով ծերպ, կամ լաւ ևս ասել ակօս իբրև երկու կանգնաչափ ՃԷ երկայն ըստ նմանութեան ակօսի խլրդաց. յորում բանան երիս ծերպս կամ ծակս երկու յերկուսին ծայրս. յորոց մին մեծ է, ուր դնեն զհուր. և միւսն փոքր 'ի միւս ծայրն 'ի շնչահան. իսկ երրորդն է 'ի մէջն բոլորաձև. ուր դնեն զպղինձ կերակրոյ. որ 'ի մէջն լայն է, և 'ի վերուստ սրածայր. ուստի և բոց հրոյն դրեթէ յամ կողմանց պատէ զնովաւ, որով սակաւ հրով հասուցանեն զկերակուր իւրեանց: Արք և կանայք առհասարակ ծամեն զծխախոտ, և զայլ ազգազգական տերևս բուսոց. որք փութով ապականեն զատամունս. և սևացուցանեն բերս զածուխ: Այս կղզի 'ի հինգ իշխանութիւնս բաժանի, ըստ հնգից գաւառաց իւրոց. որք են Լաոյի. Սեպօ. Բէնկո. Պինօ, և Մակասար. որոց իւրաքանչիւրն ունի իւր սեփական իշխան. զոր Ռայա. կամ Ռաճա կոչեն. որք խաղաղութեամբ և սիրով են ընդ միմեանս, թէպէտ և ժողովուրդք նոցա մահմետական են: Եւ սոքա հնգեքին իշխանք միանգամայն ունին 7300 զինուորս, որոց զէնք են հրազէն, տէգ, նետ, և վահան: Բայց յայսցանէ իւրաքանչիւր զինուոր ունի ազգ մի սրոյ, նմանի մանգաղի, բայց միայն զի ծանր է քան զհասարակ մանգաղս, և բերանն նեղ: Կրօն նոցա է ազգ մի թանձր, և բիրտ կռապաշտութեան, զի այր իւրաքանչիւր ըստ հաճոյից զոր ինչ կամի պաշտէ. քանզի չունին զգլխաւոր ինչ կուռս. որում ամենքին պարտաւոր լիցին պաշտօն տանիլ:

Փորթուգալք երբեմն հասին 'ի մոլուքեան կղզիս. ուստ և՛ս կալան զկալուած մի. այլ փութով հանին զնոսա անտի հոլանտացիք. սակայն և ինքեանք ոչ կարացին մնալ գտանել անդր, մինչև ցմերձակայ ճմկս. յորում ընկերութիւն վաճառականաց նոյին հոլանտացւոց այսպիսի դաշն եդ ընդ Ռաճայից, կամ իշխանաց կղզւոյն. իբր զի ինքեանք հոլանտացիք պարտաւոր լիցին տալ սակաւ ինչ վաճառս իշխանաց կղզւոյն: Իսկ իշխանքն պարտաւորեսցին զանձինս չտալ թոյլ ժողովրդեան իւրեանց առևտրութիւնս առնել ընդ այլոց ազգաց, բաց 'ի հոլանտացւոց առանց հրամանի նոցա. և ընդունիլ առ իւրեանս զմի ոմն 'ի հոլանտացւոց անտի իբրև հիւպատոս և դէտ, որ փոյթ կալցի պահպանութեան, և գործադրութեան դաշինն, այլև տալ նոցա ամի ամի որիզ մ. բացորեան, և զայլ բերս երկրին: Բայց հոլանտացիք ըստ բնածին բարուց որք յամի հնարին տարածել զիշխանութիւն իւրեանց, ոչ մի, այլ երիս հիւպատոսս կարգեցին անդ, յերեսն նաւահանդխատս նր̄, յնոմ կողմանց կաշկանդելով զնէ, զի մի կարասցեն գործել ինչ ընդդէմ դաշինն. որք և Ճարձակ իշխանութիս վարեն անդէն:

Գլխաւոր ծոցք, կմ̄ նաւահանգիստք սորին կղզւոյ են Սուպա. և Գոխմօ.

Սուանդեան կղզիք:

Այս կղզիք 'ի սոյն անուն կոչեցան 'ի նեղուցէ անտի սունտայ, կմ̄ 'ի սքանտալինէ, որ է ը̄ մէջ սումադրա, և ճաւայ կղզեաց, որք ը̄ մերումս քերթողահօր 'ի նախնումն կոչեցան Տապրոբանիա: Եւ են կղզիք մեծամեծք ք̄ զայլ կղզիս ասիոյ, ը̄ այրեցած գօտեաւ. բայց օդ նր̄ բարեխառն է սակս յաճախ հողմոց և անձրևաց, այլ վնասակար օտարականաց. յորոց մեծագոյնքն են հետագայքդ:

Պօրնէօ:

Այս կղզի որ մեծ համարէր լինել ք̄ զա̄մ կղզիս նի, նախ ք̄ զկատարեալ գիւտ նորոյ հոլանտայի 'ի գուգայ: Բուն բնակիչք նր̄ սևաւ են, և բնակեն 'ի միջին կողմանս կղզւոյն. իսկ 'ի ծովեզերեայս են մակասարեցիք, ճաւացիք, մալէցիք, և արաբացիք, որք 'ի վր̄ այլոց յաւէ հանգամանաց բարուց իւրեանց, յաւելեն աւնին և զգազանաբարոյութն դժընդակ: Գլխաւոր, և առաւել շահաւէտ բերք նր̄ է քափուր. այն է՝ քէաֆիւրի, իւղ կմ̄ խէժ ցնդական և թափանցօղ. զոր այսպիսի իմն օրինակաւ հանեն. զի զծառն քափուրաբեր հատանեն 'ի մանր չերտս, և եռացուցանեն 'ի ջուր յանօթ ինչ 'ի ձև խալարջուի, ուր քափուրն 'ի վեր ցնդեալ մածանի 'ի կափարիչ անդր անօթոյն. գտանի և բնաւին հոսեալ 'ի ծառոյն իբրև զխէժ: Յեւրոպիս միայն հոլանտացիք գիտեն զարհեստ պարզելոյ զքափուր, յորմէ բզ̄մս յոյժ շահին: Պատմի թէ 'ի կղզի սա գտանի կենդանի ինչ, զոր անգղիացիք անտառային մարդ կոչեն. իբր զի կարի նման է մարդոյ, և զօրաւոր յոյժ, և արագընթաց. զոր ոմանք համարին մասնաւոր իմն տեսակ կապկի:

Յամին 1526 ձեռնարկին փորթուգալք մուտ գտանել 'ի պօրնէօ կղզի, բայց տեսեալ եթէ կարի ոկար է զօրաւոր խուրեանց առ 'ի զինուք ահ արկանել բնակչաց նց, ջանացին 'ի ձեռն պարգեւաց ճնպհ բանալ ինքեանց, մատուցանելով միում 'ի գլխաւորաց անտի կղզւոյն գործս եւ կերպարանս ազնիւս. այլ նա ոչ ընկալաւ, երկուցեալ թէ գուցէ մարդկային կերպարանքն գործեալք 'ի նմա գիշերայն սպանանիցեն զնա. սակայն թոյլ ետ նց վճռկանութս առնել անդէն. այլ յետոյ բնակիչք տեղւոյն առհսրկ կոտորեցին զնս : Նոյն անցք անցին եւ ընդ անգղիացիս, որք զկնի ամաց ինչ մտին անդր : Նոյնպէս եւ հոլանտացիք չարիս կրեալ 'ի բնակչաց անտի, յամին 1748 ածին անդր զունդ մի զօրաց, թէպէտ կարի տկար առ համեմատութ բազմութե բնակչաց կղզւոյն, սակայն այնպս նուաճեցին զիշխանն, ընդ որոյ իշխանութ էր բոլոր պղպեղ երկրին, մինչեւ զիջանել նց, զի բոլոր վճռկանութն պղպեղի միշտ լիցի 'ի ձեռս հոլանտացւոց եւեթ, այսչափ ինչ եւեթ 'ներեցին նմ հոլանտացիք զի կարող լիցէ 250000 օխայ պղպեղ տալ չինաց, որք 'ի վաղ ժամուց յաճախեն 'ի նաւահանգիստս նր : Յետ այսր դաշնագրութե ընկերութն հոլանտացւոց առաքէ 'ի բէնճէրմասէն, որ է մի 'ի գլխաւոր քղքաց սորին կղզւոյ, ափիոն, որ է՝ աֆիոն, աղ եւ հնդկ կտաւս ինչ. եւ առնու անտի ակունս պատուականս, եւ իբր վեցհարիւր հզր կշիռ պղպեղ. որոց կշռոց հարիւրն առնէ իբրեւ 31 օխայ. սակայն 'ի վր այսր ամի սակաւս շահի անտի, զոր եւ բովանդակ ծախէ 'ի պէտս մարդկան, եւ կալուածոց իւրոց, որ անդ. թէպէտ եւ բոլոր ծախք նր հազիւ ժամանեն 92909 վէնէտիկեան ոսկի :

Այս կղզի 'ի բզմ մասունս բաժանի. յորոց զերիս եւեթ գտաք նշանակեալ յաշխարհագրաց, որք են Պօրնէօ. Սուքատանա. եւ Պէնճէրմասէն. զի միւսին կողմանք նր անծանօթ են : Իսկ գլխաւոր տեղիք նր են :

Պօրնէօ : Է մայրաքղք համանուն թգւե 'ի հիւսիսակողմն կղզւոյն, մեծ եւ բազմամարդ, ունի նաւահանգիստ պատուական, ուր կարի յաճախեն նաւք : Տունք նց ցած են, եւ փայտակերտք 'ի վր ցցից շինեալք :

Սամպաս : Քղք առ փոքրիկ գետով 'ի հարաւոյ արեմտից պօրնէօյի, որ եւ կոչի Նոր սամպաս, 'ի պտճառս հնոյն սամպասայ, որ է մերձ առ բերան նմանցել գետոյ 'ի հարաւոյ նոր սամպասայ : Մօտ յայս քղք գտանի հանք անդամանդ ակին :

Լաւէ : Քաղաք 'ի հարաւակողմն սամպասայ, մերձ յակն Լաւէ գետոյն :

Սուքատանա: Փոքր ծովեզերեայ յարևմտեան կողմն կղզւոյն, և 'ի հարաւոյ նախայիշատակեալ ք͞ղքաց:

Պէնէարմասէն: Է մայրաքաղաք համանուն թագաւորութեան, և աթոռ իւրում թ͞գրի, 'ի հարաւային եզերս կղզւոյն, ուր մահմէտականք բնակեն. առ բերան համանուն գետոյն, որ է մեծագոյն գետ այսր կղզւոյ ելեալ 'ի միջին կողմանց ն͞ր յերկուց ականց 'ի ժայռաւոր սեպացեալ լերանց. որ իբրև ժամանէ 'ի ծովն, գործէ անդ ծոց քաջայարմար, ուր կարեն խարիսխ արկանել և նաւք մեծամեծք:

Արևելեան կողմն պօռնէօյ կոչի կողմն ամայի. վ͞ս զի չէք անդ բնակութի, և ոչ նուաճնդիր:

Շուրջ զայսու կղզեաւ են բազմ մանր կղզեք, ո͞ն Լաւտ, կմ Լաւտ. որ է նուաճնդիր սպասաւորական: Պուլաւա. Կըղւէ. ռէյն օփաոփինոսի. Սէյն յոհաննէս. Եըրէէւբարք. Պրանէօնյ. Սաուսան. Սէ մարիամ. Դուքգան. Պուէլան. Սանթիրալէմ. Գոմարբօ. Պաւլէնս Հըրէմպէլ. Պրանէօնյ. Պօրքօն. Լաւէօյ. Սուրօնիօն. Մանգօք. և այլք անանունք:

Հէրմաթա: Է փոքրիկ թագաւորութիւն յարևմտեան ծայրին պօռնէօի:

Սումատրա:

Այս կղզի անկանի առ ցամաք կղզեաւն մալաղայի անջրպետ 'ի միջի ունելով զնեղուցն մալաղայի և սինկափուրայ: Եւ է մի 'ի մեծամեծ կղզեացն ասիոյ. լայն իբրև 900 մղոն. իսկ երկայն իբրև 210: Օդ ն͞ր ծանր է և վնասակար մանաւանդ օտարաց առ հրատապ տօթոյն, զի ուղղակի ը͞ն այրեցած գօտեաւ անկանի, և առ յաճախումն յորդահոս անձրևաց. այլ երկիրն արգաւանդ է յոյժ. բերէ պէսպէս բոյսս 'ի պէտս օգտակարութեան դեղոց, և համեմս. այլ և ոսկի, և այլ ազգի ազգի արմտիս: Պղպեղ ն͞ր ընտրի պղպեղին քօչինու, որ 'ի մալապար լաւագոյն է ք͞ան այլոց տեղեացն ասիոյ: Գտանին անդ և բովք ոսկւոյ արծաթոյ այլև անագի, և այլոց հրահալելեաց: Ունի և ազգ մի նորատեսակ ծառոյ, որ կոչի ծառ խառնեալ, որ 'ի մտանել արեգական ծաղկի, և ծաղիկք անուշահոտ, և 'ի ծագել ն͞ր թօթափին:

'Ի հիւսիսային կողմանս ունի արօտս անասնոց խոտաւէտս և յուռթիս, և գամեշս բազմս, և եզինս, և երիվարս մանունս, այլև անասունս վայրենիս. վ͞ս

Եղջերու և այծեամն, որք մեծութ՟ զանցանեն զմերովք: Յանտառս ն՟ր և 'ի լերինս գտանին և փիղք, և ընդեղջիւրք և կապիկք և օձք: Գետք ն՟ր փոքր են, այլ ձկնալից. առ որովք բազմութ՟ կոկորդիլոսաց որջանան, որք նոքօք կերակրին: Ունի և ընտանի հաւս բազ՟մս և պէսպէս, ոմ՟ն և վայրի թռչունս: Բնակիչք ն՟ր մահմետականք են, որք համարեալ են ազգ ժանտ, նենգաւորք անհաւատարիմք չարասէրք անգութք դաւաճանամիտք ամբարտաւանք արհամարհօղք օտարաց, զինքեանս միայն գերագոյն ք՟ զայլս ունելով: Այս կղզի բաժանի 'ի բազ՟մ փոքրիկ թ՟գրութիւնս. մեծագոյնն է թ՟գրութիւն Աչէմայ, որ աւելի ք՟ զկէսն կղզւոյն գրաւէ. հոլանտացիք ունէին անդ չորս, կամ հինգ ամրոցս. որոց իշխանութիւն տարածեալ էր անդ, ք՟ զբուն թագաւորաց, կամ լաւ ևս ասել իշխանաց տեղւոյն:

Այս բաժանումն կղզւոյն 'ի բազ՟մ տ՟րութիւնս թէպէտ գոյր և յառաջ ք՟ զհասանել անդր եւրոպացւոց, սակայն բոլոր վ՟ճռականութ՟ կղզւոյն յաչէմ գումարէր, ուստի և 'ի նաւահանգիստ ն՟ր յաճախէին յոյժ նաւք ա՟մ ազանց ասիոյ, ոմ՟ն և յետոյ նաւք փորդուգալաց, և այլոց ազգաց եւրոպացւոց, որք զօրացան 'ի կողմանս յայնոսիկ 'ի տկարանալ ասիացւոց: Անդ լինէին տուրևառք, փոխանակելով զարևելեան վաճառս ը՟ ոսկւոյ, և ը՟ պղպեղի, և այլոց վաճառաց այսր բերելից և փարթամ ծ՟ի: Բայց խառովութիւնք, որք յետոյ վեր 'ի վայր արարին զայս գերահռչակ վաճառատեղի, նուազեցուցին անտի զերթևեկս նաւուց: Իբրև նուազեցաւ անդէն յաճախութիւն վ՟ճռականութ՟, խորհեցան հոլանտացիք յայլ անդորրագոյն տեղիս սորին կղզւոյ հիմնել ինքեանց վաճառատեղի. բայց և այնք ոչ յետ բազ՟մ ժմկաց մեծապէս նուազեցան. ք՟զի այն՝ զոր թոյլտուութ՟ թ՟գբի տեղւոյն հիմնեցին յինտրափուր, գրեթէ խապառ եղծաւ զկնի հիմնելոյ և անգղիացւոց վաճառատեղի 'ի ծովեզերեայս յայնոսիկ: Նոյնպէս և վաճառատեղին եամպէայ, օգուտ գրեթէ և ոչ մի ինչ բերէր ն՟ց, զի շրջակայ թ՟գրքն խապառ մերկացուցին զիշխանն տեղւոյն 'ի կալուածոց իւրոց: Ուստի հոլանտացիք հնարէին զնախագրեալ վաճառս լնուլ 'ի պալէմբան ք՟ղքի. ուր էր ամրոց ն՟ց. որոյ 80 զինուորք կարգեալ կային 'ի պահպանութ՟ի. և ամի ամի հանէին անտի երկու միլիոն կշիռ պղպեղ. վ՟ն հարիւր կշռոյն իբրև 2 ոսկի վճարելով. և միլիոն մի և կէս զալին. ը՟ հարիւր կշռոյն իբրև 5 ոսկի վճարելով : Այս գին թէպէտ չափաւոր, մանաւանդ թէ սակաւ երևի, սակայն տակաւին միշտ շահաւոր էր թագաւորի տեղւոյն. զի ինքն նուազ ևս գնով առնոյր 'ի ժողովրդենէ իւրմէ : Ուստի 'ի վաճառաց աստի, այլև յոսկւոյ, զոր հաւաքէին 'ի գետոց անտի նորա, կուտեալ է ասեն գանձ անբաւ :

Գլխաւոր տեղիք սորին կղզւոյ են . Աչէն, կամ Աչէմ : Է մայրաքաղաք համանուն թագաւորութեան 'ի հիւսիսային ծագ կղզւոյն, թագանիստ և բազմամարդ · որ յառաջին կարի բազմավաճառ էր, բայց և այժմ առնեն անդ դոյզն ինչ վաճառականութիւնս անգղիացիք, հոլանտացիք, դանիք, փորդուգալք, և չինք : Տանին անդ որիզ, որ է սովորական կերակուր բնակչաց, և փոխարէն առնուն ոսկի, որ յերկրէ անտի ելանէ : Շինուածք քաղաքիս փայտակերտ են 'ի վերայ ցցից · իսկ բուն բնակիչքն առհասարակ մահմէտականք, հանդերձ թագաւորաւ իւրեանց · որոյ ապարանքն է ընդ մէջ քաղաքին, քաջ ամրացուցեալ ըստ աննելոյ տեղւոյն :

Անդրաճիր, կամ Անդրագիրի : Է մայրաքաղաք համանուն թագաւորութեան ընդ մէջ կղզւոյն : Յետոյ եկաց 'ի ձեռս հոլանտացւոց, որք ունին անդ ամրոց առ 'ի յապահով առնել զտէրութիւն իւրեանց :

Ինդրափուր · և Մանինքապ : Են երկու մայրաքաղաքք երկուց փոքրիկ թագաւորութեանց, որք 'ի մայրաքաղաքաց աստի իւրեանց առնուն զանուն յարևմտեան կողմն կղզւոյն,

Ճամպի : Մայրաքաղաք համանուն թագաւորութեան 'ի հարաւոյ արևելից Անդրաճիրայ · քաղաք մեծ և բազմավաճառ, ունի նաւահանգիստ պատուական : Գտանին և անդ հոլանտացիք, որք և ունին անդ սեպհական վաճառանոց :

Պալէմպան : Է մայրաքաղաք համանուն թագաւորութեան ամուր, և բազմավաճառ : Անդ է գլխաւոր վաճառանոցն հոլանտացւոց, և է յարևելեան կողմն կղզւոյն 'ի կղզի ինչ՝ ըստ մասին 'ի ծովու, և մասամբ իւիք 'ի փոքրիկ գետոյ ձևացուցեալ :

Պանքա : Է կղզի մեծ, որ ունի իւր համանուն գլխաւոր քաղաք ընդարձակ :

Պիլլիդոն : Է միւս ևս կղզի երևելի յարևելեան կողմն նախընթաց կղզւոյն : Են այլև բազում կղզիք ցրիւ շուրջ զՍումադրայիւ կէս մի յարևելեան կողմն, և կէս մի ընդ արևմուտս : Արևելեանքն են Լուսեփարա · Կղզի Ճիժաճիժ ծառոց · Պուրթայս · Եօթն կղզիք · Ինկան, և այլք անանունք : Իսկ արևմտեանքն · Ֆօրնոսա · Խաքէֆայ · Փինանկի · Դուրինոփէ · Նասսաու · Պէրէ · Պէրէման ·

Մէ-

Մեծախեալդ · Մինդաւ · Պադօս · Նիէաս · Պանճաբ · Կէրա-ւէ խօղէց:

Ճէաւա, կմ̅ Յաւա:

Այս կղզի ձգի առ եզերբ սումադրայ կղզւոյն 'ի հարաւոյ արեւելից, ունելով անջրպետ 'ի միջի ըզսունտեան նեղուցն: Եւ է մի յերեւելի կղզեացն ասիոյ· երկայն իբրեւ 600 մղոն· իսկ լայն իբրեւ 120· որ և արգաւանդ է և բարեբեր· բերէ որիզ և այլ արմտիս և շաքար, պղպեղ ազնիւ յոյժ, կոճապղպեղ որ է զենճէֆիլ· և այլ ազգի ազգի համեմս, և պատուական պտուղս: Գտանին անդ և բովք ոսկւոյ և և արծաթոյ և պղնձոյ, այլ և հանք կարմիր յակնթի և անդամանդ ական և ընտիր զմրխտոյ: Նշանաւոր է 'ի կղզի աստ տեսակ մի օձի տարապայման երկայն և ստուար· յորս գտան 20 ոտնաչափ երկայնութ̅բ· և ստուար, իբ̅ ստուարութ̅ պարարտացեալ խոզից: Գոյ անդէն և լեառն հրաբուղխ, որ անհնարին բռնութ̅ բոցս 'ի վեր արձակէ: Մեծագոյն մասն բնակչաց նր̅ մահմետականեն, զոր քարոզեաց նց̅ միոմն արաբացի, զորոյ զգերեզմանն 'ի յարգի ունին· բայց 'ի խորին կողմանս գտանին և կռապաշտք: Այս կղզի բաժանի 'ի բղմ փոքրիկ թգ̅րութս, կմ̅ յիշխանութս, որոց իշխանք, բաց 'ի միոյ, կմ̅ յերկուց ահնրկ ը̅ հրամանատարութ̅ հոլանտացւոց նուաճեալ կան, որք զայս օրինակ սկսան տիրել անդէն:

Յամին 1680 իբրեւ հասին անդր հոլանտացիք, և սկսան հիմնել անդ վաճառատեղի, յօգնութեան կոչեցան 'ի միոջէ յիշխանաց կմ̅ 'ի թգ̅րաց անտի, գալով յիւրում արքայանիստ քղքի պաշարել 'ի թշնամեաց իւրոց, որք կամէին հանել զնա 'ի թգ̅րութ̅է, և վերստին նստուցանել զհայր նր̅, որ իւրովի հրաժարեալ էր· իսկ հոլանտացիք գնացեալ յաղթեցին թշնամեաց նր̅, և հաստատեցին զնա յաթոռ թգ̅րութ̅ իւրոյ· և 'ի հատուցումն այսր ընկալան 'ի նմանէ զընդարձակ ազատութիս, որով զբովանդակ վաճառականութն 'ի սահմանս տէրութ̅ նր̅ յինքեանս գրաւեցին· զոր սակածախիւք պահեն· զի 368 ոգւս եւեթ ունին, բաժանեալ յերկու անզօր ամրոցս· յորոց մին է բնակարան իշխանին հոլանտացւոց· իսկ միւսն գերել թագաւորի անտի· յորս յամին ծախեն 9545 ասկի դահեկան· զոր հանեն ընկ 'ի վաճառացն, որք վաճառ-

ուին

ուկն անդէն · իսկ բոլոր շահ ելեւանց է 'ի պղպեղէն · զի ամի ամի ժողովեն 'ի դուռն սնտի միլիոն մի և կէս օխայ պղպեղ · վն̃ յիսուն օխային, ըն̃ սակարկեն̃ զնոյն, վճարելով ելլե 3 ղուռուշ: Բայց այս շահ սակաւ է առ համեմատութ̃ այնր, զոր շահին 'ի Չերիպօն, որ է այլ իմն փոքրիկ տրութ̃ 'ի նոյն կղզի, այլ բարեբեր յոյժ: Որոյ սուլտանն ապաստանել̃ 'ի պաշտպանութե̃ նոցին, ըն̃ օրինակի վերոգրել̃ Թգ̃րին, շնորհեաց նմ̃ զընդարձակ իշխանութե̃ վճռահատութե̃ յիւրում տրութե̃ · որ և պարտաւոր է ամի ամի վաճառել նմ̃ 1000 չափ, զոր ն.ք լաշդ կոչեն՝ որիզ · մի լաշդն կշռէ 1650 օխայ · և վն̃ միոյ լաշդին վճարեն ելլե 7 ոսկի · Եւ բաց յայսմանէ պարտաւոր է տալ կէս միլիոն օխայ շաքար ընտիր · որում վն̃ 50 օխայի վճարեն ելլե 5 ղռշ̃: Եւ ևս կէս միլիոն, և հարիւր հազար օխա խահֆէ · մի օխայն 16 փողոյ · և 15000 օխայ բամպակ · որոյ լաւագոյնն վաճառի նմ̃ ելլե կէս ղռշի: Թող զայլ բերս երկրին · որք չեն այնչափ ինչ երեւելի: Եւ թէպէտ այսպիսի անողորմութե̃ ճնշին բնակիչք տեղւոյս 'ի Հոլանտացւոց, սակայն չէ ինչ նմ̃ փոյթ · և ոչ իսկ երբեք խորհին 'ի բաց թօթափել զծանրակիր լուծ նմ̃, քանզի տկար են · և սոյն թէ 'ի մէջ համօրէն ժողովրդոյն Ճեաւայ կղզւոյն, ժողովուրդ սորին դուռի է յաւէտ հլու, քաղցրաբարոյ, և խաղաղական, զորս բաւական են 100 Աւետ Եւրոպացիք զսպել: Ամ̃ ծախք, զոր առնեն Հոլանտացիք 'ի պահպանութե̃ իշխանութե̃ իւրեանց 'ի սմին դուռի հազիւ հասանեն 93727 ոսկի · զոր 'ի կասւոյն Աւետ հանեն, զոր անդ առնեն: Նոյնպէս և 'ի տրութե̃ն մատերանոյ ոչինչ ը̃հասս յաւելնոյ սնտի շահին Հոլանտացիք: Այս տրութի որ յռ̃ջագոյն ձգէր 'ի համօրէն կղզին, որ և այժմ զմեծագոյն մասն նր̃ գրաւէ, առ ժամ մի ը̃դէմ եկաց Հոլանտացւոց · է զի՝ յաղթեաց նմ̃, և է զի՝ յաղթեցաւ 'ի նմ̃է, սակայն միշտ քաջութ̃ պաշտպանեաց զազատութե̃, և զանկախութե̃ իւր մինչև ցամն 1704, յորում ամի 'ի մեռանիլ Թգ̃րի տեղւոյն յարեաւ հակառակութի 'ի մէջ որդւոց, և եղբօր մեռեալ Թգ̃րին · վն̃ յաջորդելոյ 'ի տեղի նր̃: Որով և ժողովուրդն յերկուս պառակտեցաւ, մեծ մասն նմ̃ զկրտսեր որդւոյն կալեալ: Յայնժամ Հոլանտացիք ժամ դիպող գտեալ, և զայն տրութի ը̃ ձեռամբ իւրեանց նուաճել, կալան զկրտսեր եղբօր Թգ̃րին, զոր և քաջութ̃ Թգ̃րեցուցին: Այս օրէնս եդին և սմա, պահանջելով 'ի նմէ, ամի

ամի վաճառել ինքեանց հինգ հազար լաշտ աղ · յիսուն հազար օխայ պղպեղ · և զբոլոր լեղակն, և զղաւաւիկն · այն է՝ զունինխ, որ եղանի 'ի նմին տէրութեան · բամպակ մանեալ, և զայլ պէտս իւր կարի չնչին և անարգ գնով: Մի միայն պալատական անուանեալ տէրութիւն, կամ ձեռն զերծ մնայ 'ի յափշտակիչ մագլացն հոլանտացւոց սակս անբերքաւորութեան իւրոյ և աղքատութեան: Յայս ժամ յիշատակեալ տեղիս, թէպէտ ունին հոլանտացիք կալուածս, բայց կատարեալ տէրութիւն նոցա է միայն յեաքադրա գաւառ · որոյ և երկիրն բովանդակ է ընդ իշխանութեամբ եւրոպացւոց · և չինաց, որք են ընդ հնազանդութեամբ եւրոպացւոց, և ասի թէ կան 'ի նմին գաւառի իբրև 150 հազար գերիք, կառավարեալք 'ի սակաւ ամանց ազատաց:

Այս գաւառ ամի ամի բաց յամսանոց բերէ երկու միլիոն կշիռ խահֆէ · 75 հազար օխայ պղպեղ · 13 հազար օխայ բամպակ · 5 հազար լեղակ · 5 միլիոն օխայ շաքար · և այս ժամ հաւաքեալ կուտի 'ի պատաւիա · և անտի սփռի յայլ և այլ կողմանս Եւր:

Պատաւիա: Է քաղաք շինեալ 'ի հոլանտացւոց յամին 1619 'ի վերայ աւերակաց Նախնի եաքադրայ քաղաքին յարեւմտեան կողմն կղզւոյն 'ի խորին իմն ծոցի, լցեալ բազմութեամբ կղզեաց, որք պատսպարան են քաղաքին, խափանելով զբռնութիւն ալեաց · ուստի և ապահով է ծոցն այն յամենայն հողմոց · բայց միայն զի 'ի պղտորեալ ժամս ոչ սակաւ դժուարութիւնս կրեն գնալ 'ի նաւս · որք պարտաւորեալ են հեռի 'ի քաղաքէ անտի խարիսխս արկանել · ուր հանէ երկայնաձիգ ծոց մի, որ է ընդ մէջ կղզեացն այնոցիկ, գործեալ 'ի միոյ 'ի գլխաւոր գետոց սորին կղզւոյ · որ արբուցեալ զդաշտս, և անցեալ ընդ պատաւիա քաղաք, ընդ այն ծոց գնայ մտանէ 'ի ծովն · յառաջագոյն խոր էր իբրև 12 ոտնաչափ · այլ այժմ հազիւ 6 ոտնաչափ: Եւ է քաղաք մեծ բազմամարդ, և ամուր · ունի շուրջանակի խրամ լայն և խորայատակ և ամրոց հզօր և գրեթէ անառիկ, և չորս դրունս · ութ մեծամեծ և ընդարձակ փողոցս · բազում անկելանոցս, և շուկայս կամ վաճառանոցս, և համբարանոցս կարասեաց նաւուց · և բնակիչս իբրև հարիւր հազար, յորս են և բազմութիւն յոյժ չինաց: Կարի յաճախեն անդ նաւք գրեթէ յամենայն կողմանց Եւր:

Չինացիք ամի ամի 12 նաւս առաքեն, որք բարձեալ բերեն քափուր յախճապակեայ անօթս մետաքս թէյ և բամպակ · որոց բոլորեցուն գինն հասանէ 9272727 վենետկեան ոսկի: Իսկ յեւրոպացւոց առաւելագոյն

յա

յաճախեն անդ սպանիացիք, և անգղիացիք․ բայց հոլանտացիք ձախողակի իմն գնան ը՟դ նաւ, և ոչ ընդունին զնս՟ երբէք վաճառականս, բայց 'ի սպանիացւոց, որք գնան անդր 'ի մանիլայէ, տանելով ոսկի և արծաթի դրամս և որդան կարմիր․ և փոխարէն առնուն կտաւս, և կինամոնս։ Այլ տեսեալ հոլանտացւոց, զի գաղղիացիք, և անգղիացիք յաճախէին 'ի փիլիպպեան կղզիս բառնալ անտի կինամոնս, յամին 1759 կամեցեալ նահանգն արկանել նց՟, սահմանեցին վաճառել սպանիացւոց զկինամոնն նովին գնով, որով յեւրոպայիս վաճառի։ Այս գործ նց՟ մեծապէս նուազեցոյց զառևտուրն և զերթևեկ նաւուց սպանիացւոց․ նոյնպս՟ և 'ի վ՟ր անգղիացւոց, որք առաւելապս՟ յաճախեն անդ, բզ՟մ կապանս եդին։

Ընկերութին նց՟ յամ՟ վաճառայ, զոր Թողու հանել և մուծանել 'ի քղք անդր, ը՟դ հարիւրոյ հինգ պահանջէ․ որոյ բոլոր գումարն ամի ամի հ՟նէ 9166181 ոսկի։ Բայց այս բովանդակ գումար չէ բաւական 'ի ծախս նց՟, զոր առնեն անդ․ որ հասանէ 9545454 ոսկի։ Սոյն այս ընկերութ՟ն հոլանտացւոց ամի ամի առաքէ անդ 20 նաւս լցեալս բեռամբ, և առնու անտի ոսկի արծաթ ականս պատուականս, մարգարիտ, պղինձ, թէյ, յախճապակեայ անօթս, համեմս, մետաքս, և բամպակ։ 'Ի քղքի աստ է գլխաւոր ատեան հոլանտացւոց հնդկաց ծ՟ի․ զոր կացուցանեն 6 խորհրդականք, և այլ ևս ոմանք արտաքոյ կարգի․ և մի ոմն սպարապետ, որ վարէ զիշխանութ՟ն փոխարքայի, և է նախագահ ժողովոյն․ զորմէ կախեալ կան վեց հիւպատոսք, կամ կառավարք հոլանտացւոց․ որք 'ի հնդկիս են, թ՟ հիւպատոսն բալեսկադայ որ 'ի գորոմանտել․ ամպոյնայն․ պանտանայն․ տերնատեայ․ մոլուգեայ․ մալաքայի․ և սելեանայ։

Օնրուստ։ Է մի 'ի բազմութ՟է անտի կղզեաց նախայիշատակեալ ծոցոյն, երբև 6 մղոնաւ հեռի 'ի պատավիա քղքէ․ զոր մարթ է կոչել գործարան, և համբարանոց կարասեաց նաւուց․ զի ա՟մ նաւք անդ դտանեն զա՟մ պիտոյս, ուր և միշտ՝ գտանին երեք, կամ չորս հարիւր փայտահատք եւրոպացիք։

Բանդան, կամ Պանտամ։ Է ամուր վաճառատեղի և պատուական նաւահանգիստ․ և մայրաքղք գեղեցիկ և բազմավաճառ համանուն փոքրիկ Թ՟գրութե յարևմտեան կողմն պատավիոյ։ Ունի ևս սեփական Թագաւոր մահմետական ը՟դ իշխանութ՟բ հոլանտացւոց, որք դրեթէ բացարձակ տ՟ր են քղքին, և համօրէն այնր Թգւրութե · որոյ և գլխաւոր վաճառականութին է 'ի ձեռս նց :

Մադէրան : Մայրաքղք համանուն Թգւրութե 'ի հարաւային եզերս կղզւոյն · մեծ և բազմամարդ և ամրացուցեալ լերամբք, որք շուրջ պատեն զնովաւ : Անդ է բնակութի Թգւրի տեղւոյն յՃարձակ, և 'ի մեծաշէն ապարանս · զորմէ ասեն թէ ունի իւր թիկնապահս դունդ մի տասն հազար կանանց զինուորելոց · որոց սակաւ զօրք հօլանտացւոց, զօրս անդէն ունին, հեշտեաւ իմն արդեօք կարէին ըդդէմ ելանել · և գուցէ ելցեն ը անյագուն իւրեանց առ 'ի տիրել :

Սէփամէր : է քաղաք և տրուն 'ի հարաւակողմն կղզւոյն, 'ի ծագն արևմտեան :

Պաչալան : է այլ իմն տրուն ը մէջ մադարամայ, և սխաամբրայ :

Պալամպաան : է գլխաւոր քղք համանուն փոքրիկ, և աղքատ տրութե յարևելեան կողմն կղզւոյն, առ պալեայ նեղուցաւն :

Պալէ : է կղզի, որ ունի իւր համանուն գիւղաքղք :

Լօմպօք : է այլ իմն կղզի ը մէջ պալի, և Սոմպաւա կղզեաց, որ չև ևս է ը բոլորին ծանուցեալ :

Մադուրա : է կղզի, որ անջատի 'ի ճեաւայ կղզւոյն 'ի ձեռն անձուկ նեղուցի · հօլանտացիք ունին անդ 15 զինուորս կարգեալս առ 'ի բռնադատել զբնակիչս կղզւոյն ինքեանց վաճառել զորիզ իւրեանց անարգ և չնչին գնով · և ոչ այսչափ միայն, այլ և զչափն ևս խարդախեն, և այնպէս կրկնապատիկ յափշտակեն 'ի տառապելոց անտի, չարաչար կեղեքելով զնս :

Եափուրա, կմ **Եափարա** : է աւան 'ի լեզու իմն հողոյ, որ ձևացուցանէ զնւհնգիստ 'ի հիւսիսային կողմն ճեաւայ կղզւոյն, անուանեալ Նաւահանգիստ Մանփալէայ · առ որով է միւս ևս աւան Ռամպօք կոչեցեալ :

Ջէրիպօն : է մայրաքղք համանուն տրուե ը իշխանութբ հօլանտացւոց, յորմէ ոմ վերագոյնդ նշանակեցաք, բզմն յոյժ շահին :

Են այլևս կղզիք 'ի սունտեան նեղուցի, որք անուանին ը ճեաւայ կղզեաւ · որոց գլխաւորքն են Թամբէնկ · Սամօմպօ · Լօմպօք, կմ Լօմպէք · Գօմբրամօն · Եաձօա · Նաւէօա պարօռն · Կղզի Էլէխանշան · և Կղզի Փըշխան :

ԱՇԽԱՐՀ. Ժ.

ՑԱՄԱՔՔ ՆՈՐԱԳԻՒՏՔ 'Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՍ ԱՍԻՈՅ:

Ի վաղուց ժմկաց մեծափափաք ցանկային աշխարհագիրք, զի որք 'ի մեծազօր Թգ̃րացն Եւրոպիոյ առաքեցան 'ի զննել զայն մասն վերին կիսագնտոյս մերոյ, որ է ընդ մէջ սառին բարեխառնոյ, հարաւային ծայրի ափրիկոյ, և հօրն անուանեալ սարի, որ է 'ի հարաւային ծագ ամերիկոյ: Յամին 1616 յորժամ գտաւ Ենդրաքդ անուանեալ երկիրն, որ է 'ի հարաւային ովկիանոս անդր յարեւմտեան կողմն սառին բարեխառնոյ, և 'ի հարաւոյ ճեաւայ կղզւոյն մեծի, անշուշտ ստուգեցաւ կարծիք Ծագրաց որք հաստատէին եթէ գտանի անծանօթ երկիր 'ի կողմանս սուզական բեւեռին. և առժամայն սկսան եւրոպացիք ը̄ կողմանսն ը̄ այնոսիկ ճանապարհ առնել: Ապա զկնի երկուց ամաց. յ̃ 1618 գտաւ Տիէմէն անուանեալ երկիրն 18 աստիճանօք յաւէտ ը̄ արեւելս. և իբրև 10 աստիճանօք առաւել 'ի հիւսիսակողմն ք̃ զԵնդրաքդ: Յամին 1619 յովհաննէս եւտելս եհաս յայլ կողմն ինչ այնր երկրի առաւել հարաւային գրեթէ ը̄ նովին երկայնութ̃, ը̄ որով է երկիրն Ենդրաքդեայ: Յետոյ յամին 1622 գտաւ և երկիրն Լէոնի, որով երևելի մասն արեւելեան ծովեզերեայ կողմանց այսր նորոյ երկրի եկն 'ի ծանօթութ̃. որ և միշտ կոչեցաւ երկիր հարաւային: Ապա զկնի երից, կմ̃ չորից ամաց. յ̃՝ յամին 1627 պետրոս նիւց, անցեալ զլիօնաւ. և ձ̃նդհորդել առ ծովեզերբք ն̃ր ը̄ արեւելս, եգիտ զերևելի մասն ինչ հարաւային ծովեզերեայց այնր երկրի. Եւ յամին 1628 նաւապետ ոմն վիթ անուն եգիտ զայլ գլուխ այնր երկրի 'ի հիւսիսակողմն երկրին Ենդրաքդեայ. զոր և յիւր անուն կոչեաց: 'Ի նմին ամի գտաւ Գարբենդարիա, և Առնհայմ երկիրն: Եւ հուսկ ուրեմն 'ի 1642 Թասման անուանեալ նաւապետն եհաս 'ի գլուխն առաւել հարաւային այնր երկրի. զոր յայնվայր համարէին մասն հարաւային ցամաքի: Իսկ վախճան ող̃ յայս նմ̃ նաւարկութեա էր ստանալ կալուածս 'ի կողմանս յայնոսիկ : Այլ 'ի ձեռն բազմապատիկ երթեւեկութեան նաւուց, տեսեալ իշխանութեանց եւրոպիոյ, եթէ չէր լինել նոցա շահաբեր երկիր ստանալ անդ, սակս հեռաւորութեան տեղեացն, յայն սակս ոչ եւս յօժարեցան նաւս առաքել 'ի կողմանս յայնոսիկ 'ի գիւտ նորոյ աշխարհի. եւ այսպէս այնուհետեւ առ ժամ մի չեկին 'ի յայտ այլեւս նոր աշխարհք : Ապա վերջին արքայն անգղիացւոց շարժեալ 'ի գիւտ եւ այնր անծանօթ մասին հողագնտոյս մերոյ, առաքեաց չորս երեւելի նաւապետս զկնի միմեանց, որք էին պիրօն. վալլիս. գարդրէք. իսկ չորրորդն եղեւ յակոբոս գուգ. այրն մեծահամբաւ, որոյ առեալ ընդ իւր քաջ աշխարհագիրս, եւ երկրաչափս, եւ երկու նկարիչս, զմին 'ի գծագրել զգիւրս, եւ զձեւս աշխարհաց. իսկ զմիւսն 'ի նկարել զնաբանչան իրս, զպատկանեալս 'ի բնական փիլիսոփայութի, ելին 'ի ճանապարհ 'ի նաւահանգստէն փլիմութայ յամսեանն օգոստոսի 'ի 1768. եւ ճանապարհորդեալ ընդ հարաւ 'ի կողմն սուզական բեւեռին, գտին նորանոր տեղիս. յորս լոկ նոր հոլանտայն մեծ է գրեթէ քան զհամօրէն եւրոպիա. զի 'ի 11 աստիճանէ ձգի մինչեւ 'ի 39 աստիճան հարաւային լայնութեան : Վասն որոյ մարթ էր արժանապէս հինգերորդ մասն աշխարհի անուանել զայսոսիկ նորագիւտ երկիրս, որք անկանին անդր քան զհասարակածն. զորս յայսմ վայրի սկիզբն արասցուք ստորագրել ըստ նոր տեղեկութեանցն :

Նոր հօլլէնտ հարաւային, որ է Նոր հոլանտա :

Այս աշխարհ, զոր նախագրեալ մեծանուն յակոբոս գուգ Նոր հօլլէնտ հարաւային կոչեաց. եւ զոր ոմանք յայժմեան Աշխարհագրաց Հարաւային ասիա անուանեն, գրաւէ զարեւելեան կողմն մեծի կղզւոյն անուանեալ Նոր հօլանտա : Եւ ունի իւր սահմանակից 'ի հարաւոյ զովկէանն. յարեւմտից ընդ մասին զմիջերկրական անծանօթ ծովս, եւ ընդ մասին զգարբենդարիա. իսկ 'ի հիւսիսոյ, եւ յարեւելից զհարաւային ովկիանոս : Երկայնութիւն նորա 'ի հիւսիսոյ ընդ հարաւ է 'ի սարէն եօրքայ, մինչեւ ցսարն հովէ է 1680 Աշխարհագրական մղոն :

Երկիր նորա 'ի հարաւային կողմանս ընդ 33. եւ 34 աստիճանօք ցած է եւ տափարակ, բայց գնալով ընդ հիւսիս առ փոքր մի բարձրանայ, ուր տեսին անդղեացիք եւ բլուրս, այլ լեառն եւ ոչ մի, եւ 'ի խորագոյն կողմանս գտանին լիճս և ճահիճս մեծամեծս , յորս բուսեալ կային կնիւն ․ և այլ ջրային բոյսք Թանձրախիտք ջովացեալք յոյժ , այլև ինքնաբուղխ աղբիւրս և վտակս անհամարս , յորմէ յայտ է Թէ ջրաբեր է երկիրն դէմ 'ի կողմանսն յորս հասին անգղիացիք ․ զի Թէ յայնպիսում ցամաքային ժմկի այնչափ ջուրք գտան 'ի նմ̅ , քաջայայտ է Թէ յանձրևային եղանակս առաւել յորդին : Բայց երկիրն ը̅ առաւել մասին աւազուտ է ․ սակայն ուրեք ուրեք տեսին և հովիտս գալարուտերս պարարտապատս , այլև մայրիս 'ի վ̅ փոքրիկ բլրոց և ժայռից , այլ ծառք ն̅ց ցանցառք և մանունք , զորս առաւել Թուփս արժան է ասել, ք̅ ծառս : Երկու ևեթ տեսակս մեծամեծ ծառոց տեսին անդէն , որք 'ի դէպ լցեն 'ի պէտս շինուածոց , բայց և այնք սակաւ ուրեք գտանին ․ և ուր գտանինն ցանցառ են իբրև 40 ոտնաչափ տարակայ 'ի միմեանց : Մին յերկուց տեսակաց անտի , սփռեա̅լ յամ̅ կողմանս երկրին՝ խիժաբեր է , տերևք ն̅ր երկայն են և նեղ ը̅ նմանութե̅ տերևոց ուռենւոյ , իսկ խէժն զոր բերէ մԹին կարմրագոյն , նմանեալ արեան վիշապի , որ է տեսակ իմն խէժի , և լինի յաւրիկէ պիտանի 'ի դեղորայս , զոր յիշատակէ տամբեէր 'ի գիրս ճ̅նպհորդութե̅ իւրոյ ․ գուցէ նման իցէ այնմ, զոր Թամման եգիտ 'ի տիէմէն : Իսկ երկր̅դն ը̅ իրաց ինչ նման է փատղէնւոյ : Իսկ փայտ երկոցունց ևս կարծր և ծանր յոյժ : Բաց 'ի սոցանէ գըտանին անդ և երեք ազգք արմաւենեաց : Առաջինն որ իբր 'ի բազումս առատապէս բուսանի 'ի հարաւային կողմանս , ունի տերևս բազմածալս ը̅ նմանութե̅ հովահարի ․ պտուղ ն̅ր մանր է , այլ քաղցր յոյժ և համեղ ․ և կորիզն պարարտացուցիչ կերակուր խոզից : Երկր̅դն առաւել նմանի ․ բուն արմաւենւոյ ամերիկեան կղզեաց ․ տերևք ն̅ր մանր են , և ցաւատեալ ․ և պտուղն նոյնպէս քաղցր , այլ մեծ ք̅ զառաջնոյն : Իսկ երր̅դ տեսակն միայն 'ի հիւսիսային կողմանս լինի , ոչ̅ և երկր̅դն ․ և բարձրութի̅ ն̅ր հազիւ ժամանէ ցտասն ոտնաչափ , և տերև նորա մանր է և ցաւատեալ ը̅ նմանութե̅ տերևոյ վայրենի կաղնեաց ․ սա ոչ բերէ պտուղս ողկուզաւորս , այլ ընկոյզս բոլորաձևս 'ի չափ շագանակի ․ որ ոչ է բարի 'ի կերակուր , այլ դեղ է լուծողական ․ զորոյ ըղփորձն առին անգղիացիք , զի անփորձ գոլով այնմ, կերին անտի , և պատահեաց 'ի նս̅ զօրավայնալուծութի̅ սաստիկ ․ և խոզք ն̅ց , որք կերան աւուրս ութ հիւանդացան․ և ոմանք ևս սատակեցան ։ Բայց ՚ի ծառոց սատի, գտանին անդ և այլ ազգի ազգի մանր ծառք, անծանօթք առ մեզ․ այլ և պէսպէս բոյսք բժշկականք, յորս գտանի բոյս մի փոքրիկ, որ ունի տերևս նեղս, երկայնս, և ջլայինս, յորմէ հոսի խէժ իմն գեղնագոյն, որ բուրէ հոտ անոյշ․ այլ ոչ ներեաց ժամկն լինել քննել զյատկութիս այնր բուսոյ ։ Գտանին և ազգի ազգի ոլոռոք, յորոց ոմանք են ՚ի կերակուր, և այլք ՚ի դեղ․ և տեսակ մի բակլայի․ և այլևս ինչ ինչ արմտիք ։

՚Ի չորքոտանիս նորոյն կալլէսի նշանաւոր է տեսակ մի շան ; զոր բնակիչք նր̃ գանկուռ կոչեն, սառ՛ար գրեթէ հաւասար նոխազի․ գլուխն և պարանոցն փոքր առ համեմատութի̃ այլոց մասանց մարմնոյն․ իսկ ձեռն երկայն իբր ՚ի չափ մարմնոյն, որ առ սակաւ սակաւ նրբացեալ՝ սրածայր աւարտի․ և ոտուքն նուրբք․ յորոց երկու առաջինքն կարճ են իբրև ութն բթաչափ ևեթ․ իսկ յետինքն եռապատիկ երկայն ք̃ զառաջինսն ։ Սա երբ ՚ի բազում ոստոստելով քայլէ, և յայնժամ՝ ՚ի վեր ունի զգլուխն, առնու քայլս մեծամեծս, զառաջինն ոտս սովորաբար ամփոփէ ՚ի կուրծս, որք թուին թէ ոչ առ այլ ինչ են պիտանացու նմա, եթէ ոչ ՚ի պեղել զհող ։ Գոյն մորթոյ նր̃ ՚ի մթին մոխրագոյն հարկանէ բայց ՚ի գլխոյն, որ ըս̃ իրաց ինչ նման է գլխոյ նապաստակի ։ Միս նր̃ ըստ պատմելոյ անգղիացւոց, որք կերան անտի համեղ է ։ Գտանին անդ և այլևս նորատեսիլ կենդանիք, այլ և գայլ․ զոր աչօք իսկ տեսին անգղիացիք․ և ազգի ազգի թռչունք երկակենցաղք․ և ցամաքայինք․ զ̃ր թութակք երփներանգք, տատրակք, և աղաւնիք, որք երամովքն թռչին գեղեցիկք յոյժ ունին ՚ի գլուխս ցցունս մեծամեծս ։

Տեսան և օձք մեծամեծք, և մանունք թիւնաւորք և անթոյնք, ոռ̃ և ազգի ազգի մրջիւնք․ յորոց ոմանք կանաչագոյն են, որք ՚ի վր̃ ծառոց շինեն զբոյն իւրեանց սքանչելի ճարտարութբ̃, զոր անգղիացիք մանրակրիտ գիտողութբ̃ զննեալ, պատմեն թէ անհամար բազմութի̃ մրջմանց միաբանեալ՝ ժողովեն ՚ի միասին մեծամեծ տերևս իբրև թզաչափս, և զծայրս տերևոցն մածուցանեն առ միմեանս ՚ի ձեռն մածուցիկ հիւթոյ ծորեալ ՚ի մարմնոց իւրեանց, ապա զծայրս մածուցեալ տերևոցն ամփոփեալ ժողովեն և շինեն քառակուձև ոպարկ ՚ի չափ փոքրիկ գլխոյ մանկան, զոր կախեն զծառոց․ և մտեալ բնակեն ՚ի նմա․ իսկ անգզեոցիք, որք կային 'ի զննել 'ի գործել նց՟, ցրուեալ զնո՟ 'ի գործոյ անտի, տեսին զի տերեւքն ինքնին բացան իւրեանց առաձգական զօրութբ՟․ յայնժամ մրջիւնքն թողեալ զգործ իւրեանց, յարձակեցան 'ի վր՟ նց՟, եւ խայթէին զնո՟ չարաչար, բայց խայթոց նց՟, թէպտ՟ սուր էր, իբրեւ զխայթոց մեղուի, այլ ոչ էր թիւնաւոր, զի ցաւ նց՟ հազիւ առ վայրկեան մի տեւէր։ Գտանի անդ եւ այլ տեսակ մի մրջմանց, որք բոլորովին սեաւ են, սոցա բնակութ՟ է 'ի մէջ ոստոց մասնաւոր իմն ծառոյ, զորս ինքեանք խոռոչեն, 'ի բաց հանեալ զմէջ նց՟․ սակայն տակաւին ծառն արձակէ ծաղիկս եւ բերէ պտուղս ։

Եւ եթէ ոք խորտակեսցէ զմի յոստոց անտի խուռն բազմութ՟ մրջմանց յարձակին 'ի վր՟, եւ խայթեն անհընարին ։ Են անդ եւ սպիտակ մրջիւնք, որք ըստ՟ իրօք նման են այնոցիկ, որք գտանին յարեւելեան Հնդիկս ։ Սք՟ երկու բոյնս շինեն, մի 'ի վր՟ ծառոց կախեալ զոստոց նց՟, որոց բոյնն գրեթէ եռապատիկ մեծ է ք՟ զգլուխ մարդոյ․ շինեալ 'ի մանր խռուճոց մածուցիկ իմն հիւթով ողնդապէս ը՟ միմեանս մածուցելոց․ զոր խորտակեալ անգղիացւոց տեսին 'ի ներս անհամար խորշս, որք առհնրկ՟ հաղորդութ՟ ունէին ը՟ միմեանս․ եւ բզմ՟ ծամածուռ շաւիղս, որք հանեն յայլ մրջմնարանս 'ի վր՟ նորին ծառոյ։ Բաց յայսցանէ ունին եւ այլ ճնպհ՟ մի ծածկեալ կնիւնիւ, որ հասանէ մինչեւ ցգետին, ընդ որ 'ի ձմերայնի, եւ յանձրեւային ժամս իջանեն յերկդ՟ բոյնն, որ է 'ի գետնի բրգաձեւ ցհինգ, կմ՟ ցվեց ոտնաչափ բարձրութբ՟․ արտաքին կողմանք նր՟ կաւապատեն իբրեւ երկու մատնաչափ թանձրութբ՟․ եւ 'ի ներքս են խորշք յոլովք, բայց չունին բնաւ անցս առ արտաքս, այլ մի միայն ստորերկրեայ ճնպհ՟, ընդ որ իջանեն 'ի խորս ցարմատն ծառոյն․ եւ անտի ը՟ բունն գողունի ճնպհ՟աւ ելանեն 'ի ծառ անդր 'ի բոյնս կախեալս զոստոց ծառոց ։ որք են իբրեւ ամարանոց նց՟ ։ Նոյնպս՟ եւ 'ի շրջակայ ծովս նր՟ գտանին պէսպէս տեսակք ձկանց, որք գլխովին անծանօթ են յԵւ՟ մերում․ եւ յաւազուտս անդ, եւ 'ի ծովեզերեայ ժայռս կանաչագոյն ստուար պատուհական, եւ ազգի ազգի ծովային խեցիք, այլեւ խեցգետին բզմ՟ յոյժ, եւ կոկորդիլոսք 'ի գետս, եւ յաղի լիճս ։

Բնակիչք այսր Ծ՟ի երեւի թէ կարի սակաւ են առ համեմատութ՟ լայնարձակ տարածութեն իւրոյ․ վս՟ զի միանգամ եւեթ տեսին անդ անգղիացիք 30 ոգիս արս և կանայս 'ի միասին , առ պօղպանեան ծոցով , որք ժողովեալ 'ի գլուխ ժայռի միոյ . ուկէն 'ի շինեն Նաւու անգղիացւոց իբրև 'ի նորատեսիլ իմն, զի մինչև ցայնժամ չև էր նց՟ տեսեալ Նաւս . և յորժամ կամեցան տալ պտզ՟մ ը՟դէմ անգղիացւոց , հազիւ կարացին չորեքտասան , կմ՟ հնգետասան պատերազմական 'ի միասին ժողովել . և 'ի բովանդակ ծովեզերեայսն՟, ոչ տեսին գեօղս , այլ և ոչ երկիր մշակեալ . ուստի թուի թէ ամենևին անծանօթ է առ նս՟ երկրագործութի՟ : Եւ թէպէտ անգղիացիք ոչ մտին 'ի ներքին կողմանս Ց՟ին , սակայն իբր հաւաստի իմն է , թէ և անդ չի՟ք բնաւ երկրագործութի՟ . զի թէ գոյր , հարկաւորապէս և 'ի ծովեզերեայսն՟ ուրեք ուրեք երևէր . որում յայտնապ՟ն զհետ գայ , թէ և բնակիչքն սակաւ են , զի առանց երկրագործութե՟ դժուարին իմն է բազմութե՟ մարդկան գարման գտանել : Այլ թէ առ 'ի՞նչ ոչ բազմանան անդէն մարդիկ , չէ ինչ հաւաստի , կմ՟ զի երկիրն ինքնին անզաւակաբեր է , և կմ՟ զի յարաժամ մարտ ը՟ միմեանս մղելով , կոտորեն զիրեարս , որով և սպառին :

Սոքա առհասրկ՟ բիրտ են և վայրենիք զկերպարանս ևեթ ունելով մարդոյ , իսկ բարուք գրեթէ ոչինչ ը՟հատ են 'ի վայրենի անասնոց . կին մարդ բաց 'ի սակաւուց ումանց , և այն ևս 'ի հեռուստ , բնաւ ոչ տեսին անդ . իսկ արքն , զորս տեսին , ը՟ որոց և վարեցան փոքր մի իբր , 'ի բազումս միջահասակ են մարմնով , և կերպադրութի՟ դիմաց նց՟ չէ այնչափ ինչ տգեղ . զի չեն ձառագէմ , թանձրաշուրթն , և տափակունչ , ը՟ եթովպացւոց . այլ հ՟նրկ ըստ ազանց այլոց Ց՟աց . ձայն նց՟ քաղցր է , և կանացական . այլ իսկական գոյն մարմնոյ նց՟ անծանօթ է . զի յոտից մինչև ցգլուխս ծածկեալ՟ են տղմով և աղտեղութ՟ . և թէպէտ բզ՟մս աշխատ եղեն անգղիացիք քերելով և լուանալով զտիղմն և զաղտեղութիս դէթ 'ի մասնէ ինչ մարմնոյ նց՟ 'ի տեսանել զբուն գոյն նց՟ , այլ ոչ կարացին . այսչափ ինչ ասեն , թէ սաստիկ սևութին այն , որ երևի 'ի նս՟ , թուի լինել յաղտեղութեց անտի զնոքօք մածելոց . իսկ բուն գոյն նց՟ թուի դեղնախառն թուխ : Հերք գլխոյ նոցա այլ՟ և մօրուացն սևաւ են , թաւ և երկայն իւղայլին , և աղտեղի , և թէպէտ ոչ օծանեն ոչ իւղով և ոչ ճարպով , սակայն 'ի վ՟ր այսր ամի՟ չիք ոջիլ 'ի նս՟ . և սակայ փաքրեն զհերս . ոչ եթէ հատանմամբ , զի չիք առ նս՟ մկրատ , այլ այրելով : Բոլորովին մերկ շրջին . այլ աղտեղութին և տիղմն

թանձ

Թանձրամած իբրեւ պատեան իմն մածեալ զմարմնով, է նց փնկ հանդերձից, որով և երեւին իբրեւ խեցեմորթ կենդանի. զոր 'ի պէսպէս երանգս ներկեն. զթիկունս, և զլանջս 'ի մթագոյն կարմիր, բացագոյն կարմիր նիշս 'ի վ՟ր արկեալ. իսկ զբազուկս, և զսրունս, և զայլ անդամս 'ի գոյն սպիտակ գունագոյն շերտս 'ի վ՟ր նկարեալ:

Գլխաւոր զարդ նց է ոսկր ինչ անցուցեալ խաչաձեւ ը̄ միջին աճառ ըռնգաց, որ անջրպետէ զռունգս 'ի միմեանց, երկայն իբրեւ 6 կմ 7 մատնաչափ. և ըստօճար, ը̄ սառնարուն մասին. որով դէմք նց ծխաղական իմն երեւի: Բաց 'ի բարբարոսական զարդուստի, կրեն 'ի պարանոցս երկկարգեան, կմ երեքկարգեան մանեակս 'ի ծովային խեցեաց. ոմ՟ն և 'ի բազուկս ապարանջանս 'ի նոյն խեցեաց. և առ ընտեամբք պարան հիւսեալ 'ի վարսից մարդոյ: Եւ զայս զարդ իւրեանց այնչափ մեծ համարին, զոր ը̄ ոչինչ իրաց փոխանակեն: Լեզու նց օտար է գլխովին 'ի լեզուաց մերումս ծ՟ի, բայց հնրկ 'ի կողմանս յայնոսիկ, որ խժդժական իմն է, կոկորդային, և անախորժ լսելեաց. յորում առաւել են ձայնաւոր հնչմունք, ք̄ զբաղաձայնս. անգղիացիք բ՟զմ բառս 'ի լեզուէ նց գրեալ բերին յեւրոպիա, իբրեւ զնոր ինչ, և նշանաւոր:

Չիք ամենեւին առ նս ծանօթութիւն վճռականութե, կմ առեւտրութե. և թէպէտ բ՟զմս ջանահնար եղեն անգղիացիք առեւտրութիւն ինչ առնել ը̄ նս, այլ ոչ կարացին 'ի գլուխ տանել. զի զորինչ առաջի առնէին նց, առնուին համարձակ, այլ ինքեանք ոչ տային ինչ նց փոխարէն. այն զի՝ ոմ վաճառք, կմ ձեռակերտք եւրոպացւոց առ ոչինչ են համարեալ յաչս նց. զի առ բրտութե ոչ իմանան զյարգ նց. և պարգեւքն, զորս ետուն նց անգղիացիք, գտան ընկեցեալ յանտառս, իբր առ ոչինչ պիտանացու:

Ոչ ունին բնաւ աւանս, կմ գեօղս հաստատունս, այլ թափառին ը̄ համատարած ծ՟իւրեանց. և եթէ դէպ լինի ուրեք առ փոքր մի երկար զտեղի առնուլ սակս լաւութե տեղւոյն, շինեն չնչին մանր խրճիթս յոստոց ծառոց, զորս ծածկեն տերեւովք արմաւենեաց և կեղեւօք ծառոց. և ննջեն 'ի նս 'ի գիշերի ըստ օրինակի շանց կծկելով յիւրաքանչիւր խրճիթս. հազիւ երեք, կմ չորս անձինք կարեն զայս օրինակ ննջել: Եւ եթէ ուրեք գիշեր մի, կմ երկուս ունիցին մնալ, ոչ շինեն խրճիթս, այլ ը̄ ծառովք, կմ 'ի մէջ խոտոց ննջեն:

նոյին: Այլ կարասիք տանց նց՟, է կուժ մի 'ի կեղեւոյ ծառոց. և պարկ հիւսեալ ը՟ օրինակի ուռկանաց մերոց, զոր բարձեալ կրեն յուս իւրեանց. յորս են կոտորակք ինչ խիժոյ 'ի պէտս ներկելոյ զմարմին իւրեանց. և կարթ, կմ՟ ծովային խեցի յորմէ շինեն կարթս մեծամեծս և մանունս յոյժ սքանչելի ճարտարութեամբ, այլ և սուռնս կմ՟ գլուխս նիզակաց.

այս են ամ՟ փարթամութիւնք, գանձք և զէնք նց՟:

Կերակուր նց՟ է ձուկն, զոր որսան խեցեղէն կարթիւ կմ՟ ձեռօք ըմբռնեն 'ի մէջ քարանց, կմ՟ 'ի ծովափնեայ աւազուտս, զի չունին ուռկանս. և կրիայ, որ կարի ախորժական է նց՟. ուստի տեսեալ նց՟ 'ի նաւս անգղիացւոց կրիայս մեծամեծս, խնդրեցին 'ի նց՟է, և 'ի չտալն կամեցան բռնի առնուլ: Յայս նուագ եւեթ ցուցին նք՟ զարութն իւե՟ և զբողոքումն ը՟ բովանդակ ժամն, յորս եղեն առ նս՟ անգղիացիք: Ուտեն և վայրի պտուղս, զի ոչ դարմանեն ընտանի ծառս պտղաբերս. երբեմն և քարամբք, կմ՟ նիզակաւ որսան և թռչունս, և չորքոտանիս, այլ և զգանկուռ անուանեալ չուանն, զորս խորովեալ 'ի վ՟ր կայծականց, կմ՟ 'ի մէջ ջեռուցեալ քարանց՝ ուտեն. զի հում միս ոչ ուտեն ը՟ այլոց ոմանց գազանաբարոյ ազանց: Սք՟ արտադրեն զհուր, ոչ որպէս մեք 'ի ձեռն գայլախազ քարի, և հրահան երկաթոյ. այլ առեալ ցուպ փոքրիկ, և զմի ծայր նր՟ պնդապէս յեցուցեալ 'ի վ՟ր չոր տափարակ փայտի, արագ արագ պտոյտքեն երկոքումբք ձեռօք, և աշխ զկնի միոյ, կմ՟ երկուց րոպէից սկսանի ծխիլ փայտն, և վառիլ: Տեսին երբեմն անգղիացիք, զի մի ոմն 'ի նց՟է ընթանայր առ ափն ծովու, և ուրեք ուրեք իբրև 50, կմ՟ 100. գրկաչափ հեռաւորութեամբ առ վայր մի զկայ առնոյր, և ապա վերստին շարունակէր զընթացս. և աշխ առժամայն սկսանէր 'ի տեղւոջէ անտի, ուր զկայ առնոյր՝ ծուխ ելանել և հուր բորբոքիլ 'ի չորացեալ խոտս: Այլ թէ զիարդ արտադրէր նա զայն հուր, ոչ կարացին հասու լինել, զի ոչ տեսին ինչ 'ի ձեռս նր՟: Իսկ զէնք նց՟ են նիզակք այլ և այլ ձևով. 'ի հարաւային կողմանս վարեն նիզակս գործելոյ յոսկերաց քառաժանիս սրածայրս, զորս և օծանեն խեժիւ, որպէս զի առաւել ամուր լիցին, և լաւ ևս մխեսցին ը՟ մարմին: Իսկ 'ի հիւսիսային կողմանս են միաժանի սրածայր: Փայտ նր՟, կմ՟ մեծեխ, է ազգ մի եղեգան, և բուն բուսոց ինչ. որք նման են կնիւնոյ. հաստապինդ հիւսեալ ը՟ միմեանս. երկայն ութ, և մինչ

ցն.

ցորեքտասան ոտնաչափ․ և 'ի մեղեխս անդր մխեն և սայրասուր սլաքս 'ի կարծրակուռ փայտէ, կ՟մ յոսկերաց ձկանց․ և կ՟մ բեկորս խեցեաց․ և զբոլոր մեղեխն օծանեն խեժիւ․ որ և լինի իբրև ջուք, կ՟մ մահակ փշալից․ որոյ խոցուածք գրեթէ անբուժելի են․ զի պատառոտէ զմարմինն, և թողու 'ի վերայն բեկորս խեցեաց, կ՟մ ոսկերաց։ Զայս սղդ․ նիզակաց տասն, կ՟մ քսան գրկաչափ հեռի միով ձեռամբ ընկենուն․ իսկ եթէ կամիցին հեռագոյն ուրեք ընկենուլ, ոչ 'ի հարկանել զմարդ, կ՟մ զորս, բաղխսար 'ի գործ ածեն, որով արագագոյն, և ուղղագոյն հասուցանեն զայն 'ի յառաջադիր նպատակ անդր, ք՟ առ մեզ զգնտակս հրացանաց։ Բայց 'ի զինուց աստ ունին և վահան ձուաձև 'ի կարծրակուռ կեղևոյ ծառոց, զորս վարեն 'ի պաշտպանութիւն անձանց։ Նոյնպէս և նաւակք նց՟ են կրկնատեսակ․ 'ի հարաւային կողմանս շինին 'ի կեղևոյ ծառոց իբրև 12 ոտնաչափ երկայն․ զորոյ զերկուսին ծայրսն կարեն․ և 'ի միջի հաստատեն փայտեայ փոքրիկ շրջանակս․ այն է՝ չէմպէր, առ 'ի լայնութեան մնալ միջին մասին նաւակին․ որ հազիւ տանի զերիս անձինս։ Իսկ նաւակք բնակչաց հիւսիսային կողմանց են 'ի կոճղեաց ծառոց գըլխովին անհարթ, և անձև․ փորեալ և խոռոչացեալ․ ոչ թէ 'ի ձեռն հրոյ։ Բայց զարմանք մեծ այս են, թէ զիարդ հատանեն նք՟ զծառս, ք՟զի չունին ոչ տապարս, և ոչ այլ ինչ երկաթեղէն գործիս․ այլ միայն տապարաձև, և սլաքաձև գործիս ինչ 'ի քարէ և 'ի ծովային խեցեաց․ և սակայն 'ի ձեռն աշխատութեն և անսահման երկայնմտութեան գործեն զայնպիսի ինչ, որում անհնարին երևի լինել առանց երկաթի գործեաց։

Չիք յայսմ Ծի, ոչ և վերագոյնդ նշանակեցաք քաղաք, կ՟մ աւան, և կ՟մ այլ ինչ նշանաւոր տեղի, բայց միայն բարձրաւանդակ գլուխք ինչ, և ծոցք, յորոց զոմանս յայսմ վայրի նշանակեսցուք։

Հիքս։ Է գլուխ 'ի հարաւային ծայր անդր Նոր կալլէսի․ յայս անուն անուանեալ 'ի դուգայ նաւապետէն անգղիացւոց յանուն փոխանորդի իւրոյ, որ կոչէր հիքս․ զի նա զառաջինն ետես զայս տեղի։ 'Ի հարաւակողմն Նոր կալլէսի անդր քան զայս գլուխ ոչ երևեցաւ այլ ցամաք․ թէպէտ պարզ էր օդն։

Ռամհէտ, կ՟մ Գլուխ Խոյոյ։ Է գլուխ, կ՟մ ծայր 'ի հիւսիսակողմն․ յայս անուն կոչեցեալ, վ՟ զի է գմբեթաձև․

թաձև. և նման է բամբիշտայ. որ է առ մուտս նաւահանգստին Փլիմութայ ։

Գլուխ հոճէայ ։ Է բարձրաւանդակ 'ի հարաւոյ արեւելից նախընթաց գլխոյն, առ որով կայ փոքրիկ կղզի. և 'ի յետ կուսէ կողմոյն երեւին բոլորաձև բլուրք ինչ, 'ի մէջ որոց որոշակի երեւի գլուխն ։

Տրոմպաչէան լեառն ։ Է լեառն բարձր յոյժ որ ձգի մինչև ցծովն, ուր ձևացուցանէ գլուխ, որ աւարտի 'ի ժայռս սրածայրս ։

Փինչենհաու, կամ Քօլօմպէէր ։ Է լեառն սեպացեալ մերձ 'ի գլուխն Ելփինստոնայ 'ի հիւսիսակողմն. գագաթն նորա տափարակ. շրջապատեալ ապառաժ ժայռիւք, և առատորոտ ծառք մեծամեծք շուրջանակի ։

Գլուխ Գէորգեայ ։ Է գլուխ, զոր յայս անուն կոչեաց նա ինքն նաւապետն Գուգ, երբ զի յաւուր տօնի սրբոյն Գէորգեայ եհաս անդր ։ 'Ի հիւսիսային կողմն սորին գլխոյ է ծոց մի, զոր անգղիացիք կոչեն Լօնկ նօզ. իմ' Երկայնունչ ։ Սոյն մղոնաւ հեռի 'ի տեղւոջէ աստի է միւս ևս գլուխ կոչեցեալ Ռօտ ֆօյնթ. իմ' Կարմիր ծայր, կամ գլուխ. առ որով է լեառն, որ բերէ զնմանութիւն արտախուրակի ֆռանկաց, այն է շափգայի ։

Պօղանեան ծոց ։ Է ծոց ը̄րձակ, և յանձուկ ը̄ 34 աստիճանաւ հարաւային լայնութեան, առ որով են անտառք մեծամեծ ծառոց. որք ոչինչ ը̄հատ են 'ի մեծերոց կաղնեաց. յորոց հոսի խէժ կարմրաժէռ նման խէժին, որ կոչի արիւն վիշապի ։ Փայտ սոցին ծառոց ծանր են կարծր և սևագոյն ։ Է անդ միւս ևս տեսակ ծառոյ, որ նման է կաղնեացն ամերիկոյ. և յանտառսն անդ լի են ազգի ազգի գեղեցիկ թռչունք, մանաւանդ թութակք ։ 'Ի մի̄ միոյ 'ի մեծագոյն ծառոց անտի փորագրեալ գրեցին անգղիացիք զանուն նաւուն իւրեանց, որ կոչէր Էնտէվըր. և ըզթուականն և զօրն յորում հասին 'ի ծոց անդր ։

Ծոց Սալտաբայ, կամ Սալտանաբայ ։ Է նաւահանգիստ պատշաճական, որ գնայ աւարտի 'ի լիճ մեծ, որ հաղորդութիւն ունի ը̄ ծովու միջնորդութ̄ փոքրիկ նեղուցի ։ Շրջակայ երկիր սորին ծոցոյ, չոր է և աւազուտ տափ և անբեր. բայց 'ի բլուրս նր̄ բուսանին ծառք ցրիւ, որք ոչ գործեն անտառս ։ Գտանին անդ և ծառք, որք բերեն խէժս, են որք՝ կարմրագոյն, և են՝ որք դեղնագոյն, բայց սակաւ ։ Իսկ ծովն բերէ ձուկն առատ. և ազգի ազգի խեցեմորթս. ոստր և սատափ մարգարտաբեր, բայց սակաւ և մանր ։

Գլուխ տառաէնդայ ։ Է բարձրաւանդակ ցամաք ընդ 22 աստիճանաւ, և 15 բոպէիւ լայնութ. որ ունի պատուական ծոցս և նաւահանգիստս ։ Մերձ յայս գըլուխ գտանին կղզիք ինչ 'ի ծովու 'ի դիրս և 'ի բարձրութ աննման միմեանց. զորս անգղիացիք կոչեցին Նօրթումպէռլանդ. որք և անտառաւորք են, այլ ջուր քաղցր չիք 'ի նոսա ։ Լինին 'ի նոսա պիծակք, թիթռունք, և խշամեղուք մեծամեծք ։

Էնդէվօր ։ Նաւահանգիստ և գլխաւոր գետ Նոր կալէսի, ուր գուգ Նաւապետն նորոգեաց զնաւ իւր. որ ժամս երիս 23 նստաւ 'ի ցամաքի 'ի ծով անդր, ուր բուսեալ կային բուսաք. այն է՝ մերձան ։ Շըրջակայ երկիր նր գեղեցիկ է, և զուարճալի, ունելով բլուրս և հովիտս դալարագեղս և անտառս և խոտս. թէպէտ դաշտք նր ուրեք ուրեք կաւուտ են և աւազուտ ։ Գլխաւոր բերք նր, զոր տեսին անգղիացիք են աղցի աղցի թռչունք, և գանգուռու, կամ օպօսօմ անուանեալ կենդանին, որ նման է շան կամ գայլոյ. զոր և վերագոյնդ յիշատակեցաք. և այլք մի կաղամբոյ, և խէժ. ևն ։

Գլուխ Էօրկայ ։ Է 'ի հիւսիսային ծագ Նոր կալէսի ը̄ 10 աստ''. և 37 բոպ''. հարաւային լայնութ ։ Երկիրն որ առ նովաւ յարևելեան, և 'ի հարաւային կողմանս ցած է, դաշտային և անբեր ։ Իսկ 'ի հիւսիսային լեռնային, և ձորքն անտառաւորք ։ Մերձ յարևելեան ծայր սորին գլխոյ են երեք փոքրիկ կղզիք ։ Միւս ևս փոքրիկ կղզի կայ 'ի հիւսիսային կողմն ։ Ընդ մէջ այսց կղզեաց, և եօրկայ գլխոյն է նեղուց, կոչեցեալ Էնդէվօր. որ երկայնեալ ձգի և ը̄ մէջ ցամաքին և կղզեաց իշխանին կալէսի, մինչև ցվաղէս փոքրիկ կղզին ։

Գտանին անդ և այլ գլուխք, ծոցք, և կղզիք, որք կոչին Նաւահանգիստ Ճաքսօնայ. Ծոց Բօթանըայ. Սթէֆաննոս. Գլուխ հաուգէայ. Գլուխ սմօգէայ. Մօռըթօն. Լօքաութ. Ծոց կըլէսաւ հաուսոյ. Գլուխ այծեղջեր. Գէփփէլ. Հիլսպօրօ. Գլուխ ըէֆօրըայ. Գլուխ կըրաֆթըըոյ. Գըէնվիլէնսք. Կղզի դաւայի. Կղզի ապծուծայ. ևն ։

Երկիր Տիէմէնայ ։

Երկիրն անուանեալ Տիէմէն, կամ ը̄ գաղղիացի Ծագրաց Տէմէ. է 'ի հարաւակողմն Նորոյ Ցին հարաւային ասիոյ. ուր յեւրոպացւոց՝ զառաջինն եհաս Աբէլ Թասման 'ի 1642 • և կոչեաց զնա տիեմէն 'ի պատիւ անուանի տիեմէն ապարապետի ընկերութ հոլանտացւոց վաճառականաց յարևելեան հնդկիս • Թէպէտ ոմանք ասեն թէ 'ի նոյն իսկ անուանէ գըտաւ, և 'ի նմանէ կոչեցաւ տիեմէն : Այլ զիարդ և իցէ, այս յայտնի է, զի աբէլ յանսէն Թասման գերահռչակ նաւաստի որ եգիտ զհիւսիսային գլուխն նոր զելանդայի, որ և մինչև ցայսօր յանուն նր՟ կոչի, եգիտ և զհարաւային կողմն այսր աշխարհի 'ի 1642 'ի նոյեմբերի 24 : Որ ըստ գրելոյ նր՟, է ը՟ 42 աստիճանաւ, և 25 րոպէիւ լայնութ : Յառաջնում աւուր դեկտեմբերի եմուտ 'ի ծոց մի, զոր և անուանեաց Փրետերիկ Հէնրիկ : Եւ ետես անդ 'ի ծովեզերեայ կողմանս ծառս մեծամեծս և ստուարս յոյժ • յորոց ոմանց տրամագիծն էր երկու կանգուն և կէս • և բուն նց՟ մինչև ցտեղին ուր սկսանին ոստքն՝ 60, կմ՟ 65 ոտնաչափ բարձրութ • յորս և հատեալ կային աստիճանք առ 'ի դիւրաւ ելանել 'ի նս՟ : Սա ոչ ետես 'ի ծովեզրեայս անդ բնակիչս, ոմ՟ և ոչ անասունս • բայց 'ի բզմ՟ նշանաց, զորս ետես անդ, համարի թէ եղեն անդ բնակիչք, գուցէ և այժմ գտանիցեն 'ի խորին կողմանս : Այլ ինչ բերս ոչ ետես անդէն, բայց միայն ծառս ինչ, որք բերին խէժս կարմրաժեռս, զոր նա ինքն Թասման կոչեաց խէժ կարմրաժեռ • ըստ իտալացւոց կօմմա լաքքա :

Երկիր Նիւցայ :

Երկիրն անուանեալ Նիւց ձգի 'ի հարաւային ծովեզերեայս նոր հոլանտայի, կմ՟ նոր աշխարհին հարաւային ասիոյ : Զայս աշխարհ եգիտ պետրոս Նիւց յամսեանն դեկտեմբերի, և յունվարի 'ի 1627 • զոր և յիւր անուն անուանեաց • զորմէ կարի սակաւ ծանօթութիւն ունիմք աշխարհագիրք • բայց ը՟ արձակ տարածի • և գրեթէ զկեդրոնն, կմ՟ զմէջն գրաւեալ ունի այսր նորոյ աշխարհի • ընդ մէջ տիեմենայ յարևելից, և լէօնէ յարևմտից :

Յարևմտեան ծովեզերեայս այսր նորոյ աշխարհի են այլ և երկիրք գտեալք յայլ և յայլ ժամս, յայլ և յայլ նաւորդաց 'ի զնզն՟ ազգաց • և են սք՟ :

Լէօն • Էտէլ • Էնտրախտ • և Վիթ : Լէօն է 'ի հարաւային ծայրն այսր աշխարհի յարևմտեան կողմն • զոր գըտին 'ի 1622 • որ և սահմանակից է Էտէլայ, որ գըտաւ 'ի 1619 'ի յովհաննու եդէլայ, զոր և յիւր անուն կոչեաց : Ենդրաքդ է յարեւմտեան ծագ այսր աշխարհի, սահմանակից վիդայ 'ի հիւսիսոյ, որ գըտաւ 'ի 1628 :

Նոյնպէս և 'ի հիւսիսային ծովեզերեայս գտան երեք այս աշխարհք · ա՛ Գարբենդարիա · Տիեմէն · և Առնհայմ · Գարբենտարիա, 'ի հոլանտացւոց Գարբենտէր լանտ անուանեալ, ա՛ երկիր գարբենդերայ, գրաւեալ ունի զհիւսիսային կողմն Նոր հոլանտայի, կմ̄ աշխարհին հարաւային ասիոյ : Յայս անուն կոչեցաւ 'ի գարբենդերայ նաւապետէ հոլանտացւոց, որ եգիտ զնա · որ և ունի բազում մանր գետս · յորոց գլխաւորքն են Ստայէն · Նասաու · Գարօն · Տիէմէն · և Միթուէլ : Եւ ունի իւր սահմանակից յարեւելից զնոր կալլէս հարաւային · իսկ յարեւմտից զառնհայմ · և զտիեմէն, որք գտան 'ի 1618 : Երկու յետինքս ձգեն տարածին ը̄ հիւսիս :

Նոր կուինէա :

Թէպէտ բազում ժամք են յորմէհետէ գտին եւրոպացիք զնոր կուինէայն · սակայն մարթ է և-րաւամբք գանել և զսա 'ի կարգ նորագիւտ աշխարհաց · վս̄ զի յառաջն գրեթէ բաց յանուանէ նր̄ այլ ինչ ոչ գիտէին զնմանէ : Զի ոպ̄ ցուցանէին նախնեաց պատմութիւնք, չէր ինչ յայտնի թէ նոր կուինէայն արդեօք կղզի է, եթէ կցեալ ը̄ ցամաք հարաւային երկրի · և ը̄ մէջ 2 · և 9 աստիճանաց հարաւային լայնութ̄ : Ոմանք յաշխարհագրաց սխալմամբ կոչէին զնա և երկիր պապուաց, յանուն բնակչաց նր̄ : Եւ համարէին թէ ը̄ հիւսիսակողմն սակաւ սակաւ անձկանայ · և յարեւելեան հարաւակողմն տարածի ընդլայնի : Այլ մի ոմն 'ի քաջահմուտ նոր աշխարհագրաց յայտնապէս բաժանէ զերկիրն պապուաց, 'ի նոր կուինէայէ · և տանէ զնս̄ երկու այլ և այլ աշխարհս : Ըստ նր̄ նոր կուինէայն գտաւ 'ի 1527 յալվարոսէ սաւեդրայ, որ և կոչեաց զնա Նոր կուինէա, կարծելով թէ ուղղակի անկանի հանդէպ կուինէայի ափրիկոյ · բայց յայտ մեծապէս վրիպեցաւ : Եւ այլ ոմն նաւապետ անուանեալ անտոն օրդանեսկուեան ծանեաւ զայս աշխարհ 'ի 1528 · բայց հարեւանցի եւեթ քերելով առ նովաւ, ոպ̄ և նախագրեալն սաւեդրայն : Զկնի ոպ̄ բազում անցամ 'ի բազում տեղիս այսր աշխարհի հասին հոլանտացիք ·

բայց ինչ ոչ գրեցին մզ̃ նր̃ յօգուտ Ծաւքրուն, վս̃ զի առ անյագ շահախնդրութե̃ և նախանձու, որով պահպանեն զկալուածս իւրեանց, որք մերձ են յարևելեան Հնդիկս, յորոց եկանեն մեծագին և սպառական համեմք, ջանան ամ̃ հնարիւք ծածկել յայլոց ազգաց, զայն ամ̃ որ կարէր զարթուցանել զնս̃, և յորդորել 'ի յաճախել 'ի կողմանս յայնոսիկ. ուստի և մինչև ց 1769 եկաց մնաց Ծս̃ այս անծանօթ, յաքում ամի եհաս անդր դերապահուաչուկն գուկ անգղիացի. բայց և նա սակաւ ծանօթութե̃ կալաւ զնմանէ, զոր որպէս և իցէ կարևոր համարիմք յայսմ վայրի նշանակել:

Արդ՝ սա 'ի Նոր հարաւային կալլէսէ ճնպ̃րհորդել ը̃ հիւսիս, ուղղեաց զընթացս իւր 'ի Նոր Կուլինէայն. և 'ի ճնպ̃հին ետես զկղզին սբ̃յն բարթուղիմէոսի, որ և կոչի Վընհէրմոյաէն. որ փոքր է և ցած իբրև 3 մղոնաւ հեռի 'ի մէջերկրէն. և է ընդ 8 աստիճանաւ և 13 րոպէիւ հարաւային լայնութե̃: Ապա շարունակեաց զընթացս իւր ը̃ հիւսիս, և հասեալ 'ի տեղի ինչ, ուստի հազիւ կարէր նշմարել զցամաքն Նոր Կուլինէայի, եթող անդէն զնաւն, զի ոչ կարէր նաւել մերձենալ 'ի ցամաք անդր սակս նուազութե̃ ջուրցն. և ինքն գուգ հանդերձ մետասան արամբք քաջ զինու վառելովք մտեալ 'ի կուրնաւուն, ելին 'ի ցամաք. և տեսին յաւազուտս անդ յափն ծովուն նոր հետս մարդկան. յորմէ գուշակեցին, թէ յանտառուն անդ, որք իբրև 50 քայլ հեռի էին 'ի ծովեզրէ, իցեն վայրենի մարդիկ. և փոքր մի յառաջ գնացեալ, հասին 'ի փոքրիկ անտառ որոյ ծառք գրեթէ առհասարակ պտղաբերք էին, և տեսին անդ աղբիւր, յորմէ ջուր աղի բղխէր. և մերձ առ նովաւ խրձիթ տերևովք ծառոց ծածկեալ, և առ նովաւ բզմ̃ կեղևս պտղոց, յորոց ոմանք թուէին նորագ կորզեալ 'ի ծառոց: Ապա և եւս յառաջ գնացեալ, տեսին 'ի բացուստ, զի ելին յանտառէ անտի արք երեք վայրենիք. որք ձայն բարձեալ գոչէին ուժգին. և դիմեալ գային 'ի վր̃ նց̃. և մին 'ի նց̃ է, որ յառաջադէմն էր, ընկէց յանդզիւացիս զնիւթ ինչ, որոյ անկեալ յերկիր, վառէր իբրև զվառօթ. այլ շառաչիւն ինչ ոչ արձակեաց. իսկ երկուքն ընկենուին նիզակս փայտակերտս երկժանիս: Իսկ անգղիացիք առ 'ի նահանջել զյանդգնութե̃ դիմեցութե̃ նց̃, արձակեցին 'ի վր̃ նց̃ միանգամ հրացանս դնդակալիցս. յորմէ երկուցեալ նց̃, առ վայր մի զկայ առին. սակայն վերստին սկսան դիմել 'ի վր̃ ուստի և անգղիացիք միւսանգամ արձակեցին հրացանս · զոր տեսեալ վայրենեացն, խոյս ետուն յանտառն : Իսկ անգղիացիք որոց չէին կամք տիրել երկրին · միանգամայն երկուցեալ թէ գուցէ բազմութ̃ վայրենի մարդկան հասեալ ՚ի վ̃ր, չարիս ինչ հասուսցեն ն̃ց, դարձան անդրէն ՚ի նաւակ իւրեանց · և զկնի սակաւուց ահա հասին մերձ ՚ի ծովեզրն անդ արք իբրև 60 · որք թուէր թէ կամէին տալ պ̃տզմ ընդդէմ անգղիացւոց · իսկ անգղիացիք մեղմով իմն վարէին զկուր իւրեանց առ ցամաքաւ առ ՚ի քաջ զննել զն̃ս · առ ոչինչ համարելով զաղաղակսն գոչիւն ն̃ց և զհուրն, զոր ընկենուին ՚ի վ̃ր · ապա իբրև ը̃ բաւականին զննեցին զն̃ս, արձակեցին ՚ի վ̃ր ն̃ց հրացանս գնտակալիցս, յորոց երկուցեալ, դարձան անդրէն յանտառս իւրեանց :

Արդ՝ ը̃ պատմելոյ անգղիացւոց, ո՛չ կարի նման են բնակչաց Նոր հարաւային կաղէդոնի · միջահասակ են մարմնով, գրեթէ ո̃պ զն̃ս · հերք ն̃ց կարճ · բոլորովին մերկ շրջին · բայց գոյն մարմնոյ ն̃ց չէ այնչափ ինչ սեաւ · գուցէ զի չեն ո՛չ այնպէս աղտեղի : Իսկ զէնք ն̃ց, զոր ընկեցին ՚ի վ̃ր անգղիացւոց էր դիւրավառ նիւթ ինչ, զոր վերադոյնդ յիշատակեցաք, և ատեգք փայտաշէնք : Իսկ վայրն, ուր զկայս էառ նաւն անգղիացւոց, և եղեն ՚ի ցամաք, է ը̃ 6 աստիճանաւ, և 15 րոպէիւ հարաւային լայնութ̃ · իբրև 195 մղոնաւ հեռի ՚ի Նուէնդատէն սէյն օգոստինոսի, կ̃մ գլխոյն փոլքէռայ, որ մերձ է յայն տեղի · որ յԾացայցս կոչի Գլուխ ծոննուրեայ սէյն բօնաւէնդուրայ :

Արդ՝ այժմ ճշգրտեալ ստուգեցաւ, եթէ Նոր կուէնէայն է կատարեալ կղզի, որ ձգի ը̃ երկայն յարևելից յարևմուտս իբրև 700 մղոնս · իսկ ը̃ լայնութ̃ 150 մղոն : Յարևմտից բաժանի ՚ի Ճիլօլօ կղզւոյն փիթ նեղուցաւ · իսկ ՚ի հարաւոյ անջատի ՚ի Նոր հոլլանտէ ՚ի ձեռն նեղուցին, զոր ՚ի վերջին ժամս եգիտ Մեծն Կուք · որ և կոչի Էնտէվըր, լայն իբրև 150 մղոն : Բայց լի են ՚ի նմա մանր կղզիք · ուստի և կարի դժուարին է նաւել ը̃ այն :

Արևելեան ծովեզերեայ կողմանք Նոր կուինէայի չև ևս են լիով ծանուցեալ, բայց այս հաւաստի է, թէ յայնմ կողման ունի իւր սահմանս զարշիպեղագոսն Լովիսատայ, զոր ՚ի 1700 եգիտ պուկէնվիլլ, որ և յայս անուն կոչեաց զնա : Իսկ Նոր բրիտանիայն անջատի ՚ի մեծ կղզւոյ աստի ՚ի ձեռն նեղուցին, որ կոչի Անոյթ Տամբիէրայ : Այս կղզի է ընդ մէջ 12 աստիճանի հարաւային լայնութեան, և հնրկածին, ուստի և է ընդ մէջ այրեցած գօտւոյ : Ոմանք յԾագրաց համարին թէ բազմամարդ իցէ . և երկիր նորա արգաւանդ, բայց այս չէ ինչ ստոյգ : Գտան անդ բերանք քանի մի գետոց, յորոց գլխաւորքն են բերանքն անուանեալք Յեդուանոյ . և Սբյն Օգոստինոսի : Նաւահանգիստք . և ծոցք նորա, որք ծանուցեալ են Ծագրաց, են սոքա . Աւգուստոս . Սէ Յակոբ . Սէ Անդրէաս . Սէ Հերոնիմոս . Սէ Նիկողայոս . և Ծնունդ Տէրունեան Տէրոյ : Ունի և քանի մի գլուխս . յորս նշանաւորքն են Սաւլէփա . և Վալու :

Նոր Բրիտանիա .

Նոր բրիտանիայն է մի յԾագաց անուն զորս նորոգ գտին անգղիացի նաւաստիք, որ թէպէտ յառաջ ևս ծանուցեալ էր, յտ՝ 'ի 1700 'ի տամբիերայ . այլ կարի ընդ աղօտ, մինչ ցուցանէին այնր ժամկի Ծագրացք, որք իբրև մի միայն կղզի ստորագրեն զնոր բրիտանիայն . որ է յայտնի վրիպակ . զի ոչ է սա մի միայն կղզի, այլ բազում կղզիք մօտաւորք միմեանց : Նոյնպէս և այլ ծանօթութիւնք, զոր 'ի տամբիերայ առեալ գրեցին վս̃ նոր բրիտանիոյ, ոչ համաձայնեին վերջին ըստուգագոյն ծանօթութեանց գարդերէդայ, որ լաւ ևս զննեաց զերկիրն :

Քանզի գարդերէդ երևելի նաւապետ անգղիացի ճանապարհ արարեալ ընդ ծովն հարաւային, և հանդիպեալ անդ բազում կղզեաց, ընդ որս և կղզեացն գլխոյ քարլօթթա կոչեցելոյ, 'ի հողմոց և յընթացից ջուրց վարեցաւ 'ի ծոց մի խորին, զոր տամբիէր կոչեաց Ծոց Սբյն Գէորգեայ . որ է ընդ մէջ գլխոյն սբյն գէորգեայ, և գլխոյն օրփորտայ : Եւ քանզի անհնարին էր նմա ընդ մի, կամ ընդ միւս գլուխն ելանել, ստիպեցաւ ուղղել զընթացս իւր ընդ արևելեան կողմն այնր ծոցոյ, ըզհետ գնալով ընթացից ջուրցն : Եւ ետես զի այն ծեղուց բաժանեալ էր յերկուս՝ 'ի ձեռն մեծ ինչ կղւոյ, զոր և կոչեաց Դուքս Եորքայ . և այլոց փոքր կղզեաց որք շուրջ զնովաւ . բայց զանուանդ նոր բրիտանիա զոր տամբիէր եդ այսմ երկրի, ոչ փոխեաց . այլ փոյթ կալաւ լաւ ևս քան զնա զննել զհանգամանս երկրին :

Արդ՝ սա ստուգեաց, եթէ նոր բրիտանիայն, ոչ է մի միայն կղզի, այլ բազում կղզիք մօտաւորք միմեանց, բազմամարդք և արգաւանդք. որք և անկանին ընդ մէջ եօթներորդ աստիճանի հարաւային լայնութեան և հասարակածին :

՚Ի հիւսիսակողմն չիք այլ ևս կղզի մերձաւոր սոցա, գէթ որչափ ինչ ծանուցեալ է այժմ: Յարեւմտեան կողմն գտանին մանր կղզիք ինչ հուպ Նոր կուինէայի. իսկ ՚ի հարաւակողմն հազիւ անջատին ՚ի Նոր կուինէայէ ունելով ՚ի միջի զանձուկ հունն, կամ զնեղուցն տամբիերայ :

՚Ի հարաւային եզերս մեծագոյն կղզւոյն՝ յերկուց կղզեաց անտի, որք անջրպետ ՚ի միջի ունին զնեղուցն, գտանի երկիր բարձրաւանդակ, և երեք մեծամեծ լերինք հպաւորք միմեանց. յորոց զբարձրագոյնն անգղիացիք կոչեցին Մոդր. և զերկուսն Դօթէրք. յայնկոյս մեծագոյն լերին տեսին, զի ելանէր ծուխ սփռեալ ամբարձեալ, յորմէ գուշակեցին թէ գտանի անդ տեղի հրաբուղխ : Մայր անուանեալ լեառն անկանի գրեթէ յարեւմտեան կողմն կղզւոյն դքսին եօրքայ :

Յարեւելեան կողմն սոցին լերանց կայ գլուխ, կոչեցեալ Գլուխ Փալլիսէրայ, և միւս ևս յարեւմտեան կողմն՝ անուանեալ Գլուխ Ստէֆաննոյ, որ է ՚ի ծագ Նոր Բրիտանիոյ ՚ի հիւսիսակողմն. առ որով է կղզի մի կոչեցեալ Կղզի Տանէայ: Այս երկու գլուխք են գրեթէ հանդէպ միմեանց. մին յարեւմտեան հիւսիս, իսկ երկրորդն յարեւելեան հարաւ. և ընդ մէջ նոցա է ծոց ընդարձակ : Իսկ մերձակայ ցամաքն ՚ի ծովեզերեայ կողմանս ցած է և տափարակ. որ գնալով ՚ի կողմն նախայիշատակեալ լերանց, առ սակաւ սակաւ բարձրանայ ՚ի մեծամեծ լերինս. յորս են ծառք մեծամեծք ցրիւ հեռի ՚ի միմեանց. իսկ դատարկ միջոցքն թաւեցան մշակեալ: Յայս կողմն երկրին ՚ի գիշերային ժամս տեսին հուր ՚ի բազում տեղիս, յորմէ գուշակեցին գտանիլ անդ բազմութիւն բնակչաց: Իսկ Գարդերէդ իբրև ստուգեաց, թէ ծոցն այն էր նեղուց, կոչեաց զնա Նեղուց սէյնթ Գէորգեայ. և հիւսիսային կղզւոյն եդ անուն Նոր Հիպեռնիա, կամ Նոր Իռլանտա. առ որով վարեցաւ յանկարծական սաստիկ իմն հողմով. և հասեալ առ նովաւ ընդ արեւմուտս իբրև 16 մղոնաւ հեռի ՚ի ցամաքէն, եգիտ զՍանտովիչ կղզին. ապա զգլուխն Պիրոնայ, զարեւմտեան ծագն Նոր Իռլանտայի :

Եւ մինչդեռ էին անգղիացիք ՚ի Սանտովիչ կղզին, լուեան զանընդհատ իմն թնդիւն իբրև զձայն թմբկի.

և 'ի խաղաղիկ օդոյն, ահա՛ հասին անդ տասն փոքրիկ նաւակք. յորս էին արք 170. որք այնչափ մերձեցան առ նաւն անգղիացւոց, մինչև կարօղ լինել անգղիացւոց կարկառել նց՟ պարգևս կապե՟լ 'ի ծագ ձողոյ. և թուէր թէ նախամեծար ընտրէին զերկաթ ք՟ զայլ իրս, թէպէտ երկաթն զոր ետուն էր լոկ երկաթ անգործ, բայց 'ի սակաւ բևեռաց: Նաւակք նց՟ նեղ էին և երկայն 'ի միատասանի փայտէ. յորոց մին էր իբրև 90 ոտնաչափ գրեթէ ը՟ երկայնութե՟ նաւուն անգղիացւոց. յորում էին և քանդակք ինչ յերկոսին կողմանս. զոր և վարէին արք 30. բայց առագաստ բնաւ ոչ ունէին:

Բնակիչք սորին կղզւոյ. ք՟ նոր խալանտայի, բիրտ են և վայրենիք, և առհն՟րկ սեաւ. բայց չեն տափակունչք. և ոչ թանձրաշուրթն ը՟ եթովպացւոց. զսոսա անգղիացիք նոյնպէս համարեցան ը՟ բնակչաց կղզւոյն քարլօթեթայ դշխոյին, և եկմօնդայ. զորս յռ՟ջ տեսին: Քանզի և ս՟ք բոլորովին մերկ շրջէին որ՟ և ն՟ք. բայց միայն զի 'ի բազուկս և 'ի սրունս կրէին ապարանջանս 'ի ծովային խեցեաց, առ 'ի զարդ. հերք նց՟ նման էն դղաթու ոչխարաց. այլ զարմանալին այն է՝ զի 'ի վ՟ր հերաց գլխոյն, և մօրուացն ալեւր, կի՟ այլ ինչ ալերանման փոշի արկանէին ըստ սովորութե՟ եւրոպացւոց. և զարդարէին զգլուխս փետրովք թռչնոց: Յայսմանէ գուշակեն, թէ սովորութիւն եւրոպացւոց ապխտակ փոշի արկանելոյ 'ի վ՟ր հերաց գլխոյն հին է, և վաղնջական, և ոչ որ՟ ոմանք կարծեն նորամուտ:

Բայց 'ի գարդերեդայ անգղիացւոյ 'ի մերձակայ ժամանակս հասին և գաղղիացիք 'ի նոր բրիտանիա առաջնորդ ունելով զպուկէնվիլ զերևելի նաւապետն գաղղիացի. որք խարիսխ արկին 'ի նւ՟հնգիստն, զոր նա ինքն պուկէնվիլ կոչեաց Նաւահանգիստ Բրասլէնայ. և եկեալ անդ 'ի ցամաք, գտին չորս փոքրիկ վտակս. և այնպէս տեսակս փայտի բզ՟մ յոյժ մերձ 'ի ծովե՟ն պատշաճականս 'ի հուր և 'ի շինուած. այլ բնակիչս ոչ տեսին, թէպէտ և բզ՟մն յուզեցին զվայրսն: Բայց առ փոքրիկ վտակաւ միով գտին խրճիթս, և մնացորդս հրոյ, և ծովային խեցիս այրեցեալս, և գանկս գլխոյ անասնոց, զորս համարեցան գլուխս վարազուց. յորմէ գուշակեցին, թէ նորոգ մեկնեալ էն անտի մարդիկ. նաև թուեցաւ նց՟ լսել զձայն մարդոյ. բայց ապա ծանեան, թէ էր ձայն կապուտակ թռչնոց. որք 'ի մոլուքեան կղզիս կային թռչունք

այսպ

պատկառորք ։ Եւ 'ի յուղեւն զաւաղս տեղւոյն, գըտին անդ կապարի թիթեղն կիսաթաղ․ յորոյ վ̃ մնացեալ կային բառք ինչ անգղիականք․ երեւէին 'ի նմ̃ և տեղիք բեւեռացն, որովք բեւեռեալ եղեւ ուրեք յանգղիացւոց, զոր թերեւս վայրենի բնակիչք տեղւոյն 'ի բաց կորզեալ, կտրատեցին, և ընկեցին յաւազուտս անդ ։

Յայսմանէ առաւել ևս դրդուեցան զաղղիացիք 'ի հետազօտութե, վ̃յ յոչ գնացեալ իբրև մղոնս 5 ․ գըտին ծոց մի գեղեցիկ, յոր մտանէր գետ փոքր․ և առ նովաւ ծառս հատուածս տապարաւ․ յորմէ ծանեան թէ յայն ծոց խարիսխ արկին անգղիացիք․ և ապա յուղեալ զտեղին, գտին և զծառն․ յորոյ վերայ բեւեռեալ եղև կապարի թիթեղն, ուր կային դեռեւս բեւեռքն ։ Երկիրն շուրջ զովին ծոցով առհ̃րկ լեռնային է, և ապառաժուտ․ և հող սակաւ, որ հազիւ ծածկէ զժայռս․ սակայն տակաւին բուսանին անդ ծառք մեծամեծք․ կայ անդ և պեղէլ անուն ծառն, և արեգա․ և եղէգն չաքարաբեր․ և ծառք պղպեղի․ բայց չունէին ոչ ծաղիկս, և ոչ պտուղս․ վ̃ զի չև էր հասեալ ժմն ծաղկելոյն, կմ̃ պտղոյն, այլ հետս և նշմարանս ինչ բնակութե մարդկան ոչ տեսին ։ Տեսին անդ և խաւարումն արեգական․ պէսպէս աստղաբաշխական գործիւօք ճշտիւ զննելով զսկզբնաւորութի, զչափ և զտեւողութի նր․ որ տեւեաց ժամս իբրև երկու․ և 'ի տեղւոջ անդ զննութե թողեցին գրուածս ինչ ։ Զայս զննութի համեմատեալ ը այնմ, զոր 'ի նմին ժմի արարին 'ի բերու, որ յամերիկա, մարթ է ստուգել չափել զիսկական տարածութի խաղաղական ովկիանոսի, որ յանցեալ ժմս ամենևին անծանօթ էր ։

Յայս տեղի յաճախ են պէսպէս զեռունք․ յորս են, որք երկայն են իբրև մատնաչափ․ և ունէին վեց ճիրանս․ և սլաքս սայրասուրս ը բովանդակ մարմինն․ և առաւել երկայն ։ Գտանի անդ և այլ ինչ տեսակ նշանաւոր զեռնոյ․ երկայն իբրև երիս բոյթս, և բովանդակ մարմինն իբրև հիւսուած ինչ 'ի տերևոց․ որք և 'ի մօտոյ, ամենևին իբրև տերևս երևէին․ թևք նր են կէս տերևոյ․ որք առ միմեամբք եդեալ ձևացուցանեն տերև մի ամբողջ․ Ներքին կողմն մարմնոյն է մի միայն տերև աղօտագոյն ք̃ զվերին կողմն ։ Երկու սլաքաձև ոտս ունի, և վեց ճիրանս․ որոց վերին ծայրքն են մասունք տերևոց․ Կոմմերսոն մի յընկերաց պուկէնվիլեայ գեղեցիկ ստորագրէ զայս նշանաւոր կենդանի · յորոց կալեալ զմի պահեստացայինս, զոր պուկէնվիլ եդ 'ի կարգս այլոց նորանշան իրաց թղթլին ։ Եւ 'ի ծովու գաւառին մասնաւոր եւս օձք ջրայինք թունաւորք յոյժ · որոց հարուածք կարի վտանգաւոր են ։ Սոյն այս պուկէնվիլ եկեալ 'ի նաւահանգստէն բրասլինայ, և նաւեալ ըստ հիւսիս, ծանեաւ և զհիւսիսային ծովեզրս Նոր Բրիտանիոյ · և մերձեցեալ ուրեք 'ի ցամաք, եկին 'ի վերայ նոցա 'ի բնակչաց երկրին փոքրիկ նաւակօք · յիւրաքանչիւր նաւակս արք հինգ, կամ վեց սեաւք բարձրահասակք յաղթանդամք և ուժեղք և մերկանդամ, բայց զամօթոյս ծածկեալ ունէին տերևօք ծառոց · հերք գլխոյ նոցա գաւուղ նման դզաթու ոչխարաց · յորս ոմանք ներկեալ էին փոշի սպիտակ · մօրուքն երկայն, և 'ի բազուկս և 'ի սրունս ունէին սպիտակ զարդս · քանի մի անգամ գրոհ տուեալ 'ի վերայ գաղղիացւոց, պատերազմիլ ընդ նոսա · այլ յարձակեալ միանգամ 'ի վերայ նոցա գաղղիացւոց հրացանս, առ ահին առհասարակ ցանեալ ցրուեցան ։

Հուսկ յետոյ եհաս պուկէնվիլ յերկու կղզիս, որք թուեցան նմա, թէ էին այն կղզիք, զորս տամբիէր կոչեաց Նէօ Հաննովերա, և Իրլանտա ։ Առաջինն բարձր է, և լեռնային · և ձգի յարևմտեան հիւսիս, երկ 24 մղոնաչափ երկայնութ. · իսկ երկրորդն փոքր է յոյժ ։ Այսչափ ինչ յաղագս գիւտի Նոր Բրիտանիոյ · արդ մատիցուք 'ի ստորագրութն կղզեացն ։

Նոր Բրիտանիա առանձնակ ։

Ի կղզի մեծ է զայլ մերձաւոր կղզիս, և առաւել 'ի հարաւակողմն է զնա, 'ի հիւսիսոյ արևելից ձգեալ ընդ արևմտեան հարաւակողմն ։ Երկիր նր. արգաւանդ · ունի լերինս, և հովիտս, և բլուրս գեղեցիկս, և դաշտս դալարագեղս · և բնակիչս ըստ մեծի մա համեմատութ. այլոց մերձակայ կղզեաց ։ Ոչ տեսան 'ի նմա քաղաքս, կամ աւանս · այլ գլխաւոր տեղիք նր., որք նշանակին և յիշատակին, են քանի մի բարձրաւանդակ գլուխք, որպէս գլուխ օրփորտեայ, որ է յարևելեան ծայր կղզւոյն, որ և ընդ գլխոյն սքլէն գեորգեայ, որ է 'ի Նոր Իռլանտա, ձևացուցանէ զնեղուցն որ որոշէ 'ի միմեանց զերկու զայսոսիկ կղզիս ։ Գլուխ Թօ անիայի · և Գլուխ Լօքէթիէրայ · որք են 'ի ծայրն կղզւոյն, հանդէպ գլխոյն գուլբերլմնոի · որ

է

է 'ի Նոր Կուինէա · և ը̄ նմ̃ ձևացուցանեն զնեղուցն, կմ̃ զհուճն Տամբիերայ : Գլուխ Պուլէրայ · է առաջին գլուխն, որ ը̄առաջ լինի 'ի ծովեզերեայս Նոր Բրիտանիոյ, 'ի մտանելն սբ̃յն Գէորգեայ : Գլուխ Քուէնսէրայ · յայս անուն անուանեա̃լ 'ի Տամբիերայ 'ի պատիւ բալլխսէրայ Անգղիական ծովակալ իշխանին Անգղիացւոց : Այս գլուխ ուղիղ հայի 'ի մամն կղզին, որ է ը̄ մէջ նեղուցին : Գլուխ Ստեփաննոսի · յայս անուն կոչեցաւ 'ի Տամբիերայ 'ի պատիւ լօրտ Ստեփաննոսի միոյ 'ի գլխաւորաց անտի նաւաստեաց Անգղիացւոց : Այս գլուխ է 'ի ծագ հիւսակողման Նոր Բրիտանիոյ :

Նոր Իռլանտա :

Այս կղզի սակաւ, կմ̃ ոչինչ փոքր է ք̄ զՆոր Բրիտանիայն · բայց միայն, զի ձևն նորա բոլորովին այլազան է · զի ը̄ երկայնութե̄ տարածի ը̄ չորս աստիճանս, և առաւել ևս · ք̄, ինքն 240 մղոնս · իսկ լայնութե̄ նր̄ հազիւ ժամանէ 950 մղոն : Գլխաւոր տեղիք նր̄, որք նշանակելին և յծ̄ացոյցս են աք̄ :
Գլուխ Սբ̃յն Գէորգեայ : Որ է 'ի հարաւային ծագ Նոր Իռլանտայի · առ որով ձգի նեղուցն · որ յանուն նր̄ կոչի Նեղուց Սբ̃յն Գէորգեայ :
Ծոց Քրօնփխեայ : Է 'ի հարաւային կողմն կղզւոյն · ուր 'ի 1700 եհաս Տամբիեր : Արևմտեան ծայր սորին կղզւոյ աւարտի 'ի նեղուց ինչ, որով Նոր Իռլանտայն անջատի 'ի Նոր Հաննովերայ :

Նոր Հաննովեր :

Այս կղզի նշանաւոր անջատեա̃լ 'ի Նոր Իռլանտայէ 'ի ձեռն նախադրեալ նեղուցի, յորում գտանին բզմ̃ մանր կղզիք · յորոց 'ի միումն է ժայռ մի բարձր, անուանեա̃լ Կղզի Սանտուիչայ · յորոյ անուն կոչի և նեղուցն : Երկիր Նոր Հաննովերայ բարձր է, և անտառային, ուստի և տեսիլ նր̄ գեղեցիկ և զուարճալի : Գարթէրէթ զհարաւային ծայր այսր կղզւոյ, որ է ժայռ լեռնաձև բարձրացեա̃լ՝ կոչեաց Հրամանատար Բայրոնեայ Պէնխոյէն, 'ի պատիւ Անգղիացւոց գլխոյին : Մերձ առ այս կղզի գտանին այլևս 6 կմ̃ 7 մանր կղզիք, որք Թուէին անբեր, և անբնակ, 24 մղոնահեռի

հեռի 'ի Հաննովերայ · զորս Քարդերէթ որ եգիտ զնս, կոչեաց Կղզիս Փօրթլանտայ, կամ Կղզիս Դքսին Փօրթլանտայ:

Կղզիք Նաւարկութեանց ·

Այս կղզիք են թուով իբրեւ 30 · որոց իւրաքանչիւրն այնչափ մեծ է, զի մին բաւական էր կացուցանել զթագաւորութիւն: Անգղիացիք, որք զառաջինն հասին անդր, չետուին դիպողութիւն իջանել 'ի ցամաք 'ի զննել զերկիրն, և առեւտրութիւն առնել ընդ բնակչաց նոցա, զի չունէին վաճառս: Բայց տեսին զերկիրն առհասարակ գալարագեղ և զուարճալի յոյժ · ուր կային բազում մեծամեծ անտառք · և ուրեք ուրեք ընդ մէջ անտառաց տեսան անդաստանք մշակեալք, և ծառք պտղաբերք: Եւ քերելով առ եզերբք մեծագոյն կղզւոյ 'ի կղզեաց անտի, տեսին զի երկայնութիւն նորա յարեւելից յարեւմուտս էր իբրեւ 54 մղոն · այլ 'ի հիւսիսակողմն չէր յայտ թէ ցորչափ տարածիցի · սակայն 'ի յայտնի նշանաց երեւի թէ ընդ երկար ձգի: Կարի հաւանելի է, թէ այս կղզիք բերեն բազում պատուական բերս, մանաւանդ համեմս, գոլով 'ի նոյն լայնութեան ընդ Մոլուքեան կղզեաց:

'Ի հասանել անդ Անգղիացւոց յաւուր միում ընդ առաւօտն, յարձակեցան 'ի վերայ նոցա մանր նաւակօք բազմութիւնք 'ի բնակչաց անտի կղզեացն, և մին այնչափ մերձեցաւ, զի կարող էին խօսակցել ընդ միմեանս · և սկսան պէսպէս նշանօք խօսել ընդ Անգղիացիս, զոր Անգղիացիք ոչ իմանալով, համարէին նշան սիրոյ և բարեկամութեան · բայց իբրեւ և ևս մերձեցան 'ի նաւն, սկսան նետաձիգ լինել յԱնգղիացիս: Յայնժամ և նոքա հրացանս արձակեցին 'ի վերայ նոցա · յորմէ մեռաւ մի ոմն 'ի նոցանէ · իսկ այլք մեղմով իմն խոյս տուեալ փախեան: Եւ ահա զկնի սակաւուց հասին 'ի վերայ նոցա չորեքտասան նաւակք, յորոց վերայ մի միայն հրացան արձակել Անգղիացւոց, առհասարակ ահաբեկեալ 'ի փախուստ դարձան · և առ չափ տագնապի թողին անդ զնաւակ մի 'ի նաւակաց անտի իւրեանց · որ էր 'ի միատասանի փայտէ երկայն յոյժ · և գտան 'ի նմա վեց պատուական ձկունք · և կրիայ մի · և պարկ մի և 'ի նմա խնձոր անման պտուղ քաղցրահամ, զոր մարթ էր ուտել և հում, բայց եփել, կամ խորովել առաւել համեղ էին: Գտան անդ և երկու խեցեղէն անօթք լայնաբերանք, և բազում փուխալթք, զոր 'ի կեր

առն

տանուլին 'ի պէտս առագաստի : Բնակիչք սոցին կղզեաց դրեթէ ամ՟ էրոք նման են բնակչաց Նոր Խալանտայի · գոյն նց՟ է սեաւ դեղնախառն , կմ՟ մթին պղնձագոյն · Հերքն նման գզաթու ոչխարաց սակտակ փուշեաւ ցանեալ , ոտք եւ մօրուսն : Բոլորովին մերկ շրջին · բայց միայն 'ի բազուկս եւ 'ի սրունս կրեն տպարանջանս 'ի ծովային խեցեաց , եւ յերեսս նկարեն սպիտակ նիշս երկայնաձեւս :

Կղզի Սանտուիչեայ :

Է 'ի Նեղուցն սր՟յն Գէորգեայ , զոր յայս անուն կոչեաց Քարդերեգ Նաւապետն յանուն Սանվիչ կոմսին անգղիացւոց · Եւ է մի 'ի նշանաւոր կղզեաց կողմանցն այնոցիկ · տեսիլ նր՟ գեղեցիկ է յոյժ · Եւ երկիրն թուի լինել արգաւանդ , եւ բազմամարդ : Յայս կղզի գտանին երկու քարաժայռք բրգաձեւ բարձրացեալք ամենեւին նման միմեանց յերկու հակակայ ծայրս կղզւոյն · մին 'ի հիւսիս , եւ միւսն 'ի հարաւ , ուղղակի հանդէպ միմեանց իբրեւ 15 մղոնաւ հեռի յիրերաց :

Սան Կղզի ·

Սոյն եւ Կղզի Դուքին Եօրքայ է Ջ 4 աստիճանաւ հարաւային լայնութե՟ 'ի մէջ գլխոյն բալլիսերայ , եւ սանփաննոսի 'ի Նեղուցն սր՟յն գէորգեայ , զոր յերկուս բաժանէ : Երկիր նր՟ դաշտային է եւ զուարճալի , եւ 'ի խորին կողմանս անտառալից : Իսկ բնակութիւք մարդկան առաւելապէս են 'ի ծովեզերեայս . մօտ միմեանց 'ի փոքրիկ անտառս նարկիլ գօգօ ծառոց · վս՟յ ծովեզերք նորա կարի իմն գեղեցկատեսիլ երեւին :

Ծոց Լոշխոտապայ ·

Զայս ծոց զառաջինն յեւրոպացւոց եգիտ պուկէնվիլ , եւ յայս անուն անուանեաց · որ հայեցեալ 'ի աստրագրութե՟ս պուկէնվիլեայ , եւ այլոց նաւարկողաց , որք աստրագրեն զգիրս մերձակայ տեղեաց , ոչ այլ ինչ է , եթէ ոչ մասն հարաւային ծովեզերեայց Նոր կուինէայի :

Երկիրն, որ ձևացուցանէ զծոցս զայս, ցորվայր տեսաւ 'ի գաղղիացւոց՝ ձգեալ տարածի ընդ 4 աստիճանս և կէս երկայնութեան, 'ի գլխոյն որ կոչի Կուոխազափուէ, մինչև ցծոցն, զոր պուկէնվիլ կոչեաց Գիւփը սագ փը լօրանժի. 'ի ծովեզերեայ կողմանս ցած է և դաշտային, և ուրեք ուրեք անտառախիտ. այլ 'ի ներքս կոյս առ սակաւ սակաւ բարձրանայ, և աւարտի 'ի բարձրաբերձ լերինս, որոց գլուխք ցամպս հասանեն. որք և են երեք կարգ մի ըստ միոջ բարձր. բարձրագոյնն ըստ համեմատական կարծեաց պուկէնվիլեայ իբրև 65 մղոնաւ էր 'ի ներքս 'ի ցամաքն, և 'ի հիւսիսային և յարևելեան կողմանս ձգելն մինչև 'ի ծովն. յայն սակս անմատչելի է տեղին 'ի կողմանց անտի: Լի են 'ի նմա անտառք մեծամեծք. և ուրեք ուրեք առ փոքրիկ ծոցովք առ ափն փոքրիկ խրճիթս տարակաց 'ի միմեանց. որք էին բնակարան բնակչաց կղզւոյն. այլ բազմութիւն նոցա թուէր թէ 'ի լերինս բնակէր, որք ընդ միմ փոքրիկ նաւակօք եկին 'ի վերայ գաղղիացւոց. բայց ոչ իշխեցին մերձենալ առ նոսա. 'ի մեծագոյնն 'ի նաւակաց էին արք 22. իսկ 'ի փոքրագոյնն 3. ամենայն նաւակք բոլորք կազմեալ էին. որոց առաջք բարձր էին յոյժ: Սոքա առհասարակ սևք են ըստ բնակչաց կափրաստանի, և հերք նոցա գանգուր, այլ երկայն. կրեն ապարանջանս 'ի բազուկս. և ապարօշս 'ի ճակատս. իսկ զէնք նոցա են աղեղն, և այգ մի նիզակի:

Իսկ գլխաւոր տեղիք այսր ծոցոյն այսոքիկ:

Ուշէանդ: Է կղզի փոքրիկ, զոր յայս անուն կոչեաց պուկէնվիլ, իբր զի ըստ իրաց բերէ զնմանութիւն ուշէսանտ կղզւոյն որ է 'ի գաղղիա. և է ընդ մէջ ժայռից յեզերս ծոցոյն լուիզիատայ իբրև ընդ 10 աստիճանաւ և 45 րոպէիւ հարաւային լայնութեան:

Գլուխ ազատութեան. ըստ գաղղ. Տէլիվրանս: Է հրուանդան յարևելեան ծագ սորին ծոցոյ, որ անտարակոյս է արևելեան գլուխն նոր կուինէայի: Յայս անուն կոչեցաւ 'ի պուկէնվիլեայ, սակս մեծամեծ վտանգս կրելոյ նորա 'ի նաւէն յայն ծոց. ուր ընդ միմ անգամ եհաս 'ի վերջին վտանգ կորստեան:

Ծոց Շուազէօլայ: Է կղզի մեծ յարևելեան կողմն նոր կուինէայի, և մօտ առ նա. լեռնային, այլ բերրի և բազմամարդ: Բնակիչք նորա սևաւ են, հերք նոցա կըւուզ, զոր ներկեն սպիտակ գեղովն և կարմիր. մերկ շրջին, բայց միայն փոքրիկ փախաթս ունին զմիջով. յանդուգն են և քաջասիրտ և յաջողակ 'ի վարել զնաւակս, որք և սա նռճագս ինչ յարձակեցան 'ի վերայ գաղղիացւոց : Վահանն նց՟ է ձուաձև հիւսեալ 'ի կնիւնոյ բզ՟մ ճարտարութ՟ , որք անտեղի տալին նետից : Դըլաւն աւէրթէնայ : Է միւս ևս հրօմանդան 'ի շրջակայ ցամաքն նոր կուլինէայի 'ի հիւսիսակողմն : Երկիր նր՟ գլխովին լեռնային է , սակայն գտանին և անդ բնակիչք . որք են համացեղ ը՟ բնակչաց համացեղ կղզւոյն :

Պուգա : Է կղզի 'ի հիւսիսային արևելեան կողմն սարին աւարտեայ , յայն անուն անուանեալ 'ի պուկէնվիլեայ , որ եւ առաջին գտիչ նր՟ : Երկիր նր՟ արգաւանդ է , և բզ՟մ ուրեք մշակեալ . ունի և այգի ազգի ծառս պտղաբերս . ը՟ որս և գօգօ բզ՟մ յոյժ , և է բազմամարդ : Բնակիչք նր՟ մերկ են . հերք նց՟ գըռուղ և կարճ , և ականջքն ծակ , և երկայն . բզ՟մք ներկեն զհերս 'ի կարմիր . իսկ զմարմինս ողջոյն խայտաբղետ . անգագար ծամեն զխէժ իմն , վն՟ և ատամունք նց՟ կարմիր են : Քաջասիրտ են և պտ՟զմական . կրեն մեծամեծ աղեղունս իբրև վեց ոտնաչափ երկայնութ՟ . և նետս 'ի կարծր , և 'ի ծանր փայտէ . նաւակք նց՟ այլազան են 'ի նաւակաց Շուազիւլեայ ծոցոյն , ունելով զխելս և զառաջս ցածունս :

Կղզիք որք յարշիպեղագոսն նաւորդաց :

Այս կղզիք են չորք . յորս 'ի 1769 հասեալ պուկէնվիլեայ յայս յանուն անուանեաց : Մեծագոյնն է իբրև 9 մղոն երկայն 'ի հիւսիսոյ ը՟ հարաւ . և 6 յարևելից յարևմուտս : Եզերք նր՟ առհասարակ պատեալ են սեպացեալ և անտառալից լերամբք . ը՟ որս անհնարին շառաչմամբ ընդհարկանին ալիք ծովու . վն՟ և կարի դժուարին է մատչիլ նաւուց յափն կղզւոյն : Յորժամ հասին անդ գաղղիացիք , տեսին ուրեք ուրեք հուր , և խրճիթս , և այս իբրև 30 . որք ընթանային առ ափն ծովու : Իսկ մնացեալ երեք կղզիքն փոքր են իբրև 2 կամ 3 մղոնաւ հեռի 'ի միմեանց : Գաղղիացիք ոչ ելին 'ի ցամաք 'ի կղզիս յայսոսիկ . այլ 'ի նաւէ անտի փոքր ինչ առևտուր արարին ը՟ բնակչացն փոխանակութ՟ , որք նաւակօք եկին առ նոսա . առեալ 'ի նց՟է ընկոյզս գօգօ , ջրային թռչունս գեղեցիկս յոյժ , և կոտորակս ինչ կարծր և խարտոցաւոր մորթոյ ձկանց , և այլ պէտս իւրս . տեսին 'ի ձեռս միոյ 'ի կղզեցւոց անօթ և սքաղաղ մի , զոր ը՟ ոչինչ իրաց կամեցաւ փոխանակել . իսկ ինքեանք փոխարէն այլ ինչ ոչ առին 'ի գաղղիացւոց , բայց միայն կապերտս կարմիր չուխայի . ոչ բեւեռս , ոչ դանակս , ոչ երկաթ , և ոչ այլ ինչ այսպիսի , որք սովորաբար կարի հաճոյական են վայրենաբնակ ազանց : Սք միջահասակ են և գոյն մարմնոյ նց թուխ , այլ ոչ սեաւ . և ոմքն ունին 'ի մարմնի կապուտակ նիշս անջնջելիս . 'ի մէջ նց տեսին զոմն , որ սպիտակ էր ք զայլս . հերք նց սեաւ են , զոր հաւաքեալ կապեն 'ի գագաթան գլխոյ . զմօրուս խլեն 'ի բաց , կմ քերծեն . զի յամենին մի ոմն միայն ունէր սակաւ ինչ մօրուս : Զօրաւոր են մարմնով աշխոյժ և արագաշարժ : Նաւակք նց ճարտարագործ . յորս 'ի կիր առնուն առագաստս , և թիակս . և միշտ սրաթուիչ ընթանան : 'Ի չորից կղզեաց աստի՝ երկուց ևեթ եդին անուանս գաղղիացիք . զմին կոչեցին Կղզի Նաւորդաց . իսկ զերկրորդն Անֆան ֆէրտիւ . որ թարգմանի Մանուկ կորուսեալ : Տեսին անդ գաղղիացիք միւս ևս կղզի մեծ , այլ չգտեալ ուրեք ծոց , կմ նաւահանգիստ ոչ ելին 'ի ցամաք :

Կղզիք՝ որք յարշիպեղագոսն Մեծ Կիկլատայ :

Ի խումբ բզմ կղզեաց յարևմտեան կիսագնդոյն ը մէջ 11 և 15 աստիճանաց լայնութե . և 166 և 170 աստիճանաց երկայնութե , ուր 'ի 1769 եհաս պուկէնվիլ . որ համարի , թէ երկիրք , զոր յառաջ ք զնա ետես ռօկկէվէն ը 11 զուգահեռական գծիւ , որք կոչին Կրօնինկա . և Թիէնհովէն , էին հիւսիսային եզերք այսր արշիպեղագոսի : Նոյնպէս համարեցաւ թէ իցէ երկիրն հարաւային կոչեցեալ Երկիր հոգւոյն սբյ . վս զի երևոյթք տեղւոյն ամենևին համաձայն թուէին ծանօթութեցն , զոր տայ զայնմանէ գուիրոս երևելի նաւապետ սպանիացի . բայց զարմացաւ 'ի գտանելն զտեղին 'ի նոյն լայնութե , և երկայնութե , ուր նա ինքն գուիրոս դնէ զիւր մեծ ծոցն սբյն յակոբայ , և սբյն փիլիպպոսի . և ոչ կարաց որոշել , թէ արդեօք նա ինքն գուիրոս վրիպեցաւ , թէ կամեցաւ ծածկել զնոր գիւտ իւր . վս զի Յագիրք առհասրկ զերկիրն հոգւոյն սբյ դնէին միացեալ ը նոր կուինէայի : Բայց յետոյ ծանեաւ զերկոսին ևս մեծապէս սխալեալ :

Յայսմ արշիպեղագոսի են քանի մի կղզիք . յորոց ոմանք անծանօթ են , և ոմանք ծանուցեալք . յորոց գլխաւորքն կղզին Պէնդէկոստէ, երկայն իբրև 34 մղոն · Աւրորայ · որ է իբրև 30 մղոն ը՟ երկայնութիւն · և Բորոփ, որ գրեթէ նոյնչափ է ը՟ առաջնոյն · երկիր նր՟ լեռնային է, և անտառալից : Յայս կղզի եկին գաղղիացիք · զորս իբրև տեսին բնակիչք տեղւոյն, սպառնային նց՟ մարտիւ ը՟դդէմ ելանել · այլ իբրև տեսին, զի գաղղիացիք առ ոչ ինչ գրէին զսպառնալիս նց՟, կեղծաւորեալ 'ի վերին երեսս, զթշնամութին 'ի բարեկամութեան փոխեցին, և սկսան սիրով գնալ ը՟ նս՟, այլ 'ի ծածուկ խորհէին հնարս 'ի վնասել զնս՟ անյաւ · բայց մինչև էր նց՟ լիով պատրաստեալ, գաղղիացիք առեալ 'ի կղզւոյ անտի փայտ, և զայլ պէտս իւրեանց, մտին անդէն 'ի նաւ · յայնժամ բնակիչք տեղւոյն քարինս, և նետս սկսան արձակել զկնի նց՟ :

Բնակիչք սոցին կղզեաց ոմանք սեաւ են, և ոմանք ձիթագոյն, շրթունք նց՟ թանձր, հերքն սեաւ գռուզ և կարճ, և ոմանց դեղին, նմանեալ դզաթաւ ոչխարաց · կարճահասակ են տգեղ և անհեթեթ · և գրեթէ ամենքն հարեալ բորոտութեամբ · անմօրուս են, և մերկ շրջին, միայն փոքրիկ կապերտ ինչ փախաթի պատեալ ունին զմիջով · կրեն ապարանջանս 'ի ծովային խեցեաց · և մանեակս 'ի պարանոցս 'ի պատենից կրիայի · ծակեն զռունգս, և մխեն 'ի նմ՟ զարդս անհեթեթս · կանայք նց՟ զմանկունս իւրեանց բարձեալ կրեն 'ի վր՟ թիկանց 'ի կողովս ճարտարաշէնս և ներկեալս 'ի գոյն կարմիր : Զէնք նց՟ են աղեղն և նետ, և բիր փայտի, երկաթի, և 'ի քարէ · նետքն եղեգնեայ, ունելով 'ի ծայրս ոսկր սլաքաձև :

Կղզիք Քառլօթթայ թագուհւոյն :

Զայսոսիկ կղզիս եգիտ Կարդերեդ անգղիացի · յորժամ յածէր 'ի խնդիր հռչակաւոր կղզեացն Սողոմոնի · բայց ոչ եգիտ զնս՟ : Յելանել նր՟ 'ի ցամաք 'ի մի 'ի կղզեաց, ստիպեցաւ մարտ մղել ը՟ բնակիչս նր՟, որք ը՟դդէմ ելին նմ՟ · և սպան զոմանս 'ի նոցանէ : Այս կղզիք, զորս Կարդերեդ կոչեաց Քառլօթթայ թագուհւոյն, բազում են թուով · յորոց գլխաւորքն են այսոքիկ :

Կղզի Էկմօնդեայ : Նա գլխաւոր կղզի 'ի մէջ սոցին կղզեաց, արգաւանդ, և բազմամարդ · ունի ամրոցս պարսպապատս · որ նոր ինչ է 'ի կողմանս յայնոսիկ · և բնակիչք նր՟ զօրաւոր են, և քաջ պատերազմականք :

Ոմոյ։ Զայս կղզի նոյն համարին ընդ կղզւոյն Սբ Խաչի սողմոնիացւոց, կամ Կուատալքանիալայ, որ է մի 'ի կղզեայն սողոմոնի, որպէս գիրք նորա, և այլ հանգամանք ցուցանեն։

Առ սովին կղզեաւ գտանին այլև երկու փոքրիկ կղզիք, որք կոչին Թրէճանիօ. և Փօրթլանդ։

Լօրդ հաու. Վաւլքանօ. որ բրգաձև բարձրացեալ կայ 'ի ծովու. Գնէֆֆէնէլ. Էկմօնդ. Ոսբի. Կուաքէր. Սանդուան. Գարդներէտ։ Են փոքրիկ կղզիք 'ի կողմանս յայսոսիկ։

Ուտօն ճէյմս։ Են ինն կղզիք, ընդ 36 աստիճանաւ հարաւային լայնութեան. զորս զառաջինն եգիտ Թասման. ապա Քարդերէդ. մին 'ի նոցանէ մեծ է և բազմամարդ. իսկ մնացեալ ութեքին փոքր են յոյժ։

Քարլէս հարթի։ Է կղզի մեծ բազմածառ, և դալարագեղ, զոր եգիտ Քարդերէդ, և ետ նմա անուն. ոչ ետես 'ի նմա բնակիչս, այլ հուր բազում ուրեք. յորմէ գուշակեաց բազմամարդ լինել։

Վինչէլսէա։ Է կղզի իբրև 30 մղոնաւ հեռի 'ի նախընթաց կղզւոյն. երկիր նորա բարձր է. և ծառովն գեղեցիկ։ 'Ի հիւսիսակողմն սորին կղզւոյ ետես Քարդերէդ 'ի հեռաւոստ միւս ևս կղզի մեծ. որ գուցէ իցէ կղզին սոյն յովհաննու գտեալ 'ի պորտուգալիցւոյ, որ և է մի 'ի վերջին կղզեաց արևմտեան կիսագնդոյ։

Կղզիք գտեալք 'ի վալլիսայ։

Քաջ նաւապետն վալլիս անգղիացի զկնի գտանելոյ յառաջ քան զայլս յեւրոպացւոց զկղզին զանուանեալն 'ի գաղղիացւոց Դուաէտէ կամ Օտաէտէ, զոր ինքն կոչեաց Գէորգ, շարունակեալ զընթացս ընդ արևմուտս, եգիտ յաջորդաբար միմեանց զկնի զայլ ևս կղզիս, որք 'ի նմանէ կալան զանուն, և են հետագայքդ։

Սէր քարլէս սաունդէր։ Է կղզի ընդ 17 աստ" և 28 բոպ" հարաւային լայնութեան. բնակիչք նորա սակաւ են։

Լօրդ հաու։ Կղզի ընդ 16 աստիճանաւ և 48 բոպէիւ հարաւային լայնութեան. երկայնութիւն նորա է 10 մղոն. իսկ լայնութիւն 4։

Շիլլի։ Այս կղզի ցած է. գրեթէ հաւասար ջրոյ ծովուն. և է ընդ 15 աստիճանաւ և 28 բոպէիւ հարաւային լայնութեան։

Պօսգավէն։ Կղզի բոլորաձև արդաւանդ, և բազմամարդ.

մարդ. բնակիչք նր քաջ պատերազմօղք են բարեչափ, և նման գաղղիեցւոց :

Գեփփէլ : Կղզի փոքրիկ մերձ առ նախընթաց կղզին, և կայ ը̅ նմ̅ ը̅ 15 աստիճանս հարաւային լայնութե, որք 20 աստիճանաւ երկայնութե հեռի են ՚ի չիլլի կղզւոյն :

Վալլէս : Կղզի ը̅ 13 աստիճանաւ և 18 րոպէիւ հարաւային լայնութե արգաւանդ, և բազմամարդ :

Կղզիք գտեալք ՚ի Գօմօտօրայ Պիրօնայ :

Գոմօտոր Պիրօն անգղիացի անցեալ ընդ դայեդի կղզին, և շարունակեալ զգնացս ը̅ արեւմուտս ՚ի գինեան, եգիտ զառաջիկայ կղզիս :

Իշխան Վալլէսի : Կղզի ցած և նեղ և գրեթէ ծածկեալ ՚ի ջրոց ծովու ը̅ 15 աստիճանաւ հարաւային լայնութե. և արեւմտեան ծայր նր անկանի ը̅ 225 աստիճանաւ և կէս երկայնութե :

Վտանգաւոր կղզիք, կմ Տանկէր : Այս կղզիք իբրև 600 մղոնաւ հեռի են ՚ի նախընթաց կղզւոյն, որք ըս̅ անուան իւրեանց կարի վտանգաւոր են ՚ի պատճառս բազմապատիկ ժայռից, որք գտանին զնոքօք :

Կղզի դքսին Եօրքայ : Է կղզի ցած արգաւանդ, այլ գրեթէ անբնակ. գոմօտոր ՚ի հասանել անդր, զառաջինն համարեցաւ թէ իցէ մալվիտա կղզին. այլ յետոյ տեսեալ եթէ ոչ է այն. եդ նմա անուն կղզւոյ դքսին Եօրքայ :

Պիրօն : Է կղզի ը̅ 1 աստիճանաւ և 18 րոպէիւ հարաւային լայնութե. և ը̅ 203 աստիճանաւ երկայնութե, ցած, բայց արգաւանդ, և բազմամարդ : Բնակիչք նր թուխ են, կմ ՚ի գոյն մթին պղնձոյ. որք մերկ շրջին. և ունին տապարանջանս ՚ի բազուկս, և մանեակս ՚ի պարանոցս ՚ի ծովային խեցեաց : Հ̅րկ զէնք նց է ազգ մի լայնաբերան նիզակաց :

Նոր Զէլանդիա :

Այս կղզի զառաջինն գտաւ յաբէլէ Թասմանայ հոլանտացւոյ ՚ի 1642 ՚ի դեկտեմբերի 13. բայց ոչ ել անդ ՚ի ցամաք. զի իբրև կամէր խարիսխ արկանել ՚ի ծոցն՝ անուանեալ ծոց մարդասպանից. բնակիչք տեղւոյն ՚ի վր յարձակեալ, դիմակաց եղեն նմ :

Ոմանք յաշխարհագրաց համարեցին, թէ Նոր Զելանդիայն լիցի մասն ցամաքին հարաւայնոյ. այլ մեծն Գուգ, որ 'ի վերջին ճամբս եհաս անդր, և քաջ զննեաց զերկիրն, ասէ թէ են նոքա երկու կղզիք անջատեալք 'ի միմեանց 'ի ձեռն նեղուցի միոյ, որոյ լայնութիւնն է երբեմն 5 մղոն, և կոչի Նեղուց Գուգայ:

Այս կղզիք են ընդ մէջ 34 և 48 աստիճանաց հարաւային լայնութեան և 'ի մէջ 183 և 196 աստիճանաց երկայնութեան, տարածութիւն նոցա ընդերկայնն է 6 կամ 700 մղոն. բայց առ համեմատութեամբ երկայնութեան նեղ են. Հիւսիսակողմանն 'ի բարբառ բնակչաց երկրին՝ կոչի Եահէյնոմաւէ, իսկ հարաւակողմանն Թաւիէյ բոյէնամօ: Տեղիքս այս առհասարակ լեռնային է և ապառաժուտ, և տեսիլ նորա խոժոռ և տրտմագին. և թուի թէ չէք 'ի նմա մշակեալ երկիր. ոչ և ոչ բազմութիւն բնակչաց: Իսկ առաջինն ընդ հակառակն՝ ունի տեսիլ գեղեցիկ և զուարճալի, և երկիր նորա անհաւասար, և լեռնային, այլ 'ի մէջ բլրոց ունի հովիտս գեղեցիկս և դալարագեղս ոռոգեալս բազում ականակիտ վտակօք. Իսկ գլուխք լերանց և բլրոց, ծածկեալ են անտառովք: Օդ նորա բարեխառն է, և ձմեռն չէ այնչափ ինչ սաստիկ, զի տեսան անդէն բոյսք ինչ, որք ոչ տանին սաստիկ ցրտութեան:

'Ի չորքոտանի կենդանեաց այլ ինչ ոչ տեսին անդէն, բայց միայն շունս և մկունս. զշունս դարմանեն 'ի կերակուր, զի ուտեն զմիս նոցա: Նոյնպէս և թռչունք սակաւ գտանին անդէն, որք գրեթէ ոչինչ իւիք զանազանին 'ի թռչնոց մերոց: Այլ կարի առատութիւն է անդ ձկանց, և ծովային խեցեաց, որք և լնուն զպակասութիւն չորքոտանեաց, և թռչնոց: Ունի և անտառս մեծամեծս, բայց ծառ պտղաբեր ոչ տեսին անդէն անգղիացիք. Նոյնպէս և ազգի ազգի բոյսս. յորս բաց 'ի դդմենւոյ, զոր բազում խնամով դարմանեն. զի անտի կազմեն զամենայն կահս խոհարանի իւրեանց, սակաւք գտանին պիտանիք 'ի կերակուր: Գտանի անդ և թթենի չինաց. բայց սակաւ յոյժ. յորմէ գործեն կերպաս սակաւ, զոր հատեալ 'ի մանր կապերտս, կախեն զականջաց երբեմն զգլխոս: Այլ 'ի մէջ ամենայն բուսոց այսր կղզւոյ առաւել շահաւորէր և պիտանի է ազգ մի բուսոյ, զոր 'ի նոյն գործ 'ի կիր արկանեն, յոր մեք զկանեփ և զվուշ. զի 'ի տերևոց նորա սակաւ պատրաստութեամբ, մանեն առասանս, և անկանեն ոստայնս: Եւ այլ ինչ եղանակաւ գործեալ զտերևսն հանեն 'ի նոցանէ թելս երկայնս և հաստատունս.

տունս , սպիտակս իբրև զձիւն . և շողշողենս իբրև զմետաղս , յորմէ մարթ է գործել պատուական կերպաս : Այս բոյս բազմարդիւն անդադրման 'ի մարդկանէ բուսանի ը̅ ոտն՝ ունելս 'ի լերինս , և 'ի դաշտս , յանջրդիս , և 'ի գլխձին վայրս . բայց երևի թէ առաւել սիրէ զխոնաւն , ք̅ զչորն : 'Ի ծովեզերեայս նո̅ բզ̅մ ուրեք բայց մ̅ն̅դ 'ի ծոցն մերձաւորիսն դաշտանին մանրուք երկաթոյ խառն ը̅ աւազս , որ է նշան լինելոյ անդ բովուց երկաթոյ :

Բնակիչք Նոր զելանդիոյ չեն այնչափ ինչ բզ̅մ, առ համեմատութ̅ ընդարձակ տարածութե̅ երկրին , որք իբր 'ի բզ̅մն բարեչափ են մարմնով առողջք և ուժեղք ոչ կարի յոյր , և ոչ յոյժ վտիտ , այլ միջակս . որք և կանայք զուարթամիտ են և քաղցրակենցաղ , աշխատասէր աշխոյժ և արթնաձեռն յամ գործս . 'ի գնալն ուրեք նաւակօք , միշտ սրաթռիչ ընթանան . յորս որչափ և բազմութի իցեն , այնպէս համաձայն և միանգամայն վարեն զթիակս , որպէս թէ 'ի միոյ հոգւոյ շարժեին : Այլ ոչ 'ի գործս , նոյնպէս և 'ի բարկութե̅ կարի արագաշարժ են , և անհաշտ ատելութ̅ ըմբռնին առ թշնամիս . զոր թէ զբուամբ ածիցեն , անխնայաբար խողխողեն , առ 'ի ուտել զմիս ն̅ց . քանզի մարդակեր են : Գոյն ն̅ց առհասարակ խօսելով՝ թուխ է , բայց ոչ յամենին միապէս . ատամունքն մանր , հաւասար և սպիտակ ք̅ զփղոսկր . հերքն սեաւ . զոր արք հաւաքեալ կապեն 'ի գագաթան , իբրև փունջ . և զարդարեն փետրովք թռչնոց . իսկ կանայք զմասն ինչ 'ի վարսից հատանեն , և զմասն ինչ թողուն արձակ կախել զթիկամբք , զոր և օծանեն իւղով . վ̅ն̅ այնորիկ գարշահոտ են յոյժ . մ̅ն̅դ հս̅րկ կանայք . իսկ կանայք մեծամեծաց ոչ այնչափ . զի թարմ իւղով օծանեն , և ստէպ նորոգեն զօծումն :

Արք և կանայք սովամբ կտաւեն զայլ և այլ անդամս մարմնոյ . նկարս անջնջելիս դրոշմելով 'ի ն̅ս̅ . բայց կանայք միայն զշրթունս . իսկ արք դրեթէ զմարմինն ողջոյն . և կապուտակագոյն նկարս արկանեն 'ի վ̅ր̅ . և ուրեք ուրեք հերձոտեն զմորթ մարմնոյ , մեծամեծ պատառուածս գործելով , և արկանեն 'ի նոսա սևագոյն ներկ , որով զարհուրելի իմն երևին : Բաց յայսմանէ , զմարմինս ողջոյն ներկեն 'ի գոյն կարմիր , կարմրագոյն ինչ հողով , զոր ոմանք պարզ 'ի կեր արկանեն , իսկ այլք իւղով զանգեն և նովաւ մեծամեծ նկարս նկարեն 'ի մարմնի , որք միշտ խոնաւ մնան : Հանդերձ ն̅ց խոշոր են , հիւսեալ 'ի տերևոց մասնաւոր ի՟ն ծառոյ․ զորոյ զտերեւսն հատանեն յերկս մասունս ը՟ երկայն․ և հիւսեն անտի կապերտս միջակս ՚ի մէջ ցփսւոց, և փսիաթի, յորմէ կապերտ մի արկանեն զթիկամբք, լարիւ կապեալ, որ ձգի մինչև ցծունկս․ և միւս ևս պատեն առ ստեամբք, որ հասանէ գրեթէ մինչև ՚ի գետին․ արք զստորինս զայս ՚ի կիր արկանեն․ իսկ կանայք զերկոսին ևս․ Բայց այս զգեստ ռամկաց է․ իսկ մեծամեծք ն՟ց զգենուն կտաւի հանդերձս, զի բաց ՚ի նախասացեալ փսիաթէ, գործեն անդ և այլ երկու ազգս կտաւոց․ մի ծակոտկէն ուռկանակերպ, և միւս ևս խոշոր կտաւ․ որ նման է մերումս եղեգէն պէզի կոչեցեալ կտաւոյ․ և ՚ի վ՟ր ն՟ր ուրեք ուրեք կարեն շերտս երկայնաձիգս ՚ի մորթոյ շանց, որ կարի ՚ի յարգի է առ ն՟ս․ և ՚ի լրումն ա՟մ զարդուց, նաև փետրովք թռչնոց, մ՟նւդ կարմիր թութակաց զարդարեն զհանդերձս։

Նոր ի՟ն է տեսանել յայս կղզի․ զի արք ն՟ց առաւել պճնապաճոյճ լինին, ք՟ զկանայս։ Արք և կանայք ծակեն զականջս, և առ սակաւ սակաւ այնչափ ը՟արձակեն զծակն․ մինչ մարթ է համարձակ մխել զձեռն ՚ի նմ՟․ զորմէ կախեն կոտորակս կապերտից, ոսկերս մեծամեծ թռչնոց, և հ՟սրկ ակունս, յորս փորագրեալ կան անձև կերպարանք․ մինչ նաև զբեւեռս, զորս ընկալեալ յանգղիացւոց, կախէին զականջաց։ Իսկ կանայք միայն ը՟ ծակ ունկանն և բաւամբ չափ սալտակ վարս մանաւոր ի՟ն ծառոյ, կէս մի յառաջոյ, և կէս մի ՚ի յետուստ կախեալ ը՟ս օրինակի հերաց․ և ոմանք ծակեն և զունչս, և ցցեն ՚ի նմ՟ փետուրս թռչնոց․ որով ծիծաղական ի՟ն երևին։ Կրեն և մանեակս ՚ի պարանոցս, և ապարանջանս ՚ի բազուկս յոսկերաց թռչնոց, ՚ի ծովային խեցեաց, և ՚ի քարանց ինչ, յորս քանդակեալ կան ուրուականն ինչ մարդկային կերպարանք։

Բնակարանք ն՟ց են աղքատիկ խրճիթք փայտակերտք, և դրունք ն՟ց են փոքրիկ ծերպք, ը՟ որս սողոսկելով մտանեն և ելանեն․ առ որով ունին և փոքրիկ լուսամուտ, որ միանգամայն է և ծխնելոյզ։ Մեծամեծքն ունին երկու, կ՟մ երիս այսպիսի խրճիթս ՚ի միում տեղւոջ շրջապատեալ ցցովք, որոց բարձրութիւն է իբրև 10 կ՟մ 12 ոտնաչափ․ և միջոցքն որ ՚ի մէջ ցցեց՝ լցեալ խոտով։ Իսկ կարասիք տանց ն՟ց են քանի մի սակառք, յորս պահեն զհամբարս կերակրոց իւրեանց, և դդումք ՚ի պէտս ջրոյ․ և արկղ մի պահել ՚ի նմ՟ զզարդս, և զզէնս։ Այս է ն՟ց ա՟մ փար-

թա

թամութ՟ն ։ Կերակուր ն՟ց է հում, կ՟մ խորովեալ 'ի տորերկրեայ փուռն, կ՟մ 'ի թոնրի ․ զի չունին բնաւ մնօթս խեցեղէնս, կ՟մ երկաթիս առ 'ի եռացուցանել 'ի ն՟ս ինչ կերակուր ․ իսկ ըմպելին է լոկ ջուր ․ և ոչ գիտեն բնաւ թէ զի՞նչ իցէ գինի, կ՟մ այլ ինչ արբեցուցիչ ըմպելի ․ և սակայն առողջ են և երկայնակեաց, և ուժեղ մինչև ցխորին ծերութ՟ն ։

Երկրագործութ՟ն, և այլևս խոշոր արհեստք սաւեղանձս ծանուցեալ են 'ի հարաւային կողմանս Նոր զելանդիոյ, ք՟ 'ի հիւսիսայինս, ուր հազիւ հետք այսոցիկ արհեստից երևին, բայց յարհեստէ պ՟տզմի, որ նոյն է ը՟ ա՟մ տեղիս ։ Եւ զարմանք են, զի ս՟ք զոլով քաղցր, և համբոյր բարուք, և չունելով ևս երևելի ինչ պատճառ մարտի, սակայն և այնպ՟ս հանապազորդեան թշնամութ՟ն և մարտ է 'ի ն՟ս, ցեղ ը՟ ցեղի պ՟տզմելով ․ գուցէ ո՟պ կարծեն ոմանք, նուազութ՟ն կերակրոյ իցէ մի 'ի գլխաւոր պ՟տճառաց մարտի ն՟ց, ո՟պ և սովորութ՟ն ուտելոյ զմիս մարդոյ ․ զի բաց 'ի սակաւ շանց, զոր դարմանեն 'ի պէտս կերակրոյ, և բաց յարմատոց ինչ, չիք յայն կղզի այլ ինչ անասուն քառոտանի կենդանեաց, ո՟պ և ոչ արմտիք և բանջարք 'ի կերակուր մարդկան ․ Թէպէտ ծովեզերեայ բնակիչք ունին և ձուկն 'ի ծովէ, բայց և այն ոչ յա՟մ եղանակս տարւոյն գտանի առատ ․ իսկ բնակիչք ներքին կողմանց և ոչ զայն ունին ․ վ՟յ և յորժամ այնք պակասին ն՟ց, յայնժամ 'ի յետին յուսահատութ՟ն հասեալ, հարկ է ն՟ց կ՟մ յաղթել, և յագել մարմնով սպանելոց, և կ՟մ լինել կերակուր այլոց ։

Գլխաւոր զէնք ն՟ց են տէգ փայտաշէն, երկայն իբրև 14 կ՟մ 15 ոտնաչափ ․ և յերկոսին ծայրս ագուցեալ կան սրածայր ոսկերք ․ և նետ ․ և բիր, զոր սովորաբար կրեն 'ի գօտիս իբր զարդ զինուորական ․ ո՟պ է սլաքն առ եւրոպացիս ։ Ունին և դանակ, և կացին 'ի սեաւ, կ՟մ 'ի կանաչագոյն քարէ, որ կարծր է յոյժ ․ իսկ մկրատ ն՟ց է յոսկերաց մարդկան, կ՟մ 'ի մանր կտորոց յասպիս քարի, և զայս ա՟մ գործիս սրեն քարամբ, հանդերձ մանրամաղ փոշեաւ յասպիսական ․ զի չիք բնաւ առ ն՟ս երկաթեղէն ինչ գործի ․ ուստի և խոփ ն՟ց, և բրիչ փայտեղէն են ․ և ք՟զի երկիրն աւազախառն է, վ՟ն այնորիկ և փայտեղէն գործեօք դիւրաւ կարեն բրել և կակղել ։ Յորժամ անգղիացիք հասին յայս կղզի, բնակիչք ն՟ր համարելով բազմութ՟բ յաղթել ն՟ց, բ՟զմ նաւակօք եկին 'ի պ՟տզմ ը՟դէմ ն՟ց ․ և 'ի հեռուստ եւս մեծն գուդ , զի մինն 'ի գլխաւորաց նց՟ արկել՟ զիւրեաւ մուշտակ 'ի մորթոյ շանց , և ունելով 'ի ձեռին գաւազան , կարդէր զպաշտօնականսն : Եւ յորժամ մերձեցան առ անգղիացիս իբրեւ քարընկէց մի , սկսան աղաղակել 'ի բարբառ իւրեանց Հարօմայի , հարօմայի , ճաւէ ուգա , ա բաթօ , բաթօ ամէ · այ՟՝ Մերձեցարուք մերձեցարուք զի բրօք սպանցուք զամենեսին : Զայս ասացել՟ առ սակաւ սակաւ մերձենային 'ի նաւն անգղիացւոց , և մերթ ը՟ մերթ պատասխանէին հարցմանց , զոր օդաիդացի ոմն Օմիայ կոչեցեալ որ էր թարգմանն առ անգղիացիս՝ հարցանէր նց՟ : Եւ տեսեալ , զի անգղիացիք չառնէին ինչ պատրաստութ՟ պատերազմի , համարեցան թէ երկնչէին · վ՟յ համարձակեալ՝ մօտ գնացին առ նաւն նց՟ :

Յայնժամ սկսան երգել զերգ պատրաստութե՟ պատերազմի · գոչէին իբրեւ զգիղնս · և մին առել՟ կաքաւէին , ձգէին զլեզուս արտաքս իբրեւ զշունս · կրճտէին զատամունս , շարժէին զգլուխս , և զմարմինս ոլորոյն զօրէն մոլեգնելոց · միանգամայն և ձեռամբ շարժէին զոլիրս · և յերգելն , զիւրաքանչիւր տուն աւարտէին 'ի հմէհ , ուժգին ճչելով : Բայց իբրեւ տեսին զի անգղիացիք ոչ առ ոչէ չառնունին զէն ը՟դէմ նց՟ , քզի բաց յայլոց զինուց , ունէին և հրաղէնս , այն է՝ թօփ , յորմէ անհնարինս երկնչին վայրենի ազինք · այլ զի ոչ կամէին նց՟ չարիս հասուցանել , փոխեցին զմիտս , և սկսան բարեկամութբ գնալ , և մտերմութե՟ ցուցանել առ նս՟ , բայց 'ի վերին երեսս եւեթ · քզի տակաւին կասկած 'ի միտ ունէին , թէ անգղիացիք եկել՟ են հարկատուս յինքեանց կացուցանել զնս՟ · և յայն սակս զոմ՟ հնարս 'ի կիր արկանէին 'ի խաբել զնս՟ : Երբեմն առեւտրութիս առնէին ը՟ նս՟ · և իբրեւ առնուին զգինն վաճառացն , ը՟ նմին և զվաճառս անդրէն յինքեանս կորզէին · յայս սկիզբն հաստատել՟ , թէ չէ պարտ նպաստ ինչ մատուցանել թշնամւոյն : Այլ յետոյ իբրեւ ստուգութբ ծանեան զմարդասէր , և զբարեկարգ բարս անգղիացւոց , այնուհետեւ ամ՟ արդարութբ և սիրով վարէին ը՟ նոսա :

Վն՟ եղանակի քրիստոնեական կառավարութե՟ նոր զելանդիոյ , չէ մարթ որոշակի ինչ նշանակել աստանօր · վ՟ զի սակաւ ժամս կային անդէն անգղիացիք · վ՟յ ոչ կարացին լիով տեղեկանալ եղանակի կառավարութե՟ նց՟ : Այսչափ ինչ գրէ մեծն գուդ , թէ ս՟ ունին զմի ումն գլխաւոր հրամանատար , զոր կոչեն Թէրաքն . և ը՟ նովաւ են բ՟զմ գլուխք ցեղից միմեանց ստորակարգեալք , բայց իշխանութի՟ն նց՟ ը՟արձակ է յոյժ . այլ թէ արդեօք միանձնեաւո՞ր է , և ժառանգութ՟ անցանէ յորդւոյ յորդի . եթէ փոփոխական , այս չէ՛ յայտ :

Իսկ վս՟ կրօնի նոր զելանդացւոց այսչափ ինչ ևեթ կարացին գիտել , թէ ճանաչեն նք՟ աներևոյթ էակս . յորոց միջի մին է գերագոյն . իսկ այլք ստորակարգեալք նմ՟ : Աւանդութի՟ն նց՟ ՚ի վ՟ր սկզբնաւորութե՟ ծի , և ստեղծագործութե՟ն մարդոյ գրեթէ չէ ինչ ը՟հատ յաւանդութէ՛ դայիդեցւոց : Ո՛չ տեսին անդ տեղի ինչ նուիրեա՟լ ՚ի պաշտօն հանդիսական , բայց միայն մերձ ՚ի ծառաստս ինչ՝ տեսին ցանկապատ տեղի փոքրիկ քառակուսի , և ՚ի մէջ նր՟ ցցեա՟լ է գլուխն քանի մի ցից բահաձևս , որով սովոր են նք՟ բրել զերկիր , զորոց կախեա՟լ կային սաղաւարտք լի արմատովք : Եւ ասացաւ նց՟ , թէ այն էր նուէր ընծայեալ ՚ի տեարց աներևոյթ էակաց , առ ՚ի ընդունիլ ՚ի նցէ զառատ բերս : Վս՟ թաղման մեռելոց այլ ինչ ոչ գրեցին անգղիացիք , բայց միայն , թէ տեսին ՚ի հարաւային կողմանս այսր կղզւոյ , զի զգլուխ մեռելոյ ՚ի ծոցն ընկենուին վէմ մի մեծ կապեա՟լ զպարանոցէ : Իսկ յայլ կողմանս , թուի թէ ՚ի հող թաղեն :

Բայց այս հաւաստի է , զի զելանդացիք միշտ ջանացին թագուցանել յօտարականաց զհանգստարանս թաղման մեռելոց իւրեանց , գուցէ վս՟ աւելորդապաշտութեանց ինչ : Այլ յաւէտ զարմանալին այս է , զի տեսին անդ ՚ի ծոցն անուանեալ դշխոյ քարլօթթա խաչ մի կանգնեա՟լ , և զարդարեա՟լ փետրովք , և հարցեա՟լ ցբնակիչս զպատճառ կանգնելոյ զայն խաչ . ասացին թէ է ՚ի նշան առն միոյ մեռելոյ . և յաւելին անգղիացւոց , թէ այդ ոչ երբէք ճշմարիտ , զի դուք զմեռեալս ձեր ՚ի ծովն ընկենուք . նոքա պապանձեցան , և այլ ինչ ոչ ասացին : Ոմանք համարին , թէ այն խաչ կանգնեցաւ յընկերաց թասմանայ երբեմն նաւապետին , որ յռ՟ջ ք՟ զգուք եհաս ՚ի նոր զելանդիա , և ՚ի ծոցն աւազակաց , որ թուի թէ մի է ը՟ նախայիշատակեալ ծոցոյն քարլօթթա դշխոյին , զի ծ՟ գուգայ իբրև 15 մղոնաւ ևեթ հեռի են ՚ի միմեանց . ուր բնակիչք տեղւոյն եղին ը՟դէմ թասմանայ , մինչդեռ հանդերձեա՟լ էր խարիսխ ընկենուլ ՚ի ծոց անդր . և թէպէտ ասի ՚ի գիրս ճ՟նպ՟հորդութե՟ նորին թասմանայ , թէ ոչ կոխեաց նա ՚ի կղզի անդ , բայց կարելի է թէ եղ առ սուղ ինչ ժմկ ՚ի թաղել զմեռեալս իւր որք մեռան 'ի պատ̃զմին, զոր մղեաց ը̃ դէմ բնակչաց կղզւոյն, և գուցէ մնացեալ ընկերք նր̃ կանգնեցին զխաչն զայն 'ի նմին տեղւոջ · զոր բնակիչք կղզւոյն կմ̃ սակս աւելորդապաշտութե̃, և կմ̃ առ ահի զարդարեցին փետրովք 'ի հասանել անդր անգղիացւոց : Եթէ այս ճշմարիտ իցէ, յայտնի է պատճառն չպատասխանելոյ նոր զելանդացւոց, 'ի հարցանել անգղիացւոց զպատճառ խաչին այնորիկ · իբր զի երկեան, թէ գուցէ ոք̃ եկին 'ի խնդրել զվրէժ համազգեաց իւրեանց · ոպ̃ և սակս նոյն պատճառի միշտ ժխտեցին, թէ տեսեալ իցեն երբէք նաւ ինչ եւրոպիոյ հասեալ անդր · որ յայտնի սուտ էր, զի ոչ շատ ինչ յառաջ եհաս անդր Թասման · որ և գրեաց իսկ վս̃ նր̃, նշանակելով զդիրս, և զայլ հանգամանս նր̃, թէպէտ ոչ այնպէս ճշգրիտ, ոպ̃ մեծն Գուգ:

Լեզու բնակչաց կղզւոյս նոյն է գրեթէ ամ̃ իւրոք ը̃ լեզուին օտահիտացւոց, արտասանութե̃ և եթ զանազանել. թէպէտ իբրև հազար մղոնաւ հեռի են 'ի միմեանց · ուստի թուի թէ երկոցունց ազ̃ ծագումն նոյն է · զորս ոմանք համարին եկեալ յամերիկոյ, որ անկանի յարևելեան կողմն նոր զելանդայի · բայց ըս̃ գուշակաց չեն ոք̃ ամերիկացիք · զի նք̃ անմօրուս են · իսկ ոք̃ մօրուսաւոր · և եթէ չիք 'ի հարաւակողմն ը̃արձակ ցամաք, ոպ̃ փորձիւ ապացուցանի 'ի ճնպ̃հորդութե̃ն գուգայ, զի այն ամ̃, զոր Թասման · Ֆէրնանտէզ · Լէհրմիդ · Գրիճիրոս · և Բոկկեվլին համարէին մասն հարաւային ցամաքի, ոչ այլ ինչ են, եթէ ոչ մանր կղզիք ցրիւ 'ի համատարած խաղաղական ովկիանոս անդր · վս̃յ ստուգագոյն թուի, թէ բնակիչք Նոր զելանդայի յարևմտից գնացին անդր : Նոր զելանդայն բաժանի յերկու մեծամեծ կղզիս, ունելով 'ի միջի նեղուց 5 մղոնաչափ լայնութե̃ · որպէս 'ի վերոյ նշանակեցաք, յորոց մին ձգի ը̃ հարաւ · իսկ միւսն ը̃ հիւսիս : Հարաւայինն 'ի լեզու բնակչաց նր̃ կոչի Ովլէյ, կմ̃ Թովլէյ Փոյենամօ · այլ չէ յայտ թէ սովին անուամբ զբոլոր կղզին իմանան, թէ զմասն ինչ և եթ նր̃ : Իսկ հիւսիսայինն Եահէյնօմաւէ · զորս գեղեցիկ ստորագրեցին անգղիացիքն յԱշացոյցս, թէպէտ ոչ ճշգրտիւ զամ̃ կողմանս, զի կողմանք ինչ նց̃ տակաւին չեն ծանուցեալ ճշգրտիւ :

Թաւավէյ Փոյէնամօ ։

Այս կղզի է ը՟ մէջ 41 և 48 աստիճանաց հարաւային լայնութե՟․ և դիրք նր՟ 'ի հարաւոյ արևմտից ձգի ը՟ արևելեան հիւսիս ։ Երկայնութի՟ նր՟ է իբրև 500 մղոն․ իսկ լայնութի՟ն 120 ։ Բոլորովին գրեթէ լեռնային, և ը՟ արտաքին տեսլեանն թուի անբեր ։ Անգղիացիք յերկս եւեթ տեղիս տեսին անդ բնակութի՟ մարդկան․ ի՟՝ մերձ 'ի նեղուցն քարլօթթայ դշխոյին․ առ ձիւնապատ լերամբք․ և յարևմտեան կողմ՟ն Սունտէրս սարին ։ Գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ ։

Գլուխ հարաւոյ ։ Է գլուխ 'ի ծագ հարաւային կողման կղզւոյն․ առ որով են փոքրիկ կղզիք Թրափփէ կոչեցեալք ։

Սօլանտէր ։ Է կղզի, կմ՟ լաւ ևս ասել ժայռ անբեր, որոյ շրջապատն է իբրև մղոն մի․ ուր իբրև 15 մղոնաւ հեռի 'ի ծովէն, հանդէպ այսր ժայռի կան բարձրաբերձ սեպացեալ լերինք, որոց գլուխք 'ի բզ՟մ տեղիս տեսան զի ծածկեալ կային ձեամբք․ սակայն չէին բոլորովին անբեր, վս՟ զի գտանէին 'ի նն՟ ծառք գեղեցիկք․ այլ հետք ինչ բնակութե՟ մարդկա[illegible]․ երևեցան 'ի նն՟ ։

Գլուխ արևմտեան ։ Է հրուանդան ինչ մերձ 'ի ծոցն անուանեալ Ծոց տուսգի, կմ՟ Տգեղ ծոց․ լայնութի՟ մտից նր՟ է 3 կմ՟ 4 մղոն․ և են 'ի նմ՟ փոքրիկ կղզիք․ հիւսիսային ծագ նր՟ կոչեցաւ յանգղիացւոց Փօնթ Ֆայվ Ֆինկէրս․ ի՟՝ ծագ, կմ՟ չէշտ հնգմատնեան․ իբր զի են անդ հինգ ժայռք բրգաձև բարձրացեալք․ որք բերեն զնմանութի՟ հնգից մատանց ձեռին մարդոյ ։ Երկիր նր՟ ը՟ մեծի մասին ապառաժուտ է և անբեր, բայց ուրեք ուրեք երևին 'ի նմա ծառք վայրենիք ։

Նեղուց քարլօթթայ դշխոյին ։ Է ծոց ը՟դարձակ, ուր էջին անգղիացիք 'ի ցամաք 'ի զննել զլեռս, զբնակիչս, և զհանգամանս երկրի կղզւոյս ։ Եւ է սա մերձ 'ի մուտս նեղուցին, որ անջրպետէ 'ի միմեանց զերկու մեծամեծ կղզիս զայսոսիկ ։

Պանքս ։ Է կղզի առ 43 աստիճանաւ և կիսով հարաւային լայնութե՟ յարևելեան կողմ՟ն մեծի կղզւոյն․ դիրք նր՟ է բոլորաձև, և շրջապատն իբրև 72 մղոն․ երկիրն անբեր․ սակայն և այնպէս անգղիացիք տեսփին անդէն բնակիչս ցրիւ աստ և անդ առ ափն ծովուն :

Էահէյն նօմաուէ :

Այս կղզի լաւ ևս է քան զնախընթացն , զի թէպէտ լեռնային է բայց լերինք նորա չեն այնպէս ապառաժուտք , որք դրեթէ առհասարակ ծածկեալ են մեծամեծ անտառովք . ունի և հովիտս ոռոգեալս ականակիտ վտակօք . և հող նորա թէպէտ թոյլ աւազուն , բայց ըստ կարծեաց պանքսայ , և սօլանտերայ , որք քաջ զննեցին զայն , բերէր առատապէս զամենայն ազգս արմտեաց բուսոց և պտղոց , որք պիտանի են կենաց մեր , եթէ մշակեալ լինէր որպէս արժան է : Տարածութիւն այսր կղզւոյ չէ ինչ ընդհատ 'ի տարածութենէ նախընթացն հարաւային կղզւոյ . բայց միայն ձևով տարբերի 'ի նմանէ . զի ձև սորա է սրածայր եռանկիւնի , որոյ գլխաւոր տեղիք են սոքա :

Այր Քառմանայ Նէբից Բոգաաորայ , կամ Գիւղակն հիւսիսայինն :

Է երևելի հրուանդան ուր զառաջինն եհաս աբէլ Թասման 'ի 1642 . ապա լաւ ևս ծանեան զայն նաւաստիք անգղիացւոց :

Թէֆիզ , կամ Թաւազղէզ , և Թաւաբօէ : Է գետս նշանաւոր , որ մեծութեամբ և առատութեամբ ջուրց դրեթէ ոչ ինչ ընդհատ է 'ի Թէմիզ գետոյն անգղիոյ . որ 'ի հարաւոյ հոսեալ ընդ հիւսիս մտանէ 'ի ծովն , ուր գործէ ծոց պատուական և ապահով յամենայն հողմոց :

Են 'ի կղզին յայն և երկու հրուանդանք նշանաւորք . յորոց մին կոչի Հրուանդան արևելեան , զի է յարևելեան կողմն կղզւոյն . իսկ միւսն Հրուանդան Գամբէլայ . որ է 'ի հարաւային կողմն :

Կղզիք ընկերութեան :

Այսպէս կոչեցան յանգղիացւոց . իսկ գաղղիացիք կոչեն Կղզիք Արշիպեղագոսին Պուգանվիլի . են խումբք բազմութեան կղզեաց ընդ մէջ հասարակածին և արևադարձի այծեղջերի . վասն որոյ վայելեն յօդ բարեխառն և քաղցրաշունչ . երկիր նորա լեռնային է , բայց ոչ ուրեք ամուլ և անբեր . գոլով ոռոգեալ 'ի զովարար գետոց .

տակաց և ակնանկիտ աղբերաց. բերեն զնման ազգս բուսոց ծառոց մրգաց և արմատոց յանկաւորաց օդոյ դրից և կլիմայի իւրեանց, ոմանք և զնոյն տեսակս թռչնոց և չորքոտանեաց: Գլխաւորքն 'ի կղզիս ընկերութեան, են այսոքիկ. Դաիէդի. Ուլիէդէա. Հուահինէ. Օդահա. Պօլապօլա. Մաուրուա. և Դուպայի. որք ըստ սահմանի իւրեանց բազմամարդ են:

Դաիէդի, կամ Օդաիէդի:

Այս կղզի մեծ է քան զայլ ամենայն կղզիս արևադարձին հարաւային ովկիանոսի գօտւոյ երկայն՝ 'ի հարաւոյ արևելից ընդ արևմտեան հիւսիս 30 մղոն. զոր մարթ է առնել իբր գլուխ համօրէն կղզեաց արշիպեղագոսին պօուապօնի, կամ կղզեաց ընկերութեան, անկեալ ընդ 149 աստիճանաւ երկայնութեան և ընդ 17 աստիճանաւ հարաւային լայնութեան, որ բովանդակի յերկուց կղզեաց ցամաք կրծիւք միացելոց. շրջապատեալ ծովաբոյս ժայռիւք, որք ձևացուցանեն շուրջ զնովաւ բազում քաջադէպ նաւահանգիստս, և ծոցս և գօտս ընդարձակս շատաջուրս անքոյթս 'ի հողմոց և բաւականս բազմութեան նաւուց. յորս նշանաւոր է նաւահանգիստն կոչեցեալ Արքունի, իսկ 'ի բնակչաց Մադաւայ, շրջապատեալ գեղեցիկ աւազակոյտ պատուարաւ. որ և ճանաչի 'ի հեռուստ 'ի ձեռն բարձրասար լերին ամբարձելոյ 'ի մէջն կղզւոյն 'ի հարաւակողմն կէտին Վէնէրայ. հոսի առ նովաւ գետ մեծ, ուր մարթ էր ողջոյն նաւահանգիսի առնուլ ջուր առանց խափանելոյ կամ անհանգիստ առնելոյ զմիմեանս: Երկիրն բաց 'ի ծովեզերեայ կողմանց՝ լեռնային է, ունելով 'ի միջի բարձրաբերձ լերինս և բլուրս, որք մեղմով իմն զիջեալ հարթանան յամենայն կողմանս կղզւոյն առ ծովեզերբք, և գործեն շուրջանակի տափարակ դաշտս ուրեք ուրեք իբր 2 մղոնաչափ լայնութեան, և ուրեք ուրեք սակաւ ըստ յաւէտ և նուազ ձկտելոյ լեռնոտանց 'ի ծովակողմանս: Չիք 'ի նմա անտառ վայրենի անպտուղ ծառոց 'ի պէտս հրոյ կամ շինուածոյ, այլ փոխ այնց՝ բազմատեսակ ծառք մրգաբերք ընդ ամենայն տեղիս անտառաստանք, և առաւելապէս 'ի դաշտագետինս և 'ի հովիտս լերանց. նոյնպէս և ազգի ազգի բոյսք մրգաբերք և ծաղիկք անուշահոտք և բանջարք և արմատք ինքնաբոյսք անդարման 'ի մարդկանէ: Այլ գլխաւոր և յաւէտ պիտանի բերք կղզւոյս ռոյս են ծառն հացի, զի 'ի պտղոյ նր՟ կազմեն պէսպէս կերակուրս, ոպ՟ ստորև ունիմք նշանակել. Ընկոյզ գօգօի կմ՟ նարկիլէ. Պանանէ 13 տեսակ, որք ըս՟ պատմելոյ գուգայ և այլոց անգղիացւոց, բաւագոյն էին ք՟ զորս ցայնվայր ճաշակե՟լ էին յայլ տեղիս. Բլագանի որ է ազգ ինչ պտղոյ նման խնձորոյ համեղ յորժամ կատարե՟լ հասունանայ. Բադադէ. Եամպու պտուղ ազնիւ առ օդաիդացիս. Գադամլ, և եղէգն շաքարաբեր: Գտանի անդ և ազգ մի լեղակի, և մասնաւոր ներկ ինչ դեղնագոյն, ոպ՟ և գոյն ծիրանի գեղեցիկ յոյժ, զոր կազմեն խառնելով ը՟ հիւթս մասնաւոր իմն թզոյ ը՟ տերևս բուսոյն, զոր եւրոպացիք կոչեն Քօրտիա սէպէսդէնա օրիէնդալիս: Իսկ ցորեան և այլ արմտիք և պտուղք և բանջարք մերոց Եաց չեք անդ բնաւ: Նմանապս 'ի չորքտանեաց միայն խոզ, շուն, և մուկն: Կան անդ և ընտանի հաւք նման մերոց հաւուց. և վայրենի բադք, և Թութակ կանաչագոյն, և տատրակ և այլ փոքրիկ Թռչունք գեղեցկափետուրք անծանօթք առ մեզ: Նոյնպէս և որս զնն՟ պատուական ձկանց առատ է յոյժ, որ և է մի 'ի գլխաւոր պարենից օդաիդացւոց: Բնակիչք կղզւոյս բազմաթիւ են առաւել ք՟ զոր մարթ էր կարծել զմտաւ ածե՟լ զհանգամանս վայրենի անգործ կենաց. զի ըս՟ պատմելոյ մեծին գուգայ, որ իբր հաւաստեաւ տեղեկացաւ 'ի բնակչաց, կարեն հանել 97 հազար մարտիկս որք կարող իցեն զէն առնուլ. յորմէ մարթ է 'ի միտ առնուլ զբազմամարդուե՟ն նց՟, որք սովորաբար բնակեն 'ի ծովեզերեայ շրջակայ դաշտավայրս և 'ի հովիտս լերանց. չունելով բնաւ աւան կմ՟ գեօղ 'ի մի վայր հաւաքե՟լ, զի տունք նց՟ ցրիւ են աստ և անդ չափաւոր հեռաւորութ՟ 'ի միմեանց. և իւրաքանչիւր տուն ունի շուրջանակի ծառատունկս պտղաբեր ծառոց, մանաւանդ հացաբեր ծառս: Սք՟ ըս՟ գրելոյ ոմանց հասակաւ մարմնոյ և գունով կարի այլազան են 'ի միմեանց, մինչև մարթ էր համարել զնս՟ յայլ և այլ սերնդոց. զի ոմանք կարճահասակ են. իսկ այլք առհն՟րկ բարձր իբր 6 ոտնաչափ: Այլ այս տարազանուե՟ն երևի պատահական և ոչ 'ի սերնդենէ. ք՟զի գուգ և այլք յանգղիացւոց որք ը՟ հարուստ մի ժմկ կացին անդ՝ ոչ ինչ յիշատակեն վս՟ այսր. այլ այսաչափ միայն ասեն, թէ 'ի կանայս գտանին ոմանք փոքրահասակք, զոր ընծայեն ոչ սերնդեան, այլ կարի մանկահասակ ամուսնանալոյ նց՟:

Այլ օդանդայնք սովորաբար բարձրեն աւուրս. քաջալանջ գեղեցկադէմ և բարեյօդ մարմնով. գոյն մարմնոյ ն՟ց ձիթադոյն արևանեց և հողմահար. այլք կրեն վարսս սեաւս և ձաղկս, և մօրուս, բայց զընչայս փոքրեն կ՟մ 'ի բաց խլեն, ո՟մ և զվերին մասն մօրուաց զծնօտիւք, թողեն միայն զկզակօք, զոր օծանեն իւղով գօգօի, ո՟մ և զհերս, որ սովորաբար գուղով հեն, ժահահոտ է. իսկ կանայք ը՟դէմ հ՟նրկ սովորութ՟, փոքրեն զվարսս շուրջ զականջօք։ Յայսմանէ մարթ է 'ի միտ առնուլ թէ բնակիչք կղզեաց խաղաղական ովկիանոսի չեն 'ի նոյն սերնդոյ ը՟ բնիկ ամերիկացիս, զի ն՟ք ամենեքին լերկ են, բաց 'ի բաղակձնացւոց, որք ունին ընչայս ևեթ դրեթէ ը՟ք չինաց։ Լի են գլուխք ն՟ց ոջլօք, որք թուին պատճառել ոչ այնչափ յաղտեղութ՟, ո՟մ ոմանք համարեցան. ք՟զի մաքրասէր են սոքա, որք և յաւուրն երկիցս և երիցս լուանան 'ի գետս, այլ 'ի ջերմութ՟ օդոյ, և 'ի չունելոյ սանտր 'ի մաքրել զգլուխս. որ յայտ անտի է, զի որք ստացան յանգղիացւոց սանտր, ստէպ սանտրելով, զերծան 'ի զաղրաթորմերջոց, զորս այլք և մանաւանդ մանկունք և դեռահասք, որք հանապազ ըղձեռս 'ի գլուխս ունին, կալեալ արկանեն 'ի բերան։ Այլք և կանայք 'ի ձեռն սայրասուր խեցեաց կտրեն տպաւորեն պէսպէս նիշս անջնջելիս յո՟մ յանդամս մարմնոյ, 'ի յօդուածս մատանց ձեռաց և ոտից տպաւորեն զայս ձև Հ. յերեսս սատղանիշս, թէպէտ ո՛չ ամենքն. իսկ յայլ մասունս մարմնոյ ո՟ք 'ի սրունս և 'ի բազուկս են, զանազան ձևս քառակուսի, բոլորածիր, կիսալուսնի, և այլ ուրուածական անարուեստ կերպարանս մարդոյ, թռչնոց, շանց, ատղնոց են։ Հանդերձք ն՟ց են միատամնի անձև կապերտք կմ՟ փոսխաթք գործեալ 'ի նոցունց. զոր ձեղքեալ 'ի մէջն, անցուցանեն ը՟ պարանոցս, գլխաւորքն 'ի ն՟ցէ երիս կմ՟ չորս կրեն 'ի վ՟ր միմեանց, իսկ ռամիկք մի միայն, որք հասանեն ցծունկս, և առ սնեամբք պատեն երկայն երիզօք. իսկ յերկուց կողմանց բազուկք և այլ մասունք մարմնոյ մերկ են։

Զպարէնս որով կերակրին ն՟ք մարթ է բովանդակել յերիս. 'ի բոյսս, որք են պտուղք արմատք և պէսպէս բանջարք ինքնաբոյսք, յորս գլխաւորն և առաւել շահաւէտ է պտուղն հացի, զոր ուտեն, կմ՟ խորովեալ 'ի թոնրի, և յայնժամ ունի քաղցրութ՟ ինչ անախորժ քիմաց օտարաց իբրև զեփեալ բադադէ. և կմ՟ առնեն անտի զանգուածս, զոր կոչեն Մալեին.

որ յետ երկիցս խմորելոյ, քացախի, և պահի անապական ընդ ամիսս վեց և աւելի. այս է գլխաւոր պարէն նոցա ընդ զահրէ, զոր խորովեն 'ի թոնիր, և ուտեն ջերմ կամ ցուրտ. վասն այնորիկ իւրաքանչիւր ոք ջանայ տնկել շուրջ զբնակութեամբ իւրով 'ի ծառոց տատի, որք չունին պէտս այլ աշխատանաց կամ դարմանոյ, բայց միայնգամ եւեթ տնկել. և եթէ ոք ունիցի գոնէ տասն 'ի ծառոց տատի, կարէ ասել թէ ունի կերակուր ընդ բոլոր ժամս կենաց իւրոց: Երկրորդ պարէն նոցա են խոզք, շունք, և ընտանի հաւք, զի որ 'ի վերոյ ասացաք, բաց 'ի սոցանէ՝ այլ տեսակք չորքոտանեաց ոչ գտանին 'ի կղզի անդ. այլ խոզենին՝ միայն մեծամեծաց է և գլխաւորաց. իսկ զշունս և զհաւս ուտէ և խառնիճաղանճն. անգղիացիք հաստատեն թէ միս շանց կղզւոյս բարի է 'ի կերակուր գրեթէ ոչ ինչ ընդհատ յոչխարաց մերոց: Իսկ երրորդ գլուխ պարենից նոցա մանաւանդ սորին ժողովրդեան են բազմատեսակ ծովային խեցեմորթք և ձուկն առատ և պատուական. զխեցեմորթս ողջ և զմանր ձկունս հում ուտեն, իսկ զմեծամեծս խորովեալ: Ըմպելի նոցա է ջուր, իսկ գլխաւորք նոցա ըմպեն երբեմն և գինի գոգոյ: Ասեն թէ կարի շատակեր են. յորոյ ասացելոյ պատմէ մեծն Գուք թէ առաջի իւր մի ոմն եկեր երկու կամ երիս մեծամեծ ձկունս. երիս պտուղս հացի իւրաքանչիւրն 'ի չափ երկուց բռանց. և 14 կամ 15 պանանէ. 6 կամ 7 բոյթ երկայն, և ստուար ըստ համեմատութեան երկայնութեան, և այլ ևս ընդ նմին միրգս մանունս:

Իսկ ըստ բարուց և բնական խառնուածոյ բերեն յանձինս զվեհանձնութիւն իմն, ծանր են 'ի գնայս, քաղցր և համբոյր 'ի կենցաղակցութեանս ընդ միմեանս և ընդ օտարս. անկեղծ և անխարդախ մինչև չտալ պատճառս կասկածանաց զբարեմտութիւն նոցա, յորս՝ ասէ Գուք, զնոյն վստահութիւն ունէի, զոր ունիմք ընդ մտերմագոյն բարեկամս մեր. պանչ և այլք յանգղիացւոց բազում անգամ հրաւիրեալք 'ի նոցանէ, գնացին միայն անընկեր և անզէն և ննջեցին 'ի տունս նոցա յանտառի անկասկած հաւատալով զանձինս նոցա: Գորովասիրտ են և մեղկակէտ, որք յամենայն փոքր վիշտս առժամայն յարտասուս լուծանին ըստ տկարամիտ կանանց և մանկանց. երևին չունել բնաւ բերումն 'ի գազանական անգթութիւն ըստ այլոց վայրենի ազանց: Բայց ընդ բարելաւութեանս այսորիկ ունին և յոռութիւնս, զի գող են առհասարակ մեծ և փոքր, որ իբր բնածին ախտակրութիւն է նոցա, նց՟, զորոց զխորձ առին անգղիացիք, թէպէտ նմ՟ աչալըջութե՟ զգուշանային . զեղծք են և անասունք գլխովին ընկղմեալք 'ի պղծալից ցանկութիւնս մարմնոյ . ծոյլք և դատարկասլորք, որք զօրն ողջոյն կամ յորսս անկեալ անցուցանեն, կամ 'ի խաղս և 'ի կաքաւս, առ որ մոլեալ են, և կամ 'ի մրցմունս և 'ի վարժս նետաձգութե՟ն և տէգընկեցութե՟ն : Նուագարանք նց՟ են սրինգ և թմբուկ երկոքին ևս անարուեստք, ը՟ որս զուգակցեալ և զձայնս իւրեանց հնչեցուցանեն զներդաշնակութիւն իմն ախորժական լսելեաց իւրեանց, բայց ոչ օտարաց :

Չեն զուրկ և յարուեստից, թէպէտ և չունիցին յարմարաւոր գործիս, զի գիտեն գործել ոստայնս և պաստառս և նրբահիւս փսիաթս, և ներկել 'ի զանազան գոյնս . զնիւթն յորոց գործեն զպաստառիկ, հանեն յեռատեսակ ծառոց, որք են թթենիք չինաց, ծառն հացի, և թզենիք վայրի արևմտեան հնդկաց : Զպաստառս և զնրբագոյն ոստայնս զոր օտահիտացիք կոչեն Աուգա, գործեն 'ի կեղևանաց թթենւոյ չինաց, յորմէ չինք գործեն զթուղթ . զայս ազգ ոստայնից միայն գլխաւորք նց՟ զգենուն ներկեալ 'ի գոյն ծիրանի : Զերկրորդ տեսակն, որ չէ այնչափ ինչ նուրբ, և ոչ այնպէս սպիտակ որպէս առաջինն, զոր կոչեն Օրաօ, ոստայնանկեն 'ի կեղևոյ հացաբեր ծառոյ, զոր զգենու հ՟րկ ժ՟ղվ՟դն : Իսկ եր՟րդ տեսակն գործի 'ի կեղևոյ վայրենի թզենւոյ, որ թանձրագոյն է և խոշոր . այլ 'ի յարգի առ նս՟, զի տոկայ 'ի ջուր և անթափանց է յանձրևաց : 'Ի գոյնս նց՟ յաւէտ գեղեցիկ և ազնիւ է կարմիր գոյնն, որ գերազանցէ գեղեցկութե՟ զմերս որդան կարմիր . գուդ մանրամասն գրէ զեղանակ կազմութե՟ այնր պատուական գունոյ, մի առ մի ստորագրելով զբաղադրիչ նիւթս նց՟ :

Գտանի առ նս՟ և ուրուական իմն արուեստ նաւաշինութե՟, զոր աննահանջելի հարկն ուսոյց նց՟ : Նաւք կամ լաւ ևս ասել նաւակք կազմեալք ը՟ հանրապէս խոռելով երկատեսակ են, զորս կոչեն Իվահայ և Բահիէս : Իվահայքն նոյնաձև են առհ՟րկ, բայց մեծութե՟ այլ և այլ . չոթունք նց՟ ուղիղ են, յատակն տափարակ, երկայնութե՟ն 'ի 10 ոտնաչափէ մինչև ց60 կամ 62 ոտնաչափ, բայց առ համեմատութե՟ երկայնութե՟ն կարի նեղ են . զի տասնոտեան երկայնութե՟ և վահան հազիւ ունի մի ոտնաչափ լայնութե՟ . ոչ և վաթսնոտեանն երկու ոտնաչափ և կէս, ուստի են իբր խողովակք կամ ջրարբք անասնոց : Այլ երկրորդ տեսակք տակք են , ոմանք վ̄ս պ̄տզմի , այլք 'ի պէտս ձկնորսութե̄ , և կէսք վ̄ս ճանապարհորդելոյ 'ի կղզիս : Պատերազմականն երկայն է ք̄ զայլս , և խելք կա̄մ յետին կողմն ն̄ր բարձր է յոյժ ց17 կա̄մ 18 ոտնաչափ իբր կիսաշրջանակ կորացեալ 'ի վեր , թէպ̄տ խորութի̄ն բուն նաւուն չիցէ աւելի ք̄ 3 ոտնաչափ , իսկ առաջք ն̄ր ցած • և ունի 'ի վ̄ր տաշտի տախտակ ցըցուե̄լ արտաքս իբր 4 ոտնաչափ երկայն բթանկիւնաւարտե̄լ : 'Ի Ճոնկս պ̄տզմի յառաջս նաւուն շինեն տախտակամած 10 կա̄մ 12 ոտնաչափ երկայն և փոքր մի լայն ք̄ զնաւն , հաստատե̄լ 'ի վ̄ր ձողոյ 6 ոտնաչափ բարձր իբր մարտկոց , յորոյ վ̄ր կացե̄լ մարտկաց նետաձիգ լինին 'ի թշնամիս : Խվահասք ձկնորսութե̄ մեծագոյնքն են 40 ոտնաչափ , իսկ փոքրագոյնք 10 կա̄մ 12 • իսկ Խվահասք ճ̄նպ̄հորդութե̄՝ զայս ինչ ունին սեպհական , զի խելք ն̄ց միշտ կրկնապատկեալ են , և ունին կամարաձև վրան լայն 5 կա̄մ 6 ոտնաչափ , և երկայն 6 կա̄մ 7 • պատրաստե̄լ վ̄ս ճ̄նպ̄հորդութե̄ գլխաւոր անձանց որք նստին 'ի ներքոյ : Եր̄րդ տեսակ նաւուց կոչեցեալ Բաշիէս , գրեթէ նոյնաձև են ը̄ Խվահասից , բաց 'ի կողմանց որք ոչ ձգին միակերպ ուղղագիծ , այլ առ փոքր մի ուղիղ գնան , և ապա 'ի մէջն միանգամայն ը̄լայնին իբր փոր , և սրանկիւն աւարտին • յայսպիսի նաւուց մի միայն ետես գուգ 'ի դաիդի կղզւոջ եկե̄լ յայլ կղզւոյ , յորմէ երևի թէ բնակիչք կղզւոյս միայն Խվահասս 'ի կիր արկանեն :

Այս երկատեսակ նաւք յորժ̄մ երկայնութի̄ն ն̄ց անցանէ զ25 ոտիւք , կրեն և կայմ և առագաստ , ոմանք մի , և ոմանք երկու • բարձրութե̄ կայմին չափի ը̄ երկայնութե̄ նաւուն • զի թէ նաւն իցէ 30 ոտնաչափ , կայմն է իբր 25 • որ և հաստատե̄լ կայ 'ի վ̄ր ձողոց պնդելոց ը̄ միմեանս , որոց ծայրք 'ի միոյ կողմանէ ձգին 'ի ծովն , և 'ի միւս կողմանէ կապեալ են այլ երկու ձողք , մին ձգի ը̄ երկայն , իսկ երկրորդն խոտորնակի 'ի վ̄ր նաւուն : Այս կազմած ամենևին հարկաւոր է 'ի լինել հակաքարշ նաւուն , յորժամ առ փոքր մի տատանեսցի հողմն : 'Ի վ̄ր կայմին պարզեն առագաստ փսիաթի հիւսե̄լ 'ի ջղայլն տերևոց 'ի վերուստ սրածայր իբր եր̄դ մասամբ 'ի վեր ք̄ զկայմն • իսկ ստորին եզերբք ուղղագիծ քառակուսի , և յերկուց կողմանց գոգաձև հաստատեալ 'ի վ̄ր փայտի շրջանակի • ք̄ չերչիւէի • վ̄յ չէ հնար փոփոխել ըդդէմս ն̄ր ը̄ շնչելոյ հողմոց , կա̄մ ամփոփել • այլ հարկ

է

է հաստանել, յորժամ յառնէ հողմն սաստիկ . որ հազիւ երբեք զգալի 'ի խաղաղական ովկիանոսի . ուր եղանակք օդոց սովորաբար միօրինակ են : Թիակք նց՟ են ձողք երկայնաձիգք 'ի ստորին ծայրս տափարակք բոլորաձև, գրեթէ 'ի նմանութ՟ թիոց հացագործաց . զորս նստելով վարեն սաստիկ արագութ՟, որով լնուն զնաւն ջրով . վս՟յ հարկ է միում 'ի նցէ անդադար դատարկել զջուրն :

Իսկ գործիք նց՟, որով կազմեն նաւս, շինեն տունս, կորեն զհաստաբուն ծառս, հերձուն և հատանեն անտի տախտակս . և յղկեն, ոչ այլ ինչ են, բայց միայն տապար քարեղէն, 'ի մանաւոր ինչ սևագոյն, կամ մոխրագոյն քարէ . որ թէպէտ չէ այնչափ ինչ կարծր, այլ ոչ փշրի . և թուր յոսկերէ մարդոյ . զոր սովորաբար շինեն 'ի սրունից ոսկերն . և խարտոց 'ի կուռ բստոյ . և ազգ մի կարծր և ստամնաւոր մորթոյ, որ է աւազոյ, ծառայէ նց՟ 'ի տեղի յեսանաքարի . բայց ունին և յեսանաքար, որով շինեն զբերանս տապարի և այլոց գործեաց : Սակս այսպիսի անդէպ գործեաց առաւել տաժանին ամ՟ շինել անհարթ և անձև նաւակ մի, ք՟ առ մեզ զմեծագոյն նաւ պատերազմի :

Լեզու բնակչաց կղզւոյս, յորում հազիւ լսի հնչումն բաղաձայն տառից, զի գրեթէ զլխովին 'ի ձայնաւորաց բաղկացեալ է, ոպ՟ և լեզուք այլոց համօրէն բընակչաց ը՟ արևադարձիւք՝ քաղցր է, հեշտալուր ներդաշնակաւոր և դիւրահնչիւն . այլ երբեմն թէ կարի աղքատ և անկատար է . չունելով անուանց և բայից նց՟ զսովորական խոնարհմունս . զի հազիւ գտանին առ նս՟ անուանք ինչ, որք բաց յուղղականէն, ունիցին և այլ հոլովս . ոպ՟ և բայք բաց 'ի ներկայէն զայլ ժամս : Բայց դժուարութիւն կրեն սք՟ 'ի հնչել անվթար զխօսս օտար ազգաց . մանաւանդ յորս յաճախեալ են բաղաձայնք, ոպ՟ 'ի բարբառ անգղիացւոց, զոր բնաւ ոչ կարացին անվրէպ արտասանել . թէպէտ բազ՟մս աշխատ եղեն անգղիացիք ուսուցանել նց՟ : Այլ զխօսս սպանիացւոց և իտալացւոց, որք 'ի ձայնաւոր աւարտին՝ հեշտաւ հնչեն . յորմէ յայտնի երևի, թէ դժուարութիւն այն ծագէր 'ի բազմութ՟է բաղաձայնից, առ որ չէին սովորեալ լեզուք նց՟ . զոր տեսանեմք և յեւրոպացիս, որք չունելով 'ի բարբառ իւրեանց զթաւ հնչումն ինչ արևելեայց, դժուարին են նց՟ այն հնչմունք :

'Ի թուական ամուսնանս սկսեալ 'ի միոյ կնոջ մինչև 'ի տասն .

տասն. խուրաքանչիւր թուոց ունելով սեպհական անուն. և յորժամ կամին և ևս յառաջանալ 'ի թիւս, յաւելուն զբառս Աւելի. իմ՟ տասն, և մի աւելի. տասն, և երկու աւելի. իմ՟ մետասան, երկոտասան են, մինչև 'ի քսանն. որում նոյնպ՟ս ունին յատուկ բառ. որ պրեթէ նոյն է, որ ինչ առ մեզ քսանաւորն. և յորժամ թուեն տասն քսանաւորս, ունին զայլ անուն, որ նշանակէ երկերիւր: Այսն անգղիացիք, թէ ոչ կարացին հաւաստեաւ ստուգել թէ բաց յայսց սակաւ թուական անուանց ունիցին և այլ անուանս նշանակիչս բազմագոյն թուոց. սակայն երևի թէ չունին պէտս առաւելագոյն թուոց. քանզի երկերիւրն կրկնեն տասն անգամ, առնէ երկու հազար թիւ, որ առ նս՟ մեծ է յոյժ և անըմբռնելի 'ի մտաց նց՟. քանզի չունելով գիրս, ոչ թուանշանս, ոչ մատեանս հաշուեից, և ոչ գործածութն՟ դրամոց, որք և թէ զինչ իցէ ոսկի, կմ՟ արծաթ ոչ գիտեն, ոչ երբեք դէպ լինին այնչափ թիւք 'ի հաշիւս նց՟. այլ զամ՟ հաշիւ իւրեանց մատամբք վճարեն, որպ՟ և զտասերեակս Ժ՟ մատանս, և Ժ՟ օտարս փոխանակութե՟ իւրաց:

Երևի առ նս՟ և անկատար իմն եղանակ քղաքական կառավարութն՟. և կարգ նախապատուութն՟ և ստրկութն՟. զի ը՟ նշանակելոյ անգղիացւոյ, մարթ է զհամօրէն բնակիչս երկուց ցամաք կղզեացս 'ի չորս դասս որոշել. իմ՟ 'ի թգր՟. 'ի պարոն, 'ի ստրուկ, և 'ի գռեհիկ, կմ՟ գերի: Թգր՟ն՝ ը՟ նց՟ Էրարախուգահիէ ասացեալ է նախապատիւ գլուխ և գերագոյն իշխան 'ի վր՟ ամյն՟. զոր իշխանք և սոսկականք առհնրկ՟ մեծապատիւ յարգանօք պաշտեն. արտաքին հանդէս նր՟ և փառք մեծ է և շքեղ. այլ տիրապետական հրամանատարութն՟ նր՟ երևի թէ սակաւ է քն՟ զայն, զոր խուրաքանչիւր պարոն ունի յիւրում վիճակի: Երկու են թգր՟ք օգախիգացւոց ը՟ երկուց ցամաք կղզեաց, և խուրաքանչիւրն ունի առանձին ժղվ՟դ, և առանձին կառավարութի. իշխանութն՟ նց՟ յաջորդական ժառանգութբ՟ անցանէ 'ի հայրց յորդիս. բայց նորալուր իմն պայմանաւ. քանզի ը՟ ծնանիլ անդրանիկ որդւոյ, նոյն ժամայն անուանի Էրարախուգահիէ իմ՟ թգր՟. իսկ հայրն այնուհետև ոչ ևս կոչի թգր՟, այլ միայն մատակարար թգր՟ութե՟ մինչև յարբունս հասանիլ որդւոյ. և յայնժամ ինքն առնու զմատակարարութի թագաւորութեն, 'ի բաց հանէ զհայրն:

Պարոնք, ը՟ նց՟ Էրաջիէ են տեարք մասնաւոր վիճակաց կմ՟ գաւառաց միոյ կմ՟ բազմաց. այսպիսի վիճակք ճակքեն 100 · զի գրեթէ 'ի նոյնչափ վիճակս բաժանեալ են այս կղզիք : Իշխանութիւն նց̄ 'ի վր̄ ստրկաց իւրեանց մեծ է · և արտաքին շուքն փառահեղ · ունելով միշտ զինքեամբք բազմութիւն սպասաւորաց, որոց մեծ մասն են ազնուական պատանիք երկրորդածինք 'ի սերնդոց իւրեանց : Ոմանք 'ի նց̄է սպասաւորեն 'ի տան · այլք են իբր սուրհանդակք կա̄ պաշտօնեայք կարգեալք հասուցանել ուրեք զպատգամս պարոնին և յայտնել զկամս նր̄ :

Սց̄ իշխանութիւն և ժառանգութիւն անցանէ 'ի հարց յորդիս նովին պայմանաւ, որով ասացաք զթգ̄րաց : Գուցէ և այս եղև սատար անագորոյն սովորութեան բազմաց 'ի մեծամեծաց նց̄ անդէն 'ի ծնելն հեղձուցանել զզաւակս իւրեանց, զի մի 'ի պատճառս նց̄ փութով անկցին յիշխանութենէ :

Ստորուկք · ը̄ նց̄ Մանահունի՝ են հպատակք պարոնաց բնակեալք 'ի վիճակս նց̄ · ունելով իւրաքանչիւր տանուտէրն ը̄ ձեռամբ իւրով ագարակ մի, կա̄ կալուածս 'ի վիճակս պարոնաց, որք առաւել քան զթգ̄ւրական իշխանութիւն վարեն 'ի վր̄ նց̄ : Սք̄ ունին 'ի ծառայութիւն իւրեանց զգաւեհիկս կա̄ զգեղջուկս · որք են անարգագոյնք 'ի նս̄, 'ի բարբառ նց̄ Կուդու անուանեալք, զոր ծառայեցուցանեն 'ի տաժանագոյն գործս իբր մշակ, փայտահատ, ջրկիր, խահարար, ձկնորս են · վս̄յ կեանք նց̄ եղկելի է :

'Ի ժմ̄կս պատերազմի յորժամ' թշնամի յարձակի 'ի վր̄ նց̄, իւրաքանչիւր վիճակ պարտաւոր է առսահմանել թիւ մարդկան ը̄ զօրավարութ̄ պարոնի վիճակին, իսկ թիւ մարդկան նց̄, ը̄ հաւաստելոյ բնակչացն սովորաբար է 6680 · և յայն ժմ̄կս թագաւորն ինքնին կառավարէ զնոսա իբրև զերագոյն սպարապետ : Զէնք նց̄ են աղեղն, նետ և տէգ սրածայր ատամնաւոր · յորս քաջավարժ են ձգել 'ի բացեայ, զի առ այն եւեթ վարժին · այլ ոչ 'ի յառաջադիր նպատակն · վս̄յ ը̄ պատահման դէպ լինի նց̄ հարկանել զթշնամիս · ունին և բիր 'ի կարծրագոյն փայտէ · այսպիսի անզօր զինուք արիաբար պատերազմին, և յերկար տոկան 'ի մարտի :

Դէն օդախդացւոյ, որ̄ և այլոց բազմաց վայրենի ազանց է խառնուրդ իմն գաղղիեաց ը̄ զինչն ստաբոտի միմեանց հակառակ առասպելս և աւելորդապաշտութիւնս · որում Կուկ և ընկերք նր̄ չեղեն կարող լինել խելամուտ լինել · թէպէտ բազմս աշխատ եղեն 'ի հետազօտել · Քզի բաց յայլոց գաղտնութե̄ նաև լեզու գենի առ նմ, որք և առ չինս տըլագան է 'ի հնդկ տոմարական բարբառոյ նց : Սակայն հաւաստի է թէ մարդ բանաւոր քանի թանձրամիտ և տգէտ իցէ , յայտնապէս տեսանէ թէ անեղերք , և զնոյն մասունս բաղկացուցիչ նորուն զորս ճանաչէ , են գործ արարողի ուրուք յանսահմանս կարողութենի ք զինքն . և զի ոչ տեսանէ ակներև յերկրի այնպիսի իմն էակ , հարկաւորապէս ենթադրէ թէ իցէ նա հեռագոյն ուրեք 'ի տիեզերաց, կմ ընութ անտեսանելի աչաց : Իսկ արտադրութին յոչնչէ , զոր արարչագործութին անուանեմք՝ գոլով դժուարահաս ոչ միայն տգիտաց , այլև օրատես իմաստնոց , զի չիք յերկրի դէթ ուրոյական իմն օրինակ այսգունակ արտադրութե , համարին և զգոյութ տիեզերաց հանդերձ ամ մասամբք լեալ ը յաջորդական արտադրութե բնական իրաց 'ի միաւորութէ երկուց ինքնագոյն էակաց . Յայն սակս օդախրդացեալք գնեն երկու առաջին ինքնագոյ սկզբունս ծի իբրու արու և էգ . զմին կոչեն Պարապադաի հեգօմօօ . այն է՝ գերագոյն Աճութի կմ Աճ ածոց սատանեցուցիչ երկրի . իսկ զերկրորդն Պրեբաբա , զոր համարին քարաժայռ : Յառաջնոյ զուգաւորութէ սց ծնաւ դուստր անուանեալ Պրեդգով մադագայօ . ը տարի . սա 'ի զուգաւորութէ ը հօր իւրում , ծնաւ զամիսս . իսկ ամիսք ծնան զաւուրս : Նաև մեծամեծ լուսաւորք երկնից ծնան յառաջնոյ զուգաւորութէ անտի գերագոյն ածոց . և 'ի սցնէ արտադրեցան այլ փոքրագոյն աստեղք , որք երևին 'ի հաստատութէ երկնից : 'Ի սոյն միտս են և 'ի վր այլևայլ տեսակաց ծառոց և բուսոց . այլ բայց 'ի դէդգով մադագայօ դստերն , առն նց և որդի մի Պրանէ անուն , զոր թէպէտ սորին համարին ք զՊարապադաի հեգօմօօ , սակայն զխնդրուածս իւրեանց առ նա ուղղեն . զի սա ասեն առաւել մօտ դիր է 'ի խնամս մարդկային ազգի : Եւ ևս 'ի մէջ այլոց ծննդոց երկուց նախնեղակ էակաց գնեն և այլ ստորին սերունդս բազմութե ածոց արուաց և իգաց , զորս Դադուսս կոչեն . և ասեն , թէ զոյգ մի 'ի նցէ ը ժմկս յոլովս բնակեցան յերկրի , և ծնան զառաջին մարդն զնախնեանց հնդկաց նախահայր . որ 'ի ծնանել իւրում էր անկերպարան իմն բոլորաձև գնտակ . այլ մայր նր բազմաջան աշխատութբ ձևացոյց զամ անդամս նր , կերպարանել զնա 'ի պատկեր կատարել մարդոյ որպ էմք այժմ . և յայնժամ ապա կոչեցաւ զնա Նաթէ . այս է մարդ . որ առ նս նշանակէ լրացեալ · երբ զինեալս զնա ա՟մ մասամբք մարմնոյ կատարեալ : Սա զուգաւորեալ ը՟ դստեր իւրում, ծնաւ դուստր մի, յորմէ յետոյ ծնաւ այլեւս դստերս բ՟զմս ը՟ երկար ժամս, մինչեւ հուսկ ուրեմն եղեն ն՟մ և որդի · յորմէ սերեալ աճեցաւ ազգ մարդկան և ելից զերկիր :

Արք պաշտեն զարու ա՟ծս, իսկ կանայք զէգս · որք և ունին սեպհական տաճարս, զոր Մօրացիս կոչեն որոշեալս վ՟ն երկուց սերից · զի այլ է տաճար արու ա՟ծոց, ուր արք և եթ երթան, և այլ իգաց վ՟ն կանանց · սակայն են և այլ տաճարք ինչ, ուր արք և կանայք անխտիր ժողովին : Նոյնպէս և քուրմք ն՟ց տարորոշեալ են ոմանք վ՟ն արանց, այլք վ՟ն կանանց · և թէպէտ ա՟մքն արք են, այլ ոչ կարեն 'ի մեհենական գործողութիւնս միմեանց անձնամուխ լինել : Քահանայու՟ն կ՟մ քրմու՟ն ն՟ց, զոր Պահոյա կոչեն, կապեալ է 'ի մասնաւոր ցեղս յա՟մ աստիճանէ մարդկան, յորս յաջորդական ժառանգութ՟բ անցանէ 'ի հարց յորդիս : Իսկ քրմապետ ն՟ց սովորաբար լինի եր՟կգածին որդի յերեւելի ցեղէ ուրուք · զոր 'ի պատուի ունին յոյժ գրեթէ ոչինչ ը՟հաս 'ի թ՟գրէն : Սեփական գործ քրմաց է կտրել պէսպ՟ նիշս և ուրուական ձեւս 'ի մարմինս ժողովրդեան, որպ՟ 'ի վերոյ նշանակեցաք · և թլփատել զարուս ն՟ց · բայց զայս ոչ առնեն երբ գործ պատուիրեալ 'ի դենէ, այլ միայն 'ի պատիւ և 'ի վայելչութի, զի կարի անարգ և արհամարհ համարեալ է առ ն՟ն, որ ոք ոչ ունիցի զայսպիսի երկատեսակ դրոշմս 'ի մարմնի : Վ՟ն այսոց գործողութեց թէպ՟ չիք առ ն՟ն սահմանեալ տուրք ինչ, սակայն լիաձեռն վճարեն քրմին իւրաքանչիւր ըստ իւրում աստիճանի և կարողութե :

Չունին բնաւ կուռս ոչ ձեռագործս, և ոչ այլ ինչ երեւելի 'ի բնական իրաց կենդանի կ՟մ անկենդան · մ՟նյ ոչ զոհս, և ոչ այլ ինչ հեթանոսական խորանս · (թէպէտ ունին և ս՟ք, որպ՟ և բնակիչք այլոց շրջակայ կղզեաց իւրաքանչիւր մի մի տեսակ թռչնոյ, զոր բ՟զմ խնամով դարմանեն, երբ ոչ եթէ 'ի պաշտաման սակս, այլ զի աւելորդապաշտութ՟բ իմն համարին վ՟ն բարի կ՟մ չար բախտից գուշակս), այլ պաշտեն զնախագրեալ աներեւոյթ ա՟ծութին · յորմէ թէպէտ չունին ակնկալութի ինչ վարձուց, կ՟մ երկիւղ պատժոց, սակայն միշտ այնպիսի պարկեշտութ՟բ երկիւղածութ՟բ և խորին խոնարհութ՟բ մատչին 'ի տաճարս մատուցանել զպաշտօն երկրպագութե, մինչև զարմայրուցանել. Թէպէտ ոչ հաւատան թէ 'ի տաճարի անդ իցէ ինչ սրբազան կամ ա̃ծային. այլ միայն՝ թէ է տեղի աղօթից. և առ մեծագոյն խոնարհութիւն ցուցանելոյ, մերկանան մինչև 'ի գօտիս: Տաճարք Հնդաց միանգամայն են գերեզմանատեղիք, ուր թաղեն զպակերս մեռելոց. յայսմ մասին նշանաւոր են օգաւիդացիք 'ի մէջ համօրէն վայրենի ազանց. առ որս չիք ուրեք տեսանել զայս սովորութիւն 'ի միում սահմանափակ տեղւոջ թաղել զմեռեալս :

Սք̃ հաւատան զանմահութիւն բանական հոգւոց, որոց վն̃ դնեն 'ի հանդերձեալն երկուս տեղիս. զմին կոչեն Պաւլլիրուտէուայ. իսկ զմիւսն Պիհահօպօօ. զորս ոչ համարին տեղի հատուցման վարձուց, կամ պատժոց ը̃ գործոց, զոր գործել իցէ իւրաքանչիւրոք յաստիս, այլ միայն իբր տեղի հանգստեան յաւէտ և նուազ երջանիկ, սահմանեալ վն̃ զնզ̃ն կարգի և աստիճանաց մարդկան որք գտանին 'ի նմ̃ : Երջանկագոյն տեղիք՝ վն̃ թգ̃րի, իշխանաց, և գլխաւորաց. իսկ նուազ երջանիկն վն̃ ստորին խառնաղանձ ժողովրդեան. քզի ոչ դնեն նք̃ թէ գործք իւրեանց գործեալ յաստի կեանս 'ի մարմնի, ունիցի կապակցութիւն ինչ ը̃ այնմ վիճակի. և իցեն իւիք իրօք ծանուցել զծայն իւրեանց, այլ մնան յայսմ աշ̃ի և եղծանին ը̃ մարմնոյ, չունելով և ոչ մթին իմն ստուերք վն̃ յարութե̃ մարմնոյ: Յայսմանէ յայտ է թէ խառնախորթ դեն նց̃ ոչինչ ազդէ 'ի վարս և 'ի գործս խորշել 'ի չարէ, և զհետ երթալ բարւոյ. ուստի և պաշտօն յարգութե̃ զոր բանիւ և արտաքին ձևով մարմնոյ մատուցանեն աներևոյթ ա̃ծոց, յա̃ջ գայ 'ի լոկ ըմբռնմանէ իւրեանց նուաստութե̃, և նոցայն գերագոյն կատարելութե̃ց :

Բզ̃մ խնամս ցուցանեն առ մեռեալս, զի յորժամ ոք մեռանի, նոյնժամայն ժողովին 'ի տուն նր̃ ամ̃ ազգականք և մերձաւորք մեռելոյն, և կոծ մեծ առնեն 'ի վր̃ նր̃. ոմանք եղերական ձայնիւ ողբան. այլք առ 'ի ցուցանել սաստկագոյն մորմոք՝ մեծակական աղաղակեն. իսկ ընտանիք մեռելոյն և առաւել մօտաւոր ազգականք ծանրաթախիծ սգով պաշարեալ, նստին լռին և անբարբառ: Բաց 'ի սոցանէ ժողովին անդ և այլ բազմութիւնք որք ը̃ ժամս ժամս յոգւոց ելանեն ցաւագին հառաչմամբ ը̃ տխուր ողջոյն և ը̃ գիշերն: Այսպէս 'ի վաղիւ անդր պատեալ զդի մեռելոյն, և եդեալ 'ի սատապանի, բազմութ̃ մարդկան ուղեկցեալ ը̃ իւրեանս և քուրմն, տանին 'ի ծովեզրն, ուր եղեալ 'ի գետին զմեռեալն, առնու քուրձն ափ մի ջուր 'ի ծովէ, սրսկէ զտապանաւ, պապաջելով ինչ ինչ 'ի ձև աղօթից. ապա բարձեալ զմեռեալն հեռացուցանեն իբր 40, կմ 50 գրկաչափ. և նոյն հետայն անդրէն դարձուցանեն 'ի ծովափն. և քուրձն վերստին զնոյն առնէ. զայս երթևեկ կրկնեն բզմ անգամ: Մինչդեռ սք յայսոսիկ պարապին, այլք փոքր մի բացագոյն շինեն խորանաձև յարկ, կմ խրճիթ և ցանկապատեն եղէգամբք, զոր Դուբարով կոչեն. և 'ի միջի անդ վարսեն քանի մի ցիցս, և եդեալ 'ի վր զտապանն, թողուն անդ նեխել դիականն մինչև թօթափել մսոյ յոսկերաց: Իսկ ժառանգք մեռելոյն, կմ մերձաւոր ազգականք նր ընծայս մատուցանեն նմ իւրաքանչիւր ըս իւրում կարի, և ըս առաւելութեն դորովական գթոյ առ նա, բազմապատիկ կտտարակս կապերտից արկեն 'ի վր տապանի նր, մինչև երբեմն և զբովանդակ խրճիթն ծածկել արտաքուստ պատուական պաստառաւ. մատուցանեն և պսակս յոստոց արմաւենեաց և 'ի տերևոց դօգօլի. զոր հիւսէ քուրձն խառնեալ 'ի նմ և տեսակ մի բուսոյ կոչեցեալ 'ի նցէ Ըթէէ Նոմորախ, որ նուիրեալ է 'ի հանդէս յուղարկաւորութե մեռելոց. դնեն անդ և կերակուր, և ջուր անօթով. ոչ իբր համարելով թէ մեռեալն ուտիցէ, այլ 'ի նուէր ոգոց իւրեանց: Համդէպ այնր տեղւոյ շինեն երկու խրճիթս. մի վն մերձաւորաց մեռելոյն, ուր նստին նոքա մինչև ցկատարել աւուրց սգոյ. և միւս ևս վն հանդիսադրի յուղարկաւորութեն:

Իբրև աւարտին այս գործողութիւնք, վերստին նորոգեն ողբս և կոծս լալականաց. կանայք խումբ կազմեալ, երթան 'ի դուռն խրճթին, ուր նստին 'ի սուգ ազգականք մեռելոյն. յայնժամ ընկեր նր, կմ այլ ոք 'ի մերձաւոր ազգականաց սրածայր խեցեաւ խոցոտէ զգագաթ գլխոյ իւրոյ, յորմէ հոսի արիւն յորդառատ. զոր հաւաքեն զգուշութբ 'ի կապերտս. զնոյն առնեն և այլ կանայք զհետ երթեալ օրինակի նր. որք նոյնպէս հաւաքեն զարիւն իւրեանց. ապ և զարտասուս հեղեալս սակս մեռելոյն. Ըս որս ոմանք 'ի մանկագոյն կանանց խառնեն և զվարս հատեալ 'ի գլխոց իւրեանց: Զայս հանդէս առնեն աւուրս երկուս կմ երիս:

Ապա զկնի աւուրցն այնոցիկ յորժամ կանայք դադարեն 'ի կոծոց, արք սկսանին զհանդէս սգոյ խնճաժեռ իւն օրինակաւ: Մերկացեալ զամփոփական ձորձս,

ձորձս , և պատեն զմիջով հատուած մի կապերտի , ջրախառն ածխով շաղախեն զբոլոր մարմինն , և այնպէս 'ի գիշատեսակ կերպարանս այլափոխեն , շրջին խմբովին . ունելով զմի ոմն 'ի գլխաւորաց առաջնորդ իւր հանդիսադիր յուղարկաւորութեն . զոր Խմնգագա կոչեն . որ զգեցեն այլանդակ իմն տարազ , և ունելով 'ի ձեռին բիր հաստաբուն զինեն առատամբք ձկան , երթայ առաջի թոթովելով , և այնպէս խելացնոր շարժմունս առնելով զօրէն մոլեգնելոց իբր 'ի սաստկութէ ցաւոց կսկծանաց 'ի վր մեռելոյն : Եւ յայնժամ եթէ ոք ը բերման է առաջ լեցի նց , կմ ուրեք 'ի զննին կայցէ , սա մոլեգնաբար 'ի վր դիմեալ անագորոյն կատաղութե գան հարկանէ չարաչար , մինչև երբեմն մահացու վէրս դնել 'ի վր : Այսմ մոլեգին սովորութե տեղեակ գոլով բնակչաց , յորժամ 'ի հեռուստ տեսանեն զայն սեւագունդ խումբ սգաւորաց , փախչին և թաքչին , նաև 'ի տանց իսկ իւրեանց անհետ լինին յորժամ ը այն անցանեն : Ապա յաւարտիլ դիւամոլ թափօրին , որ տևէ իբր կէս ժամ կմ փոքր մի աւելի , երթան ամքն լուանան 'ի գետն . և զգենուն զձորձս իւրեանց : Յայսպիսի խումբ սգաւորաց եմուտ միանգամ և պատճ անգղիացի ընկեր գուգայ ներկեն ածխով զբմարմին իւր . սակս անգղիական անժոյժ հետաքննին բարուց առ լաւագոյն տեղեկանալոյ սովորութե նց : Զայս յիմարական հանդէս առնեն ը ամիս հինգ . 'ի սկզբան յաճախ , այլ յետոյ առ սակաւ սակաւ նուազեցուցանեն ը նուազելոյ աւուրց սգոյ . ապա 'ի կատարել հինգ լուսնական ամսոց , հանեն զտորեալ դի մեռելոյն , մաքրեն զոսկերս 'ի մնացորդ նեխեալ մսոյ , և քաջ լուացեն , թաղեն 'ի տաճարի իւրեանց , զոր ը որում 'ի վերոյ ասացաք . Մօրաւի կոչեն . որ է տեղի ցանկապատ . որ և միանգամայն է գերեզմանատեղի նց : Եթէ մեռեալն իցէ 'ի գլխաւորաց կղզւոյն , զգանկ նր ոչ թաղեն , այլ պատեն 'ի պաստառս , և ամրափակեն 'ի փոքրիկ արկեղ , դնեն 'ի տաճարի անդ . և կոչեն զայն Եվհաւէ նօ դէօրօմէդուա , որ է տուն իմաստնոյ կմ րմն . և այսու աւարտի սուգն : Այսպիսի և այսչափ գործական խնամածութե , սէր և պատիւ ցուցանեն նք առ մեռեալս , քանզի համարին թէ հոգիք նց անջատեն 'ի մարմնոյ , ցայնչափ ժմկս մինչ առ մարմնով իւրեանց դեգերին , և տեսանեն զամ զոր առնեն վն նոցա , յղր սակս խնդան և բերկրին : Յայսմ վայրի յառաւոյն քան զմերս սովորական ընթացս ձգեցաք․ այլ ոչ վայրապար․ զի զոր ինչ նշանակեցաք աստէն զհանգամանս կղզւոյս, և բնակչաց նորա, նոյն ՚ի դէպ է և այլոց համօրէն կղզեաց ընկերութեան, և այլոց հարաւային կղզեաց․ Նմին իրի աստէն միանգամայն վճարեցաք առ չկրկնելոյ ՚ի ստորագրութիւնս իւրաքանչիւր կղզւոյ․ յորոց զոմանս յառաջիկայդ նշանակեսցուք ։

Ուլիետէա․ Ըստ ոդախգացւոց Օռայետէա ։ Կղզի ՚ի հիւսիսոյ արևմտից դաւիդի կղզւոյն, փոքր քան զնա, շրջապատեալ մեծամեծ ժայռիւք․ բայց ունի նաւահանգիստս քաջապէս և անքոյթս ՚ի հողմոց․ դաշտավայրինք նորա լայն են, և բլուրքն բարձունք ։ ՚Ի հարաւակողմն ունի իւր կից այլ ևս փոքրագոյն կղզի, կոչեցեալ Օդահա ։

Հուահէյնէ ։ Կղզի յարևելեան կողմն նախընթացին, բաժանեալ յերկուս ՚ի ձեռն խորայատակ նեղուցի, և յայլ կողմն միացեալ միջնորդութեամբ ցամաք կրճի․ որ ցածուն գոլով, միշտ ծածկի ՚ի ջրոց ՚ի մակընթացութեան ծովու ։ Նխսա նորա բերէ զնմանութիւն դաւիդի կղզւոյն, այլ փոքր է յոյժ քան զնա․ զի շրջապատ նորա է 21, կամ 23 մղոն․ բլուրք և լերինք նորա ցած են քան զբլուրս դաւիդի կղզւոյն․ այլ արտաքին տեսիլ նորա գուշակէ ունել յընդերս իւրեանց հուր գաղտնեալ․ գլուխ միոյն ՚ի բլրոց անոնի էր ծակոտկէն, և ՚ի լանջակողմն նորա տեսաւ ժայռ սևագոյն աղնդանման իբրև կիզեալս երկաթոյ․ հովիտք և տափարակ տեղիք նորա սակաւ են և անձուկ, գոլով ընդ մէջ տեղեաց լեռնայինս ։

Պօլապօլա․ Մաուրա․ Տուպայ․ Դուէնիաւրա ։ Են այլք ՚ի կղզեաց ընկերութեան ։

Կղզիք Առաքեզանաց ։

Այսպէս կոչեցան ՚ի գունդս անգղիացւոց, երբ զի ՚ի հասանել նորա անդր ՚ի 1773․ ըստ մարդասիրութեան և ասպնջականութեան եգիտ ՚ի բնակչաց ։ Են բազմութիւն կղզեաց ՚ի խաղաղական ովկիանոսի ընդ մէջ 20 և 23 հարաւային լայնութեան․ և ընդ մէջ 202 և 204․ երկայնութեան, որք գտեալ են յոյժ յանգղիացւոց ։ Օդ նորա քաղցր է բարեխառն և առողջարար․ երկիրն արգաւանդ վայելուչ ելևէջիւք բլրոց վայելչացեալ․ և բլուրք նորա, ոմն և դաշտավայրինք ազգի ազգի անուժթ շահոտ ծաղկօք, և գեղազարդ փոքրիկ մայրիւք ծաղկալից և մրգաբեր ծառոց վայելուչ իմն տեսարան ընծայեցուցեն, զայս նմին յինքեանս դարձուցանեն. միանգամայն և քաղցրահոտ բուրմամբ մաքրեալ զմռսեն զօդն, որոց բուրումն անուշահոտութ՟ե ցհեռաւոր վայրս սփռեալ տարածի. վ՟ն այսորիկ 'ի հասանել անդր անգղիացւոց, երանելի համարէին զանձինս, իբր մեծի յաջողուած գիտալէն:

Բնակիչք ն՟ց բարեյօդ են մարմնով. քաջառողջ, ուժեղ, թեթեւաշարժ, աչալուրջ, և ը՟ս բնաբոյս բարուց՝ բարեհամբոյր խաղաղամիտ, մարդասէր և հիւրընկալ. բայց միանգամայն և 'ի գողութ՟ն հակամէտ 'ի խառնաղանձից մինչև ցգլխաւորս կ՟մ ցիշխանս ն՟ց. Ք՟զի գողութիւն ոչ է համարել առ ն՟ն յանցանք. այլ իբր ցոյց իմն ճարտարութ՟ե և աչալրջութ՟ե. վ՟յ յորժամ ըմբռնիցին 'ի գողութ՟ն, ոչ չառագնին. այլ ծիծաղին. ո՟պ յորժամ առ մեզ առնեն ոմանք այսպիսի ինչ ը՟ս կատակս պարզամտաց: Հ՟րկ ժողովուրդն գրեթէ մերկ շրջի. այլ կանայք, ո՟պ և գլխաւորք ն՟ց արկանեն զանձամբք կապերտս ինչ: Գլխաւոր զարդ ն՟ց է ապարանջան 'ի ծովային գունագեղ խեցեաց. և սփածանելիք ճամկաւոր վերջաւորօք յերիւրեն. և փոքրիկ վերարկու հիւսեն յերփն երփն փետրոց թռչնոց զարմանալի իմն արուեստիւ. զոր ը՟ս ասելոյ Գուգայ և տիկնայք անգղիոյ ոչ արդեօք անդէպ համարէին կրել. այլ զայս գլխաւորք եւեթ զգենուն, զի թանկագին է:

Երևի թէ և արհեստք ը՟ս իւրաց ինչ զարգացեալ են առ ն՟ն, զի բաց 'ի վերարկուէ անտի, և բաց յայլոց զարդուց իւրեանց, քաջավարժ ցուցանին 'ի գործ հիւսնութ՟ն, զի այնպիսի ճարտարութ՟բ յղկեն և ողորկեն զփայտեղէնս, մինչ գրեթէ հաւասարել մերոց ճարտար հիւսանց. թիակք նաւակաց ն՟ց, որպէս և բիրք և նիզակք և նետք, որք են զէնք պատերազմի, թուէին գործք ճախարակեայք. զնաւակս զարդարեն ը՟ելուզեն յառաջս և 'ի խելս ն՟ց ատամունս պէսպէս ձևով. շինեն և սանր, և ասեղ յոսկերաց. և զնին տեսակս աղանեաց խոշոր և նուրբ. և պարկս խիտ հիւսեալ 'ի տերևոյ եղեգան անթափանց 'ի ջրոյ. կարթս և ուռկանս 'ի պէսպէս ձկնորսութ՟ն, որք չեն ինչ ը՟նհատ 'ի մերոցն:

Կերակուր ն՟ց են խոզենի, և ընտանի հաւք. և ազգի ազգի բանջարք պտուղք, և արմատք ինքնաբոյսք. զոր երկիր ն՟ց ինքնին բերէ անդադարման 'ի մարդկանէ.

նէ, այլև ձուկն առատ 'ի ծովէ. կրիայ և այլ պէսպէս ծովային խեցեմորթք : Իսկ ըմպելին ջուր. ունին և սեւսակ մի գինւոյ, զոր մզեն 'ի պտղոյ. բայց զզուելի քմաց օտարաց : Ցորչափ եղեն անդ անգղիացիք, մինչ 'ի խրախճանութիւս, յերաժշտական նուագս և 'ի կաքաւս պարուց անցուցին զաւուրս իւրեանց ը բնակչաց. զի գլխաւորք նց ստէպ հրաւիրէին զսոսա 'ի ճաշ, նոյնպէս և սք զնս :

Չունին սք քղք կմ գեօղ. այլ ցրիւ բնակին 'ի հիւղակերպ աղքատակերտ տունս ը օդաւիգացուց. որոց նման են և քղքական կառավարութ. զի և առ սոսա գոյ կարգ իմն քղքական. ոմանք են հրամանատարք, որոց իշխանութիւն յաջորդութ անցանէ 'ի հարց յորդիս. իսկ այլք հնազանդեալք և իբր ըստրուկք : Նոյնպս և զինիւք թուին նման նց. չունելով և ոչ կուռս և զոհս, կմ այլ ինչ արտաքին պաշտամունս. այլ դաւանին զաներևոյթ էակ մի գերագոյն, և 'ի ներքոյ նր այլ բզմ դիս ստորինս. բայց ոչինչ արտաքին պաշտօն մատուցանեն նց : Այսչափ ինչ վս հանգամանաց կղզեաց բարեկամաց, և բնակչաց նց. արդ նշանակեսցուք զկղզիս, որք ծանօթ են :

Միդդէլպուրկ. զոր բնակիչք նր կոչեն Էաուէէ : Կղզի որոյ շրջապատն է իբր 30 մղոն. երկիր նր 'ի ծովեզերեայս տափարակ է. իսկ 'ի միջին կողմանս բզմ դալարագեղ և ծառազարդ բլրոց ընդհատեալ. բարձր է յոյժ քն զմակերևոյթ ծովու. վյ իբրև 12 մղոնաւ 'ի հեռուստ երևի :

Անամոքա, կմ Անամօկա. զոր հոլանտացիք, որք զառաջինն հասին անդր, կոչեցին Ռոտտէրտամ : Է կղզի արգաւանդ և բազմամարդ, ուր եգիտ Գուք զվերոյգրեալն ասպնջականութիւն 'ի բնակչաց :

Քալաֆօէ, կմ Քալօֆօէ : Կղզի իբր 120 մղոնաւ հեռի 'ի նախընթաց կղզւոյն. 'ի կողմանս յայսոսիկ տեսին անգղիացիք աւելի քն 60 . կղզիս շրջապատեալս ժայռիւք. նորին աղագաւ ոչ մերձեցան 'ի նս. երկուցեալ 'ի ժայռից անտի :

Դօնկատաբու. զոր հոլանտացիք, որք գտին զնա, կոչեցին Ամստէրտամ : Է կղզի բարեբեր և բազմամարդ :

Օվայհէ, կմ Օվհեյհէ :

Է մի 'ի 17 կղզեաց, որք միանգամայն կոչին Կղզիք Սանտվիչեայ 'ի ներքոյ արևադարձին խեցգետնի ը 200 աստիճանաւ երկայնութ. արգաւանդ և բազմա_ ժամարգ: Բերք նր նոյն են, որ ինչ օդաւիդի կղզւոյն· նմ և բարք, և սովորութիւնք և եղանակ կենաց բնակչաց նր է օդաւիդացւոց· զի և ոչ երևէին բարեբարոյք խաղաղամիտք և հիւրասէրք· բայց դենիւ Թուի Թէ զանազանին· զի տեսան առ սոսա դրօշէնք կմ կուռք 'ի կերպարանս հսկայաձևաւն· զոր կոչէին Եաթուաւհ նուէհ· քմ Հզօր ած պտրզմի· վզի յորժամ Թգր կղզւոյս երԹայ ուրեք 'ի մարտ, է իւր տանել զնա պսակազարդ: Բաց 'ի սմանէ ունէին և այլ փոքրագոյն կուռս, զորս Եաթուաւհ կոչէին· բայց զոհագործութի, կմ այլ ինչ արտաքին պաշտամունք ոչ տեսաւ առ նս:

Յայս կղզի եհաս Գուք 'ի 1779, 'ի յունվարի 17· 'ի շրջապատել իւրում երրդ անգամ զհողագնտով երկրի յետ բազմապատիկ ահարկու աշխատութեանս կրելոյ· և ընդ անԹիւ մահառիթ վտանգս անցանելոյ: Իբրև մերձեցան նաւք անգղիացւոց 'ի կղզի անդր, նոյնժամայն բնակիչք տեղւոյն խռնեցան 'ի ծովափն 2 կմ 3 հզրք· որք հիացմամբ կային 'ի զննելն նաւուց: Եհաս անդր և որդի Թգրի կղզւոյն· զոր նք Օրօնօ կոչէին· (զի Թգր հայր նր երԹեալ էր 'ի Մաուվէհէ մօտակայ կղզի 'ի պտրզմ) եկեալ 'ի նաւն Գուքայ է առ իւր· զոր Գուք բզմ պատուասիրութբ ընկալեալ, առաջի արար նմ զկարօտութի իւրեանց, որոց պէտս ունէին ինքեանք և նաւք իւրեանց· խնդրեաց 'ի նմանէ տեղի մերձ 'ի ծովն կանգնել զվրանս, և հանել 'ի ցամաք զգէնս զպարէնս և զայլ ծմ կահս առ 'ի նորոգել անդ զնաւս իւրեանց, որք կարի խաԹարեալ էին: Իսկ արքայորդին յօժարութբ շնորհեաց Գուքայ զամ զոր ինչ և խնդրեաց, Թողեալ 'ի կամս նր ընտրել տեղի է որ հաճեսցի· ուր և հրամայեաց ժողովրդեան իւրում հատանել սահման, և ցանկապատել ոստովք ծառոց· արգելս եդեալ նց է սաստիկ պատժով ընաւ չանցանել զայն կողմ, կմ իւրեք իրօք անհանգիստ առնել զանգղիացիս: Իսկ գլխաւորք կղզւոյն ետուն նց և տունս ինչ մօտ յայն տեղի, ուր կանգնեցին զվրանս, 'ի հանգիստ հիւանդաց նց: Եւ սկսան յայնուհետև բերել նց խոզս, ընտանի հաւս, և զամ ազգս պտղոց երկրի իւրեանց· այլև փայտ 'ի պէտս հրոյ, և 'ի նորոգութի նաւուց: Բզմ միամտութբ և խաղաղասէր կամօք գնային է նմ ծնունդ գլխաւորք կղզւոյն· որք յորժամ իրազեկ լինէին, զի ոք 'ի խառնամուժ ժողովրդենէ իւրեանց գողանայր ինչ յանգղիացւոց, կմ նեղութի ինչ հասու-

ցա

ցանկըր նց՟, վաղվաղակի կոչէ մատնէին զնա 'ի ձեռս նց՟ պատժել ըս՟ կամի :

Յետ տասն աւուրց զկնի հասանելոյ անգղիացւոց 'ի կղզի անդր, դարձ արարեալ թգ՟րն 'ի պատերազմէն յաղթանակաւ, եկն բազմութ՟ արանց յայցելութե անգղիացւոց, բերեալ 'ի պարգեւ յոլով բարեաց երկրի իւրոյ · զոր բազմահարկի մեծարանօք ընկալեալ գուգայ, անդրէն մատոյց և ինքն նմ՟ 'ի պարգեւ փոքրիկ հայելիս, տապակի բաժակ մի մեծ · բեւեռս երկաթիս, ուլունս, և այլ այսպիսի չնչին տղայական խաղալիկս, որք կարի մեծարգի թուէցան յաչս թագաւորին, զի չէր բնաւ տեսեալ զայնպիսի ինչ · մնւնդ՟ բեւեռքն, առ որ չգիտեմ յինչ պատճառս մոլեալ էին համօրէն բնակիչք հարաւային ովկիանոսի · յայն սակս և նա առ ժամայն առաքեաց զմի ոմն 'ի գլխաւոր արանց իւրոց, որ դարձաւ անդրէն բզ՟մ բարեօք, զոր մատոյց անգղիացւոց 'ի վ՟ր առաջնոյն :

'Ի վաղիւ անդր գուգ և քլարք նաւապետք երկուց նաւուց հ՟դ՟ զօրապետօք իւրեանց չոքան 'ի յարգութն թգ՟րին 'ի փոխարինել զայցելութն նր՟ · զորս թագաւորն մեծաւ պատուով և փառօք ընկալեալ, զայն օր կալաւ զնս՟ 'ի ճաշ առ իւր · զկնի ճաշոյն թգ՟րն ինքնին էարկ 'ի վ՟ր գուգայ և քլարքայ մի մի վերարկու, նման այնմ, զոր զգեցուցանէին գլխաւոր կռոց իւրեանց · և այնպէս ընկերակցութ՟ գլխաւորաց կղզւոյն, և այլոց բազմամբոխ ժողովրդեան՝ էած զնս՟ 'ի Մօրայի · ք՟ 'ի տաճար մի · և անդ ձեռամբ իւրով եդեալ 'ի գլուխ գուգայ պսակ հիւսեալ 'ի տերեւոց պանանէի, և նստուցեալ 'ի բեմբի, քուրմ տաճարին այլակերպ իմն խայտաճամուկ տարազ զգեցեալ, խօսեցաւ առ նա ճառս երկայնս, յաւարտել ճառին, սկսաւ մեծաձայն երգել ձայնակցութ՟ համօրէն բազմութե · ապա թգ՟րն ասաց ցգուգ · Այս Մօրայի քեզ նուիրեալ է · և 'ի ժամէ աստի յայսմանէ և անդր եղիցիս մեր Եաթուա նուէհ, ք՟ մեծ ած՟ մեր · վ՟յ անգղիացիք զայն մօրայի կոչեցին Սեղան գուգայ, ուր այնուհետև մերթ ընդ մերթ երթային գուգ և ընկերք նր՟ :

'Ի նոյն աւուրս մեռաւ գուլիելմոս վաղման մի 'ի զօրապետաց նաւուն գուգայ · որ ըս՟ խնդրոյ իւրոյ թաղեցաւ 'ի մօրայի անդր գուգայ · ը՟ որում կղզեցիք թաղեցին և երկու խորովեալ խոզս · և ազգի ազգի պտուղս 'ի պաշար ճնշհի · կամէին դնել և այլ բզ՟մ ինչ, այլ գուգ արգել զնս՟ · և ետ կանգնել անդ կոլֆոյ, յորում գրեցաւ անուն մեւկլոյն, այգին. և որ մահու նո՛ր . և զնաւահանգիստ կղզւոյն ուր մեռաւ վաղման, գուգ կոչեաց յանուն նորա Նաւահանգիստ Ջաքսոնայ : 'Ի վաղուց անդր կուտել կղզեցւոց քարինս ըզմա, ձեւացուցին 'ի վ՟ր գերեզմանին սեղան . և յաւելին դնել 'ի վ՟ր այլեւս երկու խաչս . և պանանէ, և գօգօ, և պտուղ հացի են : Այլ վրէպ մեծ գործեաց գուգ համդխնե թաղել զվաղման, զի զարթոյց սովաւ զմիտս կղզեցւոց ոչ ևս անմահս համարել զանգղիացիս . վ՟ս նոյն կղզեցիք, որք աւուրբք ինչ յա՟ռաջ 'ի կարգս անմահ դիցն իւրեանց դասեցին զնա համդխնէ, յետոյ չարաչար սպանին . ա՟ն ունիմք նշանակել սորա :

Յետ այսորիկ մինչ 'ի խրախճանութիս խնջոյից, և'ի սթափութիս այէսայէս խաղուց զուարճանային անգղիացիք ը՟ թգրին և ը՟ գլխաւորս նց . փափուխ հրաւիրելով զմիմեանս 'ի ճաշկերոյթս և 'ի հանդէս խաղուց . բայց միանգամայն 'ի բնածին սխալէ իւրեանց գողութե ոչ կասէին . զորս գուգ ը՟ իւրում արդարակորով անողոքելի բարոյից ոչ հանդուրժէր թողուլ անպատիժ . յայսմանէ սկսան կղզեցիք առ սակաւ սակաւ օտարանալ յանգղիացւոց, և ը՟ ակամբ հայիլ 'ի նա : Յաւուր միում ետես քլարք զի բազմունք 'ի նցէ կուտէին քարինս 'ի գլուխ բլրոյ, որ մօտ էր 'ի նաւահանգիստ անդր, ուր էին նաւք անգղիացւոց, և կարծիս էառ թէ թշնամութե ինչ խորհէին նք . վ՟ս հրամայեաց ուղղել զհրացանս զնաւակաւորս առ նս . բայց եղեւ զի յերեկոյանալ աւուր ցրուեցան : Իսկ յայգուցն անդրէն երեւեցան 'ի նմին տեղւոջ, և թաւալէին քարինս ը՟ զառ 'ի վայր բլրոյն . զոր քլարք համարելով թէ 'ի վ՟ր նաւուց իւրեանց արձակեն, հրամայեաց հրացանս արձակել 'ի վ՟ր նց . իսկ նք 'ի քթթել ական աներեւոյթ եղեն անտի : Ապա զմիջաւուրբ մատեաւ թգր նց 'ի նաւն գուգայ, և մեղադիր լինէր վ՟ն զուր տարապարտուց սպանանելոյ զերկուս յարանց իւրոց 'ի բլրի անդ . ասելով թէ նց չէին կամք քարաձիգ լինել 'ի նաւս, այլ զբօսնուլ անդ ը՟ իւրեանց սովորութե :

Այնուհետեւ գնացք կղզեցւոց գլխովին ը՟ հետ՟ն առաջնոյ մարդասիրութե փոխեցան 'ի թշնամութի . զօր ամ՟ յածէին ը՟ ցամաք և ը՟ ծով շուրջ զանգղիացւովք, և զամ՟ զոր տեսանէին գողանային . և որք յառաջն առ մեծի սիրոյ և բարեկամութե կալել տային՝ զգուղն 'ի ձեռս անգղիացւոց, յետ այնորիկ ամէն կենօք չափ սպաշտպան լինէին ն՟ց . մինչև 'ի վերջոյ գողացան գիշերայն և զմակոյկն նաւուն գուգայ : Յայնմանէ կասկած կալան անգղիացիք, թէ ն՟ք չարիս խորհէին զինքեանց . մանաւանդ զի 'ի նախընթաց աւուր տեսեալ էին բազմութիւն յոյժ համախմբումն, որք ողորմ ձայնիւ գոչէին, և երբեք երբեք թմբուկս հարկանէին . այլև կանայք ոմանք ասացեալ էին ցնաւավարս, թէ սպառնէին ն՟ք դիպօղ ժամու յարձակել 'ի վ՟ն անգղիացւոց :

Խորհուրդ կալան անգղիացիք, թէ զիարդ մարթասցին 'ի ձեռս բերել զմակոյկն . և 'ի խորհրդեան անդ վճռեցաւ ունել զԹիքըն 'ի կալանս 'ի նաւի իւրեանց, մինչև դարձուսցի մակոյկն . վասն մանաւանդ կենացն գուգայ : Վաղվաղակի հրամայեաց գուգ պատրաստել զզէնս նաւուց . և ինքն 'ի վաղիւն ը՟ այգն առեալ ը՟ իւր 20 զօրականս զինեալս, չոգաւ 'ի պալատ թագաւորին, որ չէր իսկ հեռի 'ի ծովէ . ուր եգիտ զնա բազմեալ 'ի դրանն ը՟ 12 գլխաւորս կամ խորհրդականս իւր . որք 'ի մտանելն գուգայ ամ՟քն յոտն կացին : Խօսեցաւ գուգ քաղցրութ՟բ ա՟ Թիքըն վ՟ն գողութե՟ մակուկին իւրոյ, խնդրելով 'ի նմէ զի հրաման տացէ վղվ՟ղկի դարձուցանել . այլ մինչև 'ի յայտ դայցէ, պարտ է քեզ ասէ (ա՟ Թիքըն) գալ ը՟ իս 'ի նաւն իմ, և մնալ անդ մինչև դարձցի մակոյկն : Թիքըն վկայեաց հաստատելով, թէ բնաւ ինչ ոչ գիտէ վ՟ն այնր գողութե՟ . այլ ձեռնտու եղեց ասէ գտանել զգողն . զոր և պատժեսցէ ը՟ կամաց ձերոց . իսկ տալ զանձն 'ի ձեռս ն՟ց երկնչէր՝ յուշ առեալ զանգթութիւն, զոր արարին ն՟ք ժողովրդեան իւրում: Գուգ յետ բզ՟մ յուսադիր բանիւք քաջալերելոյ զնա չունել բնաւ կասկած ինչ չարեաց 'ի մտի՝ ասէ հարկ է քեզ տալ զանձն մեզ պատանդ վ՟ն խաղաղութե՟ և անդորրութե՟ համօրէն ժողովրդեանդ, կալով ը՟ մեզ 'ի նաւի մերում. ուր եղիցիս յապահով յամ՟ պատուոց, որպէս 'ի սեպհական տան քում . զի այս է մի միայն զօրաւոր հնարք խափանելոյ զստահակութի՟ և զհնամապազորդեան գողութե՟ ժողովրդեանդ . որք յար դեգերեն առ վրանօք, և առ նաւուք մերովք, և զամ՟ որ ինչ անկանի ը՟ տեսութ՟բ ն՟ց գողանան աներկիւղ : Թիքըն ակամայ կամօք եցոյց զանձն հաւան ը՟ բանս գուգայ . և պատրաստէր երթալ ը՟ նմ՟, գլխաւորք տեղւոյն որք էին առ նմա, պաշարեալ երկիւղիւ, սկսան մի առ մի խոյս տալ . այլ զինուորք անգղիացւոց արգելուին զն՟ս : Այս խօսակցութիւնք կամ վէճք յերկարեցան իբր կէս ժամ: Եւ յայնմ պահու անթիւ բազմութ̃ն ժողովրդեան խումբ կազմեալ, խռնեցան զճանապարհայն, որք քրթմնջելով ը̃ միմեանս՝ ասէին թէ գուգ տանի զթ̃ր իւրեանց 'ի նաւ խողխողել զնա. վ̃ն այնորիկ դիմակայ լինէին զինուորաց: Զայն տեսեալ գուգայ հրամայեաց հրացանիւք և աշտէիւք, որք ագուցեալ կային 'ի ծայրս հրացանից՝ բանալ ճանապարհ. և ինքն կալեալ զբազուկ թ̃րին յառաջ վարէր զնա. յայնժամ Ֆիլիբոս զօրապետ անգղիացւոց սպան չորս ոգիս 'ի խառնաղանձից. յորս յաւել գուգ զհինգերորդն, զի ունէր 'ի ձեռին երկփողեան հրացան. և մինչ կամէր արձակել և զերկրորդն, ահա մի ոմն 'ի խուժանէն 'ի յետուստ եհար զնա ուժգին մահակաւ, և ընկեց 'ի գետին. և զաշտէաձև սլլաք, զոր 'ի նախընթաց աւուր ետ գուգ շինել իւրոյ դարբնոյ ը̃ խնդրոյ թ̃րին, մխեաց ը̃ սնակուշտ նորին մինչև ը̃ կուրծս ելանել ծայրի սլաքին, և անդէն սպան զնա: Յայնժամ կրկնեցաւ անդ յայտնի պտ̃զմ ամենուէր, յորում մեռան բզ̃մք 'ի խուժանէն. սակայն մնացորդքն անպարտելի քաջութ̃բ դիմագրաւ եղեն անգղիացւոց մինչև վանել զնոսա 'ի նաւ իւրեանց. և ապա բզ̃մ ցնծութ̃բ յաղթանակաւ տարան զմարմին գուգայ յայլ կողմն կղզւոյն, և յօշոտեալ 'ի մասունս, բաժանեցին, և կերան ախորժանօք. յայնմ մարտի որ երկարեաց ժամս իբր երիս, բաց 'ի գուգայ՝ անկան յանգղիացւոց զօրապետ մի, և երկու 'ի սովորական զինուորաց:

Յաւուր երկրորդի տեսին անգղիացիք զկողոպուտս գուգայ և այլոց երից 'ի ձեռս կղզեցւոց. ոմն ունէր 'ի ձեռին զսուսեր գուգայ, և եկեալ 'ի ծովեզրն շողացուցանէր յանդիման նց̃. ոմն զհրացան նորա, ոմն զբաճկոն նր̃, և ոմանք ունէին զգեցեալ զշապիկ նր̃, զսռնապանս, զկօշիկս ևն, և ցնծութ̃բ ցուցանէին զայնոսիկ իբր մրցանակս յաղթութ̃ն: Իսկ անգղիացիք թէպէտ ջեռնուին 'ի խնդիր վրիժուց մահուանն գուգայ, այլ ք̃զի վրանք նց̃, ա̃ղ և կայմ և այլ կարասիք նաւուց դեռ 'ի ցամաք անդր էին. և ինքեանք ունէին պէտս և ևս առնուլ համբարս կերակրոյ 'ի կղզւոյ անտի, վ̃ն այնորիկ զսպէին զբուռն յարձակումն ցասման. մնալով այլում դիպողագոյն ժամու: Ապա ը̃ երեկս այնր աւուր տեսին զի մերձենայր առ նաւս իւրեանց քանօթ մի, յորում էին ութն կմ̃ ինն ոգիք. և մի 'ի նց̃նէ ունելով զփնջազարդ գըլխարկ գուգայ խաղայր նովաւ. զոր քըլարք համարելով թէ 'ի նախատեսնս իւրեանց առնէ , հրամայեաց արձակել հրացան մի 'ի վր̅ նր̅, որով վիրաւորեցաւ մի 'ի սրունից նր̅ : Այլ նք̅ տակաւին յառաջ վարէին զքանիօթն , և մերձեցեալ 'ի նաւն , սկսան գոչել մեծաձայն Դուգդեէ՞ Դուգդեէ՞ (զի այսպէս կոչէին զեւրոպք) յորմէ ծանեան , թէ նք̅ ոչ գտին թըշնամութի̅ , այլ թերևս ունէին ինչ յայտնել նց̅ · վ̅յ քըլարք հրամայեաց առնուլ զնս̅ 'ի նաւն · և վիրաւորեալն միւոյն քըլարքայ զմի 'ի կողից գուգայ համդերձ մասին պատեալ զգուշութբ̅ 'ի պատառս , որ անկեալ էր նմ̅ բաժին 'ի մարմնոյ նր̅ · և պատմեաց թէ զխարդ համայգեք իւր կատորեալ զայն բաժանեցին և կերան · ապ̅ և զմարմինս այլոց երից , որք անկան յայնմ աւուր : Ապա զկնի երից կմ̅ չորից աւուրց երեք 'ի գլխաւորաց կղզւոյն բերին զմասն ինչ 'ի գըլխոյն , և քանի մի ոսկերս մասաբերծ , և զթաթ աջոյ ձեռին · զոր վաղվաղակի ծանեան 'ի պակասուէ բոյթ մատին , զոր յառաջագոյն կորուսեալ էր , և այլևս կատարակս ինչ անկերպարան անդամոց · զորս ասէին թէ գժուարաւ մարթացան 'ի ձեռս բերել յիւրեանց աղգականաց : Իսկ քըլարք զայն ամ̅ եդեալ 'ի փոքրիկ արկեղ և կնքեալ , ընկէց 'ի ծով , արձակելով թնդանօթս ժ̅ ըս̅ սովորուե̅ անգղիացւոց 'ի պատիւ թաղման մեծին գուգայ · և առեալ նց̅ պարգևս արձակեաց զնս̅ խաղաղութբ̅ :

Ահա զայս օրինակ վճարեաց զաւուրս կենաց իւրոց գերագոյնն 'ի նաւապետս անգղիացւոց , մինդ թէ ամ̅ Յի , յետ երիցս յաջողաբար պատելոյ զբոլոր հողագնտով երկրի : Յայսմ վայրի ոչ ինչ անդէպ համարիմք համառօտել զվարս առն մեծի 'ի լրումն այսը նորագիւտ մասին Տի , զոր նա հանդիսացոյց :

Վարք Յակոբայ Գուքայ երևելի նաւապետին Անգղիացւոյ .

Յակոբ Գուք ծնաւ յամի Տն̅ 1728 · յԱնգղիա 'ի կոմսութեան Եօրքայ · որդի առն շինականի · 'ի տղայութեան անդ ուսաւ միայն ընթեռնուլ և գրել 'ի դպրոց գեղջն · այլ իբրև եղև երեքտասանամեայ եկաց զամս եօթն առ ումեմն նաւապետի որ 'ի նաւքէասլեայ բերէր զածուխ հանքային 'ի Լոնտրա : Աղա գնաց յարեցաւ յայլումն ածխաբեր նաւապետ, և եղև նր խոհակեր՝ յարմար ստուգաբանութե՛ն իւրում մականուան. զի անգղիացիք Գուք կոչեն ըզխոհակերն: Յետ սակաւուց եմուտ յայլ նաւ, և եղև 'ի նմ երկգ. տուապատապետ. ք կեքէնձի եէլքէնձի. ցուցեալ նմ տեսողաց զընտատուր յաջողութեն, զոր ունէր յարուեստ նաւավարութե. բայց տեսեալ թէ առանց մաթեմաթիքական և նաւավարական ուսմանց անհնար է նմ երևել հանդիսանալ յայնմ, եռ. զանձն 'ի պարապումն այնոցիկ՝ ծախեալ յայնս զամ զոր առնոյր 'ի հօրէն, և զոր ինքնին ձեռնեռ յաւելոյր. և 'ի բաց թողեալ զածխաբերութե՛ն՝ երիցս նաւարկեաց 'ի ծանուցեալ ծովս. նախ՝ 'ի ծովն հնդկաց. երկգ. 'ի պետրոսպուրկ և 'ի վիպուրկ. և հասեալ յետոյ 'ի նորվէկիա: Ապա 'ի պատերազմին դաղղիացւոց ը անգղիացիս գոլով երկգ. ուապատապետ, վաստակեցաւ բազմ յառումն Լուիզպուրկայ, և հրուանդանին Պրետոնի. իսկ յամին 1759 եղև տուապատապետ. ք եէլքէնձի. և 'ի մասնէր նաւուն յՕռլէանս կղզի, մողապուր ձազղայրել 'ի գետոյն յառումն մայրաքաղաքին Քանատայի գտաւ և ինքն քաջանուն:

Յետ խաղաղութե թշրն անգղիոյ առաքեաց զնա յամին 1764 'ի ձեռն զննութե կղզւոյն անուանեալ Նոր Երկիր. յարմար 'ի ձկնորսութե. որոյ ամս չորս ծախեալ յայնմ, գծեաց զնկրն Ծագոյցս այնր կղզւոյ: Բայց քզի 'ի վայրենաբնակ կղզւոջն պարապէր երբեմն յորս հաւուց և երէոց, ըն դիպաց իմն վրիպել հրացանին, վիրաւորեաց զձեռնն, և զբոյթն կորոյս. վն հարկ եղև նմ յետոյ 'ի գործն առօրեցուցանել զանձն ունել զգրիչն ը մէջ ցուցամատին և միջամատին: Իսկ վն կորստեան բութ մատինն կարգեցաւ նմ յարքունուստ յամին իբր 24 տուգանս անգղիոյ. թող զտարեկան թոշակն, և զերիս տուգանս զոր առնոյր օրըստօրէ. բայց գծուծ չինականութեն յոր սնեալ էր 'ի տղայութե՝ ոչ ներէր նմ վայելել յառատութե թոշակացն. այլ ձգեր յանմի, զընդնայր անձին և զհարկաւորսն. քր յըմպելն զթէյ՝ ոչ 'ի կիր առնոյր զապխտակ շաքարն տուեալ նմ 'ի թոշակ, այլ զանարգն և զկարմիրն. և ոչ լուցանէր զճրագն տուեալ նմ, այլ զպարշահոտ իւղ ծովային ձկան:

'Ի յաճախել ընծայիցն առաջաւ տուն փոքրիկ և պարտէզ մերձ 'ի լոնտրա, ուր զձմեռն ուջոյն անցուցանէր հանգերձ կնաւն: Ապա յամին 1769 'ի խնդրոյ արքունի ընկերութեան գիտնոց՝ առաքեաց Թագաւորն նաւ 'ի կղզին Օտահիդի վասն աստղաբաշխական գիտողութեանց, և հրամանատար նաւուս կարգեցաւ Գուք․ որով և շահեցաւ իբր 20000 տուգանս անգղիոյ: Յայսմ առաջին ճանապարհորդութեան նորա յանծանօթ ծովս՝ պատեցաւ ամբողջ զերկրաւ․ և արհամարհեալ զամենայն զվտանգ՝ բազում ինչ 'ի լոյս ընծայեաց յաշխարհագրական ծանօթութիւնս և զգուշաւոր աշխարհացոյցս: Յետոյ դարձ արարեալ 'ի հայրենիսն բարձրացաւ 'ի պաշտօնակալութ․ և միւսանգամ երկոքումբք նաւուք առաքեցաւ 'ի Թագաւորէն յամին 1772 խաղալ 'ի հարաւային ովկիանոս 'ի գիւտ կղզեաց և ցամաքի․ և զճանապարհայն խօթացեալ ծանր՝ չեառ յանձն կեալ փափկագոյնս քան զիւր նաւաստիս․ և յառողջանալն վերստին դարձ արար 'ի հայրենիս, կատարեալ զյանձնարարութիւն․ ուր և եւս առաւելեալ պատիւ նորա: Այս յամին 1776․ երկրորդ անգամ ճանապարհ արար Գուք երկոքումբք նաւուք 'ի հիւսիսային ովկիանոս․ և զտեղի առեալ 'ի կղզւոջն Օվայհի, պատուեցաւ 'ի բնակչացն մեծապէս, որպէս տեսաք 'ի վերոյ․ այլ անխորհուրդ համարձակութիւն նորա գրգռեաց զնոսա վայրենեացն սպանանել զնա յամին 1779․ 'ի փետր 14․ և զմարմին նորա յօշատեալ կերան գոլով նորա անցեալ զխնամենիւք:

Այս մեծանուն նաւապետ, էր մարմնով վայելչ և նուրբ․ յաղթանդամ և երկայն հասակաւ իբր 6 ոտնաչափ․ բայց կորաքամակ վասն սովորելոյն կորակոր ընթանալ 'ի խորշս նաւուն․ 'ի քայլելն մինչդեռ 'ի վազելն ցուցանէր զնոյնս զեղջկականս և անհեթեթս: Յօնք նորա էին թաւ և երկայն․ նոյնպէս և քիթն երկայն և մեծ․ աչք շագանակագոյնք և մանունք, այլ ոչ արծարծունք․ դէմքն դաժան և խիստ և հարեալ 'ի դեղին․ վերին շուրթն ցցուեալ 'ի դուրս: Յամենայն գնացս իւր ցուցանէր զանձն այր գործունեայ և աշխատասէր․ 'ի հրամանատարութեան նաւաստեաց՝ ահրնկեց և բարձրագոյն սպառնացող․ 'ի կենցաղականութեան այլ չէր զուարճալի և նազելի բարուք․ 'ի բանս սակաւախօս, և դրեթէ լռիկ․ բայց պահ ըստ պահ զուարթանայր յանձին, և զուարթացուցանէր զընկերս: 'Ի պահանջել զպահպանութիւն օրինաց նաւարկութեան՝ էր անաչառ յոյժ և անողոքելի․ և սաստկապահանջ նախանձայոյզ 'ի գործադրութիւն հրամանաց իւրոց և իշխանութեան: 'Ի հաւատոյն չէր ինչ նորա փոյթ․ և զի 'ի մանկութեան չէր մարզեալ կարգաւորապէս 'ի գիտութիւնս․ ընդ այն և պախարակէր զամենայն բաց 'ի մաթէմաթիքական ուսմանց . սակայն ճարտար էր 'ի գիտս հնարից : 'Ի վճռելն ինչ իրաւունս 'ի նաւին, ունէր յաւէտ զկողմն նուաստից, ք̃ աւագաց . և երբեմն առաւել ընտանութե̃ կենակցէր ը̃ նո̃, ք̃ ը̃ սոսա : Սեղան նր̃ անպաճոյճ, և ամենևին հաւասարաբաշխ առ կրսերս և առ աւագս . ատեցող հեշտութե̃, և անհաշտ թշնամի դատարկութե̃, զոր համարէր ժանտախտ առողջութե̃ . մինչև երբեմն առ 'ի չգոյէ աշխատանաց, զի մի անգործ կայցեն իւրքն, տայր քակել ինչ, առ 'ի շինել զայն նորոգ և լաւ ևս . այս էր մին 'ի գլխաւոր պատճառաց որով նաւաստիք իւր մնացին առողջ յայնպիսի երկար և 'ի բազմավտանգ նաւարկութե̃ :

Բայց գլխաւոր ձիրք բնութե̃ առնս, որք հռչակեցին զնա, էին աներկիւղ քաջասրտութե̃ 'ի կատարումն ձեռնարկեալ գործոյն . և անմեղկելի համբերութե̃ և արհամարհութե̃ վշտաց . մինչ զի առագաստալից հողմովք 'ի միգամած գիշերս ընթանայր ը̃ ծովս անծանօթս, լցեալս ժայռիւք քարանց, և արմատովք բուսոց, և անխորտակելի հատորովք սառուցից . որով և բռնադատեցաւ զամիսս երիս կապարեալ գոլով 'ի ձեռին՝ զննել և չափել զյատակ խորութե̃ ծովուն իբր 880 մղոնաչափ երկայնութե̃, 'ի զերծուցանել զնաւն 'ի խորտակմանէ : Երբեմն ննջէր քաղցր 'ի քուն, ուր այլք տագնապէին կասկածանօք . ը̃ հկ̃ռն բզ̃մ անգամ 'ի կարծել այլոց զանձինս յապահովս, նա 'ի վեր ելանէր, փոփոխէր ըզկարգադրութիւն, և անվրէպ գուշակէր զվտանգն՝ մերձակայ ցամաքաց : Ո՛չ երբէք երևէր նա այնքա̃ անվեհեր, զուարթագին և ալխոյժ, ոչ̃ 'ի մեծամեծ վտանգս . յորս և միտք նր̃ մնային անշփոթ և անդորր, և ոչ երբէք լսելի լինէր 'ի նաւի նր̃ գոյժ և ճիչ նաւորդաց, այլ ամենքն 'ի նա սևեռեալ 'ի ձեռաց նր̃ ակնունէին փրկութե̃ :

'Ի վարիլ ը̃ վայրենի ազգս էր ամե̃ յաջողակ և սիրայորդոր . իմանայր զլեզուս բզ̃մ կղզեաց . և գիտէր յինքն յանկուցանել զսիրտս նց̃ . յորոց և էր պատուեալ մեծամեծ, մինչև կանգնել նմ̃ արձան, և կոչել յիրեանց բարբառ Օռունա նօ գէ գուգի, ի̃ Գուգ ա̃ծ : Բայց այս քաջասրտութե̃ նր̃ երբեմն չէր անմասն 'ի յանդգնութենէ . որ և ածեաց զմահ նր̃ 'ի ձեռս իմ̃ գիւղից, որք սպասէին յոլովագոյն ևս [illegible] յերկար կենաց քաջի նաւապետին . որբաց 'ի բզ̃մ կղզեաց զորս եգիտ, երեցս պատկերա-

զերկ

զերկրաւ . եբարձ զտարակոյս 'ի մտաց Ծագրաց, ցուցե՟լ թէ չիք ցամաք 'ի հարաւակողման , զննեաց ճշգրտագոյնս զծովն՝ խաղաղականն զհարաւային և զհիւսիսային . եցոյց ևս թէ չիք անցք 'ի հիւսիսային ծովէ 'ի հարաւային . կմ եթէ կայցէ ևս , է անգործածելի . յայտնեաց ևս զնեղուցն որ ը՟ մէջ Նորոյն հոլանտայոյ , և Նորոյն Կուինէայի . և զնեղուցն որ ը՟ մէջ պէլանտայոյ . և ճ՟նպ՟հորդեաց ընդ լայնութի՟ , զոր բնազննիւք մինչև ցայնժամ կարծէին անբնակելի :

Արքունի ընկերութիւն Լոնտրայի 'ի պատիւ Գուգայ տպեաց արծաթի դրամս 'ի բաշխել Նաւորդաց նր̅ . և վեց ոսկի դրամս . զորոց զերկուս մատոյց թագաւորին և թագուհւոյն անգղիոյ . զերիս թագուհւոյն մոսկովաց . և թագաւորին գաղղիացւոց . և դքսին գրոնայ . և զվեցերորդն այրւոյն Գուգայ :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ։

Ըստ յաջողելոյ Տեառն յանկ ելեալ աւարտեցաւ տպագրութիւն վերջին հատորոյ Ընդհանուր Աշխարհագրութեան, յամի Տեառն 1806․ արդեամբք և ծախիւք բարեպաշտօն առն և ականաւոր վաճառականի թոխաթեցի ղլըճեանց աղայ Մելքոնի որդւոյ պաղտասարի սաղըլեան, ՚ի մանկութենէ հետէ պանդխտելոյ յունգարաց աշխարհին, և ՚ի Թռանսիլվանիա․ որ հայրենասէր փութով կամեցաւ նպաստել և յայսմ մասին իւրոց ազգայնոց տպագրութեամբ գրոցս, աշխարհագրական հմտութեան պատճառս տալով ընթերցանելեաց, միանգամայն և յիշատակ բարի թողել ծնողաց իւրոց և համօրէն քաջատոհմիկ տան իւրոյ․ Արդ՝ որք միանգամ հանդիպիք այսմ գրոց, և վերծանութեամբ նորին զուարճանայք, յիշեսջիք զվերոյգրեալ այրս բարեպաշտօն և զծնողսն նորա յաղօթս ձեր, որպէս զի որ առատն է յամենայնի Աստուած՝ շնորհեսցէ զպարգևս կրկին կենաց նմա և ձեզ ամէն։

ՑՈՒՑԱԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՍԻԱ:

ԱՇԽԱՐՀ. Է:

Հնդկաստան:

Հին Տէրութիւն Մողոլաց:

ա. Անուն. 3.
բ. Դիրք Մողոլաց. 4.
գ. Տարածութիւն, և Բնակիչք Մողոլաց. 4.
դ. Գետք Մողոլաց. 5.
ե. Օդ Մողոլաց. 5.
զ. Բերք Մողոլաց. 7.
է. Վաճառք Մողոլաց. 13.
ը. Բարք Մողոլաց. 16.
թ. Լեզու Մողոլաց. 19.
ժ. Կառավարութիւն Մողոլաց. 19.
ժա. Մուտք Մողոլաց. 25.
ժբ. Կրօն, կամ Դաւանք Մողոլաց. 28.
ժգ. Բաժանումն Մողոլաց. 42.

Գլուխ ա. Հիւսիսային Մասն Մողոլաց:

Յօդ ա. Տելլի, կամ Տէհլի. 46.
Յօդ բ. Լահոր, կամ Բէնճապ. 47.
Յօդ գ. Քէշմիր. 49.
Յօդ դ. Քապօլ. Քապուլ, կամ Քապուլաստան. 50.
Յօդ ե. Հայագան. 51.
Յօդ զ. Մոլթան, կամ Մուլթան. 52.
Յօդ է. Սինտ, կամ Դատա. 53.
Յօդ ը. Աճմէր. 54.
Յօդ թ. Ակպարապատ, կամ Ակրա. 54.
Յօդ ժ. Աւուդ, կամ Սէղ. 56.
Յօդ ժա. Պնարէս, Իլլահապատ, կամ Հէլապաս. 57.

Յօդ

Յօդ ԺԲ. Մալվա, կամ Մալվէ. 58.
Յօդ ԺԳ. Պէրաէճ, կամ Պէրար. 59.
Յօդ ԺԴ. Քանտիշ. 61.

Պրակ Բ. Արեւելեան Մասն Մողոլաց։

Յօդ Ա. Պանկալա. 69.
Յօդ Բ. Փատնա, կամ Պահար. 77.
Յօդ Գ. Օրիսսա. 79.

Պրակ Գ. Հարաւային Մասն Մողոլաց։

Յօդ Ա. Գուձրաթ. 82.
Յօդ Բ. Պաքլանա. 89.
Յօդ Գ. Պալաղաթ, կամ Տէօվլէթապատ, 89.
Յօդ Դ. Վիզապուր. 90.
Յօդ Ե. Հէյտարապատ. Հէյտէրապատ, կամ Կօլքօնտա. 91.
Յօդ Զ. Գոնգան. 93.
Յօդ Է. Գանարա. 97.
Յօդ Ը. Գառնաթիք, Գառնաթ, կամ Բիզնակար. 99.
Յօդ Թ. Մալապար. 101.
Ա. Թագաւորութիւն Կանանորայ. 101.
Բ. Թագաւորութիւն Գալիգութայ։ 102.
Գ. Թագաւորութիւն Գօչինայ. 103.
Դ. Թագաւորութիւն Դրավանգօրայ. 105.
Յօդ Ժ. Մայսուր. 106.
Յօդ ԺԱ. Գորոմանտէլ. 107.
Ա. Թագաւորութիւն Մատուրայ. 110.
Բ. Երկիր Մարավայ. 112.
Գ. Թագաւորութիւն Դանճաւուրայ. 112.
Դ. Այլ քաղաքք 'ի ծովեզերեայս Գորոմանտէլայ. 115.
Յօդ ԺԲ. Կղզիք առ ափն աշխարհաց, կամ առ ցամաքակղզեան, որ յայսկոյս Գանգէսի. 125.
Տէրութիւն Գուանդէայ. 131.
Տէրութիւն Հոլանտացւոց. 131,
Մալտիվեան, Լաքտիվեան, Կամելեան, եւ Սալսէտէ կղզիք. 135.

Ցամաք կղզի յայնկոյս գանգէսի :

Յօդ. ա. Թագաւորութիւն աշամայ, կամ ասա- մայ. և դիփերայ. 138.
Յօդ. բ. Թագաւորութիւն արագանայ, 140.
Յօդ. գ. Թագաւորութիւն հաւայի, կամ պըր- մայ, բէկոււ, և մինեայ. 146.
Յօդ. դ. Թագաւորութիւն շիամայ. 155.
Հիւսիսային կողմն շիամայ. 161.
Հարաւային կողմն շիամայ, կամ Ցա- մաք կղզին մալաքա. 162.
Յօդ. ե. Թագաւորութիւն քամպոճայ, կամ քամ- պօյայ. 165.
Յօդ. զ. Թագաւորութիւն լաօսայ. 167.
Յօդ. է. Թագաւորութիւն քօշինշինայ : 168.
Յօդ. ը. Թագաւորութիւն տունքինայ. 171.
Յօդ. թ. Կղզիք առ ցամաք կղզեաւ որ յայն- կոյս գանգէսի. 175.

ԱՇԽԱՐՀ. Բ.

Չին, կամ Չինումաչին :

ա. Անուն. 180.
բ. Դիրք Չինաց. 181.
գ. Տարածութիւն և բաղմամարդութիւն Չինաց. 182.
դ. Գետք Չինաց. 184.
ե. Օդ Չինաց. 188.
զ. Բերք Չինաց. 189.
է. Վաճառք Չինաց. 198.
ը. Բարք և Սովորութիւնք Չինաց. 203.
թ. Լեզու Չինաց. 213.
ժ. Դպրութիւն Չինաց. 216.
ժա. Անցք և պատմութիւն Չինաց. 220.
ժբ. Կառավարութիւն Չինաց. 226.
ժգ. Նշան կամ Զինք. Չերփաւորութիւն. Մուտք և Զօրք Չինաց. 235.
ժդ. Կրօն Չինաց. 238.
ժե. Բաժանումն Չինաց. 253.
Յօդ. ա. Փէչէլի. 254.
Յօդ. բ. Չանտոն, կամ Քանտոն. 258.
Յօդ. գ. Չանսի. 259.
Յօդ. դ. Սուէնսի. 263.
Յօդ. ե. Հօնան. 264.

Յօդ.

Յօդ զ. Ձանթօնէ, կամ Քանթօնէ. 266.
Յօդ է. Նանքին. 267.
Յօդ ը. Հուքուան. 271.
Յօդ թ. Քեանձի, կամ Քիանկսի. 272.
Յօդ ժ. Ձեքիան, կամ Ձեքիանճ. 274.
Յօդ ժա. Ֆօքիէն. 276.
Յօդ ժբ. Քանթօն. 277.
Յօդ ժգ. Քուանսի. 279.
Յօդ ժդ. Քուէյչէու, կամ Քուէյթչու. 280.
Յօդ ժե. Իունան, կամ Եունան. 281.
Յօդ ժզ. Կղզիք որք են առ եզր Չինաց. 282.
Գուեղինէ կղզի. 284.
Լեքէոնեան կղզիք. 286.
Յօդ ժէ. Գօրէա. 287.

ԱՇԽԱՐՀ. Թ։

Ճապոն, կամ Յապոն։

ա. Անուն. 289.
բ. Տարածութիւն և Բազմամարդութիւն Ճեապօնայ. 289.
գ. Գետք Ճեապօնայ. 290.
դ. Օդք Ճեապօնայ. 291.
ե. Բերք Ճեապօնայ. 292.
զ. Վաճառք Ճեապօնայ. 296.
է. Դպրութիւն Ճեապօնայ. 300.
ը. Բարք և Սովորութիւնք Ճեապօնացւոց. 302.
թ. Լեզու Ճեապօնացւոց. 308.
ժ. Անձք Ճեապօնացւոց. 309.
ժա. Կառավարութիւն Ճեապօնայ. 313.
ժբ. Կնիք. Սուգք. և Ջօրք Ճեապօնացւոց. 319.
ժգ. Կրօն Ճեապօնացւոց. 320.
ժդ. Բաժանումն Ճեապօնայ. 336.

Նիփոն Կղզի։

Յօդ ա. Թօքայտօ. 336.
Յօդ բ. Թօսանտօ. 338.
Յօդ գ. Ֆօգուռ, կամ Բոգուռոգուռ. 339.
Յօդ դ. Սանինտօ. 340.
Յօդ ե. Սանյոտոլ։ 341.
Յօդ զ. Գինաուի. 343.
Յօդ է. Սիքօք. և Աւաճոսի, կամ Աւօտառոյ կղզիք. 344.

Յօդ

Յօդ. Է. Գլխաւոր քաղաքք Ճէաբօնայ. 345.
Յօդ. Ը. Կղզիք, որք են ընդ տէրութեամբ Ճէաբօնայ. 351.

Կղզիք հարաւային մասին ասիոյ: 353.

Յօդ. Ա. Մարէանեան, կամ աւազակաց կղզիք. 353.
Յօդ. Բ. Փիլիպպեան կղզիք, կամ Մանիլեան կղզիք. 355.
Մանիլա, կամ Լուսոն, կամ Լուգոն կղզի. 356.
Մինդանաօ. 358.
Ջէպա. 359.
Սամօր, կամ Պուէնտայէ. 359.
Կղզիք սրբոյն Յովհաննու, Բարաւեայ, և նոր Փիլիպպեանք. 359.
Յօդ. Գ. Մոլուկեան կղզիք. 360.
Ջէլէպէնք, կամ Մակկասար. 363.
Ամպոյնա, կամ Ամպոյնէ. 364.
Պանտեան կղզիք. 365.
Տիմօր. 365.
Ջերամ. 366.
Պուրօ, կամ Պօէրօ. 367.
Սուլու, կամ Սէպուա. 368.
Սունտեան կղզիք. 371.
Պօրնէօ. 371.
Սումատրա. 373.
Ճաւա, կամ Յաւա. 376.

ԱՇԽԱՐՀ. Դ:

Յամաքք նորագիւտք 'ի հարաւային կողմանս ասիոյ: 381.

Նոր Հոլլանտ հարաւային, որ 'ի նոր Հոլլանտա. 382.
Երկիր Դիէմէնայ. 391.
Երկիր Նուիցայ. 392.
Նոր Գուինէա. 393.
Նոր Բրիտաննիա. 396.
Նոր Բրիտաննիա առանձինն. 400.
Նոր Զէլանտա. 401.
Նոր Հաննովէր. 402.

Կղզ_

Կղզիք Նաւարկութեան· 402·
Կղզի Սանդուիչեայ· 403·
Մաւն կղզի· 403·
Ծոց Լուիզիադայ· 403·
Կղզիք որք յարեւելահիւսիսագոյն Նաւարդայ· 405·
Կղզիք՝ որք յարեւմտահիւսիսոյն Նծ Հոլլանդայ: 406·
Կղզիք Շառլօթթայ թագուհւոյն· 407·
Կղզիք գտեալք ՚ի Վալլիսեայ, 408·
Կղզիք գտեալք ՚ի Գոմոտորայ Պիրոնայ· 409·
Նոր Զելանդիա· 409·
Թոնկիս Փոյենամօ· 417·
Եահեյի Նօմաւէ· 418·

Կղզիք ընկերութեան: 418·

Դահիտի, կամ Օտահիտի· 419·
Կղզիք Բարեկամաց· 433·
Օվայիհի, կամ Օվհեայէ· 435·

Վարք Յակոբայ Գուգայ երեւելի նաւապետին Անգղիացւոյ: 441·